ՍԻՐԻԱՆ
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՄՂՄԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ

9/62/
Հ95

629

Հովհաննիսյան Ն. Հ.

Նաբգսյան Հ. Ս.

Վերին անվախության համար.
Ե.՞ 1975. գ.1ո.62կ.

ա 2	12/XI 75		
ա 51	3/V 76		
ա 46	9/V 81		
ա 71	7/II 83		
		ա 87	


ՀԱՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

Н. О. ОГАНЕСЯН, А. С. САРКИСЯН

СИРИЯ В БОРЬБЕ ЗА НЕЗАВИСИМОСТЬ

(1917—1946 гг.)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1975


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Հ. Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԻՐԻԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ

(1917—1946 թթ.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1975



9(M)7(U)5
Հ 95

Հ 0164
703(02)—75 25—72

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սիրիայի՝ արաբական այդ հինավուրց երկրի նորագույն պատմությունը դեպքերով ու իրադարձություններով ամենահարուստ և ամենահետաքրքիր ժամանակաշրջաններից մեկն է: Կես դարից մի փոքր ավելի ընդգրկող ժամանակամիջոցում Սիրիայում տեղի ունեցան կարևոր քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխություններ, որի հետևանքով նոր էջ բացվեց արաբական աշխարհի այդ աշխի ընկնող պետության պատմության մեջ: 1917 թվականից՝ Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո, որը նոր դարագլուխ բացեց համաշխարհային պատմության մեջ, Սիրիայում պատմական դեպքերը զարգանում են զարմանալի արագությամբ և սիրիական ժողովուրդը արագորեն մի իրավիճակից անցնում է մի այլ իրավիճակի, միշտ ձգտելով անկախության և իր սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման: Նվ իրոք, ազատագրում օսմանյան բռնատիրական լծից, ֆրանսիական մանդատի հաստատում, պայքար այդ մանդատի վերացման համար, Սիրիական անկախ հանրապետության ստեղծում և բազմաթիվ այլ կարևոր իրադարձություններ, որոնք տեղի ունեցան ընդամենը վերջին հիսուն տարում: Սրանք այնպիսի հարցեր են, որոնք գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում և արժանի են ամենալուրջ ուշադրության: Ուստի ուսումնասիրել Սիրիայի նորագույն պատմությունը, նշանակում է առաջին հերթին լուսաբանել վերոհիշյալ հարցերը:

Սիրիան արաբական աշխարհի անբաժան մասն է և բավական մեծ է նրա քաղաքական կշիռը համընդհանուր արաբական պրոբլեմների լուծման մեջ: Չի կարելի հասնել արաբական որևէ կարևոր խնդրի լուծման առանց հաշվի առնելու Սիրիայի դիրքը և քաղաքականությունը: Արաբական երկրների փոխադարձ կապվածությունն առաջին հերթին արտահայտվում է այն բանում, որ

արաբական երկրներից որևէ մեկում՝ հատկապես Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում, Իրաքում և Սիրիայում տեղի ունեցող կարևոր քաղաքական կամ տնտեսական փոփոխությունն անխուսափելիորեն այս կամ այն չափով անդրադառնում է մյուս երկրների վրա: Այդ իմաստով անգնահատելի է այն ազդեցությունը, որ Սիրիան թողեց արաբական մյուս երկրների վրա իր անկախության նվաճման փաստով:

Սիրիան առաջինն արաբական երկրների շարքում ճեղքեց գաղութատիրության շղթան և նվաճեց իր քաղաքական անկախությունը: Սիրիական օրինակը պայքարի ոգեկոչեց արաբական մյուս երկրների ժողովուրդներին և բռնկվեց շղթայական մի ռեակցիա, որը, վերջիվերջո մահացու հարված հասցրեց գաղութատիրությանը Արաբական Արևելքում: Պատմական նշանակություն ունեցող այդ գործում Սիրիայի խաղացած դերն անուրանալի է և արժանացել է համընդհանուր ճանաչման: Հետևաբար, Սիրիայի նորագույն պատմության ուսումնասիրությունը ճնարավորություն կտա պատասխանել ոչ միայն այն հարցին, թե ինչպիսի ուղիով է ընթացել Սիրիայի զարգացումը, այլ նաև կօգնի հասկանալու, թե ինչպես գաղութատիրությունը պարտություն կրեց Արաբական Արևելքում և Ֆրանսիան ու Անգլիան զրկվեցին իրենց տիրապետություններից.

Սիրիան բազմազգ պետություն է, որտեղ արաբների հետ կողք-կողքի ապրում են հրեներ, հայեր, չերքեզներ, ասորիներ և այլ ազգային փոքրամասնություններ: Նրանք այս կամ այն չափով մասնակցում են Սիրիայի քաղաքական և տնտեսական կյանքին և նպաստում նրա առաջընթացին: Հատկապես նշանակալի է հայերի դերը սիրիական հասարակական-քաղաքական կյանքում: Ինչպես նշել է Սիրիայի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Խալեդ Բեքդաշը «Արաբական ազգային որևէ հարցի լուծում, որը հաշվի չի առնում Սիրիայի և Լիբանանի հայ ժողովրդի շահերը, անխուսափելիորեն դատապարտված է ձախողման»: Ուստի Սիրիայի նորագույն պատմությունը պետք է իր մեջ ներառնի և արտացոլի նաև ոչ արաբ ժողովուրդների կյանքը, նրանց տնտեսական ու հասարակական-քաղաքական գործունեությունը: Հակառակ պարագային Սիրիայի պատմությունը կլինի թերի և ոչ ամբողջական:

Սիրիան մեր հարևանն է, և հայ-սիրիական քաղաքական, տնտեսական և գիտա-մշակութային կապերն ունեն բազմադարյան պատմություն: Սիրիայի հայ գաղութը ոչ միայն ակտիվորեն մասնակցում է Սիրիայի հասարակական-քա-

դաշական կյանքին, այլև զգալի դեր է խաղում հայ-արաբական բազմաբնույթ կապերի զարգացման և ամրապնդման գործում: Չնայած այդ հանգամանքին հրապարակի վրա մինչև այժմ հայերս չունենք որևէ ուսումնասիրություն, նվիրված Սիրիայի ժամանակակից պատմությանը: Սույն աշխատությունն առաջին փորձն է այդ ուղղությամբ: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է 1917 թվականից՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից և Օսմանյան կայսրության փլուզումից, մինչև 1946 թվականը:

Ձեռնամուխ լինելով սույն աշխատության շարադրմանը՝ հեղինակները ցանկացել են լուսաբանել այնպիսի հարցեր, ինչպես ֆրանսիական մանդատի հաստատումը, Սիրիան մանդատի տարիներին, ֆրանսիական իմպերիալիստական լծի թոթափումը և Սիրիական անկախ հանրապետության ստեղծումը: Մեծ տեղ է հատկացված ազգային-ազատագրական պայքարին, տարբեր դասակարգերի և խաղաքական կուսակցությունների տեղի ու դերի լուսաբանմանն այդ պայքարում և Սիրիայի տնտեսական ու քաղաքական կյանքում: Սիրիայի սոցիալ-տնտեսական վիճակի, աշխատավոր մասսաների դրության և ազգային փոքրամասնությունների դերի լուսաբանման հարցերին նույնպես պատշաճ ուշադրություն է դարձվել: Թե որքանով է հեղինակներին հաջողվել հասնել իրենց առջև դրված պրոբլեմների լուծմանը, թողնում ենք դատելու անաչառ ընթերցողին:

Աշխատությունը շարադրված է արաբական, հայկական, ռուսական, արևմտաեվրոպական և ամերիկյան բազմաթիվ ու բազմատեսակ աղբյուրների՝ պաշտոնական փաստաթղթերի, արխիվային նյութերի, ուսումնասիրությունների և մամուլի հիման վրա:

Աշխատությունը գրել են պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Հ. Հովհաննիսյանը (Երկու խոսք, Ներածություն, I գլուխ, II գլխի «Մանդատային իշխանության մարմինները և նրանց իրավասության շրջանակները» բաժինը, III գլուխ և Վերջաբան), պատմական գիտությունների թեկնածու Հ. Ս. Սարգսյանը (II գլուխ):

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիրիայի պատմությունն իր ակունքներով գնում է դարերի խորքը։ Պեղումների շնորհիվ հայտնաբերված նյութական մշակույթի նմուշներն անվիճելիորեն վկայում են, որ մարդիկ Սիրիայում բնակություն են հաստատել դեռևս վաղ պալեոլիթի շրջանում, որոնք արդեն մ. թ. ա. IV հազարամյակում ապրում էին տոհմատիրական կարգի պայմաններում։ Հետագայում բնակչության մի մասը անցնում է նստակյաց կյանքի և զբաղվում հողագործությամբ։ Տոհմատիրական կարգերն աստիճանաբար քայքայվում են և մ. թ. ա. III հազարամյակում սկսում են ձևավորվել ստրկատիրական հարաբերությունները։ Նրանց հիմքի վրա Սիրիայի տարբեր մասերում առաջանում են ստրկատիրական մի շարք պետություններ՝ ամորիթների, քանանի, արամեացիների և այլն[1]։ Դրանք թեև փոքրիկ պետություններ էին, սակայն զգալի հետք թողեցին Սիրիայի պատմական նկարագրի վրա։

Սիրիան իր պատմության տարբեր շրջաններում միշտ էլ գրավել է օտար նվաճողների, իր հարևան մեծ ու հզոր պետությունների ուշադրությունը, որոնք ցանկացել են իրենց տիրապետությունը հաստատել Առաջավոր Ասիայի այդ կարևոր շրջանի վրա։ Մ. թ. ա. XVI դարում Սիրիան նվաճում են եգիպտական փարավոնները, իսկ մ. թ. ա. XIV դարում, երկարատև ու համառ արշավանքներից հետո՝ խեթերը։

Մ. թ. ա. X դարում սիրիացիներին հաջողվում է ստեղծել իրենց պետությունը՝ Դամասկոս մայրաքաղաքով, որը գոյություն ունեցավ մինչև մ. թ. ա. VIII դարը։ Այդ դարում վերոհիշյալ պետությունն ընկավ ասորեստանցիների հարվածների տակ և մտավ Ասորեստանի կազմի մեջ։ Սակայն դա ևս երկար չտևեց։ Մ. թ. ա.

[1] *Ph. Hitti*, History of Syria, including Lebanon and Palestine, London, 1951.

VI դարում Սիրիան նվաճեցին պարսիկները և միացրեցին Աքեմենյանների թագավորությանը, որի կազմում նա մնաց մինչև մ. թ. ա. IV դարը։ Պատմական այս շրջանին է վերաբերում Մակեդոնիայի որպես պետության բարձրացումն ու հզորացումը, որը կապված է Ալեքսանդր Մակեդոնացու անվան հետ։ Վերջինս նվաճելով ամբողջ Փոքր Ասիան և ձգտելով համաշխարհային տիրապետության՝ իր զորքերը տարավ դեպի Առաջավոր Ասիա։ Մ. թ. ա. 333 թ. Հիսոսի մոտ տեղի ունեցավ վճռական ճակատամարտ Ալեքսանդր Մակեդոնացու և պարսկական թագավոր Դարեհ 3-րդի զորքերի միջև, որը վերջացավ պարսկական զորքի կատարյալ պարտությամբ։ Ի պատիվ Ալեքսանդր Մակեդոնացու հաղթանակների հիմնվեց մի նոր քաղաք, որը նրա անունով կոչվեց Ալեքսանդրետ։ Հիսոսի մոտ տարած հաղթանակից հետո Ալեքսանդրը իր տիրապետությունը հաստատեց Սիրիայում, որը նրա մահից հետո մտավ Սելևկյանների պետության կազմի մեջ։ Ըստ էության Սիրիան կազմում էր Սելևկյան պետության հիմնական կորիզը։

Շուտով Սիրիան հայտնվեց Տիգրան 2-րդի ընդարձակ ու հզոր հայկական պետության կազմում։

Տիգրան Մեծը մ. թ. ա. 89—85 թթ. տեղի ունեցած համառ պատերազմների ընթացքում պարտության մատնեց պարթևներին, որից հետո Հայաստանի հարևան, նախկինում Պարսկաստանից վասալական կախման մեջ գտնվող բոլոր պետություններն ընդունեցին Հայաստանի գերիշխանությունը։ Ադիաբենի, Կորդուքի և Ատրպատականի թագավորները ստիպված էին ենթարկվել հայոց թագավորին։ Պարտություն կրած պարթևները Հայաստանին զիջեցին նաև Միջագետքը և հրաժարվեցին «արքայից արքա» տիտղոսից, որը կրելու իրավունքը ստացավ Տիգրան Մեծը[2]։

Միջագետքի գրավումը Տիգրանի առջև Սիրիան գրավելու լայն հնարավորություններ ստեղծեց։ Դրան նպաստեցին նաև Սելևկյան թագավորության ներսում եղած երկպառակությունները։ Դրությունից ելք փնտրելու համար Ասորիքի (Սիրիայի) սատրապիրական ավագանին որոշեց դրսից թագավոր հրավիրել։ Այդ կապակցությամբ Հուստինիանոսը հետևյալ արժեքավոր վկայությունն է տալիս. «Երբ եղբայրների փոխադարձ ատելության և ծնողների թշնամությունների պատճառով, որ շարունակում էին նաև որդիները, Ասորիքի և՛ թագավորները, և՛ թագավորությունը ուժասպառ

[2] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. II, Երևան, ՌՀԽԴ, էջ 150—151։

Նրան համառ կռիվներում, ժողովուրդն ապավինեց դրսի օգնության և սկսեց փնտրել իր համար օտարերկրյա թագավորներ։ Արդ, ժողովրդի մի մասը կարծում էր, որ պետք է հրավիրել Միհրդատ Պոնտացուն, մի մասն էլ՝ Եգիպտոսից Պտղոմեոսին, իսկ ոմանք առարկում էին, որ Միհրդատը խճճվել է հռոմեական պատերազմի մեջ և որ Պտղոմեոսը միշտ բշնամի է եղել Ասորիքին։ Բոլորը սակայն համաձայնության եկան Հայաստանի Տիգրան թագավորի նկատմամբ, որն ուներ իր սեփական ուժերը և միաժամանակ պարթևների դաշնակիցն էր և Միհրդատի փեսան էր»[3]։

Տիգրան Մեծը, ըստ Մանանդյանի, հյուսիսային Ասորիքը՝ Անտիոք քաղաքով, պետք է գրաված լինի մ. թ. ա. 84—83 թթ.[4]։ *Սելևկյանների մայրաքաղաք Անտիոքը դարձավ Տիգրան 2-րդի պլխավոր դահանիստ քաղաքը հարավում։ Այնուհետև Տիգրանը իր տիրապետությանը միացրեց նաև դաշտային Կիլիկիան։ Սակայն, եթե Հյուսիսային Ասորիքի միացումը հայկական պետությանը տեղի ունեցավ կամովին և, ըստ երևույթին, առանց որևէ դիմադրության, ապա հարավային Ասորիքի, այսինքն Դամասկոսի շրջանի նվաճումը Տիգրան Մեծը պետք է իրականացներ զենքի օգնությամբ։ Այս առթիվ ուշագրավ տեղեկություն է հաղորդում Ստրաբոնը։ Տիգրան Մեծն «Անցնելով Եփրատ գետը,—նշում է նա,—նվաճեց բռնությամբ Ասորիքը և Փյունիկիան»*[5]։

Տիգրանի դեմ դիմադրության ոգեշնչողը եղել է Սելևկյան Սելևնե կամ Կլեոպատրա թագուհին։ Հովսեփոս Փլավիոսը վկայում է, որ «Սելևնե թագուհին, որի անունն էր նաև Կլեոպատրա և որն իշխում էր Ասորիքում, դրդռում էր բնակիչներին, որ դիմադրեն Տիգրանին»[6]։ *Սակայն հայոց թագավորը երեք հարյուր հազար զորքով հնշում է Սելևնեի դիմադրությունը և ավարտում նաև Հարավային Ասորիքի՝ Դամասկոսի ընդարձակ շրջանի և Փյունիկիայի նվաճումը։ Նա գրավում է նաև սիրիական մերձծովյա Լաոդիկեա (Լաթակիա), Բերիթ (Բեյրութ) և այլ քաղաքներ։ Սելևնե թագուհին զերի ընկավ և գլխատվեց Տիգրան 2-րդի հրամանով։ Սիրիան դարձավ հայկական պետության կուսակալություններից մեկը, որի կառավարիչ Տիգրան 2-րդը նշանակեց Բագարատ զորավարին։ Ստրաբոնը նշում է, որ «Հայերը Սելևկյան թագավորների հզորու-*

[3] *Նույն տեղում, էջ 152։*
[4] *Նույն տեղում, էջ 154։*
[5] *Նույն տեղում, էջ 152։*
[6] *Նույն տեղում, էջ 155։*

թյունը խորտակեցին, նրանց սերունդը ամբողջովին ջնջեցին»։ Միջագետքի, Սիրիայի և Փյունիկիայի նվաճումից հետո պետք է ենթադրել, որ Հրեաստանի թագավորությունը նույնպես կախման մեջ է ընկել Հայաստանի թագավորությունից։ Ապպիանոսի վկայությամբ Մերձավոր Արևելքի ամբողջ այդ շրջանը մինչև Եգիպտոսի սահմանները ենթակա էին Տիգրան Մեծին[7]։

Սիրիան Հայկական թագավորության կազմում մնաց մինչև մ. թ. ա. 66 թ.։ Այդ թվականին Արտաշատում Տիգրան 2-րդի և Հռոմի միջև կնքվեց մի համաձայնագիր, ըստ որի Տիգրանը հրաժարվում էր Սիրիայից։ Երկու տարի անց՝ մ. թ. ա. 64 թ. Սիրիան մտավ Հռոմեական կայսրության կազմի մեջ և մինչև IV դարը մնաց նրա նահանգներից մեկը։ Դրանից հետո, մինչև VII դարը, այն Բյուզանդական կայսրության մի մասն էր կազմում։ Բյուզանդական տիրապետության տարիներին Սիրիան թևակոխեց վաղ ֆեոդալիզմի շրջանը։

Սիրիայի՝ որպես արաբական երկրի, պատմությունը սկսվում է VII դարից, երբ արաբական ցեղերը դուրս գալով Արաբական թերակղզուց, սկիզբ դրեցին մի նվաճողական քաղաքականության, որը նրանց դուրս բերեց մինչև Ատլանտյան օվկիանոս և Պիրենյան թերակղզի։ Այդ նվաճումների մեջ կարևոր տեղ էր գրավում Սիրիայի գրավումը, որը հիմնականում կատարվեց VII դարի 30-ական թվականներին։ 634 թ. խալիֆ Աբու Բաքրի հրամանով արաբական զորքերը շարժվեցին Սիրիա։ Բյուզանդական թույլ կայազորները ի վիճակի չէին լուրջ դիմադրություն ցույց տալ, արաբները, գրավելով մի շարք բնակավայրեր, առաջ շարժվեցին դեպի երկրի խորքը և նույն թվականի ամռանը գրավեցին Բուսրան, իսկ 634 թ. հուլիսի 30-ին պարտության մատնեցին բյուզանդացիներին Աջնադեյնի մոտ տեղի ունեցած ճակատամարտում[8]։ Դրանից հետո, գրավելով Սիրիայի տերիտորիայի մեծ մասը, նրանք մոտեցան Դամասկոսին և կանգնեցին նրա պարիսպների տակ։ Արաբները դեռևս ծանոթ չէին ամրացված և պարսպապատված քաղաքամրոցների գրավման ռազմական արվեստին և զուրկ էին համապատասխան տեխնիկական միջոցներից։ Այդ պատճառով էլ Դամասկոսի պաշարումը տևեց 6 ամսից ավելի և միայն 635 թ. սեպտեմբերին արաբներին հաջողվեց գրավել քաղաքը։

Հարկ է նշել, որ Սիրիայի բնակչությունն ընդհանրապես ուրա-

[7] Նույն տեղում, էջ 156։

[8] Т. Чистякова, Арабский халифат, М., 1962, стр. 32.

խությամբ էր ընդունում արաբներին։ Բյուզանդացիների դաժան տնտեսական, գլխավորապես հարկային, ինչպես նաև սիրիացիներին կրոնական հողի վրա հետապնդելու քաղաքականության հետևանքով տեղական բնակչության մոտ խոր ատելություն էր կուտակվել ընդդեմ բյուզանդացիների։ Նրանք հույս ունեին, թե նոր նվաճողներն իրենց ազատություն կբերեն, այդ պատճառով էլ շատ վայրերում անցնում էին արաբների կողմը։ Դամասկոսը արաբական զորքերին հանձնելու գործում այդ հանգամանքը նույնպես կարևոր դեր խաղաց։ Դամասկոսի անկումը խոր անհանգստություն առաջացրեց բյուզանդական տիրող վերնախավի մոտ։ Նա հասկացավ, որ հարցականի տակ է դրվում Բյուզանդիայի տիրապետությունը Սիրիայում։ Այդ պատճառով էլ Բյուզանդիան ռազմական նոր մեծ ուժեր պատրաստեց, որոնք կայսր Հերակլեսի գլխավորությամբ շարժվեցին Սիրիա՝ նպատակ ունենալով արաբներին դուրս մղել ամբողջ Սիրիայից։ Արաբական զորքը տակտիկական նկատառումներով թողեց Դամասկոսը և նա բաշվեց դեպի Յարմուկ գետը։ Այստեղ 636 թ. օգոստոսի 20-ին տեղի ունեցավ վճռական հակամարտություն բյուզանդական և արաբական զորքերի միջև, որը և կանխորոշեց Սիրիայի հետագա հակատագիրը։ Բյուզանդացիները պախվին չախչախվեցին, և նրանց կայսր Հերակլեսին ոչինչ չէր մնում անել, քան ասել. «Մնաս բարով Սիրիա, ինչպիսի՜ գեղեցիկ երկիր մեր թշնամիների համար»[9]։ Արաբները կրկին մտան Դամասկոս, իսկ 638 թ. գրավեցին Անտիոքը։

Բյուզանդացիների դեմ տարած հաղթանակից հետո Սիրիան վերջնականապես անցավ արաբական խալիֆների տիրապետության տակ։ Հենց այդ ժամանակաշրջանից էլ սկսվում է նրա արաբացումը և իսլամացումը։

Միջնադարյան Սիրիան իր փառքի գագաթնակետին հասավ Օմայանների խալիֆայության ժամանակ (661—750 թթ.)։ Օմայանների տիրապետության շրջանում խալիֆայության քաղաքական կենտրոնը արաբական թերակղզուց տեղափոխվեց Սիրիա և Դամասկոսը դարձավ նրան աթոռանիստ քաղաքը, թեև արաբական աշխարհի հոգևոր կենտրոնը մնաց Մեքքան։

750 թ. Օմայանների դինաստիան տապալվեց և խալիֆայությունն անցավ Աբասյաններին (750—1258 թթ.)։ Նոր խալիֆայության քաղաքական կենտրոնը դարձավ Իրաքը, իսկ մայրաքա-

[9] *Е. А. Беляев*, Арабы, ислам и арабский халифат в раннее средневековье, М., 1966, стр. 138.

ղաքը՝ Բաղդադը։ Սիրիան կորցրեց իր երբեմնի քաղաքական կարեվոր դիրքերը և դարձավ Աբասյանների ընդարձակ խալիֆայության մի մասը։

Աբասյան խալիֆայության թուլացմանը զուգընթաց ուժեղանում են օտարերկրյա նվաճողների հարձակումները արաբական տարբեր երկրների, այդ թվում նաև Սիրիայի վրա։ Նրանց ասպատակությունները շատ ծանր էին անդրադառնում երկրի տնտեսության վրա։ XI դարում Սիրիայի տերիտորիայի զգալի մասը գրավում են սելջուկ-թուրքերը, նրա որոշ շրջաններն անցնում են եվրոպական խաչակիրների տիրապետության տակ և այլն։ Սիրիայի վրա ծանր են անդրադառնում նաև արաբական խալիֆայության ներսում և արաբական աշխարհում եղած ներքին երկպառակությունները և անվերջ պատերազմները։ 969—1171 թթ. Եգիպտոսը կառավարում էին Ֆաթիմյանները, իսկ 1171—1250 թթ.՝ Այուբյանները։ Նրանց տիրապետության շրջանում Սիրիայի զգալի մասը մտնում էր Եգիպտոսի կազմի մեջ։ 1250 թ. մամելուկները Եգիպտոսում տապալեցին Այուբյաններին և հաստատեցին իրենց իշխանությունը, որը գոյություն ունեցավ մինչև XVI դարի սկիզբը՝ թուրքական նվաճումները։ Մամելուկներն իրենց իշխանությունը հաստատեցին ոչ միայն ամբողջ Եգիպտոսի, այլ նաև ամբողջ Սիրիայի վրա։ Նրանց տիրապետությունն աչքի էր ընկնում առանձնահատուկ դաժանությամբ և Սիրիայի բնակչությունը ենթարկվում էր անողոք կեղեքման ու հարստահարման։

Արաբական աշխարհում և Սիրիայում տիրող այս անհանդիստ և խառնակ վիճակից օգտվեց բարձրացող Օսմանյան կայսրությունը, որն իր նվաճողական ծրագրերի իրագործման մեջ առաջնակարգ տեղ էր հատկացնում արաբական երկրներին։ XVI դարի սկզբին սուլթան Սելիմ Յավուզի (Ահեղի) հորդաները ներխուժեցին Արաբական Արևելք։ 1514 թ. նրանք նվաճեցին Հյուսիսային Իրաքը և շարժվեցին դեպի Սիրիա։ 1516 թ. օգոստոսի 24-ին Հալեպից հյուսիս՝ Մարջ Դաբիքի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում թուրքերը պարտության մատնեցին մամելուկներին և իրենց տիրապետությունը հաստատեցին Սիրիայում։ Հաջորդ տարին՝ 1517 թ. նույն բախտին արժանացան Եգիպտոսը և Հեջազը։ Արաբական երկրները օսմանյան տիրապետության տակ մնացին մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, այսինքն ուղիղ չորս դար։

Թուրքական տիրապետության տարիները Սիրիայի բազմա-

դարյան պատմության ամենամռայլ էջերն են։ Թուրքերը, որ գրտնվում էին զարգացման անհամեմատ ցածր մակարդակի վրա, բան իրենց ենթակա մի շարք ժողովուրդներ, այդ թվում նաև արաբները, Սիրիայում հաստատեցին ռազմա-ֆեոդալական հետադիմական վարչաձև, ծանր հարված հասցնելով նրա տնտեսական և մշակութային զարգացմանը։ Երկիրը բաժանվեց չորս փաշայություննեի՝ Դամասկոսի, Հալեպի, Տրիպոլիի և Սայդայի։ Սիրիան կառավարում էին թուրքական սուլթանի կողմից նշանակված նրա փոխանորդները, որոնք ունեին անսահմանափակ իշխանություն։ Երկրում կարգ ու կանոն չկար, թույլ էին տրվում ամեն տեսակ կամայականություններ ու բռնություններ, ոտնահարվում էր արաբների ազգային արժանապատվությունը։ Առանձնապես ծանր էր սիրիական գյուղացու վիճակը, որը տառապում էր բարձր հարկերի և հողագրկության հիրաններում։ Երկրի տնտեսական վիճակը վատացավ նաև այն պատճառով, որ օսմանյան պետությունը հոգ չէր տանում ոռոգման սիստեմի պահպանման և զարգացման մասին, առանց որի անհնարին է գյուղատնտեսության զարգացումը Արևելքի երկրներում։ Դրա հետևանքով Սիրիայի զգալի հողային տարածություններ դարձան հողագործության համար ոչ պիտանի, և սովի մատնված գյուղացիները, թողնելով իրենց հարազատ վայրերը, ապրուստի միջոցներ որոնելու համար մեկնեցին այլ վայրեր։

Այս բոլորը խոր դժգոհություն էր առաջացնում Սիրիայի բնակչության մեջ։ Թուրքական ճնշիչ ու կեղեքող քաղաքականությունից նեղվում էին նաև սիրիական ֆեոդալական ավագանին և ցեղապետերը։ Ուստի միանգամայն բնական և օրինաչափ էին այն հակաթուրքական պրոթեկումները, որոնք առանձնապես ուժեղացան XVIII դարում՝ կապված թուրքական կայսրության ընդհանուր թուլացման հետ։ Խոսելով օսմանյան տիրապետության դեմ ուղղված արաբական ապստամբությունների մասին սովետական ականավոր արաբագետ-պատմաբան Վ. Բ. Լուցկին նշում է. «Այդ ապստամբությունները արտացոլում էին Օսմանյան կայսրության հիմնական դասակարգային հակասությունը-հակասություն ֆեոդալի և գյուղացու միջև, այնպես էլ հիմնական ազգային հակասություն-հակասություն ստրկացնող և ճնշվող ժողովուրդների միջև»[10]. Սիրիայում թուրքական տիրապետության դեմ բռնկված ապստամբություններից հիշատակման արժանի է Դամասկոսի 1798 թ.

[10] *В. Луцкий*, Новая история арабских стран, II изд., М., 1966, стр. 26.

ապստամբությունը, որի հետևանքով Բարձրագույն Դուռը հարկադրված հեռացրեց Դամասկոսի փաշա Ահմեդին, որը իր չարագործությունների համար ստացել էր Ջազզար՝ մսագործ մականունը[11]:

XIX դարը ըստ էության ոչինչ չփոխեց Սիրիայի իրավիճակում, թեև տեղի ունեցան սոցիալ-տնտեսական որոշակի տեղաշարժեր և ուշադրության արժանի քաղաքական իրադարձություններ: Դրանց մեջ առաջին հերթին պետք է նշել Սիրիայի գրավումը Եգիպտոսի կառավարիչ Մուհամեդ Ալիի կողմից: Մուհամեդ Ալիի զորքերը, նրա որդի Իբրահիմ փաշայի հրամանատարությամբ 1832 թ. հունիսի 8-ին Հոմսի մոտ ջախջախիչ պարտության մատնելով թուրքական զորքերին գրավեցին Հոմսը, Համան և Հալեպը: Ամբողջ Սիրիան անցավ Մուհամեդ Ալիի տնօրինության տակ, որը և ճանաչեց սուլթան Մահմուդ 2-րդը՝ 1833 թ. մայիսի 4-ին Կյութահիայում Թուրքիայի և Եգիպտոսի միջև կնքված հաշտության համաձայնագրով: Իբրահիմ փաշան նշանակվեց Սիրիայի բարձրագույն կառավարիչ:

Իբրահիմ փաշան իր տիրապետության տարիներին՝ 1832—1840 թթ., Սիրիայում կիրառեց մի շարք բարեփոխումներ, որոնք ընդհանուր առմամբ բարենպաստ ազդեցություն ունեցան երկրի զարգացման վրա: Նա ձգտում էր վերացնել սիրիական ֆեոդալների անջատողական ձգտումները և ստեղծել կենտրոնացված կառավարություն, նշանակեց հարկերի գանձման կայուն չափ և վերջ տվեց ֆեոդալների կամայականությանը այդ բնագավառում: Դա որոշ չափով նպաստեց գյուղատնտեսության, առևտրի և արդյունաբերության զարգացմանը: Ընդարձակվեցին մշակելի հողատարածությունները և շատ քոչվոր ցեղերի ստիպեցին նստակյաց կյանք վարել, ճանապարհների և քարավանային ուղիների վրա հաստատվեց լիակատար ապահովություն և վերջ տրվեց ավազակային հարձակումներին:

Ուշադրության են արժանի նաև լուսավորության բնագավառում կիրառված բարեփոխումները: 1834 թ. Բեյրութում հիմնվեց առաջին տպարանը: Այդ նույն թվականին Իբրահիմ փաշայի կարգադրությամբ ամբողջ Սիրիայում հիմնվեցին տարրական դպրոցներ, իսկ Դամասկոսում, Հալեպում և Անտիոքում՝ նույնիսկ միջնակարգ դպրոցներ[12]: Դպրոցներում ուսուցումը տարվում էր արաբերեն լեզվով: Թե՛ Մուհամեդ Ալին և թե՛ նրա որդի Իբրահիմը հեռուն

[11] Նույն տեղում, էջ 31:

[12] Նույն տեղում, էջ 95—97:

ունացող մեծ ծրագրեր ունեին։ Նրանք ձգտում էին միավորել բոլոր արաբական երկրները և ստեղծել միասնական արաբական պետություն, որը պետք է լրիվ անկախ լիներ Թուրքիայից։ Իրենց ծրագրերի իրագործման մեջ նրանք մեծ տեղ էին հատկացնում արաբական ազդային ինքնագիտակցության զարգացմանը և արաբների ազդային կոնսոլիդացիային։ Վերհիշյալ բարեփոխումները, որ Իբրահիմ փաշան Եգիպտոսի օրինակով կիրառեց Սիրիայում, նաև այդ նպատակն էր հետապնդում։

Սակայն Սիրիայում խոր դժգոհություն կար Եգիպտոսի տիրապետության դեմ։ Սկզբնական շրջանում դժգոհները հիմնականում ֆեոդալները և ցեղապետերն էին, որոնց իշխանությունը սահմանափակվել էր, և որոնք զրկվել էին արտոնություններից ու հարկադրված էին ենթարկվել կարգ ու կանոնին։ Սակայն հետագայում սկսեցին դժգոհել նաև գյուղացիները, որի պատճառը գլխավորապես Թուրքիայի դեմ կրկին պատերազմի նախապատրաստվելու հետ կապված միջոցառումներն էին։ Իբրահիմ փաշան հարկադրական կարգով սիրիացիներին քշում էր ամրոցներ կառուցելու, նրանց հավաքագրում էր եգիպտական բանակում ծառայելու և այլն։ Ռազմական հանդերձանք ձեռք բերելու նպատակով բարձրացվեցին հարկերը, այդ թվում նաև գյուղացիներից գանձվող հարկերը։ Այս բոլորը դժգոհություն առաջացրեց գյուղացիների մոտ և մի շարք վայրերում բռնկվեցին գյուղացիական ապստամբություններ, որոնք եգիպտական զորքերը դաժանությամբ ճնշեցին։

1839 թ. սկսվեց եգիպտա-թուրքական երկրորդ պատերազմը։ Թուրքիան կրկին պարտվեց և կանգնեց օրհասական վիճակի առջև։ Սակայն գործին միջամտեցին եվրոպական պետությունները՝ Անգլիան, Ռուսաստանը, Պրուսիան և Ավստրիան, որոնց ձեռնտու չէր մի նոր ուժեղ պետության հանդես գալը և ստիպեցին Մուհամեդ Ալիին հրաժարվել իր բոլոր նվաճումներից՝ Սիրիայից, Պաղեստինից, Կիլիկիայից, Արաբիայից և Կրետեից։ Սիրիայի վրա կրկին վերահաստատվեց թուրքական սուլթանի տիրապետությունը։

Դեռ նոր էր ավարտվել եգիպտա-թուրքական պատերազմը, երբ Սիրիայի նկատմամբ իր գաղութարարական ծրագրերով աստիճանաբար իշավ Ֆրանսիան, որը ձգտում էր վերջնականապես հաստատվել Սիրիայում և այն վերածել իր հումքային բազային ու վաճառահանման շուկային։ Այդ նպատակով նա ճարպկորեն խաղում էր քրիստոնյաների և մուսուլմանների հակասությունների

ՊԱՏՄԱԳԻՐՔ

վրա, հակասություններ, որոնք 1860 թ. վերածվեցին մարոնիթների և դրուզների կոտորածի։ Բախումներ տեղի ունեցան Բեյրութում, Սայդայում, Զահլեում, Դեյր ալ-Կամարում, Հարավային Լիբանանում և այլ վայրերում։ 1860 թ. հուլիսին կոտորածներ սկսվեցին Դամասկոսում։ Այդ կոտորածների հրահրողը Թուրքիայի կառավարողներն էին, որոնք փորձում էին դրա օգնությամբ շեղել սիրիական զանգվածների ուշադրությունը հակաֆեոդալական և հակաբուրքական պայքարից։ Կրոնական ատելություն սերմանելու գործում շահագրգռված էին նաև Անգլիան, որ կանգնած էր դրուզների ետևում, և Ֆրանսիան, որ պաշտպանում էր մարոնիթներին։ Այս դեպքերի ժամանակ սպանվեցին և վիրավորվեցին մի քանի տասնյակ հազար մարդ, քանդվեցին հարյուրավոր գյուղեր, եկեղեցիներ և այլն[13]։

Ստեղծված իրադրությունից փորձեց օգտվել Ֆրանսիան։ Քրիստոնյաների վտանգված իրավունքները պաշտպանելու և կոտորածներին վերջ տալու պատրվակով, Ֆրանսիայի կայսր Նապոլեոն 3-րդը 1860 թ. Սիրիա ուղարկեց ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուս։ Իրականում, Նապոլեոն 3-րդը, ինչպես նշվեց, ցանկանում էր իր տիրապետությունը հաստատել Սիրիայում։ Սակայն նա հանդիպեց եվրոպական պետությունների ուժեղ դիմադրությանը, որոնց շահերին հակասում էր Սիրիայի վերածումը ֆրանսիական գաղութի։ Նրանց՝ առաջին հերթին Ռուսաստանի և Ավստրիայի ճնշման ներքո, 1861 թ. Ֆրանսիան հարկադրված Սիրիայից դուրս բերեց իր զորքերը։

XIX դարում, հատկապես նրա երկրորդ կեսից, սկսում է ձևավորվել սիրիական ազգային բուրժուազիան։ Սակայն նրա բնականոն զարգացմանը խանգարում էին երկու հանգամանք։ Առաջին, Օսմանյան կայսրությունում տիրապետող հետամնաց ֆեոդալական արտադրական հարաբերությունները՝ տոհմատիրական կարգերի բավականին ուժեղ վերապրուկներով, կամայականությունները, գույքի և անձի անապահովությունը և երկրորդ, օտարերկրյա, գլխավորապես ֆրանսիական և անգլիական կապիտալի ներթափանցումը Օսմանյան կայսրություն, այդ թվում նաև նրա արաբական տիրապետությունները։ Զարգացման նախնական աստիճանում գտնվող և դեռևս թույլ սիրիական բուրժուազիան ի վիճակի չէր մրցակցել օտարերկրյա կապիտալի հետ։ Այս հանգամանքը նրան մղում էր մի կողմից օսմանյան բռնատիրությունից ազատվելու,

[13] *М. Панченкова,* Политика Франции на Ближнем Востоке и сирийская экспедиция 1860—1861 гг., М., 1966, стр. 89—93.

իսկ մյուս կողմից՝ պայքարելու օտարերկրյա կապիտալի անարգել ներթափանցման դեմ։ Սիրիական բուրժուազիայի և նրա հետ կապված նոր ձևավորվող ազգային մտավորականության նմանօրինակ դիրքորոշումը մեծապես նպաստեց ազգային-ազատագրական պայքարի վերելքին Սիրիայում, որը հատկապես ուժեղացավ XIX դարի վերջին և XX դարի սկզբներին։

Այդ պայքարին ակտիվորեն մասնակցեց գյուղական և քաղաքային բնակչությունը, որի նկատմամբ բռնությունները առանձնապես սաստկացան արյունոտ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի (1876—1909 թթ.) դահակալման տարիներին, տարիներ, որոնք օսմանյան Թուրքիայի ժողովուրդների պատմության մեջ հայտնի են որպես դուռումի տարիներ։ 1886 թ. գյուղացիական մեծ ապստամբություն բռնկվեց Ջեբել Դրուզում։ Դրուզցի գյուղացիները ապստամբեցին նաև 1896 և 1899 թթ.։ Թուրքական իշխանություններին մեծ դժվարությամբ հաջողվեց ճնշել այդ ապստամբությունները։

1895 թ. հուդումներ և հակաթուրքական ելույթներ տեղի ունեցան Հալեպում, իսկ 1903 թ.՝ Բեյրութում[14]։

Այս շրջանից սկսած զանազան քաղաքական կազմակերպություններ, միություններ և կոմիտեներ են ստեղծվում Սիրիայում և արաբական մյուս երկրներում։ Վախենալով թուրքական հետապնդումներից՝ արաբական բուրժուա-ազգային գործիչները այդպիսի միություններ են հիմնում նաև Սիրիայի սահմաններից դուրս՝ Եգիպտոսում, Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում։ Այդ կազմակերպությունների հետապնդած նպատակները տարբեր են եղել, որն ըստ էության արտացոլում էր արաբական ազգային-ազատագրական շարժման զարգացման մակարդակի տարբեր փուլերը։ Որոշ խմբեր կողմնակից էին Օսմանյան կայսրության կազմում մնալուն՝ սակայն պայմանով, որ արաբական երկրներում կիրառվեն բարեփոխումներ, տրվի ինքնավարություն կամ Օսմանյան կայսրությունը վերածվի արաբա-թուրքական դուալիստական պետության, ինչպես Ավստրո-Հունգարիան։

Արաբական մի շարք կազմակերպություններ, ընդհակառակը, կողմնակից էին Օսմանյան կայսրությունից վերջնականապես աղատվելուն և արաբական անկախ պետություն ստեղծելուն։

1875 թ. Բեյրութում ստեղծվեց գաղտնի ընկերություն, որն իր մասնաճյուղերն ուներ Դամասկոսում, Տրիպոլիում և Սուվեյդայում։ Նրա ծրագրային ամենակարևոր պահանջը Սիրիայի և Լիբա-

[14] *В. Луцкий*, Новая история арабских стран, стр. 289.

նաևի անկախության պահանջն էր[15]։ Այդ գաղտնի ընկերությունը, որ կազմված էր հիմնականում մտավորականներից և կապված չէր ժողովրդական զանգվածների հետ, իր գոյությունը դադարեցրեց 30-ական թվականների կեսերին։ Հիշատակության են արժանի նաև 1900 թ. Կահիրեում սիրիական հայտնի գործիչ Կավակիբիի հիմնած «Գաղտնի կոմիտեն», այդ նույն ժամանակ Նյու-Յորքում ձևավորված «Երիտասարդ Սիրիա» կուսակցությունը, 1904 թ. Փարիզում Նաջիբ ալ-Ազուրիի հիմնած «Արաբական հայրենիքի լիգան»[16], որի նպատակը արաբական անկախ պետության ստեղծումն էր սիրիական բուրժուազիայի հեգեմոնիայով և այլն։

Արաբների ազատագրական պայքարն ավելի ուժեղացավ երիտթուրքերի հեղափոխությունից հետո (1908 թ.)։ Սկզբնական շրջանում արաբները հեղափոխության լուրն ընդունեցին մեծագույն խանդավառությամբ և նրանց մոտ ծնվեցին որոշ պատրանքներ իրենց ապագայի վերաբերյալ։ Նրանք կարծում էին, որ կվերանա բռնությունը Օսմանյան կայսրությունում, իրենց թուրքերի հետ հավասար իրավունքներ կտրվեն և հնարավորություններ կընձեռվեն ազգային և քաղաքական վերածննդի համար։ Սակայն շատ շուտով նրանց պատրանքները հօդս ցնդեցին։ Հուսախաբ արաբ ազգային-քաղաքական գործիչները համոզվեցին, որ երիտթուրքերը արաբների և Օսմանյան կայսրության մեջ մտնող մյուս ազգերի նկատմամբ տարվող բռնությունների, հալածանքի և ձուլման իրենց քաղաքականությամբ ոչնչով չեն տարբերվում սուլթանից։ Ուստի Թուրքիայում հաստատված նոր ռեժիմի նկատմամբ բռնեցին օպոզիցիոն դիրք։ Հետագայում նրանց շրջանում աստիճանաբար հաղթահարվում են արաբական հարցը Թուրքիայի նոր կառավարողների հետ համաձայնության ճանապարհով լուծելու ձգտումները և հաղթանակում է Թուրքիայի դեմ ապստամբվելու և զինված պայքար մղելու գիծը։ Այդ գծի կողմնակից էր մայոր Ազիզ Ալի ալ-Մսրիի կողմից 1913 թ. հոկտեմբերի 28-ին հիմնված «ալ-Ահդ» (Պատգամ) գաղտնի զինվորական կազմակերպությունը, որն իր գաղտնի մասնաճյուղերն ուներ Հալեպում, Դամասկոսում, Բաղդադում և Մոսուլում։ «Ալ-Ահդը» այդ շրջանում արաբական երկրներում գործող բոլոր կազմակերպություններից ամենաազդեցիկն էր։ Նրա ղեկավարները կապեր հաստատեցին Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների հետ և տեղյակ պահելով իրենց ծրագրերին, նրանցից ռազմական օգնություն խնդրեցին։

---

[15] «Современная Сирия», М., 1958, стр. 128.

[16] Նույն տեղում։

Սակայն անկախության նվաճման հարցը արաբական երկրներին չհաջողվեց լուծել մինչև առաջին համաշխարհային պատերազմը և երբ բռնկվեց պատերազմը, արաբական երկրները ակամայից նրա մեջ մտան որպես Օսմանյան կայսրության բաղկացուցիչ մաս։ Հայտնի է, որ Թուրքիան մասնակցեց Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ միևնույն բլոկում ընդդեմ Անտանտի երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի։ 1914 թ. հոկտեմբերի 29-ին մտնելով պատերազմի մեջ Թուրքիայի կառավարողները նպատակ ունեին ոչ միայն պահպանել Օսմանյան կայսրության ամրողջականությունը, այլև ընդարձակել այն՝ ի հաշիվ Անդրկովկասի, Կովկասի Ներքին Պովոլժիեի, Ղրիմի, Թուրքեստանի, ինչպես նաև Եգիպտոսի նվաճման[17]։

Պատերազմը չափազանց ծանր անդրադարձավ արաբական երկրների վրա։ Արաբական աշխատաուժի զգալի մասը զորակոչվեց բանակ, ռազմական նպատակների համար գյուղացիներից բռնագրավվեցին անասունները և պարենամթերքը, տասնյակ հազարավոր գյուղացիներ հարկադիր ուղարկվում էին պաշտպանական բնույթի շինությունների վրա աշխատելու և այլն։ Սիրիայի և արաբական մյուս երկրների տնտեսական վիճակը խիստ վատացավ։ Մի շարք վայրերում ժողովուրդը կանգնեց քաղցի եզրին։

Այս պատճառով, ինչպես նաև այն, որ Թուրքիան հրաժարվում էր ճանաչել արաբների ազգային իրավունքները և անկախությունը, արաբների ճնշող մեծամասնությունը թշնամաբար էր վերաբերում պատերազմին։ Ուստի երբ Թուրքիայի սուլթանը հայտարարեց ջիհադ՝ սրբազան պատերազմ, ապա արաբների մոտ այն լայն արձագանք չգտավ։ Դեռ ավելին, արաբները ուրախանում էին, որ թուրքերը պարտություն են կրում ռազմաճակատներում։ Արաբ պինվորները չէին ուզում պատերազմել հանուն Թուրքիայի և մասսայաբար փախչում էին թուրքական բանակից և կազմակերպում պարտիզանական ջոկատներ։ Դրան զուգընթաց ուժեղանում է արաբական ազգայնական կազմակերպությունների հակաթուրքական գործունեությունը։

Այս բոլորը չէր վրիպում թուրքական իշխանությունների աչքից։ Սիրիայում և Պաղեստինում էր գտնվում թուրքական 4-րդ բանակը Ահմեդ Ջեմալ փաշայի հրամանատարությամբ։ Պատերազմի ժամանակ նրա ձեռքում էր կենտրոնացած ամբողջ քաղաքացիական և ռազմական իշխանությունը։

[17] *М. Лазарев*, Крушение турецкого господства на Арабском Востоке, М., 1960, стр. 60.

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի կառավարող շրջանները, օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորություններից, փորձեցին ռազմական ուժով և մասսայական ֆիզիկական բնաջնջման ուղիով լուծել ազգային հարցը, և առաջին հերթին հայկական ու արաբական հարցը։ Անդրադառնալով այդ խնդրին եգիպտական հայտնի պատմաբան Ամին Սաիդը նշում է. «Նրանք (Թուրքիայի ղեկավարները—խմբ.) որոշեցին, որ հասել է հարմար պահը վերջ տալու երկու ուժեղ ազգային շարժումներին—արաբական ազգայնականների շարժմանը Սիրիայում, Իրաքում և Հեջազում, և հայկական շարժմանը Արևելյան Անատոլիայում»[18]։

1915 թ. ապրիլին երիտթուրքերը իրագործեցին հայերի մասսայական ոչնչացումը և բռնի արտաքսումը իրենց բնօրրանից։ 1916 թ. նրանք փորձեցին նույնպիսի հաշվեհարդար տեսնել արաբների հետ։ Թուրքական ոճրագործները համոզվելով, որ արաբները պատրաստ են զինված ապստամբությամբ Թուրքիայից անջատվելու և անկախություն նվաճելու, Սիրիայում և արաբական մյուս երկրներում արյունաբրու տեռոր սանձազերծեցին։ Սկսվեցին մասսայական ձերբակալություններ։ 1916 թ. գարնանը Դամասկոսի և Բեյրութի հրապարակները ծածկվեցին կախաղաններով։ Մահապատժի ենթարկվեց մոտ 800 մարդ՝ արաբական ազատագրական շարժման ականավոր գործիչներ[19]։ Արգելվեց արաբական ազգային կազմակերպությունների գործունեությունը, փակվեցին թերթերը, ակումբները և այլն։ Երիտթուրքերը, չբավարարվելով այսքանով, ինչպես հայերի, արաբների նկատմամբ էլ կիրառեցին դեպորտացիայի՝ տեղահանման քաղաքականություն։ Ջեմալ փաշայի կարգադրությամբ տասնյակ հազարավոր արաբներ իրենց ընտանիքներով բռնի քշվեցին անապատում ստեղծված համակենտրոնացման ճամբարները[20], որտեղ նրանցից շատ-շատերը անտանելի պայմանների հետևանքով մահացան։

Այսպիսի ահավոր տեռորի միջոցով երիտթուրքերը փորձում էին պահպանել իրենց տիրապետությունը և կանխել արաբների զինված ապստամբությունը։ Սակայն այդ նրանց չհաջողվեց։

Արաբներն արագացնում են զինված ապստամբության նախա-

---

[18] *Амин Саид*, Восстания арабов в XX веке, пер. с араб., М., 1964, стр. 79.

[19] *В. Б. Луцкий*, Новая история арабских стран, стр. 327.

[20] Նույն տեղում։

պատրաստումը։ Սիրիայի, Իրաքի, Պաղեստինի, Լիբանանի, Հորդանանի և Արաբիայի ազգային ղեկավարները համաձայնվեցին ապստամբել Թուրքերի դեմ Հեջազի կառավարիչ և Մեքքայի շերիֆ Հուսեյն ալ-Հաշիմիի ղեկավարությամբ։ Ապստամբության նախապատրաստման գործում մեծ էր սիրիական ազգայնականների դերը, որոնք մեծ կշիռ ունեին համաարաբական խնդիրների լուծման մեջ։ Այդ բանը քաջ գիտակցում էր Հուսեյնը։ Նա սիրիական ազգայնականների դիրքորոշումը և ծրագրերը վերջնականապես պարզելու համար 1915 թ. գարնանը Դամասկոս ուղարկեց իր որդիներից մեկին՝ էմիր Ֆեյսալին, որն անմիջապես կապեր հաստատեց նրանց հետ։ Վերջիններս մշակեցին մի փաստաթուղթ, որը հայտնի է Դամասկոսի արձանագրություն անունով։ Սիրիական ազգայնականները գտնում էին, որ արաբները համագործակցելով Անգլիայի հետ, պետք է հանդես գան Թուրքիայի դեմ։ Դրա համար նախ և առաջ անհրաժեշտ էր, որ Անգլիան ճանաչեր արաբական անկախ պետության ստեղծումը իր բնական սահմանների մեջ։ Այն, ինչպես նշված էր Դամասկոսի արձանագրությունում, պետք է ընդգրկեր Արաբական թերակղզին, Սիրիան, Իրաքը, Լիբանանը, Պաղեստինը և Հորդանանը։ Անգլիան պետք է հրաժարվեր կապիտուլյացիայի ռեժիմից և պաշտպանական պայմանագիր կնքեր ապագա անկախ արաբական պետության հետ։ Դրա դիմաց Անգլիան պետք է ստանար տնտեսական մի շարք արտոնություններ[21]։

Ֆեյսալը 1915 թ. հունիսի 20-ին Դամասկոսի արձանագրությունը հանձնեց իր հորը՝ Հուսեյնին։ Արձանագրությունում նշված առաջարկների հիման վրա Հուսեյնը բանակցությունների մեջ մտավ Եգիպտոսում անգլիական գլխավոր կոմիսար Մակ-Մահոնի հետ։ Հուսեյն—Մակ-Մահոն նամակագրությունը տևեց 1915 թ. հուլիսից մինչև 1916 թ. մարտը։ Անգլո-արաբական այդ բանակցությունների հետևանքով Անգլիան համաձայնվեց ճանաչել արաբական անկախ պետությունը, սակայն խիստ փոփոխված սահմաններով։ Դամասկոսի արձանագրությունում նշված ապագա արաբական պետության կազմից հանվեցին Արաբական թերակղզում գտնվող անգլիական պրոտեկտորատները, Դամասկոս—Հոմս—Համա—Հալեպ գծից արևմուտք ընկած ամբողջ տերիտորիան, այսինքն ամբողջ Արևմտյան Սիրիան, Լիբանանը և Կիլիկիան, Բասրայի և Բաղդադի վիլայեթները թեև մտնելու էին արաբական պետության կազմի մեջ, սակայն Անգլիան պահպանելու էր իր իրավունքները։ Դա նշանակում էր, որ նրանք մնալու էին Անգլիայի կառավարման

[21] *G. Antonius*, The Arab awakening, London, 1945, p. 157—158.

ներքո: Սրանք լուրջ զիջումներ էին, որ Հուսեյնը արեց անգլիացիներին: Դրա դիմաց վերջիններս պարտավորվեցին Հուսեյնին ցույց տալ ռազմական, նյութական և ֆինանսական օգնություն[22]:

Անգլիան, որ արաբների օգնության կարիքն էր զգում, վարպետորեն խաղաց արաբների հակաթուրքական և ազատագրական զգացմունքների հետ և կեղծ խոստումներով նրանց զինված պայքարի հանեց Թուրքիայի դեմ: Իրականում Անգլիան, ինչպես նաև Ֆրանսիան, արաբական անկախ պետություն ստեղծելու ոչ մի մտադրություն չունեին:

Դեռ ավելին, Հուսեյնի և Մակ-Մահոնի միջև տեղի ունեցող բանակցություններին զուգահեռ, երբ Անգլիան, թեկուզ փոփոխված սահմաններով, համաձայնվեց արաբական անկախ պետության գաղափարի հետ, 1915 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. մայիսը Անգլիան և Ֆրանսիան գաղտնի բանակցություններ էին վարում արաբական տերիտորիաների բաժանման և գաղութացման վերաբերյալ: Դրա հետևանքը եղավ «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» կնքումը, ըստ որի արաբական երկրները բաժանվում էին մի քանի գոտիների:

1. «Ա» գոտին, որի մեջ մտնում էին Արևելյան Սիրիան և Հյուսիսայինի Իրաքը, համարվեց Ֆրանսիայի ազդեցության գոտի:

2. «Բ» գոտին, որի մեջ մտնում էր Կենտրոնական Իրաքը և Անդրհորդանանը, համարվեց Անգլիայի ազդեցության գոտի: Անգլիան և Ֆրանսիան գտնում էին, որ այդ գոտիների սահմաններում նրանք պատրաստ են ճանաչել և պաշտպանել արաբական «անկախ» պետությունը կամ պետությունների կոնֆեդերացիան, որը, պարզ է, չէր կարող դուրս գալ նրանց ազդեցության ոլորտից:

3. «Կապույտ գոտին», որի մեջ մտնում էին Արևմտյան Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան, Մարդինը, Ուրֆան, Բիրեջիկը, Դիարբեքիրը և Հաքյարին, անցնում էր Ֆրանսիայի լրիվ տիրապետության տակ:

4. Նույնպիսի իրավունքներ էր ձևոք բերում Անգլիան «Կարմիր գոտում», որի մեջ մտնում էր Բաղդադի վիլայեթի մի մասը:

5. «Շագանակագույն գոտի», որն ըստ էության Պաղեստինն էր: Կողմերը համաձայնության եկան, որ Ռուսաստանի, մյուս դաշնակիցների և Մեքքայի շերիֆի հետ խորհրդակցելուց հետո այնտեղ պետք է հիմնել միջազգային վարչություն[23]:

---

[22] Նույն տեղում, էջ 419—427:

[23] „Documents on British foreign policy. 1919—1939", Ist series, v. IV, London, 1952, p. 241—247.

Ինչպես տեսնում ենք, սա ուղղակի հակասում էր այն ամենին, ինչ Անգլիան խոստացել էր արաբներին:

Արաբները, որ ոչինչ չգիտեին «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» գոյության մասին, 1916 թ. հունիսին, իրենց վերցրած պարտավորությանը համաձայն, ապստամբության դրոշ բարձրացրին Թուրքիայի տիրապետությունից վերջնականապես ազատվելու համար: 1916 թ. հունիսի 5-ին Հուսեյնի որդիներ Ալին և Ֆեյսալը Համզայում՝ Մեդինայի մոտ, Հուսեյնի անունից հռչակեցին արաբների անկախությունը:

Ապստամբները ստեղծեցին երեք բանակ—հյուսիսային՝ Ֆեյսալի հրամանատարությամբ, հարավային՝ Ալիի հրամանատարությամբ և արևելյան՝ Հուսեյնի մյուս որդի Աբդալլահի հրամանատարությամբ: Ապստամբությանը բացի հեջազցիներից մասնակցում էին սիրիացիները, լիբանանցիները, իրաքցիները, պաղեստինցիները, հորդանանցիները և այլն: Համագործակցելով անգլիացիների հետ նրանք չախչախիչ հարվածներ էին հասցնում թուրքական նահանջող բանակին և քայլ առ քայլ ազատագրում իրենց երկիրը թուրքերից:

Վրա հասավ Սիրիան և արաբական մյուս երկրները թուրքական լծից ազատագրելու արաբների դարերով երազած պահը:

ԳԼՈՒԽ ՀԻՍԱՆԵՐՈՐԴ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ (1917—1920 ԹԹ.)

Թուրքական բանակի ջախջախումը և Սիրիայի ազատագրումը օսմանյան տիրապետությունից: *Առաջին համաշխարհային պատերազմը գերմանա-ավստրիական բլոկում հանդես եկած Թուրքիայի համար ունեցավ ճակատագրական վախճան: Ջարգացման ցածր մակարդակի վրա գտնվող, տնտեսապես և կուլտուրապես հետամնաց և վատ զինված Թուրքիան չկարողացավ դիմադրել Անտանտի երկրների առաջնակարգ տեխնիկայով զինված բանակներին: Ճիշտ է, պատերազմի սկզբում, մինչև 1916 թ. նա հասավ առանձին հաջողությունների, ինչպես Անտանտի ռազմա-ծովային ուժերի պարտությունը Դարդանելի մոտ, անգլիական զորաբանակի կուտ ալ-Ամարայի տակ 1916 թ. ապրիլին անձնատուր լինելը և այլն, սակայն դրանք առանձին էպիզոդներ էին և ազդեցություն չունեցան առաջին համաշխարհային պատերազմի ընդհանուր ելքի վրա: 1916 թ. երկրորդ կեսից Թուրքիան պարտություն պարտության հետևից էր կրում ինչպես Կովկասյան ճակատում և Բալկաններում, այնպես էլ արաբական ճակատում:*

Արաբական ճակատում Թուրքիայի նպատակն էր ոչ միայն պահպանել իր տիրապետությունները Սիրիայում, Պաղեստինում, Միջագետքում և Արաբիայում, այլև անցնելով Սուեզի ջրանցքը, գրավել Եգիպտոսը և խորանալ Հյուսիսային և Կենտրոնական Աֆրիկայում: Այդ լայն նվաճողական ծրագրերի իրագործումը դրված էր թուրքական 4-րդ բանակի վրա, որը գտնվում էր Սիրիայում և Պաղեստինում: Նրա հրամանատարն էր Օսմանյան կայսրության ծովային մինիստր Ահմեդ Ջեմալ փաշան, որը էնվերի և Թալեաթի

Հետ միասին կազմում էին Երիտթուրքերի տխրահռչակ տրիումվիրատը: Իրականում 4-րդ բանակի հրամանատարությունը պատկանում էր գերմանական զինվորական միսիային՝ Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ: Նույնիսկ բանակի շտաբի պետը ոչ թե Թուրք էր, այլ գերմանացի՝ զնդապետ Կրեսս ֆոն Կրեսսենշտեյնը:

Թուրքական զորքերի բոլոր փորձերը՝ դրավել Սուեզի ջրանցքը և պատերազմը տեղափոխել Եգիպտոս, ավարտվեցին անհաջողությամբ և 1916 թ. երկրորդ կեսից Արաբական Արևելքի բոլոր ռազմաճակատներում նրանք անցան պաշտպանության: Այստեղ նրանց դեմ կանգնած էին հիմնականում անգլիական բանակները: Կար նաև ֆրանսիական փոքր զորախումբ, որն ավելի շատ սիմվոլիկ, քան թե ռազմական նշանակություն ուներ: Անգլիացիների հիմնական ռազմական դաշնակիցը Արաբական Արևելքում արաբական ապստամբ բանակն էր Հեջազի Թագավոր Հուսեյնի[1] որդի Էմիր Ֆեյսալի հրամանատարությամբ: Այդ բանակի թիվը սկզբնական շրջանում հասնում էր 50 հազարի[2], սակայն հետագայում, երբ նա դուրս եկավ Հեջազից և մտավ Պաղեստին ու Սիրիա, նրա շարքերն ավելի սակավացան:

Թուրքերին վռնդելով Հեջազից՝ անգլիական զորքերը և արաբական բանակը 1917 թ. սկզբներին մտան Պաղեստին: 1917 թ. հուլիսի 6-ին արաբական զորքերը դրավեցին Ակաբան[3], որի անկումը ծանր հարված էր թուրքական բանակին: Արաբները լրիվ ապատագրեցին Կարմիր ծովի ափերը և իրենց ու անգլիացիների համար շատ կարևոր հենարան ստեղծեցին Սիրիա մտնելու համար: 1917 թ. հոկտեմբերի 31-ին անգլիացիներն անցան հարձակման Դաղա-Բեեր-շեբա հատվածում, ճեղքեցին թուրքական պաշտպանությունը և, շարժվելով հյուսիս, 1917 թ. նոյեմբերի 16-ին գրավեցին Յաֆֆան, իսկ դեկտեմբերի 9-ին՝ Երուսաղեմը[4]: Դա նշանակում էր, որ թուրքական զորքերը ջախջախիչ պարտություն կրեցին ամբողջ Պաղեստինում: Անգլիացիները վճռական հաջողությունների հասան նաև Միջագետքում: 1917 թ. փետրվարից մինչև նոյեմբեր ամիսը նրանք գրավեցին Տիգրիսի ամբողջ աջ ափը

---

[1] 1916 թ. նոյեմբերի 2-ին արար ֆեոդալները Հուսեյնին հռչակեցին «արար ազգի թագավոր»: Սակայն Անգլիան ու Ֆրանսիան նրան ճանաչեցին որպես միայն ու միայն Հեջազի թագավոր, որի հետ և Հուսեյնը վերջիվերջո հաշտվեց:

[2] *В. Б. Луцкий*, Новая история арабских стран, стр. 338.

[3] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, Beirut, 1960, p. 23.

[4] *В. Б. Луцкий*, Новая история арабских стран, стр. 345.

մինչև Հայֆա, Կուտ ալ-Ամարան, Դահրա Բենդը, Բաղդադը (մարտի 11-ին), Ռամադին և Հասան մինչև Թիկրիտ։ Օրակարգի հարց դարձավ Սիրիայի ազատագրումը։ Սակայն արաբների և անգլիացիների հարաբերությունները հարթ չէին ընթանում և պատերազմի ժամանակ նրանց միջև ծագեցին լուրջ տարաձայնություններ, որոնք մի պահ հարցականի տակ դրեցին նրանց հետագա համագործակցությունը։ Տարաձայնությունների առաջին աղբյուրը արաբական բանակը ժամանակակից տեխնիկայով զինելու հարցն էր։ Արաբական բանակը իրենից ներկայացնում էր բեդևիններից բաղկացած հեծելազոնդ, որի հիմնական զենքը թուրն էր։ Կային նաև հրացաններ, սակայն շատ սահմանափակ քանակությամբ. հինգ մարդուն ընկնում էր մեկ հրացան։ Այսպիսի պայմաններում արաբների համար դժվար էր կռվել թուրքական բանակի հետ, որը նրանց դեմ օգտագործում էր գնդացիրներ և հրետանի։ Այդ պատճառով էլ արաբների կորուստները հասնում էին մեծ չափերի։ Հուսեյնը դիմեց անգլիական հրամանատարությանը արաբական բանակին ինքնաթիռներ, գնդացիրներ, հրետանի և հրացաններ տրամադրելու պահանջով, սակայն մերժում ստացավ։ Դա բացատրվում է նրանով, որ Անգլիային ձեռնտու չէր արաբական բանակի ուժեղացումը։ Լավ զինված և ուժեղ արաբական բանակը կարող էր մեծ դեր խաղալ արաբական երկրների անկախության նվաճման գործում և լուրջ խոչընդոտ դառնալ արաբական երկրները բաժանելու անգլո-ֆրանսիական իմպերիալիստական ծրագրերի իրագործման ճանապարհին։

Արաբների մոտ լուրջ դժգոհություն առաջացրեց նաև Բալֆուրի դեկլարացիան Պաղեստինում հրեական օջախ ստեղծելու վերաբերյալ։ 1917 թ. նոյեմբերի 2-ին Անգլիայի արտաքին գործերի մինիստր լորդ Բալֆուրը, ծագումով հրեա, բանկիր Ռոտշիլդին պաշտոնապես ուղղված նամակում հայտնեց, որ Անգլիան ամեն ինչ կանի, որպեսզի Պաղեստինում ստեղծվի հրեական ժողովրդի ազգային օջախ։ Գործարքի մեջ մտնելով սիոնիստների հետ, անգլիական իմպերիալիստները ցանկանում էին Պաղեստինն անջատել ապագա արաբական պետությունից։

Արաբա-անգլիական տարաձայնությունները սրվեցին և արաբների դժգոհությունն իր գագաթնակետին հասավ, երբ նրանք իմացան «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» գոյության մասին[5]։ 1917 թ. նոյեմբերի 22-ին սովետական կառավարությունը հրապարակեց

[5] «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» մասին տե՛ս սույն աշխատության էջ 24։

յարական Ռուսաստանի դաշնակից փաստաթղթերը, այդ թվում նաև «Սայքս-Պիկոյի համաձայնագիրը» արաբական երկրները Անգլիայի և Ֆրանսիայի միջև բաժանելու վերաբերյալ[6]։ 1917 թ. նոյեմբերի 28-ին այդ համաձայնագրի հիմնական բովանդակությունը հրապարակեց անգլիական «Մանչեստր Գարդիան» թերթը։ Նոյեմբերի վերջերին Ջեմալ փաշան իր դաշտնի գործակալին ուղարկեց Ակաբա, որտեղ նա «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» լրիվ տեքստը հանձնեց էմիր Ֆեյսալին։ Այդ գործակալը նաև Ջեմալ փաշայի նամակները հանձնեց Ֆեյսալին և Ջաֆար ալ-Ասկարիին, Թուրքիայի կառավարության անունից պաշտոնապես առաջարկելով արաբական կողմին՝ բանակցություններ սկսել սեպարատ հաշտության կնքելու մասին[7]։

Անգլո-ֆրանսիական դաշնակի համաձայնագրի բովանդակության հայտնի դառնալը խոր դժգոհություն առաջացրեց արաբների մոտ։ Վերջիններս հասկացան, որ իրենք խաբված են և Անգլիան ըստ իր սովորության երկդիմի քաղաքականություն է վարում։ «Սայքս-Պիկոյի համաձայնագրին» վերաբերյալ Անգլիային իր պաշտոնական բողոքը հայտնեց Հուսեյն թագավորը, նշելով, որ ինքը «երբեք չի հանդուրժի Ֆրանսիայի հետ կնքած որևէ պայմանագիր»[8]։ Զայրույթն այնքան խորն էր, որ արաբական շատ սպաներ ու զինվորներ այլևս անհնար էին համարում պատերազմել անգլիացիների հետ կողք-կողքի։

Արաբները չցանկանալով գործիք լինել Անտանտի ձեռքում և ի նկատի ունենալով, որ Բարձրագույն Դուռը Ջեմալ փաշայի միջոցով պաշտոնապես առաջարկել էր սեպարատ հաշտություն կնքել, 1917 թ. վերջերից բանակցություններ սկսեցին Թուրքիայի հետ, որոնք տևեցին մինչև 1918 թ. աշունը։ Սակայն այդ բանակցությունները ավարտվեցին անարդյունք «Թուրքերի լկտիության պատճառով, որոնք հրաժարվեցին ճանաչել արաբների ազգային պահանջները»[9]։

Անգլիան նույնպես քնած չէր։ Նա դիմեց մի շարք տակտիկական քայլերի, որոնց նպատակն էր փարատել արաբների կասկածանքները Անգլիայի նկատմամբ և նախկինի պես խաղալով արաբների ազգային զգացմունքների հետ, նրանց օգտագործել Թուր-

[6] «Документы внешней политики СССР», т. I, М., 1957, стр. 21—22.

[7] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 21.

[8] „Documents on British foreign policy. 1919—1939", Ist ser. v. IV, p. 400.

[9] *В. Б. Луцкий*, Новая история арабских стран, стр. 347.

քիայի դեմ դեռևս շարունակվող պատերազմում։ Անգլիայի պրեմիեր-մինիստր Լլոյդ Ջորջը իր հուշերում անդրադառնալով սովետական կառավարության կողմից «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» հրապարակման հարցին և ընդունելով, որ դա խոր զայրույթ առաջացրեց արաբական շրջաններում, գրում է. «Անհրաժեշտ էին նոր հավաստիացումներ, որպեսզի կանխվեր խզումը արաբների հետ»[10]։ Անգլիական կառավարությունը պաշտոնապես հերքեց «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» գոյությունը և, ինչպես դիպուկ կերպով նկատել է արաբ պատմաբան Ամին Սաիդը, առանց ամոթի զգացումի հայտարարեց, որ դա բոլշևիկների հնարածն է, որի նպատակն է սեպ խրել արաբների և անգլիացիների հարաբերությունների միջև և նրանց գժտեցնել միմյանց հետ։ Անգլիական կառավարության պաշտոնական հայտարարության մեջ, որը 1918 թ. հուլիսի 8-ին ուղարկվեց Հեջազի թագավոր Հուսեյնին, ասված էր, որ բոլշևիկները, իբր, արտաքին գործերի մինիստրությունում, Պետրոգրադում, հայտնաբերել են ոչ թե պայմանագիր, այլ հակիրճ բանակցությունների և զրույցների նյութեր, որոնք տեղի են ունեցել Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ներկայացուցիչների միջև և որ Ջեմալ փաշան իր տգիտության հետևանքով, իբր, խեղաթյուրել է այդ բանակցությունների հիմնական նպատակը[11]։ Ժխտելով արաբական երկրների բաժանման վերաբերյալ գաղտնի համաձայնագրի գոյությունը, Անգլիան միաժամանակ կրկին հավաստիացրեց արաբներին, որ Անտանտի նպատակն է պաշտպանել ձնշված ժողովուրդների ազատությունը և նա հավատարիմ է իր նախկին խոստումներին արաբների ազատագրման և արաբական սուվերեն պետության ստեղծման հարցում։ Արաբների և Անգլիայի միջև ծագած կոնֆլիկտն ըստ էության հարթվեց։ Այստեղ իր բացասական դերը խաղաց Հուսեյնի և արաբական ֆեոդալական վերնախավի, որը կապված էր Անգլիայի հետ, անհետևողական դիրքը։ Կտրված լինելով ժողովրդական զանգվածներից, նրանք ավելի շատ մտահոգված էին իրենց նեղ դասակարգային եսասիրական շահերով։ Փաստորեն այդ է ակնարկում նաև Ամին Սաիդը, երբ, ի նկատի ունենալով Հուսեյնի դիրքը «Սայքս-Պիկոյի համա-

---

[10] *Д. Ллойд Джордж,* Правда о мирных договорах, т. 2, М., 1939, стр. 226.

[11] „Documents on British foreign policy, 1919—1939", Ist ser. v. IV, p. 407.

ձայնագրի» կապակցությամբ ծագած կոնֆլիկտի ժամանակ, նշում է. «ցավոք, Հուսեյնը շարունակում էր հավատալ անգլիացիների անկեղծությանը և բարեկամությանը»[12]։

Անգլիական և արաբական զորքերի հաղթանակները և թուրքական բանակի պարտությունը Հնջազում, Պաղեստինում և Միջագետքում չեռնված խանդավառություն առաջացրեց արաբների մոտ։ Շատ վայրերում նախքան արաբական և անգլիական զորքերի մոտենալը արաբական ցեղերը ապստամբվում և անցնում էին նրանց կողմը։ Այդպես վարվեցին ալ-Հուվեյտար ցեղը Օդե Աբու Թարիի, ռուալ ցեղը շեյխ Նուրի աշ-Շաալանի գլխավորությամբ, ալ-մաֆալի ցեղը ալ-Կարկի շրջանում[13] և այլն։ Սիրիայի տարբեր բաղաքներից և գյուղերից մասսայաբար անցնում էին ռազմաճակատի կիծը և միանում արաբական բանակին։ Իրաքում արաբական և քրդական անկանոն զորաջոկատները սկսեցին ոչ միայն հեռանալ ռազմաճակատից, այլև միանալով արաբ ապստամբներին իրենց զենքն ուղղեցին թուրքերի դեմ[14]։ Թուրքիան գտնվում էր ռազմական կործանման եզրին։

Այսպիսի բարենպաստ պայմաններում անգլիական և արաբական զորքերը, դեներալ. Հեռադայում ֆելդմարշալ Ալլենբիի ընդհանուր հրամանատարությամբ անցան հարձակման՝ Սիրիան թուրքերից վերջնականապես մաքրելու համար։ Այս գործում նրանց մեծ օժանդակություն ցույց տվին արաբ ապստամբ ցեղերը։ 1918 թ. սեպտեմբերին Ջեբել-Դրուզում ապստամբվեցին դրուզները Սուլթան ալ-Աթրաշի գլխավորությամբ։ Թուրքերը այստեղ զբաղվեին պարտություն կրեցին։

Անգլիական բանակը 1918 թ. սեպտեմբերի 19-ին հարձակման անցավ՝ Ռաֆաթի և Արարայի շրջանում։ Նաբլուսի մոտ գերմանա-թուրքական ճակատի ճեղքմանը անգլիացիների հետ առաջին անդամ մասնակցեց նաև Արևելյան լեգեոնը։ Արևելյան լեգեոնի ստեղծման որոշումն ընդունվեց 1916 թ. նոյեմբերի 26-ին, Հայ Ազգային պատվիրակության և Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության միջև ձեռք բերված համաձայնագրի հիման վրա[15]։ Այդ համաձայնագրում ասված էր, որ ֆրանսիական կառավարու-

---

[12] *Амин Саид*, Восстания арабов в XX веке, стр. 72.

[13] Նույն տեղում, էջ 82։

[14] *В. Б. Луцкий*, Новая история арабских стран, стр. 349.

[15] Տ. Յ. Պոյաճեան, Հայկական լեգեոնը. պատմական հուշագրություն, Ուսիբբաուն, 1965, էջ 15—16։

թյունը որոշել է քաջալերել հայ և սիրիական ժողովուրդների թուրքերի դեմ պայքարելու բաղձանքները։ Լեգեոնը մասնակցելու էր միայն Ասիական Թուրքիայում մղվող ռազմական գործողություններին։ Նրա ընդհանուր հրամանատար նշանակվեց ֆրանսիական բանակի գնդապետ Ռոմիյոն։ Լեգեոնը, որ ձևավորվեց կամավորության սկզբունքով, հիմնականում բաղկացած էր հայերից, որոնց թիվը հասնում էր 3000-ի։ Բացի հայերից նրա կազմի մեջ մտնում էր սիրիացիների մի փոքր խումբ[16]։ Հայ-սիրիական այս միացյալ զորախումբն առաջին մարտական մկրտությունը ստացավ, ինչպես նշվեց, 1918 թ. սեպտեմբերի 19-ին։ Արևելյան լեգեոնը ռազմական դիրքեր գրավեց Արարա սարի մոտ՝ Նաբլուսից հարավ։ Ավելի քան 12 ժամ հայ և սիրիական ղինվորները դիմադրում էին թուրքերին, որից հետո, ինչպես ռազմաճակատի մյուս հատվածներում, այնպես էլ այստեղ, թուրքական բանակը չդիմացավ և փախուստի դիմեց։ Արևելյան լեգեոնի ռազմական գործողությունները Արարայի մոտ բարձր գնահատեց գնդապետ Ռոմիյոն։ «Վաշտը,—հայտարարեց նա,—այս դիրքը գրավեց անսպասելիորեն գեղեցիկ խանդով մը և պահեց զայն Արարայի ահեղ հարվածներուն տակ, զոր գերմանացիք թրքական դիմադրության զորավոր առանցքը ըրած էին այն բաժնին մեջ, ուր այդ դիմադրությունը խորտակվեցավ։

Ավելի քան տասներկու ժամվա ընթացքին սքանչելի կեցվածքը, հակառակ իր կորուստներուն, կարելի ընծայեց իրականացումը թշնամին կասեցնելու իր առաքելության, որով կռվի շարունակությունը վաշտին կողմի ավելորդ եղավ»[17]։ Նա միաժամանակ ավելացրեց, որ հայ հերոսները բոլորն էլ պատերազմի առաջին դծի վրա ընկան՝ իրենց երեսը դեպի թշնամին և դրանով օրինակ հանդիսացան ուրիշների համար[18]։

Սեպտեմբերի 19-ին տեղի ունեցած հարձակման և թուրքական ճակատի ճեղքման հետևանքով անգլիական զորքերը գրավեցին Նաբլուսը, Նազարեթը և շարունակեցին շարժվել հյուսիս։ Իսկ արաբական 15 հազարանոց հեծելազունդը Ֆեյսալի հրամանատարությամբ Մաանը ազատագրելուց հետո մեծ երթ կատարեց և հայտնվելով Դերաայի շրջանում՝ Ամմանի և Դամասկոսի միջև, փակեց թուրքական չորրորդ բանակի նահանջի ուղին և անգլիացիների հետ միասին շրջապատեց թուրքական բանակի մի մեծ զորա-

[16] Նույն տեղում, էջ XXII։

[17] Նույն տեղում, էջ 129։

[18] Նույն տեղում։

խումբ[19]։ Դերի հանձնվեցին 72 հազար թուրք և 4 հազար գերմանացի զինվորներ ու սպաներ[20]։

Արաբական և անգլիական զորքերի առաջխաղացումը դեպի հյուսիս շարունակվեց, և 1918 թ. սեպտեմբերի 30-ին գիշերվա ժամը 3-ին Ձեյսալի զորքերը մտան Դամասկոս։ Հաջորդ օրը ժամանեցին նաև անգլիական զորքերը։ Դամասկոսի վրա թուրքական դրոշի փոխարեն սկսեց ծածանվել Հուսեյն թագավորի «Արաբական ապստամբության դրոշը», որը եռագույն էր—սև, սպիտակ և կանաչ։ Հոկտեմբերի 8-ին ազատագրվեց Բեյրութը։ Շարունակելով իրենց հարձակումը արաբա-անգլիական զորքերը 1918 թ. հոկտեմբերին ազատագրեցին Դամասկոսից հյուսիս ընկած ամբողջ տերիտորիան, այդ թվում նաև Հոմս (հոկտեմբերի 11-ին) և Համա (հոկտեմբերի 17-ին) քաղաքները և մոտեցան Հալեպին։ Հալեպից հարավ, Խան Թումանում պաշտպանական դիրքեր էին գրավել պարտված թուրքական բանակի մնացորդները Մուստաֆա Քեմալի հրամանատարությամբ։ 1918 թ. հոկտեմբերի 25-ին Խան Թումանի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում արաբները գլխովին չախջախեցին թուրքերին և ազատագրեցին Հալեպը։ Խան Թումանի մոտ ճեռք բերած հաղթանակով արաբները, ինչպես նշում է Ամին Սաիդը, ուևանշ վերջերին թուրքերից 1516 թ. Մարջ Դաբիկում կրած պարտության համար[21]։ 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում «Ադամիմնոն» նավի վրա կնքված զինադադարով Թուրքիան պարտավորվեց իր կայազորները Լիբանանում, Սիրիայում, Պաղեստինում, Իրաքում, Հեջազում, Ասիրում և Եմենում հանձնել դաշնակիցներին[22]։ Դա նշանակում էր, որ Թուրքիան այդ տերիտորիաները հանձնում էր Անգլիայի և Ֆրանսիայի տնօրինությանը։ Դրանով վերջ տրվեց չորս հարյուր տարի տևած օսմանյան դաժան ու բռնատիրական լծին Սիրիայում և արաբական մյուս երկրներում։

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությանը, ինչպես նշվեց, զգալի չափով նպաստեցին արաբական ապստամբությունը և արաբական բանակի ու պարտիզանների գործողությունները։ Այդ բանը սակավ բացառությամբ[23], ընդունում

---

[19] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, London. 1958, p. 63.

[20] *В. Б. Луцкий*, Новая история арабских стран, стр. 349—350.

[21] *Амин Саид*, Восстания арабов в XX веке, стр. 83.

[22] *Ю. В. Ключников, А. В. Сабанин*, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 2. М., 1926, стр. 189.

[23] *J. Marlowe*, Arab nationalism and British imperialism, London, 1961 p. 21.

է պատմաբանների և ռազմական ու պետական գործիչների մեծ մասը։ Այսպես, օրինակ, անգլիական պատմաբան և քաղաքական գործիչ Ռ. Բուլլարդը գրում է, որ «Արաբական ապստամբությունը փոքր նշանակություն չունեցավ դաշնակիցների համար»[24]։ Իսկ անգլիական հայտնի հետախույզ Թ. Լոուրենսը, որը քիչ բան չարեց այդ ապստամբության նախապատրաստման գործում, գրում է. «Արաբական ապստամբությունը մեր գլխավոր զենքն էր արևելյան պատերազմում հաղթելու գործում»[25]։ Արաբների ցույց տված ռազմական օգնությունը բարձր է գնահատել նաև Անգլիայի պրեմիեր-մինիստր Դ. Լլոյդ Ջորջը։ 1919 թ. սեպտեմբերի 15-ին Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի և Ճապոնիայի դեկավարների ներկայությամբ նա ընդունեց, որ արաբները հավատարիմ մնալով իրենց խոստմանը շատ անհանգստություն պատճառեցին թուրքերին և մեծ օգնություն ցույց տվին անգլիական զորքերին[26]։ Իսկ Եգիպտոսում անգլիական էքսպեդիցիոն ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ալլենբին, որը 1917 թ. ստանձնեց նաև Մերձավոր Արևելքում անգլիական բոլոր զորքերի հրամանատարությունը, Փարիզի կոնֆերանսում արած իր հայտարարության մեջ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դաշնակիցներին արաբների ցույց տված օգնությունը համարեց անգնահատելի[27]։

Օսմանյան տիրապետության կործանումով փակվեց Սիրիայի և արաբական մյուս երկրների պատմության թերևս ամենամռայլ էջը և սկսվեց նոր էտապ, որի ժամանակ գլխավոր պատմական խնդիրը դարձավ ազգային անկախության նվաճումը և ինքնուրույն պետության ստեղծումը։

Հոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը Սիրիայում հակաիմպերիալիստական պայքարի ուժեղացման գործում: Սիրիական ազգային-հայրենասիրական ուժերը իրենց երկրի անկախության նվաճմանը ձեռնամուխ եղան պատմական մի այնպիսի դարաշրջանում, որն իր վրա կրում էր Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության դրոշմը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը բարենպաստ պայմաններ ստեղծեց Արևելքում, այդ թվում նաև Սի-

[24] *R. Bullard*, Britain and the Middle East, London, 1951, p. 73.

[25] *T. Lawrence*, Seven pillars of wisdom, London, 1935, p. 275—276.

[26] „Dooument on British foreign policy. 1919—1939", Ist ser. v. I, London, 1947, p. 691.

[27] „Papers relating to the foreign relations of the United States· The Paris Peace Conference", v. V, Washington, 1946, p. 8.

րիայում ազգային-ազատագրական շարժումների ծավալման համար և մեծապես խթանեց հակաիմպերիալիստական պայքարը։ Ճնշված ժողովուրդներն ի դեմս Սովետական Միության ձեռք բերին հավատարիմ դաշնակից։ Պատմության մեջ առաջին անգամ ապարեկ էր իջել մի պետություն, և այն էլ մեծ պետություն, որը հանդես էր գալիս ոչ թե հանուն ուրիշ ժողովուրդների ստրկացման, այլ ճնշված, թույլ և փոքր ժողովուրդների ազատագրման։

Սովետական կառավարության առաջին դեկրետները և նրանում հռչակված հումանիստական վեհ սկզբունքները մեծ տպավորություն գործեցին արաբների վրա։ 1917 թ. նոյեմբերի 8-ին Վ. Ի. Լենինի գլխավորած սովետական կառավարությունն ընդունեց հաշտության մասին դեկրետ, որը նշանավոր էր ոչ միայն նրանով, որ բոլոր պատերազմող ժողովուրդներին և կառավարություններին առաջարկում էր անհապաղ բանակցություններ սկսել արդարացի դեմոկրատական հաշտության վերաբերյալ, այլ նաև նրանով, որ առաջին անգամ տրվում էր աննեքսիայի սահմանումը։ Աննեքսիայի տակ սովետական կառավարությունը հասկանում էր փոքր և թույլ ժողովրդի ամեն մի բռնի միացում մեծ և ուժեղ պետության, առանց այդ փոքր ժողովրդի ցանկության և համաձայնության[28]։ Աննեքսիայի սահմանումը մեծ նշանակություն ուներ Սիրիայի և արաբական մյուս երկրների ժողովուրդների համար, քանի որ նրանց երկրները, ինչպես նշվեց վերևում, արդեն բաժանվել էին Անգլիայի և Ֆրանսիայի միջև։

1917 թ. նոյեմբերի 15-ին հրապարակվեց «Ռուսաստանի ժողովուրդների դեկլարացիան», որը հռչակում էր ժողովուրդների իրավահավասարության սկզբունքը և ընդունում ազգերի ինքնորոշման իրավունքը ընդհուպ մինչև անջատվելը և ինքնուրույն պետության կազմելը[29]։

Սիրիայի և արաբական մյուս երկրների վրա մեծ ազդեցություն գործեց ՌՍՖՍՀ Ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 3-ի դիմումը «Ռուսաստանի և Արևելքի բոլոր մուսուլման աշխատավորներին»։ Այդ դիմումում նշվում էր, որ Արևելքի ժողովուրդներն իրենց կյանքն ազատորեն տնօրինելու նույնպիսի իրավունք ունեն, ինչպես մյուս ժողովուրդները։ «Արևելքի մուսուլմաններ, պարսիկներ և թուրքեր, արաբներ և հնդիկներ,— ասված է այդ դիմումում։ Դուք ինքներդ պետք է դառնաք ձեր երկրի տերը։ Դուք ինքներդ պետք է

[28] «Документы внешней политики СССР», т. 1, стр. 12.

[29] Նույն տեղում, էջ 15։

ձեր կյանքը կառուցեք ըստ ձեր ցանկության։ Դուք դրա իրավունքը ունեք, քանի որ ձեր ճակատագիրը ձեր սեփական ձեռքերում է»[30]։

Այս դեկրետները և սովետական կառավարության կարևոր միջոցառումները ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում—կալվածատերերի և կապիտալիստների իշխանության տապալում, արդյունաբերության, բանկերի և հողի ազգայնացում, ազգային իրավահավասարության հռչակում և այլն, զանազան ուղիներով հայտնի էին դառնում Սիրիայի և արաբական մյուս երկրների հասարակայնությանը։ Սիրիայում, Լիբանանում և Եգիպտոսում առանձնապես լայն տարածում գտավ «Ռուսաստանի և Արևելքի բոլոր մուսուլման աշխատավորներին» ուղղված սովետական կառավարության դիմումը։ Հետաքրքիր է նշել, որ նրա արաբերեն տեքստը վերոհիշյալ երկրներում ձեռքից ձեռք էր անցնում որպես Վ. Ի. Լենինի նամակը արաբական ազգային շարժման ղեկավարներին և շատ ընտանիքներում պահվում էր ինչպես սուրբ մասունք[31]։

1918—1920 թթ. Եգիպտոսի մի շարք գյուղական վայրերում ստեղծվեցին հեղափոխական կոմիտեներ, որոնք, ըստ ռուսական օրինակի, կոչվում էին «սովետներ»[32]։ Եգիպտական ազգայնականները ազգային-ազատագրական պայքարն ավելի հաջող կազմակերպելու համար ուսումնասիրում էին ռուսական կոմունիստների պայքարի մեթոդները[33]։ Անգլիական բանակի մայոր Սոնը 1919 թ. Իրաքից հաղորդում էր, որ «բոլշևիզմի անունը և սկզբունքը, ցավոք սրտի, դառնում են հայտնի»[34]։ Անգամ բուրժուական պատմաբաններն ստիպված էին ընդունել, որ հակաիմպերիալիստական պայքարի ուժեղացումն Իրաքում այդ տարիներին ուղղակիորեն կապված էր Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարների տարածման հետ։ Այսպես, ամերիկյան պատմաբան Վ. Յեյլը նշում է, որ Իրաքում «...դիմադրությունն արևմտյան իմպերիալիզմին ուժեղացավ ռուսական հեղափոխության և բոլշևիկյան պրոպագանդայի ազդեցության ներքո»[35]։

---

[30] Նույն տեղում, էջ 35։

[31] «Новейшая история арабских стран (1917—1966)», М., 1968, стр. 13.

[32] «Советско-арабские дружественные отношения», М., 1961, стр. 8.

[33] *G. Young*, Egypt, London, 1927, p. 231.

[34] *A. Wilson*, Mesopotamia 1917—1920. A clash ot loyalties, London, 1931, p. 145.

[35] *W. Yale*. The Near East. A modern history, Michigan, 1955, p. 317.

Բոլշևիզմի գաղափարները ներթափանցում և իրենց բարերար ազդեցությունն են թողնում նաև Սիրիայում և Լիբանանում։ 1920 թ. Նեյսալը դժգոհում էր, որ երկրում գնալով աճում է բոլշևիզմի կողմնակիցների թիվը[36]։ Սիրիայի և Լիբանանի գյուղացիության վրա հատկապես մեծ ազդեցություն էր գործել սովետական Ռուսաստանում կալվածատիրական հողերի բռնագրավումը և բաժանումը աղքատ գյուղացիներին։ Լիբանանի դատախազ Ֆուադ Ամմունը այդ մասին նշում էր. «Սովետական հանրապետությունների հռչակած դեկրետները, որոնք վերացրին հողի մասնավոր սեփականությունը և հողը կենդանի ու անշարժ գույքով հանձնեցին ամբողջ աշխատավոր ժողովրդի տնօրինությանը—ռուսական ագրարային օրենքի այդ պայմաններն այնպիսին են, որ սկսում են ազդել գյուղացիության վրա»[37]։ Սիրիայի և Լիբանանի գյուղացիները սկսում են պահանջել, որ նրանց հետ վարվեն այնպես, ինչպես գյուղացիների հետ վարվում են սովետական երկրում։

Սակայն Սիրիայում բոլշևիկյան գաղափարների տարածման մասին ավելի ցայտուն վկայում է «Արաբների միասնության կոմիտեի» փաստաթղթերից մեկը, որի մեջ ասված էր. «Լենինի և նրա ընկերների կառավարությունը և Արևելքը եվրոպական բռնատերերից ազատագրելու համար նրանց բարձրացրած մեծ հեղափոխությունը արաբների կողմից մեծարվում են իբրև նրանց երջանկության և բարեկեցության տվող մեծ ուժ։ Ամբողջ աշխարհի երջանկությունը և հանդիստը կախված է արաբների և բոլշևիկների դաշինքից»։ Սիրիայում ստեղծված «Արաբների միասնության կոմիտեի» այդ փաստաթուղթն ավարտվում էր «Կեցցե՛ Լենինը, նրա ընկերները և Սովետական իշխանությունը» բառերով[38]։

Այսպիսով, կարելի է ասել, որ Մեծ Հոկտեմբերը, հեղափոխականացնելով միջազգային իրադրությունը, բարենպաստ պայմաններ ստեղծեց Արևելքի հնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների համար և, ինչպես ցույց կտրվի ստորև, մեծապես խթանեց նրանց, այդ թվում և սիրիացիների, հայրենասիրական ուժերի հակաիմպերիալիստական պայքարը։ Ինչպես հիշատ նկատել է արաբ պատմաբան ու քաղաքական գործիչ էմիլ Թուման, «արաբական բոլոր առաջավոր երկրներում հեղափոխա-

---

[36] «Советско-арабские дружественные отношения», стр. 8.

[37] Նույն տեղում, էջ 8—9։

[38] «Великий Октябрь и народы Востока», сборник, М., 1957, стр. 37.

կան ելույթները առաջին համաշխարհային պատերազմի և Հոկտեմբերյան հեղափոխության բնական հետևանքներն էին»[39]:

Ահա այսպիսի պայմաններում պետք է սիրիական ազատագրական ուժերը լուծեին օսմանյան լծից ազատվելուց հետո իրենց առջև կանգնած ամենակարևոր խնդիրը՝ ազգային անկախ պետության ստեղծումը:

Սիրիական առաջին ազգային կառավարության ստեղծումը: Դամասկոսը և Սիրիայի մեծ մասն ազատագրելուց հետո սիրիացիների մոտ կասկած չկար, որ հասել է իրենց անկախ պետություն ստեղծելու ժամը: Այդ հավատը նրանց մոտ ավելի ուժեղացավ, երբ Անգլիան ոչ միայն հերքեց «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» գոյությունը, այլև վերստին արաբներին հավաստիացրեց, որ ինքը դեմ չէ արաբական սուվերեն պետության ստեղծմանը: Այդ հավատով լի, խանդավառված սիրիացիները ձեռնամուխ եղան ազգային պետական մարմինների կազմավորմանը: Սակայն այդ գործը հարթ և խաղաղ չընթացավ: Արաբների մոտ կային տարբեր ուժեր, որոնցից յուրաքանչյուրը ձգտում էր իր ձեռքը վերցնել Սիրիայի կառավարման գործը: Իրը էմիր Ֆեյսալի զորքերը մտան Դամասկոս, այնտեղ արդեն գոյություն ուներ «արաբական կառավարություն» Աբդ ալ-Կադր և Մուհամեդ Սաիդ ալ-Ջազաիրի եղբայրների գլխավորությամբ: Այդ «կառավարությունը» ստեղծել էին թուրքերը Դամասկոսը թողնելուց առաջ՝ Ջեմալ փաշայի կարգադրությամբ[40]: Ֆեյսալը և նրա կողմնակիցները, որոնք կազմակերպել էին արաբական ապստամբությունը, իրենց ուսերի վրա տարել թուրքերի դեմ մղված պատերազմի ամբողջ ծանրությունը և ղեկավարել արաբական ազատագրական շարժումը, բնականաբար, չէին կարող հանդուրժել, որ իրենց փոխարեն իշխանությունը գրավեն այլ ուժեր և այն էլ պարտություն կրած թուրքերի քմահաճությամբ: 1918 թ. հոկտեմբերի 1-ին էմիր Նասերը և Լոուրենսը տեսակցություն ունեցան Մուհամեդ Սաիդ ալ-Ջազաիրիի հետ և պահանջեցին հրաժարվել այսպես կոչված «Արաբական կառավարության ղեկավարի» պաշտոնից և այդ կառավարությունն էլ ցրել: Ալ-Ջազաիրին բուռն կերպով փորձում էր պաշտպանել իր իրավունքները և հիմնավորել իր կառավարության «օրինականը» լինելը: Սակայն Լոուրենսն այդ կառավարությունը հայտարարեց տապալված և էմիր Ֆեյսալի կող-

---

[39] اميل توما، العرب و التطور التاريخى فى الشرق الاوسط، حيفا، ١٩٦٣، ص ١٤٤.

[40] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p, 26.

մից Սիրիայի ռազմական կառավարիչ նշանակեց գեներալ Ալի Ռիդա ալ-Ռիկաբիին։ Բայց ալ-Ջազաիրի եղբայրները և նրանց կողմնակիցները հաջորդ օրը ապստամբեցին, նպատակ ունենալով տապալել շերիֆյաններին՝ շերիֆ Հուսեյնի և Ֆեյսալի կողմնակիցներին և իշխանությունը կրկին իրենց ձեռքը վերցնել։ Այդ ապստամբությունը ճնշվեց հեշտությամբ։ Աբդ ալ-Կադրը մահապատժի ենթարկվեց, իսկ Մուհամեդ Սահիդ՝ բանտարկվեց[41]։

Շերիֆյանների հաջորդ քայլը հանդիսացավ արաբական իշխանության հաստատումը Բեյրութում և Լեռնալիբանանում։ Էմիր Ֆեյսալի հանձնարարությամբ հոկտեմբերի 2-ին ռազմական մի փոքր ջոկատով Բեյրութ մեկնեց Շուքրի ալ-Այյուբին։ Նա Բեյրութ հասավ հոկտեմբերի 4-ին, որտեղ արդեն Ումար Դաուքը կազմել էր արաբական կառավարություն։ Բեյրութում բարձրացվեցին Հուսեյնի արաբական դրոշները։ Ալ-Այյուբին բացի Բեյրութից իր իշխանությանը ենթարկեց նաև Լեռնալիբանանը, որտեղ տեղապահ նշանակեց Հարիր աս-Սաադին[42]։

Անհրաժեշտ է նշել, որ այդ շրջանում արաբները Սիրիա ասելով հասկանում էին ոչ միայն այն տերիտորիան, որ զբաղեցնում է ժամանակակից Սիրիան, այլ նաև Լիբանանը, Պաղեստինը և Հորդանանը, այսինքն ամբողջ այն տերիտորիան, որ կազմում է պատմա-աշխարհագրական Սիրիան։ Հետևաբար, երբ նրանք հանդես էին գալիս Սիրիայի անկախության, սիրիական կառավարության ստեղծելու պահանջով, ապա ի նկատի ունեին նաև վերոհիշյալ երկրները։ Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Դամասկոսում իր իշխանությունը հաստատելուց հետո էմիր Ֆեյսալն իր ներկայացուցչին ուղարկեց Լիբանան, այնտեղ նույնպես իր իշխանությունը տարածելու։

1918 թ. հոկտեմբերի 3-ին Դամասկոս ժամանեց էմիր Ֆեյսալը։ Նրա մուտքը Օսմանյանների նախկին մայրաքաղաքը կազմակերպվել էր մեծ շուքով։ Ֆեյսալը, Հուսեյնի վայելչակազմ և ասկետիկ որդին, Դամասկոս մտավ արաբական ընտիր, սպիտակագույն նժույգի վրա, 1500 գինվորների, գլխավորապես բեդևիններից կազմված հնծելազնդի ուղեկցությամբ։ Դամասկոսցիները նրան դիմավորեցին խանդավառությամբ և ուրախության բացականչություններով։ Շատերին այդ պահը թվում էր պատմական և արաբների համար բախտորոշ։

---

[41] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 64.

[42] *Амин Саид*, Восстания арабов в XX веке, стр. 83.

Այդ նույն օրը Դամասկոս ժամանեց նաև Մերձավոր Արևելքում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ալլենբին, որը «Օթել Վիկտորիայում» անմիջապես հանդիպում ունեցավ Ֆեյսալի հետ և քննարկեց Սիրիայի ապագա կառուցվածքի հետ կապված մի շարք հարցեր։ Ալլենբին շտապում էր քննարկել այդ հարցերը, որովհետև արտաքին գործերի և ռազմական մինիստրությունները նրան կարգադրել էին ամեն կերպ զսպել Ֆեյսալի և արաբների հետուն գնացող ցանկությունները։ Զրույցի արդյունքները շատ բանով հիասթափեցրին արաբներին։ Քանի որ պատերազմը դեռևս չի ավարտվել,—ասում է Ալլենբին,—իր ղորքերի կողմից գրավված տերիտորիաները համարվում են «թշնամու տերիտորիաներ», որտեղ, ընդունված կարգի համաձայն, գերագույն իշխանությունը պատկանում է Անգլիային։ Շարունակելով իր զրույցը, գեներալ Ալլենբին էմիր Ֆեյսալին փաստորեն շարադրում է «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» պայմանները։ Նա նշում է, որ Լոնդոնից ցուցում է ստացել բուլլատրել ֆրանսիացիներին իրենց վերահսկողությունը հաստատելու Դամասկոս-Հոմս-Համա-Հալեպ գծից արևմուտք ընկած ամբողջ տերիտորիայի վրա, ներառյալ Բեյրութը և ամբողջ Լիբանանը[43]։ Այնուհետև Ալլենբին տեղյակ է պահում Ֆեյսալին, որ ըստ Անգլիայի և Ֆրանսիայի միջև կայացած համաձայնության, Ֆրանսիան համարվում է հովանավորող պետություն սիրիական այն տերիտորիայի վրա, որն ընդգրկում է Հալեպ, Համա, Հոմս և Դամասկոս քաղաքներն ու նրանց շրջակա տերիտորիաները, բայց այստեղ կարող է ստեղծվել արաբական պետություն էմիր Ֆեյսալի գլխավորությամբ[44]։ Ֆեյսալի համար անգլիական այս պահանջները շշմեցուցիչ և անընդունելի էին և այդ մասին նա ուղղակի ասաց Ալլենբիին։ Սակայն վերջինս մնաց անդրդվելի և Ֆեյսալի մոտ հույսի ոչ մի նշույլ չթողեց, նշելով, որ ինքը Սիրիայում և Պաղեստինում անգլիական ղորքերի գլխավոր հրամանատարն է և բոլորը պարտավոր են ենթարկվել նրա հրամաններին։ Այսպես ավարտվեց Ֆեյսալի և Ալլենբիի առաջին հանդիպումը։ Արաբներին ոչինչ չէր մնում անել, քան ենթարկվել այս պահանջներին։ Հոկտեմբերի 8-ին Բեյրութից հեռացվեց Շուքրի ալ-Այյուբին։ Դիշերվա խավարի մեջ իջեցվեցին արաբական դրոշները, և Բեյրութում, Սիդոնում և Տյուրոսում նշանակվեցին ֆրանսիական ռազմական կառավարիչներ։ Բեյրութում ռազմական կա-

[43] Zeine N. Zeine, The struggle for arab independence. p. 29.

[44] Նույն տեղում, էջ 30։

ռավարիչ նշանակվեց ֆրանսիական բանակի գնդապետ Պյեպապը[45]։ Մինչ այդ, 1917 թ. ապրիլի 9-ին, ժորժ Պիկոն ֆրանսիական կառավարության կողմից նշանակվել էր գլխավոր կոմիսար Պաղեստինում, Սիրիայում և Հայաստանում։

1918 թ. հոկտեմբերի 5-ին էմիր Ֆեյսալը հրապարակեց դեկրետ Դամասկոսում արաբական կառավարություն ստեղծելու մասին, որի իրավասությունը տարածվելու էր ամբողջ Սիրիայի վրա[46]։ Համասիրիական կառավարության ղեկավար նշանակվեց Ալի Ռիզա ալ-Ռիկաբին։ Ալ-Ռիկաբիի կառավարությունը հանդիսացավ սիրիական առաջին ազգային անկախ կառավարությունը։ Այդ նույն օրը էմիր Ֆեյսալը հրապարակեց Սիրիայի ժողովրդին ուղղված իր դիմումը, որտեղ տեղեկացնելով, որ իր հոր՝ Հուսեյն Թագավորի անունից ինքը Սիրիայում ստեղծել է «լրիվ և բացարձակորեն անկախ սահմանադրական կառավարություն», կոչ էր անում սիրիական ժողովրդին ենթարկվել այդ կառավարությանը և պահպանել կարգ ու կանոնը[47]։ Ստեղծվեց կոնսուլտացիոն խորհուրդ, որը պետք է օրենքներ մշակեր և ղրաղվեր վարչական մի շարք հարցերով։ Կազմվեց նաև վճռարեկ սուդ[48]։ Սրկրի խոշոր շրջաններում նշանակվեցին նահանգապետներ, որոնք շատ հաճախ տեղական ազդեցիկ ֆեոդալական ընտանիքներից էին (օրինակ՝ Սելիմ Աբրաշը Ջեբել Դրուզում)։ Հիմնվեցին դատարաններ՝ իսկ քաղաքներում սկսեցին գործել մունիցիպալիտետները իրենց նախագահով և ընտրովի խորհրդատուներով։ Կառավարության յուրաքանչյուր անդամ պատասխանատու էր որոշակի հարցերի համար։ Կառավարության ընդունած դեկրետները էմիր Ֆեյսալի հաստատումից հետո օրենքի ուժ էին ստանում։ Նա ձեռնամուխ եղավ երկրի բյուջեի կազմմանը[49]։ Նորաստեղծ արաբական կառավարության քաղաքականության սկզբունքները պարզաբանելու և արաբ ժողովրդի համակրանքն ու աջակցությունը շահելու նպատակով էմիր Ֆեյսալը շրջագայեց երկրում և ելույթներով հանդես եկավ մի շարք քաղաքներում։ 1918 թ. նոյեմբերի 11-ին նա այցելեց Հալեպ և հանդիպում ունեցավ քաղաքի երևելիների ու տարբեր համայնքների ներկայացուցիչների հետ։ Հանդես գալով նրանց առջև էմիր Ֆեյ-

---

[45] *S. Longrigg*. Syria and Lebanon under French mandate, p. 66.

[46] نجيب الارمنازى، محاضرات عن سوريا من الاحتلال حتى الجلاء، القاهرة ١٩٥٢، ص ١

[47] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 33.

[48] نجيب الارمنازى، محاضرات عن سوريا...، ص ٣

[49] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate. p. 84—85.

սալը նշեց, որ այժմ արաբների առջև կանգնած գլխավոր խնդիրը լավ կազմակերպված, արդարադատ և ուժեղ կառավարության ստեղծումն է։ Ուստի,—շարունակեց նա,—արաբները պետք է պահպանեն օրենքները, ենթարկվեն և ծառայեն արաբական կառավարությանը, որ ստեղծվել է հոկտեմբերի 5-ին[50]։ Ֆեյսալի այս ելույթն ուշագրավ է նաև նրանով, որ այստեղ նա հստակ ու որոշակիորեն խոսեց արաբական միասնության մասին և պարզաբանեց իր հայացքներն այդ վերին աստիճանի կարևոր ու կնճռոտ խնդրի վերաբերյալ։ Ֆեյսալն ընդգծեց, որ արաբական միասնության հիմքում պետք է դրվի ազգային և ոչ թե կրոնական սկզբունքը, որովհետև արաբը արաբ է նախքան մահմեդական, քրիստոնյա կամ հուդայական լինելը[51]։ Հալեպից հետո նա եղավ Սիրիայի մի շարք քաղաքներում, որից հետո այցելեց Տրիպոլի և այնուհետև Բեյրութ։ Ամենուր նա լավ ընդունելություն էր գտնում։ Ուստի միանգամայն իրավացի է սիրիական պատմաբան Նաջիբ ալ-Արմանազին, երբ նշում է, որ սիրիական կառավարության ստեղծումը «ժողովրդի կողմից մեծ ուրախությամբ ընդունվեց»[52]։

Այն ժամանակ, երբ Ֆեյսալը և արաբները զբաղված էին սիրիական կառավարության ստեղծմամբ և ամրապնդմամբ, Անգլիան և Ֆրանսիան ձեռնամուխ եղան արաբական գրաված տերիտորիաները՝ Սիրիան, Պաղեստինը, Հորդանանը և Լիբանանը գոտիների բաժանելուն։ Այդ հարցի վերաբերյալ Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների միջև նախնական համաձայնություն էր ձեռք բերվել դեռևս 1918 թ. սեպտեմբերի 30-ին[53]։ Հենց այդ համաձայնության վրա հենվելով Ալլենբին 1918 թ. հոկտեմբերի 3-ին Դամասկոսում Ֆեյսալի հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտնեց, որ Սիրիայի արևմտյան մասը պետք է անցնի ֆրանսիացիների լրիվ վերահսկողության տակ, իսկ արաբական պետությունը կարող է ստեղծվել միայն արևելյան մասում։

1918 թ. հոկտեմբերի 24-ին Ալլենբիի հրամանով Պաղեստինը և Սիրիան, որոնք համարվում էին «թշնամու օկուպացված տերիտորիաներ», բաժանվեցին երեք գոտիների՝ հարավային, հյուսի-

---

[50] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence. p. 49.

[51] Նույն տեղում։

[52] نجيب الارمنازى، محاضرات عن سوريا...، ص ١

[53] *В. Б. Луцкий*, Арабский вопрос и державы-победительницы в период Парижской мирной конференции (1918—1919), «Арабские страны», М., 1966, стр. 16.

սային և արևելյան։ «Հարավային գոտու» մեջ մտնում էին Պաղեստինը և Անդրհորդանանի մի մասը և դա հիմնականում համապատասխանում էր «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» «շագանակագույն գոտուն»։ Այն անցնում էր անգլիական ռազմական իշխանությունների ուղղակի տնօրինության տակ։ «Հյուսիսային գոտին», որ նույնպես անցնում էր ֆրանսիական ռազմական իշխանությունների տնօրինությանը, համապատասխանում էր «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» «կապույտ գոտուն»։ Նրա մեջ մտնում էին Ակրից մինչև Ալեքսանդրետ ընկած ամբողջ տերիտորիան։ Եվ վերջապես «արևելյան գոտին», որը կազմվեց «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» «Ա» և «Բ» գոտիների մասերից և իր մեջ ներառնում էր արևելյան Սիրիան և Անդրհորդանանի մի մասը։ Այս գոտին, որտեղ արդեն գործում էր արաբական կառավարությունը, մնում էր էմիր Ֆեյսալի, այսինքն արաբների իշխանության տակ[54]։ Սակայն անկախ այս բաժանումից բոլոր երեք գոտիներում էլ, քանի դեռ պատերազմը շարունակվում էր և հաշտության պայմանագիր չէր կնքվել, բարձրագույն իշխանությունը պատկանում էր Պաղեստինում և Սիրիայում անգլիական ուժերի հրամանատարին։ Նրան էին ենթարկվում երեք գոտիների թե՛ ռազմական և թե՛ քաղաքացիական իշխանությունները։ Երեք գոտիների ստեղծումը նշանակում էր Սիրիայի բաժանում։ Դա միաժամանակ նշանակում էր, որ առաջին քայլերն էին կատարվում «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» կենսագործման ուղղությամբ, այն համաձայնագրի, որի գոյությունը անգլիական իմպերիալիստները համառորեն ժխտում էին։

Սիրիան «Թշնամու օկուպացված տերիտորիա» հայտարարելը և գոտիների բաժանելը ծանր հարված էր սիրիացիների ազգային ձգտումներին։ Վերջիններս ղգացին, որ իրենք խաբված են։ «Սիրիացիները,—նշում է Ամին Սաիդը,—գործնականում տեսան, որ Անգլիան խաբել և դավաճանել է իրենց։ Նրանք հասկացան, որ սխալվել են հավատալով մի երկրի, որը հավատարիմ չի մնում իր երդմանը և չի կատարում իր պարտավորությունները»[55]։

Ֆեյսալի մասնակցությունը Փարիզի խաղաղության կոնֆերանսին և սիրիացիների պահանջները: *Սիրիայի բաժանումը երեք*

---

[54] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 66—67.

[55] *Амин Саид*, Восстания арабов в XX веке, стр. 84.

գոտիների թեև խոր հիասթափություն և զայրույթ առաջացրեց սիրիացիների մոտ, սակայն նրանց ղեկավարները հույս ունեին հասնելու արաբների ազգային խնդիրների լուծմանը։ Այդպիսի պատրանքների գոյությունը բացատրվում է ոչ միայն նրանց քաղաքական անփորձությամբ և իմպերիալիզմի նուրբ և խարդախ մեքենայություններ մեջ կողմնորոշվելու անկարողությամբ, այլև այն հավատով, որ նրանք դեռևս ընծայում էին արևմուտքի իմպերիալիստական պետությունների սին դեկլարացիաներին։ Արաբները և նրանց ազգային առաջնորդները առանձնապես մեծ հույսեր էին կապել ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ. Վիլսոնի, այսպես կոչված, «14 կետերի» հետ։ 1918 թ. հունվարի 8-ին Վիլսոնը հանդես եկավ 14 կետից բաղկացած մի ծրագրով, որտեղ շարադրված էին ԱՄՆ-ի քաղաքականության հիմնական սկզբունքները միջազգային մի շարք կարևոր պրոբլեմների վերաբերյալ։ Այդ ծրագրի 12-րդ կետը նվիրված էր Օսմանյան կայսրության ոչ թուրք ազգերի, այդ թվում նաև արաբների հարցին։ Այնտեղ ասված էր, որ «թուրքական իշխանության տակ գտնվող ազգերը պետք է գոյության աննկրկելի երաշխիք ստանան և նրանց համար ավտոնոմ զարգացման բացարձակապես անխախտելի պայմաններ ստեղծվեն»[56]։ Ժամանակին Վիլսոնի այսպես կոչված «խաղաղության ծրագիրը» մեծ խանդավառություն էր առաջ բերել արաբների և օսմանյան լծի տակ երկար տարիներ տառապած մյուս ժողովուրդների մոտ։ Վերջիններս հավատացած էին, որ ԱՄՆ-ի նման մեծ և հզոր պետությունը հանդես է գալիս իրենց անկախության պաշտպանությամբ։ Իրականում ԱՄՆ-ի կառավարող շրջանները այդ ծրագրի օգնությամբ և «բաց դռների» ու «հավասար հնարավորությունների» պահանջների առաջադրմամբ փորձում էին նպաստավոր պայմաններ ստեղծել ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի արաբական երկրները ներթափանցելու համար։ Մյուս կողմից՝ ԱՄՆ-ի պրեզիդենտը հանդես գալով փոքր ժողովուրդների իրավունքների «պաշտպանությամբ», փորձում էր հակակշիռ ստեղծել այն ազդեցությանը, որ առաջացրել էին ազգերի իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի վերաբերյալ Վ. Ի. Լենինի ստորագրած և սովետական կառավարության հրապարակած դեկրետները։

Արաբների մոտ լավատեսական տրամադրություններ ծնեց նաև անգլո-ֆրանսիական համատեղ դեկլարացիան, որ 1918 թ.

[56] *Ю. В. Ключников, А. В. Сабанин,* Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 2, стр. 109.

նոյեմբերի 8-ին միաժամանակ հրապարակվեց Սիրիայում, Պաղեստինում և Միջագետքում։ Դեկլարացիայում ասված էր, որ Անգլիան ու Ֆրանսիան խոստանում են «Թուրքերի կողմից երկար ժամանակ ճնշված ժողովուրդների լրիվ և վերջնական ազատագրում և ազգային կառավարությունների ստեղծում»[57]։ Այդ նպատակով «Անգլիան և Ֆրանսիան համաձայնվել են օժանդակել և օգնել Սիրիայում և Միջագետքում տեղական կառավարություն կամ վարչություն ստեղծելու»[58]։ Իրականում սա մի խաբեություն էր։ Անգլո-Ֆրանսիական համատեղ դեկլարացիայի լույս աշխարհ գալը բացատրվում է արաբների մոտ դաշնակիցների նկատմամբ առաջացած կասկածները ցրելու պահանջով։ Միջագետքում և Սիրիայում իսր ատելություն էր կուտակվել Անգլիայի և Ֆրանսիայի նկատմամբ։ Դրությունն այնքան լարված էր, որ յուրաքանչյուր պահ կարող էին հակաանգլիական և հակաֆրանսիական ելույթներ տեղի ունենալ։ Այդ պոռթկումը կանխելու և արաբներին հանգստացնելու նպատակով Անգլիան և Ֆրանսիան հանդես եկան վերոհիշյալ դեկլարացիայով։ Այդ բանն ըստ էության ընդունում է նաև անգլիական կառավարությունը։ Միջագետքում իր քաղաքացիական կոմիսար Ա. Վիլսոնին ուղարկած բացատրագրում անգլիական կառավարությունը մատնանշում էր, որ «դեկլարացիայի նպատակն է նախ և առաջ ցրել լարված մթնոլորտը, որ ստեղծվել է Ֆրանսիայի նպատակների վերաբերյալ արաբների մոտ առաջացած կասկածներից»[59]։

Անտեղյակ այս բոլորին արաբները մեծ հույսեր էին կապել Փարիզի խաղաղության կոնֆերանսի հետ, որը բացվեց 1919 թ. հունվարի 18-ին։

Կատարելով իր հոր՝ Հեջազի թագավոր Հուսեյնի հրահանգը, էմիր Ֆեյսալը 1918 թ. նոյեմբերի 21-ին Բեյրութից անգլիական նավով մեկնեց Ֆրանսիա։ Նրան՝ որպես արաբական պատվիրակության ղեկավարի, ուղեկցում էին արաբական ազատագրական շարժման աչքի ընկնող գործիչներ Ռուստամ Հայդարը, դոկտոր Ահմեդ Քադրին, Թահսին Քադրին, արաբական բանակի շտաբի պետ Նուրի Սաիդը և Ֆեյսալի անձնական քարտուղար Ֆայեզ ալ-

---

[57] *G. Antonius*, The arab awakening, p. 435.

[58] Նույն տեղում։

[59] *E. Kedourie*, England and the Middle East. The destruction of Ottoman empire. 1914—1921, London, 1956, p. 177.

Ղոսեյնը[60]։ Պատվիրակությունը կոչված էր ներկայացնելու ոչ միայն սիրիական, այլև համաարաբական պահանջներ և պաշտպանելու Ասիայի արաբական բոլոր տերիտորիաների շահերը։

Ֆեյսալը և պատվիրակության անդամները 1918 թ. նոյեմբերի 26-ին հասան Մարսել։ Ոտք դնելով ֆրանսիական հողը, նրանց և ֆրանսիական իշխանությունների միջև անմիջապես կոնֆլիկտներ ծագեցին։ Ֆրանսիական կառավարությունը հրաժարվում էր Ֆեյսալին ճանաչել որպես պաշտոնական պատվիրակության ղեկավար և պատրաստ էր նրան մեծարելու լոկ որպես Հուսեյն թագավորի որդի, որը պատերազմի ժամանակ մեծ ծառայություններ է մատուցել դաշնակիցներին։ Ֆրանսիական կառավարությունը ձևականորեն իր տեսակետը հիմնավորում էր նրանով, որ Հուսեյնը նախօրոք Ֆրանսիային տեղյակ չի պահել պատվիրակության այցի կապակցությամբ և այդ մասին ոչինչ չգիտե Սիրիայում ֆրանսիական գլխավոր կոմիսար Ժորժ Պիկոն[61]։ Իրականում պատճառներն այլ էին։ Ֆրանսիան Ֆեյսալին համարում էր Անգլիայի մարիոնետը, մի գործիք վերջինիս ձեռքին Արաբական Արևելքում անգլիական ազդեցությունն ուժեղացնելու և ֆրանսիական ազդեցությունը թուլացնելու ուղղությամբ։ Նա չէր ցանկանում Ֆեյսալին ճանաչել ոչ միայն որպես արաբական պատվիրակության ղեկավար, օժտված պաշտոնական լիազորություններով, այլ նաև Սիրիայում ստեղծված արևելյան գոտու ղեկավար։ Ֆրանսիան ամեն ինչ անում էր անտեսելու Ֆեյսալին որպես պետական գործչի, ընդգծելով նրա միայն ռազմական արժանիքները։

Այս հարցին միջամտեց Մեծ Բրիտանիան, ճնշում գործադրելով ֆրանսիական կառավարության վրա։ Թեև այդ ճնշման տակ ֆրանսիական կողմը մի փոքր զիջեց և հանրապետության պրեզիդենտ Անրի Պուանկարեն ընդունեց Ֆեյսալին, սակայն վերջինս Ֆրանսիայից մեկնեց Անգլիա, այդպես էլ պաշտոնական ճանաչում չստանալով Փարիզում։

Անգլիայում էմիր Ֆեյսալը մնաց 1918 թ. դեկտեմբերի 10-ից մինչև 1919 թ. հունվարի 7-ը։ Այստեղ նրան ցույց տրվեց արժանավայել ընդունելություն։ Դեկտեմբերի 12-ին Բուկինհեմի պալատում նրան ընդունեց անգլիական թագավորը և պարգևատրեց Ասպետական Մեծ խաչով։ Ֆեյսալը Լոնդոնում հանդիպումներ ունե-

[60] *G. Haddad*, Fifty years of modern Syria and Lebanon, Beirut, 1950, p. 59.

[61] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 52.

ցավ պրեմիեր-մինիստր Լլոյդ Ջորջի և մյուս բարձրաստիճան պաշտոնյաների հետ։ 1919 թ. հունվարի 1-ին նա անգլիական կառավարությանը ծանոթացրեց Փարիզի խաղաղության կոնֆերանսին ներկայացվելիք իր հուշագրի հետ։ Հուշագրում ներկայացված էին Հուսեյնի, Ֆեյսալի և նրանց կողմնակիցների տեսակետները արաբական երկրների հարցը պետական անկախության իմաստով լուծելու վերաբերյալ։

Իր հուշագրում[62] Ֆեյսալը նշում է, որ Ալեքսանդրետից մինչև Պարսկաստան և Հնդկական օվկիանոս ընկած երկիրը համարվում է արաբական։ Արաբական ազգային շարժման նպատակն է բոլոր արաբներին միավորել որպես մեկ ազգ։ Արաբական Ասիայի տարբեր շրջանները՝ Սիրիան, Իրաքը, Ջազիրան, Հեջազը, Նեջդը և Եմենը միմյանցից տարբերվում են տնտեսական և սոցիալական զարգացման աստիճաններով և այդ պատճառով էլ անհնար է նրանց միավորել մեկ կառավարության շրջանակներում։

Սիրիան, ասված էր հուշագրում, բավականին զարգացած է և կարող է ինքը լուծել իր ներքին հարցերը[63]։ Այսինքն՝ կարող է ունենալ իր կառավարությունը։ Գալով Իրաքին, այստեղ պետք է ստեղծվի արաբական կառավարություն, բայց նա պետք է օգնություն ստանա «մի օտարերկրյա մեծ պետությունից»[64]։ Իրաքում արաբական կառավարության գլխավոր խնդիրը, ըստ այդ հուշագրի, պետք է լիներ լուսավորչական-կրթական, որպեսզի ցեղերին բարձրացնեն քաղաքի բնակիչների մակարդակին։ Հեջազը պետք է պահպանի իր լրիվ անկախությունը։ Եմենը և Նեջդը իրենց ստատուսը պետք է լուծեին Հեջազի հետ բանակցությունների միջոցով[65]։

Ինչ վերաբերվում է Պաղեստինին, ապա այստեղ ազգաբնակչության մեծ մասը արաբներ են։ Իսկ հրեաները, նշում էր Ֆեյսալը, իրենց արյամբ շատ մոտ են արաբներին, և «սկզբունքորեն բացարձակորեն նույնն են»[66]։ Պաղեստինում ևս պետք է ստեղծել տեղական կառավարություն, որը նույնպես պետք է ստանա մեծ պետության օգնությունը։

Խոսելով Իրաքին և Պաղեստինին մեծ պետության կողմից

---

[62] Այդ հուշագրի լրիվ տեքստը տե՛ս Zeine N. Zeine, The struggle for arab independence, Appendix C, p. 248—251.

[63] Նույն տեղում, էջ 249։

[64] Նույն տեղում։

[65] Նույն տեղում, էջ 250։

[66] Նույն տեղում։

ցույց տրվող օգնության անհրաժեշտության մասին, Ֆեյսալը ի նկատի ուներ Անգլիային։

Էմիր Ֆեյսալի հունվարի 1-ի հուշագրում դժվար չէ նկատել հակասություններ և զիջումներ արաբների սկզբնական պահանջների։ Հուշագրում մի կողմից խոսվում է արաբների միասնության մասին, իսկ մյուս կողմից առաջ է քաշվում արաբական տերիտորիաների վրա մի շարք պետությունների ստեղծման հարցը, որոնք, այնքան էլ պարզ չէ, թե միմյանց հետ ինչպիսի փոխհարաբերությունների մեջ պետք է գտնվեին։ Հայտնի է, որ արաբները հանդես էին գալիս հանուն լրիվ անկախության, որի մասին բազմիցս հայտարարել է նաև ինքը՝ Ֆեյսալը։ Սակայն վերոհիշյալ հուշագրում նա Իրաքի և Պաղեստինի համար ընդունում է օտար մեծ պետության, տվյալ դեպքում Անգլիայի «օգնության» անհրաժեշտությունը, որը ի չիք էր դարձնելու, և իրոք դարձրեց, Պաղեստինի և Իրաքի անկախությունը։ Ֆեյսալի զիջումներն ամենայն հավանականությամբ պետք է բացատրել Ֆրանսիայի գրաված թշնամական դիրքով արաբական խնդրի և անձամբ նրա նկատմամբ, և Անգլիայի կողմից նրա վրա գործադրած ճնշմամբ։ Լոնդոնում էմիրին պարզ հասկացնել տվին, որ Ֆրանսիան դեմ է Փարիզի խաղաղության կոնֆերանսին արաբական պատվիրակության մասնակցությանը և այդ խնդրի դրական լուծմանը կարելի է հասնել միայն Անգլիայի օժանդակությամբ։ Սակայն Անգլիան չէր ցանկանում այդ «օգնությունը» ցույց տալ Ֆեյսալին առանց որևէ փոխհատուցման։ Ֆեյսալը հարկադրված էր զիջել և համաձայնվել արաբական առանձին պետությունների ստեղծման գաղափարի և Պաղեստինում ու Իրաքում Անգլիայի տիրապետող դիրքերը հաստատելու ցանկության հետ։ Ընդհանրապես Անգլիան երկդիմի խաղ էր խաղում։ Նա մի կողմից իրեն ձևացնում էր արաբների «բարեկամ», հանդես գալիս Ֆեյսալի և արաբական դատի «պաշտպանությամբ» ընդդեմ Ֆրանսիայի անարդարացի պահանջների, իսկ մյուս կողմից՝ անընդհատ գաղտնի և բացահայտ կապերի մեջ էր Ֆրանսիայի հետ, ձգտելով գործարքի մեջ մտնել Ֆրանսիայի հետ արաբների թիկունքում և արաբների հաշվին։ Երկու կողմերի հետ էլ գործարքի մեջ մտնելով, նա միշտ նախապատվությունը տալիս էր այն գործարքին, որից ստացված արդյունքները ավելի էին համապատասխան Մեծ Բրիտանիայի շահերին։ Այս հանգամանքը միշտ պետք է ի նկատի ունենալ արաբական հարցում Անգլիայի քաղաքականությունը 1918—1920 թթ. հասկանալու համար։

1919 թ. հունվարի երկրորդ շաբաթը Ֆեյսալը վերադարձավ Փարիզ՝ խաղաղության կոնֆերանսին մասնակցելու համար։ Բայց դեռևս չէր լուծված արաբներին պատերազմող կողմ ճանաչելու հարցը, որի դրական լուծումը միայն իրավունք կտար Ֆեյսալին պաշտոնապես մասնակցել կոնֆերանսին։ Ինչպես ասվեց, այդ հարցում բացասական դիրք էր գրավել և խիստ դիմադրություն էր ցույց տալիս Ֆրանսիան։ Սակայն Անգլիային հաջողվեց հաղթահարել այդ դիմադրությունը և «Տասի խորհուրդը»[67] 1919 թ. հունվարի 17-ին Հեջազին ճանաչեց որպես պատերազմող կողմ, որից հետո Ֆեյսալը և Ռուստամ Հայդարը ընդունվեցին որպես Հեջազի պաշտոնական ներկայացուցիչները խաղաղության կոնֆերանսում[68]։

1919 թ. հունվարի 29-ին Ֆեյսալը խաղաղության կոնֆերանսին ներկայացրեց մի նոր հուշագիր[69]։ Ի տարբերություն հունվարի 1-ի հուշագրի այստեղ ավելի հստակ էր ընդգծված արևելական երկրների անկախության պահանջը։ Այդ հուշագրում ասված էր. «Որպես ներկայացուցիչը իմ հոր, որը Բրիտանիայի և Ֆրանսիայի պահանջով ղեկավարեց արաբական ապստամբությունը թուրքերի դեմ, ես եկել եմ պահանջելու, որ Ասիայի արաբական ժողովուրդները Ալեքսանդրետ-Դիարբեքիր գծից հարավ մինչև Հնդկական օվկիանոսը ճանաչվեն որպես անկախ սուվերեն ժողովուրդներ Ազդերի Լիգայի երաշխիքի ներքո։ Հեջազը, որ արդեն սուվերեն պետություն է, և Ադենը, որը կախման մեջ է Բրիտանիայից, բացառվում են արաբական պահանջներից»[70]։ Հուշագրում հատուկ ընդգծված էր, որ գոյություն ունեցող պետությունների ստեղծումը, նրանց սահմանների որոշումը և փոխհարաբերությունների հաստատումը միմյանց և Հեջազի հետ, իրենց՝ արաբների գործն է[71]։

1919 թ. փետրվարի 6-ին Ֆեյսալը հանդես եկավ Փարիզի խաղաղության կոնֆերանսում և անձամբ շարադրեց իր տեսակետները[72]։ Իր 20 րոպե տևած ելույթում, որ արաբերենից անգլերեն էր

---

[67] «Տասի խորհրդի» մեջ մտնում էին Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի և Ճապոնիայի կառավարությունների ղեկավարները և արտաքին գործերի մինիստրները։

[68] «Арабские страны», стр. 20.

[69] Այդ հուշագրի լրիվ տեքստը տե՛ս Zeine N. Zeine. The struggle for arab independence, Appendix D, p. 252։

[70] Նույն տեղում։

[71] Նույն տեղում։

[72] احسان هندى، كفاح الشعب العربى السورى ١٩٠٨–١٩٤٨، دمشق ١٩٦٣، ص ٢٣

Քարգմանում Լոուրենսը, Ֆեյսալը հիմնականում կրկնեց հունվարի 29-ի հուշագրի պահանջները։ Դիմելով դաշնակիցներին և նրանց հիշեցնելով Վիլսոնի «14 կետերը» և 1918 թ. նոյեմբերի անգլո-ֆրանսիական դեկլարացիան, նա խնդրեց Անգլիային ու Ֆրանսիային կատարել այդ դեկլարացիայում տրված խոստումները։

Սիրիայի մանդատի հարցը և անգլո-ֆրանս-ամերիկյան հակասությունները։ *Պատերազմը ավարտվելուց հետո Անտանտի երկրների առջև ամբողջ սրությամբ կանգնեց գրաված տերիտորիաների օգտագործման ձևի հարցը։ Արդյո՞ք պետք էր այդ տերիտորիանները, այդ թվում նաև արաբական, ուղղակիորեն աննքսիայի ենթարկել, թե՞ պետք էր գտնել գաղութային տիրապետության մի նոր և քողարկված ձև։ Անգլիան և Ֆրանսիան կանգնեցին երկրորդ տեսակետի վրա։ Այսպես լույս աշխարհ եկավ մանդատի գաղափարը։ Անտանտի երկրների ընտրությունը հօգուտ գաղութատիրության քողարկված ձևի բացատրվում է այն նոր իրադրությամբ, որ աշխարհում ստեղծվել էր Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո։ Այդ հեղափոխության հաղթանակը, ազգերի ինքնորոշման իրավունքի հռչակումը, սովետական կառավարության հանդես գալը ամեն տեսակ աննքսիաների դեմ, իմպերիալիստների պարտությունը քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում, հատկապես Կովկասում, Ղրիմում և Միջին Ասիայում խոր կերպով ազդեցին Արևելքի ճնշված ժողովուրդների վրա, նպաստեցին նրանց քաղաքական ինքնագիտակցության արթնացմանը և ազգային-ազատագրական շարժման ուժեղացմանը։ Ազգային անկախության պահանջը դարձավ գլխավոր պահանջը և համընդհանուր ճանաչում ստացավ։ Այլ կերպ ասած, ստեղծվեց բոլորովին նոր իրադրություն, որի պայմաններում բացահայտ գաղութային աննքսիան, ինչպես նախորդ դարերում, դառնում էր խիստ վտանգավոր արևմուտքի իմպերիալիստական պետությունների համար։ Այդ բանը լմբռնում էին իմպերիալիստական պետությունների հեռատես քաղաքագետները։ Անգլիայի պրեմիեր-մինիստր Լլոյդ Ջորջը իր հուշերում նշել է, որ պատերազմի ավարտից հետո իրենց համար հասկանալի դարձավ, որ Անգլիան ու Ֆրանսիան «չեն կարող հաստատվել Սիրիայում կամ Միջագետքում գաղտնի համաձայնագրերի հիման վրա»[73]։ Գաղտնի համաձայնագրեր ասելով Դ. Լլոյդ Ջորջը ինկատի ուներ «Սայքս-Պիկոյի համաձայնագիրը»։*

Ահա թե ինչու Անգլիան ու Ֆրանսիան կառչեցին մանդատի

[73] *Д. Ллойд Джордж*, Правда о мирных договорах, т. 2, стр. 277.

գաղափարից։ Ազգերի Լիգան որպես միջազգային կազմակերպություն իրավունք էր ստանում նախկին գաղութային երկրի կառավարման մանդատը տալ արևմտյան պարգացած այս կամ այն երկրին։ Դա հնարավորություն էր տալիս իմպերիալիստական պետություններին, առաջին հերթին Անգլիային և Ֆրանսիային, թաքնվել Ազգերի Լիգայի հեղինակության ետևում և հանդես գալ ոչ թե որպես նվաճող, այլ միջազգային կազմակերպության, տվյալ դեպքում Ազգերի Լիգայի հանձնարարությունը կատարողի դերում։

Մանդատային սիստեմը գաղութատիրության մի նոր և սքողված ձևն էր։ Բացահայտելով այդ սիստեմի իմպերիալիստական բնույթը Վ. Ի. Լենինը նշել է. «Երբ խոսում են գաղութների մանդատները բաժանելու մասին մենք հիանալի գիտենք, որ դա մանդատների բաժանումն է հափշտակման, կողոպուտի համար, որ դա երկրագնդի բնակչության մի չնչին մասի իրավունքների բաժանումն է երկրագնդի բնակչության մեծամասնությունը շահագործելու համար»[74]։

«Տասի խորհուրդը» 1919 թ. հունվարի 30-ին որոշեց Օսմանյան կայսրությունից վերջնականապես անջատել և ենթամանդատային տերիտորիաներ հայտարարել Հայաստանը, Սիրիան, Պաղեստինը, Միջագետքը, Արաբիան և Քրդստանը, առանց կոնկրետ նշելու, թե այդ երկրների մանդատը ում է տրվելու[75]։

Մանդատային սիստեմը կազմեց Ազգերի Լիգայի կանոնադրության բաղկացուցիչ մասը, որի 22-րդ հոդվածը ամբողջովին նվիրված էր նրան։ 22-րդ հոդվածը մանդատի ենթակա պետությունները, ելնելով նրանց զարգացման աստիճանից, բաժանեց երեք կատեգորիաների՝ A, B, C։ Դրանցից ամենաառաջը համարվում էր A-ն, որի շարքում դասվեցին Օսմանյան կայսրության նախկին արաբական տերիտորիանները։ Այդ կապակցությամբ 22-րդ հոդվածում հետևյալն էր ասված. «Մի շարք մարզեր, որոնք նախկինում պատկանում էին թուրքական կայսրությանը, հասել են զարգացման այնպիսի աստիճանի, որ նրանց գոյությունը որպես անկախ ազգերի, ժամանակավորապես կարելի է ճանաչել, պայմանով, որ մանդատային պետության խորհուրդները և օգնությունը

---

[74] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 186։ Սովետական կառավարությունը երբեք չճանաչեց մանդատային սիստեմը։ 1934 թ. մտնելով Ազգերի Լիգայի մեջ, սովետական կառավարությունն ընդգծեց իր բացասական վերաբերմունքը մանդատի նկատմամբ և հրաժարվեց մասնակցել Ազգերի Լիգայի մանդատային մշտական հանձնաժողովի աշխատանքներին։

[75] «Арабские страны», стр. 23.

ուղղություն տան նրանց զարգացմանը մինչև այն պահը, երբ նրանք ի վիճակի կդառնան իրենք իրենց ղեկավարելու։ Մանդատային պետության ընտրության հարցում նախ և առաջ պետք է հաշվի առնվեն այդ մարզերի ցանկությունները»[76]։ Ազգերի Լիգայի կանոնադրության այդ հոդվածում նշվում էր նաև, որ ենթամանդատային տերիտորիայում բոլոր պետությունները պետք է ունենան հավասար հնարավորություններ տնտեսական մի շարք հարցերի բնագավառում, մանդատատեր երկիրն իրավունք չունի ենթամանդատային երկիրը համարել իր տիրապետությունը և պարտավոր է յուրաքանչյուր տարի իր գործունեության մասին հաշվետվություն ներկայացնել Ազգերի Լիգային։

Ինչպես պարզ երևում է 22-րդ հոդվածի մեջբերված հատվածից մանդատային սիստեմի հիմքում դրված էր ազգերի բարձր և ցածր կատեգորիաների բաժանելու հետադիմական և ռասայական տեսությունը։ Իմպերիալիստական պետությունները պետական ինքնուրույն գոյության համար «չհասունացած» ժողովուրդների շարքը դասեցին արաբներին, մի ժողովրդի, որը դեռևս միջին դարերում ստեղծել էր իր պետականությունը և գիտության ու մշակույթի բնագավառում հասել մեծ նվաճումների։ Ահա թե ինչու էմիր Ֆեյսալը լրիվ հիմք ուներ Փարիզի խաղաղության կոնֆերանսում, երբ մանդատի հարցն էր քննարկվում, դիմելով արևմտյան պետություններին, դառնությամբ ասել. «Արաբները հին քաղաքակրթված և կազմակերպված ժողովուրդ էին դեռ այն ժամանակ, երբ այս սրահում ներկայացված ժողովուրդները դեռևս չէին ձևավորվել»[77]։

Թեև սկզբունքային համաձայնություն ձեռք բերվեց մանդատային սիստեմի վերաբերյալ, սակայն Անտանտի երկրների միջև գոյություն ունեին խոր հակասություններ և տարաձայնություններ մանդատների կոնկրետ բաժանման հարցի շուրջը։ Սկզբնական շրջանում հիմնական տարաձայնությունները Անգլիայի և Ֆրանսիայի միջև էին։ Այդ տարաձայնությունները հարթելու և «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» հիմնական սկզբունքները կենսագործելու համար Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Ժ. Կլեմանսոն և մարշալ Ֆոշը 1918 թ. դեկտեմբերին մեկնեցին Լոնդոն բանակցելու անգլիական կառավարության հետ։ Այդ բանակցությունների ժամանակ Անգ-

[76] „Great Britain. Parliamentary Papers. 1920.". „Treaty Series", Cambridge, 1964, p. 12.

[77] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 68—69.

լիայի պրեմիեր-մինիստր Դ. Լլոյդ Ջորջը ցանկություն հայտնեց «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» մեջ փոփոխություններ մտցնելու մասին, որի հետ սկզբունքորեն համաձայնվեց Ֆրանսիայի պրեմիեր-մինիստրը։ Դիմելով Դ. Լլոյդ Ջորջին Ժ. Կլեմանսոն հարցնում է, թե նա ի՞նչ է ուզում, «նա (Լլոյդ Ջորջը—Ն. Հ.) պատասխանեց՝ «Մոսուլը»։ Ես ասացի. «Դուք դա կունենաք։ Էլ ի՞նչ եք ուզում։ Նա պատասխանեց՝ «Պաղեստինը»։ Ես կրկին ասացի «Դուք դա կունենաք»[78]։ Ինչպես նշվել է արդեն, Մոսուլը կամ Հյուսիսային Իրաքը ըստ «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» մտնում էր Ֆրանսիայի ազդեցության ոլորտի մեջ։ Իսկ ինչ վերաբերում էր Պաղեստինին, ապա նրա հարցը, ըստ այդ նույն համաձայնագրի, պետք է լուծվեր Հուսասատանի և այլ շահագրգռված երկրների հետ միասին։ Սակայն այժմ Ֆրանսիան միակողմանիորեն պիջումներ էր կատարում Անգլիային, հույս ունենալով դրա փոխարեն օգուտ Ֆրանսիայի լուծել ամբողջ Սիրիայի հարցը։ Ժ. Կլեմանսոն չէր էլ թաքցնում այդ բանը։ 1918 թ. դեկտեմբերին «...ես փորձեցի համաձայնության գալ Անգլիայի հետ Սիրիայի վերաբերյալ»[79]։ Այդ մասին նա ավելի որոշակիորեն է խոսում Լլոյդ Ջորջին ուղղված իր 1919 թ. նոյեմբերի 9-ի նամակում. «Ինչ վերաբերում է 1918 թ. դեկտեմբերի մեր բանակցություններին,—ասված էր այդտեղ,—ես չեմ կարող ընդունել, որ համաձայնվել եմ բրիտանական մանդատի տարածմանը Մոսուլի և Պաղեստինի վրա՝ առանց համարժեք փոխհատուցման»[80]։

Փաստորեն Ֆրանսիայի նպատակն էր նախքան Փարիզի խաղաղության կոնֆերանսի բացվելը վերջնական համաձայնության գալ Անգլիայի հետ մանդատների բաժանման վերաբերյալ, իսկ խաղաղության կոնֆերանսին հարկադրել ձևականորեն հավանություն տալ արաբական տերիտորիաների բաժանմանը Անգլիայի և Ֆրանսիայի միջև։

Վերադառնալով փոխհատուցման հարցին, նշենք, որ Ֆրանսիան Մոսուլի և Պաղեստինի դիմաց պահանջում էր նախ, Մոսուլից արդյունահանվելիք նավթից որոշ բաժին հատկացնել Ֆրանսիային, և երկրորդ, որն ավելի կարևոր էր, համաձայնվել Ֆրանսիայի մանդատը տարածել ամբողջ Սիրիայի վրա։

Ինչպես վերևում արդեն նշել ենք, ըստ անգլո-ֆրանսիական

---

[78] „Documents on British foreign policy. 1919—1939", Ist ser., v. IV, p. 340.

[79] Նույն տեղում։

[80] Նույն տեղում, էջ 521։

պայմանավորվածության Ֆրանսիայի տնօրինության տակ պետք է անցներ արևմտյան Սիրիան՝ Լիբանանով հանդերձ։ Սակայն այժմ Ֆրանսիան պահանջում էր նույնպիսի իրավունքներ նաև արևելյան Սիրիայում, որտեղ արդեն ստեղծվել և գործում էր սիրիական կառավարություն։ Լլոյդ Ջորջը էմիր Ֆեյսալին հայտնում է, որ «Ֆրանսիական տեսակետը կայանում է նրանում, որ Դամասկոսը, Հոմսը, Համան և Հալեպը պետք է մտնեն ֆրանսիական ազդեցության գոտու մեջ և օկուպացվեն ֆրանսիական զորքերի կողմից»[81]։

Անգլիան չէր ընդունում ֆրանսիական պահանջները և Փարիզի խաղաղության կոնֆերանսում նրանց միջև երկար վիճաբանություններ գնացին։ Հատկապես ուշադրավ էր սիրիական հարցի քննարկումը դաշնակիցների գերագույն խորհրդի 1919 թ. մարտի 20-ի նիստում, որին ներկա էին ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը, Անգլիայի պրեմիեր-մինիստր Լլոյդ Ջորջը, Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Կլեմանսոն, Իտալիայի պրեմիեր-մինիստր Օրլանդոն, ինչպես նաև լորդ Բալֆուրը, Պիշոնը, գեներալ Ալլենբին և այլն։ Մեծ Բրիտանիան ամբողջ Սիրիայի նկատմամբ Ֆրանսիայի ունեցած հավակնությունների նկատմամբ իր ժխտական դիրքը հիմնավորում էր նրանով, որ ոչ մի փաստաթղթում չի խոսվում Ֆրանսիայի իրավունքների մասին ամբողջ Սիրիայի՝ ներառյալ արևելյան գոտու, վրա։ Ըստ «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» նա իրավունք ուներ իր տիրապետությունը հաստատել Դամասկոս, Հոմս, Համա և Հալեպ գծից դեպի արևմուտք։ Իսկ ինչ վերաբերում է արևելյան գոտուն, ապա Անգլիան Ֆրանսիային կրկին հիշեցրեց, որ այդ տերիտորիան արաբների հետ ձեռք բերված համաձայնության հիման վրա («Հուսեյն—Մակ-Մահոն համաձայնագիրը») անցնում է արաբների տնօրինության տակ, որտեղ կարող է ստեղծվել անկախ արաբական պետություն։ Եվ եթե Ֆրանսիան գրավի Դամասկոսը, ապա դա կլինի Հուսեյնի հետ կնքած համաձայնագրի կոպիտ խախտում։ Չհամաձայնվելով անգլիական փաստարկի հետ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Պիշոնը նշում է, որ Ֆրանսիան ոչ մի պայմանագիր չունի Հուսեյն թագավորի հետ, որ այդ բոլորն արել է Անգլիան միայնակ և Ֆրանսիան միայն վերջերս է տեսել «Հուսեյն—Մակ-Մահոն համաձայնագրի» տեքստը։ Պատասխանելով Պիշոնին Լլոյդ Ջորջը մատնացույց է անում, որ Անգլիան լրիվ իրավունք ուներ այդ հարցը լուծել առանձին, քանի որ սիրիական ամբողջ ռազմական կամպանիան նա իր ուսերի վրա է տարել և

[81] Նույն տեղում, էջ 416։

Բուրբների դեմ մղած պատերազմին Անգլիան հանել է 900 հազարից մինչև 1 միլիոնանոց բանակ, մինչդեռ Ֆրանսիան պատերազմի այդ թատերաբեմում ոչ մի էական դեր չի խաղացել[82]։

Բնականաբար հարց է ծագում, թե ինչու էր Անգլիան դեմ ամբողջ Սիրիայի վրա ֆրանսիական մանդատի հաստատմանը և կողմնակից արևելյան գոտում արաբական անկախ պետության պահպանմանը։ Ձեակնորեն Անգլիան դա հիմնավորում էր նրանով, որ ինչպես արդեն նշել ենք, նա պատերազմի ժամանակ արաբներին խոստացել էր ճանաչել նրանց անկախությունը։ Լլոյդ Ջորջը բազմիցս նշել է, որ արաբները լրիվ կատարեցին պատերազմի ժամանակ իրենց ստանձնած պարտավորությունները, մնում է, որ դաշնակիցներն էլ իրենց պարտավորությունները կատարեն արաբների նկատմամբ։ Սա, իհարկե, դեմագոգիա էր։ Եթե Անգլիան իրոք ձգտում էր կատարել իր տված խոստումները, ապա նա ինքը չպետք է աննախադեպ ընթարկեր արաբական մյուս երկրները և առաջին հերթին Իրաքը և Պաղեստինը։ Իրականում Ֆրանսիային Սիրիայի մանդատը տալու հարցում անգլիական բաղաբականության հիմքում ընկած էր թույլ չտալ Ֆրանսիայի դիրքերի ուժեղացումը Արաբական Արևելքում։ Անգլիան չէր ցանկանում, որ արաբական մեծ տերիտորիաներ անցնեն իր ֆրանսիական «դաշնակցի» տնօրինության տակ։ Ամբողջ Սիրիայի մանդատը ստանալու դեպքում Ֆրանսիան կմխրճվեր Արաբական Արևելքում անգլիական տիրապետությունների մեջ և մրցակցության մի նոր օջախ կծագեր։ Ուստի Անգլիային ավելի ձեռնտու էր սիրիական անկախ պետության գոյությունը, որը փաստական կախման մեջ կգտնվեր նրանից, քանի որ այդ պետության ղեկավարությունը պատկանելու էր Ֆեյսալին և Անգլիայի մյուս կողմնակիցներին։ Իսկ վերջիններս առիթը բաց չէին թողնում ընդգծելու իրենց հավատարմությունը և նվիրվածությունը Անգլիային։ Այսպես, Ֆեյսալը Լլոյդ Ջորջի հետ ունեցած իր հանդիպումներից մեկի ժամանակ նրան ասում է. «Արաբ ազգը ամենից շատ երախտապարտ է Մեծ Բրիտանիային այն բոլոր օգնության համար, որ նա ցույց է տվել իրեն և նրանք լրիվ գիտակցում են, թե որքան են պարտական բրիտանական ազգին։ Ինքը անձամբ ամեն ինչ պարտական է Մեծ Բրիտանիային[83]։

---

[82] „Papers relating to the foreign policy of the United States. 1919", v., V, Washington, 1946, p. 1—14.

[83] „Documents on British foreign policy. 1919—1939", Ist ser., v. IV, p. 417.

Անգլիան հրապարակայնորեն ժխտում էր իր հեռուն գնացող պլանները Սիրիայի նկատմամբ։ Ֆրանսիացիներին հանգստացնելու համար Լլոյդ Ջորջը հայտարարեց, որ Անգլիան ոչ մի պարագայում չի ստանձնի Սիրիայի մանդատը[84]։ Սակայն դա սպասված արդյունքը չտվեց և անգլո-ֆրանսիական լարվածությունը պահպանվեց։ Ֆրանսիայի կառավարող շրջանները չէին հավատում Մեծ Բրիտանիայի անկեղծությանը և լրիվ նրան էին վերագրում հակաֆրանսիական ուժեղ տրամադրությունների գոյությունը Սիրիայում։ Ֆրանսիական գաղութատիրության շահերը պաշտպանող ուժերը նշում էին, որ «ամբողջ Սիրիայում և Պաղեստինում բրիտանական սպաները դիմում են բանսարկություններ, այդ երկրներում ֆրանսիական մանդատն անհնարին դարձնելու համար»[85]։ Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Ժ. Կլեմանսոն այնքան հեռուն գնաց Անգլիային մեղադրելու մեջ, որ նշեց, թե վերոհիշյալ երկրներում «բրիտանական բանակի սպաները զբաղված էին հօգուտ Անգլիայի եռանդուն պրոպագանդա մղելով»[86]։

Անգլիական գաղութարարների գործունեությունը, անշուշտ, իր դերը խաղացել է, սակայն ֆրանսիական գաղութարարները սխալվում էին, երբ Սիրիայում հակաֆրանսիական տրամադրությունների գոյությունը ամբողջովին վերագրում էին անգլիացիների գործունեությանը։ Հակաֆրանսիական տրամադրությունների միակ և իսկական պատճառն այն էր, որ սիրիացիները հանդես էին գալիս հանուն իրենց երկրի անկախության և դեմ էին մանդատային ռեժիմին։ Քանի որ սիրիական մանդատի հավակնորդը Ֆրանսիան էր, սիրիացիներն իրենց դժգոհությունը և հարվածներն առաջին հերթին ուղղում էին ֆրանսիական գաղութարարների դեմ։

Դրությունն ավելի սրվեց, երբ պայքարի մեջ մտան Ամերիկայի Միացյալ Նահանգները։ «Սայքս-Պիկոյի համաձայնագիրը» կնքելիս և Մերձավոր Արևելքը բաժանելիս Անգլիան ու Ֆրանսիան լրիվ հաշվից դուրս էին գցել ԱՄՆ-ին։ Սակայն վերջինս բնավ մտադիր չէր կողմնակի դիտորդի դերում հանդես գալ և նայել, թե ինչպես են եվրոպական վերոհիշյալ պետությունները զավթում տնտեսական և ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող այդ շրջանը։ Ամերիկյան մոնոպոլիստական կապիտալը ինքն էր շահագրգռված շահագործման նոր մարզեր նվաճելու հարցով։ Այդ

---

[84] Նույն տեղում, էջ 340։

[85] Նույն տեղում։

[86] Նույն տեղում, էջ 341։

պատճառով էլ Փարիզի խաղաղության կոնֆերանսում ամերիկյան պատվիրակությունը պրեզիդենտ Վ. Վիլսոնի գլխավորությամբ բացասական դիրք գրավեց «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» և արաբական երկրների մանդատները միայն Անգլիայի և Ֆրանսիայի միջև բաժանելու հարցում։ ԱՄՆ-ի կառավարության քաղաքականությունն այս հարցում հասկանալու համար ամենամեծ հետաքրքրություն է ներկայացնում Վ. Վիլսոնի ելույթը Փարիզի խաղաղության կոնֆերանսում, «Հորսի խորհրդի» նիստում, 1919 թ. մարտի 20-ին։ Նիստին ներկա էին Դ. Լլոյդ Ջորջը, Ժ. Կլեմանսոն, Օռլանդոն և նրանց արտաքին գործերի մինիստրները։

Վիլսոնն իր ելույթում նշում է, որ 1916 թ. «Սայքս-Պիկոյի համաձայնագրի» կողմերից մեկը Ռուսաստանն էր, որն այժմ ասպարեզից դուրս է եկել[87]։ Հետևաբար, ավելացնում է նա, պետք է «փոխել համաձայնագրի հիմքը»[88]։ Շարունակելով իր փաստարկները 1916 թ. համաձայնագրի դեմ, ԱՄՆ-ի պրեզիդենտը ընդգծում է, որ «Սայքս-Պիկոյի համաձայնագրին» և արաբական երկրների վրա Անգլիայի և Ֆրանսիայի մանդատների հաստատումն հարցը մի այնպիսի հարց է, որ «շոշափում է ամբողջ աշխարհի խաղաղության շահերը և դա միայն Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի միջև կնքված համաձայնագրի հարց չէ»[89]։

Հիմնովին ականահարելով «Սայքս-Պիկոյի համաձայնագիրը» և հասկացնելով, որ նա իրավական ուժ չի կարող ունենալ և ընդունելի չէ ԱՄՆ-ի համար, Վիլսոնն անմիջապես անցնում է մանդատի հարցին։ Ցանկանալով այդ հարցի լուծումը դուրս բերել Անգլիայի ու Ֆրանսիայի իրավասության շրջանակներից և ապահովել այլ պետությունների և առաջին հերթին ԱՄՆ-ի մասնակցությունն այդ վերին ատյանի կարևոր խնդրի լուծմանը, Վիլսոնն առաջ է քաշում այն թեզը, որ նախքան Ազգերի Լիգայի կողմից մանդատների բաժանելը պետք է հաշվի առնել ենթամանդատային երկրի համաձայնությունը, պետք է պարզել, թե նա որ երկիրն է ուզում, որ իրեն կառավարելու մանդատը տրվի[90]։ Պետք է նշել, որ Վիլսոնն այդ հարցին անդրադարձավ դեռևս 1919 թ. փետրվարի 6-ին, երբ էմիր Ֆեյսալն առաջին անգամ ան-

[87] Հայտնի է, որ սովետական կառավարությունը հրաժարվեց ցարական կառավարության կնքած բոլոր պայմանների համաձայնագրերից։

[88] „Papers relating to the foreign relations of the United States. 1919" v. V, p. 9.

[89] Նույն տեղում, էջ 10։

[90] Նույն տեղում, էջ 9։

ձամբ հանդես եկավ Փարիզի խաղաղության կոնֆերանսում։ Ֆեյսալի ելույթից հետո ԱՄՆ-ի պրեզիդենտը նրան դիմում է հետևյալ հարցով, եթե Ազգերի Լիգան հավանություն տա մանդատային սիստեմին, ապա Ֆեյսալը ի՞նչ կցանկանար «իր ժողովրդի համար, կգերադասեր մի, թե՞ մի քանի մանդատներ»[91]։ Պատասխանելով Վիլսոնին, Ֆեյսալն ասում է. «Ինքը եկել է պահանջելու իր ժողովրդի անկախությունը... Անձամբ ինքը վախենում է բաժանումից։ Իր սկզբունքը արաբական միասնությունն է։ Դրա համար է, որ արաբները պայքարել են... Արաբները պահանջում են միայն ազատություն և դրանից պակաս ոչինչ չեն վերցնի»[92]։

Մարտի 20-ի նիստում կրկին վերադառնալով այս հարցին և կասկածի տակ վերցնելով արաբական երկրների վրա Անգլիայի և Ֆրանսիայի մանդատների նպատակահարմար լինելը, Վիլսոնն առաջ է քաշում արաբական ժողովրդի կարծիքն իմանալու հարցը։ «ԱՄՆ-ի տեսակետով,—նշում է նա,—միակ խնդիրն այն է, թե արդյո՞ք Ֆրանսիան ընդունելի է սիրիացիներին։ Նույնը վերաբերում է նաև Մեծ Բրիտանիային, թե արդյո՞ք նա ընդունելի է Միջագետքի բնակչությանը»[93]։ Շարունակելով իր փաստարկները Սիրիայի մանդատը Ֆրանսիային տալու դեմ, պրեզիդենտը նշում է, որ եթե Ֆրանսիան պնդի Դամասկոսը և Հալեպը օկուպացնելու վրա, ապա դա, ինչպես իրեն ասել են, պատերազմ կառաջացնի։ Դիմելով նիստին ներկա գեներալ Ալլենբիին, Վիլսոնը հարցնում է. «եթե մենք թույլ տանք Ֆրանսիային օկուպացնելու սիրիական շրջանը, նույնիսկ փոքրացրած սահմաններում, ի՞նչ կլինի հետևանքը»[94]։ Գեներալ Ալլենբին պատասխանում է, որ դա շատ ուժեղ դիմադրություն կառաջացնի արաբների կողմից[95]։

ԱՄՆ-ն դեմ արտահայտվելով արաբական երկրների մանդատները Անգլիայի և Ֆրանսիայի միջև բաժանելուն, ինքն էր հավակնում այդպիսին ձեռք բերելու արաբական առանձին երկրների կամ նույնիսկ ամբողջ արաբական երկրների, Հայաստանի և Թուրքիայի վրա։

Այսպիսով, երեք ամիս տևած վիճաբանությունները մանդատ-

---

[91] Zeine N. Zeine, The struggle for arab independence, p. 68.

[92] Նույն տեղում։

[93] „Papers relating to the foreign relations of the United States. 1919", v. V, p. 9.

[94] Նույն տեղում, էջ 10։

[95] Նույն տեղում։

ների բաժանման վերաբերյալ դրական արդյունքի չհասցրին և հարցը մնաց փակուղու մեջ։

ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը առաջարկեց արաբների ցանկությունները պարզելու և վերջնական եղրակացության հանգելու նպատակով արաբական երկրներ ուղարկել միջդաշնակցային հատուկ հանձնաժողով։ Այդ առաջարկի հետ ձևականորեն համաձայնվեցին Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան։

Սիրիական կոնգրեսի գումարումը և «Դամասկոսի ծրագիրը»։ *Քանի որ Փարիզի խաղաղության կոնֆերանսը ոչ մի որոշում չընդունեց Սիրիայի վերաբերյալ և դաշնակիցները միայն համաձայնության եկան Սիրիա հանձնաժողով ուղարկելու, Ֆեյսալին ոչինչ չէր մնում անել, քան վերադառնալ իր երկիրը։ Սակայն նախքան Փարիզից հեռանալը 1919 թ. ապրիլի 16-ին նա Ֆրանսիական պրեմիեր-մինիստրության շենքում հանդիպում ունեցավ Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Ժ. Կլեմանսոյի հետ, որի ժամանակ վերջինս կրկին փորձեց ճնշում գործադրել էմիրի վրա և հարկադրել նրան ընդունելու Ֆրանսիական պահանջները։ Դիմելով Ֆեյսալին նա ասում է. «Մեծ Բրիտանիան դուրս է բերելու իր զորքերը Դամասկոսից և Հալեպից և ես կցանկանայի, որ մեր զորքերը փոխարինեին նրանց այդ երկու քաղաքներում»[96]։ Ֆեյսալը պատասխանում է Կլեմանսոյին, որ ինքը «չի կարող համաձայնվել այդ առաջարկության հետ։ Սիրիան օտարերկրյա զորքերի կարիք չի ղգում։ Եթե հետագայում նա այդպիսի զորքերի կարիքը ղգա, ապա առանց տատանվելու կխնդրի այդ օգնությունը»[97]։ Կլեմանսոն վկայակոչելով ֆրանսիական կեղծ հայրենասիրությունը և առաջ բաշելով նրա հեղինակության հարցը, պաթետիկ տոնով բացականչում է, թե «ֆրանսիական ազգը չի կարող համաձայնվել, որ Սիրիայում նրա ներկայությունը վկայող ոչ մի բան դոյություն չունենա։ Եթե Ֆրանսիան Սիրիայում չներկայացվի իր դրոշով և զինվորներով, ապա ֆրանսիական ազգը դա կհամարի որպես ազգային ծաղր և զինվորի դասալքություն պատերազմի դաշտից»[98]։ Ֆեյսալը մնաց անդրդվելի։ Նրան մտահոգում էին ոչ թե ֆրանսիացիների կեղծ հասկացված պատվարժանության հարցերը, այլ իր սեփական պրոբլեմները։*

1919 թ. ապրիլի 30-ին ֆրանսիական «Փարիզ» հածանավը նրան հասցրեց Բեյրութ, որտեղ խանդավառ ընդունելություն գտավ

[96] Zeine N. Zeine. The struggle for arab independence, p. 80.
[97] Նույն տեղում։
[98] Նույն տեղում, էջ 81։

քաղաքի բնակչության կողմից։ Ժամանելով Բեյրութ էմիր Ֆեյսալը հայտարարեց. «Անկախությունը սովորաբար ոչ թե տալիս են, այլ վերցնում։ Աշխարհը մեզ տվել է անկախություն և մեր խնդիրն է վերցնել այն և դարձնել լրիվ»[99]։ Մայիսի 1-ին, արդեն Դամասկոսում, նա հանդես եկավ հատուկ հայտարարությամբ՝ ուղղված «Թանկագին Սիրիայի զավակներին»։ Այդ հայտարարությամբ Ֆեյսալը ժողովրդին տեղյակ էր պահում, որ Փարիզում սկզբունքորեն համաձայնություն է ձեռք բերվել Սիրիային անկախություն շնորհելու և հարցի մեջ պարզություն մտցնելու համար Սիրիա է ժամանելու միջդաշնակցային հանձնաժողով։ Ֆեյսալը կոչ էր անում ժողովրդին այդ հանձնաժողովին ցույց տալ, որ ինքը արժանի է անկախության և ի վիճակի է ինքն իրեն կառավարելու[100]։

Այդ ժամանակ Սիրիայում ներքաղաքական դրությունը խիստ լարված էր։ Լարվածության պատճառը ոչ միայն այն էր, որ Սիրիան բաժանվել էր մի քանի գոտիների, այլ նաև Ֆրանսիայի, ինչպես նաև Անգլիայի գրաված դիրքը մանդատի հարցում։ Ինչքան էլ Փարիզի խաղաղության կոնֆերանսի նիստերն ընթանում էին փակ դռների ետևում, սիրիական ազգային գործիչներին և հասարակայնությանը հայտնի դարձան ֆրանսիական պահանջները՝ մանդատի անվան տակ իրենց տիրապետությունը հաստատել ամբողջ Սիրիայի վրա։ Դա խոր զայրույթ առաջացրեց սիրիացիների մոտ, որոնք, ինչպես նշում է Նաջիբ ալ-Արմանազին, մանդատի վրա նայում էին ատելությամբ[101]։ Անգլիական փոխգնդապետ Հ. Կորնուոլլիսը Սիրիայում տիրող դրության մասին 1919 թ. մայիսի 16-ին լորդ Քերզոնին ուղարկած իր հաղորդագրության մեջ հայտնում էր, որ «հակաֆրանսիական տրամադրությունները ժողովրդի մեջ զարմանալիորեն ուժեղ են»[102]։ Վախենալով ժողովրդական ելույթներից, որի դեպքում բախումն անգլիական զորքերի հետ անխուսափելի կլիներ, գեներալ Ալլենբին դիմում է Ֆեյսալին՝ ձեռք առնելու անհրաժեշտ միջոցներ Սիրիայում կարգ ու կանոնը պահպանելու համար և «կանխել որևէ գործողություն, որը կարող է վնասել ձեր երկրի ապագային»[103]։ Սպառնալով և ձգտելով ահաբեկել սիրիական հակաիմպերիալիստական ուժերին՝ Ալլենբին նա-

---

[99] *G. Haddad*, Fifty years of modern Syria and Lebanon, p. 60.

[100] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 82—83.

[101] نجيب الارمنازى ، محاضرات عن سوريا... ، ص ٢٤

[102] „Documents on British foreign policy. 1919—1939" 1st ser., v. IV, p. 265.

[103] Նույն տեղում, էջ 260։

խաղդուշացնում է Ֆեյսալին, որ «որևէ չմտածված քայլ, որ ձեզ կոնֆլիկտի մեջ կմտցնի իմ զորքերի հետ, միանգամից վերջ կդնի ձեր ազգային ձգտումներին»[104]։ Ալլենբիի սպառնալիքը ծանր հարված էր բոլոր նրանց, ովքեր դեռևս հավատում էին բրիտանական «բարեկամության» և Անդլիային համարում արաբների շահերի պաշտպան։

Այս շրջանում սիրիացիների հակաիմպերիալիստական ուժեղ ցրամադրություններին մասին է վկայում 1919 թ. մայիսի 9-ին Դամասկոսի քաղաքային սրահում տեղի ունեցած էմիր Ֆեյսալի հանդիպումը Սիրիայի՝ այդ թվում նաև Պաղեստինի, Հորդանանի և Լիբանանի տարբեր շրջանների ղեկավար գործիչների հետ։ Նրանց առջև Ֆեյսալը դրեց իր քաղաքականության վստահություն տալու հարցը մինչև սիրիական կոնգրեսի գումարումը։ Դիմելով նրանց Ֆեյսալն ասում է. «Ես հարցնում եմ ազգին. արդյո՞ք ազգը պաշտպանում է ինձ խոսքով և գործով այն բոլորի համար, որ ես անում եմ երկրի ներսում և նրանից դուրս, և արդյո՞ք ազգը առանց առարկության և վիճաբանության տալիս է ինձ այն բոլորը, ինչ ես ցանկանում եմ»[105]։ Ներկա գտնվողները բոլորը միահամուռ դրական պատասխան են տալիս։

Այնուհետև առանձին հայտարարություններով հանդես են գալիս տարբեր շրջանների և համայնքների՝ Պաղեստինի, Հաուրանի, Ջեբել Դրուզի, Ջեբել Ամալի, Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի, Բաալբեկի, Հարավային Լիբանանի և այլ վայրերի ղեկավարները, կաթոլիկների և հույն ուղղափառների պատրիարքները։ Նրանք իրենց պաշտպանությունը հայտնելով Ֆեյսալին, իրենց դնում են նրա տրամադրության տակ այն պայքարում, որ նա մղում է Սիրիայի համար[106]։

Դամասկոսի քաղաքային սրահում էր գտնվում և ելույթ ունեցավ Սիրիայի հայ դաշնականների ներկայացուցիչը։ Դրանք այն դաշնականներն էին, որոնց հաջողվել էր փրկվել առաջին համաշխարհային պատերազմին երիտթուրքերի կազմակերպած կոտորածներից։ Նրանք հիմնականում բնակություն էին հաստատել Հալեպում և նրա շրջակայքում, ինչպես նաև Դամասկոսում և Սիրիայի այլ վայրերում։ Տեղի արաբ բնակչությունը, չնայած գտնվում էր ծանր պայմաններում, լավ ու բարեկամական վերաբերմունք

---

[104] Նույն տեղում։

[105] Նույն տեղում, էջ 268։

[106] Նույն տեղում, էջ 269—270։

ցույց տվեց հայերին, օգնելով նրանց այն ամենով, ինչով կարող էր։ Շնորհիվ արաբների գրաված մարդասիրական դիրքի բազմաթիվ հայեր փրկվեցին մահվան ճիրաններից։ Հայ գաղթականների ներկայացուցիչը, հանդես գալով Դամասկոսի վերոհիշյալ նիստում, պաշտպանում է սիրիացիներին ազգային անկախության համար նրանց մղած պայքարում և, առիթից օգտվելով, ամբողջ հայության անունից շնորհակալություն է հայտնում արաբներին նրանց բարի վերաբերմունքի համար։ Ողջունելով արաբներին հայ պատվիրակը հայտարարում է, որ հայերի «պատմության մեջ արաբների անունը կգրվի ոսկե տառերով»[107]։

Էմիր Ֆեյսալը շնորհակալություն հայտնելով տարբեր շրջանների և կրոնական ու ազգային համայնքների ղեկավարներին իրեն ցույց տրված վստահության համար, նշում է, որ ապագա սիրիական պետությունը մեծ ուշադրություն կդարձնի փոքրամասնությունների հարցին, որպեսզի «վերացնի ատելությունը և կրոնական հակամարտությունը, որ ստեղծել էին թուրքերը և դրա փոխարեն սիրո և եղբայրության սերմեր կցանի տարբեր կրոնական համայնքների միջև»[108]։ Դիմելով բոլոր ներկաներին՝ Ֆեյսալը կոչ է անում նրանց ապացուցել դաշնակիցներին, որ «մենք մի ժողովուրդ ենք, որն ուզում է իր անկախությունը։ Ցույց տվեք նրանց, որ մենք պաշտպանում ենք մեր հարևաններին և գաղթականներին, որ մենք օգնում ենք մեր ծերերին և երիտասարդներին»[109]։

Մայիսի 9-ին համասիրիական այս ժողովը ցույց տվեց, որ անկախության պահանջը սիրիական բոլոր շրջանների և ազգային ու կրոնական համայնքների գլխավոր պահանջն էր։

Այդ նիստից հետո այլևս ոչ մի խոչընդոտ չկար Սիրիական գլխավոր կոնգրեսի գումարման ճանապարհին։ Այդ կոնգրեսի գումարումն անհրաժեշտ էր հիմնականում երկու պատճառով։ Առաջին՝ սիրիական կառավարությունը, ինչպես արդեն նշել ենք, ստեղծվեց դեկրետով, որ ստորագրեց էմիր Ֆեյսալը իր Հոր՝ Հեջազի թագավոր Հուսեյնի անունից։ Արևելյան գոտում ստեղծված արաբական պետությունը չուներ որևէ ներկայացուցչական օրգան և չէր խարսխված սահմանադրական որևէ հիմքի վրա։ Արաբական պետության ստեղծման պրոցեսն ավարտելու, նրա համար կայուն օրենսդրական հիմք ստեղծելու և նրա դիրքերն ամրապնդելու հա-

107 Նույն տեղում, էջ 271։
108 Նույն տեղում։
109 Նույն տեղում։

մար անհրաժեշտ էր օրինադիր մի մարմնի ստեղծում, որն իրավասու լիներ ամբողջ ազգի անունից խոսելու, պետական կարևոր որոշումներ ընդունելու և արաբական կառավարությանը հանձնաբարականներ տալու։ Երկրորդ՝ Սիրիա էր գալու միջդաշնակցային հանձնաժողով, պարզելու սիրիացիների վերաբերմունքը իրենց պետության ապագա կառուցվածքի և ստատուսի վերաբերյալ։ Այդ կապակցությամբ ևս անհրաժեշտ էր դառնում համասիրիական հեղինակավոր բարձրագույն մարմնի ստեղծումը, որը լիազորված լիներ հանդես գալու սիրիական ժողովրդի անունից և շարադրելու նրա պահանջները։ Այդպիսի օրգան հանդիսացավ սիրիական գլխավոր կոնգրեսը՝ Մու՛թամար աս-սուրի ալ-ամ։ Նրա ընտրությունները տեղի ունեցան 1919 թ. մայիսին՝ բոլոր երեք գոտիներում։ Ընտրություններն անցկացվեցին «Արաբական անկախության պարտիայի» և «Սիրիական միասնության պարտիայի» նախաձեռնությամբ և ղեկավարությամբ[110]։ Հատկապես ազդեցիկ էր «Արաբական անկախության պարտիան», որը հիմնվել էր 1919 թ. փետրվարին և որի հիմնական ծրագրային պահանջը արաբական երկրների անկախության նվաճումն էր[111]։

Կոնգրեսի աշխատանքները սկսվեցին 1919 թ. հունիսին՝ Դամասկոսում։ Հունիսի 20-ին, կոնգրեսը, ստուգելով բոլոր երեք գոտիների պատվիրակների լիազորությունները և դրանք համարելով օրինական, իրեն հայտարարեց ամբողջ Սիրիայի ներկայացուցչական մարմին[112]։ Նա դրա իրավունքն ուներ, քանի որ ստեղծվել էր օրինական ընտրությունների միջոցով և նրա կազմում ներկայացված էին սիրիական բոլոր շրջանները, ներառյալ Պաղեստինը, Լիբանանը և Հորդանանը։

1919 թ. հուլիսի 2-ին կոնգրեսն ընդունեց մի ծրագիր, որը հայտնի է «Դամասկոսի ծրագիր» անունով։ Նրանում շարադրված էին սիրիացիների տեսակետները և պահանջները Սիրիայի անկախության, պետական կառուցվածքի, մանդատի և այլնի վերաբերյալ։

Ծրագրում անկախության հարցի վերաբերյալ ասված էր. «Մենք պահանջում ենք Սիրիայի բացարձակ քաղաքական անկախությունը»[113]։ Այնտեղ նշված էին սիրիական պետության սահ-

---

110 *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 89.

111 «Современная Сирия», стр. 132.

112 *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 89.

113 „Papers relating to the foreign relations of the United States. 1919", v. XII, Washington, 1947, p. 780.

մանները. հյուսիսում՝ Տավրոսի լեռնաշղթան, հարավում՝ Ռաֆահից ուղիղ գծով ալ-Ջաուֆ և այնուհետև մինչև Սիրիայի և Հեջազի սահմանների հատման կետը Ակաբայից հարավ, արևելքում՝ Եփրատ և Խաբուր գետերը և այն տերիտորիան, որ տարածվում է Աբու Քեմալից արևելք մինչև ալ-Ջաուֆ, արևմուտքում՝ Միջերկրական ծովը[114]։ Ինչպես տեսնում ենք սիրիական պետությունն իր մեջ ներառնում էր բավականին մեծ տարածություն, ոչ միայն ժամանակակից Սիրիայի ամբողջ տերիտորիան, այլև Պաղեստինը, Հորդանանը և Լիբանանը։

Սիրիական կոնգրեսը գտավ, որ Սիրիան պետք է լինի դեմոկրատական սահմանադրական միապետություն՝ ապակենտրոնացման սկզբունքների լայն կիրառմամբ[115]։ Այդ պետության սահմաններում պետք է ապահովվեն ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքները։ Որպես ապագա սիրիական պետության թագավոր կոնգրեսն առաջարկեց Էմիր Ֆեյսալի թեկնածությունը։

«Դամասկոսի ծրագրում» մեծ տեղ էր հատկացված մանդատի հարցին։ Կոնգրեսը ժխտական դիրք գրավեց մանդատի նկատմամբ և նշեց. «Մենք բողոքում ենք Ազգերի Լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածի դեմ, որը մեզ դնում է զարգացման միջին աստիճանի վրա գտնվող ազգերի շարքը, որոնք մանդատային պետության կարիքն են զգում»[116]։ Այնուհետև կոնգրեսն իր ընդունած ծրագրում նշում էր, որ եթե այս բողոքը Փարիզի խաղաղության կոնֆերանսը անհասկանալի պատճառներով մերժի և իրենց պարտադրի մանդատ, ապա իրենք կցանկանային, որ Սիրիայի մանդատը տրվեր ԱՄՆ-ին[117]։ Սիրիական կոնգրեսը միանգամայն յուրովի էր մեկնաբանում մանդատի էությունը։ Նա մանդատը դիտում էր ոչ թե որպես գաղութային կախվածության ձև, այլ մի ինստիտուտ, որ ստեղծվում է «տնտեսական և տեխնիկական օգնություն ցույց տալու համար, որը չի խախտելու մեր լրիվ անկախությունը»[118]։ Մանդատի ժամկետը չպետք է անցներ 20 տարուց։

Մանդատից ԱՄՆ-ի հրաժարվելու դեպքում կոնգրեսն առաջարկում էր Սիրիայի մանդատը տալ Մեծ Բրիտանիային, սակայն, ոչ մի դեպքում Ֆրանսիային։ «Մենք,—ասված էր «Դամասկոսի

114 Նույն տեղում։
115 Նույն տեղում։
116 Նույն տեղում։
117 Նույն տեղում։
118 Նույն տեղում։

ծրագրում»,—չենք ճանաչում Ֆրանսիական կառավարության որևէ իրավունք մեր սիրիական հայրենիքի որևէ շրջանի վրա»[119]:

Այնուհետև ծրագրում խոսվում էր Պաղեստինում սիոնիզմի ներթափանցման և հրեական օջախ ստեղծելու դեմ: Կոնգրեսը արտահայտվեց հօգուտ միասնական և անբաժան Սիրիայի և պահանջեց նրանից չանջատել սիրիական հայրենիքի հարավային մասը, որը հայտնի է Պաղեստին անունով և արևմտյան մասը, որ հայտնի է Լիբանան անունով[120]:

Կոնգրեսը միաժամանակ դեմ արտահայտվեց այն բոլոր համաձայնագրերին, պայմանագրերին և դեկլարացիաներին, որոնք վերաբերում են Սիրիայի բաժանմանը: Տվյալ դեպքում ի նկատի էր առնվում «Սայքս-Պիկոյի համաձայնագիրը» և Բալֆուրի դեկլարացիան: Կոնգրեսը պահանջեց չեղյալ հայտարարել դրանք[121]:

Ինչպես տեսնում ենք «Դամասկոսի ծրագիրը» ելնում էր բավական արմատական դիրքերից և նրանում հիմնականում արտացոլվել էին Սիրիայի ազգային-ազատագրական ուժերի գլխավոր պահանջները: Այսպիսի ծրագրի ընդունումը կարելի է համարել այդ ուժերի կարևոր հավաքումը: «Դամասկոսի ծրագիրը» դարձավ կարևոր վեհ սիրիական հայրենասերների ձեռքում և մեծապես նպաստեց հակաիմպերիալիստական պայքարի ուժեղացմանը Սիրիայում: Սիրիական կոնգրեսի ընդունած այս փաստաթուղթն էր ահա, որ պետք է հանձնվեր միջդաշնակցային հանձնաժողովին և նրա միջոցով Փարիզի խաղաղության կոնֆերանսին:

«Քինգ–Կրեյնի հանձնաժողովի» ժամանումը Սիրիա և նրա եզրակացություններն ու հանձնարարականները: *1919 թ. մարտի 25-ին, ինչպես նշվեց, ԱՄՆ-ն, Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան համաձայնության եկան միջդաշնակցային հանձնաժողով ստեղծելու հարցի շուրջը: Սկզբնական շրջանում ենթադրվում էր, որ այն պետք է մեկնի միայն Սիրիա: Սակայն Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Ժ. Կլեմանսոն ցանկանալով տհաճություն պատճառել Անգլիային և ստիպել նրան միասնական ճակատով հանդես գալ, պահանջեց, որ այդ հանձնաժողովը այցելի ոչ միայն Սիրիա, այլև Պաղեստին, Միջագետք և Հայաստան*[122], *որոնց համար նույնպես մանդատ էր առաջարկվում: Կլեմանսոյի այս պահանջի հետ մյուս*

[119] *Նույն տեղում:*

[120] *Նույն տեղում:*

[121] *Նույն տեղում, էջ 781:*

[122] *Նույն տեղում, հ. 5, էջ 12:*

պետությունները համաձայնվեցին։ Սակայն դա միջդաշնակցային հանձնաժողով ստեղծելու հարցը մեռյալ կետից չշարժեց։ Փաստորեն, բացի ԱՄՆ-ից, մյուս պետությունները, և առաջին հերթին Ֆրանսիան, չէին ուզում նրա այցելությունը արաբական երկրներ։ Նրանք շատ լավ գիտեին, որ արաբական ժողովուրդները հանդես են գալիս հանուն լրիվ անկախության և հանձնաժողովի ստուգման արդյունքները հօգուտ իրենց չեն լինելու։ Այդ պատճառով էլ փորձեցին տապալել հանձնաժողովի ստեղծումն ընդհանրապես։

1919 թ. ապրիլի 2-ին ԱՄՆ-ի պետական քարտուղար Ռ. Լանսինգը դիմեց Վիլսոնին, խնդրելով լիազորել Օհայոյի նահանգի Օբերլենի կոլեջի պրեզիդենտ Հ. Ջ. Քինգին և Հայաստանի ու Սիրիայի օգնության ամերիկյան կոմիտեի դանձապահ Չ. Ռ. Կրեյնին որպես ԱՄՆ-ի ներկայացուցիչներ միջդաշնակցային հանձնաժողովում[123]։ 1919 թ. ապրիլի 15-ին Վիլսոնը հաստատում է նրանց թեկնածուությունները։ Լանսինգին տեղյակ պահելով, որ մյուս պետությունները կարծես թե հրաժարվել են Սիրիա հանձնաժողով ուղարկելու իրենց մտադրությունից, Վիլսոնն ասում է. «այդ դեպքում մենք առանձին կուղարկենք»[124]։

1919 թ. մայիսի 31-ին «Լորսի խորհրդի» նիստում Ֆրանսիան վերջնականապես բացեց իր խաղաքարտերը։ Կլեմանսոն հայտարարեց, որ ինքը հանձնաժողովի ֆրանսիական անդամներին կնշանակի, հենց որ Սիրիայում բրիտանական զորքերը փոխարինվեն ֆրանսիականով։ Քանի դեռ Սիրիան շարունակում է մնալ բացառապես բրիտանական ռազմական օկուպացման տակ, ավելացրեց Կլեմանսոն, Ֆրանսիան հանձնաժողովի ուղարկումը դիտում է որպես մի անօգուտ միջոցառում։ Վերջացնելով իր ելույթը Ֆրանսիայի պրեմիեր-մինիստրը կրկին ընդգծեց, որ ինքը հանձնաժողովի ֆրանսիական անդամներին կուղարկի Սիրիա, եթե բրիտանական զորքերը փոխարինվեն ֆրանսիականով, «որպեսզի Սիրիայի բնակչությունն իմանա, որ նա բացառապես բրիտանական ռազմական ուժերի իշխանության տակ չէ»[125]։ Ֆրանսիայի պլանները պարզ էին. նա ցանկանում էր ռազմական ուժեր մտցնել Սիրիա և ազդելով հասարակական կարծիքի վրա, ստիպել, որ սիրիացիները արտահայտվեն հօգուտ ֆրանսիական մանդատի։

---

123 Նույն տեղում, հ. 12, էջ 748։

124 Նույն տեղում։

125 „Documents on British foreign policy. 1919—1939", Ist ser., v. IV, p. 258.

Սակայն Անգլիան այդ ժամանակ դեռևս չէր ցանկանում ֆրանսիական զորքերին թողնել Սիրիա։ Ի պատասխան Կլեմանսոյի պահանջի դեներալ Ալլենբին հայտարարեց, որ «եթե այժմ ֆրանսիական զորքերը գնան Սիրիա, ապա դա լուրջ դժգոհություն առաջ կբերի»[126]։ Անգլիան ձևականորեն առաջադրեց իր թեկնածուներին միջդաշնակցային հանձնաժողովում։ Նրանք մեզ արդեն ծանոթ Մակ-Մահոնը և Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Հոգարթն էին։ Սակայն Դ. Լլոյդ Ջորջը հայտարարեց, որ իր ներկայացուցիչներին չի ուղարկի, մինչև Ֆրանսիան իրենը չուղարկի[127]։ Իսկ Լլոյդ Ջորջը շատ լավ գիտեր, որ Ֆրանսիան չի ուղարկի իր ներկայացուցիչներին, որովհետև Անգլիան մերժեց բրիտանական զորքերը Սիրիայում ֆրանսիականով փոխարինելու Կլեմանսոյի պահանջը։ Ինչ վերաբերում է Իտալիային, ապա պրեմիեր-մինիստր Օռլանդոն հայտարարեց, որ «ինքը իր ներկայացուցիչներին չի ուղարկի, բանի դեռ բրիտանական և ֆրանսիական կառավարությունները չեն ուղարկել իրենցը»[128]։

Այսպես տապալվեց միջդաշնակցային հանձնաժողով ստեղծելու պլանը։ Բայց դա չխանգարեց ԱՄՆ-ին իր ներկայացուցիչներին առանձին ուղարկելու արաբական երկրներ։ Նրանց հանձնաժողովը նույնպես համարվում էր միջդաշնակցային, սակայն պատմության մեջ մտավ որպես «Քինգ-Կրեյնի հանձնաժողով»։

Այդ հանձնաժողովը Պաղեստին ժամանեց 1919 թ. հունիսի 10-ին և արաբական երկրներում մնաց 41 օր՝ հունիսի 10-ից մինչև հուլիսի 21-ը, որից հետո վերադարձավ Եվրոպա։ Քինգը և Կրեյնը եղան Երուսաղեմում, Թել-Ավիվում, Նաբլուսում, Նազարեթում, Հայֆայում, Ակրում, Բաալբեկում, Բեյրութում, Սիդոնում, Տյուրոսում, Ջահլեում, Տրիպոլիում, Ալեքսանդրետում, Լաթաքիայում, Հոմսում, Համայում, Հալեպում, Ադանայում, Մերսինում և այլ վայրերում[129]։ Ամենից երկար նրանք մնացին Դամասկոսում՝ 9 օր։ Իրենց այցելության ընթացքում երեք դռոհիներում նրանք ընդունեցին քաղաքական 153, տնտեսական 41 և կրոնական 247 պատվիրակություններ, որոնցից 7-ը՝ հայկական[130]։ Քինգը և Կրեյնը զգալի ուշադրություն դարձրին ազգային փոքրամասնություններին։ Հա-

126 Նույն տեղում։

127 Նույն տեղում։

128 Նույն տեղում։

129 „Papers relating to the foreign relations of the United States. 1919", v. XII, p. 753—754.

130 Նույն տեղում, էջ 756—757։

լեպում եղած ժամանակ նրանք այցելեցին հայ գաղթականների կենտրոնները[131]։ Բացի այդ, նրանք սիրիական բոլոր գոտիներից միասին վերցրած ստացան 1863 խնդրագիր[132]։ Քինգը և Կրեյնը Հանդիպում ունեցան սիրիական կոնգրեսի անդամների հետ, որոնք նրանց հանձնեցին իրենց ընդունած «Դամասկոսի ծրագիրը»։ 1919 թ. հուլիսի 3-ին նրանց ընդունեց էմիր Ֆեյսալը։ Զրույցի ընթացքում Ֆեյսալը նշեց, որ արաբները դեմ են Սիրիայի բաժանմանը։ Նա հատկապես ընդգծեց Սիրիայի և Պաղեստինի միասնության անհրաժեշտությունը։ «Պաղեստինից Սիրիայի ոչ մի անջատում,— հայտարարեց Ֆեյսալը,—ընդունելի չէ, քանի որ աղգային առումով նրանք մեկ են»[133]։ Ֆեյսալը միաժամանակ ամերիկյան պատվիրակներին բացատրեց, թե ինչու են սիրիացիները դեմ ֆրանսիական մանդատին։ Սիրիացիները Ֆրանսիան համարում են գաղութային ամենավատ մեթոդներ իրականացնող երկիր և «վախենում են, որ ֆրանսիական մանդատը կնշանակի սիրիական շուկայի և մարդկային ուժի շահագործում հօգուտ ֆրանսիական շահերի»[134]։

Այդ բոլոր հանդիպումների, զրույցների և խնդրագրերի հիման վրա Քինգը և Կրեյնը կազմեցին մի ընդարձակ զեկուցագիր Փարիզի խաղաղության կոնֆերանսին ներկայացնելու համար։ Նրանց զեկուցագիրը շատ բաներով համընկնում էր «Դամասկոսի ծրագրի» հետ և հաստատում նրանում առաջ քաշված դրույթները։ Նրանք հատկապես հաստատեցին, որ սիրիացիների ճնշող մեծամասնությունը ուզում է լրիվ անկախություն և դեմ է Սիրիայի բաժանմանը։

Ուսումնասիրելով իրենց ձեռքի տակ եղած տվյալները՝ Քինգը և Կրեյնը հետևյալ հանձնարարականներն առաջարկեցին Փարիզի խաղաղության կոնֆերանսին։

Եթե խաղաղության կոնֆերանսը գտնում է, որ Սիրիային օտարերկրյա պետության օգնություն է պետք՝ կառավարման առումով, ապա դա պետք է լինի ոչ թե գաղութային իշխանություն իր հին իմաստով, այլ մանդատային՝ Ազգերի Լիգայի հսկողությամբ, հատուկ ընդգծելով, որ Սիրիայի զարգացումը և բարեկեցությունը պետք է լինի մանդատային իշխանության առաջին պարտականությունը[135]։

---

131 Նույն տեղում, էջ 778։

132 Նույն տեղում, էջ 761։

133 „Documents on British foreign policy. 1919—1939", v. IV, p. 312.

134 Նույն տեղում։

135 „Papers relating to the foreign relations of the United Stetes. 1919", v. XII, p. 787.

Նշնելով սիրիական ժողովրդի հնշող մեծամասնության ցանկությունից ամերիկյան պատվիրակները առաջարկում էին պահպանել Սիրիայի միասնությունը[136]։ Ուստի նրանք գտնում էին, որ նպատակահարմար է Սիրիան դնել ոչ թե մի քանի, այլ մեկ պետության մանդատի տակ[137]։ Այնուհետև Քինգը և Կրեյնը խորհուրդ էին տալիս սիրիական միասնական պետության ղեկավար հանձնել Ֆեյսալին, փոփոխություններ մտցնել Բալֆուրի դեկլարացիայում՝ սահմանափակելով հրեաների ներգաղթը Պաղեստին և չվերածել այն հրեական պետության[138]։

Քինգի և Կրեյնի հանձնարարականներում հատուկ տեղ էր գրավում այն հարցը, թե ո՞ր երկրին պետք է առաջարկել Սիրիայի մանդատը։ Քանի որ ստացված խնդրագրերի 60%-ից ավելին համաձայնվել էր մանդատը ԱՄՆ-ին տալու օգտին, նրանք ևս առաջարկում էին «ելնելով ժողովրդի արտահայտած ցանկություններից» Սիրիայի մանդատը տալ ԱՄՆ-ին[139]։

Իսկ եթե ինչ-որ պատճառներով մանդատը չտրվեր ԱՄՆ-ին, ապա Քինգը և Կրեյնը առաջարկում էին այն տալ Մեծ Բրիտանիային, սակայն ոչ մի դեպքում Ֆրանսիային։ Նրանք հաստատում էին, որ սիրիացիները շատ խիստ կերպով դեմ էին ֆրանսիացիներին և հատուկ մատնանշում էին, որ «ֆրանսիական մանդատը ուժով հարկադրելու ամեն մի փորձ պատերազմի կհանգեցնի արաբների և ֆրանսիացիների միջև»[140]։

Եվ վերջապես, Քինգը և Կրեյնը, ի նկատի ունենալով Լիբանանի բնակչության որոշ խմբերի ցանկությունը, նպատակահարմար էին գտնում Սիրիայից անջատել Լիբանանը և նրա մանդատը առաջարկել Ֆրանսիային[141]։

Քինգի և Կրեյնի զեկուցագրում զգալի տեղ էր գրավում ամերիկյան քաղաքականության գովերգումն ու փառաբանումը, որն, ըստ նրանց, ի տարբերություն Անգլիայի և Ֆրանսիայի, դեմոկրատական և հակագաղութային է։ Նրանք առանձնապես ընդգծում էին, որ տեղական բնակչության համար ընդունելի է ամերիկյան օգնությունը։ Դժվար չէ կռահել, թե դրանով նրանք ինչ էին ակնարկում։ Թևև թաղտրկված, նրանք իրենց զեկուցագրում և հանձնարա-

---

136 Նույն տեղում, էջ 789։
137 Նույն տեղում, էջ 790։
138 Նույն տեղում, էջ 791—792։
139 Նույն տեղում, էջ 796։
140 Նույն տեղում, էջ 798։
141 Նույն տեղում, էջ 799։

րականներում արաբական երկրներում ամերիկյան տիրապետության հաստատման գաղափարն էին անցկացնում։

Հուլիսի 21-ին ամերիկյան պատվիրակները Ստամբուլի վրայով վերադարձան Փարիզ։ Նրանք հավատացած էին, որ ԱՄՆ-ի մանդատի հաստատումն ամբողջ Սիրիայի վրա ապահովված է, տեղյակ լինելով, որ իրենց բացակայության ընթացքում լուրջ փոփոխություններ էին տեղի ունեցել։ ԱՄՆ-ում բավական ուժեղ էին մեկուսացման կողմնակիցները, որոնք սխալ էին համարում Վիլսոնի ակտիվ մասնակցությունը ոչ ամերիկյան, այդ թվում նաև եվրոպական ու մերձավորարևելյան գործերում։ Ըստ նրանց, ամերիկացիներն իրենց հիմնական ուշադրությունը պետք է դարձնեին ամերիկյան մայրցամաքին։ Այդ ուժերին հաջողվեց ամերիկյան սենատում տապալել Վերսալյան պայմանագրի վավերացումը։ Սենատը իր համաձայնությունը չտվեց ԱՄՆ-ի մասնակցությանը Ազգերի Լիգային։ Այլ կերպ ասած, պրեզիդենտ Վիլսոնի քաղաքականությունը Ամերիկայի սահմաններից դուրս ԱՄՆ-ի բարձրագույն օրենսդիր մարմնի կողմից հավանության չարժանացավ։

Այդ պատճառով էլ «Քինգ-Կրեյնի հանձնաժողովի» զեկուցագիրը և հանձնարարականները մոռացության տրվեցին և երբեք չդարձան քննարկման առարկա։ Չնայած այդ հանգամանքին վերոհիշյալ փաստաթուղթը արժեքավոր աղբյուր է անգլո-ֆրանս-ամերիկյան փոխհարաբերությունները ուսումնասիրելու և Մերձավոր Արևելքում 1919—1920 թթ. ամերիկյան քաղաքականությունը հասկանալու համար։

Այժմ կանդ առնենք այն հարցի վրա, թե ինչու սիրիացիները դեմ էին մանդատը Ֆրանսիային տալու և ինչու այդ հարցում նրանք նախապատվությունը Անգլիայի փոխարեն տվեցին ԱՄՆ-ին։

Նախ նշենք, որ սիրիացիները «մանդատ» բառի տակ հասկանում էին ոչ թե քաղաքական տիրապետության հաստատում, այլ հզոր և հարուստ արևմտյան պետությունների տնտեսական, ֆինանսական և տեխնիկական օգնություն։ Երբ այս տեսակետից էին մոտենում սիրիական առաջնորդները Ֆրանսիայի թեկնածությանը, ապա գտնում էին, որ Ֆրանսիան այդ պահանջները չի կարող բավարարել, որովհետև պատերազմի ժամանակ շատ կորուստներ է ունեցել, տուժել է ֆինանսապես ու տնտեսապես և ի վիճակի չէ անհրաժեշտ պաշտպանություն ցույց տալ Սիրիային։ Դեռ ավելին, նա համապատասխան միջոցներ չունի նույնիսկ իր սեփական արտեղծությունը վերականգնելու։ Հետևաբար, հաստատելով իր ման-

դաոը Սիրիայի վրա Ֆրանսիան ոչ թե կօգներ նրա տնտեսական առաջընթացին, այլ կշահագործեր իր սեփական արդյունման համար։ Սրան պետք է ավելացնել և այն, որ էմիր Ֆեյսալը և Սիրիայի մյուս դեկավարները, ի նկատի ունենալով Ֆրանսիայի քաղաքականությունը Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրներում՝ Ալժիրում, Թունիսում և Մարոկկոյում, գտնում էին, որ նա ամենաուժայրագ դաղութային մեթոդներ կիրառող երկիրն է։ Այդ պատճառով էլ Ֆեյսալը Քինգին և Կրեյնին հայտարարում է, որ սիրիացիները «Ֆրանսիական մանդատը համարում են ազգային մահ»[142]։ Նրանք միամտորեն կարծում էին, որ Անգլիան և ԱՄՆ-ն այդպիսի բաղաքականության կողմնակից չեն։

Դալով Անգլիայի բեկնածությանը, ապա Ֆեյսալը և նրա համախոհները սկզբնական շրջանում կողմնակից էին, որ Սիրիայի մանդատը արվի Անգլիային։ Մենք արդեն նշել ենք, որ այդ շրջանում Սիրիայում ամենաուժեղը Անգլիայի ռազմա-քաղաքական դիրքերն էին և Ֆեյսալը լրիվ կախված էր Մեծ Բրիտանիայից։ Այդ պատճառով էլ նրանք հանդես էին գալիս հօդուտ անգլիական մանդատի։ Սակայն Անգլիան, որ այդ մասին սկզբում որոշակիորեն չէր արտահայտվում, 1919 թ. կեսերից կարուկ հրաժարվեց սիրիական մանդատից, և այդ մասին Դ. Լլոյդ Ջորջը տեղյակ պահեց Ֆեյսալին։ Անգլիան այդ շրջանից սկսած սիրիական հարցում ավելի շատ աչակցություն է ցույց տալիս Կլեմանսոյին, քան թե Ֆեյսալին։ Անգլիայի քաղաքականության այդ փոփոխությունը հետևանք էր նախ այն բանի, որ ասպարեզ էր իջել ԱՄՆ-ն, որը լուրջ և ուժեղ մրցակից էր, ուժեղացել էր հակաիմպերիալիստական շարժումը ամբողջ Արաբական Արևելքում, որը սպառնում էր ոչ միայն Ֆրանսիային, այլև Անգլիային և, վերջապես, կային գերմանական և եվրոպական այլ հարցեր, որոնք առանց Ֆրանսիայի աջակցության անհնար էր լուծել։ Անգլիայի դեկավարները գտնում էին, որ ԱՄՆ-ի մրցակցությանը դիմագրավելու, արաբական ազգային-ազատագրական շարժումները ճնշելու և եվրոպական անհետաձգելի խնդիրները լուծելու համար անհրաժեշտ էր որոշ զիջումներ կատարել և միասնական ճակատ ստեղծել Ֆրանսիայի հետ։ Այդ զիջումների թվին էր պատկանում նաև Անգլիայի զիջումները Ֆրանսիային՝ Սիրիան օկուպացնելու հարցում։

Անգլիայի դրաված այդ դիրքի պատճառով էմիր Ֆեյսալն

[142] „Documents on British foreign policy. 1919—1939, 1st ser., v. IV, p. 292.

սկսում է ավելի շատ ոչ թե Լլոյդ Ջորջի, այլ Վիլսոնի կողմը նայել։ Դրա հետևանքը եղավ այն, որ մանդատի հարցում սիրիացիներն արտահայտվեցին հօգուտ ԱՄՆ-ի թեկնածության։ Այստեղ իր դերը խաղաց նաև ամերիկյան կառավարության և անձամբ Վիլսոնի դեմագոգիկ հայտարարությունները ազգերի ինքնորոշման մասին, ինչպես նաև խոսքով գաղութային քաղաքականության դեմ հանդես գալը։ Սիրիական կոնգրեսի ընդունած «Դամասկոսի ծրագրում» որոշակի ասված էր, որ սիրիացիները «ապավինում են Վիլսոնի դեկլարացիաներին, որ պատերազմ մղելիս նրա նպատակն է վերջ դնել նվաճումներին և գաղութացմանը»[143]։ Հավատալով ամերիկյան իմպերիալիստների հայտարարություններին, սիրիական կոնգրեսը որոշում է. քանի որ ԱՄՆ-ը «շատ հեռու է գաղութացման որևէ մտքից և չունի ոչ մի քաղաքական նպատակներ մեր երկրում, մենք տեխնիկական և տնտեսական օգնություն կխնդրենք Ամերիկայի Միացյալ Նահանգներից»[144]։

Արևմտյան Սիրիայի օկուպացումը ֆրանսիական զորքերի կողմից և նախիմպերիալիստական պայքարի վերելքը։ Անգլիան և Ֆրանսիան երկարատև բանակցություններից և փոխադարձ մեղադրանքներից հետո վերջապես 1919 թ. աշնանը նախնական համաձայնության եկան Սիրիայի հարցի վերաբերյալ։ 1919 թ. սեպտեմբերի 13-ին Դ. Լլոյդ Ջորջը մի հուշագիր ներկայացրեց Ժ. Կլեմանսոյին Սիրիայի խնդիրը կարգավորելու մասին։ Հուշագրում ասված էր, որ անհապաղ քայլեր պետք է ձեռք առնվեն բրիտանական զորքերը Սիրիայից և Կիլիկիայից էվակուացնելու համար, որը պետք է սկսվի 1919 թ. նոյեմբերի 1-ից։ Ի կատարումն այս գաղափարականության, բրիտանական կայազորները Սիրիայում Սայքս-Պիկոյի գծից արևմուտք և Կիլիկիայում պետք է փոխարինվեն ֆրանսիական զինվորական ուժերով, իսկ Դամասկոսի, Հոմսի, Համայի և Հալեպի կայազորները՝ արաբական ուժերով։ Այդ փոփոխություններից հետո Անգլիայի կողմից օկուպացված երկրները կլինեն Միջագետքը՝ Մոսուլով հանդերձ և Պաղեստինը[145]։ Այդ երկրների և Սիրիայի միջև վերջնական սահմաններ հաստատելու հարցը պետք է քննվեր լրացուցիչ։ Բացի այդ, հուշագրում խոսվում էր այն մասին, որ ֆրանսիական կառավարությունը խոչընդոտներ

---

143 „Papers relating to the foreign relations of the United States" 1919, v. XII, p. 780.

144 Նույն տեղում։

145 „Documents on British foreign policy. 1919—1939. Ist ser., v. I p. 700.

չպետք է Հարուցի արարական պետության առջև վերջինիս կողմից Անգլիային իրավունք տալու Հայֆայից Միջագետք երկաթուղագիծ կառուցելու հարցում։ Անգլիան իրավունք էր ստանալու նաև նավթամուղ կառուցելու[146]։

Ժ. Կլեմանսոն լրիվ չհամաձայնվեց անգլիական հուշագրի հետ։ Նա հայտարարեց, որ Ֆրանսիան ընդունում է Լլոյդ Ջորջի հուշագրի այն մասը, որը վերաբերում է Սայքս-Պիկոյի գծից արևմուտք ընկած տերիտորիայից բրիտանական զորքերի էվակուացմանը[147]։ Անգլիական հուշագիրը Ֆրանսիային լրիվ չէր բավարարում ոչ միայն այն պատճառով, որ սիրիական տերիտորիայով պետք է անցներ նավթամուղ և կառուցվեր երկաթուղի, իսկ դա նշանակում էր Սիրիայում անգլիական ազդեցության հենարաններ ստեղծել, այլ նաև այն պատճառով, որ արևելյան գոտին՝ Դամասկոսից Հալեպ ընկած տերիտորիան մնալու էր արաբների տիրապետության տակ։ Ֆրանսիան, ինչպես արդեն բազմիցս նշել ենք, ձգտում էր օկուպացնել ամբողջ Սիրիան։

1919 թ. սեպտեմբերի 13-ի հուշագիրը մի իմպերիալիստական գործարք էր Անգլիայի և Ֆրանսիայի միջև, որովհետև այն ֆրանսիական զորքերի կողմից Սիրիայի օկուպացման սկիզբը դրեց։

Անգլո-ֆրանսիական այդ գործարքը բոլորովին նոր իրադրություն ստեղծեց Սիրիայում։ Սիրիացիների համար դա մի աննպաստ հարված էր։ Ֆեյսալն անմիջապես մեկնեց Եվրոպա, փորձելով կանխել նրա պայմանների կիրառումը։ Այդ նպատակով հանդիպում ունեցավ Լլոյդ Ջորջի, ինչպես նաև Կլեմանսոյի հետ։ Սակայն նրա ջանքերը դուր անցան։ Լլոյդ Ջորջը նրան ոչ միայն չսփոփացրեց, այլև հայտնեց, որ Ֆրանսիան ուղում է օկուպացնել նաև Դամասկոսից Հալեպ ընկած ամբողջ շրջանը[148], որի վրա ստեղծվել էր արաբական պետությունը։

Բրիտանական զորքերի էվակուացումը Սիրիայի արևմտյան և արևելյան շրջաններից հիմնականում ավարտվեց 1919 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին։ Այդ նույն ամիսներին արևմտյան շրջանները սկսեցին դրավել ֆրանսիական զորքերը։ Դրավման սկզբում ֆրանսիական զորքերի թիվը համեմատաբար քիչ էր՝ 7 հազար։ Տեսնելով, որ այդ զորքերը անբավարար են Սիրիան օկուպացնելու համար, ֆրանսիական կառավարությունն իր զորքերի թիվն ավելացնում է ի հաշիվ ֆրանսիական աֆրիկյան կորպուսի։ Դեկ-

[146] Նույն տեղում, էջ 701։
[147] Նույն տեղում, էջ 693։
[148] Նույն տեղում, հ. IV, էջ 416։

տեմբերին արդեն այդ թիվը հասավ 27 հազարի[149], իսկ հետագայում՝ մինչև 70 հազարի։ 1919 թ. նոյեմբերի 21-ին գեներալ Գուրոն, որ նշանակվել էր Մերձավոր Արևելքում ֆրանսիական զորքերի հրամանատար, մտավ Լիբանան։ Ֆրանսիական կառավարությունը, ժ. Պիկոյի փոխարեն, նրան նշանակեց նաև ֆրանսիական գլխավոր կոմիսար։

Սիրիայի արևմտյան շրջանների օկուպացումը ֆրանսիական զորքերի կողմից աղդանշան դարձավ ամբողջ Սիրիայում հակաիմպերիալիստական պայքարի ծավալման համար։

Աղգային-ազատագրական պայքարի հիմնական շարժիչ ուժը սիրիական գյուղացիությունն էր։ Նա էր, որ իր ուսերի վրա տարավ այդ պայքարի հիմնական ծանրությունը։ Բանվոր դասակարգը դեռ նոր էր ձևավորվում և քանակապես քիչ էր, չուներ իր քաղաքական կուսակցությունը և այլ կազմակերպություններ։ Այդ պատճառով էլ այս շրջանում գեկավար դեր չէր խաղում ազատագրական պայքարում։ Չնայած այդ հանդամանքին, սիրիական պրոլետարիատը ակտիվորեն մասնակցում էր հակաիմպերիալիստական պայքարին, հանդիսանալով նրա ամենահետևողական ջոկատը։ Բացի գյուղացիությունից և բանվոր դասակարգից, այդ շարժմանը մասնակցում էին նաև արհեստավորները, առևտրականները, մտավորականությունը և ուսանողությունը։ Աղգային-ազատագրական շարժման գեկավարությունը գտնվում էր սիրիական երիտասարդ աղգային բուրժուազիայի և հայրենասիրաբար տրամադրված կալվածատեր-ֆեոդալների ձեռքում։

Հակաիմպերիալիստական պայքարը Սիրիայում, հատկապես նրա արևմտյան շրջաններում մասսայական բնույթ էր ստացել մինչև նոյեմբեր ամիսը։ 1919 թ. փետրվարին ապստամբեցին «Արևելյան լեգեոնի» արաբ զինվորները[150]։ Նույն թվականի մարտին ապստամբություն բռնկվեց Հալեպում և նրա շրջակայքում, որի ճնշման ժամանակ զոհվեցին 200 արաբներ[151]։ 1919 թ. մայիսին Լաթաքիայի շրջանում՝ Նուսայրիի լեռներում սկսվեց ալավիների ապստամբությունը շեյխ Սալիհ իբն-Ալիի գլխավորությամբ[152]։ Ալավիների ապստամբությունն այս էտապում ամենախոշորն էր և տևեց մոտ երեք տարի։ Ուշադրության են արժանի արաբների

149 «Арабские страны», стр. 30.

150 «Великий Октябрь и народы Востока», стр. 373.

151 Նույն տեղում։

152 نجيب الارمنازي، محاضرات عن سوريا. ص ٥

ապստամբություններ Ջերիկ Ամալում՝ Մահմուդ Ֆաուրի ղեկավարությամբ[153], արաբական պարտիզանական ջոկատների հարձակումը ֆրանսիական կայազորների վրա Իբրահիմ Հանանոյի գլխավորությամբ[154] և այլն։

Այս էտապում ծավալված հակաիմպերիալիստական պայքարի յուրահատկությունն այն է, որ նա ընդունեց պարտիզանական պայքարի ձև։ Արաբները կազմակերպում էին պարտիզանական փոքր ու մեծ ջոկատներ, որոնք անսպասելի հարձակումներ էին գործում ֆրանսիական կայազորների, հակիչ կետերի և քաղաքացիական ու ռազմական այլ օբյեկտների վրա։

Սակայն այն, ինչ տեղի ունեցավ նոյեմբերից սկսած, Սիրիայի հակաիմպերիալիստական պայքարի ամենափայլուն էջերից մեկն է։ Ֆրանսիական իմպերիալիստները, անգամ շատ արաբ գործիչներ, չէին ակնկալում, որ 1919 թ. սեպտեմբերի 13-ի անգլո-ֆրանսիական համաձայնագիրը և արևմտյան շրջանների գրավումը կապող է այդքան խոր պայթյուն և ազգային-ազատագրական շարժման հուժկու վերելք առաջացնել Սիրիայում։

Չդանկանալով խաղաղ կերպով անձնատուր լինել ֆրանսիական գաղութարարների ողորմածությանը, սիրիական գլխավոր կոնգրեսը 1919 թ. նոյեմբերին դիմեց ողջ սիրիական ժողովրդին, կոչ անելով ամենալուրջ դիմադրությունը ցույց տալ զավթիչներին և ամեն ինչ անել ձախողելու նրանց գաղութարարական ծրագրերի իրագործումը։ Ֆրանսիական իմպերիալիստներին չենթարկվելու բուռն ցանկության արդյունք հանդիսացավ 1919 թ. նոյեմբերին Ազգային պաշտպանության ժողովրդական խորհրդի ստեղծումը Դամասկոսում, որն իր մասնաճյուղերն ուներ Սիրիայի համարյա բոլոր քաղաքներում և մարզերում[155]։ Ժողովրդական խորհուրդը, որի կազմի մեջ մտնում էր 250 մարդ, ստեղծվեց մի շարք բուրժուական կուսակցությունների համատեղ ջանքերով։ Սիրիական կուսակցություններից, որոնք այդ շրջանում աչքի ընկնող դեր խաղացին Սիրիայի քաղաքական կյանքում և ազգային-ազատագրական պայքարում, պետք է հատկապես նշել «Հիզբ ալ-իստիքլալ ալ-արաբի» («Արաբական անկախության կուսակցություն»), «Հիզբ ալ-վաթանիյա աս-սուրիյա» («Սիրիայի ազգային կուսակ-

---

153 Նույն տեղում։

154 Նույն տեղում, էջ 27։

155 «Очерки новейшей истории арабских стран», стр. 49.

ցություն»), «Հիզբ ալ-իթթիհադ աս-սուրի» («Սիրիական միասնության կուսակցություն») և այլ կուսակցություններ[156]։

Ազգային պաշտպանության ժողովրդական խորհուրդը կանոնավոր նիստեր էր գումարում, քննարկում և որոշումներ ընդունում Սիրիայի համար կարևոր հարցերի վերաբերյալ, դրամ և զենք հայթայթում, կամավորներից պարտիզանական ջոկատներ կազմակերպում և ուղարկում արևմտյան շրջաններ և այլն։ Ցանկանալով պարտիզանական ջոկատների ստեղծումը կանոնավորել և կազմակերպված հիմքի վրա դնել՝ ժողովրդական խորհուրդը նոյեմբերի 18-ին որոշեց, որ յուրաքանչյուր սիրիացի պետք է իր ունեցվածքի երկու տոկոսը հատկացնի հայրենիքի պաշտպանության ֆոնդին[157]։

Սիրիական կոնգրեսը արաբ ազգը հայտարարեց «օրինական պաշտպանության վիճակում»[158]։ Իսկ Սիրիայի պաշտպանության շահերը պահանջում էին սիրիական ազգային բանակի ստեղծում։ Այդ մասին համապատասխան որոշում ընդունեց Ազգային պաշտպանության ժողովրդական խորհուրդը, որը Ամին Սաիդի արտահայտությամբ «ժողովրդական պառլամենտի» դեր էր կատարում։ Սիրիական կառավարությունը, ելնելով այդ որոշումից, 1919 թ. դեկտեմբերի 21-ին ընդունեց օրենք՝ ընդհանուր զինվորական պարտականության մասին։ Օրենքը նախատեսում էր զորակոչել 20—40 տարեկան բոլոր քաղաքացիներին[159]։

Ժողովուրդը ուրախությամբ և հայրենասիրական պարտքի դիտակցությամբ դիմավորեց սիրիական կոնգրեսի, Ազգային պաշտպանության ժողովրդական խորհրդի և կառավարության որոշումները և ամենալայն աջակցությունը ցույց տվեց նրանց։ Սիրիական ազգային պատասխանատու մարմինների գրաված այս դիրքն ավելի ամրապնդեց սիրիացիների վճռականությունը ֆրանսիացիներին զինված դիմադրություն ցույց տալու։

1919 թ. դեկտեմբերին Լաթաքիայում խոշոր ճակատամարտ տեղի ունեցավ ֆրանսիական զինված ուժերի և սիրիացիների միջև[160]։ Ամբողջ Սիրիայում մեծ արձագանք գտավ Բաալբեկի ճակատամարտը։ Բաալբեկի ազգաբնակչությունը, 1919 թ. դեկտեմբերի կեսերին իմանալով, որ իրենց քաղաքն է ժամանելու ֆրանսիական

---

156 «Великий Октябрь и народы Востока», стр. 372.

157 Նույն տեղում։

158 «Арабские страны», стр. 32.

159 *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 86.

160 «Великий Октябрь и народы Востока» стр. 373.

պինվորական ապան, որոշից նրան ներս չթողնել։ Ֆրանսիական ապան, որին չհաջողվեց մտնել Բաալբեկ և ֆրանսիական իշխանութիւն հաստատել այնտեղ, ձեռնունայն վերադարձավ Բեյրութ։ Բաալբեկցիներին անհնազանդության համար պատժելու նպատակով ֆրանսիական իշխանությունները Բաալբեկ ուղարկեցին ֆրանսիական մի մեծ չոկատ, բաղկացած 1500 հետևակայիններից, 200 հեծյալներից և հրետանային մեկ վաշտից[161]։ Սակայն դա չվախեցրեց քաղաքի բնակչությանը։ Նրանք 1919 թ. դեկտեմբերի 18-ին, ամբողջ օրը հերոսական դիմադրություն էին ցույց տալիս ֆրանսիական օկուպանտներին։ Քաղաքի պաշտպանները նահանջեցին միայն ուշ երեկոյան, երբ փամփուշտներն արդեն վերջացել էին։ Ֆրանսիացիները Բաալբեկը գրավեցին դեկտեմբերի 19-ին[162]։

Հիշատակության են արժանի սիրիական պարտիզանական խմբերի հարձակումները Ռայակ—Հալեպ երկաթուղու վրա, մարտերը Համամամի, Լիթանիի կամուրջի և Տարտուսի մոտ[163]։ Նրանք մի շարք հաջող ռազմական հարձակումներ գործեցին Ակր—Սիդոն հանապարհի երկայնքով, Հոմս—Տրիպոլի բարձրավանդակի շրջանում, Ալեքսանդրետ քաղաքում և նրա շրջակայքում։ Միայն լրացուցիչ ռազմական ուժեր ուղարկելով ֆրանսիացիները կարողացան շրջապատումից ազատել իրենց կայազորը Հարիմում[164]։ 1920 թ. հունվարին ֆրանսիական դինվորները գլխովին ջախջախվեցին ալ-Հուլա լճի մոտ գտնվող ալ-Ջադիդա գյուղում[165]։ Ամբողջ Սիրիան պայքարի հերոսական դրոշ էր բարձրացրել ֆրանսիական օկուպանտների դեմ և գնահին այլվում էր նրանց ոտքերի տակ։

Սիրիայում այս շրջանում ստեղծված կացությունից փորձեցին օգտվել Մուստաֆա Քեմալը և Թուրքիայի մյուս պետական և ռազմական գործիչները։ Մուստաֆա Քեմալը և նրա համախոհները, որոնք Բեև արևմուտքում պայքարում էին Անտանտի դեմ Թուրքիայի անկախության պահպանելու համար, դեռևս չէին հրաժարվել Թուրքական մեծապետական իմպերիալիստական պլաններից և փայփայում էին Օսմանյան կայսրության սահմանները վերականգնելու ցնորամիտ ծրագրեր։ Այդ ծրագրերի մեջ նրանք առանձնահատուկ տեղ էին տալիս Անդրկովկասի և Արաբական Արևելքի

---

[161] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 86.

[162] احسان هندى، كفاح الشعب العربى السورى، ص ٢٦

[163] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 96.

[164] Նույն տեղում, էջ 96։

[165] «Великий Октябрь и народы Востока», стр. 373.

երկրների գրավմանը։ Քեմալական գործակալները վխտում էին Սիրիայում՝ հատկապես Հալեպում և նրա շրջակայքում, ինչպես նաև Դամասկոսում և այլ վայրերում, և գրգռում տեղական բնակչությանը ֆրանսիացիների և անգլիացիների դեմ։ Որոշ արաբ գործիչներ, ինչպես, օրինակ, Հալեպի նահանգապետ Ջաֆար ալ-Ասքյարին, Յասին ալ-Հաշիմին և այլն, նույնիսկ կապեր հաստատեցին և բանակցություններ մեջ մտան քեմալականների հետ[166]։

Թուրքական գործակալների գործունեության և նրանց ծավալած պրոպագանդայի համար այդ շրջանում որոշ նպաստավոր հող էր ստեղծվել, որովհետև արաբների մոտ խոր զայրույթ էր կուտակվել Անգլիայի ու Ֆրանսիայի դեմ, որոնք խաբել էին նրանց և փորձում էին իրենց գաղութային տիրապետությունը հաստատել նրանց երկրների վրա։ Դժգոհ ու հուսախաբ որոշ արաբ գործիչներ, հուսահատությունից և անզորությունից դրդված երբեմն դիմում էին չմտածված ու անխոհեմ քայլերի, ցանկանալով ամեն ինչ անել, միայն թե պատժվեն իրենց եվրոպական «բարեկամները»։ Այսպիսով, չարաշահելով արաբների ազատագրական ղգացմունքները, քեմալականները, ծածկվելով արաբների «բարեկամների» քողի տակ, փորձեցին Անգլիայի ու Ֆրանսիայի դեմ ուղղված նրանց դժգոհությունը օգտագործել իրենց շահերի համար։ Այդ են վկայում այն բազմաթիվ բանավոր ու գրավոր կոչերը, որ թուրքական գործակալները լայնորեն տարածում էին Սիրիայում։ Դրանցից, քննվող հարցի տեսանկյունից, առավել ուշադրության են արժանի քեմալականների երկու կոչերը։ Առաջինը, որ տարածվեց Հալեպում 1919 թ. հոկտեմբերի 10-ին, կոչվում էր «Մուստաֆա Քեմալի կոչը սիրիացիներին»։ Այս կոչը հետաքրքիր է նախ և առաջ այն տեսակետից, որ նա ոչ միայն առաջարկում է արաբներին թուրքերի հետ միավորվել ընդդեմ եվրոպական պետությունների, այլև հստակ կերպով ցույց է տալիս, թե ինչ հիմքի վրա պետք է տեղի ունենա այդ միավորումը։ Քեմալը դիմում է սիրիացիներին որպես նույն կրոնին պատկանող մարդ. «որպես կրոնակից,—ասում է Մուստաֆա Քեմալը,—ես աղաչում եմ ձեզ ուշադրություն չդարձնել այն տարաձայնություններին, որ ծագել էին մեր միջև և որոնք բաժանեցին մեզ»[167]։ Այնուհետև առաջար-

[166] „Documents on British foreign policy. 1919—1939", Ist ser., v. IV, p. 553; *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 123.

[167] „Documents on British foreign policy. 1919—1939", Ist ser., v. IV, p. 478.

կում է վերջ տալ բյուրիմացություններին և դեմքը ուղղել դավաճան կուսակցությունների դեմ, որոնք ցանկանում են մեր երկիրը բաժանել։ «Եթե դուք չլսեք,— ընդգծում է Քեմալը,— ապա կափսոսաք։ Հույս մի դրեք մեր կրոնի անհավատ թշնամիների խոստումներին»[168]։ Վերջում Մուստաֆա Քեմալը սիրիացիներին կոչ է անում «ևևևք տպրևնք որպես կրոնակից եղբայրներ»[169]։

Ինչո՞վ է ուշագրավ այս կոչը։ Նրանից պարզ երևում է, որ Քեմալը և նրա գինակիցները չէին ուզում ահաևևել Թուրքական լծից ազատագրվելու համար արաբների մղած բազմադարյան պայքարի օբյևկտիվ պատճառները, հևևաբար և չէին ընդունում նրա օրինականությունը։ Նրանք այդ պայքարը և այն, որ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արաբները ապստամբվեցին և իրենց գնքն ուղղեցին օսմանյան լծի դեմ, ծիծաղելիորեն համարում էին բյուրիմացությունների արդյունք։ Մյուս կողմից քեմալականները որպես Թուրքերի հևև սիրիացիների և արաբական մյուս ժողովուրդների միավորման հիմք առաջարկում էին կրոնը և հակաիմպերիալիստական պայքարին փորձում էին տալ կրոնական գունավորում։ Դա հևևադիմական գաղափար էր և ևնշանակեր դարձ դեպի միջնադարյան խավարամոլություններ։ Քեմալականների առաջարկը՝ միավորվել և դառնալ եղբայրներ ըստ կրոնի, ժամանակավրեպ էր։ Դա արվում էր պատմական մի այնպիսի ժամանակաշրջանում, XX դարի սկզբում, երբ ժողովուրդները դարձել էին համեմատաբար լուսավոր և երբ ամբողջ Արևելքում, այդ թվում նաև Արաբական Արևելքում բռնկվել էր ազգային-ազատագրական պայքարի հրդեհը և քաղաքական-դասակարգային ուժերն ու ժողովուրդները միավորվում էին ոչ թե կրոնական հնամաշ դրոշի ներքո, այլ ևևևլով իրենց առջև կանգնած սոցիալ-տնտեսական ու ազգային խնդիրների լուծման պահանջներից։ Սակայն քեմալականները արաբների նկատմամբ իրենց քաղաքականության մեջ չէին ուզում հաշվի առնել նորաստեղծ պայմանները և կրոնական «միասնության» վերաբերյալ իրենց հին երգն էին երգում, ենթադրելով, որ դա լավագույն լոզունգն է արաբներին իրենց կողմը գրավելու և Թուրքիայի կազմի մեջ մրցյունելու համար։ Որ քեմալականները ձգտում էին Սիրիան և արաբական մյուս երկրները կրկին դնել Թուրքական լծի տակ, ցայտուն

---

168 Նույն տեղում։
169 Նույն տեղում։

կերպով երևում է Սիրիայում տարածված թուրքական մյուս կոչից, որտեղ շարադրված են Մուստաֆա Քեմալի հիմնական նպատակները։ Նախ նշենք, որ արդեն առաջին կոչի մեջ թուրքերը Սիրիան և արաբական երկրները դիտում էին Թուրքիայի անբաժանելի մասը։ Քեմալը դիմելով սիրիացիներին ասում է. «Եկեք բոլորս մեր զենքերն ուղղենք դավաճան կուսակցությունների դեմ, որոնք ուզում են մեր երկիրը տրոհել (ընդգծումը մերն է—Ն. Հ.)[170]։ Երկրորդ կոչում այդ միտքն ավելի որոշակի և կտրուկ ընդգծված է. «Մենք ցանկանում ենք, հակառակ Վիլսոնի սկզբունքների, միացնել այն մասերը (իմա՝ տերիտորիաները—Ն. Հ.), որոնք պատկանում են Թուրքիային»[171]։ Ամեն ինչ ասված է պարզ ու որոշակի։ Ինչպես արդեն նշել ենք, ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը իր հրապարակած «խաղաղության ծրագրի» 12-րդ կետում խոսում էր այն մասին, որ Օսմանյան կայսրության նախկին տիրապետությունները, այդ թվում նաև Սիրիան և արաբական մյուս երկրները, պետք է ինքնորոշման իրավունք ստանան և այլևս չթողնվեն թուրքական լծի տակ։ Քեմալականներն այժմ հանդես էին գալիս դրա դեմ։ Այդ պատճառով էլ նրանք, ինչքան էլ փորձեցին գունազարդվել և իրենց արաբների «բարեկամներ» ներկայացնել, ինչքան էլ փորձեցին դիմել իրենց ընդհանուր կրոնի՝ մահմեդականության օգնությանը, չկարողացան թաքցնել իրենց զավթողական ձգտումները և արաբական երկրներում իրենց տիրապետությունը կրկին հաստատելու իմպերիալիստական պլանները։ Դա եղավ գլխավոր պատճառը, որ թուրքական պլանները լրիվ ձախողվեցին Սիրիայում և արաբական մյուս երկրներում։ Բացի այդ չպետք է մոռանալ և այն հանգամանքը, որ արաբների հիշողության մեջ դեռևս թարմ էին թուրքական բռնության սարսափները և նրանց մոտ շատ ուժեղ էին հակաթուրքական տրամադրությունները։ Դրա հետ միասին հարկ է նշել, որ արաբական ազգային գործիչները և առաջին հերթին Հեջազի թագավոր Հուսեյնը խիստ բացասական դիրք գրավեց քեմալականների հետ կապեր հաստատելու արաբական որոշ գործիչների և հատկապես Հալեպի նահանգապետ Ջաֆար Ասքյարիի փորձերի հետ։ Այդ մասին է վկայում 1919 թ. երկրորդ կեսին Ֆեյսալին ուղարկած նրա հեռագիրը։ Դիմելով իր որդուն, Հուսեյնը ասում է. «Հաստատ է, որ մարդիկ Հալեպից հյուսիս-

---

170 Նույն տեղում։

171 Նույն տեղում, էջ 568։

արևմուտք բանակցություններ են վարում Քեմալ փաշայի հետ։ Դու պետք է հասկանաս, թե ինչ կարող է լինել դրա հետևանքը»[172]։ Այնուհետև նա կարգադրում է Ֆեյսալին, հայտնել բոլոր նրանց, ում վերաբերում է, չմոռանալ իր՝ Հուսեյնի խորհուրդները և անտեսելով իր ահազանգները, սխալներ չգործել։ Հուսեյնը հայտնում է, որ ինքը մի քանի անգամ նախազգուշացրել է Ջաֆար փաշային[173]։ Հուսեյնը, Ֆեյսալը և նրանց հետևում կանգնած ազնվական-կալվածատիրական դասակարգը շատ լավ էին գիտակցում, որ Քեմալի իշխանության տարածումը Սիրիայի և արաբական մյուս երկրների վրա կնշանակեր դուռը փակել նրանց անկախության առջև, իսկ իրենց էլ զրկել այն տիրապետող դիրքից, որ նրանք արդեն պրավել էին արաբական մի շարք երկրներում։

Այս ամենը հանգեցրին այն բանին, որ քեմալական պրոպագանդան այնքան էլ ազդեցություն չունեցավ Սիրիայում։ Ազգային-ազատագրական պայքարը Սիրիայում ուներ իր օբյեկտիվ պատճառները և ծավալվում էր իր սեփական հիմքի վրա՝ անկախ քեմալականների որևէ գործունեությունից։ Դեռ ավելին. այդ շարժումը վերջին հաշվով իր մի ծայրով ուղղված էր նաև քեմալականների դավաճողական, իմպերիալիստական նկրտումների դեմ։

Ֆեյսալ–Կլեմանսո համաձայնագիրը և նրա կապիտուլյանտական բնույթը։ Սիրիայում ծավալված ազգային-ազատագրական շարժումների լայն թափը և Ֆրանսիայի, ինչպես նաև Անգլիայի դրաված դիրքը, երկրնտրանքի առջև կանգնեցրեց սիրիական հակաիմպերիալիստական պայքարի ղեկավարներին։ Նրանց առջև երկու ուղի կար. հետևողականորեն ղեկավարել այդ շարժումը և, նորանոր մասսաներ ներգրավելով հասնել ազգային անկախության նվաճմանը կամ, լուրջ զիջումներ կատարելով ֆրանսիական իմպերիալիստներին, վերջ դնել ազատագրական պայքարին և այդ ուղիով պահպանել իրենց ղեկավար դերը ապագա ենթամանդատային սիրիական պետությունում։ Ինչպես վկայում են պատմական փաստերը, ուղիների ընտրման հարցում սիրիական ազգային-ազատագրական պայքարի ղեկավարության ներսում միասնականություն չկար։ Այդ ղեկավարությունն ըստ էության բաժանվում էր երկու թևի։ Մի թևը, որ բաղկացած էր սիրիական երիտասարդ ազգային բուրժուազիայի ներկայացուցիչներից, ավելի հետևողա-

---

172 Նույն տեղում, էջ 553։

173 Նույն տեղում։

կան ու արմատական էր և կողմնակից էր հակաիմպերիալիստական պայքարի շարունակմանը ու նրա հետագա ուժեղացմանը։ Իսկ մյուս թևը, ընդհակառակը, չափավոր էր և հակված էր ֆրանսիացիների հետ համաձայնության գալու և այդ ուղիով հասնելու հարցերի լուծմանը։ Այս թևը արտահայտում էր ազնվականական-կալվածատիրական շրջանների շահերը և նրա ճանաչված ղեկավարն էր էմիր Ֆեյսալը։ Ֆեյսալը և նրա համախոհները, որոնց ձեռքում էին կենտրոնացված համարյա բոլոր կարևոր պետական պաշտոնները, խորշում էին ժողովրդական մասսաներից և մահացու վախ զգում ազգային-ազատագրական շարժումների հանդեպ, որի կորիզը, ինչպես նշել ենք, գյուղացիությունն էր։ Նրանք վախենում էին, որ այդ շարժումները կարող են դուրս գալ իրենց համար ընդունելի շրջանակներից և իրենք կարող են կորցնել իրենց ազդեցությունը ժողովրդական մասսաների, հատկապես գյուղացիության վրա։

Այս երկու տարբեր տենդակիտները լրիվ դրսևորվեցին 1919 թ., հատկապես սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ծավալված հակաիմպերիալիստական ելույթների ժամանակ։ Ազնվականական-կալվածատիրական թևը մեծ ճիգ ու ջանք գործադրեց այդ շարժումները զսպելու և նրանց անհրաժեշտ հունի մեջ դնելու համար։ Այդ օրերին Ջեյդը՝ Հուսեյնի որդին, որ փոխարինում էր Ֆեյսալին նրա բացակայության ժամանակ, սարսափահար եղած հեռագիր է ուղարկում Եվրոպա. «Ես չեմ կարող կանգնեցնել հեղափոխությունը»[174]։ Ֆեյսալը Եվրոպայից հեռագիր հեռագրի հետևից է ուղարկում Ջեյդին և ալ-Ռիկաբիին և նրանց միջոցով սիրիացիներին կոչ անում պահպանել հանգստություն։ Ջեյդը իր հերթին նույնպես դիմում է ժողովրդին, պահանջելով համբերել և պահպանել կարգ ու կանոնը[175]։ Նույն գիծն էր վարում նաև կառավարության նախագահ ալ-Ռիկաբին, որը մեջ ճիգեր գործադրեց սիրիական ազգային կոնգրեսը «խաղաղեցնելու» համար։ Սակայն դա նրա վրա քանկ նստեց։ Արմատական ուժերի ճնշման տակ նա դեկտեմբերի 14-ին հրաժարական տվեց, և նրա տեղը դրավեց Ահդ ալ-Համիդ փաշան[176]։ Դա վկայում էր, որ ազգային ղեկավարման հետևողական թևը քնած չէր և բոլորովին էլ մտադիր չէր հլու-հնազանդ կատարել Ֆեյսալի և նրա կողմնակիցների պահանջները։

---

174 *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 124.

175 *S. Longrig*, Syria and Lebanon under French mandate, p. 95.

176 Նույն տեղում։

Պայքարի բնժ պահին ի հայտ եկան նոր փաստեր, որոնք վկայում էին, որ Սիրիայի կալվածատերերը և շեյխերը պատրաստ են պայքարը դադարեցնել ֆրանսիական իմպերիալիստների դեմ և համագործակցել նրանց հետ։ Դամասկոսում անգլիական գլխավոր քաղաքական կոմիսար մայոր Կլեյտոնը իր կառավարության 1919 թ. նոյեմբերյան զեկուցագրում հայտնում էր. «Սիրիայում ապրող վերնախավերից շատերը պատրաստ են կամ պատրաստվում են մերձենալ ֆրանսիացիներին, նրանց բարեհաճությունը շահելու համար»[177]։ Իսկ նույն մայոր Կլեյտոնի մեկ այլ զեկուցագրում, թվագրված 1919 թ. հոկտեմբերի 19-ին, արդեն նշված էին կոնկրետ անունները այն կալվածատերերի և շեյխերի, որոնք մերձենալ էին ֆրանսիացիներին՝ «ապահովելու իրենց ապագան, եթե վերջիններս (այսինքն ֆրանսիացիները—Ն. Հ.) կոչված են դալու իրենց երկիրը»[178]։ Դրանց թվում էին Մուհամեդ Ֆաուզի փաշա ալ-Ազմը, Աբդ ալ-Ռահման փաշա ալ-Յուսուֆը, շեյխ Մուֆթալը և շեյխ Մաշհուր իբն Ֆահիզը։ Կլեյտոնը հաղորդում էր, որ անհայտ ցեղի երկու ցեղապետեր նույնպես որոշել են «դործել հօգուտ ֆրանսիացիների»[179]։

Ֆեյսալի տրամադրությունները վերջին հաշվով համահնչյուն էին սիրիական ֆեոդալական վերնախավի ձգտումներին և նա, արտահայտելով նրանց դասակարգային շահերը, գործարքի մեջ մտավ ֆրանսիական իմպերիալիստների հետ և կնքեց մի համաձայնագիր, որն իր բնույթով կապիտուլյանտական էր։

Ֆեյսալը, ինչպես արդեն նշել ենք, Եվրոպա մեկնեց 1919 թ. սեպտեմբերին։ Նույն ամսի 21-ին նա արդեն Լոնդոնում էր, որտեղ բազմաթիվ հանդիպումներ ունեցավ Լլոյդ Ջորջի, արտաքին գործերի մինիստր լորդ Քերզոնի և Անգլիայի պետական մյուս դործիչների հետ։ Նա իր բողոքը հայտնեց Անգլիային 1919 թ. սեպտեմբերի 13-ի անգլո-ֆրանսիական համաձայնագրի կապակցությամբ։ Սակայն նրա բողոքի վրա ոչ ոք ուշադրություն չդարձրեց։ Լոնդոնում նրան հասկացրին, որ նա պետք է համաձայնության գա Ֆրանսիայի հետ և այդ ուղիով լուծի իրեն հուզող հարցերը։ Լորդ Քերզոնը Ֆեյսալի հետ ունեցած իր հանդիպումներից մեկի

---

[177] „Documents on British foreign policy. 1919—1939", Ist ser., v. IV, p. 569.

[178] Նույն տեղում, էջ 565։

[179] Նույն տեղում։

ժամանակ պարզորեն ասաց. «Անհրաժեշտ է, որ դուք մեկնեք Փարիզ՝ սիրիական հարցի շուրջը ֆրանսիական կառավարության հետ բանակցություններ վարելու համար»[180]։ Ճարահատյալ Ֆեյսալը 1919 թ. հոկտեմբերին մեկնեց Փարիզ։

Ֆրանսիական կառավարությունը սկզբնական շրջանում չէր ցանկանում ընդունել և բանակցել Ֆեյսալի հետ։ Նույնիսկ 1919 թ. սեպտեմբերին, երբ Ֆեյսալը Լոնդոն մեկնելիս կանգ առավ Ֆրանսիայում, Կլեմանսոն և ֆրանսիական մյուս պետական գործիչները հրաժարվեցին որևէ հանդիպում ունենալ նրա հետ և կարգադրեցին, որ նա Մարսելից ուղիղ գնա Կալե, այնտեղից անմիջապես Լոնդոն մեկնելու համար[181]։ Սակայն հետագայում ստանալով անդրլիական կառավարության հավաստիացումները, որ Ֆեյսալին ինքը ոչ միայն չի պաշտպանում, այլև ստիպում է համաձայնության գալ Ֆրանսիայի հետ, և համոզվելով, որ էմիրը պատրաստ է գործարքի մեջ մտնել, ֆրանսիական կառավարությունը փոխեց իր տեսակետը և համաձայնվեց, որ Ֆեյսալը ժամանի Փարիզ։ 1919 թ. հոկտեմբերի 18-ին Լլոյդ Ջորջը Կլեմանսոյին հղած իր նոտայում հայտնում էր, որ «Ֆեյսալը ձգտում է համագործակցել դաշնակիցների հետ և անգլիական կառավարությունը հուսով է, որ առաջիկա փարիզյան բանակցությունների ընթացքում նրան ոչինչ չի մղի դեպի թշնամության ուղին և չի ստիպի նրան կապերի մեջ մտնել Մերձավոր Արևելքում Անգլիային և Ֆրանսիային թշնամի տարրերի հետ»[182]։ Խոսելով Անգլիային և Ֆրանսիային թշնամի տարրերի մասին Լլոյդ Ջորջը ի նկատի ուներ սիրիական ազգային-ազատագրական այն ուժերին, որոնք կողմնակից էին զինված պայքարի միջոցով հասնել Սիրիայի անկախության նվաճմանը։ Լլոյդ Ջորջի նոտան ուշագրավ է նաև մեկ այլ առումով։ Նրանում պարզ ասված էր, որ Ֆեյսալը ձգտում է համագործակցել դաշնակիցների՝ այսինքն Անգլիայի և Ֆրանսիայի հետ։ Դա վկայում է, որ Անգլիայի ղեկավարները բավական լավ էին ճանաչում էմիրին և հասկացել էին, որ չնայած իր բազմաթիվ կատեգորիկ հայտարարություններին՝ ամբողջ Սիրիայի լրիվ և կատարյալ անկախության վերաբերյալ, նա կողմնակից չէ խոսքից գործի անցնելու և նախապատվությունը տալիս է բանակցություններին ու համաձայնու-

[180] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 87.

[181] „Documents on British foreign policy. 1919—1939", 1st ser., v. I p. 685.

[182] «Арабские страны», стр. 31—32.

թյուններին։ Սիրիայի անկախության վերաբերյալ Ֆեյսալի հայտարարությունները մնացին որպես ամպագոռգող և անամիջ հայտարարություններ։

Երբ Անգլիան հրաժարվեց պաշտպանել Սիրիայի պահանջները և Ֆեյսալին առաջարկեց մեկնել Փարիզ ֆրանսիական կառավարության հետ հարցը լուծելու, ապա նրա առջև երկու ուղի կար։ Մեկ ուղին այն էր, որ չընդունելով անգլիական առաջարկությունները, Փարիզ մեկնելու փոխարեն վերադառնալ Դամասկոս և կազմակերպել սիրիական բոլոր հայրենասիրական ուժերի պայքարն ընդդեմ ֆրանսիական ներխուժման։ Իսկ մյուս ուղին՝ անգլիական ճնշմանը ենթարկվելը և բանակցությունների համար Փարիզ մեկնելն էր։ Ֆեյսալը նախընտրեց երկրորդ ուղին, որովհետև, ինչպես նշեցինք, նա ներկայացնում էր ազատատրական շարժման աչ՝ ազնվականական-կալվածատիրական թևը։ Ընտրելով երկրորդ ուղին՝ Ֆեյսալը ֆրանս-սիրիական բանակցությունների ժամանակ նախօրոք իրեն դրեց անհավասար և ծանր դրության մեջ։ Ֆրանսիացիները գիտեին, որ Անգլիան չի պաշտպանում Ֆեյսալին, իսկ վերջինս հրաժարվեց ապավինել սիրիական ժողովրդին ու հայրենասիրական ուժերին։ Եվ 1919 թ. հոկտեմբերին Փարիզ մեկնեց՝ չունենալով որևէ ուժեղ հենարան։ Դա իր կնիքը դրեց ամբողջ բանակցությունների ընթացքի և ձևոք բերված համաձայնագրի վրա։ Ֆրանս-սիրիական համաձայնագիրը 1920 թ. հունվարի 6-ին ստորագրեցին Ժ. Կլեմանսոն և էմիր Ֆեյսալը։ Հետաքրքիր է, որ ծանոթանալով համաձայնագրի պայմաններին, Ֆեյսալի խորհրդականներ Ահմեդ Կադրին և Աունի Աբդ ալ-Հադին, որոնք նրա հետ գտնվում էին Փարիզում, խնդրում էին չստորագրել այն, որովհետև սիրիական ժողովուրդը չի ընդունի այդպիսի համաձայնագիր[183]։ Սակայն Ֆեյսալը չունկնդրեց նրանց ձայնը։ Այդ համաձայնագրով ֆրանսիական կառավարությունը առաջարկում էր օգնություն ցույց տալ Սիրիային և «երաշխավորում էր նրա անկախությունը ամեն տեսակ ագրեսիաներից»[184]։ Ֆեյսալը պարտավորվում էր միայն ֆրանսիական կառավարությունից խնդրել անհրաժեշտ խորհրդականներ, հրահանգիչներ և տեխնիկական մասնագետներ քաղաքական և վիճակագրական վարչության կազմակերպման համար[185]։

---

[183] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 88.

[184] „Documents on British foreign policy. 1919—1939", Ist ser., v. IV, p. 625.

[185] Նույն տեղում։

Երկու կողմերն էլ համաձայնվում էին Սիրիայում սահմանադրական ռեժիմ հաստատելու։ Ֆրանսիան համաձայնվում էր կազմակերպել ժանդարմերիան, ոստիկանությունը և բանակը։

Սիրիայի մայրաքաղաքը ճանաչվեց Դամասկոսը։ Ֆրանսիական գլխավոր կոմիսարը նստելու էր Հալեպում[186]։ Էմիր Ֆեյսալը ճանաչում էր Լիբանանի անկախությունը ֆրանսիական մանդատի ներքո[187]։ Նա միաժամանակ համաձայնվեց, որ Ջեբել Դրուզը ստանա ավտոնոմ իրավունքներ սիրիական պետության շրջանակներում։ Մի կարևոր հարցում Ֆեյսալը ևս զիջեց։ Նա համաձայնվեց, որ արտասահմանյան երկրներում Ֆրանսիան ներկայացնի Սիրիային։ Դժվար չէ նկատել, որ բոլոր կարևոր հարցերում Ֆեյսալը հրաժարվեց իր նախկին պահանջներից և սկզբունքային բնույթի լուրջ զիջումներ կատարեց ֆրանսիական իմպերիալիստներին։

Հունվարյան համաձայնագիրը ձևականորեն ճանաչում էր Սիրիայի անկախությունը արևելյան դռտում։ Սակայն Ֆրանսիան իրավունք ստացավ հանդես գալ այդ անկախության «պաշտպանի» և «հրաշխավորի» դերում։ Բացի այդ, Սիրիան զրկվեց այլ երկրներից զանազան խորհրդատուներ հրավիրելու իրավունքից։ Այդպիսիները կարող էին հրավիրվել միայն Ֆրանսիայից։ Այլ կերպ ասած, Ֆրանսիան իրավունք ստացավ «խորհրդատուների» և «հրահանգիչների» ինստիտուտի ստեղծմամբ իր լիակատար վերահսկողությունը սահմանել Սիրիայի ողջ ներքին կյանքի՝ տնտեսության, ֆինանսների, ոստիկանության և բանակի վրա։ Սիրիայից խլվեց նաև յուրաքանչյուր սուվերեն պետության անկապտելի իրավունքը՝ ունենալ իր ներկայացուցչությունը արտասահմանյան երկրներում։

Ֆրանսիան ըստ էության իր պրոտեկտորատը հաստատեց արևելյան դռտում, որտեղ արդեն գոյություն ուներ արաբական պետություն։ Ֆեյսալը լուրջ զիջումներ արեց նաև Սիրիայի միասնության հարցում։ Սիրիական հայրենասերները և ինքը՝ Ֆեյսալը Սիրիան տերիտորիալ առումով դիտում էին մի ամբողջություն։ Սակայն 1920 թ. հունվարի 6-ի համաձայնագրով Ֆեյսալը ոչ միայն համաձայնվեց Լիբանանի անջատմանը Սիրիայից, այլև նրա վրա ֆրանսիական մանդատի հաստատմանը։ Եվ քանի որ Լիբանանի ու Սիրիայի սահմանները չճշտվեցին (հայտնի էր, որ

---

186 Նույն տեղում, էջ 626։

187 Նույն տեղում։

Ֆրանսիան ձգտում էր Լիբանանի տերիտորիայի ընդարձակմանը ի հաշիվ Սիրիայի նույնիսկ մուսուլմանական շրջանների, ապա կարելի է ասել, որ Ֆեյսալը ընդունեց արևմտյան դաշինքի ֆրանսիական իմպերիալիստների լրիվ տիրապետության տակ դնելու պահանջը։ Սիրիայի ամբողջականությանն էր սպառնում նաև Ջևրել Դրուզի ավտոնոմ շրջանի ստեղծումը։ Այսպիսով, Ֆրանսիան 1920 թ. հունվարի 6-ի համաձայնագրով հասավ իր մի շարք կարևոր պահանջների բավարարմանը։ Իսկ Ֆեյսալը համաձայնվելով Ֆրանսիական պրոտեկտորատի հաստատմանը արաբական պետության վրա և մանդատի հաստատմանը արևմտյան շրջաններում, դավաճանեց Սիրիայի անկախության վերաբերյալ սիրիական հայրենասերների կողմից առաջադրած և հենց իր՝ Ֆեյսալի կողմից պաշտպանած սկզբունքներին։ Ֆրանսիային Ֆեյսալի կատարած զիջումները ոչ թե սովորական զիջումներ էին, այլ լիակատար կապիտուլյացիա։

Տրանս-սիրիական համաձայնագրի մերժումը և սիրիական անկախ թագավորության հռչակումը։ *Ֆեյսալը Փարիզից մեկնեց համաձայնագիրը ստորագրելու հաջորդ օրը՝ 1920 թ. հունվարի 7-ին և Սիրիա հասավ հունվարի 13-ին*[188]։ Ճանապարհին նրան մտահոգում էր այն հարցը, թե արդյո՞ք իրեն կհաջողվի համոզել սիրիական ազգային գործիչներին ընդունելու և վավերացնելու Ֆրանսիայի հետ կնքված համաձայնագիրը։ Այդ օրերին նա կրկին հիշում էր իր խորհրդական Ահմեդ Կադրին, որն արդյունքը աչքերին տալուց էր էմիրին այդպիսի գործարքի մեջ չմտնել ֆրանսիացիների հետ։

Սիրիայում էմիրին խոր հիասթափություն էր սպասում։ Նրա այս վերադարձը բոլորովին նման չէր նախորդին, երբ ժողովուրդը խանդավառ ընդունելության դուրս ելավ նրան։ Սիրիացիները այս անգամ Ֆեյսալին ընդունեցին զուսպ և սառը, իսկ որոշ շրջաններ նույնիսկ թշնամաբար։

Մինչև Ֆեյսալի վերադարձը սիրիացիներին արդեն հայտնի էր դարձել հունվարյան համաձայնագիրը և նրա իրավանդակությունը։ Սիրիական ազգային-բուրժուական գործիչների ճնշող մեծամասնության համար նրա պայմաններն անընդունելի էին։ Ազատագրական շարժման հեռանդական թևը ազգային բուրժուազիայի դեկավարությամբ Ֆեյսալ-Կլեմանսո համաձայնագրի նկատմամբ

---

188 احسان هندی، كفاح الشعب العربي السوري، ص ٢٧

գրավեց խիստ բացասական դիրք։ Այդ համաձայնագրի պայմաններն այնքան ստորացուցիչ էին Սիրիայի համար, որ չափավոր ձևն անգամ չհամարձակվեց բացահայտորեն հանդես գալ նրա պաշտպանությամբ։ Երբ Ֆեյսալը վերադարձավ Սիրիա, անմիջապես նկատեց, որ վերաբերմունքը դեպի իրեն այն չէ, որ կար իր Եվրոպա մեկնելուց առաջ և որ քաղաքական իրադրությունը խիստ փոխվել է։ Բոլոր կողմերից նա քննադատություն էր լսում իր հասցեին։ «Բոլոր կուսակցությունների անդամները,—գրում էր Զեյնը,—մտածում էին որ նա (Ֆեյսալը—Ն. Հ.) ճակատագրական սխալ է կատարել։ Դամասկոսի թերթերից, հրապարակներից և փողոցներից քննադատություն էր հնչում»[189]։ Անգամ նրա հայրը՝ Հեջազի թագավոր Հուսեյնը, հավանություն չտվեց իր որդու քայլերին Փարիզում, գտնելով, որ նա «Մեկկային անհայտ մի համաձայնագրով իրեն ու իր երկիրը վասալական կախման մեջ է դրել»[190]։ Սիրիական ազգային ղեկավարները, կուսակցական և հասարակական գործիչները, բանակի սպաները և այլն նշում էին, որ Ֆեյսալի մեկնումով Եվրոպա իրենք սպասում էին, որ նա կհասնի «թշնամու օկուպացված տերիտորիաների» ռեժիմի վերացմանը և Սիրիայի անկախության հաստատմանը։ Դրա փոխարեն էմիրը Սիրիային որպես պարգև բերեց Կլեմանսոյի հետ իր կնքած համաձայնագիրը, որ պրոտեկտորատի և մանդատի անվան տակ Սիրիայի բոլոր մասերում հաստատում էր ֆրանսիական իմպերիալիստների տիրապետությունը։ Ահա թե ինչու այդ օրերին Սիրիայում շատերը Ֆեյսալին համարում էին դավաճան, որն իր երկիրը ծախեց ֆրանսիացիներին։ Ամին Սաիդը նրա վարքագիծը բնութագրում է որպես երկերեսանություն[191]։

Այս բոլոր լուրերը հասնում էին Ֆեյսալին, և նա քաջատեղյակ էր Սիրիայի ժողովրդի՝ իր մասին եղած կարծիքին։ Ուստի փորձեց արդարանալ և կրկին նրա վստահությունը շահել։ Նա ուզում էր վերստին բարձրացնել իր հեղինակությունը, որն անչափ ընկել էր։ 1920 թ. հունվարի 22-ին հանդես գալով Դամասկոսի «Նադի ալ-արաբի» («Արաբական ակումբում»), նա հայտարարեց, որ ինքը չի փոխվել, որ ինքը նույն Ֆեյսալն է, որի դերագույն նպատակը ոչ միայն Սիրիայի, այլև ամբողջ արաբական երկրների

---

[189] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 131.

[190] Նույն տեղում, էջ 136։

[191] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 90.

անկախության նվաճումն է։ Նա կոչ էր անում սիրիական ժողովրդին և ազգային-քաղաքական գործիչներին կրկին վստահել և հավատալ իրեն[192]։ Բայց դրանք դատարկ խոսքեր էին, որոնց այլևս ոչ ոք չէր հավատում։ Ամբողջ Սիրիայի քաղաքներում տեղի էին ունենում ցույցեր, որի ժամանակ ժողովրդական մասսաները պահանջում էին մերժել Ֆեյսալ—Կլեմանսո համաձայնագիրը[193]։ Յուրաքանչյուր որ Ֆեյսալին այցելում էին ժողովրդի տարբեր խավերի ներկայացուցիչներից կազմված պատվիրակություններ, որոնք անձամբ իրենց դժգոհությունն էին հայտնում այդ համաձայնագրի նկատմամբ։

Թեև Ֆեյսալը և չափավոր թևի մյուս ղեկավարները փորձում էին դեմագոգիկ հայտարարություններով հանդստացնել ժողովրդին, իրականում ձգտում էին հասնել ֆրանս-սիրիական համաձայնագրի վավերացմանը։ Քանի որ դեռևս 1919 թ. դեկտեմբերին Սիրիական ազգային կոնգրեսը ցրվել էր և նիստեր չէր գումարում, Ֆեյսալը որոշեց Ֆրանսիայի հետ կնքած իր համաձայնագրին հավանություն տալու հարցը դնել «Երիտասարդ Սիրիա», («Ալ-ֆաթաթ») ազգայնիկ կազմակերպության գործադիր կոմիտեի առջև։ Կոմիտեի փակ նիստը տեղի ունեցավ դոկտոր Ահմադ Կադրիի բնակարանում, որին անձամբ մասնակցեց նաև Ֆեյսալը։ Բարձրաստիճան կամ գործադիր կոմիտեի անդամներն էին Յասին ալ-Հաշիմին, Ահմադ Մարյուդը, Շուքրի Քուաթլին, Ռաֆիկ ալ-Թամիմին, Աասադ Դաղիստանը, Սաիդ Հայդարը, Թաուֆիկ ան-Նասուրը և դոկտոր Ահմադ Կադրին։ Կոմիտեն հանգամանորեն քննարկելով այդ համաձայնագիրը միաձայն որոշեց մերժել այն[194]։

Ֆեյսալը փորձեց հնշում գործադրել կոմիտեի անդամների վրա բացատրելով, որ մերժումը նշանակում է պատերազմ Ֆրանսիայի հետ։ Դրան ի պատասխան կոմիտեի անդամները հայտարարեցին. «Մենք պատրաստ ենք միաժամանակ պատերազմ հայտարարել Անգլիային և Ֆրանսիային, և ինչ որ լինելու է, թող լինի»[195]։ Համաձայնագրի վավերացման դեմ արտահայտվեցին նաև սիրիական մյուս կազմակերպությունները և ականավոր քաղաքական գործիչները[196]։

---

[192] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 132.

[193] «Арабские страны», стр. 35.

[194] احسان هندى، كفاح الشعب العربى السورى، ص ٣٨

[195] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 89.

[196] *G. Haddad*, Fifty years of modern Syria and Lebanon, p. 65.

Սիրիական ժողովրդական մասսաների և Սիրիայի անկախության համար հանդուգնականորեն պայքարող կազմակերպությունների ջանքերով 1920 թ. հունվարի 6-ի Ֆրանս-սիրիական համաձայնագիրը չվավերացվեց և մերժվեց։ Դա նշանակում էր նաև Ֆեյսալի և ամբողջ չափավոր թևի քաղաքականության տապալում։

Դրանից հետո սիրիական հայրենասիրական ուժերի առջև կանգնեց Սիրիայի հետագա ճակատագրի լուծման հարցը։ Այդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ եղավ կրկին հրավիրել սիրիական կոնգրեսը։ Սիրիական կոնգրեսը բացվեց 1920 թ. մարտի 6-ին Դամասկոսում Հաշիմ ալ Աթասիի նախագահությամբ։ Այդ օրը կոնգրեսի նիստում հանդես եկավ էմիր Ֆեյսալը։ Նա կոնգրեսից պահանջեց լուծել ազգային ուժերի և անհմանադրության հարցը։ Քամիլ ալ-Քասիբը Ազգային պաշտպանության խորհրդի անունից կոնգրեսին առաջարկեց Սիրիայում հաստատել պառլամենտական, սահմանադրական և ապակենտրոնացված ռեժիմ, իսկ Ֆեյսալին հռչակել սմբոզ Սիրիայի թագավոր[197]։ Հարցը մշակելու, և՛ էմիրի ձեռին, և՛ Ազգային պաշտպանության խորհրդի ուսումնասիրությանը պատասխանելու համար սիրիական կոնգրեսը սահմանեց 9 հոգուց կազմված մի հանձնաժողով։ Վերջինս հարցը հանգամանորեն ուսումնասիրելուց հետո մարտի 7-ին որոշեց ասաջարկել կոնգրեսին հռչակել Սիրիայի միասնականությունն ու անկախությունը և Ֆեյսալին հռոստատել որպես սիրիական պետության թագավոր։ Կոնգրեսը հետևանություն տվեց հանձնաժողովի առաջարկությանը։ 1920 թ. մարտի 8-ին ցերեկվա ժամը 3-ին Դամասկոսի թագավորական պալատի պատշգամբից հայտարարվեց սիրիական պետության ստեղծման և Ֆեյսալին թագավոր հռչակելու մասին։

Կոնգրեսի ընդունած բանաձևում ասված էր. «Մենք, կոնգրեսի անդամներս, որպես սիրիական ժողովրդի ներկայացուցիչներ, միահամուռ կերպով հռչակում ենք մեր հայրենիքի՝ Սիրիայի անկախությունը իր բնական սահմաններում։ Նվ մենք ընտրել ենք նորին գերազանցություն Ֆեյսալին, նորին մեծություն Հուսեյնի թագավորի որդուն, որպես Սիրիայի սահմանադրական թագավոր՝ նորին մեծություն Ֆեյսալ Առաջին տիտղոսով»[198]։ Սիրիան պաշտոնապես կոչվելու էր «Սիրիական միասնական թագավորություն»։

---

[197] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate p. 98.
[198] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 129.

Նրա կազմի մեջ մտնելու էին բուն Սիրիան, Պաղեստինը, Հորդանանը և Լիբանանը։ Պաղեստինը պետք է ազատվեր սիոնիստների ազդեցությունից և այնտեղ չպետք է ստեղծվեր հրեական օջախ։ Իսկ ինչ վերաբերում է Լիբանանին, ապա սիրիական միասնական պետության շրջանակներում ճանաչվում էին նրա ավտոնոմ իրավունքները։ Կոնգրեսը հայտարարեց օկուպացիոն ուժիմի վերացում բոլոր երեք դոմինիոններում։ Ֆեյսալ Բաքդավորի անունը մտցվեց խուտբայում և ամեն ուրբաթ բոլոր մզկիթներում աղոթքի ժամանակ հիշվում էր նրա անունը[198]։

1920 թ. մարտի 9-ին ալ-Ռիկաբին կազմեց սիրիական Բաքդավորության առաջին կառավարությունը։ Նրա կազմի մեջ մտան Ալա ադ-Դին ալ-Դուրուբին որպես պետական խորհրդի նախագահ, Ռիզա ալ-Սոլհ՝ ներքին գործերի մինիստր, Սաիդ ալ-Հուսեյնին՝ արտաքին գործերի մինիստր, Աբդ ալ-Համիդ ալ-Կալիբակչին՝ զինվորական մինիստր, Յուսիֆ ալ-Հաքիմ՝ առևտրի և դյուղատնտեսության մինիստր, Ջալալ ադ-Դին Ջունդին՝ արդարադատության մինիստր, Ֆարիս ալ-Խուրին՝ ֆինանսների մինիստր, Սաիֆ ալ-Հուսրին՝ կրթության մինիստր[199]։ Ալ-Ռիկաբին կոնգրեսի աջակ հանդես եկավ հայտարարությամբ և շարադրեց իր կառավարության գլխավոր խնդիրները ներքին և արտաքին քաղաքականության բնագավառում։ Նա նշեց, որ իր կառավարության առջև ծառացած ամենակարևոր հարցը դա Սիրիայի անկախության պահպանումն է։ Այնուհետև վերահիշյալ հայտարարության մեջ խոսվում էր այն մասին, որ բոլորը օրինքի առաջ պետք է հավասար լինեն, երկրում խաղաղ պահպանվելու է կարգ ու կանոնը և օտարերկրյա պետությունների շահերը, միջոցներ են ձեռք առնվելու անտեսական զարգացման ուղղությամբ և այլն։ Կառավարության որոշմամբ ստեղծվեց Հատուկ կոմիտե Սիրիայի սահմանադրության նախագիծ մշակելու համար[200]։

Սիրիական ժողովուրդը մեծ ոգևորությամբ ընդունեց սիրիական կոնգրեսի մարտի 8-ի որոշումները և Սիրիայի անկախության հռչակումը։ Բոլոր հայրենասիրական ուժերը քաղաքական մեծ ակտիվություն էին ապրում և պատրաստ էին ամեն ինչ անելու այդ որոշումները մինչև վերջ կենսագործելու համար։ Նրանց թվում էր, որ վրա է հասել շրջադարձային կետ Սիրիայի նորագույն պատմության մեջ։

---

[199] S. Longrigg, Syria and Lebanon under French mandate, p. 98.

[200] Նույն տեղում։

[201] Նույն տեղում։

Սան-Ռեմոյի կոնֆերանսի որոշումները մանդատի վերաբերյալ և Ֆրանսիայի վերջնագիրը Սիրիային: *Այժմ անհրաժեշտ է լուսաբանել այն հարցը, թե Ֆրանսիան և Անգլիան ինչպես վերաբերվեցին Սիրիայի կոնգրեսի որոշումներին և ինչպիսի դիրք գրավեցին Սիրիական միացյալ թագավորության հռչակման փաստի հանդեպ:*

Սիրիայի պրեմիեր-մինիստր ալ-Ռիկաբին Սիրիական կոնգրեսի որոշումների մասին անհապաղ տեղյակ պահեց Ֆրանսիայի և Անգլիայի կառավարություններին: Նրանց ուղարկելով այդ որոշումների պատճենը, նա հույս հայտնեց, որ դաշնակիցները կճանաչեն Սիրիական թագավորությունը և նրանց միջև կհաստատվեն բարեկամական հարաբերություններ[202]*: Այդ նույն հարցի կապակցությամբ նորընծա արքան անձնական նամակներով դիմեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին, Անգլիայի արտաքին գործերի մինիստր լորդ Քերզոնին, ինչպես նաև գեներալներ Ալլենբիին և Գուրոյին: Ֆեյսալը նրանց հավաստիացնում էր, որ սիրիական թագավորության հռչակումը չի ուղղված դաշնակիցների դեմ և չի հակասում նրանց շահերին:*

Չնայած այս հավաստիացումներին Ֆրանսիան և Անգլիան խիստ բացասական դիրք գրավեցին Սիրիայում տեղի ունեցած փոփոխությունների նկատմամբ: Եվ դա միանգամայն հասկանալի է: Ֆրանսիան, որ Ձգտում էր իր տիրապետությունը հաստատել ամբողջ Սիրիայի վրա, չէր կարող համաձայնվել և առավել ևս հաճույքով ընդունել Սիրիայի անկախության լուրը: Ֆրանսիայի նոր պրեմիեր-մինիստր Միլլերանը[203] *դեռևս 1920 թ. փետրվարի 11-ին հանդես գալով պառլամենտի արտաքին գործերի հանձնաժողովում, հայտարարեց, որ իր կառավարությունը պատրաստվում է դրավել Հալեպը և Դամասկոսը, որի համար անհրաժեշտ է Սիրիա լրացուցիչ ուղարկել 30 հազարանոց մի կորպուս: Այդ նվաճողական նպատակը կատարելու համար նա պառլամենտից պահանջեց մի քանի միլիոն ֆրանկ*[204]*: Ֆրանսիան լսել անգամ չէր ուզում Ֆեյսալին որպես թագավոր ճանաչելու մասին: Միլլերանը իրազեկ պահեց Անգլիայի պրեմիեր-մինիստրին, որ եթե նա ճանաչի Ֆեյսալին որպես թագավոր, ապա Ֆրանսիան դա կդիտի որպես ոչ բարեկա-*

---

[202] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 140.

[203] *Նա պրեմիեր-մինիստր դարձավ 1920 թ. հունվարին՝ Ժ. Կլեմանսոյի կառավարության անկումից հետո:*

[204] «Арабские страны», стр. 35.

մական ակտ իր նկատմամբ[205]։ Սակայն Ֆրանսիացիների անհանդրաժեշտությունն ավելորդ էր և Անգլիայի նկատմամբ Ֆրանսիայի դիմարշի կարիքը չկար, քանի որ Անգլիան ինքը սաստիկ դժգոհ էր սիրիական կոնգրեսի որոշումներից և ընդհանրապես սիրիացիների վարքագծից։ Դրա պատճառն այն էր, որ կոնգրեսը սիրիական միացյալ թագավորության կազմի մեջ մտցրեց նաև Պաղեստինը և դեմ արտահայտվեց այնտեղ հրեական օջախ ստեղծելուն։ Բացի այդ, Դամասկոսում 1920 թ. մարտի 8-ին, Սիրիայի անկախության հռչակումից անմիջապես հետո, իրաքցի հայրենասերները քաղաքային սրահի նույն պատշգամբից հռչակեցին նաև Իրաքի անկախությունը և Հուսեյնի մյուս որդի Աբդալլային առաջարկեցին նրա թագավոր[206]։ Իսկ ինչպես արդեն նշել ենք, Անգլիան ձգտում էր ստանալ Պաղեստինի և Իրաքի մանդատը և այդ ուղիով իր տիրապետություն հաստատել նրանց վրա։ 1920 թ. մարտի 8-ի որոշումները խոչընդոտներ էին ստեղծում բրիտանական իմպերիալիզմի դավթողական ծրագրերի իրագործման ճանապարհին։ Լորդ Քերզոնը պաշտոնապես տեղեկացրեց սիրիական կողմին, որ Անգլիան չի ճանաչում Սիրիական կոնգրեսի որոշումները, քանի որ կոնգրեսը օրինական մարմին չէ։ Ոչնչով չհիմնավորված կասկածի տակ վերցնելով կոնգրեսի իրավունքը ամբողջ սիրիական ժողովրդի անունից խոսելու և որոշումներ ընդունելու վերաբերյալ, անգլիական կառավարությունը հայտարարեց, որ ինքը հրաժարվում է Ֆեյսալին ճանաչել որպես թագավոր և նրան շարունակում է դիտել որպես «Հաշիմյան էմիր» և արաբական ժամանակավոր կառավարության դեկավար՝ թշնամու օկուպացված սիրիատրիաների պլեբսվոր հրամանատար դեներալ Ալլենբիի բարձրագույն իշխանության ներքո[207]։

Ահա այսպիսի դիրքերից ելնելով Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Միլլերանը և Անգլիայի պրեմիեր-մինիստր Լլոյդ Ջորջը մեկնեցին իտալական Սան-Ռեմո քաղաքը, որտեղ 1920 թ. ապրիլի 19—26-ը իր նիստերը դումարեց դաշնակիցների գերագույն խորհուրդը։ Նրա քննարկմանը ներկայացված ամենակարևոր հարցերից մեկը արաբական երկրների մանդատի բաժանման հարցն էր։ Ապրիլի 25-ին գերագույն խորհուրդը որոշեց Սիրիայի և Ի-

---

[205] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 141.

[206] نجيب الارمنازى، محاضرات عن سوريا... ص ۴

[207] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 141.

բանանի մանդատը տալ Ֆրանսիային, իսկ Պաղեստինի և Միջագետքի մանդատը՝ Անգլիային[208]։

1920 թ. ապրիլի 27-ին գեներալ Ալլենբին Սան-Ռեմոյի կոնֆերանսի որոշումների մասին հեռագրով պաշտոնապես հաղորդեց Ֆեյսալին։ Հայտնելով, որ Սիրիայի և Լիբանանի մանդատը տրվել է Ֆրանսիային, Ալլենբին նշում էր, որ անգլիական կառավարությունը սկզբունքորեն պատրաստ է ճանաչել Ֆեյսալին որպես սիրիական պետության ղեկավար, սակայն ավելացնում էր, որ նրա թագավոր լինելու հարցը իրավասու է լուծել միայն խաղաղության կոնֆերանսը։ Ուստի նա առաջարկում է Ֆեյսալին անհապաղ մեկնել Եվրոպա և խաղաղության կոնֆերանսում պաշտպանել իր շահերը[209]։ Մայիսի 1-ին Ֆեյսալը հեռագիր ստացավ նաև Միլլերանից։

Սան-Ռեմոյի կոնֆերանսի որոշումները արաբական տերիտորիաները Անգլիայի և Ֆրանսիայի միջև բաժանելու մասին սկզբում շշմեցուցիչ ազդեցություն ունեցան արաբական աշխարհում, որն այնուհետև փոխվեց զայրույթի և այդ որոշումներին չենթարկվելու բուռն ցանկության։ Ալ-Ռիկաբիի կառավարությունը, որ կողմնակից էր ավելի չափավոր գործողությունների և խաղաղ քայլերի, ընկավ։ Մայիսի 3-ին թագավորը Սիրիական կոնգրեսի նախագահ Հաշիմ ալ-Աթասիին հանձնարարեց կազմել նոր կառավարություն։ Դաշնակիցների որոշումները մանդատի վերաբերյալ զգալի չափով ազդել էին նաև Ֆեյսալի վրա, և նա տվյալ պահին հրաժարվեց իրեն հատուկ տատանումներից և համեմատաբար ավելի շատ վճռականություն ցուցաբերեց։ Այդ է վկայում նրա նամակը Հաշիմ ալ-Աթասիին։ Այդ նամակում նրան խնդրելով ստանձնել նոր կառավարության ղեկավարի պարտականությունները, Ֆեյսալը լուրջ հարձակումներ էր գործում ֆրանսիական կառավարության վրա և դատապարտում նրա քաղաքականությունը։ Միաժամանակ նշում էր, որ Աթասիի կառավարության խնդիրը պետք է լինի Սիրիայի շահերի և նրա «սուրբ անկախության» պաշտպանությունը[210]։

---

208 Ֆրանսիայի մանդատը Սիրիայի և Լիբանանի վրա Ազգերի Լիգան վերջնականապես հաստատեց 1922 թ. հուլիսի 24-ին, տե՛ս *Ю. В. Ключников, А. В. Сабанин*, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 3, М., 1929, стр. 174.

209 *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 154—155.

210 Նույն տեղում, էջ 156—157։

Հաշիմ ալ-Աթասին իր կաբինետը կազմեց մայիսի 3-ին։ Նա, բացի պրեմիեր-մինիստրի պաշտոնից, ղրավեց նաև ներքին գործերի մինիստրի պաշտոնը։ Կառավարության կազմում մտան նաև դոկտոր Աբդ ալ-Ռահման Շահբանդերը՝ արտաքին գործերի մինիստր, Յուսիֆ ալ-Ազման՝ պաշտպանության մինիստր, Ֆարիս ալ-Խուրին՝ ֆինանսների մինիստր, Ռիզա ալ-Սոլհը՝ պետական խորհրդի նախագահ, Ժորժ Ռիդկալյան՝ առևտրի մինիստր, Ջալալ ադ-Դին Ջունդին՝ արդարադատության մինիստր և Սաֆիք ալ-Հուսրին արտաքին կրթության մինիստր։ Մայիսի 8-ին Հաշիմ ալ-Աթասին կառավարական հայտարարությամբ հանդես եկավ սիրիական դիմավոր կոնգրեսի առջև։ Նա նշեց, որ իր կառավարության գլխավոր նպատակն է պահպանել երկրի լրիվ անկախությունը՝ արտաքաղաքականում իր անփոփոխ ներկայացուցչությունն ունենալու իրավունքով, պահպանել Սիրիայի ամբողջականությունը իր բնական սահմաններում, մերժելով սիոնիստների ձգտումները Պաղեստինը վերածելու հրեական ազգային օջախի, և ընդդիմանալ ամերիկյան ամեն մի միջամտության, որ կարող է ոտնահարել Սիրիայի սուվերենիտետը[211]։ Կառավարությունն իր քաղաքականության հիմնական խնդիրները նշելիս ելնում էր այն բանից, որ, ի նկատի ունենալով Ֆրանսիայի ազդեցիկ նպատակները, դինվորական ընդհարումը նրա հետ անխուսափելի է։ Դրանով է բացատրվում Հաշիմ ալ-Աթասիի կառավարության ծրագրի հատակ հակաիմպերիալիստական բնույթը և երկրի անկախությունն ու սուվերենիտետը պաշտպանելու վճռականությունը։ Սիրիական կոնգրեսը լրիվ հավանություն տվեց կառավարության ներկայացրած ծրագրին։ Սիրիական հայրենասերների վճռականության մասին էր վկայում նաև այն փաստը, որ սիրիական կոնգրեսը և կառավարությունը դեմ արտահայտվեցին Ֆեյսալի Եվրոպա մեկնելուն։ Մենք արդեն նշել ենք, որ Անգլիան, հետագայում նաև Ֆրանսիան Ֆեյսալին առաջարկում էին մեկնել Եվրոպա և այնտեղ քննարկել իրեն հետաքրքրող հարցերը։ Անգլիայի ու Ֆրանսիայի նպատակը պարզ էր։ Նրանք ձգտում էին Ֆեյսալին հրավիրել Եվրոպա, նրան կարել սիրիական միջավայրից և արաբական ազդային գործիչների ազդեցությունից և ճնշում գործադրելով համաձայնությունների ու գործարքների հակված Ֆեյսալի վրա, ստիպել նրա ընդունելու Սան-Ռեմոյի կոնֆերանսի որոշումները։

---

211 احسان هندی، كفاح الشعب العربي السوري، ص ٣١

Սիրիական կոնգրեսը հայտարարեց, որ Ֆեյսալը կմեկնի Եվրոպա միայն այն բանից հետո, երբ Անգլիան ու Ֆրանսիան ճանաչեն Սիրիայի լրիվ անկախությունը[212]։

Սիրիայի մանդատը Ֆրանսիային հանձնելու լուրը, ինչպես նշեցինք, հուզեց ամբողջ Սիրիան։ Ողջ ժողովուրդը ոտքի ելավ և իր պատրաստակամությունը հայտնեց պաշտպանելու իր հայրենիքի անկախությունը։ Դամասկոսում, Հալեպում և երկրի մյուս շրջաններում ու քաղաքներում տեղի ունեցան հզոր ցույցեր ու գործադուլներ։ Սիրիայի արևմտյան շրջաններում կրկին ուժեղացավ պարտիզանական պայքարը։ Փաստորեն արևմտյան շրջանները գտնվում էին պատերազմական վիճակում։ Ժողովրդական մասսաները և հայրենասիրական բոլոր խավերը կառավարությունից պահանջում էին ձեռք առնել վճռական միջոցներ Սիրիայի պաշտպանությունն ամրապնդելու ուղղությամբ։ Ի կատարումն այդ պահանջի կառավարությունը որոշեց «անհապաղ ձեռնամուխ լինել ազգային բանակի կազմակերպմանը»[213]։ Ինչպես արդեն նշել ենք, դեռևս 1919 թ. դեկտեմբերի վերջերին սիրիական կառավարությունն ընդունել էր օրենք ընդհանուր զինապարտության մասին։ Սակայն այդ օրենքն ըստ էության չգործադրվեց։ Միայն այժմ կառավարությունը, հենվելով այդ օրենքի վրա, սկսեց զորահավաք և ազգային բանակի միավորումների կազմակերպում։ Կառավարությունը միաժամանակ դիմեց մի շարք քայլերի՝ բանակ ստեղծելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ապահովելու ուղղությամբ։

Սիրիայում տեղի ունեցող դեպքերը և կառավարության կողմից կիրառվող միջոցառումները, հասկանալի է, չէին կարող վրիպել Ֆրանսիայի ուշադրությունից։ Ֆրանսիական կառավարող շրջանները տագնապով էին հետևում դեպքերի զարգացմանը Սիրիայում և տենդորեն նախապատրաստվում էին նրա անկախությանը վերջ տալու։ Ֆրանսիան իր այդ ծրագրի իրագործումը արագացրեց այն բանից հետո, երբ մայիսի 30-ին զինադադար կնքեց Մուստաֆա Քեմալի հետ։ Այդ ժամանակ ֆրանսիացիները Կիլիկիայում կենտրոնացրել էին մոտ 80 հազար զորք։ Զինադա-

---

212 Արաբ պատմաբան Զեյնը վկայակոչելով արտաքին գործերի մինիստր Աբդ ալ-Ռահման Շահբանդերին, նշում է, որ սիրիական որոշ շրջաններում լուրջ կասկածում էին, որ Ֆեյսալը գնալով Եվրոպա «գաղտնի համաձայնագրով Սիրիան կծախի Ֆրանսիային»—Տե՛ս Zeine N. Zeine, The struggle for arab independence, p. 160.

213 «Арабские страны», стр. 37.

դարի կեսերից հետո ֆրանսիական գինվորական հրամանատարությունը այդ լավ սպառազինված բանակը նետեց Սիրիայի դեմ։ Հունիսից սկսած ֆրանսիական զորքերը սկսում են կենտրոնանալ ոչ միայն Սիրիայի արևմտյան շրջաններում, որոնք արդեն գտնվում էին Ֆրանսիայի տիրապետության տակ, այլև Սիրիայի հյուսիս-արևմտյան սահմանների մոտ։ Ամեն ինչ խոսում էր այն մասին, որ Ֆրանսիան որոշել է զենքի ուժով ճնշել ազգային-ազատագրական շարժումը Սիրիայում և այնտեղ հաստատել իր տիրապետությունը։

Ստեղծված պայմաններում Ֆեյսալը մեկ անգամ ևս փորձեց համաձայնության գալ ֆրանսիացիների հետ։ 1920 թ. հուլիսի 9-ին Ֆեյսալը նորի Սաիդի միջոցով ֆրանսիական գեներալ Գուրոյին Բեյրութում հանձնեց մի նամակ, որտեղ ասված էր, որ Ֆեյսալը, համաձայն Ֆրանսիայի և Անգլիայի հրավերի, պատրաստ է մեկնել Եվրոպա նրանց հետ բանակցություններ վարելու համար։ Սակայն Գուրոն Ֆեյսալին չթողեց մեկնել Եվրոպա, պատճառաբանելով, որ նա, այսինքն Ֆեյսալը, շատ կարևոր նամակ է ստանալու ֆրանսիական կառավարությունից[214]։ Ֆեյսալին ոչինչ չէր մնում անել, քան ենթարկվել Գուրոյի կարգադրությանը։

Ֆրանսիական կառավարության նամակը գեներալ Գուրոն Ֆեյսալին հանձնեց 1920 թ. հուլիսի 14-ին։ Դա ոչ թե սովորական նամակ էր, այլ մի փաստաթուղթ, որտեղ շարադրված էին ֆրանսիական կառավարության նոր պահանջները, որոնք վերջնագրի բնույթ էին կրում։ Ֆրանսիական վերջնագիրը հիմնականում հինգ պայմաններ էր դնում սիրիական կառավարության առջև. 1. Ճանաչել ֆրանսիական մանդատը, 2. Ֆրանսիական իշխանություններին տնօրինությանը հանձնել Ռայյակ-Հալեպ երկաթուղագիծը։ Ֆրանսիական գինվորական իշխանությունների վերահսկողության տակ պետք է անցնեին Ռայյակ, Բաալբեկ, Հոմս, Համա և Հալեպ կայարանները։ Ըստ վերջնագրի Հալեպ քաղաքի օկուպացումը համարվում էր անհրաժեշտ։ 3. Չեղյալ հայտարարել ընդհանուր գինապարտության օրենքը, բանակը ցրել և թվական տեսակետից պահել այն մակարդակի վրա, որ կար մինչև 1919 թ. դեկտեմբերի 1-ը։ 4. Ֆրանսիական եղանակը ընդունել որպես սիրիական ազգային դրամ և 5. պատժել բոլոր նրանց, ովքեր հակաֆրանսիական գործունեություն են ծավալում[215]։

---

214 *G. Haddad*, Fifty years of modern Syria and Lebanon, p. 66.

215 *Zeine N. Zeine*, The Struggle for arab independence, p. 173.

Վերջնագիրը նախատեսում էր ոչ միայն մանդատի հաստատում, այլև համարյա ամբողջ Սիրիայի, բացի Դամասկոսի շրջանից, օկուպացում Ֆրանսիայի կողմից։ Այդ բոլորից հետո Սիրիայի անկախության հետքն անգամ չէր մնա, թեև հենց այդ նույն վերջնագրում ֆրանսիական կառավարությունը փարիսեցիաբար կըրկին խոսում էր «Սիրիայի անկախությունը հարգելու մասին»։ Վերջնագիրն ընդունելու կամ մերժելու համար Գուրոն տվեց 4 օր ժամանակ, հուլիսի 15-ի կեսգիշերից մինչև հուլիսի 18-ը։

Մայսալունի ճակատամարտը։ Ֆրանսիական վերջնագիրը պայթեց ինչպես ռումբ և միանգամից շարժման մեջ դրեց Սիրիայի բոլոր հասարակական-քաղաքական ուժերին։ Խաղաթղթի վրա էր դրված Սիրիայի ապագան, իսկ դա մի այնպիսի հարց էր, որի վերաբերյալ պարտավոր էին հստակորեն իրենց դիրքը որոշել ինքը՝ թագավոր Ֆեյսալը, սիրիական կառավարությունը և սիրիական գլխավոր կոնգրեսը, որը տվյալ շրջանում հանդիսանում էր սիրիական ամենալայն հասարակության շահերի և տրամադրությունների արտահայտիչը։

Վերջնագիրը մի ավելորդ անգամ ցույց տվեց, որ Սիրիայի ղեկավարության և տարբեր քաղաքական ուժերի միջև չկար միասնականություն։ Սիրիական քաղաքադետները, որոնք պատկանում էին շափավոր թևին, գտնում էին, որ պետք է ընդունել ֆրանսիական վերջնագիրը[216]։ Չափավորների այդ տրամադրությունն իր արտահայտությունը գտավ կառավարության անդամների մեծամասնության և անձամբ իր՝ Ֆեյսալի վարքագծում։ Նրանք ձևական բողոք հայտնելուց հետո արտահայտվեցին հօգուտ վերջնագրի ընդունման[217]։ Միանգամայն այլ դիրք գրավեցին սիրիական գլխավոր կոնգրեսը և ժողովրդական մասսաները։ Նրանք գտնում էին, որ ֆրանսիական պահանջները պետք է մերժել և պատրաստվել զինված դիմադրության։ 1920 թ. հուլիսի 15-ին գումարվեց սիրիական գլխավոր կոնգրեսի նիստը։ Կոնգրեսի անդամները կառավարությունից պահանջեցին պաշտպանել երկրի անկախությունը մինչև վերջ, ընդգծելով, որ իրենք այդ հիման վրա են վստահություն հայտնել Հաշիմ ալ-Աթասիի կառավարությանը[218]։

Կոնգրեսը որոշեց բացասական պատասխան տալ ֆրանսիական վերջնագրին և կառավարությունից պահանջեց ժողովրդի առ-

---

216 احسان هندی، كفاح الشعب العربی السوری، ص ٣٤

217 نجیب الارمنازی، محاضرات عن سوریا، ص ١١

218 احسان هندی، كفاح الشعب العربی السوری، ص ٣٤

չև հանդես գալ հատուկ հայտարարությամբ, որտեղ նշվի, որ նա պատրաստ է պաշտպանելու Սիրիայի լիակատար անկախությունը և միասնությունը[219]:

Կոնգրեսը որոշեց աշխատել մշտապես, առանց ընդմիջումների կառավարության գործունեության վրա հսկողություն սահմանելու համար[220]: Սիրիական կոնգրեսի անդամների վրա ճնշում գործադրելու նպատակով Ֆեյսալը նրանց իր մոտ հրավիրեց Բեյասեղանի: Փորձելով համոզել նրանց, թագավորը նշում էր, որ Սիրիան ռազմական առումով թույլ է և չի կարող դիմադրել Ֆրանսիային: Ի պատասխան Ֆեյսալի ճնշման, կոնգրեսի մի շարք անդամներ հիշեցրին նրա նախկին հայտարարությունները Սիրիայի լրիվ անկախության վերաբերյալ[221]: Նրանք շատ նուրբ ակնարկում էին թագավորի վարքագծի փոփոխման մասին ի նպաստ Ֆրանսիայի: Կոնգրեսի անդամները չհամաձայնվեցին Ֆեյսալի հետ և հեռացան նրա պալատից, հայտարարելով, որ իրենք դեմ են մանդատի ընդունմանը և ֆրանսիական մյուս պահանջներին:

Չնայած այդ հանդամանքին Ֆեյսալը հուլիսի 18-ին տեղեկացրեց Գուրոյին, որ ինքը սկզբունքորեն ընդունում է վերջնագիրը և խնդրում նրա ժամկետը երկարացնել մինչև հուլիսի 21-ը: Գեներալ Գուրոն պատասխանեց սիրիական թագավորին, որ իրեն պետք է ոչ թե սկզբունքային համաձայնություն, այլ վերջնագրի պայմանների անհապաղ կիրառում: Սակայն համաձայնվեց վերջնագրի ընդունման ժամկետը երկարաձգել մինչև հուլիսի 21-ը: Հուլիսի 19-ին կրկին գումարվեց սիրիական գլխավոր կոնգրեսը: Նա ընդունեց մի բանաձև, որտեղ կրկին հաստատվում էր, որ Սիրիան անկախ և սուվերեն պետություն է և ամեն մի օտարերկրյա միջամտություն անօրինական է, և սիրիական ժողովուրդն իրավունք ունի հակահարված տալու նրան: Կոնգրեսը միաժամանակ նախազգուշացրեց սիրիական կառավարությանը, որ նա իրավունք չունի այնպիսի որոշումներ ընդունել և քայլերի դիմել, որոնք կհակասեն սիրիական գլխավոր կոնգրեսի ընդունած որոշումներին[222]: Սակայն դա եղավ սիրիական կոնգրեսի վերջին նիստը: Ֆեյսալը համաձայնվելով բավարարել ֆրանսիական վերջնագրի պայմանները, անմիջապես սկսեց կիրառել Գուրոյի պահանջները:

---

219 Նույն տեղում:

220 Նույն տեղում:

221 *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 98.

222 *G. Haddad*, Fifty years of modern Syria and Lebanon, p. 66.

Ինչպես նշվեց, ֆրանսիացիների կարևոր պահանջներից մեկը հակաֆրանսիական գործունեության արգելումը և Ֆրանսիայի հասցեին քննադատությամբ հանդես եկող մարդկանց պատժելն էր։ Ի կատարումն վերջնագրի այդ կետի, Ֆեյսալը ցրեց սիրիական գլխավոր կոնգրեսը և նրա գործունեությունն արգելեց երկու ամսով, որը, սակայն, այդպես էլ երբեք չդումարվեց։ Սիրիական կոնգրեսը բողոքեց Ֆեյսալի և կառավարության այս որոշման դեմ։ Նրա մի շարք անդամներ չէին ուզում հնթարկվել այդ որոշմանը։ Սակայն նրանց բռնի ուժով քշեցին կոնգրեսի շենքից[223]։

Կառավարությունն իրագործեց ֆրանսիական վերջնագրի նաև մյուս պահանջը։ Նա չեղյալ հայտարարելով զինապարտության վերաբերյալ օրենքը, հուլիսի 18-ից ձեռնամուխ եղավ ազգային բանակի զինաթափմանը և զորացրմանը[224], ինչպես նաև պատրաստակամություն հայտնեց ֆրանսիացիներին թույլատրել Հալեպը գրավելու։ Ամեն ինչ վկայում էր, որ Ֆեյսալը պատրաստ է մինչև վերջ կատարել ֆրանսիական վերջնագրի պայմանները, միայն թե մնա գահի վրա։

Ֆեյսալի և սիրիական կառավարության մեծամասնության այս կապիտուլյանտական և հակաժողովրդական քաղաքականությունը խոր զայրույթ առաջ բերեց Սիրիայում։ Սիրիական ազգային հայրենասիրական ուժերի կոչով 1920 թ. հուլիսի 20-ին Դամասկոսում տեղի ունեցավ բազմահազարանոց ցույց[225]։ Ցուցարարներն իրենց դժգոհությունն էին հայտնում Ֆեյսալի քաղաքականությունից և պահանջում ֆրանսիական ինտերվենտների դեմ զինված դիմադրություն կազմակերպել։ Կառավարությունը փորձեց ցրել այդ ցույցերը, սակայն դա հակառակ արդյունքը տվեց։ «Ժողովուրդը,—գրում է Ամին Սաիդը,—ապստամբեց կառավարության դեմ և պահանջեց տապալել այն»[226]։ Ժողովուրդը սկսեց տարերայնորեն զինվել[227]։ Հայրենասերների մի խումբ հարձակվեց Դամասկոսի ամրոցի վրա, որտեղ գտնվում էր զինամթերքների պահեստը և գրավեց ու ժողովրդին բաժանեց զգալի քանակությամբ զենք։ Ապստամբները փորձեցին ներս խուժել նաև արքա-

---

223 *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 98.

224 احسان هندی، كفاح الشعب العربی السوری، ص ٣٥

225 «Современная Сирия», стр. 134.

226 *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 98.

227 *G. Haddad*, Fifty years of modern Syria and Lebanon, p. 67.

յական պայմաներ, բայց դա նրանց չհաջողվեց։ Ապստամբները բազմաթիվ մեղադրում էին վախկոտության ու դավաճանության մեջ։ Նեյսալի եղբայր Էմիր Զեյդը դնդացիրներով զինված արքայական զվարդիայի գլուխն անցած ճնշեց սիրիական հայրենասերների ելույթը։ Այդ օրը զոհվեց մոտ 200 մարդ[228]։

Մինչ սիրիական կառավարությունը զբաղված էր սեփական ժողովրդի բմբոստությունն արյան մեջ խեղդելով, հուլիսի 21-ին հայտնի դարձավ, որ ֆրանսիական զորքերը առաջ են շարժվում դեպի Դամասկոս։ Սիրիական կառավարական շրջաններում առաջացավ շփոթություն։ Բանն այն էր, որ հուլիսի 20-ի առավոտյան, այսինքն Գուրոյի վերջնագրի վերջնական ժամկետը լրանալուց մեկ օր առաջ, սիրիական կառավարությունը վերջնականապես որոշեց ընդունել այդ վերջնագիրը և դրա մասին պաշտոնապես հեռագրեց իրեն՝ ֆրանսիական գեներալին[229]։ Չնայած սիրիական կառավարության կապիտուլյացիային, ֆրանսիական զորքերը գրավելով Շթորան, Զահլեն, Մաջդալ Անջարը և Վադի ալ-Հարիրը, առաջ էին շարժվում դեպի Սիրիայի խորքը և ձգտում գրավել նրա մայրաքաղաքը։ Նեյսալը հապշտապ մի նոր հեռագիր ուղարկեց Գուրոյին։ «Ես զարմացած եմ,— ասված էր հեռագրում,— որ Ձեր բանակը հարձակվում է Դամասկոսի վրա, թեև ես անվերապահորեն ընդունել եմ վերջնագրում առաջ քաշված բոլոր պահանջները»[230]։ Վերջում սիրիական թագավորը խնդրում էր ֆրանսիական գեներալին ետ քաշել իր զորքերը։ Գեներալ Գուրոն իր զորքերի առաջխաղացումը բացատրում էր նրանով, որ սիրիական կառավարության հուլիսի 20-ի հեռագիրը վերջնագիրն ընդունելու մասին ինքը ուշ է ստացել։ Ըստ որում նա առիթը բաց չթողեց կրկին հարձակումներ գործելու սիրիական հայրենասերների վրա։ Նրանց ներկայացնելով որպես բանդիտներ, Գուրոն նշում է, որ նրանց հարձակումների պատճառով հեռագրալարը կտրված է եղել[231], և նրը ինքը ստացել է հեռագիրը ֆրանսիական զորքերի առաջխաղացման հրամանն արդեն արձակված է եղել։ Ենթադրենք, որ հեռագրալարն իրոք կտրված է եղել և սիրիական կառավարության հեռագիրը ուշ է հասել նրան։ Բայց բնականորեն հարց է ծագում,

---

[228] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 98.

[229] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 177.

[230] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 99.

[231] احسان هندى، كفاح الشعب العربى السورى، ص ٣٦

թե ինչո՞ւ այդ հեռագիրը ստանալուց հետո, թեկուզ ուշացումով, Գուրոն չհրամայեց իր զորքերին դադարեցնել հարձակումը Դամասկոսի ուղղությամբ: Այդ հարցին, իհարկե, Գուրոն չպատասխանեց և չէր էլ կարող պատասխանել: Հեռագրի հետ կապված միջադեպի ժամանակ Գուրոյի վարքագիծը բացատրվում է նրանով, որ Ֆրանսիան որոշել էր օգտագործելով ամեն մի պատեհ և անպատեհ առիթ օկուպացնելու Սիրիան, այդ թվում նաև Դամասկոսը: Հուլիսի 21-ին որպես կապավոր սպա Ֆեյսալին կցված ֆրանսիական գնդապետ Կոսը խորհուրդ տվեց թագավորին հարցի մեջ պարզություն մտցնելու համար իր ներկայացուցչին ուղարկել Գուրոյի մոտ: Սիրիական կառավարության որոշմամբ հուլիսի 21-ին Գուրոյի մոտ մեկնեց կրթության մինիստր Սաթի ալ-Հուսրին զինվորական խորհրդատու Ջամիլ ալ-Ալաշիի ուղեկցությամբ[232]: Նա Գուրոյի հետ հանդիպում ունեցավ հուլիսի 22-ի առավոտյան Ալեում, Բեյրութի մոտ: Հանդիպման ժամանակ Գուրոն վերջնագրի լիակատար ընդունման և կատարման վերաբերյալ նոր երաշխիքներ պահանջեց Սիրիայից: Այսինքն՝ ֆրանսիական զորքերը Սիրիայում պետք է մնան այնտեղ, որտեղ որ տվյալ պահին գտնվում են, սիրիական զինված ուժերը պետք է իրենց դիրքերից ետ քաշվեն դեպի Դամասկոս, ֆրանսիական զինվորական հանձնաժողովի լրիվ վերահսկողության հաստատում Ռայյակի երկաթուղային հանգույցի վրա և ֆրանսիական միսիայի ժամանում Դամասկոս: Այդ միսիայի նպատակն էր վերակառուցել սիրիական կառավարման սիստեմը ըստ մանդատի պահանջների[233]: «Նոր «երաշխիքների» ընդունման ժամկետ տրվեց հուլիսի 23-ը: Այդ նոր, այսպես կոչված «երաշխիքների» բովանդակությունից կրկին երևում է, որ ֆրանսիացիները ցանկանում էին մտնել Դամասկոս և ամբողջությամբ Սիրիայի վրա տարածել մանդատը:

Հուլիսի 23-ին սիրիական կառավարությունը Ֆեյսալի ներկայությամբ լսեց ալ-Հուսրիի հաղորդումը ֆրանսիական նոր պահանջների մասին: Ալ-Հուսրին իր կողմից ավելացրեց, որ ինքը այն տպավորությունն է ստացել, որ Գուրոն ուղում է անպայման գրավել Դամասկոսը, անկախ այն բանից մենք կընդունենք նրա պահանջները, թե ոչ[234]:

---

232 Նույն տեղում, էջ 37:

233 *Zeine N. Zeine.* The struggle for arab independence, p. 180.

234 احسان هندى، كفاح الشعب العربى السورى، ص ٣٨

Կառավարության նիստը դեռ չէր ավարտվել, երբ ներս մտավ դեղապետ Կոսր և Ֆեյսալին հանձնեց Դուրոյի նոր հեռագիրը, որով ֆրանսիական դեներալը սիրիական թագավորին տեղյակ էր պահում, որ «չրի պակասության և Հանապարհների վատ դրության պատճառով» անհրաժեշտ է դարձել ֆրանսիական զորքերի առաջ շարժվելը դեպի Մայսալուն[235]:

Այժմ բոլորին, նույնիսկ կառավարության տատանվող անդամներին, որոնք պահանջում էին Դուրոյի նոր «երաշխիքների» ընդունումը, պարզ դարձավ, որ Ֆրանսիան իրոք ուզում է օկուպացնել ամբողջ Սիրիան, այդ թվում նաև Դամասկոսը և վերացնել սիրիական թագավորությունը: Ուստի Դուրոյի պահանջները նրանք չընդունեցին և դիմեցին դաշնակից երկրների կառավարություններին, խնդրելով նրանց հավաքվել և քննարկել Սիրիայի հարցի շուրջը առնդծված կացությունը:

Հուլիսի 23-ին դեղապետ Կոսր Ֆեյսալից պահանջեց պատասխանել Դուրոյի վերջին նոտային: Ֆեյսալը նրան ասաց. «Մենք չենք ուզում պատերազմ: Սակայն ձեր վերջին նոտայի ընդունումը կկանգնեցնի մեր երկիրը քաղաքացիական պատերազմի առջև: Մենք պատրաստ ենք լրիվ կատարել Հուլիսի 14-ի վերջնագրի պահանջները»[236]: Ֆեյսալի այս պատասխանն ըստ էության նշանակում էր Դուրոյի նոր «երաշխիքների» մերժում:

Դրանից հետո լարվածությունը Սիրիայում հասավ իր կրիտիկական կետին: Ամբողջ ժողովուրդը խիստ հուզված և անհանգիստ վիճակում էր: Բոլորի, այդ թվում նաև Ֆեյսալի և սիրիական կառավարության համար պարզ դարձավ, որ զինված դիմադրությունն անխուսափելի է: Ֆեյսալը զգալով, որ մահացու վտանգ է կախված իր թագավորության դլխին, երկրի պաշտպանության հրաման արձակեց[237]: Հանդես գալով օսմանների մզկիթում՝ նա ժողովրդին կոչ արեց պաշտպանել հայրենիքը[238]: Նա իր կապիտուլյանտական քաղաքականության հետևանքով շատ մեծ ուշացումով դիմեց այդ քայլին, որի պատճառով Սիրիան այժմ պետք է պատերազմներ անհամեմատ ավելի վատ պայմաններում: Եթե Ֆեյսալը և նրա համախոհները սկզբից ևեթ մերժեին վերջնագիրը,

---

[235] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 181.

[236] احسان هندى، كفاح الشعب العربى السورى، ص ٣٩

[237] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 182.

[238] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 99.

ազգային բանակը չցրեին և ժողովրդին անմիջապես զինեին և նախապատրաստեին զինված դիմադրություն ցույց տալու ֆրանսիական զավթիչներին, ապա Սիրիան պատերազմի մեջ կմտներ իր համար ավելի նպաստավոր պայմաններում: Սակայն թանկագին ժամանակը բաց թողնվեց և սիրիացիները պատերազմի մեջ մտան վերին աստիճանի վատ կազմակերպված ու սպառազինված, զենքի պակասը փոխհատուցելով իրենց հերոսությամբ և կյանքը հայրենիքի համար զոհելու պատրաստակամությամբ:

Ֆեյսալի մանիֆեստը պատերազմի վերաբերյալ լայն արձագանք գտավ Սիրիայում, հատկապես Դամասկոսում, ստանալով ժողովրդական ամենալայն մասսաների աջակցությունը: Հազարավոր սիրիացիներ մեկնեցին Դամասկոսից 28 կմ արևմուտք գտնվող Մայսալունի լեռնանցքը, որը միակ պաշտպանական գիծն էր Դամասկոսի ճանապարհին: Սիրիացիների հետ էին նաև հեջազցիները և իրաքցիները: Սիրիական կամավորները, որոնց թիվը հասնում էր 4—5 հազարի[239], շատ վատ էին զինված: Զենքի հիմնական տեսակներն էին հին տիպի հրացաններ, սրեր, դաղանակներ, անգամ պարսատիկներ:

Մայսալուն եկան նաև արաբական կանոնավոր բանակի փոքր զորախմբեր, որոնք սիրիական բանակը ցրելու վերաբերյալ Ֆեյսալի արձակած օրենքից հետո դեռևս չէին հասցրել զորացրվել: Սիրիական բանակի այդ զորամասերի և կամավորների ռազմական գործողությունները ղեկավարում էր Սիրիայի պաշտպանության մինիստր Յուսիֆ Ազման:

Ճակատամարտը սիրիական հայրենասերների և ֆրանսիական զորքերի միջև սկսվեց 1920 թ. հուլիսի 24-ի վաղ առավոտյան: Վատ զինված և անկազմակերպ սիրիացիների հանդեպ կանգնած էր մինչև ատամները զինված ֆրանսիական ընտիր բանակը: Նրա տրամադրության տակ կային ինքնաթիռներ, տանկեր, զրահամեքենաներ, ծանր հրետանի և ռազմական այլ տեխնիկա: Ֆրանսիական գաղութարարներն այդ բոլորը նետեցին սիրիական հայրենասերների դեմ: Հուլիսի 24-ի առավոտյան ֆրանսիական ծանր հրետանին սկսեց ռմբակոծել սիրիացիների պաշտպանական առաջավոր դիրքերը, նպատակ ունենալով նրանց ահաբեկել,

---

[239] G. Haddad, Fifty years of modern Syria and Ledanon, p. 67. *Ամին Սաիդը կամավորների թիվը ցույց է տալիս 10 հազար, որը մեզ չափազանցված է թվում, տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 100:*

փախուստի մատնել և արագորեն շահել ճակատամարտը։ Այնուհետև գործի դրվեցին ինքնաթիռները և տանկերը։ Սակայն նրանք իրենց հաշիվներում սխալվեցին։ Սիրիական զորքերը և կամավորները չընկրկեցին ֆրանսիական զորքերի ահեղ կրակի առջև և հերոսաբար ընդունեցին մարտահրավերը, թեև գիտեին, որ իրենք զոհվելու են։ Նրանց ուժ էր տալիս այն գիտակցությունը, որ իրենք արդարացի պատերազմ են մղում և մարտնչում են հանուն իրենց հայրենիքի անկախության։ «Դա,— գրում է արաբ պատմաբանը,— իրոք որ ժողովրդական ճակատամարտ էր։ Յուրաքանչյուրն ուզում էր մեռնել հայրենիքի համար և ապացուցել ամբողջ աշխարհին, որ ինքը թշնամի է այն «քաղաքակրթությանը», որ մանդատի անվան տակ նրան բերում էր Ֆրանսիան, և որ նա ուզում է իր հողի վրա ապրել ազատ ու անկախ»[240]։

Ճակատամարտը տևեց 4 ժամ։ Մայսալունը ծածկվել էր դիակներով։ Պատերազմի դաշտում ընկան 1200 հայրենասերներ[241], դրանց թվում պաշտպանության մինիստր, Սիրիայի ազգային հերոս Յուսիֆ Ազման։ Ինչպես պետք էր սպասել, Մայսալունի ճակատամարտն ավարտվեց ֆրանսիական լավ զինված բանակի հաղթանակով։ Կեսօրին ֆրանսիացիներին այլևս դիմադրություն ցույց տվող չկար։ Ճանապարհը դեպի Դամասկոս բաց էր ֆրանսիական զինվորների առջև։ Սիրիայի անպաշտպան ու անզեն մայրաքաղաքը անձնատուր եղավ թշնամու ողորմածությանը։

Սիրիական թագավորության անկումը և Ֆեյսալի արտաքսումը։ Ֆրանսիական զորքերը Դամասկոս մտան 1920 թ. հուլիսի 25-ին։ Մինչև հուլիս ամսվա վերջը նրանք գրավեցին Հալեպը և մյուս քաղաքները և լրիվ ավարտեցին Սիրիայի գրավումը։ Շուտով Դամասկոս ժամանեց նաև գեներալ Գուրոն։ Նա այցելելով խաչակիրների դեմ հաղթական պատերազմներ մղած Սալահ ադ-Դինի դամբարան-գերեզմանին, ցինիկաբար հայտարարեց «Սալահ ադ-Դին, մենք այնուամենայնիվ վերադարձանք»[242]։

Ֆրանսիացիներն անմիջապես ձեռնամուխ եղան Ֆեյսալին դահընկեց անելուն, սիրիական թագավորության վերացմանը և մանդատի հաստատմանը։

Ֆեյսալը, որ դիտում էր Մայսալունի ճակատամարտը և ականատես եղավ սիրիական հայրենասիրական ուժերի պարտությանը,

---

[240] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 100.

[241] *G. Haddad*, Fifty years of modern Syria and Lebanon, p. 67.

[242] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 102.

ճակատամարտից հետո չմեկնեց Դամասկոս, այլ կանգ առավ մայրաքաղաքից 15 կմ հարավ գտնվող Կիսվա գյուղում։ Այդտեղից նա հետևում էր դեպքերի զարգացմանը Դամասկոսում և մի փորձ ևս արեց ֆրանսիացիների հետ համաձայնության գալու և իր գահը պահպանելու համար։ Ֆրանսիացիների հետ կապեր հաստատելու և նրանց մտադրությունները պարզելու նպատակով Ֆեյսալը Դամասկոս ուղարկեց Նուրի Սաիդին։ Վերջինս նրան հաղորդեց, որ ֆրանսիական իշխանությունների հետ ձեռք է բերվել ժամանակավոր համաձայնություն այն մասին, որ նրանք առայժմ պատրաստ են համագործակցել հին կառավարության հետ[243]։ Հուլիսի 25-ին Ֆեյսալը Ալա ադ-Դին ադ-Դուրուբիին, որը Ֆրանսիայի հետ համագործակցելու կողմնակից էր, նշանակեց սիրիական նոր կառավարության ղեկավար և նույն օրը երեկոյան վերադարձավ Դամասկոս։ Նոր կառավարության կազմում բացի հին անդամներ Ֆարիս ալ-Խուրիից, Ջալալ ադ-Դին Ջուհդից և Յուսիֆ ալ-Հակիմից, մտան նաև Ջամիլ ալ-Ալշին, Աթա ալ-Այուբին, Արդ առ-Ռահման ալ Յուսուֆը և Բադի ալ-Մուվայյուդը[244]։

Սակայն հաջորդ օրը, հուլիսի 26-ին ֆրանսիական գեներալ Գոյբեոը սիրիական կառավարության անդամների հետ հանդիպման ժամանակ հանդես եկավ մի հայտարարությամբ, որով ոչ մի հույս չթողեց սիրիական անկախ թագավորության պահպանման վերաբերյալ։ Գոյբեոը ֆրանս-սիրիական հարաբերություններում գոյություն ունեցող լարվածության և Սիրիայում տեղի ունեցող դեպքերի համար մեղադրեց Ֆեյսալին։ Նա ֆրանսիական կառավարության անունից սիրիական կառավարությունից պահանջեց. գահընկեց անել Ֆեյսալին, վճարել 10 մլն ֆրանկ ռազմատուգանք, սիրիական բանակը ցրել և այն վերածել ոստիկանության, ֆրանսիական բանակին հանձնել նրա զենքերը, ռազմական նյութերը և հրետանին, դիմադրության կազմակերպման ղեկավարներին հանձնել ֆրանսիացիներին, նրանց զինվորական ատյանի միջոցով դատելու համար, զենքը հավաքել քաղաքացիներից և հանձնել ֆրանսիացիներին[245]։ Ադ-Դուրուբիի կառավարությունը լրիվ ընդունեց ֆրանսիացիների պահանջները։ Գուրոյին ուղարկված իր հեռագրում Ֆեյսալը բողոքեց այդ պահանջների դեմ։ Գուրոն ոչ

---

[243] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 184.

[244] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 103.

[245] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 102.

միայն հաշվի չառավ Ֆեյսալի բողոքը, այլև պահանջեց, որ նա իր ընտանիքով հեռանա Դամասկոսից։ Ըստ որում նրան հայտնեցին, որ դա ֆրանսիական հանրապետության կառավարության որոշումն է։ Դամասկոսից սիրիական թագավորի հեռացման ժամկետ նշանակվեց հուլիսի 28-ը։ Ֆեյսալը Դամասկոսը թողեց 1920 թ. հուլիսի 28-ի առավոտյան ժամը 5-ին[246]։ Նա մայրաքաղաքի Հեջազյան կայարանից գնացքով մեկնեց Դերա՝ա՝ Դամասկոսից 80 կմ հարավ, որը Հաուրանի կենտրոնն էր։ Այստեղ նրան լավ ընդունեցին Հաուրանիի շեյխերը, որոնք համախմբվեցին նրա շուրջը։ Դա խիստ անհանգստացրեց ֆրանսիային։ Նրա նպատակն էր Ֆեյսալին արտաքսել ոչ միայն Դամասկոսից, այլև չթողնել, որ նա ընդհանրապես բնակություն հաստատի Սիրիայում։ Հուլիսի 29-ին սիրիական կառավարության ղեկավար ադ-Դուրուբին ֆրանսիական զինվորական իշխանությունների հանձնարարությամբ հեռագրեց Ֆեյսալին, պահանջելով Դերա՝այից անհապաղ հեռանալ և Մաանի վրայով մեկնել Հայֆա։ Այդ նույն օրը ֆրանսիական ինքնաթիռները թռուցիկներ ցրեցին Հաուրանում, հաուրանցիներին տալով 10 ժամ Ֆեյսալին Դերա՝այից արտաքսելու համար։ Եթե այդ պահանջը չկատարվեր, ապա ֆրանսիական ինքնաթիռները ռմբակոծելու էին ամբողջ Հաուրանը[247]։

1920 թ. օգոստոսի 1-ին Ֆեյսալը ընդմիշտ հեռացավ Սիրիայից և մեկնեց Եվրոպա[248]։

Սիրիական թագավորությունը շատ կարճ կյանք ունեցավ՝ ընդամենը չորս ամիս, և ընկավ ֆրանսիական գաղութարարների հարվածների տակ։ Ֆրանսիան, հաղթահարելով իր ճանապարհին եղած բազմապիսի խոչընդոտներ և դժվարություններ, կարողացավ հասնել իր իմպերիալիստական ծրագրի իրագործմանը։ Սիրիան զրկվեց իր անկախությունից և վերածվեց ֆրանսիական ենթամանդատային տերիտորիայի։

---

[246] *Zeine N. Zeine*, The struggle for arab independence, p. 186.

[247] *G. Haddad*, Fifty years of modern Syria and Lebanon, p. 68.

[248] 1921 թ. օգոստոսի 23-ին Անգլիայի հանձնարարությամբ Ֆեյսալը հռչակվեց Իրաքի թագավոր։ Նա Իրաքի գահի վրա մնաց մինչև իր մահը՝ 1933 թ.։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍԻՐԻԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(1920—1939 թթ.)

Մանդատային իշխանության մարմինները և նրանց իրավասության շրջանակները: *Չնայած 1920 թ. ապրիլին Սան-Ռեմոյում կայացած կոնֆերանսում որոշվեց Սիրիայի և Լիբանանի մանդատը հանձնել Ֆրանսիային, սակայն մանդատի պայմանները սահմանող հատուկ փաստաթուղթ գոյություն չուներ, որը որոշեր մանդատային իշխանությունների իրավունքները և պարտականությունները: Այդ նպատակով Ազգերի Լիգան ստեղծեց հատուկ հանձնաժողով, որը մշակեց և 1921 թ. օգոստոսին հրատարակեց մանդատի նախագիծ Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի և Իրաքի վերաբերյալ: Սիրիայի և Լիբանանի մանդատը Ազգերի Լիգայի խորհուրդը վերջնականապես հաստատեց 1922 թ. հուլիսի 24-ին*[1]*: Ըստ այդ փաստաթղթի Սիրիայում և Լիբանանում ամբողջ իշխանությունը հանձնվում էր Ֆրանսիային: Մանդատի առաջին հոդվածում ասված էր, որ Ֆրանսիան պարտավոր է երեք տարվա ընթացքում մշակել Սիրիայի և Լիբանանի սահմանադրությունը*[2]*, նա, ելնելով հնարավորություններից, կարող էր խրախուսել տեղական ինքնավարությունը: Այսպիսով, այնպիսի մի կարևոր հարցի մշակումը, ինչպիսին տվյալ երկրի հիմնական օրենքն է, խլվում էր տվյալ ժողովրդի իրավասությունից և հանձնվում իմպերիալիստական պետության՝ Ֆրանսիայի տնօրինությանը:*

---

[1] *Ю. Ключников, Ю. Сабанин,* Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 3, стр. 174.

[2] *Նույն տեղում:*

Ֆրանսիան իրավունք ուներ Սիրիայում և Լիբանանում պահել իր ռազմական ուժերը (հոդ. 2)[3]։ Այլ կերպ ասած, Ազգերի Լիգայի մանդատային սիստեմը պաշտոնապես թույլատրում էր Ֆրանսիային ռազմական օկուպացիայի ենթարկել Սիրիան և Լիբանանը։ Բացի այդ, ֆրանսիական իշխանությունները իրավունք էին ստանում տեղացիներից ստեղծել միլիցիա, օգտագործել նավահանգիստները, երկաթուղիները և կապի միջոցները իրենց զորքերը տեղափոխելու համար։ Մանդատային ուժերի պահպանման ամբողջ ծախսերը դրվում էին Սիրիայի և Լիբանանի վրա[4]։ Ֆրանսիան սահմանում էր բացառիկ վերահսկողություն Սիրիայի և Լիբանանի արտաքին կապերի վրա։ Նրանք զրկվեցին ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից։ Այն լրիվ իր վրա վերցրեց Ֆրանսիան։ Անգամ Սիրիայի և Լիբանանի քաղաքացիների դիվանագիտական և հյուպատոսական պաշտպանությունն իրականացնելու էր Ֆրանսիան (հոդ. 3)[5]։ Չորրորդ հոդվածը սահմանում էր, որ մանդատային երկիրը, տվյալ դեպքում Ֆրանսիան, պատասխանատու էր այն բանի համար, որ Սիրիայի և Լիբանանի տերիտորիան չզիջվի կամ հանձնվի, կամ ինչ-որ կերպ չդրվի այս կամ այն օտար պետության վերահսկողության տակ[6]։ Սիրիայի և Լիբանանի պաշտոնական լեզուներ համարվեցին ֆրանսերենը և արաբերենը (հոդ. 16)[7]։ Սիրիայի ռազմական օկուպացումը և երկրի կառավարման ներքին և արտաքին ֆունկցիաների կենտրոնացումը Ֆրանսիայի ձեռքում, Սիրիային փաստորեն դրեց գաղութային դրության մեջ։ Ֆրանսիան Սիրիայում հաստատեց կառավարման մի այնպիսի սիստեմ, որն իր բնույթով գաղութատիրական էր և կոչված էր ապահովել ֆրանսիական իմպերիալիստների շահերն ու իրավունքները։ Կառավարման այդ սիստեմը լրիվ ոտնակոխ էր անում սիրիացիների ազգային իրավունքները։

Սիրիայի փաստական անսահմանափակ կառավարողը, մինչև մանդատի վերջնական հաստատումը, դարձավ գլխավոր կոմիսարը, որը պատասխանատու էր Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության առջև։ Նրան էր պատկանում վերահսկողության, նախաձեռնության և վետոյի բացարձակ իրավունքը[8]։ Գլխավոր

---

[3] Նույն տեղում, էջ 175։

[4] Նույն տեղում։

[5] Նույն տեղում։

[6] Նույն տեղում։

[7] Նույն տեղում, էջ 176։

[8] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 115.

կոմիսարի ֆունկցիաները սահմանափակվեցին Ֆրանսիական Հանրապետության 1920 թ. նոյեմբերի 23-ի դեկրետով։ Այնտեղ ասված էր, «Ֆրանսիան իր վերահսկողությունը տեղական իշխանությունների վրա իրականացնում է իր ներկայացուցչի միջոցով, որ կոչվում է Ֆրանսիական Հանրապետության գլխավոր կոմիսար Սիրիայում և Լիբանանում»[9]։ Այդ ֆունկցիաները, ինչպես նշվեց, շատ լայն էին։ Նա կազմակերպում էր երկրի ղեկավարումը, հաստատում կամ մերժում տեղական կառավարությունների որոշումները, ղեկավարում գլխավոր կոմիսարիատի գերատեսչությունները, Սիրիային ներկայացնում արտասահմանում, տեղական կառավարություններին կից նշանակում իր ներկայացուցչին՝ դելեգատին, հանդիսանում արբիտր տեղական կառավարությունների միջև և այլն[10]։ Նրա նստավայրը Բեյրութն էր։

Գլխավոր կոմիսարն իր տրամադրության տակ ուներ կառավարման հատուկ ապարատ։ Վարչական գործերում նրա առաջին օգնականը գլխավոր քարտուղարն էր։ Մեծ ու ազդեցիկ դիրք ուներ հետախուզության, այսպես կոչված «Հատուկ ծառայության» բաժինը, որն իր լայն ցանցն էր ստեղծել ամբողջ Սիրիայում և սիրիացիների քաղաքական տրամադրությունների մասին անմիջապես տեղյակ էր պահում գլխավոր կոմիսարին[11]։ Բացի այդ, գլխավոր կոմիսարիատն ուներ ֆինանսների, արդարադատության, հասարակական աշխատանքների, կրթության, օրենսդրության, գյուղատնտեսության, մաքսերի, փոստի և հեռագրի, հողերի, վակֆների, առողջապահության և հնէաբանության բաժիններ։ Սրանց պետք է ավելացնել նաև այն հրահանգիչներին, որ գլխավոր կոմիսարը նշանակում էր առևտրական նավատորմում, անասնաբուծության, մոնոպոլիաների և հանքերի, կոնցեսիոն ընկերությունների վերահսկողության և այլ ծառայությունների մեջ[12]։ Գլխավոր կոմիսարի այս ապարատը կազմված էր բացառապես ֆրանսիական պաշտոնյաներից։ Տեղացիների առջև այդ բաժինների դռները փակ էին։

1923 թ. հուլիսի 7-ի դեկրետով գլխավոր կոմիսարն իրավունք ստացավ կազմակերպել խառը դատարաններ։ Նա Սիրիայի և Լի-

---

[9] *В. Б. Луцкий*, Национально-освободительная война в Сирии (1925—1927 гг.), М., 1964, стр. 102.

[10] Նույն տեղում։

[11] *A. Hourani*, Syria and Lebanon, London, 1946, p. 170.

[12] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 115.

բանանի դատարաններում նշանակեց ֆրանսիական դատավորներ[13]։ Դրանով գլխավոր կոմիսարը հնարավորություն ձեռք բերեց տեղական դատարանները դնել ֆրանսիական մանդատային իշխանությունների հսկողության տակ։

Եթե գլխավոր կոմիսարը զինվորական էր, ապա նա միաժամանակ հանդիսանում էր Սիրիայում և Լիբանանում գտնվող ռազմական ուժերի գլխավոր հրամանատարը։ Գլխավոր կոմիսարի բաղաքացիական անձնավորություն լինելու դեպքում, նշանակվում էր նաև առանձին գլխավոր հրամանատար, որը, սակայն, ենթակա էր գլխավոր կոմիսարին։

Ինչպես տեսնում ենք, Ֆրանսիան Սիրիայում ստեղծեց մանդատային իշխանությունների մի բազմաճյուղ ու ազդեցիկ ապարատ, որն իր ցանցերը նետեց Սիրիայի տնտեսական, հասարակական և քաղաքական կյանքի բոլոր բնագավառները։

Սիրիայի արհեստական տրոհումը առանձին մաեր պետությունների։ Ֆրանսիական իմպերիալիստներն օկուպացնելով Սիրիան, ծանր հարված հասցրին ոչ միայն անկախ, այլև միասնական ու անբաժան պետություն ստեղծելու սիրիացիների ձգտումներին։ Ֆրանսիան չէր ցանկանում տեսնել Սիրիան որպես մեկ միասնական պետություն, թեկուզև իր մանդատի ներքո։ Ուստի իր տիրապետությունը հաստատելուց անմիջապես հետո, նա ձեռնամուխ եղավ Սիրիայի մասնատմանը և առանձին պետությունների ստեղծմանը։ Նա իր այդ քայլը ձևականորեն փորձում էր հիմնավորել նրանով, որ սիրիական տարբեր շրջանների միջև կային անջատողական ձգտումներ, որ այդ շրջանները գտնվում էին զարգացման տարբեր աստիճանների վրա և այլն։ Սակայն դա մի հորինված պատրված էր Ֆրանսիայի ձեռքում «բաժանիր, որ տիրես» գաղութարարական քաղաքականությունն իրականացնելու համար։ Ֆրանսիական իմպերիալիստները Սիրիան տրոհելով առանձին պետությունների, ձգտում էին սեպ խրել նրանց միջև, չլատել դեմոկրատական և հայրենասիրական ուժերը, թույլ չտալ նրանց միավորվել և միասնական ճակատով հանդես գալու Ֆրանսիայի տիրապետության դեմ։ Նրանց հիշողության մեջ դեռևս թարմ էին 1917—1920 թթ. ազատագրական ելույթները և հատկապես, 1920 թ. հուլիսի Մայսալունի ճակատամարտը։

Առաջինը Սիրիայից անջատվեց և անկախ պետություն հրո-

---

[13] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 102.

չակվեց Լիբանանը։ Մեծ Լիբանանի ստեղծման դեկրետը ֆրանսիական գլխավոր կոմիսարը ստորագրեց 1920 թ. օգոստոսի 31-ին և հրապարակեց սեպտեմբերի 1-ին։

Լիբանանի պետության դեկավարը համարվում էր գլխավոր կոմիսարի կողմից նշանակված ֆրանսիացի նահանգապետը։

1920 թ. սեպտեմբերին ստեղծվեցին երկու պետություններ ևս՝ լույս աշխարհ եկավ մի նոր պետություն՝ Ալավիների ավտոնոմ մարզը[14], որը 1922 թ. հուլիսին ստացավ պետության ստատուս։ Այդ պետությունն ստեղծվեց Լաթաքիա և Տարտուս սանջակների հիման վրա։ Նրա դեկավար նշանակվեց ֆրանսիական մի սպա, որին կից, որպես խորհրդակցական մարմին, ստեղծվեց վարչական հանձնաժողով, բաղկացած 12 ֆեոդալներից և խոշոր առևտրականներից[15]։

1920 թ. սեպտեմբերին ստեղծվեց երկու պետություն ևս՝ Հալեպի և Դամասկոսի։ Հալեպի պետության դեկավար նշանակվեց թուրքական բանակի նախկին գեներալ-մայոր՝ Քամիլ ալ-Կուդսին, իսկ Դամասկոսի պետությանը՝ Հաքքի ալ-Ազըմը[16]։

1921 թ. օգոստոսին Ալեքսանդրետի սանջակին շնորհվեց ինքնավարության ստատուս Հալեպի պետության սահմաններում։ Օրենսդրական առումով այն մտնում էր Հալեպի պետության մեջ։ Ալեքսանդրետի սանջակը ուներ իր բյուջեն, արաբերենի և ֆրանսերենի հետ պաշտոնական լեզու ճանաչվեց նաև թուրքերենը[17]։

1920—1922 թթ. բանակցություններ էին գնում գլխավոր կոմիսարի և Ջեբել Դրուզի ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչների միջև՝ Ջեբել Դրուզի ստատուսի վերաբերյալ։ Այդ բանակցությունների հետևանքով 1921 թ. մարտի 4-ին նրանց միջև կնքվեց մի համաձայնագիր, Ֆրանսիայի հովանավորության ներքո Ջեբել Դրուզի «ազգային» կառավարություն ստեղծելու մասին։ Այդ համաձայնագրի անմիջական արդյունքը եղավ Ջեբել Դրուզի պետության ստեղծումը, որի մասին դեկրետը ֆրանսիական գլխավոր կոմիսար գեներալ Գուրոն ստորագրեց 1922 թ. ապրիլին[18]։ Պետության դեկավար նշանակվեց Սելիմ ալ-Աթրաշը։

Այսպիսով, Սիրիայի տերիտորիայի վրա ստեղծվեց հինգ պետություն. Լիբանանի, Ալավիների, Հալեպի, Դամասկոսի և Ջե-

---

[14] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 125.

[15] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 126.

[16] *S. Longrigg* Syria and Lebanon under French mandate, p. 126.

[17] *A. Hourani*, Syria and Ledanon, p. 172.

[18] Նույն տեղում։

քել Դրուզի և Ալեքսանդրետի ավտոնոմ մարզը։ Այդ պետություններում ֆրանսիացիները ստեղծեցին տեղական վարչություն կամ կառավարություն, կազմված ֆեոդալական և բուրժուական տարրերից։ Ըստ էության դրանք մարիոնետային կառավարություններ էին։ Նրանցում վճռական դերը պատկանում էր գլխավոր կոմիսարի ներկայացուցիչներին՝ դելեգատներին և խորհրդատուներին։ Բացի այդ չպետք է մոռանալ, որ գլխավոր կոմիսարը պահպանում էր ամենալայն վերահսկողության և վետոյի իրավունքը։

Սիրիայի արհեստական տրոհումը մի քանի շրջանների, որոնց միջև ստեղծվեցին մաքսային և այլ բնույթի արգելքներ, առաջացրին տնտեսական և վարչական բնույթի բազմաթիվ դժվարություններ։ Դրությունից ելք փնտրելու նպատակով, գլխավոր կոմիսարը 1922 թ. հունիսի 28-ի դեկրետով ստեղծեց «Սիրիական ֆեդերացիա», որի մեջ մտան Դամասկոսի, Հալեպի և Ալավիների պետությունները[19]։ Ֆեդերացիայի պրեզիդենտ ընտրվեց ծագումով Թուրք Սուբհի Բարակաթը[20]։ Սակայն այդ ֆեդերացիան երկար կյանք չունեցավ։ Սիրիայում և Լիբանանում ֆրանսիական նոր գլխավոր կոմիսար գեներալ Վեյգանը 1924 թ. դեկտեմբերին լուծարքի ենթարկեց ֆեդերացիան։ Ալավիների պետությունը դուրս եկավ ֆեդերացիայի կազմից, իսկ Դամասկոսի և Հալեպի պետությունները միավորվեցին մեկ պետության՝ Սիրիայի մեջ, որի մայրաքաղաքը դարձավ Դամասկոսը։ 1936 թ. Ալավիների պետությունը և Ջեբել Դրուզը ձևականորեն միացան Սիրիային, սակայն 1939 թ. կրկին ստացան համարյա լրիվ ինքնավարություն։ Միայն 1942 թ. նրանք վերջնականապես միացան Սիրիային[21]։

Սիրիայի մասնատումը առանձին պետությունների բացասաբար անդրադարձավ ոչ միայն Սիրիայի ազգային-ազատագրական շարժումների, այլ նաև տնտեսական և մշակույթի զարգացման վրա։ Ֆրանսիական իմպերիալիստների այդ քաղաքականության մեջ պետք է փնտրել Սիրիայի հետամնացության պատճառներից մեկը։

Ազգային-ազատագրական պայքարը Սիրիայում 1920—1923 թթ.։ Սիրիան գրավելուց հետո Ֆրանսիան երկրում մտցրեց ռազմական դրություն, որը պահպանվեց մինչև 1925 թ.։ Ֆրան-

---

[19] «Современная Сирия», стр. 137.

[20] *A. Hourani*, Syria and Lebanon, p. 173.

[21] Նույն տեղում։

սիական օկուպանտները դաժան հաշվեհարդար տեսան ապստամբ ժողովրդի հետ։ Սիրիայում մոլեգնում էին ռազմական դատարանները, որոնք առանց մանրամասն քննության ձերբակալում և աքսորում էին ազատագրության շարժման մասնակիցներին։ Ֆրանսիական զինվորականները ծաղր ու ծանակի էին ենթարկում սիրիացիներին։ Ժողովրդի գլխին մեծ չարիք դարձան ֆրանսիական պատժիչ էքսպեդիցիաները, որոնք ուղարկվում էին հակաիմպերիալիստական պայքարով բռնկված Սիրիայի տարբեր շրջաններ։ Պատժիչ էքսպեդիցիայի անդամները դիմում էին ամեն տեսակ գազանությունների, ծեծում և գնդակահարում էին խաղաղ բնակիչներին, հրկիզում գյուղերը, բռնագրավում բնակչության պատկանող գույքը, կոնտրիբուցիա նշանակում և այլն[22]։ 1920 թ. օգոստոսի 9-ին ֆրանսիական ռազմական դատարանը մահապատժի դատապարտեց սիրիական 37 ազգային գործիչների, որոնց ունեցվածքը ամբողջովին բռնագրավվեց։ 1922 թ. ռազմական դատարանը 5—20 տարի ժամկետով Արուադ կղզի աքսորեց ազգային-ազատագրական շարժման մի այլ խմբի[23]։ Ֆրանսիական ռազմական դատարանները համանման վճիռներ էին արձակում նաև Սիրիայի մյուս շրջաններում։

Ֆրանսիական օկուպանտները ոտնահարում էին սիրիացիների ազգային ինքնասիրությունը, անտեսում դարավոր ազգային սովորություններն ու ավանդույթները։ Նրանք խեղդում էին ազատության ձգտման յուրաքանչյուր դրսևորում։ Նրանք խիստ վերահսկողություն սահմանեցին արաբական մամուլի վրա։ Սիրիական շատ թերթեր փակվեցին։ Դեմոկրատական կազմակերպությունների կամ կուսակցությունների գործունեության մասին խոսելն ավելորդ է։ Սիրիայում ֆրանսիական իմպերիալիստները հաստատեցին բռնության և սարսափի մթնոլորտ։

Ֆրանսիական զավթիչները հույս ունեին ահաբեկման միջոցով կոտրել սիրիական հայրենասիրական ուժերի դիմադրությունը և ստիպել նրանց հաշտվել մանդատի հետ։ Սակայն իրենց հաշիվներում սխալվեցին։ 1920 թ. սկսած Սիրիայում ծայր առավ համաժողովրդական ազատագրական պայքար, որի նպատակը ֆրանսիացիների արտաքսումը, մանդատի վերացումը և անկախ ու միասնական սիրիական պետության ստեղծումն էր։ Այս պա-

---

[22] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 114.

[23] Նույն տեղում, էջ 115։

Հանջները դարձան 1920—1946 թթ. Սիրիայում ծավալված ազգային-ազատագրական պայքարի հիմնական բովանդակությունը։

Այդ պայքարի հիմնական շարժիչ ուժը բոլոր էտապներում եղել է գյուղացիությունը։ Լինելով սիրիական հասարակության ամենաբազմամարդ և ամենաիրավազուրկ դասակարգը, գյուղացիությունն իր ուսերի վրա տարավ ազգային-ազատագրական պայքարի հիմնական ծանրությունը։

Հակաիմպերիալիստական պայքարի մյուս կարևոր շարժիչ ուժը բանվոր դասակարգն էր, որը, սակայն, տարբեր էտապներում տարբեր դեր է խաղացել։ Սկզբնական շրջանում, հատկապես 20—30-ական թվականներին, երբ նա դեռևս փոքրաթիվ էր և վատ կազմակերպված, նրա տեսակարար կշիռն այդ պայքարում համեմատաբար փոքր էր։ Հետագայում, հատկապես 40-ական թվականներին, նրա դերը ազգային-ազատագրական շարժման մեջ անհամեմատ աճեց, բայց ոչ այնքան, որ կարողանար ստանձնել այդ շարժման ղեկավարությունը։

Սիրիայի ազգային-ազատագրական պայքարի շարժիչ ուժերի մեջ պետք է մտցնել նաև արհեստավորներին, մանր ու միջին առևտրականներին, մանր հողատերերին և մտավորականությանը։ Իսկ ինչ վերաբերում է ազգային-ազատագրական շարժման ղեկավարությանը, ապա այն գտնվում էր սիրիական երիտասարդ, դեռևս թույլ ու անփորձ ազգային բուրժուազիայի ձեռքում։ Տարբեր էտապներում այդ շարժմանը հարել, և անգամ ղեկավարել են հայրենասիրաբար տրամադրված ֆեոդալները։

1920 թ. օգոստոսին, ֆրանսիական զորքերի կողմից Դամասկոսը գրավելուց մեկ ամիս անց, Հաուրանի շրջանում սկսվեց գյուղացիական ապստամբություն։ Ապստամբած գյուղացիները հրաժարվեցին ռազմատուգանք վճարել և ընդհանրապես չէին ցանկանում ճանաչել մանդատային ռեժիմը։ Նրանք Խիրբաթ ալ-Դազալ կայարանում հարձակվեցին ռազմատուգանք հավաքելու համար տեղական շեյխերի հետ բանակցելու եկած պրեմիեր-մինիստրը Դուրուբի փաշայի և նրան ուղեկցող չորս մինիստրների վրա։ Ապստամբները բացականչում էին «Կորչի ֆրանսիացիների կազմած կառավարությունը»[24]։ Պրեմիեր-մինիստրը, խորհրդակցական խորհրդի նախագահը և գնացքում գտնվող ֆրանսիական զինվոր-

[24] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 123—124

ները սպանվեցին։ Դամասկոսից ուղարկված պատժիչ էքսպեդիցիան մեկ ամսից ավելի մարտեր էր մղում Հաուրանի գյուղացիության դեմ, որին ղեկավարում էին մանր կալվածատեր-շեյխեր Իբրահիմ Սալիհը, Իսմայիլ ալ-Հարիրին, Ահմեդ առ-Ռիֆաին և ուրիշներ։ Ֆրանսիական ինքնաթիռները և հրետանին ամբակոծում էին գյուղերը։ Միայն հոկտեմբերի սկզբներին ճնշվեց ապստամբությունը և ֆրանսիական զորքերը գրավեցին Հաուրանի վարչական կենտրոն Դերաան ու հարյուր հազար լիրայի ռազմատուգանք դրեցին գյուղացիության վրա։

Դեռ նոր էին վերջացել արյունալի այս գործողությունները, երբ 1920 թ. վերջերին նոր ուժով ապստամբությունը ծավալվեց Սիրիայի հյուսիսային մասերում, Հալեպի և Լաթաքիայի շրջաններում։ Լաթաքիայում ապստամբությունը, որ սկսվել էր դեռևս 1919 թ., ղեկավարում էր շեյխ Սալիհ Ալին։ Ապստամբության կենտրոնը Շեյխ Բիտիր գյուղն էր, որ վերածվել էր մի բերդի։ Այդ տարիների ընթացքում Սալիհ Ալիի պարտիզանական ջոկատները մեծ կորուստներ պատճառեցին օկուպանտներին։ Ֆրանսիացիների կողմից Դամասկոսը գրավելուց հետո ապստամբները մեկ տարի ևս շարունակում են պայքարը, որից հետո միանում են Սիրիայի հյուսիսում գործող Իբրահիմ Հանանոյի ջոկատներին։. Հակաիմպերիալիստական պայքարի խոշոր բազա դարձան Հալեպը և նրա շրջակայքը։ 1920 թ. հուլիսին, ֆրանսիական զորքերի Հալեպ մտնելուց հետո, Հանանոն հեռանալով քաղաքից եկավ իր ծննդավայր Քաֆր Թահարիմ գյուղը և հայտարարեց զորահավաք։ Կազմակերպվեց տեղական կառավարություն, Արմանազի գավառապետ Ալի Քեմալ ալ-Ջիմալիի գլխավորությամբ։ Կառավարությունը որոշում է վերացնել բոլոր հարկերը, բացառությամբ գյուղատնտեսական մթերքներից գանձվող հարկերից և անասնահարկից, որոնցից ստացված գումարները հատկացվելու էին զենք ձեռք բերելուն[25]։ Կազմակերպական աշխատանքներն ավարտելուց հետո, Հանանոն բարձրացնում է ապստամբության դրոշը։

Միևնույն ժամանակ հրավիրվում է ընդհանուր ժողով, որին մասնակցում են Սիրիայի հյուսիսային շրջանի ազդեցիկ անձնավորությունները։ Ժողովի նպատակն էր ապստամբությունը տարածել ամբողջ հյուսիսային շրջանում։ Ընդհանուր ժողովը որոշում է

---

[25] احسان هندی، كفاح الشعب العربی السوری، (١٩٠٨–١٩٤٨)، دمشق، ١٩٦٣، ص ٧١

նաև կապ հաստատել Կիլիկիայում ֆրանսիացիների դեմ կռվող թուրքական ուժերի հետ։ Դրությունը ստիպում էր երկու կողմերին համագործակցել ընդհանուր թշնամու դեմ։ Այս կապակցությամբ Իբրահիմ Հանանոն հինգ համախոհներով 1920 թ. օգոստոսի վերջերին գալիս է Մարաշ, թուրքական երկրորդ բանակատեղը։ Բանակի հրամանատար Սալահ էդ-Դին Ադիլի հետ համաձայնություն է կնքվում, որով թուրքական կառավարությունը որպես առաջին օգնություն Հանանոյին է հանձնում մեկ լեռնային թնդանոթ, հինգ գնդացիր, քսանհինգ սնդուկ փամփուշտ և ձևոքի նռնակներ[26]։ Անկասկած, այս օգնությունը ապստամբության նկատմամբ ունեցած համակրանքից չէր։ Թուրքերը հաշվի էին առնում, որ ֆրանսիացիների դեմ երկրորդ ճակատ բացելով կամրապնդեին թուրքերի դիրքերը։

Սակայն թուրքերը անկեղծ չէին։ Նրանք բանակցում էին մի կողմից սիրիացիների հետ՝ ֆրանսիական ուժերի դեմ հանդես գալու համար, մյուս կողմից՝ ֆրանսիացիների հետ և պայմաններ ստեղծում սիրիական ապստամբությունը ճնշելու համար[27]։

Պարտիզանական կռիվները Սիրիայի հյուսիսային շրջաններում շարունակվում էին։ Ֆրանսիացիները մեծ կորուստներ էին կրում։ Ուստի նրանք փորձում են Իբրահիմ Հանանոյի դիմադրությանը վերջ տալ բանակցությունների միջոցով, նրան խոստանալով երկրորդական զիջումներ։ 1921 թ. գարնանը տեղի ունեցավ ֆրանսիական զինվորական ներկայացուցիչների հանդիպումը ապստամբության ղեկավարների հետ։ Գեներալ Կորուն ֆրանսիական կառավարության անունից Հանանոյին առաջարկում է դադարեցնել ապստամբությունը և պահանջում հանձնել պարտիզանների զենքերը[28]։ Հանանոն մերժում է այդ առաջարկը։ Ֆրանսիացիները նոր հարձակում են սկսում պարտիզանների դրաված վայրերի վրա։ Հանանոյի ներկայացուցիչը նորից գալիս է թուրքական երկրորդ բանակի հրամանատարի մոտ, զենք և զինամթերք խնդրելու։ Վերջինս հրաժարվում է ապստամբներին օգնություն ցույց տալուց, պատճառաբանելով, որ ֆրանս-թուրքական բանակցու-

---

[26] احسان هندی، كفاح الشعب العربی السوری، ص ٧١

[27] فارس زرزور، معارك الحرية فی سوريه، ص ٩٢–٩٣

[28] احسان هندی، كفاح الشعب العربی السوری، ص ٧٩،

Բյուններ են տարվում ֆրանսիական զորքերը Կիլիկիայից դուրս բերելու համար։

1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված ֆրանսո-թուրքական պայմանագրով Ֆրանսիան պարտավորվեց իր զորքերը դուրս բերել Կիլիկիայից և Ալեքսանդրետի սանջակին ինքնավարություն տալ, որի փոխարեն Թուրքիան ճանաչեց Սիրիայի բռնագրավումը Ֆրանսիայի կողմից[29]։

Չքավարարվելով սրանով, Թուրքիան դրդեց իր քաղաքացի և գործակալ Ասիմ Բեյին ապստամբների դեմ գործելու[30]։

Թուրք-ֆրանսիական ռազմական գործողությունների դադարեցումով օկուպանտները կարողացան մեծ թվով զորք կենտրոնացնել Հյուսիսային Սիրիայում։ Պարտիզանական ջոկատներին հետապնդող ֆրանսիական զորքերի թիվը հասավ 30 հազարի, որոնք դեներալ Գրանկուրի հրամանատարությամբ վերջիվերջո ճնշեցին ապստամբությունը[31]։

Հյուսիսի պարտիզանական մարտերում օկուպանտները 500-ից ավելի սպանված տվեցին։

1921 թ. արաբ պարտիզանները կռիվներ էին մղում ֆրանսիական պատժիչ ջոկատների հետ Կունեյտրա քաղաքի շրջակայքում, Դամասկոսից 63 կմ հարավ-արևմուտք[32]։ Նրանք հանկարծակի հարձակում գործելով, զինաթափ արեցին ֆրանսիական զինվորական ջոկատը, իսկ Կունեյտրայի պարետին սպանեցին։

Դեներալ Գուրոն Դամասկոսի պետության ղեկավար Հաքքի ալ-Ազմայի ուղեկցությամբ 1921 թ. հունիսին ուղևորվեց Կունեյտրա։ Դեռ քաղաքին չհասած պարտիզանները գնդակոծեցին Գուրոյի մեքենան[33]։ Սպանվեց թարգմանիչ սպան, ծանր վիրավորվեց Հաքքի ալ-Ազման։ Գնդապետ Ռոկրոյի գլխավորությամբ Դամասկոսից Կունեյտրա հասած պատժիչ ջոկատները մեծ ավերումներ կատարեցին հարևան գյուղերում։

1921 թ. հունիսին Ջեբել Դրուզի գյուղացիները հարձակվեցին շրջանի կենտրոն Սուեյդայում տեղավորված ֆրանսիական կայազորի վրա։

---

[29] René de Ferlet, La France puissance mandataire en Syrie et au Liban, Beyrouth, 1926, p. 51.

[30] v. احسان هندى، كفاح الشعب العربى السورى، ص

[31] *В. Луцкий,* Национально-освободительная война в Сирии, стр. 126.

[32] «Известия», 25. III. 1921.

[33] *Նույն տեղում, 6.IX.1921։*

Երկարատև մարտերից հետո պարտիզաններին 1921 թ. օգոստոսի 12-ին հաջողվեց գրավել Սուեյդան, որի վրա ֆրանսիական դրոշի փոխարեն սկսեց փողփողալ արաբական դրոշը[34]։ Սակայն, ապստամբների դեմ ուղարկվեց 3000 զինվորից բաղկացած պատժիչ խումբ գնդապետ Պոլեի գլխավորությամբ, որին և հաջողվեց կոտրել պարտիզանների դիմադրությունը և գրավել Սուեյդան։

Նույն տարվա սեպտեմբերին ապստամբության դրոշ բարձրացրին Եփրատ գետի հովտի բեդվին ցեղերը, որոնք գրավեցին շրջանի վարչական կենտրոն Դեյր էզ-Զորը։

Այս շրջանում ծավալված հակաիմպերիալիստական պայքարում առանձնահատուկ տեղ են գրավում 1922 թ. ապրիլին Դամասկոսում տեղի ունեցած ելույթները։ Դրանք նշանակալից են այն առումով, որ այստեղ առաջին անգամ ակտիվ մասնակցություն ունեցան բանվորները։ Հինդ օր անընդհատ տեղի էին ունենում ցույցեր, գործադուլներ և այլ բնույթի հակաիմպերիալիստական ելույթներ։ Աշխատավորական մասսաների հիմնական պահանջը գաղութային օկուպացիոն ռեժիմին վերջ տալն էր։ Դամասկոսում փակվեցին շուկաները, խանութները, ձեռնարկություններն ու արհեստանոցները, կանգ առավ տրանսպորտը։ Ֆրանսիական իմպերիալիստները կորցրել էին գլուխները։ Գեներալ Գուրոն հարկադրված Դամասկոսը հայտարարեց պաշարողական դրության մեջ և խաղաղ բնակչության դեմ նետեց տանկեր ու զրահապատ մեքենաներ, որոնք անխնա գնդակոծում էին ցուցարարներին։ Նրանցից շատերը մահացան և վիրավորվեցին[35]։ Մանդատային իշխանությունները ձերբակալեցին սիրիական ազգային բուրժուազիայի մի քանի աչքի ընկնող ղեկավարների՝ Աբդ ար-Ռահման Շահբանդերին, Հասան ալ-Հաքիմին, Սաիդ Հայդարին և ուրիշների[36]։

1922 թ. հուլիսին նորից ապստամբեցին Ջեբել Դրուզի գյուղացիները սուլթան Աթրաշի գլխավորությամբ։ Նրանք հարձակումներ գործելով ֆրանսիական զորքերի և հսկիչ կետերի վրա, գրոհով վերցրին Ջարուդ զինվորական պոստը, Իզրա գյուղի մոտ անգամ խփեցին մեկ ինքնաթիռ, Խիրբատ-Բուրդի մոտ պարտու-

[34] *N. Bouron*, Les Druzes, Histoire des Druzes et de la montagne Houranaise, Paris, 1930, p. 228.

[35] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 121.

[36] «Современная Сирия», стр. 138.

Բյան մատնեցին ֆրանսիական մի ջոկատի, սպանեցին բազմաթիվ սպաների և զինվորների։ Սակայն ֆրանսիական գերակշռող ուժերի ճնշման տակ ապստամբները հարկադրված էին ետ քաշվել ու թաքնվել լեռներում, որտեղից ժամանակ առ ժամանակ անհանգստացնում էին ֆրանսիական օկուպանտներին։

Հակաիմպերիալիստական ելույթներ տեղի ունեցան նաև Սիրիայի մյուս վայրերում։

1920—1925 թթ. ծավալված ազգային-ազատագրական պայքարի ժամանակ ֆրանսիացիները մեծ կորուստներ կրեցին։ Ֆրանսիական պաշտոնական տվյալներով այդ տարիներին սիրիական հայրենասերները ոչնչացրել են 5 հազար ֆրանսիական զինվոր ու սպա։ Ֆրանսիան հարկադրված էր Սիրիայում պահել 70 հազարանոց բանակ, որի ծախսերը 1919—1925 թթ., կազմել է 2 միլիարդ 595 միլիոն ֆրանկ[37]։

Սիրիական ֆաղաֆական նոր կազմակերպությունների հանդես գալը։ Ազգային-ազատագրական պայքարի թեժ պահին քաղաքական ասպարեզ դուրս եկան սիրիական ազգային մի շարք կազմակերպություններ ու կուսակցություններ։ Նրանց մի մասը ստեղծվեց երկրի ներսում, իսկ մյուս մասը՝ արտասահմանում։

1920 թ. հուլիսին, Դամասկոսի գրավումից հետո, «Հիզբ ալ-իթթիհադ աս-սուրի» («Սիրիական միասնություն») և «Հիզբ ալ-իստիքլալ ալ-արաբի» («Արաբական անկախություն») կուսակցությունները իրենց գործունեությունը տեղափոխեցին արտասահման՝ Կահիրե։ Սիրիայում արգելված էր քաղաքական կուսակցությունների գործունեությունը։ 1921 թ. ծննդում վերոհիշյալ կուսակցությունների նախաձեռնությամբ հրավիրվեց «Սիրիա-պաղեստինյան կոնգրես», որի աշխատանքներին մասնակցում էին նաև Լիբանանի ու Պաղեստինի արաբական կազմակերպությունների, ինչպես նաև Հյուսիսային և Հարավային Ամերիկայի սիրիական վտարանդիների չորս կազմակերպությունների ներկայացուցիչները։ Փաստորեն այդ կոնգրեսը կոչված էր որոշելու սիրիական բուրժուազիայի հետագա անելիքները։ Նա ընդունեց գործողության մի ծրագիր, որի վրա մեծ ազդեցություն թողեց Սիրիայում ծավալված հակաիմպերիալիստական պայքարը։ «Սիրիա-պաղեստինյան կոնգրեսը», որպես սիրիական ազգային բուրժուազիայի առջև կանգնած գլխավոր խնդիրներ, առաջադրեց հետևյալ պահանջնե-

[37] Նույն տեղում։

րր. 1. Սիրիայի, Լիբանանի և Պաղեստինի ազգային սուվերենիտետի և նրանց վերամիավորման իրավունքի ճանաչում, 2. օտարերկրյա օկուպացիոն զորքերի դուրս բերում Սիրիայից, Լիբանանից և Պաղեստինից, 3. արաբական երկրների բաժանման մասին դաշնի պայմանագրերի ոչնչացում, 4. մանդատի վերացում, 5. Սիրիայի, Պաղեստինի և Լիբանանի Ազգերի Լիգայի մեջ ընդունում և 6. Պաղեստինում հրեական ազգային օջախի մասին Բալֆուրի դեկլարացիան չեղյալ հայտարարել[38]:

Սիրիական ազգային բուրժուազիայի այս ծրագիրը, անկասկած, պարունակում էր առաջադիմական և հակաիմպերիալիստական պահանջներ, սակայն նրանում չէր նշված այդ ծրագիրը կենսագործելու ոչ մի միջոց: Կոնգրեսը ընտրեց մշտական գործող օրգան՝ «Սիրիա-պաղեստինյան կոնգրեսի գործադիր կոմիտե», որը հաստատվեց Կահիրեում: Կոմիտեն ժննում Ազգերի Լիգային կից հիմնեց մշտական պատվիրակություն Շեքիբ Արսլանի գլխավորությամբ: Այս պատվիրակության գործունեության հիմնական մեթոդը այն էր, որ նա անընդհատ աղերսագրեր և բողոքի դիմումներ էր ուղարկում Ազգերի Լիգային և եվրոպական պետություններին, ֆրանսիական գաղութարարների Սիրիայում կատարած գազանությունների դեմ և պահանջում էր վերոհիշյալ ծրագրի կենսագործումը: Սիրիական բուրժուազիայի էմիգրացիայում գտնվող քաղաքական կազմակերպությունները հիմնականում սահմանափակվում էին Ազգերի Լիգային հուշագրեր ուղարկելով: Թույլ էր նրանց կապը և ազդեցությունը երկրի ներսում: Այդ պատճառով էլ նրանք հետագայում իրենց տեղը զիջեցին բուն Սիրիայում կազմակերպված քաղաքական կուսակցություններին:

1924 թ. տեղի ունեցավ կարևոր իրադարձություն Սիրիայի և Լիբանանի քաղաքական կյանքում: Այդ թվականի հոկտեմբերին արաբ և հայ մարքսիստների՝ Ֆուադ Շիմալիի, Հ. Բոյաջյանի, Հ. Մատեյանի և ուրիշների նախաձեռնությամբ մարքսիստական և բանվորական խմբերը միավորվեցին և ստեղծվեց Սիրիայի կոմունիստական կուսակցություն: Նա զգալի գործունեություն ծավալեց բանվորների ու աշխատավորական մասսաների շրջանում: Կոմկուսը տպագրում ու տարածում էր թռուցիկներ ու կոչեր, իսկ 1925 թ. հուլիսից՝ «Ալ-Ինսանիյա» («Մարդկություն») թերթը[39]: *Սիրիայի կոմունիստական կուսակցությունը դարձավ աշխատավորական*

---

[38] سامى الكيالى، صراع فى سبيل القومية العربية، حلب ١٩٥٩، ص ٤٣

[39] «Новейшая история арабских стран», стр. 50.

մասսաների ճանաչված առաջնորդը և Սիրիայի ու Լիբանանի անկախության համար պայքարող ամենահետևողական քաղաքական ուժը։

Ֆրանսիայում իշխանության գլուխ անցած «ձախ բլոկի» կառավարությունը 1924 թ. նոյեմբերի 28-ին Վեյգանին ազատեց Սիրիայում և Լիբանանում գլխավոր կոմիսարի պաշտոնից և նրա փոխարեն նշանակեց գեներալ Սառռային։ Ֆրանսիայի նոր պրեմիեր-մինիստր է. Էրրիոն կողմնակից էր ավելի ճկուն քաղաքականության մանդատներում, գտնելով, որ միայն զենքի ուժով ու բռնություններով հնարավոր չէ կառավարել գաղութներն ու ենթամանդատային տերիտորիաները։ Այդ, այսպես կոչված, նոր կուրսի իրականացումը Սիրիայում հանձնարարվեց Սառռային, որը, ի տարբերություն հետադիմական և միապետական Վեյգանի, լիբերալ հայացքների տեր գործչի համբավ էր վայելում։

Սկզբնական շրջանում Սառռայը, իրոք, որոշ չափով մեղմացրեց բռնությունների ու ճնշումների քաղաքականությունը։ Սիրիայում վերացվեց ռազմական դրությունը, գլխավոր կոմիսարի 1925 թ. փետրվարի դեկրետով թույլատրվեց քաղաքական կուսակցությունների գործունեությունը և այլն։ Դրանից անմիջապես օգտվեցին սիրիական ազգային բուրժուազիայի գործիչները, որոնք 1925 թ. փետրվարին հիմնեցին «Հիզբ աշ-Շաաբ» («ժողովրդական») կուսակցությունը՝ Աբդ ար-Ռահման Շահբանդերի գլխավորությամբ[40]։ Նրա մեջ մտան համարյա բոլոր ականավոր սիրիական ազգային բուրժուական գործիչները։ Կուսակցությունն ընդունեց ծրագիր, որի հիմնական պահանջները հանդում էին հետևյալին. Սիրիայի ազգային սուվերենիտետի և միասնություն ճանաչում, անձի, մամուլի և միությունների ազատություն և կառավարման դեմոկրատական ձևի հաստատման իրավունք, ազգային արդյունաբերության պաշտպանություն, ժողովրդական կրթության սիստեմի բարեփոխում և այլն[41]։ Կուսակցությունը ձգտում էր այդ ծրագրի իրագործմանը հասնել «օրինական ճանապարհով ու միջոցներով»։ Կուսակցությունն իր կազմակերպություններն ուներ բացի Դամասկոսից, նաև Հալեպում, Հոմսում, Համայում և այլ վայրերում։ «Աշ-Շաաբը» հանդիսանում էր սիրիական ամենաազդեցիկ կուսակցություններից մեկը և մեծ դեր էր խաղում Սիրիայի քաղաքական կյանքում։

[40] S. Longrigg, Syria and Lebanon under French mandate, p. 151.

[41] В. Луцкий, Национально-освободительная война в Сирии, стр. 143.

1925—1927 թթ. ազգային-ազատագրական պատերազմի սկիզբը: *1920—1925 թթ. ծավալված ազդային-ազատագրական* *ելույթները նախերգանք հանդիսացան 1925—1927 թթ. պատե-* *րազմի, որը սիրիական ժողովրդի խոշորագույն ելույթն էր ֆրան-* *սիական մանդատի դեմ: Սիրիական ազգային հայրենասիրական* *ուժերը չէին հաշտվում մանդատի գոյության և Սիրիայի բաժան-* *ման փաստի հետ: Նրանք պահանջում էին Սիրիայի անկախության* *և միասնության ճանաչում: Այդ պահանջը դարձավ նոր ապստամ-* *բության գլխավոր պատճառը: Ապստամբության համար, որ* *սկսվեց Ջեբել Դրուզում և այնուհետև տարածվեց ամբողջ Սի-* *րիայում, անմիջական առիթ հանդիսացավ այն կոնֆլիկտը, որ* *ծագեց ֆրանսիական գլխավոր կոմիսարի և դրուզների ղեկավար-* *ների միջև Ջեբել Դրուզի նահանգապետ ընտրելու հարցի շուրջը:* *Ջեբել Դրուզի պետությունը ստեղծելիս ֆրանսիական իշխանու-* *թյունների և տեղական ֆեոդալական վերնախավի միջև կնքվեց* *մի համաձայնագիր, ըստ որի Ջեբել Դրուզի նահանգապետը պետք* *է լիներ տեղական դրուզցի ֆեոդալներից: Այդ համաձայնության* *հիման վրա Ջեբել Դրուզի նահանգապետ ընտրվեց տեղի ամենա-* *հարուստ և ազդեցիկ ֆեոդալ Աթրաշների ընտանիքի ներկայացու-* *ցիչ Սելիմ Աթրաշը:*

Սակայն 1923 թ., նրա մահից հետո Ջեբել Դրուզում նահան- *գապետի պաշտոնը հանձնվեց Սենեգալում ծառայած՝ ֆրանսիա-* *կան բանակի կապիտան Կարբիեին: Նա ահաբեկում էր բոլորին,* *դժտություն առաջացնում Աթրաշների տոհմի մեջ[42], ամենաչիզոր* *հանցանքի համար դրուզներին ծեծի ենթարկում ու բանտարկում,* *բոլորի ներկայությամբ «հանցանք» գործած գյուղացուն ծեծում* *ձեռնափայտով և ոտքով[43]: Կարբիեն պահանջում էր, որ իր շրջա-* *գայության ժամանակ գյուղերի ամբողջ բնակչությունը դուրս գար* *իրեն դիմավորելու որպես արևելյան սուլթանի: Այս ծիսակատա-* *րությունից խուսափող «խռովարար» ամեն մի գյուղ ենթարկվել էր* *թուրքական 50 ոսկի լիրա տուգանքի[44]: Սարատեգիական նպա-* *տակներով Ջեբել Դրուզում ճանապարհներ կառուցելու համար,* *նա գյուղացիներին բռնի քշում էր ծանր աշխատանքներ կատարե-* *լու[45]: Նույնպիսի դաժանությամբ Կարբիեն հարկեր էր հավաքում:*

---

[42] احسان هندى، كفاح الشعب العربى السورى، ص ١١٣

[43] امين سعيد، الثورة العربية الكبرى ج. ٣، ص ٢٩٥

[44] Նույն տեղում, էջ 294:

[45] ԳԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, գ. 1:

Ֆրանսիական զորքերը ներխուժում էին գյուղ, բռնություններ կիրառում գյուղացիների նկատմամբ, նրանցից պատանդներ վերցնում, մինչև որ ավարտվեր հարկահավաքը[46]։ Իր նահանգապետության տարիներին Կարբիեն բռնի կերպով սկսեց համայնապատկան հողերի բաժանում, որը խոր դժգոհություն առաջ բերեց գյուղացիության շրջանում[47]։

Կրոնական մի տոնի առթիվ Ջեբել Դրուզի կենտրոնում, Սուէյդայում, տեղի ունեցավ հանդիսավոր շքերթ։ Կարբիեն այն համարեց հակաֆրանսիական քաղաքական ցույց և հրամայեց կրակել ցուցարարների վրա։

Օկուպանտների այս ստոր արարքը կատաղեցրեց բոլոր դրուզներին և նրանք ոտքի ելան իրենց ստրկացնողների դեմ։

1925 թ. մայիսին, երբ կապիտան Կարբիեն Ֆրանսիա մեկնեց արձակուրդի, դրուզ մեծամեծներից մի պատվիրակություն դիմեց գերագույն կոմիսար Սառռային, խնդրելով Կարբիեին Ջեբել Դրուզից տեղափոխել։ Սառռայը մերժում է դրուզների պահանջը, չի ընդունում պատվիրակներին և կարգադրում է անմիջապես վերադառնալ իրենց տեղերը, սպառնալով աքսորել բոլորին։ Պատվիրակները, ատելությամբ լցված Սառռայի հանդեպ, վերադառնում են Ջեբել Դրուզ[48]։

Ֆրանսիական իշխանությունները որոշեցին Կարբիեին թողնել Ջեբել Դրուզի նահանգապետի պաշտոնում։ Դրանով ֆրանսիական իմպերիալիստները նորից ապացուցեցին, որ իրենք կողմնակից են կառավարման բռնի մեթոդների և մտադիր չեն հաշվի առնելու ժողովրդի պահանջները։

Ֆրանսիացի կամ դրուզ նահանգապետ նշանակելով, իհարկե չէր կարելի հաղթահարել արմատական այն հակասությունները, որ գոյություն ունեին ֆրանսիական իմպերիալիստների և սիրիական ժողովրդի միջև։ Ֆրանսիական օկուպանտները երբեք մտադիր չէին հեռանալու Սիրիայից, հետևաբար, հակաիմպերիալիստական նոր և մեծ ապստամբությունը Սիրիայում անխուսափելի էր։

Երբ Ջեբել Դրուզում լուր ստացվեց, թե Կարբիեին հանելու մասին դրուզ պատվիրակության պահանջը մերժվել է, 400 դրուզներ սուլթան Աթրաշի գլխավորությամբ որոշեցին պաշտպանել

---

[46] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 145.

[47] Նույն տեղում։

[48] امين سعيد، الدولة العربية المتحدة، ص ٣٩٥

իրենց անկախությունը։ Սուլթան Աթրաշը ապստամբության ազդանշան տվեց։

1925 թ. հուլիսի 18-ին սուլթան Աթրաշը մի խումբ հեծյալներով, շարժվեց շրջանային կենտրոն Սալխադ փոքր քաղաքի ուղղությամբ։ Ճանապարհին բոլոր գյուղերի տղամարդիկ միանում էին ապստամբներին։ Ամբողջ ընտանիքներ, ներառյալ և կանայք զենք էին վերցնում[49]։ Դրուզները Սալխադը գրավեցին հուլիսի 20-ին[50]։

Սալխադից հյուսիս, ալ-Կաֆր գյուղի մոտ հուլիսի 21-ին տեղի ունեցավ դրուզների առաջին ճակատամարտը ֆրանսիական զորքերի հետ։ Դրուզները շրջապատում և ոչնչացնում են թշնամու զորքի մեծ մասը, իսկ մնացածները փախչում են Սուեյդա։ Այդ նույն օրը երևկոյան տեղի կայազորը թողնում է քաղաքը և ամրանում քաղաքի սահմաններից դուրս գտնվող միջնաբերդում։

Սուեյդայի պաշարումը։ Ապստամբները հուլիսի 28-ին մտան Սուեյդա և շրջապատեցին բերդը։ Նրանց առաջին գրոհները բերդում փակված ֆրանսիական 500 զինվորները ետ մղեցին։

Ապստամբներին հաջողվեց իրենց վերահսկողությունը հաստատել ամբողջ Ջեբել Դրուզի տերիտորիայի վրա։

Սուեյդայի պաշարումը մեծ շփոթություն առաջացրեց ֆրանսիական հրամանատարության շրջանում։ Սառռայը վճռեց ռազմական բոլոր միջոցառումներով ճնշել ապստամբությունը։ 1925 թ. հուլիսի վերջերին նա օժանդակ ուժեր ուղարկեց Ջեբել Դրուզ։ Պատժիչ այդ ուժերը բաղկացած էին 3000—4000 մարդուց։ Նրանց մեջ մտնում էին սենեգալցի նեգրերի երկու վաշտ, մադագասկարցիների 2 վաշտ, Մարոկկոյի և Թունիսի արաբների 2 էսկադրոն, սիրիացիների՝ գլխավորապես չերքեզներից և քրդերից կազմված 5 վաշտ։ Այդ ուժերի մեջ մտնում էին նաև ֆրանսիական 5 հրաձգային վաշտ, զրահապատ մեքենաների 2 էսկադրոն, լեռնային հրետանու մեկ մարտկոց, երկու հրետանային դասակ և այլն[51]։

1925 թ. օգոստոսի 1-ին ֆրանսիական զորամասերը գեներալ Միշոյի հրամանատարությամբ դուրս եկան Սուեյդայից 35 կմ արևմուտք գտնվող Իզրա կայարանից և գրավելով Բուսրա ալ-Հա-

---

[49] «Революционный Восток», 1928, № 3, стр. 286.

[50] احسان هندى، كفاح الشعب العربى السورى، ص ١١٤.

[51] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 159.

րիր գյուղը, շարժվեցին Սուեյդա։ Օգոստոսի 3-ի դիշերը, 1200 մարդուց բաղկացած դրուզների հետևակ և հեծյալ զորամասերը հարձակվեցին ֆրանսիական զորասյան վրա։ Ասլատամբները վատ էին դինված։ Նրանց սպառազինությունը հիմնականում սովորական հրացաններ և սառը զենքերն էին[52]։ Դրուզները հանկարծակիորեն խրվեցին ֆրանսիական զորասյան մեջ, կտրեցին նրա առաջապահ մասը վերջապահ մասից և խուճապ առաջացրին թշնամու զորքի մեջ[53]։ Չկարողանալով դիմադրել դրուզներին, թշնամու զորքը փախուստի է դիմում։ Գեներալ Միշոն հաղիվ է ազատվում գերի ընկնելուց։ Ֆրանսիացիների կորուստները կազմում էին 1200—1600 մարդ։

Այս խայտառակ պարտությունից հետո օկուպանտները փորձեցին ավիացիայի օգնությամբ ճնշել ապստամբությունը։ Սակայն Չեբել Դրուզի լեռնային պայմաններում օդային ռմբակոծությունը մեծ արդյունք չէր տալիս։ Այսպիսով, Սուեյդայի պաշարումը վերացնելու համար ֆրանսիացիների ձեռնարկած ջանքերը անհաջողության մատնվեցին։

Սուեյդայի մոտ դրուզների տարած հաղթանակը մեծ խանդավառություն առաջ բերեց ամբողջ Սիրիայում։ Դութայի շրջանի (Դամասկոսի օազիս) գյուղացիները իմանալով այս հաղթանակի մասին, քանդեցին Կիսվայի կամուրջը, Դամասկոսից Չեբել Դրուզ տանող ճանապարհի վրա։ Քոչվոր արաբների ջոկատներ երևացին Դամասկոսի շրջակայքում, հուզումներ առաջացան Հոմսի, Համայի և երկրի հյուսիսային շրջաններում։ Շարժումը տարածվեց Դեյր էզ-Զորի շրջանը։ Ամբողջ աշխարհն իմացավ Չեբել Դրուզի ապստամբության մասին, իսկ ֆրանսիական իմպերիալիստները փորձում էին գործը պատկերել որպես տեղական միջադեպ։

Դրուզների ապստամբությունը համակրանք առաջացրեց նաև Ֆրանսիայի առաջադիմական շրջաններում, հատկապես կոմունիստների մոտ։ Ֆրանսիայի կոմկուսի կենտկոմի օրգան «L'Humanité»-ն հանդես եկավ «Կորչի պատերազմը Սիրիայում», «Ֆրանսիական զորքերի եղբայրացում ճնշված ժողովուրդների հետ», «Իմպերիալիստական մանդատների վերացում» կոչերով[54]։

---

[52] احسان هندی، كفاح الشعب العربی السوری، ص ۱۱۹

[53] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 169.

[54] „L'Humanite", 10.8.1925.

Թևրիքը իր էջերում մերկացնում էր ֆրանսիական իմպերիալիստների վարած քաղաքականությունը Սիրիայում, պահանջում դադարեցնել պատերազմը և անկախություն տալ Սիրիային։

Դեներալ Միշոյի զորքերի ջախջախումից հետո Սառռայը բանակցություններ մեջ մտավ դրուզ առաջնորդների հետ, հաշտության առաջարկով։ Նրա նպատակն էր խանգարել դրուզների առաջխաղացումը դեպի հյուսիս, Դամասկոսի ուղղությամբ, և երկրորդ, ժամանակ շահել Սիրիա օժանդակ ուժեր տեղափոխելու համար։

Սառռայը բանակցությունների համար դրուզ շեյխերի մոտ ուղարկեց Լիբանանի մի խումբ դրուզ ֆեոդալների, որոնք Ջեբել Դրուզի ապստամբների հետևյալ պահանջներով վերադարձան Բնյրութ։ Դրուզները որպես բանակցությունների նախնական պայման պահանջում էին ազատել Թադմոր աքսորված ուղը դրուզ ղեկավարներին. նա կանչել կապիտան Կարբիեին։ Այս պայմանները ընդունվելուց հետո, դրուզները պահանջում էին. 1. ճանաչել Ջեբել Դրուզի անկախությունը, 2. ֆրանսիայի զինվորական և քաղաքացիական պաշտոնյաներին հեռացնել երկրից, 3. ֆրանսիական զորքերի կատարած ավերումների համար հատուցում տալ, 4. դրուզներից ոչ ոք չպիտի պատժվի և զենքերը չպիտի բռնագրավվեն[55]։

Սառռայը համաձայնվեց աքսորից ազատել դրուզ ղեկավարներին և նա կանչել Կարբիեին, որին փոխարինեց կապիտան Ռայնոն։ Սակայն նա միաժամանակ իր հակառաջարկները ներկայացրեց դրուզներին. 1. վճարել ռազմատուգանք 5 հազար թուրքական լիրայի գումարով, 2. փոխհատուցել Սուէյդայի վաճառականներին, ապստամբության հետևանքով կրած վնասների համար, 3. վերադարձնել ֆրանսիացիներից գրավված զենքերը[56]։ Սուլթան Աթրաշը մերժեց ֆրանսիական պահանջները։ Ռազմատուգանք վճարելու Սառռայի պահանջին դրուզները պատասխանում են ֆրանսիական ավիացիայի ավերած գյուղերը Ֆրանսիայի հաշվին վերականգնելու պահանջով։ Զենքերը հանձնելու առաջարկին դրուզները պատասխանում են զենքերը իրենց ձեռքերում պահելու և ժողովրդին զինելու պահանջով։ Բացի սրանից դրուզները այլևս չեն բավարարվում ֆրանսիական նահանգապետի իշխանության

---

55 امين سعيد، الثورة العربية الكبرى، ج ٣، ص ٣٠٧

56 Նույն տեղում։

տակ իրենց տրվելիք ինքնավարությամբ, և պահանջում են ամբողջ Սիրիայի անկախությունը[57]։

Աթրաշի և դրուզ ղեկավարների քաղաքականության մեջ տեղի ունեցած այս փոփոխությունը՝ ամբողջ Սիրիայի անկախության պահանջի առաջադրումը, բացատրվում է նրանով, որ ապստամբությունը տարածվել էր ամբողջ Սիրիայում և ընդունել համազգային բնույթ։ Դրան նպաստեցին նաև երկու հանգամանք։ Սառռայի պահանջները, որոնք ցույց տվեցին, որ ֆրանսիացիները, չնայած պարտությանը, չեն ուզում հրաժարվել իրենց իմպերիալիստական քաղաքականությունից, և սերտ շփումը ամստամբության ղեկավարների և «աշ-Շաաբ» կուսակցության ղեկավարների միջև։

Ապստամբության ղեկավարությունը անհրաժեշտ համարեց քաղաքական ընդհանուր ճակատ կազմել Դամասկոսի ազգային բուրժուական գործիչների հետ, որոնց գլխավորում էր դոկտոր Աբդ առ-Ռահման Շահբանդերը, և միացյալ ծրագիր մշակել երկրի իրավունքները պաշտպանելու համար։ 1925 թ. օգոստոսի 21-ին, «աշ-Շաաբ» կուսակցության ղեկավարների գաղտնի խորհրդակցությունում վերջնականապես որոշվեց միանալ դրուզներին և ակտիվ մասնակցություն ունենալ ապստամբությանը[58]։

Ամբողջ Սիրիայի անկախության համար պայքարի գաղափարը իր արտահայտությունը գտավ սուլթան Աթրաշի 1925 թ. օգոստոսի 23-ին հրապարակած մանիֆեստում՝ ուղղված բոլոր սիրիացիներին։ Այս մանիֆեստում Աթրաշը կոչ էր անում սիրիացիներին զենքի դիմել օտար տիրապետությունը վերացնելու համար։ Մանիֆեստում շարադրված էին հետևյալ պահանջները. 1. Սիրիայի միասնությունը, նրա առափնյա և ներքին մասերով։ Սիրիական արաբական միասնական պետության լրիվ անկախության ճանաչում։ 2. Ազգային կառավարության ստեղծում, որը կհրավիրի սահմանադիր ժողով երկրի հիմնական օրենքը մշակելու համար։ 3. Օկուպացիոն զորքերի էվակուացիա Սիրիայից և ազգային բանակի ստեղծում։ 4. Ֆրանսիական հեղափոխության սկզբունքների և մարդու իրավունքների հաստատում հանուն ազատության, հավասարության և եղբայրության[59]։

---

[57] „Известия", 3.XI.1925, «Ժամանակ», 26.VIII.1925։

[58] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 168.

[59] Նույն տեղում, էջ 170։

Մանիֆեստում առաջադրված խնդիրները կենսագործելու համար անհրաժեշտ էր, որ ապստամբությունը դուրս գար Ջեբել Դրուզից, ընդգրկեր ամբողջ Սիրիան և պայքարեր երկրի քաղաքական և վարչական կենտրոն հանդիսացող Դամասկոսի գրավման համար։

Առաջին մարտերը Դամասկոսի տակ։ Ապստամբությունը ամբողջ Սիրիայում ընդարձակելու և Դամասկոսը գրավելու համար «աշ-Շաաբ» կուսակցության ղեկավարներ Շահբանդերը, Ջամիլ Մարդամը, Սաիդ ադ-Դին Մուայյադը օգոստոսի 23-ին Ջեբել Դրուզի Քաֆր ալ-Լիհա գյուղում հանդիպեցին սուլթան Աթրաշի և շեյխ էմիր Համդիի հետ։ Որոշում ընդունվեց գործողությունների լրիվ համաձայնեցման մասին։ Նրանք պայմանավորվեցին առանց փոխադարձ համաձայնության սեպարատ հաշտություն չկնքել ֆրանսիացիների հետ։ Միևնույն ժամանակ որոշվեց հարձակվել Դամասկոսի վրա[60]։ Այդ ընթացքում ապստամբությունը արագ տարածվել էր Դամասկոսի շրջակայքում և ապստամբները շարունակ հարձակումներ էին կատարում մայրաքաղաքի արվարձանների վրա, որը տագնապալից իրադրություն էր ստեղծել Դամասկոսում։ Վախենալով քաղաքում ծագելիք ապստամբությունից, գինվորական իշխանությունները կատարեցին մի շարք ձերբակալություններ և քաղաքում պաշարողական դրություն մրցըրին[61]։ Օգոստոսի 24-ին պարտիզանական ջոկատները, թվով 1500 մարդ, շարժվում են դեպի Դամասկոս, սակայն, Սառայը խափանում է նրանց պլանը։ Ֆրանսիական հրամանատարությունը նախօրոք տեղյակ էր ապստամբների առաջխաղացման մասին, և վերջիններս զրկվեցին հարձակման հանկարծակիությունից օգտվելու հնարավորությունից։ Ֆրանսիական հրետանին և ռազմաօդային չորս միավորումներ ոմբակոծում են ապստամբների դիրքերը[62]։ Ալ-Քիսվա գյուղի մոտ ապստամբները կատաղի մարտեր են մղում գնդապետ Մասիեի հրամանատարությամբ Դամասկոսից եկած ուժերի հետ և մեծ վնասներ պատճառում թշնամուն, որից հետո Դամասկոսից եկած նոր ուժերի ճնշման տակ նահանջում են դեպի արևելք։

---

[60] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 179.

[61] «Новейшая история арабских стран», стр. 51.

[62] احسان هندی، كفاح الشعب العربی السوری، ص ۱۳۰.

Այսպիսով, Դամասկոսը գրոհով գրավելու ապստամբների առաջին փորձը վերջացավ անհաջողությամբ։ Դամասկոսի վրա հարձակումը կարող էր պսակվել հաջողությամբ, եթե պարտիզանների հարձակմանը զուգընթաց Դամասկոսի ներսում, ինչպես ենթադրվում էր, ապստամբություն բարձրացվեր։ Սակայն այդ բանը տեղի չունեցավ, որովհետև «աշ-Շաաբ» կուսակցությունը հույսը դրել էր դամասկոսցիների տարերային ելույթի վրա և ըստ էության ոչինչ չէր արել ապստամբության կազմակերպման և նախապատրաստման համար։

Դամասկոսի տակ տեղի ունեցած մարտերից հետո ֆրանսիական հրամանատարությունը ուժեղացնում է օդային հարձակումները գյուղերի վրա։ Պարտիզաններին համակրելու մեջ կասկածվող գյուղերը ենթարկվում են մեծ ռազմատուգանքների։ Սեպտեմբերի սկզբներին Հաուրանի Մարջանիա գյուղում պարտիզանները վիրավորում են ֆրանսիական գեներալ Սուլիենին, որից զազազած ֆրանսիական զորքերը ավերում են ամբողջ գյուղը, կենդանի մնացած գյուղացիները անցնում են Ջեբել Դրուզ ու միանում ապստամբներին[63]։ Ֆրանսիական զինվորական դատարանը մահապատժի է ենթարկում տասնմեկ արաբների, որոնք մեղադրվում էին ֆրանսիական երկու սպայի սպանության մեջ[64]։ Միևնույն ժամանակ իշխանությունները հայտարարեցին, որ սուլթան Աթրաշին հետևողները պիտի պատժվեն, նրանց գյուղերը պիտի այրվեն և ապստամբության համար արյունով պիտի հատուցեն[65]։

Սակայն սիրիական հայրենասերները, չնայած այդ բռնություններին, շարունակում էին պայքարը։ Օգոստոսի վերջերին դրուզները հարձակումներ են գործում Դամասկոսից 20 կմ վրա գտնվող ֆրանսիական պահակակետերի և Դամասկոս-Դերաա երկաթուղու վրա, քանդում են Խուրբաթ ալ-Դազալա և Իզրա կայարանների միջև եղած երկաթուղային կամուրջը[66]։ Նորից հուզումներ առաջացան Հալեպում[67]։ Ալեքսանդրետում քոչվոր արաբները Ռամազան Շալլաշի ղեկավարությամբ հարձակվեցին Դամասկոս-Բաղդադ ճանապարհի վրա, ոչնչացրին թշնամու պահապան զինվորներին և իրենց հսկողությունը հաստատեցին այդ շրջանում։

---

[63] امين سعيد، الثورة العربية الكبرى، ج. ٣، ص ٣٢١

[64] «Заря Востока», 24. IX. 1925.

[65] «Известия», 10. IX. 1925.

[66] „The Times", 31.VIII.1925.

[67] „Le Temps", 27.VIII.1925.

Այս բոլոր գործողությունները Դամասկոսը շրջապատելու նախապատրաստություններ էին։

Ապստամբության այս էտապում նրա մասնակիցների հիմնական մասսան Ջեբել Դրուզի և Հաուրանի գյուղացիներն էին, ինչպես նաև սիրիական անապատի բեդվինները։ Ապստամբությանն իրենց լրիվ համակրությունն էին հայտնում աշխատավորական մասսաները։ «Այդ պայքարում,— գրում է Վ. Լուցկին,— ակտիվ մասնակցում էին սիրիական բանվորները և նրանց ավանգարդը հանդիսացող սիրիական կոմունիստները»[68]։

Սակայն պարտիզանական խմբերը դեռևս ղեկավարում էին ֆեոդալները և բեդվին շեյխերը, ինչպես օրինակ՝ սուլթան Աթրաշը, «աշ-Շաաբ» կուսակցության ղեկավարներից Նասիբ Բաքրին, բեդվին ցեղի առաջնորդ Ռամազան Շալաշը և ուրիշներ։ Ինչ վերաբերում է ազգային բուրժուազիային, ապա ապստամբության այս էտապում նրա մի մասը բոլորովին չմասնակցեց ապստամբությանը, իսկ մյուս մասը, թեև միացավ ապստամբությանը, նպատակ ունենալով օգտագործել այն իր շահերի համար, սակայն անմիջականորեն չմասնակցեց պարտիզանական պայքարին[69]։ Սիրիական բուրժուազիայի շատ ներկայացուցիչներ, որոնք ապստամբության ժամանակ գտնվում էին Պաղեստինում, զանազան պատճառներով հրաժարվեցին մասնակցել պայքարին, իսկ բուրժուազիայի ներկայացուցիչների գլխավորած «Սիրիա-Պաղեստինյան կոնգրեսի» պատվիրակությունը սահմանափակվում էր նրանով, որ կահիրեից անընդհատ բողոքներ էր ուղարկում Ազգերի Լիգային և մեծ պետություններին Սիրիայի դրության մասին, իսկ վերջինս ոչ մի միջոց ձեռք չէր առնում ապստամբներին օգնելու համար։

Այսպիսին էր դրությունը Սիրիայում 1925 թ. օգոստոսի 24-ի դեպքերից հետո։ Այդ ժամանակ ֆրանսիական զինվորական իշխանությունները իրենց առջև խնդիր են դնում ապատել Սուեյդայում շրջապատված ֆրանսիական կայազորը և նոր ուժերով հարձակման անցնել ամբողջ Ջեբել Դրուզում։ Ֆրանսիական կառավարությունը ետ կանչեց Ջեբել Դրուզում պարտություն կրած գեներալ Միշոյին և Սիրիայում զինված ուժերի ընդհանուր հրամանատար նշանակեց գեներալ Գամելենին։

---

[68] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 184.

[69] Նույն տեղում, էջ 184—185։

Իշրա կայարանը վերածվեց ֆրանսիական ռազմական մեծ բազայի։ Դամասկոսի շրջանում կենտրոնացվեցին ֆրանսիական, մարոկկոյական, սենեգալյան հետևակ և հեծյալ զորամասեր, երկու հրետանային մարտկոց, ծանր գնդացիրներ, մեկ տանկային վաշտ, ռազմա-օդային նավատորմի ստորաբաժանումներ, ռազմամթերք, բենզին և չուր տեղափոխող ավտոմեքենաների շարասյուներ և այլ օժանդակ ուժեր[70]։ Ֆրանսիական զորքերի ընդհանուր թիվը այստեղ հասավ 10 հազարի։

Ջեբել Դրուզի վրա ֆրանսիական հարձակման ձախողումը։ Սուեյդայի վրա արշավանքի պատրաստված զորամասերը, Գամելենի հրամանատարությամբ, 1925 թ. սեպտեմբերի 23-ի առավոտյան շարժվեցին Սուեյդա։ Քաղաքից դեպի արևմուտք, Թել ալ-Հադիդ գյուղի մոտ, 1500 ապստամբներ հերոսաբար դիմադրելով, կանգնեցրին Քշնամու առաջխաղացումը, սակայն ֆրանսիական զորքերին օգնության հասած տանկերը և հեծելազորը ստիպեցին դրուզներին նահանջել։ Սեպտեմբերի 24-ին ֆրանսիական զորքերը գրավեցին Սուեյդան, որի բնակչությունը ամբողջությամբ հեռացել էր քաղաքից։ Սակայն սեպտեմբերի 25-ի երեկոյան դրուզների չոկատները երեք կողմից շրջապատում են Սուեյդան[71]։ Ջրի և մթերքների պակասությունը, դրուզների կողմից Սուեյդան ֆրանսիական թիկունքից կտրելու երկյուղը, մյուս կողմից էլ ապստամբների ռազմական տակտիկայի դեմ պայքարելու անզորությունը Գամելենին ստիպում են իր զորամասերը դուրս բերել Ջեբել Դրուզից։ Նա լավ էր հասկանում, որ դրուզների թևային և թիկունքային հարձակումները մեծ վտանգ էին սպառնում իր զորքերին։ Վերադասավորելով իր ուժերը, Գամելենը հոկտեմբերին վերսկսեց իր հարձակումները Ջեբել Դրուզի վրա։ Նրան հաջողվեց գրավել միայն մի քանի գյուղ[72]։ Ավելին անել հնարավոր չէր։ Հանդիպելով դրուզցիների ուժեղ դիմադրությանը, նա երկրորդ անգամ ստիպված եղավ հեռանալ Ջեբել Դրուզից և ամրանալ Հաուրանում։ Իր զորամասերը կենտրոնացնելով Հաուրանի բազաներում, Գամելենը ծրագրում էր հաջորդ տարվա գարնանը ընդհանուր հարձակում սկսել ապստամբությունը վերջնականապես ճնշելու համար[73]։

---

[70] احسان هندى، كفاح السورى العربى، ص ١٣١

[71] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 200.

[72] *Նույն տեղում, էջ 203։*

[73] *Ch. Andrea*, La Revolte druze et l'insurrection de Damas, 1925—1926, Paris, 1937, p. 70.

Ջեբել Դրուզի վրա ֆրանսիական զորքերի երկրորդ հարձակման ժամանակ խոշոր ապստամբություն սկսվեց Համա քաղաքում։ Այն կազմակերպվել էր սուլթան Աթրաշի և Շահբանդերի գիտությամբ ու համաձայնությամբ[74]։ Ապստամբած բեդվինները հոկտեմբերի 4-ի երեկոյան մտան Համա։ Սառռայը հեռագրով պահանջեց Դամասկոսից անմիջապես իր զորամասերը տեղափոխել Համա[75]։ Ջեբել Դրուզից ֆրանսիական ուժերի հեռացումը հնարավորություն տվեց դրուզներին նախապատրաստվելու նոր մարտերի։

Բեդվին ցեղերի Համա մտնելուց հետո քաղաքի բնակչությունը ապստամբվեց և միացավ նրանց։ Ապստամբները հարձակվեցին նահանգապետության շենքի վրա և, ֆրանսիական պահակախմբի դիմադրությունը ընկճելով, գրավեցին զենքի պահեստը, ջարդեցին բանտի դռները և ազատեցին 500 բանտարկյալների[76]։ Հոկտեմբերի 5-ին, ֆրանսիացիները կենտրոնացնելով իրենց ուժերը անցան հարձակման։ Երեկոյան ֆրանսիացիները ներխուժեցին քաղաք։ Համան ենթարկվեց հրետանային և օդային ռմբակոծման, որի ժամանակ սպանվեց մի քանի հարյուր մարդ[77]։

Ապստամբությունը ընդգրկում է նորանոր շրջաններ։ Հոկտեմբերի սկզբներին Հալեպի շրջանի գյուղացիները շրջապատում են Հալեպը[78]։ Բեդվին ջոկատները հարձակումներ են կատարում Համա-Հալեպ երկաթուղագծի վրա։ Հոկտեմբերի վերջերին սուլթան Աթրաշի եղբայր Զեյդ Աթրաշի գլխավորությամբ գործող ջոկատը հարձակվում է Ռայյակ քաղաքի վրա, նպատակ ունենալով կտրել Բեյրութ-Դամասկոս երկաթուղային հաղորդակցությունը, որտեղից նորանոր ուժեր էին ստանում ֆրանսիական ռազմամոլները։ Այսպիսով, ամբողջ Սիրիան բռնկված էր ապստամբությամբ, որի դեմ օկուպանտներն անզոր էին պայքարելու։

Սիրիական ժողովրդի մղած ազգային-ազատագրական պատերազմի այս գոտեմարտում կարևոր դեր խաղաց Սիրիայի կոմունիստական կուսակցությունը։ Ջեբել Դրուզի ապստամբության բուռն շրջանում կոմկուսակցությունը ապստամբների հետ համե-

---

[74] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 206.

[75] احسان هندى، كفاح الشعب السورى العربى، ص ١٢٥

[76] Նույն տեղում, էջ 94։

[77] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 210.

[78] «Правда», 23. X. 1925.

րաշխության և նրանց անմիջական օգնության ցույց տալու շարժում կազմակերպեց։ Կոմունիստներից կազմված կոմիտեն կապ հաստատեց ապստամբության ղեկավարների ներկայացուցիչների հետ և նրանց հայտնեց կոմկուսակցության որոշումը՝ ապստամբությանը աջակցելու մասին։ Կոմկուսը հակաիմպերիալիստական ագիտացիա էր տանում բնակչության մեջ, դեղորայք էր առաքում ապստամբներին[79]։

Կոմկուսը մեծ աշխատանք է տարել նաև Սիրիայում գործող ֆրանսիական բանակի զինվորների մեջ։ Ուրիշի ձեռքերով կռվելու մեթոդին հետևելով, իմպերիալիստները հնձյալ ջոկատներ էին կազմել Հյուսիսային Աֆրիկայի տեղացիներից ու Սիրիա ուղարկել ապստամբների դեմ կռվելու համար։ Սիրիայի կոմունիստները ֆրանսերեն և արաբերեն լեզուներով հրապարակած թռուցիկներում կոչ էին անում նրանց հրաժարվել ապստամբների դեմ կռվելուց և եղբայրանալ նրանց հետ[80]։

Սիրիայի կոմկուսի կենտկոմը հրահանգ ուղարկեց նաև Անտիոքի կուսակցական բջիջներին, նրանց առջև խնդիր դնելով խափանել հայ երիտասարդներին ֆրանսիական բանակում զինվորագրելու գործը։ Հակաիմպերիալիստական թռուցիկները փակցվել էին Անտիոքի խորբեկ գյուղի եկեղեցու պատերին[81]։

Ֆրանսիական գաղութարարները արգելեցին կոմկուսի գործունեությունը, և նա անցավ ընդհատակ։ Սկսվեց հալածանքը կոմունիստների և նրանց համակրողների դեմ, կատարվեցին մի շարք ձերբակալություններ։ Կոմունիստական գործունեության և բանակում քայքայիչ աշխատանք տանելու մեղադրանքով ֆրանսիական իշխանությունները ձերբակալեցին Սիրիական կոմունիստական կուսակցության մի շարք ղեկավարների, այդ թվում Ֆուադ Շիմալիին, Հ. Մատեյանին, Հ. Բոյաջյանին, Թելալյանին և ուրիշների։

Հայերի դիրքը ազգային-ազատագրական պատերազմի ժամանակ։ *Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտասարդ թուրքերի կազմակերպած կոտորածից փրկված հայերի մի հոծ բազմություն հանգրվան գտավ Սիրիայում։ Սիրիայում հավաքված մոտ հարյուր հազար հայության մեծամասնությունը համախմբված էր վրան-գաղթակայաններում և իր գոյությունը անցկացնում էր կիսաքաղց և կիսամերկ վիճակում։*

---

79 *ՀՍՍՀ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի արխիվ, դ. 2, վ. 3։*

80 *«Ալ-Ախբար» (الاخبار), Բեյրութ, 15.XII.1963։*

81 *ՀՍՍՀ ԳԱ Ա՛ի արխիվ, դ. 2, վ. 3։*

Արաբ ժողովրդի ցույց տված մշտական հոգատարության շնորհիվ դպալիորեն բարելավվեց հայերի տնտեսական վիճակը։ Համաստարիմ մնալով իրենց երկրորդ հայրենիքին և խորացնելով արաբ ժողովրդի հետ եղբայրական կապերը, հայերը զգալի ավանդ մուծեցին նաև Սիրիայում ծավալված ազատագրական, հակաիմպերիալիստական շարժումների զարգացման գործում, որով նոր էջ բացվեց հայ և արաբ ժողովուրդների հարաբերություններում։ Հայերը ստեղծեցին ապստամբներին աջակցող հեղափոխական կոմիտե[82], Այս կոմիտեն հակաիմպերիալիստական լայն ագիտացիա էր տանում հայ բնակչության շրջանում, դեղորայք էր ձեռք բերում և առաքում ապստամբներին[83] և այլն։

1925 թ. օգոստոսի 24-ին, երբ արաբ և դրուզ ապստամբները մոտենում էին Դամասկոսին, ֆրանսիական իշխանությունները սկսեցին զենք բաժանել տեղի քրիստոնյաներին՝ մարոնիթներին, հույներին և հայերին։ Այս կապակցությամբ հիշատակության արժանի է Սիրիայի հայերի դերը իր ազատության համար մարտնչող արաբ ժողովրդի հանդեպ։ Դամասկոսի հայոց առաջնորդը մերժեց հայերին զենք բաժանելու առաջարկը, ասելով, թե հայերը բարեկամ են տեղացիներին[84]։ Հայերին զենք բաժանելու ավանտյուրիստական փորձին ձեռնամուխ լինելով, օկուպանտները ձգտում էին արաբ ժողովրդին թշնամացնել հայերի հետ, սիրիական ժողովրդի ազատագրական պայքարը վերածել ազգամիջյան կռվի, որպեսզի ֆրանսիական բանակը իրավունք ունենար մշտապես մնալու և միջամտելու Սիրիայի ներքին գործերին։ Սակայն սիրիահայերը չընկան ֆրանսիական դաղութարարների և նրանց հետ համագործակցող դաշնակ ղեկավարների պատրաստած ծուղակը։ Արաբ ժողովուրդը բարձր է գնահատել հայերի այս դիրքը։ Հեղափոխականների օգնության միջազգային կազմակերպության ֆրանսիական սեկցիայի օրգան «Լա դիֆանս»-ի տվյալներով, ֆրանսիական բանակում «քայքայիչ» աշխատանք տանելու և հակաիմպերիալիստական թռուցիկներ տարածելու համար ձերբակալվել են տասնյակ հայեր[85]։ Ֆրանսիական իմպերիալիստներին չհաջողվեց հայերին ներգրավել արաբական ազգային-ազատագրական պայքարը ճնշելու գործի մեջ։ Հայ ժողովրդի և նրա դեմո-

---

[82] «Երևան», Փարիզ, 3.XII.1925։
[83] ՀՍՍՀ ԳԱ ԱԻ արխիվ, գ. 2, վ. 3։
[84] «Երևան», 8.XI.1925։
[85] Նույն տեղում, 26.V.1926։

կըրատական ուժերի համակրանքը ամբողջովին արաբ ժողովրդի և նրա արդարացի պայքարի կողմն էր։

Հարձակում Դամասկոսի վրա։ Հոկտեմբերի սկզբներին սիրիական մայրաքաղաքում կրկին լարված դրություն էր։

Պարտիզանական շարժումը մեծ թափ էր ստացել Դամասկոսը օղակող Ղութայի օազիսում, որտեղ նախապատրաստական աշխատանքներ էին տարվում Դամասկոսի վրա կրկին հարձակվելու համար։

1925 թ. օգոստոսի վերջերին, Դամասկոսի ապստամբության ձախողումից հետո, քաղաքի ծայրամասերի աշխատավոր բնակչության մի մասը անցել էր Ղութայի օազիսը և միանալով բեդվիններին անընդհատ հարձակումներ էր կատարում ֆրանսիական պատժիչ զորամասերի և հաղորդակցության ճանապարհների վրա։ Դամասկոսի շրջակայքը վերածվել էր պարտիզանական գործողությունների կենտրոնի։ Ուստի ֆրանսիական հրամանատարությունը միջոցներ էր ձեռք առնում, որպեսզի ոչնչացնի Դամասկոսին սպառնացող պարտիզանական շարժումը։ Հոկտեմբերի կեսերին Ղութայի օազիս ուղարկված Սառռայի պատժիչ արշավախումբը հրո ճարակ դարձրեց գյուղերն ու ցանքերը, մասսայական տեռոր կազմակերպեց բնակչության դեմ[86]։ Այս ծաղկած շրջանը քարուքանդ անելուց հետո, ֆրանսիական «քաղաքակրթիչները» դամասկոսցիներին ահաբեկելու համար խոշտանգված մի խումբ ապըստամբների դիակները կապում են ուղտերի վրա ու ցուցադրում մայրաքաղաքի փողոցներում[87]։ «Բուն իսկ Դամասկոսի ժողովուրդը,—գրում էր «Ժամանակ» թերթը,—այլևս չկրցավ ինքզինքն զսպել, երբ ֆրանսիացիները չվաններով կապված վիճակի մեջ ուղտերու վրա ցուցադրեցին և հետո անոնց կոխոտել տվեցին դուրսեն բերած ըմբոստներու դիակները, որոնց մեջ դամասկոսցիներ ալ կային։ Անկե ետքը կատաղի հարձակում մը սկսավ ֆրանսիացիներու դեմ»[88]։ Օկուպացիոն զորքերի կատարած գազանությունները և խոշտանգված 24 արաբների դիակների ցուցադրման խռովահույզ տեսարանը դամասկոսցիների համբերության բաժակը լցրեց և ազդանշան հանդիսացավ ընդհանուր ապստամբության։

---

[86] *Mac-Callum*, The Nationalist crusade in Syria, New-York, 1928, p. 131.

[87] احسان هندى، كفاح الشعب السورى العربى، ص ۱۴۱

[88] «Ժամանակ», 7.XI.1925։

Հոկտեմբերի 14-ին Դամասկոսում ընդհանուր գործադուլ սկսվեց. փակվեցին արհեստանոցները, խանութները, դադարեց տրանսպորտի երթևեկությունը, զինված ընդհարումներ տեղի ունեցան բնակչության և ֆրանսիական զորքերի միջև[89]: Հետևյալ օրը Դամասկոսի մի խումբ հայրենասերներ հարձակվեցին ոստիկանության շենքի վրա և դրավեցին այնտեղ եղած զենքերը:

Հոկտեմբերի 18-ին համաժողովրդական ապստամբություն սկսվեց Դամասկոսում: Այդ օրը, լուսաբացին, երեք ջոկատներ (700 հետևակ և 500 ձիավոր) դամասկոսցի ֆեոդալ Նասիբ Բաքրիի, Դամասկոսի զինչերային պահակների միավորման նախագահ՝ Հասան ալ-Խառռաթի և Աբի Աբդո Դիբի հրամանատարությամբ երեք ուղղությամբ մտան Դամասկոս: Քաղաք մտած ջոկատներին միացան Շաղուր և Մեյդան թաղամասերի բնակիչները[90]: Ապստամբները ֆրանսիացիներից մաքրեցին Շաղուր և Մեյդան թաղամասերը և շարժվեցին դեպի քաղաքի կենտրոնը: Ֆրանսիացիները փակվեցին հասարակական շենքերում և դրանք վերածելով ամրություններու, գնդակոծում էին ապստամբներին: Սակայն վերջիններս նրանց դուրս մղեցին այդ վայրերից, այդ թվում նաև ալ-Ազմի պալատից, որին տիրանալու համար ապստամբները կատաղի մարտեր մղեցին[91]: Դամասկոսի 3000-անոց ֆրանսիական կայազորը, որն իր տրամադրության տակ ուներ նաև տանկեր և որոնց դեմ բնակչությունը բարիկադներ էր կառուցել, չէր կարողանում ճնշել ապստամբներին: Փողոցային մարտեր մղելով զորքերի հետ, ապստամբները գրավեցին քաղաքի մեծ մասը[92]: Ֆրանսիական զորքերը քաշվեցին քաղաքի հյուսիսային մասում գտնվող աս-Սալիհիյա թաղամասի զորանոցները, որոնք պաշտպանվում էին տանկերով: Այնտեղ հավաքվեցին նաև ֆրանսիացի բոլոր պաշտոնյաները իրենց ընտանիքներով: Սառույցի հրամանով ֆրանսիական հրետանին այդտեղից, ինչպես նաև ալ-Մազզեից ու միջնաբերդից հոկտեմբերի 18-ին սկսում է Դամասկոսի ռմբակոծումը: Հրետանային ռմբակոծմանը զուգընթաց հոկտեմբերի 19-ի առավոտյան քաղաքը ենթարկվեց նաև օդային ռմբակոծման: Դամասկոսի ռմբակոծումը տևեց երկու օր և դադարեցվեց այն բանից

---

89 *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 216.

90 Նույն տեղում, էջ 218—219:

91 Նույն տեղում, էջ 219:

92 «Երևան», 29.X.1925:

հետո, երբ օտարերկրյա պետությունների հյուպատոսները բողոքեցին դրա դեմ և երբ Դամասկոսի երևելիներից էմիր Սաիդ ալ-Ջազարին և Հաքքի ալ-Ազման այցելեցին Դամասկոսի շրջանի զինվորական ղեկավար, գնդապետ Անդրեային և ռմբակոծումը դադարեցնելու համար նրան խոստացան հարյուր հազար թուրքական լիրա ռազմատուգանք վճարել և երեք հազար հրացան հանձնել[93]։

Դամասկոսի վայրագ ռմբակոծումը հսկայական վնասներ պատճառեց քաղաքին ու բնակչությանը։ Ամբողջովին ավերվեցին մի շարք թաղամասեր, հողին հավասարվեցին Միդհատ փաշա, Սուկ ալ-Խառաթին և ուրիշ շուկաներ ու թաղամասեր։ Անհատուցելի վնաս հասցվեց ալ-Ազմ պալատին, քանդվեցին մի շարք պատմական շենքեր և ճարտարապետական հուշարձաններ։ Քանդվեց ալ-Քուաթլի պալատը՝ արաբական արվեստի կոթողներից մեկը[94]։ Պաշտոնական տվյալներով ռմբակոծումից զոհվեց մոտ 1500 մարդ[95]։ Այս թվի մեջ չեն մտնում ավերակների տակ մնացած զոհերը։ Ռմբակոծման հետևանքով առաջացած նյութական վնասները գնահատվել են ավելի քան մեկ միլիոն անգլիական ֆունտ ստեռլինգ[96]։

Սառռայը և ֆրանսիական բուրժուական մամուլը փորձել են արդարացնել իրենց հանցագործությունը ռազմական անհրաժեշտությամբ, որի նպատակն է եղել, իբր, պատժել և վախեցնել քաղաքի բնակիչներին[97]։ Իրականում այդ ռմբակոծումը հետևանք էր այն բանի, որ ֆրանսիական զորքը անընդունակ գտնվեց պայքարելու իր ազատության համար զենք վերցրած սիրիական ժողովրդի դեմ։ Օկուպանտները բարբարոսական միջոցի դիմեցին, որպեսզի կարողանան շարունակել այդ ժողովրդին թալանելն ու ճնշելը։

Դամասկոսի ռմբակոծումը առաջ բերեց ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկանց վրդովմունքն ու բողոքը։ Ցասումով լցվեց արաբական երկրների ժողովուրդների սրտերը։ Ի նշան սուգի, 60 հազար մահմեդական և քրիստոնյա արաբներ սև դրոշակներով ան-

---

[93] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 222.

[94] „The Times", 27.X.1925.

[95] „L'Humanité", 17.IX.1925.

[96] احسان هندى، كفاح الشعب السورى العربى، ص ١٤٢

[97] *Ch. Andréa*, La Révolte druze et l'insurrection de Damas 1925—1926, p. 73.

յան Բաղդադի փողոցներով։ Ապստամբների օգնության համար Իրաքում հավաքվեց 50000 ֆունտ ստեռլինգ[98]։ Դամասկոսի ռմբակոծման համար Պաղեստինի արաբները պատասխանեցին բողոքի ընդհանուր գործադուլով, որ կազմակերպել էին նոյեմբերի 2-ին, լորդ Բալֆուրի դեկլարացիայի տարեդարձի օրը։ Հյուսիսային Աֆրիկայի, Հնդկաստանի հասարակական կազմակերպությունները, Եգիպտոսի Վաֆդ կուսակցության ղեկավար Սաադ Զաղլուլը իրենց բողոքներով դատապարտեցին ֆրանսիական գաղութարարների կատարած չարագործությունները և պահանջեցին խիստ պատժել Դամասկոսի ողբերգության պատասխանատուներին[99]։ Ֆրանսիական սենատի մի խումբ անդամներ մեղադրելով կառավարությանը Դամասկոսի դեպքերի առթիվ, պահանջեցին անմիջապես փոխել Սառռային։ Մերկացնելով ֆրանսիական գաղութարարների կատարած դահճային գործողությունները Սիրիայում, Ֆրանսիայի կոմկուսակցությունը պահանջեց Սիրիայից և Մարոկկոյից դուրս բերել ֆրանսիական բանակը և թողնել, որ սիրիական ժողովուրդը ինքը որոշի իր բախտը[100]։ Կոմկուսի կենտրոնական օրգան «L'Humanite»-ն կոչ էր անում ֆրանսիական զինվորներին եղբայրանալ սիրիացիների հետ։

Իսկ ինչ վերաբերում է Ազգերի Լիգային, ապա նա, ըստ էության պաշտպանեց Ֆրանսիայի բարբարոսական գործողությունները։ Ազգերի Լիգայի մանդատային հանձնաժողովը խորհուրդ տվեց սիրիացիներին համագործակցել մանդատային իշխանությունների հետ[101]։

Ազատագրական պայքարը 1926—1927 թթ. և ապստամբության ճնշումը։ Ֆրանսիական զինվորականությունը այն կարծիքին էր, թե Դամասկոսի ռմբակոծումով վերջ կտրվի սիրիացիների ապստամբությանը։ Սակայն այդ հաշիվները սխալ դուրս եկան։ Դամասկոսի անգութ ռմբակոծումը ավելի բարդացրեց օկուպանտների դրությունը Սիրիայում։ Ազգային-ազատագրական շարժումը նոր վերելք ապրեց։ Այդ ռմբակոծումը արագացրեց ժողովրդական մասսաների քաղաքական գիտակցության հասունացումը։ Հազա-

---

[98] «Революционный Восток», 1928, № 3, стр. 289.

[99] احسان هندى، كفاح الشعب السورى العربى، ص ۱۴۳

[100] „L'Humanite" 14.II.1926.

[101] „Societé des Nations, Commission Permanete des mandats", Geneve, 1926, p. 202—207.

բավոր բնակիչներ, որոնք մինչ այդ չէին մասնակցել ապստամբությանը, Դամասկոսի ռմբակոծումից հետո զենք են վերցնում։ Օկուպանտների բռնություններից փրկված և Դամասկոսի աղետի համար վրեժի տենչով համակված դամասկոսցիները հեռանալով քաղաքից, միանում են պարտիզաններին[102]։ Պարտիզանական ջոկատներին միանում են նաև բեդվին ցեղեր և ֆրանսիական ավիացիայի ավերած գյուղերի բնակիչները[103]։ Այսպիսով, ձևավորվում է պարտիզանական մի մեծ բանակ, որ գործում է Դամասկոսի շրջակայքում՝ նասիբ Բաքրի հրամանատարությամբ[104]։ Պարտիզանական խոշոր միավորումներ կային Ջեբել Դրուզում և Հարավային Լիբանանում, նաև Հալեպի, Հոմսի, Համայի շրջաններում, Եփրատի հովտում, սիրիական անապատում և Լաթաքիայի շրջանում։ Այս ջոկատները ղեկավարում էին զինվորական կրթություն և մարտական փորձ ունեցող արաբ սպաները և մարտերի ընթացքում հենց իրենց պարտիզանների կողմից առաջ քաշված ընդունակ մարդիկ։

Պարտիզանական այս միավորումները կազմում էին Սիրիայի ազգային հեղափոխական բանակը, որի թիվը հասնում էր 15—20 հազարի[105]։ Նրա գլխավոր հրամանատարը սուլթան Աթրաշն էր։

Սիրիայում գործող ֆրանսիական բանակի թիվը 1925 թ. նոյեմբերին հասնում էր 35 հազարի[106], չհաշված սիրիական օժանդակ ուժերը։ Սակայն, զորքերի այս թիվը, ինչպես ցույց տվեց փորձը, բավարար չէր ապստամբությունը ճնշելու համար։ Ֆրանսիական բանակը դեռևս ոչ մի հաջողություն ձեռք չէր բերել։ Ուստի պատրաստվելով 1926 թ. արշավանքներին, ֆրանսիական կառավարությունը 1925—1926 թթ. ձմռան ընթացքում Սիրիա տեղափոխեց, գլխավորապես Մարոկկոյից, նոր ուժեր, որով Սիրիայում ֆրանսիական բանակի թիվը հասավ 70 հազարի[107]։

Սիրիայում ֆրանսիական զորքերի հիմնական մասը կազմում էին գաղութային երկրներում՝ Մարոկկոյում, Ալժիրում, Թունիսում, Սենեգալում և Մադագասկարում հավաքագրված զինվորները։ Բացի այս, կրոնական, ազգային և ցեղային թշնամություն

---

102 *Mac-Callum*, The Nationalist crusade in Syria, p. 138.

103 «Известия», 5. XI. 1925.

104 امين سعيد، الثورة العربية الكبرى، ج ٣، ص ٣٦٦

105 Նույն տեղում, էջ 366։

106 *P. Newman*, The Middle East, London, 1926, p. 145.

107 امين سعيد، الثورة العربية الكبرى، ج ٣، ص ٣٦٨

առաջ բերելու նպատակով, ֆրանսիական իմպերիալիստները այլազան ազգային փոքրամասնություններից կազմակերպում էին այսպես կոչված օժանդակ զորքեր։

Այս տագնապալի օրերին Սիրիայի կոմկուսը բացատրական լայն աշխատանք էր տանում այդ չոկատների շարքերում և բնակչության մեջ, մերկացնելով իմպերիալիստների պրովոկացիոն քաղաքականությունը։ Հարավային Լիբանանի պարտիզանների հրամանատարությանը, մարոնիթներին և դրուզներին ուղղված կոչերում, զգուշացնում էր նրանց, որ ապստամբությունը ազգային է և ոչ թե կրոնական, որ ապստամբությանը մասնակցում են բոլոր սիրիացիները, առանց դավանական խտրության։ Դրա շնորհիվ Լիբանանի քրիստոնյաների մի մասը անցավ ապստամբների կողմը։

Գլխավորապես գաղութային զորքերից կազմված ֆրանսիական օկուպացիոն բանակը բարոյական տեսակետից զգալիորեն ցածր էր ազգային-ազատագրական բանակից։ Նրա առավելությունը մարտական տեխնիկայով լավ զինված լինելն էր։ Պարտիզանական բանակի ամենակարևոր առավելությունը նրա ամուր կապն էր ժողովրդի հետ։ Նա հենվում էր մասսաների լայն աջակցության և համակրության վրա։ Օկուպացիոն բանակը, ընդհակառակը, գործում էր թշնամական միջավայրում և ժողովրդի համընդհանուր ատելության մթնոլորտում։

Դամասկոսի ռմբակոծումից հետո քաղաքը և նրա շրջակայքը վերածվեցին ազգային-ազատագրական պատերազմի թատերաբեմի։ Պարտիզանական ուժերի հիմնական բազաները դարձան Դամասկոսի շրջակա Ղութա օազիսը և Դամասկոսի և Հոմսի միջև ընկած լեռնային շրջան Քալամունը։ Այս բազաներում կենտրոնացված պարտիզանական խոշոր խմբավորումներն անընդհատ հարձակումներ կատարելով քաղաքի վրա, ուժասպառ էին անում թշնամուն։

Զգուշանալով քաղաքում նոր ապստամբության առաջացումից, ֆրանսիական իշխանությունները շարունակում էին քաղաքը պահել ռազմական դրության վիճակում։ Միջոցներ են ձեռնարկվում Դամասկոսի պաշտպանության համար[108]։ Մայրաքաղաքը շրջապատվում է փշալարերով, հատկապես ուժեղացվում է Մեյդան և Շղուր թաղամասերի պահակակետերը։ Ոստիկանությունը և բա-

---

[108] احسان هندى، كفاح الشعب السورى العربى، ص ۱۴۵

նակի ուժերը խուզարկում էին քաղաք մտնողներին և դուրս գնացողներին։ Քաղաքի բոլոր փողոցների խաչմերուկներում դրվել էին լարափակոցներ և կառուցվել բարիկադներ, խիստ պաշտպանության տակ էին առնվել կառավարական բոլոր շենքերը։ Քաղաքի փողոցներով շրջում էին տանկերը։ Մի խոսքով, օկուպանտները գտնվում էին պաշարված քաղաքում։

Զենք և պարտիզաններ որոնելու անվան տակ ամբողջ քաղաքում մասսայական խուզարկումներ և շուրջկալներ էին կատարվում։ Ստեղծվեցին զինվորական տրիբունալներ[109]։ Մահվան դատավճիռները հետևում են մեկը մյուսին։ Մահապատժի ենթարկված և խոշտանգված պարտիզանների մարմինները, ինչպես միշտ, ցուցադրվում էին Դամասկոսի հրապարակներում։

Մայրաքաղաքի աշխատավորության վիճակը հուսահատական էր. քաղաքի ռմբակոծման հետևանքով հազարավոր ընտանիքներ մնացին անօթևան։ Պաշարված բերդի վերածված և գաղութային սարսափելի տեռորի ենթարկված քաղաքում տիրում էր կատարյալ սով։ Պարտիզանական կռիվներով ընդգրկված Դամասկոսի մթերային շտեմարան Հաուրանից և Ղութայի օազիսից դադարել էր մթերքների մատակարարումը։ Ռմբակոծման ժամանակ այրվել էին պահեստները, ոչնչացել էին մթերքի պաշարները և բնակչությունը զրկված էր կենսամիջոցներից։ Սովը, ցուրտը, տեռորը, մյուս կողմից էլ ապաստարանից բոլորովին զուրկ լինելը, հազարավոր դամասկոսցիներին ստիպում է հեռանալ ավերված քաղաքից[110]։

Զգտելով Դամասկոսում կայուն վիճակ ստեղծել, ֆրանսիական հրամանատարությունը ձեռնարկում է պարտիզանների Ղութայի բազան ոչնչացնելու գործին, որտեղից քաղաքի վրա անընդհատ հարձակում էին գործում պարտիզանները։ Այս նպատակով ֆրանսիական զորքերի զգալի մասը Հաուրանից տեղափոխվում է Դամասկոս։ Ղութայի շրջանն ուղարկված ֆրանսիական պատժիչ խումբը մի քանի օրվա ընթացքում քարուքանդ է անում մի շարք գյուղեր[111]։

Նոյեմբերի 29-ին պարտիզանները մեծ խմբերով նորից ներխուժում են քաղաք և հարձակվում Մեյդան թաղամասի ֆրան-

---

[109] «Правда», 23. X. 1925.

[110] „L'Humanite", 4.1X.1925.

[111] امين سعيد، الثورة العربية الكبرى، ج ٣، ص ٣٦٦

սիական ամրացված պահակակետերի վրա, գրավում 11 գնդացիր և մեծ քանակությամբ ռազմամթերք, և հեռանում իրենց բազան։

Դամասկոսի շրջակայքում մարտերը շարունակվեցին նաև 1926 թ. ամռվա ընթացքում։

Սակայն ֆրանսիական օկուպանտները Դամասկոսի համար մղվող մարտերում ոչինչ չշահեցին։ Նրանք չկարողացան պարտիզաններին հեռացնել Դամասկոսի շրջանից։

Ստեղծված իրադրությունը ֆրանսիական օկուպանտներին հարկադրեց դիմել քաղաքական մանևրների։ Նրանք հասկացան, որ միայն ռազմական միջոցառումներով ոչ մի արդյունքի չեն կարող հասնել։

Ֆրանսիական կառավարությունը Սառռայի փոխարեն Սիրիայում դեսպան կոմիսար նշանակեց փորձված դիվանագետ, սենատոր Հանրի դը Ժուվեննելին։

Ժուվեննելը մտադիր չէր ընդառաջ գնալու սիրիական ժողովրդի պահանջներին։ Նրա նպատակն էր ազգային-ազատագրական շարժումից կտրել նրա բուրժուա-կալվածատիրական ղեկավարներին, նրանց ենթարկել իրեն և ճնշել ապստամբությունը։

Դը Ժուվեննելը նախքան Սիրիա գալը, հանդիպում ունեցավ «Սիրիա-պաղեստինյան կոնգրեսի» գործկոմի նախագահ՝ Միշել Լյութֆալլահի ներկայացուցչի և Ժնևում Ազգերի լիգային կից գործող վերահիշյալ կազմակերպության պատվիրակության նախագահ՝ Շևքիբ Արսլանի հետ, սիրիական հարցը լուծելու համար բանակցություններ սկսելու մասին։ Այս հանդիպման ընթացքում սիրիական կողմը բանակցություններ սկսելու համար որպես պայման առաջարկեց հետևյալ պահանջների ընդունումը. Սիրիայի լրիվ անկախության և միասնության ճանաչում Ֆրանսիայի կողմից, մանդատի վերացում և անկախ Սիրիայի ու Ֆրանսիայի միջև պայմանագրի կնքում 25 տարի ժամանակով, Սիրիայի ընդունում Ազգերի լիգայի մեջ, ֆրանսիական ուժերի լրիվ էվակուացիա, քաղբանտարկյալների ընդհանուր ներում[112]։ Սակայն պայմանագրով ապահովվելու էին Ֆրանսիայի տիրապետող տնտեսական դիրքերը Սիրիայում, սիրիական բանակի ուսուցումը հանձնվելու էր ֆրանսիական բանակի սպաներին, երկու երկրների միջև պիտի կնքվեր ռազմական դաշինք, որով Ֆրանսիան այլ պետության հետ պատերազմելու դեպքում իրավունք պիտի ունենար օգտագործելու

---

[112] امين سعيد الثورة العربية الكبرى، ج ٣، ص ٥١٢

սիրիական բանակը և Սիրիայում եղած ռազմական բազաները[113]։ Սակայն բանակցությունները վերջացան անհաջողությամբ, քանի որ դը Ժուվենելը պնդում էր մանդատի պահպանման վրա։ Մերժելով վերոհիշյալ առաջարկությունները, նա միայն մի քանի մանր զիջումներ արեց։

Անգլո-ֆրանսիական հարաբերությունները բավականին լարված բնույթ ունեին։ Անգլիան չէր ցանկանում Ֆրանսիայի դիրքերի ամրապնդումը Սիրիայում։ Նա վախենում էր, որ հետագայում Ֆրանսիան կփորձի ներթափանցել նաև Իրաք, Պաղեստին և Անդրհորդանան, որոնք հանդիսանում էին բրիտանական ենթամանդատային տերիտորիաներ։ Ելնելով դրանից, Անգլիան Ֆրանսիային չէր օժանդակում սիրիական ապստամբությունը ճնշելու գործում։ Դեռ ավելին, նրա լռելյայն համաձայնությամբ ապստամբները օգտագործում էին Անդրհորդանանի և Պաղեստինի տերիտորիաները։

Սակայն, 1925 թ. վերջերին և 1926 թ. սկզբներին տեղի է ունենում որոշակի շրջադարձ անգլո-ֆրանսիական հարաբերությունների մեջ։ Այդ բեկումը բացատրվում է երկու հանգամանքով։ Առաջին, Անգլիայում հասկանում էին, որ սիրիական ապստամբության հաջողությունները արձագանք կգտնեն նաև հարևան անգլիական մանդատային Անդրհորդանանում, Պաղեստինում և Իրաքում։ Լոնդոնի շրջաններում հաշվի էին առնում այն, որ Սիրիայի դեպքերը կարող էին վտանգավոր ելույթներ առաջացնել ամբողջ Մերձավոր Արևելքում և սպառնալիքի տակ դնել նաև անգլիական տիրապետությունը։ Անգլիական ու ֆրանսիական մանդատային ռեժիմներին սպառնում էր ընդհանուր արաբական ապստամբություն։ Այդ բանը կանխելու համար Անգլիան ու Ֆրանսիան, չնայած նրանց միջև եղած լուրջ հակասություններին, որոշում են համագործակցել և միասնական ճակատով հանդես գալ ընդդեմ արաբական ազգային-ազատագրական շարժումների։

Մերձեցման երկրորդ պատճառն այն էր, որ Մոսուլի հարցում Անգլիան ուզում էր Ֆրանսիայի աջակցությունը ստանալ։ Անգլիան գրավելով Մոսուլի նավթային շրջանը, անընդհատ կոնֆլիկտների մեջ էր Թուրքիայի հետ։ Նա ձգտում էր Մոսուլը միացնել Իրաքին։ Այդ հարցը պետք է քննվեր Ազգերի լիգայում։

Մոսուլի հարցը Ազգերի լիգայի խորհրդի առաջիկա նիստում

---

[113] Նույն տեղում, էջ 512։

քննարկվելու կապակցությամբ և սիրիական ապստամբությանը անգլիական օգնությունը դադարեցնելու հարցով դը Ժուվենելը ուղևորվեց Լոնդոն։ Նրա միսիան պսակվեց հաջողությամբ։ Մոսուլի հարցում նա անգլիացիներին իր կառավարության անունից խոստացավ լրիվ աջակցություն, որից հետո Անգլիան հրաժարվում է աջակցել սիրիական ապստամբությանը։ Պաղեստինի գերագույն կոմիսար Բլումերը անգլիական կառավարության հրահանգով շտապում է Ամման և Աբդալլահին հայտնում իր կառավարության որոշումը՝ սիրիական գործերին չմիջամտելու և ապստամբներին ամեն տեսակ օգնություն ցույց տալը արգելելու մասին[114]։ Այս հայտարարությունից հետո Անդրհորդանանում սկսում են ձերբակալել ապստամբներին զենք և ռազմամթերք մատակարարող բեդվին շեյխերին։ Ապստամբությունը ճնշելու պատրաստակամություն է հայտնում նաև անգլիական դրածո, Անդրհորդանանի էմիր Աբդալլահը, պայմանով, որ իրեն Սիրիայի թագավոր ճանաչեն[115]։

1925 թ. դեկտեմբերին Բեյրութ գալով, դը Ժուվենելը իր մի շարք ելույթներում «Պատերազմ նրանց դեմ, ովքեր պատերազմ են ուզում, խաղաղություն նրանց, ովքեր խաղաղություն են ուզում» պրովոկացիոն լոզունգն առաջադրեց։ Նոր գերագույն կոմիսարը փորձում էր իր կամքը թելադրել Ջեբել Դրուզի ապստամբության ղեկավարներին։ Նա կոչ էր անում նրանց ցած դնել զենքը և զբաղվել իրենց կանանց ու երեխաների ամենօրյա հացը ապահովելու գործով, և հայտարարում, թե դրուզներին ինքնորոշման և իրենց կառավարիչ ընտրելու իրավունք է տալու։ Կասկածի ենթարկելով դը Ժուվենելի խոսքերը, շեյխերը հավաքվելով ալ-Դամա գյուղում, հետևյալ պահանջներն են ուղարկում դը Ժուվենելին. ճանաչել Սիրիայի անկախությունը և նրան ընդունել Ազգերի լիգայի մեջ, միավորել Սիրիայի բոլոր տերիտորիաները, որոշակի ժամկետով Ֆրանսիայի հետ պայմանագիր կնքել, որը ապահովի Ֆրանսիայի շահերը, բայց առանց վնասելու Սիրիայի ազգային գերիշխանությանը, ֆրանսիական ռազմական ուժերը հանել երկրից և ընդհանուր ներում շնորհել[116]։

Դը Ժուվենելը մերժեց այս պահանջները, որից հետո շեյխերը որոշեցին ծերերին, կանանց ու երեխաներին տեղափոխել երկրի

---

[114] «Новый Восток», 1925, № 10—11, стр. VIII.

[115] «Известия», 24. IX. 1925.

[116] احسان هندى، كفاح الشعب السورى العربى، ص ١٣٦

լեռնային մասերը և Անդրհորդանանի տերիտորիան։ Ջորակոչի ենթարկվեցին 16—60 տարեկան տղամարդիկ։ Զենք կրելու ընդունակ 5000 դրուզներ մնացին Զնբել Դրուզում։

1925 թ. դեկտեմբերի 22-ին Բեյրութի իր ռեզիդենցիայում դը Ժուվենելն ընդունեց Դամասկոսի ֆեոդալներից ու խոշոր առևտրականներից կազմված պատվիրակությանը, որը ֆրանսիական գլխավոր կոմիսարին հանձնեց 5 կետից բաղկացած հետևյալ հուշագիրը. 1. կազմել ժամանակավոր կառավարություն, 2. անցկացնել սահմանադիր ժողովի ազատ ընտրություններ, 3. Սիրիայի միասնությունը նրա բնական սահմաններում։ Լիբանանի հետ կապված տերիտորիալ վիճելի հարցերը լուծել հանրաքվեի միջոցով, 4. ընդհանուր ներում շնորհել, 5. Սիրիայի և մանդատային պետության, այսինքն Ֆրանսիայի հարաբերությունները պետք է որոշվեն պայմանագրով և բոլոր վիճելի հարցերը պետք է հանձնել Ազգերի լիգայի քննարկմանը[117]։

Ինչպես տեսնում ենք, Դամասկոսի ֆեոդալները և առևտրականները մանդատի հարցում զիջում արեցին ֆրանսիական իմպերիալիստներին։ Նրանց պահանջներում ոչ մի խոսք չկար մանդատը վերացնելու մասին։ Անկասկած, այս զիջումը ձեռնտու էր Ժուվենելին, քանի որ նրա գլխավոր խնդիրը մանդատը պահպանելն էր։

Խոստանալով «ուսումնասիրել» վերոհիշյալ առաջարկությունները, դը Ժուվենելը վճռեց զինաթափ անել ապստամբական ուժերը։ Ընդհանուր «ներում» շնորհելու մասին հրամանում նա առաջարկեց պարտիզաններին, որ եթե նրանք մինչև 1926 թ. հունվարի 8-ը ներկայանան ֆրանսիական զինվորական իշխանություններին և հանձնեն զենքերը, ապա նրանց նկատմամբ մահվան դատավճիռ չի կայացվի[118]։ Իսկ սահմանադիր ժողով հրավիրելու փոխարեն նա դեկրետ արձակեց ներկայացուցչական ժողով գումարելու մասին։ Ըստ այդ դեկրետի, ընտրությունները պետք է անցկացվեին Սիրիայի այն շրջաններում, որոնք պաշարողական դրության մեջ չէին գտնվում։ Այդպիսի շրջան հանդիսանում էր միայն Հալեպի շրջանը[119]։

---

[117] *В. Луцкий,* Национально-освободительная война в Сирии, стр. 305—306.

[118] امين سعيد، الثورة العربية الكبرى، ج ٣، ص ٣٨٨

[119] *В. Луцкий,* Национально-освободительная война в Сирии, стр. 306.

Սա խիստ դժգոհություն առաջ բերեց սիրիացիների մոտ։ Նույնիսկ ֆրանսիացիներին նվիրված Սիրիայի պետության ղեկավար Սուբհի Բարաքաթը, ի նշան բողոքի ընդդեմ դը Ժուվենելի քաղաքականության, հրաժարական տվեց[120]։ Սակայն ֆրանսիական իմպերիալիստական շրջանները մտադիր չէին հրաժարվելու մանդատից։ Սիրիական բուրժուական մի շարք գործիչներ, առաջարկեցին դը Ժուվեննելին մանդատը վերացնելու և Սիրիայի գերիշխանությունը ձևականորեն ճանաչելու պայմանով շարունակել Ֆրանսիայի փաստական իշխանությունը Սիրիայի վրա։ Բայց դը Ժուվենելը մերժեց այս առաջարկությունները ևս և վճռեց ինչ գնով էլ լինի պահպանել մանդատը։

Դը Ժուվենելի դիվանագիտական գործունեությունն ամբողջովին ձախողվեց։ Ուստի նրան ոչինչ չէր մնում անել, քան հանձնարարել Դամասկոսի զինվորական նահանգապետ գեներալ Անդրեային արագացնելու ապստամբների հետ վայրագ դատաստան տեսնելու գործողությունները։

Ֆրանսիացիները Մարոկկոյից տեղափոխված զորքերով նոր հարձակում են պատրաստում Ղութայի և Ջեբել Դրուզի վրա։ Այդ ժամանակ Սիրիայում և Լիբանանում կենտրոնացված էր մոտ 70 հազար ֆրանսիական զորք, զինված ժամանակակից ռազմական տեխնիկայի բոլոր տեսակներով։ 1926 թ. ապրիլի 22-ին գլխավոր հարվածը ուղղվեց ապստամբության կենտրոն Ջեբել Դրուզի դեմ։ Գեներալ Անդրեան 10 հազար զորքով շարժվեց Սուեյդայի վրա, որտեղ կենտրոնացված էին դրուզների բոլոր ուժերը։ Չնայած օկուպանտները իրենց ամբողջ տեխնիկայի կարողությունը թափել էին դրուզների վրա, վերջիններս մի քանի օր համառորեն դիմադրում էին թշնամուն։ Սակայն ֆրանսիական լավ զինված բանակին, այնուամենայնիվ, հաջողվում է կոտրել նրանց դիմադրությունը և ապրիլի 25-ին գրավել Սուեյդան[121]։ Ամրանալով այնտեղ, ֆրանսիական զորքերը առաջ են շարժվում և հունիսի 4-ին գրավում երկրի հարավային մասում գտնվող Սալխադ քաղաքը։

Գրաված վայրերում ֆրանսիացիները դաժան հաշվեհարդար էին տեսնում ապստամբների հետ. այրում նրանց տները, քշում անասունը, գնդացիրներից կրակում անզեն բնակչության վրա և այլն։ Խոշոր կալվածատերերի մեծ մասը դավաճանեց ապստամբ-

---

[120] *Ch. Andrea*, La Revolte druze et l'insurrection de Damas, p. 94.

[121] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 313.

ներին և անցավ ֆրանսիական մանդատային իշխանությունների կողմը։

Ապրիլի կեսերին հրետանային ռմբակոծման ենթարկելով Դամասկոսի արվարձանները, ֆրանսիական զորքերը միևնույն ժամանակ նոր «մաքրագործում» են կատարում Ղութայի օազիսում։ Պարտիզաններին համակրելու մեջ կասկածվող գյուղերը ավերվում են, ամեն տեղ ոչնչացվում են ցանքսերը։ Ղութայի շրջանում կռիվները շարունակվեցին ամբողջ ամառվա ընթացքում։

Ապստամբական շարժումը 1926 թ. դեռևս բավականին ուժեղ էր։ Ազատագրական պայքար էր գնում Ջեբել Դրուզում, Դամասկոսում, Հալեպում, Համայում, Հոմսում, Բեքաայում, Հարավային Լիբանանում և այլն։ Առանձին վայրերում, ինչպես Բաալբեկի և Համա-Հոմսի շրջանում, ապստամբները հասան նույնիսկ հաջողության։

Ապստամբների շարքերը կազմալուծելու և սիրիական ազգային բուրժուազիային ու ֆեոդալական վերնախավերին իր կողմը գրավելու համար դը Ժուվենելը 1926 թ. մայիսին ստեղծեց սիրիական ազգային կառավարություն, որի մեջ մտան «աշ-Շաաբ» կուսակցության երեք անդամներ։ Դը Ժուվենելը խոստացավ հրավիրել սահմանադիր ժողով, մշակել սահմանադրություն, կնքել ֆրանս-սիրիական պայմանագիր, ստեղծել ազգային բանակ և այլն[122]։ Սակայն ինչպես միշտ, այս անգամ ևս, ֆրանսիական դրլխավոր կոմիսարը չկատարեց իր խոստումներից և ոչ մեկը։

1926 թ. սեպտեմբերի 23-ին, Սիրիայի և Անդրհորդանանի սահմանամերձ Դերաա գյուղում Անգլիայի և Ֆրանսիայի զինվորական ներկայացուցիչները նոր համաձայնություն կնքեցին և որոշեցին արգելել զենք կրելու ընդունակ մարդկանց մնալը ալ-Աղրաքում (Անդրհորդանան), Անդրհորդանանում ապաստանած դրուզներին կամ Պաղեստինի հավաքակայանը տեղափոխել, կամ վերադարձնել Ջեբել Դրուզ, արգելել սուլթան Աթրաշի և Շահբանդերի մուտքը Անդրհորդանան և Պաղեստին[123]։ Անգլո-ֆրանսիական իմպերիալիստական այս վերջին գործարքը նպատակ ուներ վերջնականապես ճնշել ապստամբությունը։

1926 թ. աշնանը, օգտագործելով մեծ քանակությամբ ռազմական տեխնիկան և Սիրիայում կենտրոնացված մեծ բանակը, օկու-

---

[122] «Новейшая история арабских стран», стр. 52.

[123] احسان هندى، كفاح الشعب السورى العربى، ص ١٣٢

պանտները անցան վճռական հարձակման։ Նրանք ճնշեցին ապստամբությունը Ղութայում, Բևքաայում, Հարավային Լիբանանում։ Պայքարն ըստ էության վերջացավ նաև Զեբել Դրուզում[124]։ 1927 թ. գարնանը ճնշվեցին նաև ապստամբության մյուս օջախները։ Սուլթան Աթրաշը պարտիզանների մի փոքր խմբով անցավ Անդրհորդանան, այնտեղից՝ Նեջդ։

Այսպիսով, երկու տարի տևած սիրիական ազգային-ազատագրական պատերազմն ավարտվեց ապստամբների պարտությամբ և ֆրանսիական օկուպանտների հաղթանակով։

1925—1927 թթ. ազգային-ազատագրական պատերազմի պատմական նշանակությունը: *Սիրիայի պատմության մեջ 1925—1927 թթ. ապստամբության նշանակությունը շատ մեծ է։ Ապրստամբության ընթացքում ժողովրդական մասսաները ձեռք բերեցին ազգային-ազատագրական զինված պայքարի մեծ փորձ, որը հետագայում սիրիական ժողովուրդը օգտագործեց ֆրանսիական նվաճողներին իր երկրից դուրս վռնդելու համար մղած պայքարի ընթացքում։ Սիրիայի ապստամբությունը ուներ նաև միջազգային մեծ նշանակություն։ Կապիտալիզմի մասնակի կայունացման շրջանում բռնկված այս ապստամբությունը, 1925 թ. չինական հեղափոխության և Մարոկկոյի ազգային-ազատագրական պատերազմի հետ միասին, ցույց տվեց, որ կապիտալիզմի և նրա գաղութային սիստեմի ընդհանուր ճգնաժամը շարունակվում է, որ կապիտալիզմի կայունացումը խախուտ է և չի կարող լուծել այն խոր հակասությունները, որոնք կան իմպերիալիզմի և ճնշված ժողովուրդների միջև*[125]։

Ապստամբությունն ավելի ամրապնդեց Սիրիայի տարբեր մասերի բնակիչների ազգային միասնությունը, ցույց տվեց, որ Սիրիայի ամբողջ ժողովուրդը ատելությամբ և մինչև վերջ պայքարելու վճռականությամբ է տոգորված ֆրանսիական գաղութարարների դեմ։ Նա ավելի ամրացրեց մուսուլման և քրիստոնյա համայնքների միջև բարեկամությունը։ Վերջապես, ապստամբությունն ստիպեց ֆրանսիական իշխանություններին սահմանադիր ժողովի ընտրություններ անցկացնել և ընդունել սահմանադրություն։

Մանդատային իշխանությունների սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: *Առաջին համաշխարհային պատերազմից հետո*

---

[124] *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 317.
[125] «Новейшая история арабских стран», стр. 52—53.

Սիրիան գտնվում էր տնտեսական խոր ճգնաժամի մեջ։ Պատերազմի ընթացքում երկրի տնտեսությունը քայքայվել էր, կրճատվել էին ցանքատարածությունները։ Թուրքական զինվորական իշխանությունների բռնագրավման հետևանքով խիստ պակասել էր անասունների գլխաքանակը։

Պատերազմի ընթացքում քայքայված գյուղատնտեսությունը կարիք ուներ օգնության։ Սակայն ֆրանսիական օկուպանտները պատերազմական ծախսերի ծանր բեռ դրին բնակչության վրին։ Գոյություն ունեցող հողային հարաբերությունները, արտադրության պրիմիտիվությունը, մեքենայացման, ոռոգման և պարարտանյութերի անբավարար կիրառումը լուրջ արգելք էին գյուղատնտեսության զարգացմանը։

Սիրիայի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, որտեղ զբաղված էր երկրի բնակչության մոտ 75%-ը։ Դրավելով Սիրիան, ֆրանսիական իմպերիալիստները ձգտում էին Սիրիան վերածել հումքային բազայի, գլխավորապես գյուղատնտեսական մթերքներ արտադրող երկրի և վաճառահանման շուկայի։ Այդ նպատակով մանդատային իշխանությունները մի շարք միջոցներ ձեռնարկեցին ընդարձակելու ցանքատարածությունները և ավելացնելու գյուղատնտեսական հիմնական կուլտուրաների՝ ցորենի և գարու արտադրությունը։ Ֆրանսիական իմպերիալիստները ձգտում էին իրենց ապահովել հումքի սեփական ռեսուրսներով, իսկ Ֆրանսիայի տեքստիլ արդյունաբերությունը ազատել ամերիկյան բամբակի ներմուծումից։ Այս նպատակով նրանք ծրագրել էին ստեղծել «ֆրանսիական Եգիպտոս»[126], այսինքն Սիրիան վերածել բամբակի բազայի։

Մանդատային իշխանությունները պահպանեցին ֆեոդալական հարաբերությունները։ Ձգտելով կալվածատերերից ստեղծել հուսալի սոցիալական հենարան, նրանք ամեն կերպ խրախուսում էին խոշոր հողատիրությունը։ Այդ նպատակին ծառայեց նաև նրանց կողմից անցկացրած հողային կադաստրը կամ «հողային ռեֆորմը»։ Հողային կադաստրի էությունն այն էր, որ բռնագրավում էին ֆելլահների այն հողամասերը, որոնց նկատմամբ սեփականության իրավունքը չէր հիմնավորված համապատասխան փաստաթղթերով[127]։ Կադաստրը նպաստում էր կալվածատերերի

---

[126] «Страны Востока. I. Ближний Восток», М., 1934, стр. 227.

[127] «Новейшая история арабских стран», стр. 48.

հողային սեփականության մեծացմանն ու ամրապնդմանը։ Օկուպանտների հետ անձնական կապերի շնորհիվ կալվածատերերին հաջողվում էր իրենց անվամբ հողային սեփականության փաստաթուղթ ստանալ։ Հողերի կենտրոնացումը կալվածատերերի և մոնոպոլիստական ընկերությունների ձեռքում կատարվում էր նաև հողերի ուղղակի բռնի զավթման և քոչվորների հողերի «գնման» ուղիով։ Հողերի կենտրոնացման մի ուրիշ միջոցն էլ այն էր, որ ապրանքային տնտեսության զարգացման հետևանքով քաղաքային բուրժուազիան հող էր գնում։

Այսպիսով, մանդատային իշխանությունների հողային «ռեֆորմը» նպաստեց կալվածատերերի հողային սեփականության ընդլայնմանը և գյուղացիության հիմնական մասսայի հողազրկմանը[128]։ Հողօգտագործման և հողատիրության միջև բացարձակ խզում առաջացավ։ Սիրիայում «ով մշակում էր հողը, նա դրա տերը չէր, իսկ ով հողի տերն էր, նա չէր մշակում այն»[129]։

Դամասկոսի շրջանում հողերի 60%-ը պատկանում էր խոշոր, 15%-ը՝ միջակ և 25%-ը՝ մանր հողատերերին։

Սիրիայում խոշոր հողատիրության գոյության մասին են ապացուցում նաև հետևյալ թվերը։ Համայի պրովինցիայում 164 գյուղերի հողային ֆոնդի 80%-ը իրենց ձեռքում էին պահում ֆեոդալական հինգ ընտանիքներ[130]։ Տասնյակ գյուղերի հողային ֆոնդի իսկական տերերը եղել են 7 հարուստ ընտանիքներ՝ Բարազի, Ազմ, Քիլանի, Քեյֆուր, Շիշակլի, Բարուդի և Մարխեք ընտանիքները։ Բարազիները տիրել են 49 գյուղերի հողային ֆոնդին, Ազմիները՝ 25, Քիլանիները՝ 24 և այլն։ Այսպիսի քաղաքականությունը հասցրեց այն բանին, որ 1918—1946 թթ. ընթացքում մանր հողատիրության տեսակարար կշիռը 25%-ից իջավ 15%-ի[131]։

Սիրիայի հողերի զգալի մասը կազմում էին մուսուլմանական մզկիթներին պատկանող վակֆ հողերը։ Մուսուլման հոգևորականության վերին խավը մեծ եկամուտներ էր ստանում վակֆ հողերի օգտագործումից և արաբ գյուղացիության շահագործումից։ Այս եկամուտները 1921 թ. 5,3 միլիոն ֆրանկից 1926 թ. հասան 13,1 միլիոն ֆրանկի։

---

[128] *D. Warriner,* Land and poverty in the Middle East, London 1948, p. 85.

[129] *Ж. Велерс,* Крестьяне Сирии и Ливана, М., 1954, стр. 146.

[130] محمد كرد علي، كتاب خطط الشام، دمشق ١٩٧٣، ص ٢١٤

[131] «Современная Сирия», стр. 52.

Գյուղացիության հողազրկման հետևանքով ֆրանսիական տիրապետության տարիներին մեծ տարածում գտավ հողերի վարձակալման սիստեմը։ Գյուղացիության մոտ 75%-ը վարձակալում էր։ Վարձակալման պայմանները խիստ ծանր էին։ Գյուղացին հարկադրված էր կալվածատիրոջը վճարել բերքի 50—80%-ը[132]։

Ֆրանսիական մանդատի տարիներին Սիրիայի գյուղատնտեսությունը այդպես էլ դուրս չհկավ ճգնաժամային վիճակից։ Նրա զարգացման համար չէին հատկացվում անհրաժեշտ կապիտալներ։ 30-ական թվականներին գյուղատնտեսությանը հատկացված գումարը կազմել է բյուջետային ծախսումների ընդամենը 2,3%-ը[133]։ Չափազանց ցածր էր բերքատվությունը։ Թվի տեղի ունեցավ ցանքատարածությունների զգալի ընդարձակում (Սիրիայում 1922 թ. մշակվել է 650 հազար հա, իսկ 1938 թ. 876 հազար հա)[134], սակայն դա չլուծեց Սիրիան գյուղատնտեսական ապրանքներ արտահանող երկրի վերածելու խնդիրը։ Դեռ ավելին. գյուղատնտեսական արտադրանքը Սիրիայում Ֆրանսիայի տիրապետության տարիներին այդպես էլ չհասավ նախապատերազմյան՝ 1913 թ. մակարդակին[135]։

Բացառիկ ծանր վիճակի մեջ էր գտնվում Սիրիայի ազգային արդյունաբերությունը։ Առաջին համաշխարհային պատերազմը մեծ հարվածի էր հասցրել երկրի առանց այդ էլ թույլ զարգացած արդյունաբերությանը, իսկ ֆրանսիական իշխանությունները արգելակում էին նրա հետագա զարգացումը, Սիրիան համարելով հումքի աղբյուր և վաճառահանման շուկա։

Մանդատային իշխանությունները հատկապես արգելակում էին Սիրիայում ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության առաջացմանը։ Վերահսկողություն հաստատելով բանկային գործունեության վրա, նրանք միտումնավոր կերպով կապիտալը ուղղում էին առևտրի, թեթև արդյունաբերության և մասամբ էլ գյուղատնտեսության ոլորտը։ Այդպիսի քաղաքականության հետևանքով Ֆրանսիայի տիրապետության տարիներին Սիրիայում չստեղծվեցին արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչպես մետալուրգիական, մեքենաշինական, քիմիական և այլն։ 1928—1945 թթ.

---

132 Նույն տեղում։

133 *В. Викторов*, Экономика современной Сирии, 1968, стр. 13.

134 Նույն տեղում, էջ 16։

135 «Современная Сирия», стр. 47.

կապիտալ ներդրումները արդյունաբերության մեջ չեն անցել 40 մլն. լիրայից[136]։

Արդյունաբերության զարգացումը Սիրիայում ընթացել է միակողմանի։ Արդյունաբերական ճյուղերից շատ քիչ զարգանում էին թեթև, տեքստիլ, սննդի և գյուղատնտեսական հումքի մշակման ճյուղերը։ Հալեպում, Դամասկոսում, Համայում, Հոմսում և այլ քաղաքներում կային մանվածքային, գործվածքային, ցեմենտի, ասֆալտի, օճառի, գարեջրի, պահածոների և այլ գործարաններ։ 1928 թվականից մինչև 1945 թ. Սիրիայում կազմակերպվել է ընդամենը յոթը բաժնետիրական արդյունաբերական ընկերություն՝ 19 մլն. սիրիական լիրա կապիտալով[137]։ Ձգտելով արգելակել սիրիական ազգային արդյունաբերության զարգացումը, մանդատային իշխանությունները 1929 թ. մերժեցին սիրիական արդյունաբերական բանկ ստեղծելու առաջարկը[138]։ Քանի որ արդյունաբերությունը թույլ էր զարգացած, ուստի և ցածր էր նրա տեսակարար կշիռը ազգային եկամտի մեջ։ Արդյունաբերության բաժինը Սիրիայի ազգային եկամտի մեջ 1944 թ. կազմել է ընդամենը 10%[139]։ Ազգային արդյունաբերության մեջ զգալի տեղ էին գրավում մանր արդյունաբերական և արհեստավորական ձեռնարկությունները։ Սակայն մանդատի տարիներին նրանց զարգացման համար ստեղծվեցին միանգամայն անբարենպաստ պայմաններ։

Սիրիայի տնայնագործական արդյունաբերությանը հատկապես մեծ վնաս հասցրեց «բաց դռների» քաղաքականությունը, որի հետևանքով սիրիական շուկան լցվեց օտարերկրյա՝ ֆրանսիական, անգլիական, ամերիկյան և ճապոնական ապրանքներով։ Տեղական արհեստավորների արտադրանքը, մասնավորապես տեքստիլ արդյունաբերության, որը երկար տարիներ բավարարում էր ներքին շուկայի պահանջները, չսպառվեց՝ առաջացած կոնկուրենցիայի հետևանքով։ Այս հանգամանքը հանգեցրեց այն բանին, որ տեղական արդյունաբերությունը մեծ անկում ապրեց, հազարավոր արհեստավորներ և բանվորներ մնացին առանց աշխատանքի, կտնայք, որոնք իրենց երեխաների հետ տանը աշխատելով չնչին վարձ էին ստանում, կորցրին իրենց եկամտի աղբյուրը[140]։

---

136 Նույն տեղում, էջ 69։

137 *В. Викторов*, Экономика современной Сирии, стр. 12.

138 Նույն տեղում։

139 «Современная Сирия», стр. 69.

140 *Farra Adnan*, L'industrial tien Syrie, Geneve, 1950, p. 156.

Սիրիայում մետաքսի արդյունաբերությունը նույնպես անկում ապրեց, և շատ գործարաններ և տնայնագործական արհեստանոցներ փակվեցին։ Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Հալեպում գործել են մոտ 20 հազար մետաքսագործական արհեստանոցներ՝ 70 հազար բանվորներով, իսկ 1926 թ. այդ թիվը համապատասխանաբար եղել է 5300 և 30 հազար[141]։

Ֆրանսիական իմպերիալիստները կոնցեսիոն հիմունքներով իրենց մենաշնորհը հաստատեցին Սիրիայի տնտեսության մի շարք կարևոր ճյուղերի վրա։ Օտարերկրյա կապիտալի տնօրինությանն անցան Սիրիայի երկաթուղիները, էլեկտրակայանները, քաղաքային տրանսպորտը, Բեյրութի նավահանգիստը, ծովային տրանսպորտը, Ծխախոտի Ռեժի ընկերությունը և այլն։

Սիրիայի տնտեսական կյանքին մեծ հարված հասցրեց նաև մանդատային իշխանությունների վալյուտային քաղաքականությունը։ Նրանք Սիրիայում լիկվիդացիայի ենթարկեցին ոսկու վալյուտայի վրա հիմնված թուրքական դրամական սիստեմը և երկրին դուրս տարան մեծ քանակությամբ հնչուն ոսկի[142]։ Թուրքական վալյուտան փոխեցին արժեքազրկված ֆրանկով։ Սիրիա-լիբանանյան բանկնոտների բաց թողումը իր ձեռքն էր վերցրել «Սիրիայի և Լիբանանի բանկը», որը գործում էր պետական բանկի իրավունքով։ Սիրիական բանկնոտները չէին ապահովված ոսկով և ֆրանկի արժեքազրկմանը զուգընթաց, արժեքազրկվում էր նաև սիրիական լիրան և անբարենպաստ ազդեցություն թողնում երկրի էկոնոմիկայի վրա, վնաս հասցնում տեղական բուրժուազիային, առանց այդ էլ քայքայված արհեստավորներին և գյուղացիությանը, խիստ պակասեցնում բանվորների իրական աշխատավարձը։ Վալյուտային այս սիստեմը Սիրիայի դաղութային կախվածության ամենատու օրինակ էր։

Աշխատավորների վիճակը խիստ ծանրացրեց մանդատային իշխանությունների հարկային քաղաքականությունը։ Հարկահանությունը, իր անօրինակ կամայական մեթոդներով, դժոխային չարիք էր արաբ գյուղացու համար։ Թուրքական տիրապետության ժամանակ արաբական վիլայեթներում հավաքվող «աշար» (տասանորդ) հարկը մանդատային իշխանությունները վերացրին և

---

[141] «Страны Востока. I. Ближний Восток», стр. 243.

[142] *Moussali*, Etudes ecnomique sur la Syrie et an Liban, Harrisa (Liban). 1933, p. 61.

մացրին դրամահարկ, որն ավելի մեծ չափով էր գանձվում, քան աշարը։ Այդ մասին «Նոր լուր» թերթը գրել է. «Ֆրանսացիք Սուրիան դրավելե քիչ առեն վերջ, վերցուցած են հին տասանորդը և հարկադրած են յուրաքանչյուր գյուղի ժողովուրդը մեծ դրամ մը հատուցանելու միանվագ կերպով և հենուն դրամ։ Գյուղացին իր ճակատին քրտինքով հասցուցած բերքը լիովին կառավարության կուտա և ասոր հակառակ տուրքին պարտքը չի կրնար վճարել։ Պարտքերը ամեն տարի վրա վրայի գալով, երբ անոնք այլևս որոշ չափի մը կհասնին, հողերն ու ագարակները կը ծախվին»[143]։

Բացի թուրքական հին հարկերից մանդատային իշխանությունները պահպանեցին ռազմական ժամանակի արտակարգ հարկերը։ Նրանք բնակչությանը հարկեցին ռաղմատուգանքներով, որոնց չափը ոչ մի հաշվարկման չէր կարելի ենթարկել[144]։ Օկուպացիոն իշխանությունները Սիրիայի աշխատավորության վզին փաթաթեցին նաև Օսմանյան կայսրության նախապատերազմյան պարտքերի ծանր լուծը։ Սիրիան պարտավոր էր վճարել օսմանյան պարտքերի իր բաժինը՝ 8,41%-ը, որ կազմում էր թուրքական 10.070 հազար ոսկի լիրա[145]։

Հարկը հավաքվում էր բռնի մեթոդներով։ Գյուղ եկած հարկահավաքը ամեն տեսակ սպառնալիքներով, զեղծումների, չարաշահումների միջոցով գյուղացուց վերցնում էր օրենքով սահմանվածից շատ ավելին[146]։

Սիրիայի գյուղացիության շահագործման ձևերից էր նաև ծխախոտի ֆրանսիական մոնոպոլիստների «Ռեժի» ընկերության վարած քաղաքականությունը։ Այս ընկերությունը, որն ստեղծվել էր դեռևս XIX դարի 80-ական թվականներին, իր ձեռքումն էր պահում գյուղացիական մանր արտադրությունը։ Ըստ «Ռեժիի» կանոնների, գյուղացին ծխախոտ արտադրելու համար թույլատվություն պիտի ստանար ընկերությունից։ Նա պարտավոր էր ծխախոտի իր բերքը վաճառել միայն ընկերությանը՝ նրա սահմանած գներով։ Հետևաբար, «Ռեժիից» էր կախված ծխախոտագործ գյուղացիների և մանր առևտրականների բախտը։ «Ռեժին» տնօրինություն էր անում նաև սպառողների վրա։ Չափազանց ցածր գներով

---

143 «Նոր լուր», Կ. Պոլիս, 30.X.1936։

144 *В. Луцкий*, Национально-освободительная война в Сирии, стр. 83.

145 *М. Гатаулин*, Аграрные отношения в Сирии, М., 1954, стр. 6.

146 *N. Mounayer*. Le Regim de la terre en Syrie. Paris, 1929, p. 221.

գյուղացուց գնված ծխախոտը տասնապատիկ գներով էր վաճառվում շուկայում։

Թե ֆրանսիական մոնոպոլիստները ինչպիսի վնաս հասցրին երկրի տնտեսությանը և ծխախոտագործ գյուղացիներին, երևում է «Սաութ ալ-Ահրար» թերթի մի հոդվածից, որտեղ ասված է. «Ծխախոտի մշակումը և գլանակների արտադրությունը սիրիացու կյանքի համար վերջին ամենամեծ աղբյուրն էր։ Երկաթուղիները և ավտոմոբիլային ճանապարհները, նավահանգիստները, մաքսատունը և այլն, վաղուց հանձնված են արտասահմանյան մոնոպոլիստներին։ Այժմ հաշիվը բոլորվեց։ Ծխախոտի մենաշնորհը արտասահմանյան մոնոպոլիստներին հանձնելով՝ սիրիացին կորցնում է եկամտի վերջին աղբյուրը»[147]։

Մանդատային իշխանությունները ոչ մի բարելավում չմտցրին գյուղացիների կենցաղում։ Խիստ ծանր էին նրանց կենսապայմանները։ Միսը հազվագյուտ երևույթ էր գյուղացու ընտանիքում։

Լաթաքիայի պրովինցիայում յոթը գյուղերի ուսումնասիրման տվյալները ցույց են տվել, որ գյուղացու խրճիթում չի եղել ոչ մի վահկարասի, կենսական բոլոր պահանջմունքները՝ ուտելը, քնելը, հանգիստը կատարվել են ուղղակի գետնի վրա, գյուղացիների մոտ 95 տոկոսը քնել է ցերեկային հագուստով[148] և այլն։

Ծանր էին նաև բանվորների աշխատանքային պայմանները։ Տեխնիկայի ցածր մակարդակը պահանջում էր գործադրել ֆիզիկական մեծ ուժ։ Ջուլհակ բանվորը աշխատում էր հակասանիտարական պայմաններում։ Աշխատանքի պաշտպանության օրենք բոլորովին գոյություն չուներ, բանվորական օրը տևում էր 10—14 ժամ։ Աշխատանքի միջազգային բյուրոյի ներկայացուցիչները նշել են, որ ֆրանսիական մանդատի շրջանում արդյունաբերական և արհեստագործական ձեռնարկություններում զբաղված շատ սիրիացիների աշխատանքային օրը կարգավորվել է արևի ծագումով և մայրամուտով[149]։ Տեքստիլ արդյունաբերության մեջ աշխատող բանվորները օրական ստանում էին 40—50, կանայք 15—25, երեխաները 10—15 ղուրուշ։ Բայց դա բավական չէր ապրուստի անհրաժեշտ պահանջների անգամ կեսը բավարարելու համար։

---

147 «Սաութ ալ-Ահրար» (صبور الاحرار) Բեյրութ, 23.I.1935։

148 S. Doodd, A controlled experiment on rural hygiene in Syria, Beirut, 1934, p. 36.

149 „International Labor Review", Geneve, 1959, vol. 34, № 4, pp. 519—520.

Տնայնագործական արդյունաբերության անկման և արդյունաբերության մեջ նոր կատարելագործված մեքենաների տեղադրման հետևանքով հազարավոր բանվորներ և արհեստավորներ փողոց նետվեցին։ Երկրում առաջացավ գործազրկություն։ Սիրիայում ստեղծված տնտեսական վատ պայմանները շատերին ստիպում էին հեռանալ երկրից և աշխատանք փնտրել այլ վայրերում։ 1926—1933 թթ. Սիրիայից արտագաղթել է 61.212 մարդ[150]։

Ֆրանսիական տիրապետության ժամանակ Սիրիայում վատ էր կազմակերպված բժշկական սպասարկումը։ Շատ տարածված էին մի շարք հիվանդություններ, հատկապես մալարիան և տրահոման։

Բավարար ուշադրություն չէր դարձվում նաև ժողովրդական կրթության գործին։ Մանդատային Սիրիայում բնակչության մեծամասնությունը անգրագետ էր։ Շատ քիչ էին դպրոցները, մանավանդ գյուղական վայրերում։ Իսկ ինչ վերաբերում էր բարձրագույն կրթությանը, նա մատչելի էր միայն հարուստների զավակներին։

Սիրիան 1928—1934 թթ.։ Ֆրանսիական իմպերիալիստները թեև ճնշեցին սիրիական ժողովրդի ղինված ապստամբությունը, սակայն հասկանում էին, որ պետք է դիմել որոշ զիջումների և համագործակցություն հաստատել սիրիական բուրժուա-կալվածատիրական վերնախավի հետ։ Դեմոկրատական ուժերը պահանջում էին Սիրիայի անկախության և միասնության ճանաչում, սահմանադիր ժողովի գումարում և սահմանադրության ընդունում, քաղաքական ներում, դեմոկրատական իրավունքների հաստատում։ Ֆրանսիական նոր գլխավոր կոմիսար Անրի Պոնսոն[151] մասնակիորեն բավարարեց այդ պահանջները։ Վերացվեց ռազմական դրությունը և քաղաքական բանտարկյալների ճնշող մասը ազատվեց։ Ֆրանսիական իշխանությունները 1927 թ. վերջերին թույլատրեցին «Ազգային բլոկ («Քութլա վաթանիյա») բուրժուական ռեֆորմիստական խմբավորման գործունեությունը, որն առաջացավ արգելված «ալ-Շաաբ» կուսակցության հիմքի վրա։ Նրա ղեկավարներն էին Հաշիմ ալ-Աթասին և Շուքրի Քուաթլին[152]։

Նրա ծրագիրն ընդունվեց 1927 թ. վերջերին Բեյրութում կայացած համագումարում, որի հիմնական պահանջները դարձան

---

150 *Himadeh Said*, Economic Organisation of Syria, Beirut, 1936, p. 17.

151 Սա դը ժովենելին փոխարինեց 1926 թ. օգոստոսին։

152 «Современная Сирия», стр. 185.

Սիրիայի ազգային անկախության և երկրի միասնության պահանջները[153]: Վաթանիստները, որոնք Սիրիայի անկախությունն ու միասնությունն էին պահանջում, միևնույն ժամանակ դեմ չէին Ֆրանսիային տալ տնտեսական և քաղաքական արտոնություններ: Նրանք Պոնսոյից պահանջեցին Սահմանադիր ժողովի հրավիրում, մանդատի փոխարինում ֆրանս-սիրիական պայմանագրով, մանդատային ռեժիմի երկրին հասցրած վնասների հատուցում և այլն:

1928 թ. փետրվարի սկզբներին հրաժարական տվեց Ահմադ Նամի Դամադի կառավարությունը, որը իշխանության գլուխ էր գտնվում մոտ 20 ամիս: Նա մասնակցել էր սիրիական ապստամբության ճնշմանը: Գերագույն կոմիսարի 1928 թ. փետրվարի 4-ի հրամանով Թաջ էդ-Դինը կազմեց Սիրիայի նոր կառավարություն:

Վերջապես Պոնսոն միջնց նաև սահմանադիր ժողովի ընտրություններ անցկացնելու հարցում: 1928 թ. ապրիլի 24-ին կայացան սահմանադիր ժողովի ընտրություններ, որտեղ հաղթանակ տարավ «Քութլա վաթանիյան»[154]: Սահմանադիր ժողովի առաջին նիստը բացվեց 1928 թ. հունիսի 9-ին: Ժողովի նախագահ ընտրվեց Հաշիմ Աթասին: Սահմանադիր ժողովի առաջին նիստում ընտրվեց սահմանադրությունը մշակող հանձնաժողով, որ գլխավորում էր 1925—1927 թթ. ապստամբության ղեկավարներից մեկը՝ Իբրահիմ Հանանոն: Երկու ամիս անց ներկայացվեց Սիրիայի սահմանադրության նախագիծը, որը բաղկացած էր 115 հոդվածներից: Սահմանադրությունը չէր ճանաչում ֆրանսիական մանդատը և Սիրիան համարում էր անկախ և միասնական հանրապետություն: Սահմանադիր ժողովն անմիջապես կոնֆլիկտի մեջ մտավ օկուպացիոն իշխանությունների հետ: Գերագույն կոմիսարը պահանջում էր նախագծից հանել այն հոդվածները, որոնք նա համարում էր մանդատի ոգուն հակասող, առարկելով, թե առանց Ազգերի լիգայի սանկցիայի Ֆրանսիան իրավասու չէ այդ հոդվածներով արծարծվող խնդիրները լուծել[155]: Դրանք 2, 73, 74, 75, 110 և 112 հոդվածներն էին, որոնք ապահովում էին Սիրիայի միասնությունն ու լիակատար անկախությունը, հանրապետության նախագահին տալիս լայն իրավունքներ ներման, միջազգային պայմանագրերի

---

153 Նույն տեղում:

154 احسان هندى، كفاح الشعب العربى السورى، ص ١٣٤

155 نجيب ارمنازى، محاضرات عن سوريا من الاحتلال حتى الجلاء، القاهرة، ١٩٥٤ ص ٦٠

կնքման, ազգային բանակի կազմակերպման և այլ քննագավառներում։

Սահմանադիր ժողովը, բացի վեց անդամներից, որոնց մեջ էր նաև Բաջ էդ-Դինը, մերժեց ֆրանսիական առաջարկները, որից հետո Գերագույն կոմիսարի օդոստոսի 11-ի հրամանով, նրա աշխատանքներն ընդհատվեցին երեք ամսով։

Գերագույն կոմիսարի կամայական այս արարքին ժողովուրդը պատասխանեց բողոքի նոր ցույցերով ու գործադուլներով։ Այս ցույցերի ժամանակ ձերբակալված և բանտերում տանջանքների ենթարկված 32 ուսանողներ հեռագիր ուղարկեցին Փարիզ՝ Մարդու իրավունքների կոմիտեին, բողոքելով խաղաղ ցուցարարների նկատմամբ կատարված բռնությունների դեմ[156]։

Ֆրանսիական կառավարության հետ խորհրդակցելու համար Պոնսոն 1928 թ. մեկնում է Փարիզ։ Սակայն այնտեղ մտադիր չէին Սիրիայի մանդատից հրաժարվել։ Պոնսոն վերադառնալով Սիրիա և երկար բանակցություններից հետո համաձայնության չգալով վաթանիստների հետ, 1930 թ. մարտի 14-ին միակողմանիորեն ուժի մեջ մտցրեց Սիրիայի սահմանադրությունը, նրա 115 հոդվածներին ավելացնելով նաև 116-րդը։ Այդ հոդվածը ուժի մեջ էր թողնում ֆրանսիական մանդատը և արձանագրում, որ սահմանադրության մեջ փոփոխություններ կարելի է մտցնել միայն հատուկ ֆրանս-սիրիական համաձայնագիր կնքելու միջոցով։ Գերագույն կոմիսարի միակողմանի գործողությունը խիստ բողոքներ առաջացրեց ամբողջ երկրում։ Նորից ցույցեր ու գործադուլներ տեղի ունեցան, մասսաները պահանջում էին կենսագործել սահմանադիր ժողովի կազմած սահմանադրությունը և դատապարտում 116-րդ հոդվածի անօրինական ավելացումը։ «Քուվլա վաթանիյան» հայտարարեց, որ նա երբեք չի հրաժարվի սահմանադիր ժողովի կազմած սահմանադրությունից[157]։ Դամասկոսում տեղի ունեցած մեծ միտինգում վաթանիստների ղեկավարներից Ջամիլ Մարդամը իր կուսակցության անունից կոչ արեց չճանաչել սահմանադրությունը արատավորող 116-րդ հոդվածը[158]։

Բայց ֆրանսիական իշխանությունները մտադիր չէին սիրիական հայրենասերների պահանջները բավարարել։

---

156 «Современная Сирия», стр. 146.

157 احسان هندى، كفاح الشعب العربى السورى، ص ١٦٥

158 نجيب الارمنازى، محاضرات عن سوريا من الاحتلال حتى الجلاء، ص ٦٨

1931 թ. սեպտեմբերին որոշում ընդունվեց դեկտեմբերին պառլամենտական ընտրություններ անցկացնելու մասին։

Ֆրանսիայի նպատակն էր ընտրություններից հետո իրեն նվիրված մարդկանցից կազմել մի կառավարություն, որը կկնքեր ֆրանս-սիրիական համաձայնագիր։ Այդ համաձայնագրով նախատեսվում էր վերացնել մանդատը, սակայն ապահովել Ֆրանսիայի տիրապետող ռազմական, քաղաքական և տնտեսական դիրքերը Սիրիայում։

Ընտրությունների գործը Պոնսոն իր ձեռքը վերցրեց և իր ռեզիդենցիան Բեյրութից փոխադրեց Դամասկոս, որպեսզի ապահովի իր թեկնածուների հաղթանակը։ Ընտրական հանձնաժողովների անդամներ Պոնսոն նշանակեց երկրի ամենառեակցիոն անձերին։

Ընտրություններն անցկացվեցին երկու հերթով։ Առաջին հերթը կայացավ 1931 թ. դեկտեմբերի 20-ին, 2-րդը՝ 1932 թ. հունվարի 5-ին։

Ընտրությունների նախօրեին Սիրիայի գլխավոր քաղաքներ Դամասկոսում, Հալեպում, Համայում և Հոմսում ֆրանսիական զորքերը մարտական պատրաստության մեջ դրվեցին։ Այս քաղաքներում նախընտրական կամպանիան սուր բնույթ ստացավ։ Իրենց թեկնածուների հաղթանակը ապահովելու համար Հալեպի ֆրանսիական իշխանությունների լիազորը իր մոտ հրավիրեց քրիստոնյաների ներկայացուցիչներին ու հրամայեց, որպեսզի նրանք ազգային փոքրամասնությունների համար Ֆրանսիայի պաշտպանությունը պահանջեն և վաթանիստների թեկնածուների դեմ քվեարկեն[159]։ Վաթանիստների թեկնածուներին պաշտպանելու համար Հաուրանի շրջանի գյուղերի ավագները հեռացվեցին իրենց պաշտոններից[160]։ Հալեպում ոստիկանությունը ձերբակալեց դոկտոր Հասան Իբրահիմին և ուրիշ ազգայնականների՝ վաթանիստների օգտին ագիտացիա անելու համար։ Օկուպանտները գործադրում էին կաշառելու, շանտաժի, սպառնալիքի և այլ մեթոդներ, իսկ մինչև ընտրությունները քվեատուփերը լցրել էին կեղծ բյուլետեններով։ Դեկտեմբերի 20-ին, ընտրությունների օրը, Սիրիայի քաղաքները լցվեցին ֆրանսիական զորքերով և տանկերով։ Հակառակ այս բոլորին, վաթանիստները փորձում են հսկողություն սահ-

---

159 امين سعيد، الثورة العربية الكبرى، ج ٣، ص ٥٦٩

160 «Материалы по национально-колониальным проблемам», М., 1932, № 3, стр. 148.

մանել քվեատուփերի վրա։ Դամասկոսում և ուրիշ քաղաքներում ժողովուրդը հարձակվում է քվեատուփերի վրա, ջարդում դրանք ու վառում կեղծ բյուլետեններ։ Այդ ժամանակ զորքը կրակում է ժողովրդի վրա։ Ֆրանսիական իշխանությունների միջամտությունը ընտրություններին և խաղաղ ընտրողների գնդակոծումը մեծ հուզումներ առաջացրին ամբողջ երկրում, իսկ դեկտեմբերի 20-ին սպանվածների թաղումը վերածվեց հակաիմպերիալիստական հսկա ցույցի։

Սիրիական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի այս շրջանում, չնայած իր անլեգալ գոյությանը և ֆրանսիական զինվորականության կողմից սանձազերծվող խիստ հալածանքներին, զգալի դեր խաղաց Սիրիայի կոմունիստական կուսակցությունը։ 1930 թ. կայացավ կոմկուսի առաջին համագումարը[161]։ Համագումարն ընդունեց կոմկուսի գործունեության ծրագիր և հաստատեց նրա գլխավոր պահանջները։ Կոմկուսը պահանջում էր պայքարել իմպերիալիզմի դեմ, հասնել Սիրիայի լիակատար անկախության նվաճմանը, ֆեոդալների և պետական հողերը բաժանել աղքատ գյուղացիներին, սահմանել 8-ժամյա բանվորական օր, երկրում ստեղծել բանվորա-գյուղացիական իշխանություն և այլն[162]։ 1931 թ. նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության տարեդարձի օրը, Սիրիայում և Լիբանանում կոմկուսի ղեկավարությամբ տեղի ունեցան բանվորական ցույցեր, տարածվեցին հակաիմպերիալիստական թռուցիկներ և այլն[163]։

Հակաիմպերիալիստական պայքարի անընդհատ վերելքի շրջանում, որին ներգրավվում էին ավելի լայն մասսաներ, քաղաքական մեծ նշանակություն ուներ հեղափոխական մամուլը։ Այսպիսի մամուլ ունենալու հարցը ազգային-ազատագրական շարժման ամենահրատապ հարցերից մեկն էր։ Աշխատավոր մասսաներին հեղափոխական ոգով դաստիարակելու, մոբիլիզացնելու և իմպերիալիզմի դեմ պայքարելու համար կոմկուսը 1930—1931 թթ. նախ հրատարակում է «Սաուբ ալ-Ումմալ» (Բանվորների ձայնը) լեգալ թերթը[164], իսկ հետագայում՝ «Ալ-ֆաջր ալ-ահմար» (Կարմիր արշալույս) անլեգալ թերթը՝ արաբերեն և հայերեն։

---

161 «Новейшая история арабских стран», стр. 54.

162 «Коммунистический Интернационал», 10. VIII. 1930.

163 *W. Laqueur*, Communism and Nationalism in the Middle East, London, 1957, p. 141.

164 Նույն տեղում։

Բռնության ու կեղծիքի պայմաններում անցկացրած պառլամենտական ընտրություններում հաղթող դուրս եկան պրոֆրանսիական ֆեոդալական-կոմպրադորական ուժերը: Նրանք պառլամենտում ստացան 52 տեղ, իսկ «Քութլա վաթանիայի» ներկայացուցիչները՝ 17 տեղ: Պառլամենտի 1932 թ. հունիսի 7-ի նիստում, հանրապետության պրեզիդենտ ընտրվեց Մուհամմեդ Ալի ալ-Աբիդը, իսկ պառլամենտի նախագահ՝ Սուբհի Բարաքաթը: Հունիսի 14-ին Հաքքի ալ-Ազման կազմեց սիրիական նոր կառավարություն, որի մեջ ֆինանսների և լուսավորության մինիստրների պոստերը գրավեցին վաթանիստները:

Ինչպես հայտնի է, Պոնսոն ձգտում էր ֆրանս-սիրիական պայմանագրի կնքմանը, որը ձևականորեն վերացնելու էր մանդատային ռեժիմը, սակայն պահպանելու էր ֆրանսիական իմպերիալիստների քաղաքական և տնտեսական տիրապետող դիրքերը Սիրիայում:

Անհրաժեշտ է ավելացնել, որ ֆրանսիական իշխանությունները վճռականապես դեմ էին միասնական Սիրիա ստեղծելու ծրագրերին:

Ֆրանսիան Ազգերի լիգայի մանդատային հանձնաժողովում միշտ պնդել է Սիրիայի ներքին կյանքին միջամտելու անհրաժեշտությունը, գտնելով, որ իբր թե սիրիացիները ի վիճակի չեն պետություն կառավարել: Այս մտայնությամբ կազմվեց ֆրանս-սիրիական պայմանագրի նախագիծ, որը հագեցված էր երկրի քաղաքական կյանքի բոլոր բնագավառներին միջամտելու ոգով: Այս պայմանագիրը, որ մեծ նշանակություն պիտի ունենար ֆրանս-սիրիական հետագա հարաբերությունների զարգացման համար, չէր համապատասխանում Սիրիայի անկախության նպատակներին և սիրիական ժողովրդի շահերին:

Նկատի առնելով, որ ֆրանսիական իշխանությունների հետ տարվող բանակցությունները ոչ մի արդյունք չեն տալիս, և երկրի միասնության մասին սիրիացիների հույսերը չեն արդարանում, վաթանիստները, 1933 թ. փետրվարի 17-ին Հալեպում կայացած համագումարում որոշեցին չընդունել գերագույն կոմիսարի առաջարկած պայմանագրի նախագիծը և պաշտպանել երկրի միասնության և ինքնորոշման իրավունքները: Միևնույն ժամանակ, համագումարը որոշեց վաթանիստ դեպուտատներին և մինիստրներին ետ կանչել պառլամենտից և կառավարության կազմից[165]: Սիրիայի

---

[165] احسان هندی، كفاح الشعب العربی السوری، ص ١٦٦

մասնատվածությունը և օկուպացիոն ռեժիմը պահպանող պայմանագրի այս նախագծի դեմ բողոքի նորանոր ցույցեր են տեղի ունենում։ Ամբողջ երկիրը գործադուլ է հայտարարում։ Իսկ Հալեպի տեքստիլագործների գործադուլը վերածվում է հսկա ցույցի։ Ամբողջ երկիրը պահանջում էր պայմանագիր կնքել միայն երկրի լիակատար անկախության և միասնության սկզբունքի հիման վրա։ Սիրիան շարունակում էր մնալ քաղաքական անկայուն վիճակում։

Պոնսոն իր յոթը տարիների գործունեության ընթացքում նույնպես չկարողացավ սիրիական ժողովրդին հնազանդեցնել և հասնել Ֆրանսիայի իմպերիալիստական ծրագրերի կենսագործմանը։

1933 թ. աշնանը ֆրանսիական կառավարությունը Պոնսոյի փոխարեն Սիրիայում և Լիբանանում գլխավոր կոմիսար նշանակեց կոմս դը Մարթելին, որն «ամուր ձեռքի» քաղաքականության կողմնակից էր։ Ֆրանսիական ղեկավար շրջանները Մարթելին Սիրիայում գերագույն կոմիսար նշանակելով, հույս ունեին, որ նա իր հաստատակամությամբ ու դիվանագիտական փորձով կարող է հասնել ֆրանս-սիրիական պայմանագրի ստորագրմանը։

Թե ֆրանսիական իմպերիալիստները ինչպիսի կարևոր նշանակություն էին տալիս Սիրիայում իրենց տիրապետությունը այս կամ այն ձևով պահպանելուն, երևում է ֆրանսիական թերթի հետևյալ տողերից. «Մենք չպետք է մոռանանք, որ Սիրիան երեք ցամաքամասերի՝ Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի միացման տեղում է գտնվում և որ Սիրիական ափերի հենակետերը մի գեղեցիկ օր կարող են անգնահատելի դառնալ միջերկրածովյան և գաղութային մեծ պետության համար։ Մենք նույնպես չպիտի մոռանանք, որ Միջագետքի նավթամուղի ճյուղը իր ելքը պիտի ունենա Տրիպոլիի նավահանգստում։ Բանակի մոտորացման, ավիացիայի զարգացման և այլնի հետևանքով, պատերազմի դեպքում մենք այստեղ կունենանք հաղթելու ամենամեծ գրավականը»[166]։

Դը Մարթելը Սիրիա ժամանեց 1933 թ. հոկտեմբերին և անմիջապես բանակցություններ սկսեց սիրիական կառավարության հետ՝ պայմանագիր կնքելու հարցի շուրջը։ Վաթանիստները նրան զգուշացնում են, որ Սիրիան չի կարող բավարարվել այնպիսի պայմանագրով, որտեղ նախատեսված չէ երկրի միասնության և

---

[166] „L'Europe Nouvelle", 8.IV.1933.

սուվերենության հարցը և որ այդպիսի պայմանագիրը ստորագրելու և այն պառլամենտի վավերացմանը ներկայացնելու գերագույն կոմիսարի բոլոր ջանքերը կմատնվեն անհաջողության[167]։

Սակայն մանդատային իշխանությունները հաշվի չառան վաթանիստների լուրջ զգուշացումը։

Ֆրանս-սիրիական պայմանագրի նախագծում նշված էր, որ Ազգերի լիգայի կանոնադրության 22-րդ հոդվածի կենսագործման հետևանքով, Սիրիան ձեռք է բերել որոշ առաջադիմություն և այս հանգամանքը Ֆրանսիային պարտավորեցնում է պայմանագիր կնքել Սիրիայի հետ մանդատը վերացնելու, Սիրիան սուվերեն պետություն հռչակելու և Ազգերի լիգայի անդամ դարձնելու համար։ 12 հոդվածներից բաղկացած այս պայմանագրում ասված էր նաև, որ Սիրիայի արտաքին հարաբերությունները պիտի վարի Ֆրանսիան, Սիրիայի պաշտպանության և անվտանգության համար Ֆրանսիան ռազմական օգնություն պիտի ցույց տա Սիրիային, ֆրանսիական մանդատը Սիրիայի վրա շարունակվելու է մինչև որ այն ընդունվի Ազգերի լիգայի մեջ։ Ֆրանսիական ցամաքային և օդային ուժերը մնալու են Սիրիայում վերոհիշյալ նպատակների համար։ Պայմանագրով Ջեբել Դրուզը և Լաթաքիան ֆինանսապես և վարչականորեն անկախ շրջաններ էին համարվում։

Սիրիական կառավարությունը, որ բաղկացած էր սիրիական բուրժուազիայի պրոֆրանսիական կողմնորոշում ունեցող ներկայացուցիչներից, հնազանդորեն ստորագրեց պայմանագիրը։ Կառավարության այս քայլը ոտնատակ էր անում սիրիական ժողովրդի ազգային իրավունքները, քանի որ Սիրիան տնտեսական, քաղաքական և ռազմական հարցերում շարունակում էր մնալ ֆրանսիական իմպերիալիստների լիակատար ազդեցության տակ։

Պայմանագրի ստորագրումից հետո Մարթելի և Հաքքի ալ-Ազմի միջև նամակների փոխանակություն տեղի ունեցավ Ջեբել Դրուզի և Լաթաքիայի վարչական ռեժիմի մասին։ Սիրիական կառավարությունը համաձայնվում էր նրանց վարչական և ֆինանսական ինքնուրույնության հետ[168]։

Հաքքի ալ-Ազմի կառավարության դավաճանական գործունեությունը բողոքի մեծ շարժում առաջացրեց ամբողջ երկրում։

---

[167] امين سعيد، الثورة العربية الكبرى، ج ٣، ص ٥٧٨

[168] Նույն տեղում, էջ 585։

Հրաժարական տվեց Ազմի կառավարության լուսավորության մինիստր Սելիմ Ջամբարդը։ Նա չստորագրեց պայմանագիրը, հայտարարելով, որ սիրիական ժողովուրդը, որ տասնհինգ տարի շարունակ պայքարել է իր անկախության համար, չի կարող ընդունել այնպիսի պայմանագիր, որը չի ապահովում երկրի միասնությունը[169]։

Պայմանագրի դեմ են արտահայտվում վաթանիստները։ Պայմանագրի դեմ ուղղված ցույց են կազմակերպում արաբ կանայք, որոնք շրջելով դեպուտատների տները, պահանջում են չընդունել երկիրը կապանքների մեջ պահող պայմանագիրը[170]։ Սիրիայի քաղաքական գործիչների կահիրեում տեղի ունեցած ժողովում ընդունած որոշումը նույնպես պահանջում էր պահպանել Սիրիայի միասնությունն ու ազգային սուվերենությունը։ Համաձայնագիրը դատապարտեց սուլթան Աթրաշը։ Նա հանդես եկավ ի պաշտպանություն Սիրիայի միասնության և նրա հետ Ջեբել Դրուզի միավորման[171]։ Մեծ ցույցեր տեղի ունեցան Դամասկոսում և Սիրիայի մյուս քաղաքներում։ Ամբողջ ժողովուրդը դատապարտում էր կառավարությանը, մանդատային իշխանությունների հետ համաձայնության գալու համար։

Կառավարության կողմից պայմանագրի ստորագրումից հետո, մանդատային իշխանությունները վավերացնելու համար այն ներկայացրին Սիրիայի պառլամենտին։ 1933 թ. նոյեմբերի 21-ին, պառլամենտի սեսիայում պայմանագիրը քննարկելիս, դեպուտատների վրա ճնշում գործադրելու նպատակով, ֆրանսիական զինված ուժերը շրջապատեցին պառլամենտի շենքը։ Սակայն, այս միջոցառումը էլ ավելի բորբոքեց մասսաների ցասումը և նրանք նոր ցույցերով պատասխանեցին իմպերիալիստների բռնություններին[172]։ Պառլամենտի անդամ, դոկտոր Թաուֆիկ Շիշակլին խիստ դատապարտեց պայմանագիրը և առաջարկեց մերժել այն[173]։

Պայմանագիրը պառլամենտի վավերացմանը ներկայացնելով, Մարթելը հույսը դրել էր գլխավորապես ֆրանսիական մանդատի կողմնակից չափավոր դեպուտատների վրա, որոնք պառլամեն-

---

169 نجيب الارمنازى، محاضرات عن سوريا من الاحتلال حتى الجلاء، ص ٧٩

170 امين سعيد، الثورة العربية الكبرى، ج ٣، ص ٥٨٦

171 نجيب الارمنازى، محاضرات عن سوريا من الاحتلال حتى الجلاء، ص ٦٦

172 G. Hadad, Fifty years of modern Syria and Lebanon, p. 81.

173 احسان هندى، كفاح الشعب العربى السورى، ١٩٠٧ – ١٩٤٨، ص ١٦٦

տում մեծամասնություն էին կազմում, սակայն Մարթելը չէր կարող կանխագուշակել, որ այդ մեծամասնությունը պետք է իր դեմ կանգնի։ Դրության այս փոփոխմանը մեծապես նպաստել էր հակամանդատային այն մեծ շարժումը, որ բորբոքվել էր ժողովրդական մասսաների մեջ։ Սիրիական պառլամենտը 46 ձայնով մերժեց վավերացնել ֆրանս-սիրիական պայմանագիրը։ Վիճաբանություններից հետո վաթանիստ Ջամիլ Մարդամը, դեպուտատների մեծամասնության անունից, հետևյալ որոշումը հրապարակեց. «Դեպուտատները արդեն ծանոթացել են կառավարության ստորագրած և պառլամենտի վավերացմանը ներկայացված պայմանագրին։ Նրանք գտնում են, որ այդ պայմանագիրը հակասում է ժողովրդի ձգտումներին, չի ապահովում երկրի միասնությունը, անկախությունը և սուվերենությունը, այդ պատճառով մենք նպատակահարմար ենք գտնում մերժել այն և 15 դեպուտատներից բաղկացած մի հանձնաժողով ընտրել պայմանագիրը մերժելու մասին որոշումը հիմնավորելու համար»[174]։ Գերագույն կոմիսարը ցրեց պառլամենտը։ Վաթանիստները և պայմանագրի վավերացումը մերժող դեպուտատները դուրս գալով պառլամենտի շենքից, ցույց կազմակերպեցին փողոցում և պահանջեցին Սիրիայի անկախությունը, ֆրանսիական զորքերի դուրս բերում երկրից և կառավարության հրաժարականը։ Նոյեմբերի 25-ին նույն դեպուտատները հավաքվեցին նիստ գումարելու համար, սակայն պառլամենտի շենքի ներսում և դրսում տեղավորված զորքը արգելեց նրանց ներս մտնել։ Դեպուտատներն ուղևորվեցին պառլամենտի նախագահի բնակարանը և այնտեղ քննարկելով ստեղծված դրությունը, հետևյալ որոշումը ուղարկեցին հանրապետության պրեզիդենտին, գերագույն կոմիսարին, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությանը և Ազգերի լիգային. «Մենք՝ ներքո ստորագրյալ դեպուտատներս, նոյեմբերի 21-ին կայացած պառլամենտի նիստում որոշեցինք մերժել կառավարության կողմից ստորագրված և պառլամենտի վավերացմանը ներկայացված պայմանագիրը, որը հակասում էր ժողովրդի շահերին, չէր ապահովում երկրի միասնությունը, անկախությունը և սուվերենությունը։ Պառլամենտի նիստերի հետաձգումը անհեթեթություն է և սահմանադրության խախտում։ Հետևաբար, մենք հաստատում ենք վերոհիշյալ պայմանագրի մեր մերժումը և գտնում ենք, որ ներկա

---

[174] امين سعيد، الثورة العربية الكبرى، ج ٣، ص ٥٨٧

կառավարությունը զրկված է սահմանադրական իրավունքներից։ Մենք ցանկացել ենք և ցանկանում ենք ամրացնել կապերը մեր և ֆրանսիական ազնիվ ժողովրդի միջև՝ մեր իրավունքները, միասնությունը և անկախությունը երաշխավորելու հիման վրա»[175]։

Այսպիսով, սիրիական ժողովրդի միասնական հանդես գալը տապալեց այն պայմանագիրը, որը չէր երաշխավորում երկրի լրիվ անկախությունը։

Ազատագրական պայքարի վերելքը 1934—1936 թթ.։ Հաքքի ալ-Աղմի կառավարությունը, զրկվելով ժողովրդի և պառլամենտի աջակցությունից ու վստահությունից, կորցրեց իր հեղինակությունը։ Երկրում նոր թափով շարունակվում էին բողոքները վարկաբեկված կառավարության իշխանության գլուխ մնալու դեմ։ Ուստի, չարված դրությունը որոշ չափով թուլացնելու և իրենց քաղաքականությունը ավելի հեշտ իրականացնելու նպատակով, մանդատային իշխանությունները կառավարության ղեկավարի պաշտոնին առաջ քաշեցին շեյխ Թաջ էդ-Դինին։ Նրանք հույս ունեին, թե Թաջ էդ-Դինը, որը կողմնակից էր Ֆրանսիայի հետ սերտ համագործակցության, պիտի կարողանա լուծել երկրի առջև ծառացած քաղաքական ու տնտեսական դժվարին խնդիրները։ 1934 թ. մարտի 16-ին ալ-Աղմի կառավարությունը հրաժարական տվեց և Թաջ էդ-Դինի գլխավորությամբ կազմվեց նոր կառավարություն[176]։

Թաջ էդ-Դինի կառավարության գլուխ անցնելը մեծ դժգոհություն առաջացրեց վաթանիստների շրջանում։ Նրանք Հալեպում հակամանդատային և հակակառավարական մեծ ցույցեր կազմակերպեցին, որոնք վերջացան արյունալի ընդհարումներով ու ձերբակալություններով։ «Նացիոնալիստները,— գրել է «Բեռլիներ Թագեբլատը»,— ուրբաթ օրը երեկոյան մեծ ցույց կազմակերպեցին Հալեպի մզկիթի առաջ՝ Սիրիայի ներկա ռեժիմի և ֆրանսիական մանդատի դեմ։ Ցույցի պատճառը Սիրիայի պրեզիդենտի և պրեմիեր-մինիստրի այցն էր Հալեպ։ Նացիոնալիստների ղեկավար Իբրահիմ Հանանոն բոցավառ ճառ արտասանեց ցուցարարների առջև։ Ոստիկանությունը կրակ բաց արեց ցուցարարների վրա»[177], Ձերբակալվեց 120 մարդ։ Նույն օրը ռումբ պայթեց հա-

---

175 امين سعيد، الثورة العربية الكبرى، ج ٣، ص ٥٨٨

176 احسان هندى، فقاح الشعب العربى السورى، ص ١٦٧.

177 „Berliner Tageblatt", 26. V. 1934.

սարակական աշխատանքների մինիստր Ֆուադ Ադիլի տան մոտ[178]։

Հալեպում ընդհանուր գործադուլ հայտարարվեց։ Դամասկոսի, Հոմսի և Համայի աշխատավորները ևս գործադուլ արեցին[179]։ Ֆրանսիական դրածոների դեմ ուղղված մասսայական այս շարժումները ապացուցում էին ամբողջ երկրի վճռականությունը՝ պայքարելու ամեն մի կառավարության դեմ, որը կհամագործակցեր մանդատային իշխանությունների հետ։

Սիրիացիների ուշադրությունը քաղաքական պայքարից շեղելու համար, մանդատային իշխանությունները առաջ քաշեցին Սիրիայի, այսպես կոչված, տնտեսական «ռեֆորմների» ծրագիրը։ Օտարերկրյա ներմուծվող ապրանքների վրա մաքսային հարկերը բարձրացվեցին մինչև 25 տոկոս, ռազմա-ստրատեգիական նպատակների համար ավելացվեց ցեմենտի արտադրությունը, ավարտվեց Կիրկուկ-Տրիպոլիի նավթամուղի շինարարությունը, արդիականացվեց Բեյրութի նավահանգիստը, որը վերածվեց ֆրանսիական ռազմա-ծովային ուժերի մեծ բազայի, կառուցվեցին օդանավակայաններ, խճուղիներ և այլն։ Այս բոլորը արվում էին Սիրիայի տնտեսական վիճակը բարելավելու անվան տակ։ Իրականում գաղութարարները ամրացնում էին իրենց տնտեսական և ստրատեգիական դիրքերը։ Այս տարիները ֆրանսիական կապիտալի կողմից Սիրիայի աշխատավորական մասսաների վրա ուժեղ հարձակման տարիներ եղան։ Տնտեսական մի շարք միջոցառումները, ինչպիսիք էին ծխախոտի մոնոպոլիայի վերականգնումը, տրամվայի, էլեկտրական լուսավորության, ավտոտրանսպորտի և այլ մոնոպոլիստական ընկերությունների ստեղծումը, ավելի ամրացրին ֆրանսիական կապիտալի դիրքերը Սիրիայում։ Այս բոլորին սիրիական ժողովուրդը պատասխանում է բողոքի ցույցերով, գործադուլներով և բոյկոտ հայտարարելով մոնոպոլիստական ընկերություններին[180]։

Երկրի անկախության և աշխատավորական մասսաների շահերի պաշտպանության համար պայքարի ավանգարդում հանդես էին գալիս կոմունիստները։ Նրանք կոչ էին անում ժողովրդին միացյալ ճակատ ստեղծել իմպերիալիզմի դեմ։ «Ցուրաքանչյուր

---

178 «Известия», 9. VI. 1934.

179 „L'Humanite", 22.VI.1934.

180 «Революционный Восток», 1935, № 3, стр. 102.

բանվոր, գյուղացի և հեղափոխականորեն տրամադրված սիրիացի,— ասված էր կոմկուսի կոչի մեջ,— պետք է պայքարի իր երկրի անկախության համար, բողոքի ցույց կազմակերպի ստրկացուցիչ պայմանագրի և իմպերիալիստների հետ համագործակցողների դեմ»[181]:

Սիրիայի կոմունիստական կուսակցության գործունեությունն ուժեղանում է Հալեպի, Դամասկոսի, Հոմսի և ուրիշ կենտրոնների արաբ աշխատավորության շրջաններում: Նա ղեկավարում էր հակաիմպերիալիստական ցույցերը, քաղաքական և տնտեսական գործադուլները: Հատկապես ուշադրության արժանի է կոմկուսի կազմակերպած տպագրիչների 1934 թ. ընդհանուր գործադուլը, որի կազմակերպման գործին ակտիվ մասնակցություն են ունեցել նաև հայերը: Այս գործադուլը շարունակվեց տասը օր և մեծ ազդեցություն թողեց Սիրիայի և Լիբանանի բանվորական շարժման վրա: Գործադուլավորներն ավերեցին ֆրանսիական գաղութարարների օրգան «Լ' Օրիան» թերթի տպարանը: Կոմկուսի ղեկավարությամբ 1934 թ. Հալեպում կազմակերպված գործադուլին մասնակցեցին 17 հազար տեքստիլագործներ[182], որոնք ցույցի էին դուրս եկել «Մենք ուզում ենք հաց, հող և ազատություն», «մահ իմպերիալիզմին» լոզունգների ներքո: Այս ցույցերի և գործադուլների ընթացքում ոստիկանության հետ տեղի ունեցած բախումների ժամանակ ձերբակալվեցին հարյուրավոր ցուցարարներ: «Մեր ընկերների այս ցույցերը և բանտարկությունները ավելի քան ապացույց են Սիրիայի քաջարի կոմկուսի գործունեության, որը, չնայած արաբ և հայ ցուցարարների և գործադուլավորների դեմ կատարված տեռորին, կանգնած է Սիրիայի աշխատավորների պայքարի ավանգարդում,— գրել է «Յումանիտեն»[183]:

Այս շրջանում առաջնահերթ խնդիր էր երկրի կարևորագույն կենտրոնների երկաթուղայիններին, տրամվայի աշխատավորներին և գյուղատնտեսական բանվորներին հեղափոխական արհմիությունների մեջ ներգրավելը: 1934 թ. կոմկուսի նախաձեռնությամբ Դամասկոսում հրավիրվեց արհմիութենական անլեգալ կոնֆերանս՝ արհմիութենական կազմակերպությունների երեսունվեց ներկայացուցիչների մասնակցությամբ: Կոնֆերանսը քննարկեց

---

[181] Նույն տեղում, 1936, № 1, էջ 84:

[182] „L'Humanité", 24.III.1934.

[183] Նույն տեղում, 22.VII.1934:

արդյունաբերական զանազան ճյուղերում աշխատողների դրությունը և հիմնեց հեղափոխական արհմիություններ ֆեդերացիա[184]։ Կոմկուսի նախաձեռնությամբ ստեղծվում են նաև գյուղացիական կոմիտեներ, ֆաշիզմի և սիոնիզմի դեմ պայքարող կոմիտեներ ու միացյալ ճակատի այլ կազմակերպություններ[185]։

Հակաիմպերիալիստական մասսայական ցույցերը Սիրիայում շարունակվում էին ամբողջ 1935 թ. ընթացքում։ Դրանք ուղղված էին ֆրանս-սիրիական պայմանագրի, իմպերիալիստական տեռորի և մոնոպոլիստական ընկերությունների կողմից ուժեղացվող շահագործման դեմ։ 1935 թ. փետրվար-մարտ ամիսներին ընդհանուր բոյկոտի կամպանիա անցկացվեց ծխախոտի ֆրանսիական մոնոպոլիայի (Ռեժիի) վերականգնման դեմ, որի ժամկետը լրացել էր 1930 թ.[186]։ Բողոքի էին դուրս եկել բնակչության բոլոր խավերը՝ բանվորները, գյուղացիները, արհեստավորները, մանր բուրժուազիան և ուսանողությունը, որոնք պահանջում էին վերջ տալ ամեն տեսակ մոնոպոլիաներին։ Ծխախոտի մոնոպոլիայի վերականգնումը դիտվում էր որպես շահագործման քաղաքականության ուժեղացում։ Բոյկոտի ընթացքում ամեն տեղ ժողովուրդը ջարդում էր ծխախոտի կրպակները և վառում նրանցում եղած ծխախոտը։ Հակաիմպերիալիստական այս շարժմանը մասնակցում են նաև Սիրիայի հայ աշխատավոր մասսաները, որոնք իրենց համերաշխությունն են հայտնում արաբ ժողովրդի պայքարին։ «Հայերը նույնպես որոշեցին բոյկոտի ենթարկել ծխախոտի մոնոպոլիա «Ռեժին»,—գրել է արաբական «Ան-Նիդա» թերթը,—շատերը թողել են ծխելը, իսկ երեկ Բեյրութում մի խումբ հայեր ցուցադրաբար վառեցին ծխախոտի պաշարը։ Նրա ղեկավարներից մեկը հայտարարեց, որ հայերը դեռ թուրքական ռեժիմի ժամանակ բողոքել են Ստամբուլում և ուրիշ քաղաքներում «Ռեժի» ընկերության կողմից հայ բանվորների լկտի շահագործման դեմ»[187]։

Բոյկոտի շարժումը տարածվում է նաև տրամվայի և էլեկտրական լուսավորության օտարերկրյա ընկերությունների դեմ։ Բոյկոտի մասնակիցները հանդես էին գալիս Սիրիայի աշխատավորների դաժան շահագործման դեմ։ 1935 թ. Դամասկոսում բանվորները և ուսանողները բնակչության աջակցությամբ փշացնում

[184] «Современная Сирия», стр. 149.
[185] «Новейшая история арабских стран», стр. 55.
[186] «Современная Сирия», стр. 149.
[187] «Ան-Նիդա» (النداء), 5.III.1935։

են տրամվայի գծերը, վագոններից դուրս հանում ուղևորներին և բոյկոտը վիժեցնող բանվորներին, ջարդում այն տների լուսամուտները, որոնք լուսավորվում էին էլեկտրականությամբ։ Սիրիայի աշխատավորական մասսաները լայն պայքար էին ծավալել նաև ծանր հարկերի դեմ[188]։

Սիրիական ժողովրդի ազատագրական պայքարը մեծ վերելք ապրեց 1936 թ. սկզբներին։ Հունվարի 11-ին հակաիմպերիալիստական մեծ ցույց տեղի ունեցավ։ «Քութլա վաթանիյան» նույն օրը Դամասկոսում հրավիրեց մի ժողով, որտեղ ընդունվեց «Ազգային պակտը»։ Դա հակամանդատային պայքարը շարունակելու կոչ էր։ Այս պակտով վաթանիստները պահանջում էին Սիրիայի լրիվ անկախությունը և միասնությունը։ Միայն այս պայմաններով նրանք համաձայն էին բանակցել մանդատային իշխանությունների հետ։

Հունվարի կեսերին Սիրիայի բոլոր քաղաքներում տեղի ունեցան ցույցեր և միտինգներ, որոնք վերածվեցին արյունալի ընդհարումների ոստիկանության և ցուցարարների միջև։ Հունվարի 17-ին ֆրանսիական զինված ուժերը հարձակվեցին «Քութլա վաթանիայի» Դամասկոսի և Հալեպի կազմակերպությունների և բյուրոների շենքերի վրա, բռնագրավեցին բոլոր փաստաթղթերը և կնքեցին դռները։

Նույն օրը Դամասկոսում, վաթանիստ ղեկավարների խորհրդակցության ժամանակ, ֆրանսիական իշխանությունները ձերբակալում և կամիշլի են աքսորում Սիրիայի երիտասարդական միության ղեկավարներին[189]։ Դա մեծ վրդովմունք առաջացրեց ամբողջ երկրում։

Օրեցօր աճող հակամանդատային ցույցերը, գործադուլները և ժողովրդական մասսաների ու ֆրանսիական զինված ջոկատների միջև ընդհարումները զինված ապստամբության սպառնալիք էին ստեղծում երկրում։ Սակայն, «Քութլա վաթանիյան» իր տակտիկայով ամեն կերպ չափավորում էր ժողովրդի զայրույթը և խուսափում զինված ապստամբությունից։ Ֆրանսիական իմպերիալիզմի դեմ պայքարելու և անկախություն ձեռք բերելու համար նրա հիմնական զենքը գործադուլն էր։ Նա կազմակերպում էր փողոցային ցույցեր, գործադուլներ և վաճառականներին ստիպում

---

188 „L'Humanite", 24.VI.1935.

189 *Амин Саид*, Восстания арабов в XX веке, стр. 121.

դադարեցնել առևտուրը, բոյկոտի ենթարկել օտարերկրյա ապրանքները։ «Քուվթլա վաթանիյան» կարողացավ բողոքի և վրդովմունքի ընդհանուր մթնոլորտ ստեղծել Սիրիայում, որն իր արտահայտությունը գտավ 1936 թ. մոտ հիսուն օր տևող գործադուլային շարժումների մեջ։

Ի պատասխան մանդատային իշխանությունների բռնությունների, հունվարի 19-ին Սիրիայում ընդհանուր գործադուլ սկսվեց։ Հունվարի 20-ին փակվեցին բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները, խանութները, ընդհատվեց տրանսպորտի աշխատանքը։ Սիրիայի բոլոր քաղաքներում տեղի ունեցան բուռն ցույցեր։ Ընդհանուր գործադուլը պաշտպանում էր նաև սովորող երիտասարդությունը։ Նույն օրը կազմակերպված ուսանողական միտինգում, որին մասնակցել էին պետական, մասնավոր և եվրոպական դպրոցների դասադուլ հայտարարած ու ընդհանուր ճակատ կազմած ուսանողները, ընտրվում է գործադուլային կոմիտե։ Այս կոմիտեն համազգային ուսանողական ցույց է կազմակերպում։ Յուցարարներն ուղղվում են «Քուվթլա վաթանիյայի» ղեկավարներից Նասիր Բաքրիի բնակարանը և այնտեղ ժողովի նստած ազգային ղեկավարներին ստիպում առաջնորդել ցույցը[190]։

Պետք է նշել, որ Սիրիայի հեղափոխականորեն տրամադրված ուսանողությունը մեծ դեր կատարեց հակամանդատային պայքարի շարժման ընթացքում։ Հակառակ ուսանողությանը ուղղված դը Մարթելի սպառնալիքներին, որոնցում նա պահանջում էր, որպեսզի ուսանողները հեռանան քաղաքական գործունեությունից, վերջիններս շարունակում էին դասադուլն ու ցույցերը, պայքարի կոչում բնակչությանը, ավերում բաց խանութները, ջարդում այն դպրոցների լուսամուտները, որոնք դեռ շարունակում էին պարապմունքները, ստիպում աշակերտներին մասնակցելու ցույցերին, վառում տրամվայների վագոնները, որոնց վրա աշխատում էին իմպերիալիստներին ծախված սիրիացի դավաճանները[191]։ Եվ չնայած հարյուրավոր ուսանողներ բանտարկվում ու հեռացվում են ուսանողական հաստատություններից, ուսանողությունը շարունակում է պայքարը։

Հիշատակության արժանի է ռեակցիոն «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության վերաբերմունքը մանդատային ռեժիմի

---

190 امين سعيد، الدولة العربية المتحوة، القاهرة، ١٩٣٧، ص ٥٨٢

191 „Rapport a la Societe des Nations. Sur la situation de la Syrie et du Liban. (Annee 1934)", Paris, 1935, p. 2.

դեմ պայքարող ուսանողության հանդեպ։ Մի խումբ ուլեմաներ, փետրվարի 7-ին ժողովի հավաքվելով Դամասկոսի Ահմադիյա մզկիթում, երկրում ստեղծված լարված դրությունը վերագրում են ուսանողների գործունեությանը և պահանջում, որ վերջիններս դադարեցնեն ցույցերն ու դասադուլները և հրաժարվեն ժողովրդի մեջ հակամանդատային ագիտացիա մղելուց։

Սիրիական ժողովրդի հակամանդատային պայքարը ճնշելու համար ֆրանսիական իշխանությունները մասսայական ձերբակալություններ են կատարում, ցուցարարների դեմ զինված ջոկատներ հանում և դիմում ամեն տեսակ սպառնալիքների։ Ձերբակալվածների մեջ էին ազգային շարժման ականավոր գործիչներ Ջամիլ Մարդամը, Սաադալլա ալ-Ջաբրին, Նաիմ Անթակին և ուրիշներ[192]։ Սակայն հակառակ բոլոր միջոցառումներին, գործադուլը շարունակվում էր։ Ամբողջ Սիրիան ոտքի էր ելել իր հայրենիքի պաշտպանության համար։

Հունվարի 20-ին Դամասկոսի ձեռնարկատերերի և առևտրականների ընդհանուր ժողովում ընտրված պատվիրակությունը, ներկայացնելով գերագույն կոմիսարի ներկայացուցչին, պահանջում է ազատ արձակել բոլոր բանտարկվածներին, վերացնել արտակարգ միջոցառումները և կենսագործել «Քուվլա վաթանիյայի» ներկայացրած պահանջները։ Սակայն ֆրանսիական իշխանությունները պայման են դնում, որ դադարեցվեն գործադուլները և հանգստություն տիրի երկրում։ Պատվիրակությունը մերժում է այդ պահանջը և որոշում շարունակել գործադուլը։

Դամասկոսցիների պայքարին իրենց համերաշխությունն են հայտնում Համայի բնակիչները։ Փետրվարի 5-ին նրանք Համայի մզկիթներից մեկում գումարում են միտինգ, որից հետո մեծ ցույց են կազմակերպում։ Ցուցարարները քարկոծում են ֆրանսիական զինված ջոկատները։ Վերջիններիս օգնության եկած զորքը կրակ է բաց անում անզեն ցուցարարների վրա. սպանվում և վիրավորվում է հիսունից ավելի մարդ։

Ճնշումներին զուգընթաց դը Մարտելը փորձում է հարցը կարգավորել բանակցությունների միջոցով։ 1936 թ. փետրվարի 20-ին սիրիական պատվիրակությունը գերագույն կոմիսարին է հանձնում մի հուշագիր, որտեղ ասված էր, որ պատվիրակությունը պատրաստ է բանակցելու հետևյալ պայմաններով.

---

[192] S. Longrigg, Syria and Lebanon under French mandate, p. 217.

1. Առանց սահմանափակումների կիրառել 1928 թ. սահմանադրությունը։

2. Վերականգնել այդ սահմանադրության հիման վրա ստեղծված պառլամենտական ռեժիմը, որից հետո կարելի է բանակցություններ վարել ֆրանսիական կառավարության հետ՝ երկու երկրների միջև պայմանագիր կնքելու համար[193]։

Գերագույն կոմիսարը կտրականապես մերժեց պատվիրակության պահանջները և բանակցություններն այս անգամ էլ ձախողվեցին։

Խաղաղ ցույցերն ու գործադուլները շարունակվում էին։ Ո՛չ գերագույն կոմիսարի, ո՛չ էլ զինվորական իշխանությունների սպառնալիքները չէին սարսափեցնում մասսաներին։

Մանդատային իշխանությունները համոզվելով, որ ուժի քաղաքականությունն անօգուտ է և իրենց գործակալներից՝ ֆեոդալներից և բուրժուազիայի հետադիմական տարրերից կազմված Թաջ էդ-Դինի կառավարությունը բոլորովին կորցրել է իր հեղինակությունը մասսաների մոտ և անզոր է ժողովրդական շարժման առաջն առնել, որոշեցին նոր կառավարություն ստեղծել։ 1936 թ. փետրվարի 22-ին, գերագույն կոմիսարի պահանջով Թաջ էդ-Դինը հրաժարական տվեց։

Թաջ էդ-Դինի կառավարության արդարադատության մինիստր Մուհամմեդ Աթա ալ-Այյուբին կազմեց ժամանակավոր կառավարություն[194], որի կազմի մեջ մտցվեցին իրենց ֆրանսասիրությամբ հայտնի մի շարք գործիչներ։ Գերագույն կոմիսարիատում կազմված այս կառավարությունը ժողովուրդն ընդունեց մեծ դժգոհությամբ ու անվստահությամբ, իսկ վաթանիստները օպոզիցիոն դիրք բռնեցին նրա հանդեպ։

Գերագույն կոմիսարի և կառավարական հայտարարության մեջ խոստումներ էին տրվում այն մասին, որ ապահովելու են սիրիական ժողովրդի օրենսդրական իրավունքները, վերականգնվելու է պառլամենտական կյանքը և բանտարկված անձանց գործը քննարկվելու է։ Գերագույն կոմիսարը խոստումներ էր տալիս նաև երկրի տնտեսական դժվարությունները վերացնելու վերաբերյալ։

Սիրիայի քաղաքներում տեղի ունեցած մասսայական ժողովներում քննարկելով գերագույն կոմիսարի և կառավարության

---

193 امين سعيد، الدولة العربية المتحدة، ص ٢٨١

194 S. Longrigg. Syria and Lebanon under French mandate, p. 217.

հայտարարությունները, ժողովականները գալիս էին այն եզրակացության, որ այդ հայտարարությունները անորոշ են և չեն արդարացնում ժողովրդի հույսերը։ Ուստի որոշվում է շարունակել գործադուլը։ Փետրվարի 26-ին «Քութլա վաթանիյան» անբավարար համարելով կառավարական հայտարարությունը, պահանջում էր հրապարակել պարզ ու կոնկրետ հայտարարություն, որն ապահովեր սիրիացիների իրավունքներն ու պահանջները և հիմք հանդիսանար բանակցությունների համար։

Այլուրիի կառավարությունը զինվորական իշխանությունների հետ միասին աշխատում էր խափանել ցույցերը և գործադուլները։ Դամասկոսի կայազորի պետ գեներալ Բելանը, սպառնալով բնակչությանը, հայտարարում է, թե «անհրաժեշտության դեպքում զորքը վճռական միջոցների է դիմելու կարգ ու կանոնը վերականգնելու համար։ Չնայած այս սպառնալիքին, փետրվարի 28-ին, ուրբաթ օրը, մեծ բազմություն է հավաքվում Օմայաների մզկիթում։ Ճառախոսները կոչ են անում շարունակել գործադուլը։

Համոզվելով, որ բռնությունների միջոցով հնարավոր չէ Սիրիան հանդարտեցնել, Ֆրանսիան համաձայնվում է բանակցություններ սկսել «Քութլա վաթանիյա»-ի ներկայացուցիչների հետ։

Ջիջումների համաձայն էին նաև վաթանիստները[195]։ Գերագույն կոմիսարը հայտարարում է, որ ինքը պատրաստ է բանակցությունները վերսկսել, պայմանագիր կնքելու համար և վաթանիստ ղեկավարներին հրավիրում է բանակցությունների։

Ֆրանս-սիրիական բանակցությունները սկսվեցին 1936 թ. փետրվարի 28-ին Բեյրութում։ Երկու կողմերի միջև երեք օր տևող բանակցությունների հետևանքով, 1936 թ. մարտի 1-ին համաձայնություն ձեռք բերվեց ապագա պայմանագրի գլխավոր կետերի վերաբերյալ։

Մարտի 2-ին «Քութլա վաթանիյան» հրապարակեց Բեյրութի համաձայնության բնագիրը, որ ստորագրել էին դը Մարտելը և Հաշիմ ալ-Աթասին։ Ֆրանսիական կողմը պարտավորվում էր կենսագործել հետևյալ պահանջները.

1. Համաձայնվել, որ առաջիկա պայմանագրով սիրիացիները օգտվեն այնպիսի իրավունքներից, որով օգտվում են իրենց իրաքցի եղբայրները անգլո-իրաքյան 1930 թ. պայմանագրով։

2. Ֆրանսիական կողմը պետք է հայտարարի, որ ոչ մի շահ չունի Սիրիայի մասնատված վիճակը պահպանելու մեջ, և նրա

---

[195] «Современная Сирия», стр. 185.

միակ ցանկությունն է երկրի միասնությունը, որը համապատասխանում է Սիրիայի սահմանադրության և Ազգերի լիգայի կանոնադրության սկզբունքներին։

3. Բանակցությունների վայր է ընտրվում Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզը, ուր պիտի ժամանի Սիրիայի ազգային պատվիրակությունը, որպեսզի բարձր մակարդակով բանակցություններ վարի այն հարցերի մասին, որոնք վերջնականապես չեն կարող լուծվել Սիրիայում։

4. Անհրաժեշտ է, հնարավորին չափ շուտ վերականգնել պառլամենտական կյանքը՝ ժողովրդական ազատ ընտրությունների հիման վրա։

Այդ օրը դադարեցվեց 42 օր տևած ընդհանուր գործադուլը։ Գերագույն կոմիսարն իր հերթին չեղյալ հայտարարեց արտակարգ օրենքները, ֆրանսիական զորքերը դուրս բերվեցին քաղաքներից, վերաբացվեցին ուսումնական հաստատությունները, խանութները, արհեստանոցները։ Ամբողջ երկրում վերականգնվեց նորմալ կյանքը։ Բեյրութի համաձայնությունը մեծ բավականությամբ ընդունվեց ամբողջ ժողովրդի կողմից[196]։

Ֆրանս–սիրիական բանակցությունները և 1936 թ. պայմանագիրը։ *Սիրիական պատվիրակությունը, որին գլխավորում էր «Քութլա վաթանիյայի» ղեկավար Հաշիմ ալ-Աթասին, բանակցությունների համար Փարիզ մեկնեց 1936 թ. մարտի 26-ին։ Բանակցությունները երկու կողմերի միջև սկսվեցին ապրիլին և տևեցին մինչև սեպտեմբեր։ Ֆրանսիական պատվիրակությունը ղեկավարում էր դը Մարտելը։ Բանակցությունները ֆրանսիական կողմի մեղքով, ընթանում էին դժվարությամբ։ Ֆրանսիան չէր ուզում բավարարել Սիրիայի բոլոր պահանջները, մասնավորապես անկախության և միասնության պահանջները։*

Ֆրանսիան, հակառակ իր նախնական համաձայնության, դեմ էր Սիրիայի հետ Ջեբել Դրուզի և Լաթաքիայի վերամիավորմանը։ Այդ պատճառով էլ մինչև հունիս ամիսը բանակցություններում զգալի առաջընթաց չարձանագրվեց։

1936 թ. հունիսին Ֆրանսիայում տեղի ունեցած պառլամենտական ընտրություններում հաղթանակ տարավ ժողովրդական ճակատը, որի մեջ մտնում էին սոցիալիստները և կոմունիստնե-

---

[196] نجيب الارمنازى، محاضرات عن سوريا من الاحتلال حتى الجلاء، ص ٤٨

րը։ Կազմվեց ժողովրդական ճակատի վրա հենվող կառավարություն՝ սոցիալիստ Լևոն Բլյումի գլխավորությամբ։ Դրանից հետո բանակցություններն ավելի արագ ու հաջող ընթացան։ 1936 թ. սեպտեմբերի 9-ին Սիրիայի և Ֆրանսիայի միջև ստորագրվեց «բարեկամության և դաշինքի» մասին պայմանագիրը[197]։

«Բարեկամության և դաշինքի» ֆրանս-սիրիական պայմանագիրը բաղկացած էր ինը հոդվածներից, նրան կցված ռազմական համաձայնագրից և պայմանագրի գործադրումը պարզաբանող արձանագրություններից ու նամակներից։ Այս պայմանագրով Ֆրանսիան ճանաչում էր Սիրիայի անկախությունը և խոստանում պայմանագրի վավերացման օրվանից երեք տարվա ընթացքում վերացնել մանդատը։ Սիրիան՝ որպես անկախ պետություն, պետք է ընդունվեր Ազգերի լիգայի մեջ։ Սակայն, դրա հետ միասին Ֆրանսիան իրավունք էր ստանում հինգ տարի պահել իր զորքերը Սիրիայում, (Ջեբել Դրուզում և Լաթաքիայում) և կառուցել օդային երեք բազաներ։ Ֆրանսիական ռազմական ուժերը կարող էին ազատ շարժվել Սիրիայի տերիտորիայով, իսկ ռազմանավերը՝ ժամանել Սիրիայի ցանկացած նավահանգիստը։ Ֆրանսիական զինվորական միսիան իրավունք էր ստանում հսկել սիրիական բանակի վրա, որը բաղկացած պետք է լիներ միայն հետևակային և հեծելազորային մեկական դիվիզիաներից։ Պատերազմի դեպքում Ֆրանսիան կարող էր օգտվել Սիրիայի հաղորդակցության ճանապարհներից և բազաներից։ Սիրիան պարտավորվում էր միայն Ֆրանսիայից հրավիրել զինվորական խորհրդականներ և ուրիշ մասնագետներ[198]։

Սիրիայի կառավարությունը արտաքին քաղաքականության հարցերում պարտավոր էր խորհրդակցել Ֆրանսիական կառավարության հետ։ Պետական ապարատում մնում էին Ֆրանսիացի պաշտոնյաները, Ֆրանսիացիները պահպանում էին իրենց կոնցեսիոն բոլոր իրավունքները։ Սիրիական վալյուտան կախված էր մնում Ֆրանսիական ֆրանկից։ Պայմանագիրը ենթակա էր վավերացման երկու երկրների պառլամենտների կողմից[199]։

Այսպիսով, Սիրիան ձևականորեն դառնում էր ինքնուրույն պետություն, բայց նրա կախվածությունը Ֆրանսիայից լրիվ չէր վերանում։

---

197 *J. Hurewitz*, Diplomacy in the Near and Middle East. A Documentary record. 1914—1956, vol. 11, New York, 1956, p. 211.

198 Նույն տեղում, էջ 212—213։

199 Նույն տեղում։

Զգալի հաջողություն ձեռք բերվեց նաև Սիրիայի միասնության հարցում։ Ի կատարումն համաձայնագրի պայմանների, գլխավոր կոմիսարի 1936 թ. դեկտեմբերի 2-ի և 5-ի հրամաններով Լաթաքիան և Ջեբել Դրուզը վերամիացվեցին Սիրիային։ Սակայն վարչական և ֆինանսական հատուկ սիստեմ մտցվեց այս երկու շրջաններում։ Այս պայմանագրով ոչ մի փոփոխություն չէր նախատեսվում Ալեքսանդրետի սանջաքի statut-ի վերաբերյալ։

Ֆրանս-սիրիական պայմանագիրը, չնայած իր մի շարք թերություններին, կարևոր քայլ էր Սիրիայի անկախության նվաճման ուղղությամբ։ Ֆրանսիան պաշտոնապես հրաժարվում էր մանդատից և սկզբունքորեն ճանաչում Սիրիայի անկախությունն ու միասնությունը։ Այդ պայմանագրով իրագործվում էր սիրիական ժողովրդի ձգտումների մեծ մասը։ Նա իր ժամանակի համար առաջադիմական նշանակություն ուներ և արժանացավ թե՛ Ֆրանսիայի և թե՛ Սիրիայի հակաֆաշիստական ու դեմոկրատական կազմակերպությունների հավանությանը[200]։

Փարիզից վերադարձող սիրիական պատվիրակությանը Դամասկոսում դիմավորեցին մեծ խանդավառությամբ։ «Ամբողջ Սիրիան գոհ է դաշնագրի առթիվ,—գրել է «Նոր լուր» թերթը,—քաղաքը դրոշազարդված է, և ժողովուրդը ուրախության ցույցեր կընե»[201]։ Սիրիայի քաղաքական գործիչները իրենց գոհունակությունն են հայտնել պայմանագրի կնքման առթիվ, հայտարարելով, թե պայմանագիրը մեծ առավելություններ ունի և բոլոր դեպքերում Սիրիայի քաղաքական արմատական վերափոխմանն է նպաստում[202]։ Սիրիայի երիտասարդությունն ամբողջությամբ պաշտպանեց պայմանագիրը և «Քութլա վաթանիյայի» վարած քաղաքականությունը[203]։

Պայմանագրի կնքումից հետո Սիրիայում փաստորեն օրինականացվեցին Սիրիայի կոմունիստական կուսակցությունը և արհմիություններր։ Սկսեց լույս տեսնել կոմկուսի օրգան «Սաուտ աշ-Շաաբ» («Ժողովրդի ձայն») թերթը։ Կոմունիստների ժողովներում հավանություն էր տրվում ֆրանս-սիրիական պայմանագրին։

Արժե նշել, որ Փարիզում տարվող ֆրանս-սիրիական բանակցությունների ժամանակ սիրիական պատվիրակությանը մեծ

---

200 *В. Луцкий*, Сирия и Ливан, М., 1945, стр. 11.

201 «Նոր լուր», Կ. Պոլիս, *11.IX.1936*։

202 „Le Temps", 8. X. 1936.

203 *A. Hourani*, Syria and Lebanon, p. 206.

աշակցություն ցույց տվեց Սիրիայի կոմկուսի կենտկոմի քարտուղար՝ Խալեդ Բեկդաշը։ Կենտկոմի հանձնարարությամբ նա մեկնեց Ֆրանսիա և Ֆրանսիայի կոմկուսի ու ֆրանսիական պառլամենտի կոմունիստ դեպուտատների հետ միասին բանակցություններ էր վարում ժողովրդական ճակատում մեծ ազդեցություն ունեցող ձախակողմյան տարրերի հետ, որպեսզի մոտեցնի վերջիններիս և սիրիական պատվիրակության հայացքները[204]։

Ֆրանս-սիրիական պայմանագրի կնքումը մեծ գոհունակությամբ ընդունվեց նաև ամբողջ Արաբական Արևելքում։ Դամասկոսը հեղեղվել էր արաբական երկրներից ստացված շնորհավորական հեռագրերով։ Արաբական Արևելքի ժողովուրդները ողջունում էին Սիրիային, նրա ավելի քան 15 տարվա մղած արյունալի պայքարից հետո ձեռք բերած հաղթանակի առթիվ։

Հիշատակման արժանի է նաև սիրիահայերի դիրքը։

Սիրիահայ ժողովրդական ճակատի կենտրոնական վարչության կողմից սիրիահայերին ուղղված կոչում ասված էր. «Սիրիայի կատարյալ ազատագրումն ու առաջադիմական ձգտումները միմիայն հրճվանք են ներշնչում հայ ժողովրդի գիտակից զանգվածներին։ ...Պետք է գործնականապես փաստենք մեր տեղացի եղբայրներին, թե հայ ժողովուրդն այս երկրի անկախության դեմ ոչ մեկ ձգտում ունի պաշտպանելիք, թե պատրաստ է հայ մշակույթի կողքին ուժեղացնել արաբ լեզվի և մշակույթի ուսուցումը մեր կրթական հաստատություններից ներս, թե հայ բանվորն ու աշխատավորը, միմիայն երկրի ընդհանուր շահերին նվիրված իրենց արաբ եղբայրների հետ ձեռք-ձեռքի հավաքաբար, երկրի առաջադիմության, աշխատավորության շահերի պաշտպանության գործակցելու պատրաստ են»[205]։

Սիրիայի հայության ներկայացուցիչները ջերմորեն ողջունեցին սիրիական ժողովրդին նրա ձեռք բերած հաղթանակի առթիվ։

Հայության այս խոհեմ քայլը բարձր է գնահատվել արաբ քաղաքական և հասարակական գործիչների կողմից։ Սիրիայի դատական նախկին մինիստրը, այցելելով Հալեպի առաջնորդարանը, գոհունակություն հայտնեց Հալեպի հայությանը նրա անկաշառ դիրքի առթիվ։ Հալեպի և Դամասկոսի առաջնորդարանները այցելեցին և հայերին իրենց շնորհակալությունը հայտնեցին նաև վաթանիստների ղեկավարները։

---

[204] «Ալ-Ախբար» (الاخبار) 15.XII.1963։
[205] ՀՍՍՀ ԳԱ ԱԻ արխիվ, գ. 1, վ. 7։

Ֆրանս-սիրիական պայմանագրի կնքումից հետո 1936 թ. նոյեմբերին տեղի ունեցան սիրիական նոր պառլամենտի ընտրությունները, որի ժամանակ հաղթանակ տարավ «Քութլա վաթանիյան»։ Նրա ղեկավար Հաշիմ Աթասին ընտրվեց հանրապետության պրեզիդենտ։ Ջամիլ Մարդամի գլխավորությամբ կազմվեց Սիրիայի նոր կառավարությունը։ 1936 թ. դեկտեմբերի 27-ին սիրիական պառլամենտը վավերացրեց 1936 թ. Ֆրանս-սիրիական պայմանագիրը։ Տեղի ունեցավ մի կարևոր իրադարձություն ևս։ Այդ նույն ամսին Ջեբել Դրուզը և Լաթաքիան մտան Սիրիայի մեջ[206]։ Սակայն դրանից հետո Սիրիայի նոր կառավարությունը կանգնեց մի շարք դժվարությունների առջև։ Ֆրանսիական իշխանությունները, ձգտելով ամեն կերպ պահպանել իրենց տնտեսական և քաղաքական նախկին դիրքերը, և սպառնալով չվավերացնել 1936 թ. պայմանագիրը, փորձում էին նորանոր զիջումներ կորզել սիրիական կառավարությունից։ Ֆրանսիան Սիրիայի կառավարության վզին փաթաթեց լրացուցիչ համաձայնագրեր, որոնք ուժեղացնում էին նրա տնտեսական դիրքերը Սիրիայում։ Սիրիական կառավարությունը համաձայնվեց բավարարել «Սիրիայի և Լիբանանի բանկի» պահանջը, նրա մոնոպոլիայի ժամկետը երկարացնելու մասին, պարտավորվեց միջոցներ ձեռք առնել Ֆրանսիայի հետ իր առևտուրը ընդլայնելու ուղղությամբ, և կոնցեսիա շնորհեց ֆրանսիական ընկերություններին նավթի պաշարների հետազոտման համար[207]։ Միևնույն ժամանակ Ֆրանսիան ձեռք բերեց քրիստոնյա փոքրամասնություններին հովանավորելու իրավունք։

Սիրիական կառավարության ներքին դժվարություններից էին նաև Ջեբել Դրուզի, Լաթաքիայի, Ջազիրայի և Ալեքսանդրետի հարցերը։

Ղեկավարվելով «բաժանիր, որ տիրես» սկզբունքով, Ֆրանսիան, չնայած ֆրանս-սիրիական համաձայնագրի պայմաններին, ամեն կերպ աշխատում էր պահպանել այդ շրջանների ավտոնոմ ստատուսը և արգելակել կենտրոնացված սիրիական պետության ստեղծմանը։ Ֆրանսիայի ճնշման տակ Սիրիայի կառավարությունը ճանաչեց Ջազիրայի, Ջեբել Դրուզի և Լաթաքիայի լայն ինքնավարություն[208]։

---

[206] «Современная Сирия», стр. 150.

[207] Նույն տեղում, էջ 150—151։

[208] Նույն տեղում։

Որպեսզի թուլացնեն կառավարության դիրքը, որը ձգտում էր պետության կենտրոնացմանը, մանդատային իշխանությունները Լաթաքիայում և Ջազիրայում հրահրում էին կրոնական ու միջցեղային երկպառակություններ և աշխատում հակակառավարական ապստամբություն առաջացնել։ Նրանք օգտագործում էին սուննի, շիի, իսմաիլական և այլ աղանդներին հետևող ֆեոդալների հողային վեճերը, որպեսզի ուժեղացնեն անջատողական տրամադրությունները բնակչության մեջ։

Հակառակ այս բոլորին, այդ շրջանների բնակչությունը միշտ ձգտել է միավորվել մեկ միասնական՝ սիրիական պետության մեջ։ Լաթաքիայի շրջանից պառլամենտի անդամ Աբդել Կադիր Շրեդահը հետևյալն է ասել պառլամենտի 1937 թ. հոկտեմբերի 30-ի նիստում. «Ես պետք է արտահայտեմ Լաթաքիա քաղաքի բնակիչների ուրախությունը մայր հայրենիքի հետ նորից միանալու առթիվ։ ...Մենք անդադար աշխատելու ենք մեր հայրենակիցների և արաբ եղբայրների հետ, հայրենիքի բարգավաճման համար»[209]։

Հարաբերությունները Սիրիայի և Ֆրանսիայի միջև հատկապես սրվեցին Ալեքսանդրետի սանջաքի հարցի կապակցությամբ։

Ալեքսանդրետի սանջաքի բռնի անջատումը Սիրիայից։ 1936 թ. Ֆրանս-սիրիական պայմանագրի կնքման կապակցությամբ Թուրքիայի կառավարությունը առաջ քաշեց այսպես կոչված «Ալեքսանդրետի հարցը», որը հաջորդ տարիներին վերաճեց քաղաքական սուր կոնֆլիկտի։

Ալեքսանդրետի հարցի առաջացման գլխավոր քաղաքական նախադրյալներն էին Սիրիայի նկատմամբ Ֆրանսիայի իմպերիալիստական ապակենտրոնացման քաղաքականությունը և Թուրքիայի ծավալապաշտական ու շովինիստական ծրագրերը։ Ինչպես նշել ենք, ֆրանսիական ռազմական իշխանությունները գրավելով Սիրիայի ծովափնյա գոտին, Սիրիայի պետության կազմավորումից էլ առաջ՝ 1918 թ. նոյեմբերի 27-ին ստեղծեցին «Ալեքսանդրետի ինքնավար սանջաքը»[210]։ Հետագայում սանջաքի իրավական գոյավիճակը հաստատվեց և նրա «հատուկ ռեժիմը» ճշգրտվեց Սիրիայում ու Լիբանանում Ֆրանսիայի գլխավոր կոմիսարի 1920 թ. սեպտեմբերի 1-ի և 1921 թ. օգոստոսի 8-ի հրամանագրերով. Ալեքսանդրետի ինքնավար սանջաքը մտնում էր Սիրիա-

---

209 «Ալ-Ինշա», („الانشاء") Դամասկոս, 31.X.1937։

210 „L'Asie Francaise", 1930, № 13, Suppl. p. 17.

յի պետության կազմի մեջ՝ պահպանելով իր վարչա-ֆինանսական «հատուկ ռեժիմը»։ 1921 թ. հոկտեմբերի 20-ին Ֆրանսիայի ու Թուրքիայի միջև կնքված Անկարայի համաձայնագրի 7-րդ հոդվածը և կից փաստաթղթերը հաստատեցին Ալեքսանդրետի սանջաքում արդեն կենսագործվող «հատուկ ռեժիմը», դրան ավելացնելով մշակութային առանձնաշնորհումներ շրջանի «թուրք ցեղին պատկանող բնակիչների համար»։

Գլխավոր կոմիսարի 1930 թ. մայիսի 14-ի հրամանագրով, որը հաստատում էր Սիրիայի ու Լիբանանի սահմանադրությունները, սանջաքին նույնպես շնորհվեց «հիմնական կանոնադրություն», որը, փոքր փոփոխություններով, նորից հաստատում էր Ալեքսանդրետի «վարչա-ֆինանսական հատուկ ռեժիմը»՝ Սիրիայի պետության կազմում»[211]։

Ալեքսանդրետի հատուկ ռեժիմը բնութագրվում էր հետևյալ առանձնահատկություններով։ Առաջին. ի տարբերություն Դամասկոսի և Հալեպի պետությունների, այնտեղ կիրառվում էր գաղութային ուղղակի կառավարում, գլխավոր կոմիսարի ներկայացուցչի՝ պատվիրակի անմիջական տնօրինմամբ և նրան ենթակա ֆրանսիացի խորհրդականների ու տեսուչների միջոցով։ Սանջաքի կառավարման տեղական մարմինները ենթարկվում էին ոչ թե Դամասկոսի համապատասխան գերատեսչություններին, այլ Ալեքսանդրետի սանջաքի վարչական խորհրդին, որը գտնվում էր ֆրանսիացի պատվիրակի փաստական վերահսկողության ներքո։ Մասամբ նշանակովի, մասամբ ընտրովի, գերազանցապես թուրք կամ թրքացած արաբ «երևելիներից» կազմված այդ խորհուրդը, քննարկում ու հաստատում էր սանջաքի ինքնուրույն բյուջեն և նշանակում տարբեր գավառների ու ծառայությունների պետերին։ Այսուհանդերձ, Ալեքսանդրետի սանջաքը դե-յուրե և դե-ֆակտո գտնվում էր սիրիական հանրապետության կազմում։ Սանջաքի մութասարիֆը՝ կառավարիչը, պաշտոնապես նշանակվում էր Սիրիայի հանրապետության պրեզիդենտի կողմից։ Սիրիայի մյուս մարզերի նման սանջաքը նույնպես սիրիական պառլամենտ էր ուղարկում արաբ, թուրք, հայ համայնքները ներկայացնող իր դեպուտատներին։

Երկրորդ. այդ հատուկ ռեժիմը բացահայտորեն նպաստավոր պայմաններ էր ստեղծել սանջաքի ազգաբնակչության միայն 23 տոկոսը կազմող թուրք համայնքի համար, ի վնաս արաբների ու

---

[211] „L'Asie Francaise" pp. 17—18.

հայերի շահերի[212]. սանջաքի պետական պաշտոնյաների 65 տոկոսը թուրքեր էին։ Թուրքեր էին մութասարիֆը, նրա ընդհանուր քարտուղարը, գործերի կառավարիչը, վարչական խորհրդի 12 անդամներից 7-ը, տեղական մարմինների ղեկավարների, դատավորների, ժանդարմերիայի ու ոստիկանության անձնակազմի ճնշող մեծամասնությունը[213]։ Թուրքերենը սանջաքում պաշտոնական լեզու էր, ինչպես արաբերենն ու ֆրանսերենը։ Սակայն գործնականում պաշտոնական գրագրություններում թուրքերենն էր գրեթե միակ օգտագործվող լեզուն, որովհետև պետական կառավարական մարմիններում բազմած էին ճնշող մեծամասնությամբ օսմանյան նախկին աստիճանավորներ։ Թուրքանպաստ այդ խտրականությունը բացահայտ ու աղաղակող ձևով արտահայտվում էր նաև սանջաքի ուսումնա-դպրոցական գործերում ու մշակութային կյանքի այլ բնագավառներում, ինչպես նաև առհասարակ սոցիալ-տնտեսական ու քաղաքական զանազան բնագավառներում։ Այսպիսի քաղաքականությամբ Ֆրանսիան ձգտում էր, նախ խոչընդոտել ու կազմալուծել Սիրիայի ժողովրդի անկախության և միասնության ջանքերը և դրանով հասնել իր տիրապետության հարատևմանը։ Մյուս կողմից, հովանավորելով սանջաքի թուրքերին և նրանց ընձեռելով խտրական առանձնաշնորհումներ, նա ուզում էր սիրաշահել Թուրքիայի ղեկավարներին և նրանց բարեկամությունն ու համագործակցությունն ապահովել ֆրանսիական իմպերիալիզմի համար Արևելքի կարևորագույն հարցերի լուծման գործում։ Դեռևս 1920 թ. սկսած ֆրանսիական դիվանագիտության կողմից Անկարային հաճոյանալու կուրսի գլխավոր մղիչ գործոններն էին Թուրքիայում ֆրանսիական կապիտալի տնտեսական ու ֆինանսական խոշոր շահերը պահպանելու ցանկությունը, Մերձավոր Արևելքի մի շարք հարցերում Ֆրանսիայի ու Անգլիայի սուր հակամարտությունները և, վերջապես, թուրք-սովետական մերձեցմանը խանգարելու ծրագրերը։

Օգտվելով Ֆրանսիայի բարեհաճությունից, Թուրքիան ակտիվացնում է իր գործունեությունը սանջաքում։ Այնտեղ անարգել

---

[212] 1937 թ. Ալեքսանդրետի սանջաքի 240.000 բնակիչներից արաբները կազմում էին 48% (115.000), թուրքերը՝ 23% (55.000), հայերը՝ 18% (43.000), մնացած 27.000-ը (11%) թուրքմեններ, քրդեր, չերքեզներ և այլք։ Տե՛ս „Rapport sur l'Activite de la S.D.N., Documents Officiels, NA—6" Genèvea, 1937.

[213] „Rapport à la S.D.N.—1936, Ministere des Affaires Etrangères de la Republique Francaise", Paris 1937, p. 102.

գործում էին թուրքական գործակալները, ստեղծվեցին Ալեքսանդրետի «ազատագրման» կոմիտեներ և կիսառազմականացված թուրքական կազմակերպություններ, լայն ծավալ ստացավ ահաբեկման քաղաքականությունը տեղի արաբ, հայ բնակչության նկատմամբ։ Սանջաքում ստեղծվեց ներքաղաքական ճնշիչ մթնոլորտ։

Սանջաքի թուրք անջատողականների ներքին քայքայիչ գործունեությանը զուգահեռ, Անկարայի կառավարությունը շարունակ քաղաքական ու տերիտորիալ պահանջներ էր ներկայացնում սանջաքի (ինչպես և հյուսիսային Սիրիայի որոշ մարզերի) նկատմամբ։

Երբ 1936 թ. կնքվեց ֆրանս-սիրիական պայմանագիրը, Թուրքիան պահանջեց, որ Ֆրանսիան Ալեքսանդրետի սանջաքի հետ, ինչպես Սիրիայի ու Լիբանանի հետ, կնքի առանձին դաշնագիր, որը անկախություն կխոստանա այդ մարզին։ Ֆրանսիան մերժեց Թուրքիայի այդ անհիմն պահանջը։

Բանակցությունները, որ Ֆրանսիայի և Թուրքիայի միջև սկսվել էին 1936 թ. սեպտեմբերին, դեկտեմբերին ավարտվեցին անհաջողությամբ։ Ֆրանսիայի վարչապետ Լ. Բլյումը որոշեց անձամբ ինքն իր ձեռքը վերցնել հարցի կարգավորման գործը, «մտահոգված լինելով,—ինչպես գրում է նա,—իրավական բնույթի այդ տարակարծությունը դարձնել Ֆրանսիայի ու Թուրքիայի միջև բաղաբական մերձեցման ու բարեկամության միջոց» և առաջարկեց հարցի կարգավորման կոմպրոմիսային մի ծրագիր[214]։ Բլյումի նախագծի հիման վրա Ազգերի լիգայի խորհուրդը 1937 թ. մայիսին Ալեքսանդրետի համար ընդունեց նոր ստատուս ու Հիմնական օրենք[215]։ Սանջաքը դառնալու էր «ինքնուրույն քաղաքական միավոր»՝ իր ինքնուրույն պառլամենտով, կառավարությունով ու պետական այլ ինստիտուտներով, ձևականորեն, սակայն, մնալով Սիրիական Հանրապետության գերիշխանությանը ենթակա։ Դա նշանակում էր Սիրիայից Ալեքսանդրետի մարզի փաստական անջատման և Թուրքիայի կողմից նրա կլանման առաջին փուլ։ Սակայն նոր ստատուսն ու Հիմնական օրենքը պետք է արժանանային Սիրիայի ժողովրդի ու կառավարության հավանությանը։ Սիրիայի ազգային կառավարությունը, պառլամենտը և ժողովուրդը բա-

---

214 *P. du Veou*, Le Desastre d'Alexandrette (1934—1938), Paris, 1938, p 171—175.

215 „Journal Officiel de la S.D.N." 1937 Mai-Junu, pp. 333—348.

ցարձակ կերպով մերժեցին ընդունել իրենց գլխի վրայով և հակառակ իրենց կամքի իրենց երկրի գերիշխանության դեմ կատարված այդ ոտնձգությունը։ Հանրաքվեի նախնական արդյունքները ցույց տվին, որ սանջաքի բնակչության 65%-ը դեմ է ֆրանս-թուրքական կոմպրոմիսին[216]։

Դրանից հետո Թուրքիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները ճնշում գործադրեցին Ֆրանսիայի վրա։ Վերջինս, ելնելով իր իմպերիալիստական շահերից, դարձյալ նահանջեց։ 1938 թ. հունիսի 2-ին սանջաքում հայտարարվեց ռազմական դրություն, սահմանվեց պարեկային ժամ, իսկ հանրաքվեի անցկացումն ընդհատվեց։ Սանջաքում Ֆրանսիայի նոր պատվիրակ նշանակվեց մայոր Կոլեն, որը վայելում էր ֆրանսիական ու բրիտանական ծայրահեղ շրջանների լիակատար վստահությունը և թուրքերի համակրանքը[217]։ Ամբողջ սանջաքում հաստատվեց թուրք մոլիների ու Անկարայի գործակալների սանձարձակ բռնությունը։ Կրկին ծայր առան ահաբեկչական գործողություններ բոլոր առաջադիմական ուժերի, հատկապես արաբների ու հայերի դեմ։ Ազգերի լիգայի միջազգային հանձնաժողովը, որ հսկում էր հանրաքվեի ընթացքին, ի նշան բողոքի հեռացավ սանջաքից։ 1938 թ. հուլիսի 5-ին, Ազգերի լիգայի գլխի վրայով, Ֆրանսիան համաձայնվեց թուրքական զորքեր մտցնելու Սիրիական Հանրապետության անբաժան մասը հանդիսացող Ալեքսանդրետի սանջաքը, իբր թե այնտեղ Ֆրանսիայի հետ համատեղ «կարգ ու կանոն պահպանելու» համար։ Օգոստոսին թուրքական ու ֆրանսիական սվիններով պաշտպանությամբ անցկացվեցին կեղծ ընտրություններ, որոնք հրաշքով... սանջաքում երևան հանեցին թուրքական «մեծամասնություն»[218]։ Դրա հիման վրա կազմված «պառլամենտը» 1938 թ. սեպտեմբերի 2-ին Ալեքսանդրետի սանջաքը հռչակեց որպես «Հաթայի պետություն»։

«Հաթայի պետության» հռչակման ակտը մերժվեց և դատապարտվեց Սիրիայի ազգային կառավարության, ժողովրդի բոլոր խավերի ու քաղաքական խմբավորումների կողմից։ Այն մերժվեց նաև հենց սանջաքի ազգաբնակչության մեծամասնության՝ բոլոր

---

[216] *P. du Véou*, op. cit., p. 88; „Le'Temps", 20. VI. 1938.

[217] „L'Humanité", 27.VI.1938.

[218] *A· Aita*, Le Gonflit d'Alexandrett et la Société des Nations, Damas, 1949, p. 274; «Ժողովուրդի ձայն», Բեյրութ, 4.IX.1938.

արաբների, հայերի, քրդերի և ուրիշների կողմից, որոնք ի նշան բողոքի սկսել էին զանգվածաբար արտագաղթել սանջաքից[219]։

«Հաթայի» տիրակալները, Անկարայում մշակված ծրագրի համաձայն, սիստեմատիկ կերպով առաջ տարան Ալեքսանդրետի սանջաքի «թուրքացման» քաղաքականությունը։ Դրա և տեռորի քաղաքականության հետևանքով արաբները, չերքեզները, քրդերը և քեմալական Թուրքիային չհամակրող թուրքերը զանգվածաբար, իսկ հայերն ամբողջովին հեռացան սանջաքից։ Մինչև 1939 թ. գարունը ավելի քան 70.000 մարդ էր հեռացել սանջաքից։

Ֆրանսիան սկզբնական շրջանում, իհարկե, չէր ցանկանում իր ձեռքից բաց թողնել տնտեսական ու ռազմական տեսակետից խոշոր նշանակություն ունեցող Ալեքսանդրետի սանջաքը։ Սակայն 1937—1938 թթ. միջազգային իրադրության խիստ լարվածության պայմաններում, Առանցքի երկրների վտանգավոր առաջխաղացումների և դաշնակից Անգլիայի ուժեղ ճնշման տակ, Ֆրանսիայի կառավարող շրջանները իրենց «կայսրության» ընդհանուր շահերի համար նախընտրելի համարեցին Ալեքսանդրետը «նվիրել» Թուրքիային, վերջինիս անգլո-ֆրանսիական ռազմական խմբավորմանը միանալու գործը ապահովելու համար։ «Հաթայը արդեն փաստորեն կորած էր,—դառնորեն խոստովանում էր գլխավոր կոմիսար Գ. Պյուոն։ Հարկ էր անհապաղ վճարել Թուրքիայի դաշնակցության գինը»[220]։ Եվ 1939 թ. հունիսի 23-ին կնքված ֆրանսա-թուրքական պայմանագրով Ալեքսանդրետի սանջաքը պաշտոնապես կցվեց Թուրքիային։

Իր հայրենիքի անդամահատման դեմ Սիրիայի ողջ ժողովուրդը իր բողոքն ու զայրույթը հայտնեց զանգվածային ելույթներով։ Իմպերիալիստական այդ նենգ գործարքը դատապարտող հարյուրավոր հեռագրեր ուղարկվեցին ֆրանսիական կառավարությանը և Ազգերի լիգային։ Սիրիական պառլամենտի արտակարգ նիստում ընդունված բանաձևում, որն ուղարկվեց Փարիզ ու Ժնև, ասված էր. «Ալեքսանդրետի մուհաֆազայի փոխանցումը Թուրքիայի գերիշխանությանը ապօրինի է և իրավական հիմքից զուրկ,

---

[219] *P. du Veou*, Les Chretiens en Peril au Moussa-Dagh, Paris. 1939, p. 101, 135; *G. Puaux*, Deux Années au Levant, Souvenirs, Paris, 1956, d 55—56.

[220] *G. Puaux*, Deux Annees au Levant, Souvenirs, p. 51 52.

և Սիրիական հանրապետությունը պահպանում է իր գերիշխան իրավունքները այդ տերիտորիայի վրա»[221]:

Սիրիան մինչև օրս չի ճանաչել այդ անօրինական ակտը:

Ֆրանսիայի հրաժարվելը ֆրանս-սիրիական պայմանագրից և օկուպացիոն իշխանությունների բացահայտ դիկտատուրայի հաստատումը Սիրիայում: Սիրիական կառավարությունը իր երկրի տերիտորիալ ամբողջականությունը պահպանելու համար մղվող պայքարի հետ միասին, համառորեն պայքարում էր նաև Ֆրանսիայի կողմից 1936 թ. ֆրանս-սիրիական պայմանագրի վավերացման համար: Ֆրանսիական հետադիմական ուժերը ամեն կերպ ձգձգում էին նրա վավերացումը, որը կնշանակեր մանդատի վերացում: Ահա հենց այդ էր, որ նրանք չէին ցանկանում: 1936 թ. հետո, երեք տարվա ընթացքում, հետադիմական ուժերը Ֆրանսիայում բավականին ամրապնդել էին իրենց դիրքերը: Ժողովրդական ճակատի կառավարությունը վերջիվերջո ընկավ և իշխանության գլուխ անցան աջակողմյան կուսակցությունները: Ռեակցիան հարձակման անցավ: Նրան հաջողվեց հասնել այն բանին, որ ֆրանսիական պառլամենտը 1939 թ. հունվարին մերժեց վավերացնել 1936 թ. պայմանագիրը և ուժի մեջ թողեց մանդատային ռեժիմը: Լաթաքիան և Ջեբել Դրուզը նորից անջատվեցին Սիրիայից: Ի նշան բողոքի, հրաժարական տվեց Սիրիայի պրեզիդենտ Հաշիմ ալ-Աթասին և սիրիական կառավարությունը: Գերագույն կոմիսարը վերացրեց սահմանադրությունը և ցրեց պառլամենտը:

Կառավարության փոխարեն Սիրիայում ստեղծվեց այսպես կոչված «Դիրեկտորների խորհուրդ» Բահիջ ալ-Խաթիբի գլխավորությամբ, որն աշխատում էր գլխավոր կոմիսարի անմիջական հսկողության տակ: Երկրում նորից հաստատվեց ֆրանսիական իմպերիալիստների ոչնչով չսքողված գաղութային ռեժիմը:

---

221 «Սիրիական հանրապետության պաշտոնաթերթ», հուլիս, 1939 (արաբերեն):

ԳԼՈՒԽ ԻՐՐՈՐԴ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ (1939—1946 ԹԹ.)

Սիրիայի սոցիալ-տնտեսական վիճակը: *Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Սիրիայի սոցիալ-տնտեսական կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չունեցան: Այն շարունակում էր մնալ թույլ զարգացած երկիր: Տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, որի մեջ զբաղված էր երկրի բնակչության 70—75%-ը և նա էր տալիս ազգային եկամտի հիմնական մասը: Ըստ էության ոչ մի տեղաշարժ չնկատվեց նաև արդյունաբերության բնագավառում: Նոր ճյուղեր, ինչպես մետալուրգիական, մեքենաշինական և այլն, չառաջացան: Սիրիայի արդյունաբերությունը նախկինի պես հիմնված էր գյուղատնտեսական հումքի վերամշակման վրա: Նրանում առաջատար էին տեքստիլ և սննդի արդյունաբերության ճյուղերը: Սակայն նրանք վատ էին մեքենայացված, շատ մեծ տեղ էր գրավում ձեռքի աշխատանքը և այդ պատճառով էլ խիստ ցածր էր կապիտալի օրգանական կազմը: Արդյունաբերական արտադրանքի մեջ մեծ տեղ էին գրավում բազմաթիվ մեծ ու փոքր արհեստավորական ձեռնարկություններ: Ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությունը Սիրիայում գտնվում էր զարգացման սաղմնային վիճակում:*

Սիրիան թեև պատերազմի անմիջական թատերաբեմ չդարձավ, բայց պատերազմը, որի մեջ ներգրավվել էր աշխարհի պետությունների, և այն էլ զարգացած պետությունների մեծ մասը, անդրադարձավ նաև Սիրիայի տնտեսության վրա և խոր հետք թողեց նրա ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի և աշխատավորական մասսաների դրության վրա:

Պատերազմի հետևանքով խախտվեցին Սիրիայի ավանդական

տնտեսական կապերը այն երկրների հետ, ուր նա արտահանում էր հումք և դրա դիմաց ներմուծում արդյունաբերական ապրանքներ։ Տնտեսական կապերի խզումը առաջացավ այն բանի հետևանքով, որ եվրոպական մի շարք երկրներ, որոնց հետ առևտուր էր անում Սիրիան, նվաճվեցին ֆաշիստական Գերմանիայի կողմից։ Այդ երկրների շուկաները փակվեցին Սիրիայի առջև, քանի որ Սիրիան ֆրանսիական ենթամանդատային տերիտորիա էր, իսկ Ֆրանսիան և Գերմանիան գտնվում էին պատերազմի վիճակում։ Սիրիայի տնտեսական դրությունն ավելի վատթարացավ, երբ 1940 թ. հունիսին Ֆրանսիան դիմեց կապիտուլյացիայի և Սիրիան անցավ վիշիականների տիրապետության տակ։ Ֆրանսիայի կապիտուլյացիայից հետո Անգլիան տնտեսական բլոկադայի ենթարկեց Սիրիային։ 1940 թ. հունիսին փակվեցին սահմանները Պաղեստինի և Սիրիայի ու Լիբանանի միջև, Անգլիան դադարեցրեց նավթի[1], ապա նաև մյուս կարևոր ապրանքների, այդ թվում նաև սննդամթերքների մատակարարումը։ Սիրիան փաստորեն կտրվեց արտաքին աշխարհից։ Այդ են վկայում թեկուզ հետևյալ թվերը, որոնք վերաբերում են Սիրիայի և Լիբանանի արտաքին առևտրին[2]. նախապատերազմյան 1938 թ. նրանք արտահանել էին 39.3 մլն. սիրիական լիրայի արժողությամբ ապրանք, իսկ 1941 թ.՝ ընդամենը 11.2 մլն[3], այսինքն՝ մոտ երեք անգամ պակաս։

Սիրիայի մեկուսացումը արտաքին աշխարհից և տնտեսական բնականոն կապերի խախտումը առաջ բերեց մի կողմից բազմաթիվ կարևոր ապրանքների սուվ երկրի ներսում, մյուս կողմից՝ բացասաբար անդրադարձավ սիրիական արդյունաբերական այն ճյուղերի զարգացման վրա, որոնք զբաղված էին հումքի վերամշակմամբ և արտահանմամբ։ Դրա հետևանքը եղավ տնտեսական լճացումը և նույնիսկ արդյունաբերական առանձին ճյուղերի անկումը։

Սակայն 1941 թ. սկսած, մանավանդ Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի բանակների Սիրիա մտնելուց հետո, երկրի տնտեսության մեջ նկատվում է աստիճանական վերելք։

Տնտեսական վերելքին նպաստեց նախ և առաջ այն հանգամանքը, որ օտարերկրյա ապրանքների պակասելը երկրի ներսում

---

[1] „The New York Times", 2.IX.1940.

[2] Մինչև 1950 թ. վիճակագրական տվյալները Սիրիայի և Լիբանանի համար տրվում են միասին։

[3] „United Nations. Economic developments in the Middle East. 1945 to 1954", New York, 1955, p. 192.

խիստ բարձրացրեց արդյունաբերական ապրանքների պահանջարկը։ Դա նպաստավոր պայմաններ ստեղծեց տեղական բուրժուազիայի համար արդյունաբերությունը ընդլայնելու և ազգային շուկայի պահանջները բավարարելու։ Դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ տեղական արտադրանքը անհամեմատ էժան էր ներմուծված ապրանքներից, որոնց գները պատերազմի ժամանակ չափազանց բարձրացան։ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միսիան Սիրիայի տնտեսության վերաբերյալ կազմած զեկուցագրում նշում է, որ «օտարերկրյա ապրանքների հազվադեպ լինելը և բարձր գները պատերազմի տարիներին և պատերազմից անմիջապես հետո նպաստեցին սիրիական արդյունաբերական արտադրանքի աճին»[4]։ Սրան պետք է ավելացնել և այն, որ պատերազմի տարիներին զգալիորեն թուլացավ օտարերկրյա կապիտալի մրցակցությունը։ Օտարերկրյա շատ ֆիրմաներ և ընկերություններ դադրեցրին իրենց գործունեությունը Սիրիայում։ Սիրիական ազգային բուրժուազիան դարձավ ավելի ինքնավստահ և համարձակորեն ձեռնամուխ եղավ նոր կապիտալների ներդրմանը արդյունաբերության ոլորտը։

Տնտեսական վերելքին, անշուշտ, զգալի չափով նպաստեց օտարերկրյա՝ անգլիական և ֆրանսիական ռազմական ուժերի առկայությունը Սիրիայում։ Սիրիական արդյունաբերությունը մասնակցում էր դաշնակիցների բանակների պահանջների բավարարմանը՝ հատկապես հագուստի, սննդի և այլն։ Ժողովրդի և բանակի պահանջները բավարարելու համար երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կառուցվում կամ ընդարձակվում են տեքստիլ, սննդի, կաշվի և այլ ձեռնարկություններ։

Արդյունաբերական ապրանքի ծավալի աճը հնարավոր դարձավ նաև այն պատճառով, որ երկրի ներսում կային ազատ կապիտալներ, որոնք կուտակված էին հիմնականում առևտրական խավի մոտ։ Արդյունաբերությունը, որ 1941 թ. սկսած մեծ շահույթներ էր տալիս, դարձավ խիստ գրավիչ առևտրականների համար։ Նրանցից շատերը իրենց կապիտալը ուղղում էին արդյունաբերության ոլորտը։ Անգամ Լիբանանից կապիտալը հոսում էր սիրիական արդյունաբերություն[5]։

---

[4] „The economic development of Syria. Report of a mission organized by the International Bank for Reconstruction and Development at the request of the government of Syria", Baltimore, 1955, p. 104.

[5] Նույն տեղում։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին զգալի չափով ընդարձակվեցին մշակելի հողատարածությունները։ Սիրիայի հիմնական գյուղատնտեսական կուլտուրաներն են ցորենը, գարին, մրգերը, բամբակը, բրինձը և այլն։ Եթե ցորենի ցանքատարածությունները 1938 թ. կազմել են 473 հազար հեկտար, ապա 1945 թ.՝ 750 հազար հեկտար, գարու ցանքատարածությունները՝ համապատասխանաբար 275 և 348, ձիթենին՝ 6 և 9, մրգերը՝ 42 և 56, բամբակը՝ 32 և 18, բրինձը՝ 1 և 7 հազար հեկտար և այլն[6]։ Բամբակի ցանքատարածությունների կրճատումը պետք է բացատրել բամբակի արտահանման կրճատմամբ։ Սիրիական բամբակի հիմնական ներմուծողը Ֆրանսիան էր, որի հետ Սիրիայի առևտրական հարաբերությունները մինչև Ֆրանսիայի ազատագրվելը գերմանական օկուպացումից, գործնականում զրոյի էր հավասար։

Մշակելի հողատարածություններն ընդարձակվեցին շնորհիվ այն նոր կապիտալ ներդրումների, որ գյուղատնտեսության բնագավառում կատարեցին առևտրականները և բանկիրները։

Սակայն, չնայած ցանքատարածությունների ընդարձակմանը, բերքատվությունը խիստ ընկավ։ Նույնիսկ ավելի շատ հող մշակելով, պատերազմի վերջում, 1945 թ., մի շարք կուլտուրաներից ստացված բերքն ավելի ցածր էր, քան 1938 թ.։ Օրինակ, ցորենի բերքը 1938 թ., երբ մշակվում էր ընդամենը 473 հազար հեկտար, կազմել է 459 հազար տոննա, իսկ 1945 թ., երբ մշակվում էր 750 հազար հեկտար, կազմում էր ընդամենը 415 հազար տոննա։ Գարու բերքը 1938 թ. կազմել է 290, իսկ 1945 թ.՝ 248 հազար տոննա[7]։

Բերքատվության անկման պատճառներից մեկն այն էր, որ հողը վատ էր մշակվում, չէին կիրառվում ժամանակակից ագրոտեխնիկական միջոցներ և շատ թույլ էր զարգացած ոռոգման սիստեմը։ Մանդատային իշխանությունները այդ հարցերի վրա քիչ էին ուշադրություն դարձնում։ 1920—1943 թթ. ոռոգման սիստեմի զարգացման վրա, ներառյալ Լիբանանը, ծախսվել է ընդամենը 32 մլն սիրիական լիրա։ Մինչդեռ Սիրիայի ներքին գործերի

---

[6] „UN. Economic developmets in the Middle East. 1945 to 1954", p. 183.

[7] Նույն տեղում։

[8] *В. Викторов*, Экономика современной Сирии (проблемы и перспективы, стр. 14.

մինիստրության, ժանդարմերիայի և ոստիկանության վրա միայն 1944 թ. ծախսվել է 15.6 մլն սիրիական լիրա[9]։

Անգլիացիների Սիրիա մտնելուց հետո, 1941 թ. երկրորդ կեսին, բրիտանական կառավարությունը վերացրեց Սիրիայի տնտեսական բլոկադան, որի հետևանքով սկսեց որոշ վերելք ապրել նաև արտաքին առևտուրը։ Առևտրական կապերը որոշ չափով աշխուժացան Անգլիայի և ստերլինգյան բլոկի մեջ մտնող մյուս երկրների հետ։ Չնայած այդ հանգամանքին, Սիրիայի արտահանումը և ներմուծումը պատերազմը ավարտվելու պահին, այնուամենայնիվ, չհասավ նախապատերազմյան մակարդակին, որի մասին են վկայում Սիրիայի ազգային տնտեսության մինիստրության հետևյալ պաշտոնական վիճակագրական տվյալները։

Սիրիան 1938 թ. ներմուծել է 561 հազար տոննա ապրանք, 1941 թ.՝ 274, 1943 թ.՝ 428, 1945 թ.՝ 515 հազար տոննա։ Իսկ ինչ վերաբերում է արտահանմանը, ապա 1938 թ. արտահանվել է 382 հազար տոննա, 1941 թ.՝ 29, 1943 թ.՝ 53 և 1945 թ.՝ 146 հազար տոննա[9]։ Պատերազմի տարիներին Սիրիայի արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է եղել։ Եթե 1938 թ. արտաքին առևտրի դիֆիցիտը կազմում էր 31.5 մլն սիրիական լիրա, ապա 1945 թ. այն հասավ 86,8 մլն լիրայի[10]։ Դա նշանակում էր, որ ազգային հարստության զգալի մասը դուրս էր գնում։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին խիստ վատացավ աշխատավորական մասսաների դրությունը։ Պատերազմի հետևանքով առաջացած դժվարությունները, զրկանքներն և հոգսերն իրենց ամբողջ ծանրությամբ առաջին հերթին ընկան բանվորների և հողազուրկ գյուղացիների ուսերին։ Նրանք զգում էին շաքարի, բրնձի, կաթնամթերքների, նավթի, ինչպես նաև հացի և այլ մթերքների խիստ պահանջ[11]։ Դրությունից ելք փնտրելու համար ֆրանսիական իշխանությունները մտցրին մթերքների նորմավորում։ Բայց դա էլ չփրկեց վիճակը։ Ժողովրդական մասսաները քաղցած էին։ Դրա պերճախոս վկայությունն է թեկուզև այն, որ եթե սկզբնական շրջանում 5 հոգուց բաղկացած ընտանիքին օրական տրվում էր 3 կգ հաց, ապա 1941 թ. ապրիլին այդ նորման իջեցվեց 1 կիլոգրամի[12]։

---

[9] „UN. Economic developments in the Middle East. 1945 to 1954", p. 192.

[10] Նույն տեղում։

[11] *N. Ziadeh*, Syria and Lebanon, London, 1957, p. 62.

[12] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, д. 414, л. 56.

Մթերքների պակասը հարցի մի կողմն էր։ Հարցի մյուս կողմն այն էր, որ արագ բարձրանում էին սննդամթերքների և ապրանքների գները։ Այդ առումով մի շարք հետաքրքիր թվեր է բերում «Կոմերս դյու Լևան» թերթը։ Ըստ այդ թերթի տվյալների հացի գինը 1941 թ. սկզբներին, նախապատերազմյան 1939 թ. համեմատ, բարձրացել էր 100 տոկոսով, կոշիկինը և արդյունաբերական այլ ապրանքներինը՝ 200—300 տոկոսով[13]։

Ֆրանսիայի տնտեսական ծանր կացությունն իր ազդեցությունն ունեցավ նաև ֆրանկի վրա։ Վերջինս սկսեց տատանվել և երկրում առաջացավ ինֆլյացիա։ Ֆրանսիայի պարտության հետևանքով Սիրիայի արդյունաբերողները, առևտրականները և հողատերերը չէին վստահում Ֆրանսիային, որի հսկողության տակ էր գտնվում «Banque de Syrie et du Liban»-ը և սիրիական թղթադրամը։ Այդ պատճառով էլ նրանք իրենց գործարքները ձգտում էին կատարել ոչ թե ֆրանկով կամ սիրիական թղթադրամով, այլ ոսկով կամ ֆունտ ստերլինգով ու դոլլարով։

Սիրիայի տնտեսական ծանր վիճակը հանդիսացավ այն հողը, որի հիման վրա երկրում ծայր առան մասսայական դժգոհություններ և տեղի ունեցան մի շարք ելույթներ։ Հատկապես ուշադրության են արժանի 1941 թ. հունվար-փետրվար ամիսներին տեղի ունեցած բողոքի ելույթները։ Քաղցած ժողովուրդը՝ բանվորները, ծառայողները, կանայք և նույնիսկ երեխաները փողոց դուրս եկան «Մենք ուզում ենք հաց, շաքար և նավթ», լոզունգների ներքո[14]։ Մի շարք վայրերում քաղցած ցուցարարները գրոհում էին հացի խանութների վրա։ Ֆրանսիական իշխանությունները ոչ միայն միջոցներ ձեռք չէին առնում բավարարելու ժողովրդի արդար պահանջները, այլև արգելակում և շատ հաճախ զենքի օգնությամբ ճնշում էին այդ ցույցերն ու ելույթները։

Քաղաքական իրադրությունը Սիրիայում և տարբեր սոցիալ-դասակարգային խմբավորումների դիրքը պատերազմի նկատմամբ։ Պատերազմը նոր դժբախտություններ բերեց Սիրիային։ Ինչպես նշել ենք, երկրում հաստատվել էր ուղղակի կառավարման դիկտատորական ռեժիմ։ Սիրիայում մտցվեց արտակարգ դրություն և սկսեցին գործել ռազմական օրենքները[15]։ 1939 թ. սեպտեմբերի 2-ին ֆրանսիական կառավարությունը Սիրիան հայտա-

---

[13] „La Commerce du Levant", Bayrouth, 25.III.1941

[14] *G. Kirk*, The Middle East in the war, London, 1954, p. 88.

[15] *Ph. Hitti*, Syria. A short history, New York, 1959, p. 247.

բարեց ռազմական գոտի և այնտեղ ուղարկեց ֆրանսիական բանակի նոր միավորումներ։ Ոստիկանությունը և անվտանգության օրգանները դրվեցին բանակի հսկողության ներքո, սահմանվեց խիստ դրաքննություն, արգելվեցին ցույցերը և այլն[16]։ 1939 թ. արգելվեցին մի շարք կազմակերպություններ, այդ թվում Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը։ Մանդատային իշխանությունները օգտվելով պատերազմի հետևանքով ստեղծված իրադրությունից, որոշեցին մահացու հարված հասցնել կոմունիստական կուսակցությանը։ Նրանք ձերբակալեցին և բանտ նետեցին նրա բազմաթիվ արաբ և հայ անդամների, այդ թվում կուսակցության ղեկավարներ Խալեդ Բեկդաշին, Նիքոլա Շավիին և ուրիշների։ Փակվեց կոմկուսի օրգան «Սաութ աշ-Շաաբ» լրագիրը[17]։

Առաջադեմ գործիչների՝ բանվորների և մտավորականության հետապնդումն ու հալածանքը մասսայական բնույթ էր կրում։ Հետապնդում էին ոչ միայն կոմունիստներին, այլ նաև սիրիական ազգայնականներին, մանավանդ «Քութլա վաթանիյայի» անդամներին։ 1940 թ. հուլիսին հետադիմական ուժերի զոհը դարձավ Սիրիայի ազատագրական շարժման հայտնի գործիչ դոկտոր Շահբանդերը։ Կոմունիստները և մյուս առաջադիմական ուժերը հարկադրված էին անցնել ընդհատակ և այնտեղից ղեկավարել սիրիական ժողովրդի հակաիմպերիալիստական և հակաֆաշիստական պայքարը։ Խոր ընդհատակում սկսեց լույս տեսնել «Սաութ աշ-Շաաբը»[18]։

Իսկ ինչպիսի՞ն էր Սիրիայի, նրա աշխատավորական մասսաների և տարբեր քաղաքական ու դասակարգային ուժերի դիրքը պատերազմի նկատմամբ։

Սա հույժ կարևոր հարց է, որն ըստ էության առնչվում է պատերազմող պետությունների և Սիրիայի ճակատագրի կենսականորեն խիստ անհրաժեշտ պրոբլեմների հետ։

Օտարերկրյա հեղինակները անդրադառնալով այս հարցին սովորաբար սահմանափակվում են արձանագրելով սոսկ այն հանգամանքը, որ Սիրիայի բնակչությունը ոչ մի եռանդ չէր ցուցաբերում պատերազմի նկատմամբ, և, որ նրան համակել էր

---

[16] *G. Kirk*, The Middle East in the war, p. 80.

[17] «Современная Сирия», стр. 152.

[18] «Очерки новейшей истории арабских стран», стр. 57.

ապատիան[19]։ Մյուսները սրան ավելացնում են նաև այն, որ Սիրիայի և Լիբանանի քաղաքական շրջանները արտաքնապես ցույց էին տալիս, թե իրենք լոյալ են Ֆրանսիայի նկատմամբ[20]։ Բայց թե ո՞րն էր սիրիական տարբեր քաղաքական ուժերի այդպիսի միայն առերևույթ «ապատիկ» դիրքորոշման պատճառը, այդ հեղինակները կամ չեն բացահայտում, կամ էլ սխալ ու թերի պատասխան են տալիս։ Այդ հարցի պատասխանը պետք է փնտրել ֆրանսիական իշխանությունների իմպերիալիստական քաղաքականության մեջ։ Սիրիայի ազդային և դեմոկրատական ուժերը շատ լավ գիտեին, որ Ֆրանսիան չի ցանկանում անկախություն տալ Սիրիային, ընդհակառակը, նա ձգտում էր Սիրիան պահել իր ուղղակի կառավարման ներքո։ Այդ պատերազմից սիրիացիները սպասելիք չունեին։ Այն իր էությամբ խորթ էր նրանց։ Դա համաշխարհային իմպերիալիզմի երկու գիշատիչ խմբերի բախումն էր։ Այսպիսի պարագաներում էնտուզիազմ ցուցաբերել և պատերազմի թմբուկ զարկել ի պաշտպանություն Ֆրանսիայի իմպերիալիստական շահերի, պարզապես տղայամտություն կլիներ սիրիացիների կողմից։ Ուստի պատահականություն չէ, որ չնայած մանդատային իշխանությունների բազմաթիվ կոչերին և Լևանտում ֆրանսիական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Վեյգանի երկրում կատարած շրջագայություններին, նրանց չհաջողվեց ֆրանսիական բանակի համար տեղացիներից կամավորներ ցուցակագրել[21]։ Իհարկե, Սիրիայում կային խմբավորումներ, աննշան և ոչ ազդեցիկ, որոնք փորձում էին ակտիվորեն հանդես գալ Ֆրանսիայի կողքին, կային նաև այնպիսիները, որոնք փորձում էին գերմանական զենքի օգնությամբ հասնել Սիրիայի ազատագրմանը[22]։

Պրոգերմանական տրամադրությունները պատերազմի սկզբնական շրջանում իրոք զգալի չափով ուժեղ էին արաբական երկրներում և Սիրիայում։ Դա բացատրվում է նրանով, որ Գերմանիան պատերազմում էր Անգլիայի և Ֆրանսիայի դեմ, այն երկրների դեմ, որոնք առաջին համաշխարհային պատերազմից

---

[19] *A. Hourani*, Syria and Lebanon, p. 231. *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 294.

[20] *G. Kirk*, A history of the Middle East from the rise of Islam to modern times, London, 1961, p. 206; *G. Lenczowski*, The Middle East in world affairs, New York, 1957, p. 275.

[21] *G. Kirk*, The Middle East in the war, p. 80.

[22] *N. Ziadeh*, Syria and Lebanon, p. 62.

հետո արաբներին զրկեցին անկախությունից և մանդատի հովանու ներքո իրենց տիրապետությունը հաստատեցին արաբական տարբեր երկրներում։

Այստեղ ոչ պակաս կարևոր դեր էր խաղում նաև Գերմանիայի քաղաքականությունը Սիրիայի և արաբական մյուս երկրների նկատմամբ։ Գերմանական պրոպագանդան ամեն կերպ ջանում էր Գերմանիային ներկայացնել որպես արաբների միակ անկեղծ և իսկական բարեկամը։ Զգտելով շահել արաբների համակրանքը Գերմանիայի և Իտալիայի կառավարությունները պատերազմի սկզբում պաշտոնապես հայտարարեցին, որ իրենք կողմնակից են Սիրիայի և արաբական մյուս երկրների անկախությանը և արաբական կոնֆեդերացիայի ստեղծմանը[23]։ Միամիտ և քաղաքականության մեջ անփորձ սիրիական որոշ գործիչներ դյուրահավատ էին ֆաշիստական պետությունների նման հայտարարություններին և սխալ կերպով կարծում էին, թե ֆաշիստների հաղթանակը Անգլիայի և Ֆրանսիայի նկատմամբ ինքնաբերաբար կհանգեցնի Սիրիայի անկախության նվաճմանը։

Այս հարցում սիրիացիների դիրքը հասկանալու համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում Բեյրութում ամերիկյան գլխավոր հյուպատոս Ինգերտի մի զեկուցագիրը ԱՄՆ-ի պետական քարտուղար Կ. Հեյլին։ Ինգերտը 1941 թ. ապրիլի սկզբներին Դամասկոսում հանդիպում է ունենում Ազգային բլոկի՝ «Քութլա վաթանիյայի» զեկավարներ Շուքրի Քուաթլիի և Խալեդ Ազմի հետ։ Շուքրի Քուաթլին հայտնում է Ինգերտին, որ ինքը և իր կուսակցությունը պրոգերմանական չեն։ Սակայն գերմանական պրոպագանդան Սիրիայում, շարունակում է Քուաթլին, ուժեղ է, որովհետև Գերմանիան և Իտալիան հրապարակել են հայտարարություն սիրիացիների և արաբների իրավունքների ճանաչման մասին։ Մինչդեռ Անգլիան ոչ միայն հրաժարվում է նման դեկլարացիայով հանդես գալ, այլև «խոստացել է Թուրքիային Հյուսիսային Սիրիայի և Իրաքի որոշ տերիտորիաներ Թուրքիայի զինվորական աջակցության փոխարեն»[24]։ Սրանով պետք է բացատրել որոշ պրոգերմանական տրամադրությունների առկայությունը Սիրիայում։

Սակայն իրականում Սիրիայի աշխատավորական մասսաները չունեին պրոգերմանական տրամադրություններ և դեմ էին պատե-

[23] „Foreigen relations of the United States. Diplomatic Papers" v. III, Washington, 1959, p. 695.

[24] Նույն տեղում։

բազմին։ Իսկ ունևոր դասակարգերը՝ խոշոր ու միջին արդյունաբերական բուրժուազիան, առևտրական բուրժուազիան, հողատերերի գերակշռող մասը, ծվարելով «ապատիայի» դիմակի տակ, սպասողական դիրք էին գրավել։

Չպետք է մոռանալ, որ այստեղ խոսքը հիմնականում գնում է երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին էտապի՝ 1939—1941 թթ. մասին, երբ Սովետական Միությունը դեռ չէր մտել պատերազմի մեջ և երբ այն ընթանում էր իմպերիալիստական երկու խմբավորումների միջև։

1941 թ. երկրորդ կեսից սիրիական հասարակական կարծիքում տեղի է ունենում վճռական բեկում։ Սիրիական աշխատավորական զանգվածները և դասակարգային-քաղաքական ուժերի մեծ մասը վճռականորեն հանդես եկան հակահիտլերյան կոալիցիայի պաշտպանությամբ։ Այդ բեկումն առաջացավ հիմնականում երկու գործոնների ազդեցությամբ։ Առաջինը, Գերմանիայի ուխտադրուժ հարձակումն էր Սովետական Միության վրա։ ՍՍՀՄ-ի մասնակցությունը պատերազմին փոխեց նրա բնույթը՝ շեշտելով նրա ազատագրական ու դեմոկրատական բովանդակությունը։ Սովետական զենքի հաջողությունները հույս ներշնչեցին գաղութային կախման մեջ գտնվող ժողովուրդներին, նրանց առաջ բացելով ազգային անկախության նվաճման հեռանկարները։ Ընդհանրապես պետք է ընդգծել, որ Սովետական Միության հեղինակությունը բավականին բարձր էր Սիրիայի ժողովրդական մասսաների մոտ։ Այդ բանը ստիպված էր խոստովանել Լևանտում՝ Սիրիայում և Լիբանանում Ֆրանսիայի գլխավոր կոմիսար գեներալ Դենցը[25]։ 1941 թ. մարտին ամերիկյան հյուպատոս Ինգերտի հետ ունեցած զրույցի ժամանակ նա ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչին հայտնում է, որ սովետական պրոպագանդան բարենպաստ արձագանք է գտնում Սիրիայի թե՛ արաբ և թե՛ հայ ազգաբնակչության մոտ[26]։ Դենցը միաժամանակ ավելացնում է, որ հայ համայնքը պաշտպանում է համաարաբական ճակատը, որն ուղղված է Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի դեմ[27]։ Դենցը իր այդ զրույցում ակնարկում է այն մասին, որ Սովետական Միությանը համակրող սիրիահայ համայնքի կողմից արաբական ազ-

---

[25] *Նա այդ պաշտոնում Պյուտին փոխարինեց 1940 թ. դեկտեմբերին։*

[26] „Foreign relations of the US. Diplomatic papers. 1941", v. III, p. 693.

[27] *Նույն տեղում։*

գային խնդիրների պաշտպանումը անվիճելիորեն նպաստում է Սովետական Միության հեղինակության աճմանը Սիրիայում։

Մյուս կարևոր հանգամանքն այն էր, որ ցանկանալով իրենց կողմը գրավել Սիրիայի և Լիբանանի ժողովրդին, ռազմական ու քաղաքական ոչ նախանձելի վիճակում գտնվող Անգլիան ու մարտնչող Ֆրանսիան 1941 թ. հունիսին պաշտոնապես հանդես եկան Սիրիային և Լիբանանին անկախություն տալու դեկլարացիայով։ Ահա այդ հարկադրական ակտը և Սովետական Միության մասնակցությունը պատերազմին վճռական դեր խաղացին պատերազմի հարցում Սիրիայի տարբեր քաղաքական ուժերի դիրքորոշման փոփոխման մեջ։ Այժմ, երբ պարզ ուրվագծվում էր պետական անկախ գոյության հեռանկարը և ռեալ հնարավորություն էր ստեղծվում նրա իրականացման համար, նրանք դեն նետեցին ապատիայի և չեզոքության քղամիդը և կանգնեցին դեմոկրատական լագերի հաղթանակի տեսակետի վրա։

Ֆրանսիայի կապիտուլյացիան և դրա ճնշաճիճները Սիրիայի համար։ Երկրորդ համաշխարհային պատերազմում հաջողությունը չուղեկցեց Ֆրանսիային։ Ընդհակառակը, այդ պատերազմը նրա համար վերածվեց ազգային աղետի։ Հիտլերյան Գերմանիան չախչախիչ պարտության մատնեց կոնտիննենտալ Եվրոպայի երբեմնի այդ ամենաուժեղ պետությանը և 1940 թ. հունիսի 21-ին Կոմպյենյան անտառում կնքվեց վերջինիս աղերսած հաշտության պայմանագիրը։ Այդ ստորացուցիչ կապիտուլյացիայից հետո Ֆրանսիան անցավ ֆաշիստական Գերմանիայի տիրապետության տակ։ Վերջինս Վիշիում իր հետ համագործակցել ցանկացողներից և ֆրանսիական ժողովրդի դավաճաններից «կազմեց» այսպես կոչված ֆրանսիական կառավարություն։ Նրա ղեկավարները դարձան մարշալ Պետենը, Լավալը, Դառլանը, Վեյգանը և ուրիշներ։ Վիշիի անունը դարձավ իր երկրի ազգային շահերի դավաճանության խորհրդանիշ։

Սակայն ոչ բոլոր ֆրանսիացիները ծառայության գնացին ֆաշիստական «նոր կարգին»։ Երկրում, կոմունիստների ղեկավարությամբ, ծայր առավ դիմադրության շարժումը։ Մյուս կողմից՝ հայրենասեր գինվորականների և քաղաքացիների մի խումբ՝ գեներալ Շարլ դը Գոլլի գլխավորությամբ, հրաժարվեց ճանաչել կապիտուլյացիոն խայտառակ ակտը և չհամագործակցեց ո՛չ գերմանական օկուպանտների, ո՛չ էլ նրանց կամակատար վիշիականների հետ։ Նրանք իրենց հայտարարեցին Մարտնչող կամ Ազատ Ֆրանսիա, նպա-

տակ ունենալով աղատագրել Ֆրանսիան գերմանական օկուպացումից և պահպանել Ֆրանսիայի անդրծովյան տիրապետությունները։

Գեներալ դը Գոլլը դիմադրությունը շարունակելու վերաբերյալ իր առաջին կոչը ֆրանսիացիներին ուղղեց 1940 թ. հունիսի 18-ին, Լոնդոնից։ Դրա համար գեներալ Վեյգանը, որ մայիսի 17-ից դարձել էր Ֆրանսիայի գերագույն գլխավոր հրամանատարը, նրան հեռացրեց բանակից։ Սակայն դա ոչ մի ազդեցություն չունեցավ դը Գոլլի վրա։ Նա ամսի 26-ին ձևակերպեց դիմադրության իր պլանը, իսկ երկու օր անց՝ հունիսի 28-ին Անգլիան պաշտոնապես նրան ճանաչեց որպես Ազատ Ֆրանսիայի ղեկավար[28]։

Այսպիսով, ստեղծվեց յուրահատուկ մի իրավիճակ՝ երկու Ֆրանսիա, տարբեր՝ քաղաքականությամբ ու տարբեր խնդիրներով։

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե Ֆրանսիայի հունիսյան կապիտուլյացիան ինչպիսի հետևանքներ ունեցավ Լևանտի երկրների, մասնավորաբար Սիրիայի համար։

Սկզբից ևեթ նշենք, որ Լևանտի ֆրանսիական ռազմական և քաղաքացիական իշխանությունները միանգամից չկարողացան հետևողականորեն ճիշտ գիծ անցկացնել։ Նրանք ցուցաբերեցին մեծ տատանումներ, որի հետևանքը եղավ ճիշտ գծից հրաժարվելը և Վիշիի որոշումների ենթարկվելը։

Սկզբնական էտապում Լևանտում ֆրանսիական իշխանությունները որոշեցին շարունակել պատերազմը և դիմադրել գերմանական ոտնձգություններին։ Նրանց մեջ դեռևս խոսում էր վիրավորված ու ստորացված ինքնասիրությունը։ Նրանք գտնում էին, որ Ֆրանսիայի հպարտությանն ու արժանապատվությանը հասցված է ծանր հարված և իրենք կոչված են պատերազմով ու արյունով սրբել սև բիծը։ Սկզբնական շրջանում սա էր տիրող տրամադրությունը, որը համընդհանուր էր։ Ուստի 1940 թ. հունիսի 18-ին, երբ մարշալ Պետենը ռադիոյով դիմեց բոլոր ֆրանսիացիներին, տեղյակ պահելով նրանց, որ ինքը վճռել է հաշտություն խնդրել գերմանացիներից, գեներալ Միթթելհաուզերը՝ Լևանտում ֆրանսիական ուժերի գլխավոր հրամանատարը (նա այդ պոստում գեներալ Վեյգանին փոխարինել էր 1940 թ. մայիսի 18-ին) հայտարարեց, որ «Լևանտի բանակը կշարունակի պայքարը դաշ-

---

[28] S. Longrigg, Syria and Lebanon under French mandate, p. 297.

նակիցների կողմում»[29]: Նա սերտ կապեր հաստատեց Կահիրեում անգլիական գեներալ Վեյվելի հետ՝ համաձայնության գալով միասին շարունակել պայքարը[30]: Նման դիրք բռնեց նաև գլխավոր կոմիսար Պյուոն: Նա հայտարարեց, որ Ֆրանսիան հաստատակամորեն կպահպանի իր դիրքերը Սիրիայում և Լիբանանում և մինչև վերջ կիրականացնի իր առաքելությունը[31]: Նրանց այս դիրքը չփոխվեց նաև այն բանից հետո, երբ 1940 թ. հունիսի 22-ին հայտնի դարձան Գերմանիայի հետ կնքած հաշտության պայմանները: Հունվարի 23-ին Միքթելհաուզերը հայտարարեց, որ մտադիր է «իրականացնել Ֆրանսիայի միսիան Սիրիայում և այնտեղ պաշտպանել... Ֆրանսիայի պատիվն ու դրոշը»[32]: Իսկ Պյուոն հավաստիացրեց, որ Լևանտում ոչ մի կապիտուլյացիա տեղի չի ունենա:

Այսպես էր դրությունը մինչև հունիսի 25-ը: Սակայն դրանից հետո մենք տեսնում ենք, որ Լևանտի ռազմական և քաղաքացիական իշխանությունների դիրքը շեշտակիորեն փոխվում է: Հունիսի 25-ին հրապարակվեց Վիշիի կառավարության պաշտպանության մինիստր Վեյգանի հրամանը ֆրանսիական զորքերի գլխավոր հրամանատարներին, որտեղ նա պահանջում էր ընդունել և կիրառել Գերմանիայի հետ կնքած հաշտության պայմանները: Եվ ահա այստեղ մի հանգամանք ևս ազդեց Պյուոյի և ապա Միքթելհաուզերի դիրքորոշման վրա: Բանը նրանումն է, որ պատերազմի հենց սկզբից նրանք սերտ շփման մեջ էին Թունիսի գեներալ-ռեզիդենտ Պեյրութոնի և Մարոկկոյի գեներալ-ռեզիդենտ գեներալ Նոգեսի հետ: Նրանք կարծիքներ էին փոխանակում և համաձայնեցնում միմյանց դիրքերը: Այդպես էր պատերազմի սկզբում և կապիտուլյացիայից անմիջապես հետո: Վերջին երկու ռեզիդենտները սկզբնական շրջանում նույնպես չէին ցանկանում ընդունել հաշտության պայմանները, բայց այժմ, գեներալ Վեյգանի վերոհիշյալ հրամանից հետո, որոշում են ենթարկվել այդ հրամանին: Մարոկկոյի ռեզիդենտը Թունիսի ռեզիդենտի համաձայնությամբ ու հավանությամբ մի հեռագիր է ուղարկում Պյուոյին և Միքթելհաուզերին, որտեղ ասված էր, որ իրենք որոշել են ենթարկվել Վեյգանի հրամանին, որովհետև «հաշտությունը չի ազ-

[29] G. Kirk, The Middle East in the war, p. 82.
[30] S. Longrigg, Syria and Lebanon under French mandate, p. 296.
[31] Նույն տեղում:
[32] G. Kirk, The Middle East in the war, p. 82.

դում ֆրանսիական կայսրության ազատության վրա»[33]։ Նրանք Պյուոյին կոչ էին անում նույն կերպ վարվել։ Այդ հեռագիրն ունեցավ սպասված ազդեցությունը և հունիսի 27-ին գլխավոր կոմիսար Պյուոն հայտնեց Միքթելհաուզերին, թե քանի որ ֆրանսիական Հյուսիսային Աֆրիկան ընդունել է հաշտության պայմանները, ապա պայքարը շարունակելը ոչ մի իմաստ չունի[34]։ Այժմ վերջնական վճիռը պետք է ընդուներ գեներալ Միքթելհաուզերը։ Հունիսի 28-ի առավոտյան սա նույնպես միացավ Պյուոյի տեսակետին։ Նա արձակեց մի հրաման, որտեղ ասված էր. «Համաձայն ֆրանսիական հաշտության պայմանների, մանդատային տերիտորիաների ստատուսում ոչ մի փոփոխություն տեղի չի ունենալու։ Հետևաբար, Արևելյան միջերկրականի շրջանի գլխավոր հրամանատարը գլխավոր կոմիսարի համաձայնությամբ հրամայել է դադարեցնել պատերազմական գործողությունները։ Ֆրանսիական դրոշը շարունակելու է փողփողալ այս տերիտորիաների վրա և Ֆրանսիան շարունակելու է իր միսիան Լևանտում»[35]։

Հաշտության պայմանները ընդունելու վերաբերյալ Լևանտի ֆրանսիական իշխանությունների որոշումը խոր դժգոհություն առաջացրեց այնտեղ գտնվող ֆրանսիական բանակի զորքերի և սպայական կազմի մի մասի մոտ։ Ուստի բազմաթիվ զինվորներ ու սպաներ, թողնելով Սիրիան ու Լիբանանը, անցնում էին Պաղեստին, միանում բրիտանական բանակին։ Ս. Լոնգրիգը հավաստում է, որ, եթե թույլ տրվեր, ապա շատ-շատերը կանցնեին սահմանը և կմիանային անգլիական զորքերին[36]։

Լևանտում ֆրանսիական իշխանությունների կապիտուլյանտական վարքագիծը պետք է բացատրել նրանով, որ նրանք չցանկացան կամ վախեցան չենթարկվել իրենց կառավարության որոշմանը, որի պաշտոնյաներն էին։ Թերևս նրանք վախենում էին անգլո-ֆրանսիական հակամարտությունից, որն այնքան հին է, ինչքան գաղութատիրության պատմությունը։ Նրանք երկյուղ էին կրում, որ եթե կապը խզեն մետրոպոլիայից, ապա լրիվ կընկնեն անգլիական ազդեցության տակ և բացառված չէ այն հնարավորությունը, որ Անգլիան իր վերահսկողությունը կսահմանի Սիրիայի և Լիբանանի վրա։

---

[33] Նույն տեղում։

[34] Նույն տեղում։

[35] „Foreingn relations of the US. Diplomatic papers. 1940", v. III, Washington, 1958, p. 893-894.

[36] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 297.

Լևանտի իշխանությունների կողմից Վիշիի կառավարությանը ենթարկվելը և հաշտության պայմանները ընդունելը լայն հեռանկարներ էր ստեղծում գերմանա-իտալական ներթափանցման համար։ Իսկ դա չէր կարող չանհանգստացնել Անգլիային և որոշ չափով Թուրքիային։ Սիրիայի հարցի շուրջը, թե ով այնտեղ տիրապետող կդառնա, իրար են բախվում Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և Թուրքիայի շահերը, որի հետևանքով ստեղծվում է հակասությունների մի բարդ կծիկ։

Այն բանից հետո, երբ Պյուտն որոշեց ընդունել հաշտության պայմանները, սահմանները Պաղեստինի և Լևանտի երկրների միջև փակվեցին։ 1940 թ. հուլիսի 1-ին հրապարակվեց անգլիական կառավարության դեկլարացիան, որտեղ շարադրված էր Մեծ Բրիտանիայի դիրքը Լևանտում ստեղծված իրադրության կապակցությամբ։

Անգլիական կառավարությունն ի գիտություն ընդունելով Լևանտում ֆրանսիական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Միթթելհաուզերի հայտարարությունը այն մասին, որ պատերազմական գործողությունները դադարեցվում են, նշում էր, որ դա դեռ չի նշանակում, որ «եթե Գերմանիան կամ Իտալիան ձգտեն կամ փորձեն օկուպացնել Սիրիան և Լիբանանը ապա ֆրանսիական ուժերի կողմից դրան դիմադրելու ոչ մի փորձ չպետք է կատարվի»[37]։

Այնուհետև վերոհիշյալ դեկլարացիայում ասվում էր. «որպեսզի այս կամ այն շրջանակներում որևէ կասկած չլինի, նորին մեծության կառավարությունը հայտարարում է, որ ինքը թույլ չի տա, որ որևէ թշնամի պետություն օկուպացնի Սիրիան կամ Լիբանանը և կամ նրանց օգտագործի որպես բազա հարձակվելու Միջին Արևելքի երկրների վրա, որոնց նա կոչված է պաշտպանելու»[38]։ Ելնելով սրանից, Անգլիան ազդարարում էր, որ ինքը անհրաժեշտության դեպքում կդիմի այնպիսի քայլերի, որպիսիք նպատակահարմար կգտնի։ Միաժամանակ ավելացնում էր, որ իր գործողությունները չեն ազդի ֆրանսիական մանդատի ներքո գտնվող երկրների, այսինքն Սիրիայի և Լիբանանի ապագա ստատուսի վրա[39]։

Այս դեկլարացիան վկայում էր Անգլիայի խոր անհանգստության մասին։ Եվ դա իր հիմքը ուներ։ Արաբական Արևելքում Անգ-

[37] „The Times", London, 2.VII.1940.

[38] Նույն տեղում։

[39] Նույն տեղում։

լիան ուներ մեծ տիրապետություններ և առևտրական ու տնտեսական շահեր։ Սիրիայի և Լիբանանի անցումը Թշնամու, այսինքն Գերմանիայի կամ Իտալիայի տիրապետության տակ, լուրջ սպառնալիք կստեղծեր անգլիական տիրապետությունների և ընդհանրապես ողջ Բրիտանական կայսրության գոյության համար։ Այստեղից էլ Մեծ Բրիտանիայի խոր անհանգստությունը։ Բայց այնուամենայնիվ հարց է ծագում, թե ինչո՞ւ Անգլիան անմիջապես չդիմեց ռազմական գործողությունների, այլ հիմնականում սահմանափակվեց սույն դեկլարացիայի հրապարակումով։ Դա պետք է բացատրել նրանով, որ ռազմական և քաղաքական իրադրությունն այդ ժամանակ ի նպաստ Անգլիայի չէր։ Չպետք է մոռանալ, որ այդ տարիներին Հիտլերյան Գերմանիան ամենուր հաղթական էր և գտնվում էր իր ռազմի փառքի գագաթին։ Անգլիան հարկադրված էր պայքարել իր սեփական անկախության պահպանման համար։ Հետագայում դրան ավելացավ նաև Հունաստանը, որին օգնելու համար Մեծ Բրիտանիան հատկացրեց իր ռազմական ուժերի մի մասը։ Բացի այդ անգլիական զինված ուժերը զբաղված էին Հաբեշստանում և Լիբիայում, հետևաբար, Անգլիան բավարար չափով ուժ չուներ Սիրիան և Լիբանանը օկուպացնելու համար։ Այստեղ մի հանգամանք ևս պետք է ի նկատի ունենալ, դա Լևանտում գտնվող ֆրանսիական ռազմական ուժերի դիրքն էր։ Մեծ Բրիտանիան քաջ գիտեր, որ նրանք իրեն ոչ միայն գրկաբաց չեն ընդունի, այլ, ընդհակառակը, դիմադրություն ցույց կտան։ Այսպիսի պայմաններում նոր ճակատ բացելը կլիներ անմտություն, որին Անգլիան, բնականաբար, չդիմեց։ Նա հրապարակեց վերոհիշյալ դեկլարացիան, սպասելով ավելի նպաստավոր իրադրության նրանում նշված կետերն իրագործելու համար։

Սակայն հարաբերությունները Անգլիայի և Լևանտի երկրների միջև մինչև 1941 թ. հունիսը, երբ սկսվեցին պատերազմական գործողությունները, շարունակում էին մնալ լարված։ Անգլիան, ինչպես արդեն նշեցինք, փակեց սահմանները Պաղեստինի և Սիրիայի միջև, դադարեցրեց նավթի մատակարարումը Սիրիային և այլն։ Ֆրանսիական իշխանությունները նույնպես դիմեցին մի շարք քայլերի։ Նրանք արգելեցին լսել բրիտանական ռադիոհաղորդումները, Սիրիայում և Լիբանանում գտնվող բրիտանական քաղաքացիներին վերցրին խիստ հսկողության տակ և այլն[40]։

---

[40] S. *Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 298.

Իտալական հաշտության հանձնաժողովի ժամանումը Սիրիա: Կոմպյենի հաշտության պայմանների ստորագրումով գերմանա-իտալական բլոկի համար հնարավորություն ստեղծվեց Լևանտի երկրները ներթափանցելու համար:

Ինչպես նկատել է Վիլֆրիդ Քասըլը, Ֆրանսիան այնպիսի վիճակի մեջ էր, որ ստիպված էր Սիրիան զիջել նրան, ով բավականին ուժ ուներ այդ պահանջը ներկայացնելու[41]: Տվյալ դեպքում ուժը ֆաշիստական Գերմանիայի և Իտալիայի կողմն էր և Ֆրանսիան նրանց առջև բացեց Լևանտի դարպասները: 1940 թ. օգոստոսին Սիրիա ժամանեց իտալական հաշտության հանձնաժողովը գեներալ Գեորգիի գլխավորությամբ: Հանձնաժողովը պետք է հետևեր հաշտության պայմանների կատարմանը, կատարեր ռազմական գույքի ցուցակագրում և ստուգեր, ներկալված իտալացիները ազատվել են թե ոչ[42]:

Իտալական հանձնաժողովը սկզբնական շրջանում փորձեց լայն գործունեություն ծավալել, որը հիմք տվեց «Ինդուստան թայմս»-ին հայտարարելու, որ «իտալական ռազմական միսիայի ակտիվությունը Սիրիայում ցույց է տալիս, որ առանցքի երկրները ձգտում են Սիրիային այնպես զրկել դիմադրության բոլոր միջոցներից, որ առաջին իսկ հնարավորության դեպքում Իտալիան հնարավորություն ունենա զավթել այս երկիրը»[43]: Իտալական հանձնաժողովն իր գործակալներին նշանակեց Լևանտում գտնվող ֆրանսիական բոլոր երեք դիվիզիաներում և փորձեց Սիրիայում գտնվող ֆրանսիական ռազմական հանդերձանքի ցուցակագրում անցկացնել[44]: Սակայն ֆրանսիացիները չհամաձայնվեցին նրանց այս պահանջի հետ: Նրանք մերժեցին նաև օդային բազաները, Բեյրութի նավահանգստում գտնվող մի քանի սուզանավերը, ինչպես նաև երկաթուղիների հսկողությունը իտալացիներին հանձնելու պահանջը[45]: Իտալական հանձնաժողովին չհաջողվեց իր տնօրինության տակ վերցնել ֆրանսիական բանակի ռազմանյութերը և սպառազինությունը: Վերջիվերջո իտալական հաշտության հանձնաժողովի առաքելությունն ավարտվեց լրիվ ձախողմամբ:

---

41 *W. Castle*, The syrian pageant. The history of Syria and Palestine 1000 B.C. to A.D. 1945, London, 1954, p. 162.

42 „Foreign relations of the US. Diplomatic papers. 1940", v. III, p. 906.

43 „The Industan Times", 15.IX.1940.

44 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, д. 414, л. 111.

45 Նույն տեղում:

Այդ ձախողումը պետք է բացատրել մի շարք պատճառներով։ Նախ և առաջ խիստ թշնամական էր Սիրիայի ժողովրդի և հակաիմպերիալիստական ուժերի դիրքը այդ հանձնաժողովի և նրա գործունեության նկատմամբ։ Սիրիական ազգային առաջնորդները նշում էին, որ իրենք ստրուկ չեն, որ իրենց ձեռքից ձեռք հանձնեն։ Դեռ ավելին, նրանք հայտարարեցին, որ «պատրաստ են հանդես գալ Իտալիայի և նույնիսկ Ֆրանսիայի դեմ»[46]։ Դրությունը երկրում այնքան լարվեց, որ գլխավոր կոմիսար Պյուտն ստիպված հրապարակեց մի կոմյունիկե, որտեղ ասված էր, որ հաշտությունը «չի նախատեսում ենթամանդատային որևէ տերիտորիայի ռազմական օկուպացում։ Իտալական հանձնաժողովը չի նախապատրաստվում գրավելու օդանավակայանները և մտադիր չէ խառնվելու տեղական իշխանությունների ֆինանսական ու վարչական գործերին»[47]։

Մյուս պատճառն այն էր, որ ֆրանսիական իշխանությունները կայուն գտնվեցին այդ ոտնձգությունների նկատմամբ։ Նրանք շատ հաճախ հաշվի չէին նստում նրա հետ, մանավանդ այն բանից հետո, երբ իտալացիներն անհաջողություն կրեցին Հյուսիսային Աֆրիկայում և Ալբանիայում։ Ֆրանսիացիների այդ հաստատուն դիրքը բացատրվում է այն բանով, որ նրանք չէին ցանկանում զրկվել այնպիսի մի կարևոր շրջանից, ինչպես Լևանտն էր։ Բացի այդ ֆրանսիացիները ռազմական պարտություն իտալացիներից չէին կրել։ Այս հոգեբանական մոմենտը իր դերն ունեցավ, որ ֆրանսիացիները իրենց իտալացիների հետ պահեին ինչպես հավասարը հավասարի հետ կամ Ս. Լոնգրիգի արտահայտությամբ, նրանց «մեծ նշանակություն չտային»[48]։ Իսկ Իտալիայի Հունաստանում և Լիբիայում ունեցած անհաջողություններից հետո այդ հանձնաժողովն «ավելի շուտ ծաղր քան թե զայրույթ էր հարուցում»[49]։

Եվ վերջապես իտալական միսիայի անհաջողության գործում իր որոշակի դերը խաղաց Գերմանիայի դիրքը։ Իտալական հաշտության հանձնաժողովը Լևանտ էր ուղարկվել, հասկանալի է, Գերմանիայի գիտությամբ և համաձայնությամբ։ Սակայն Գերմանիան բնավ մտադիր չէր Սիրիան հանձնել Իտալիային։ Գեր-

[46] Նույն տեղում, թ. 112։

[47] Նույն տեղում, թ. 110։

[48] S. Longrigg, Syria and Lebanon under French mandate, p. 301.

[49] „Les Allemands en Syria sous le gouvernement de Vichy", 1942, p. 4.

մանական շրջաններում բացահայտ խոսում էին, որ իրենք Ֆրանսիային նրա համար չեն պարտության մատնել, որ Սիրիան նվիրաբերեն Իտալիային[50]։ Սիրիայի նկատմամբ ինքը՝ Գերմանիան հավակնություն ուներ։ Սակայն այդ մասին առայժմ լռում էր։ Ուստի նա ճնշում է գործադրում Իտալիայի վրա, որպեսզի վերջինս չափավորի իր պահանջները Սիրիայում։

Իտալիայի նկատմամբ Գերմանիայի կողմից այդպիսի քաղաքականություն որդեգրելու մեջ իրենց դերը խաղացին նաև երկու կարևոր հանգամանք։ Նախ, Անգլիայի հարցը։ Գերմանիան վախենում էր, որ իտալական հանձնաժողովի բացահայտ գործողությունները Սիրիայում կարող է լուրջ անհանգստացնել Անգլիային, նրան մղելով ընդհուպ մինչև պատերազմական գործողությունների, որը տվյալ պարագայում ձեռնտու չէր Գերմանիային, քանի որ վերջինս դեռևս չէր ավարտել իր նվաճումները Եվրոպայում։

Երկրորդ, Թուրքիայի հարցը։ Գերմանացիները շատ լավ էին հասկանում, որ Թուրքիան ոչ մի գնով չի համաձայնվի Սիրիայի նվաճմանը Իտալիայի կողմից։ Թուրքիան որոշակի նկատառումներ ուներ եթե ոչ ամբողջ Սիրիայի, ապա նրա հյուսիսային շրջանների հանդեպ։ Մինչդեռ Սիրիան զավթելու իտալական պլանները կարող էին Թուրքիային մղել մերձեցման Անգլիայի հետ, որը բնավ ձեռնտու չէր Գերմանիային։ Թուրքիային Գերմանիայի կողմը թեքելու ուղղությամբ լայն գործունեություն էր ծավալել Թուրքիայում գերմանական դեսպան Ֆոն Պապենը։ Եվ պետք է նշել, որ նա քիչ հաջողությունների չէր հասել։ Սակայն այժմ, Իտալիայի գործողությունները կարող էին հարցականի տակ դնել գերմանական պլանները Թուրքիայի նկատմամբ։ Դեռ ավելին, գերմանական կառավարությունը երկյուղ էր կրում, որ Իտալիայի գործողությունների հետևանքով Թուրքիան կարող էր ռազմական դաշինք կնքել Հունաստանի հետ և պատերազմել Իտալիայի, իսկ հետագայում, հնարավոր է նաև Գերմանիայի դեմ[51]։ Այսպիսի հեռանկարը չէր կարող ուրախացնել Գերմանիային։ Ահա այս բոլոր պարագաները հաշվի առնելով Գերմանիան ճնշում գործադրեց Իտալիայի վրա, ստիպելով վերջինիս սահմանափակել իր ախորժակը և չափավորել իր պահանջները։

---

[50] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, д. 414, л. 109.

[51] Նույն տեղում։

Գերմանիայի այսպիսի վարքագծի մեջ ոչ մի արտակարգ ու արտառոց բան չկա։ Դա շատ սովորական է իմպերիալիստական պետությունների փոխհարաբերությունների մեջ և հանդիսանում է իմպերիալիստական հակասությունների դրսևորումներից մեկը։

Այսպիսով, կարող ենք ասել, որ 1940 թ. մինչև 1941 թ. ապրիլ-մայիս ամիսները թե՛ Անգլիան և թե՛ Գերմանիան մի շարք հանգամանքների բերումով, որոնց մասին խոսվեց վերևում, շահագրգռված էին status quo-ի պահպանմանը Սիրիայում։ Իհարկե, ձգտելով դրան, նրանք տարբեր նպատակներ էին հետապնդում, բայց փաստը մնում է փաստ, որ այդ ժամանակ լուրջ փոփոխություններ տեղի չունեցան Սիրիայի ստատուսում և նա մնաց Ֆրանսիայի կառավարման ներքո։

Դժգոհության ճետագա ալիքը երկրում և սիրիական ազգայնական ուժերի ղեկավարների պահանջները։ Այն ժամանակ, երբ իմպերիալիստական մեծ պետությունների միջև դիվանագիտական ուժեղ պայքար էր գնում Սիրիայի շուրջը, երկրի ներսում դրությունը քանի գնում, այնքան լարվում էր։ Ժողովրդական մասսաները խիստ դժգոհ էին ֆրանսիական իշխանությունների քաղաքականությունից։ Զինվորական դիկտատորական ռեժիմի հաստատումը, դեմոկրատական ազատությունների սահմանափակումը և ազգային հայրենասիրական ուժերի գործունեության արգելումը շիկացրել էին քաղաքական մթնոլորտը։ Ժողովրդի համբերության բաժակը լցվեց, երբ դրանց ավելացան նաև տնտեսական հոգսերը։ Չդիմանալով քաղցին ու զրկանքներին՝ սիրիական ժողովուրդը ոտքի ելավ։ Այն բանից հետո, երբ նոր գլխավոր կոմիսար գեներալ Դենցը ոչ միայն հրաժարվեց բավարարել ժողովրդի մի շարք տնտեսական պահանջները, այլև կարգադրեց ցրել ցույցերն ու արգելել ելույթները, սիրիական ազգային կազմակերպությունների կոչով 1941 թ. փետրվարի վերջերին Սիրիայում սկսվեց համընդհանուր գործադուլ։ Փակվեցին խանութներն ու շուկաները, շարունակվում էին ցույցերը։ Փաստորեն սա մի համաժողովրդական ելույթ էր, որը ճնշելու համար ֆրանսիական իշխանությունները օգտագործում են ոստիկանությունը։ Ժողովուրդը չի ընկրկում ոստիկանության առջև, տեղի են ունենում զինված ընդհարումներ ցուցարարների և ոստիկանության միջև, որի ժամանակ երկուստեք լինում են զոհեր[52]։

---

[52] *G. Kirk*, The Middle East in the war, p. 89.

Գեներալ Դենցը տեսնելով, որ միայն ոստիկանական ուժերով չի կարող ճնշել ժողովրդական ելույթները, նրանց դեմ է նետում կանոնավոր զորք։ Նրանք Դամասկոսի փողոցներում երևում են տանկերի և զրահամեքենաների ուղեկցությամբ[53]։ Սակայն դա էլ սպասված արդյունքը չի տալիս։ Ընդհանուր գործադուլն ու ցույցերը շարունակվում են, իրենց մեջ ներգրավելով նորանոր վայրեր։

Եվ ահա այստեղ պարզ դարձավ մի բան, որ այդ ելույթները միայն տնտեսական բնույթ չեն կրում և նրանց նպատակը միայն ժողովրդական մասսաների դրության բարելավումը չէ։ Սկսվելով տնտեսական հողի վրա, շատ շուտով այն ընդունեց քաղաքական գունավորում և վերածվեց հակաիմպերիալիստական պայքարի՝ ուղղված Ֆրանսիայի տիրապետության դեմ։ Ալ-Արմանազին նշում է, որ 1941 թ. փետրվար-մարտին Սիրիայում հուզումներ տեղի ունեցան պարենամթերքի պակասի, ծանր հարկերի և երկրի անկախության պահանջների պատճառով[54]։ Այդ օրերին ելույթները ղեկավարելու համար ստեղծվեցին տեղական կոմիտեներ, որի կազմի մեջ մտնում էին տարբեր քաղաքական ուժեր։ Սակայն այդտեղ առաջատար դերը պատկանում էր Ազգային բլոկի ներկայացուցիչներին[55]։ Հենց նրանք էլ շուտով իրենց ձեռքը վերցրին համընդհանուր գործադուլի ղեկավարումը։ 1941 թ. փետրվար-մարտ ամիսներին ծավալված համընդհանուր գործադուլի կազմակերպման ու ղեկավարման գործում մեծ էր նաև կոմունիստական կուսակցության դերը, որի անդամներն ակտիվորեն մասնակցում էին այդ գործադուլին։

Սիրիայի ազգայնականները Շուքրի Քուաթլիի, Սիրիայի ազգային-ազատագրական շարժման աչքի ընկնող գործիչներից մեկի և «Քութլա վաթանիյայի» առաջնորդի գլխավորությամբ 1941 թ. մարտի սկզբներին հրապարակեցին մի մանիֆեստ, որտեղ շարադրված էին նրանց հիմնական պահանջները։ Նրանք այդ փաստաթուղթը ներկայացրին Դենցին, պահանջելով այնտեղ նշված կետերի անհապաղ իրագործում։ Սիրիական ազգային-դեմոկրատական ուժերը գտնում էին, որ «Դիրեկտորների խորհուրդը» Բահիջ ալ-Խաթիբի գլխավորությամբ, չի արտահայտում սիրիա-

---

53 *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 301.

54 نجيب الارمنازى، محاضرات عن سوريا، ص ١٢٤

55 *G. Kirk*, The Middle East in the war, p. 89; *A. Hourani*, Syria and Lebanon, p. 235.

կան ժողովրդի ազգային իղձերը, ուստի պետք է ցրել այն և նրա փոխարեն ստեղծել ներկայացուցչական, ազգային կառավարություն[56]։

Նրանց մյուս կարևոր պահանջը, 1936 թ. ֆրանս-սիրիական պայմանագրի վավերացումն էր[57]։ Սիրիական ազգայնականներն այժմ էլ շարունակում էին պնդել, որ դա իրենց համար ընդունելի պայմանագիր է, որի օգնությամբ կարող են անկախություն ձեռք բերել։

Բացի այս երկու կարևոր կետերից, սիրիական ազգայնականները պահանջում էին ընդհանուր ներում, գրաքննության վերացում, սիրիական հիմնարկներում գոյություն ունեցող ֆրանսիական խորհրդատուների ինստիտուտի վերացում և այլն։

Այս պահանջները համապատասխանում էին Սիրիայի ազգային-ազատագրական շարժման տվյալ էտապին, մի էտապ, որի հիմնական խնդիրն էր Սիրիայի անկախության նվաճումը և ֆրանսիական իմպերիալիզմի ազդեցության վերացումը։

Այս պահանջների հիման վրա 1941 թ. մարտին բանակցություններ սկսվեցին ֆրանսիական իշխանությունների և սիրիական ազգայնական ուժերի պատվիրակության միջև։ Սակայն շատ շուտով հայտնի դարձավ, որ գեներալ Դենցը չի ցանկանում ընդունել այդ պատվիրակության հիմնական պահանջները։ Այդ պատճառով էլ բանակցություններն ընդհատվեցին։

Դա մի նոր խթան հանդիսացավ սիրիական ժողովրդի ֆրանսիական իմպերիալիզմի դեմ պայքարի ուժեղացման համար։ Ամբողջ մարտ ամսին երկրում չէին դադարում ցույցերը։ Այդ ցույցերի ժամանակ ելույթ ունեցողները նշում էին, որ բոլոր չարիքները, որ այժմ թափվել են Սիրիայի գլխին, գալիս են Ֆրանսիայից և պահանջում էին անկախություն տալ Սիրիային[58]։ Երկրում շարունակվում էր ընդհանուր գործադուլը։ «Նյու-Յորք Թայմս»-ը հաղորդումներ տպելով այդ ելույթների մասին, նշում էր, որ «ընդհանուր գործադուլը իր մեջ է առել տրանսպորտը և կապի մյուս միջոցները։ Ներկայումս գործադուլը տարածվել է Սիրիայի հյուսիսային քաղաքները՝ Հալեպ և Հոմս»[59]։ Իսկ «Նյուս քրոնիկլը»

---

[56] *A. Hourani*, Syria and Lebanon, p. 235.
[57] *G. Kirk*, The Middle East in the war, p. 90.
[58] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, д. 414, л. 55.
[59] „The New York Times", 8.III.1941.

հաղորդում էր, որ Դամասկոսում, Հալեպում և Հոմսում փակ են բոլոր խանութները և տրանսպորտի շարժումը կանգ է առել[60]։

Մանդատային իշխանությունները փորձեցին զենքի օգնությամբ ճնշել ժողովրդական ելույթները։ Նրանք ցուցարարների դեմ նետեցին սենեգալցի զինվորներին[61]։ Ցուցարարներին ձերբակալում և բանտ էին ուղարկում[62]։ Մի շարք վայրերում տեղի ունեցան զինված ընդհարումներ ցուցարարների և ֆրանսիական զորքերի ու ոստիկանության միջև, որի հետևանքով եղան բազմաթիվ զոհեր։ Սակայն ֆրանսիական իմպերիալիստների բոլոր ճիգերը ժողովրդական ելույթները ճնշելու և ազգայնականների դիմադրությունը կոտրելու ուղղությամբ, անցան ապարդյուն։ Նրանք շարունակում են պայքարը և պնդում իրենց պահանջների կատարման վրա։ Դեռ ավելին. նրանք հայտարարեցին, թե քանի որ Ֆրանսիան պատերազմում պարտություն է կրել և Ազգերի լիգան դադարել է գործելուց, ապա այլևս ոչ մի օրինական հիմք չկա ֆրանսիական տիրապետության պահպանման համար։ Ելնելով դրանից «Քութլա վաթանիյան» և մյուս ազգայնական ուժերը պահանջում էին Սիրիային անհապաղ տալ անկախություն[63]։ Այս վերին աստիճանի կարևոր հայտարարությունը, որը վկայում էր ազգային-դեմոկրատական ուժերի վճռականության մասին Սիրիայի քաղաքական անկախություն ձեռք բերելու գործում, մի նոր թափ հաղորդեց ազգային-ազատագրական շարժմանը։ Սիրիան գտնվում էր ազգային ապստամբության նախօրյակին։

Այսպիսի պայմաններում, հաշվի առնելով ստեղծված իրադրությունը և ուժերի ռեալ փոխհարաբերությունը, գեներալ Դենցը դիմեց որոշ զիջումների և ընդունեց սիրիացիների մի շարք պահանջները։ 1941 թ. ապրիլի 1-ին գլխավոր կոմիսար Դենցը ռադիոյով դիմելով Սիրիայի ժողովրդին, հայտարարեց, որ սիրիական ականավոր անձնավորությունների հետ բանակցելուց հետո ինքը որոշել է մի շարք բարեփոխումներ կատարել Սիրիայի կառուցվածքում։

Գլխավոր կոմիսարի հայտարարության մեջ ասված էր, որ անկախությունը, իրոք, շարունակում է մնալ սիրիական ժողովրդի

---

[60] „News Chronicle", 8.III.1941.

[61] *G. Kirk*, The Middle East in the war, p. 90.

[62] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, д. 414, л. 54.

[63] *G. Kirk*, The Middle East in the war, p. 90; *A. Hourani*, Syria and Lebanon, p. 235.

գլխավոր ազգային իղձը։ Ֆրանսիան հասկանում է դա և համաձայն է դրա հետ։ Սակայն այդ հարցը այժմ չի կարող լուծվել, նա կլուծվի միայն համաշխարհային իրադրության պարզեցումից և կայունացումից հետո[64]։

Իսկ ինչ վերաբերում է կառավարության հարցին, ապա ֆրանսիացիները այստեղ զիջեցին։ Նրանք համաձայնվեցին վերացնել «Դիրեկտորների խորհուրդը» և դրա փոխարեն ստեղծվեց մինիստրություն։ Բացի այդ ստեղծվեց կոնսուլտատիվ խորհուրդ, պետական խորհուրդ, որը պետք է մշակեր օրենսդրություն և այլն[65]։ Պրեմիեր-մինիստր (սիրիական կառավարությունը բաղկացած էր 5 մինիստրներից) նշանակվեց Խալեդ ալ-Ազըմը։ Նա Դամասկոսի հայտնի ընտանիքներից էր և աչքի ընկնող տնտեսագետ ու արդյունաբերող։ Պետական խորհրդի նախագահ նշանակվեց Աբդ ալ-Կադր ալ-Ազըմը։

1941 թ. ապրիլի 8-ին կառավարական հայտարարությամբ հանդես եկավ նոր պրեմիեր-մինիստրը։ Նա նշեց, որ իր կառավարությունը զբաղվելու է վարչական հարցերով, մշակելու է ազգային տնտեսության զարգացման ծրագիր, պատրաստելու է նոր կադրեր, ընդլայնելու է ապրանքափոխանակությունը Սիրիայի և հարևան երկրների միջև, զարգացնելու է լուսավորությունը, բարելավելու է աշխատավորական մասսաների վիճակը, ներում է շնորհելու բոլոր նրանց, ովքեր ձերբակալվել են ցույցերին մասնակցելու համար և այլն[66]։ Իսկ ինչ վերաբերում է անկախության հարցին, ապա դրա վերաբերյալ Խալեդ ալ-Ազըմը հայտարարեց. «Ժամանակակից պայմանները մեզ թույլ չեն տալիս իրականացնել մեր հույսերը։ Բայց մենք միշտ ի նկատի կունենանք մեր բարձրագույն իդեալը՝ անկախությունը»[67]։

Այսպիսով, սիրիական աշխատավորական մասսաների և հակաիմպերիալիստական ուժերի 1941 թ. հունվար-մարտ ամիսների համառ պայքարը չհասցրեց ֆրանսիական մանդատի վերացմանը։ Ֆրանսիան Սիրիային տալով «դիրեկտորների խորհրդի» փոխարեն «ազգային» կառավարություն, իր ձեռքում պահեց կարևոր հարցերի վերաբերյալ վերջնական վճիռ ընդունելու իրավունքը։

---

[64] *N. Ziadeh*, Syria and Lebanon, p. 63; *G. Kirk*, The Middle East in the war, p. 90.

[65] *A. Hourani*, Syria and Lebanon, p. 236.

[66] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, д. 414, л. 92.

[67] Նույն տեղում, թ. 52։

Դա պետք է բացատրել այդ շարժումների անբավարար կազմակերպվածությամբ և այդ շարժման ղեկավար ուժի՝ ազգային բուրժուազիայի և նրա կազմակերպությունների անհետևողականությամբ։

Դա նոր երևույթ չէ։ Ճնշված ժողովրդի բուրժուազիան միշտ էլ ցուցաբերում է տատանումներ և հակված է կոմպրոմիսների։ Այժմ էլ այն բանից հետո, երբ ազգային բուրժուազիան ֆրանսիական իշխանություններից կորզեց «դիրեկտորների խորհրդի» փոխարեն կառավարություն կազմելու իրավունք և քաղաքական բանտարկյալներին ներում շնորհելու համաձայնություն, դիմեց կոմպրոմիսի, թեև նա, ինչպես նշում է Խալեդ ալ-Ազմը իր հայտարարության վերջում, չէր հրաժարվում «բարձրագույն իդեալից»՝ անկախության գաղափարից։

Ընդգծելով այս հանգամանքը, սակայն չպետք է մոռանալ, որ ապրիլյան այս կոմպրոմիսը որոշակի նվաճում էր նաև Սիրիայի դեմոկրատական ուժերի համար։ Նախ, «դիրեկտորների խորհուրդը», որ ռազմական դիկտատուրայի ուղղակի արտահայտություն էր, փոխարինվեց կառավարությամբ, որը ինքն էր զբաղվելու ներքին պրոբլեմներով։ Երկրորդ, Ֆրանսիան Սիրիային անկախություն տալու հարցը հետաձգելով մինչև միջազգային իրադրության բարելավումը կամ ավելի կոնկրետ՝ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտվելը, հարկադրված էր ընդունել, որ Սիրիայի անկախությունը հանդիսանում է սիրիական ժողովրդի գերագույն իղձը և որ ինքը սկզբունքորեն համաձայն է Սիրիային անկախություն տալու։ Երկրորդ համաշխարհային պատերազմն սկսվելուց ի վեր սա ֆրանսիական առաջին պաշտոնական հայտարարությունն էր այդ խիստ կարևոր խնդրի վերաբերյալ։

Այսպիսին էր ընդհանուր վիճակը Սիրիայում Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի զորքերի ներխուժման նախօրյակին։

* * *

Իրադրության փոփոխումը Արաբական Արևելքում 1941 թ. կեսերին։ *1941 թ. ապրիլ-մայիս ամիսներից սկսած Սիրիան նոր իմաստ ու նշանակություն է ձեռք բերում ինչպես գերմանա-իտալական, այնպես էլ անգլիական պլաններում։ Դրան համապատասխան փոխվում է նրանց տակտիկան։ Եթե մինչ այդ նրանք Սիրիան նվաճելու կամ իրենց ազդեցության տակ գցելու համար խո-*

շոր մասշտաբի որևէ քայլի չէին դիմում և փաստորեն երկու կողմին էլ ձեռնտու էր status quo-ի պահպանումը, այսինքն նրա դաշնակիցների իշխանության ներքո, ապա այժմ կատարվում է կտրուկ շրջադարձ և սկսվում է բացահայտ պայքար Լևանտի երկրներին տիրապետելու համար։

Այսպիսի արմատական փոփոխությունն արդյունք էր այն նոր իրադրության, որ ստեղծվեց Եվրոպայում և Հյուսիսային Աֆրիկայում 1941 թ. սկզբներին։ Այս շրջանում գերմանա-իտալական բլոկը տարավ նոր հաղթանակներ։ Ֆաշիստական ուժերին հաջողվեց ճնշել հույների դիմադրությունը, օկուպացնել Հունաստանը և դուրս գալ Միջերկրական ծով՝ փակելով Դարդանելի մուտքը և սպառնալով թուրքական Թրակիային։

Իսկ Հյուսիսային Աֆրիկայում նրանք անգլիացիներին դուրս մղեցին Լիբիայից և ներխուժեցին Եգիպտոս։

Պատերազմական այս գործողությունների հետևանքով գերմանական այն զորքերը, որ գործում էին Հունաստանում և Լիբիայում այժմ կարող էին նետվել մերձավորարևելյան ճակատը։ Գերմանիան Արաբական արևելքի մատույցներում գրավելով շատ կարևոր դիրքեր, այժմ արդեն կարող էր դիմել վճռական մարտական գործողությունների Լևանտում։

Իսկ ինչ վերաբերում է Անգլիային, ապա նա պարտություն կրելով Հունաստանում և Լիբիայում, որոշեց ամուր ճակատ ստեղծել Մերձավոր Արևելքում։ Այդ նպատակով նա Լիբիան և Հունաստանը կորցնելուց հետո այնտեղ գործող զգալի թվով անգլիական զորքեր կենտրոնացրեց Եգիպտոսում և Պաղեստինում։

Սակայն Անգլիան լավ էր հասկանում, որ քանի դեռ Սիրիայում և Լիբանանում իրադրությունը պարզ չէ, գերմանական վտանգը մնում է կախված իր արաբական տիրապետությունների վրա։ Անգլիան չէր կասկածում, որ արաբական երկրներից հետո հերթը հասնելու էր Հնդկաստանին։ Իրենք գերմանացիներն էլ չէին թաքցնում իրենց այդ մտադրությունը։ Գերմանական հայտնի դիվանագետ ֆոն Հենտիգը 1941 թ. մայիսի սկզբներին հայտարարեց, որ Սիրիան կամուրջ է հանդիսանում դեպի Հնդկաստան[68]։ Գերմանական կառավարության պաշտոնական տեսակետն արտահայտող գերմանական բարձրաստիճան դիվանագետի այս հայտարարությունը խիստ անհանգստացրեց Անգլիային։

---

[68] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 232, л. 305.

Եվ մենք տեսնում ենք, թե ինչպիսի կայծակնային արագությամբ են զարգանում դեպքերը Լևանտում 1941 թ. մայիս-հունիս ամիսներին։ Դրան նպաստեց մի անսպասելի հանգամանք ևս։ Դա անգլո-իրաքյան պատերազմն էր, որ բռնկվեց 1941 թ. մայիսին։ Իրաքի ազատագրական ուժերը ձգտում էին վերջնականապես ազատագրվել անգլիական լծից և ստեղծել լրիվ անկախ իրաքյան պետություն[69]։

Այդ պատերազմը շատ վատացրեց Անգլիայի առանց այն էլ ծանր դրությունը։ Դրանից փորձեց օգտվել ֆաշիստական Գերմանիան։ Նա պատրաստակամություն հայտնեց ռազմական և ֆինանսական օժանդակություն ցույց տալ իրաքցիներին[70]։

Դիմելով այդ քայլին ֆաշիստական Գերմանիան, հասկանալի է, ղեկավարվում էր ոչ թե իրաքցի հայրենասերներին աջակցելու և նրանց ազատագրմանն օժանդակելու ազնիվ մղումով, այլ իր նեղ շահերով՝ Անգլիային պարտության մատնելու և Արաբական Արևելքում նրա տեղը գրավելու ցանկությամբ։

Գերմանիան Դենցից պահանջեց թույլ տալ օգտագործել սիրիական օդանավակայանները[71]։ Դենցը ստիպված կապվեց Վիշիի կառավարության հետ նրանից անհրաժեշտ հրահանգներ ստանալու համար։ Վիշիից մայիսի 4-ին, երբ արդեն սկսվել էր անգլո-իրաքյան պատերազմը, նրան պատասխանեցին, որ եթե գերմանացիները փորձեն Իրաքին օգնել, ապա Լևանտի իշխանությունները չեն կարող դրան արգելք հանդիսանալ. «Անհնար է գերմանական ռազմական ուժերին վերաբերվել որպես թշնամական ուժերի։ Բայց դուք, բնականաբար, պետք է զենքով դիմադրեք բրիտանական ուժերի ներխուժման ամեն մի փորձի դեմ»[72]։ Երկու օր անց, մայիսի 6-ին Վիշիի կառավարությունն ավելի որոշակիորեն հայտնում է Դենցին, որ նա Իրաք թռչող գերմանական ինքնաթիռներին պետք է ցույց տա ամեն տեսակի օժանդակություն։

Այսպիսով, Վիշիի ֆրանսիական կառավարությունը խախտելով Գերմանիայի հետ հաշտության պայմանագրի այն կետը, որ ինքը թշնամական գործողություններ չպետք է դիմի իր նախկին

---

[69] *Н. О. Оганесян,* Англо-иракская война 1941 г. и ее оценка в буржуазной историографии—«Вестник, общественных наук» АН Арм. ССР, 1966, № 10.

[70] عثمان كمال حمداد، حركة رشيد عالى الكيلانى، صيدا، ص ١١٣—١١٤

[71] „The New York Times", 8.III.1941.

[72] Նույն տեղում։

դաշնակցի՝ Անգլիայի դեմ, բացահայտորեն անցավ ֆաշիստական Գերմանիայի կողմը և ֆինանսական դիրք գրավեց Մեծ Բրիտանիայի նկատմամբ։ Այդ գծի տրամաբանական վախճանը հանդիսացավ ֆաշիստական Գերմանիայի հետ համագործակցելու քաղաքականության որդեգրումը։ Այդ մասին Վիշիի կառավարության ղեկավարներից մեկը՝ Դառնալը, մայիսի 14-ին հետևյալն էր հաղորդում Դենցին. «Կառավարությունը մարշալի (Պետենի—խմբ.) նախագահությամբ ընդունեց Գերմանիայի հետ համագործակցելու սկզբունքը։ Այս համագործակցությունը չի պարտադրում պատերազմ հայտարարել Բրիտանիային, բայց ընդունվել են կարգադրություններ ուժով դիմադրել բրիտանական ամեն մի հարձակման»[73]։

Հաջորդ օրը գեներալ Դենցին նույնանման հեռագիր ուղարկեց մարշալ Պետենը, նրան կարգադրելով համագործակցել «նոր կարգի» հետ։

Որպես այդ համագործակցության գործնական արդյունք, թույլատրվեց Իրաք թռչող գերմանական ինքնաթիռներին վայրէջք կատարել և վառելանյութ վերցնել Մեզզեի (Դամասկոսի մոտ), Պալմիրի (Թադմոր) և Հալեպի օդանավակայաններում[74]։ Օգտվելով իրենց ընձեռված հնարավորությունից, գերմանացիները մայիս ամսին թռիչքներ էին կատարում սիրիական օդանավակայաններից դեպի Իրաք[75]։ Այս շրջանում թռել է 120 գերմանական ինքնաթիռ[76]։

Սակայն Անգլիային անհանգստացնողը միայն գերմանական ինքնաթիռների թռիչքները չէին։ Բանը նրանում էր, որ Լևանտում դտնվում էր մեծ քանակությամբ զենք և ռազմական հանդերձանք, որը լիովին կբավականացներ զինելու քառորդ միլիոն զինվորի[77]։ Անգլիան վախենում էր և, ըստ երևույթին, ոչ առանց հիմքի, որ այդ բոլորը կարող է անցնել Գերմանիայի տնօրինության տակ։ Ասելն էլ ավելորդ է, թե դա ինչպիսի ուժ էր իրենից ներկայացնում և ինչպիսի սպառնալիք Անգլիայի դիրքերին Մերձավոր ու Միջին Արևելքում։

Ուստի Անգլիան որոշեց դիմել վճռական գործողություններ։ 1941 թ. մայիսի 15-ին հանդես գալով համայնքների պալատում

---

[73] Նույն տեղում, էջ 94։

[74] W. Castle, Syrian pageant, p. 162.

[75] ۱۱۸ ص، عثمان كمال حداد، حركة رشيد الكيلانى

[76] N. Ziadeh, Syria and Lebanon, p. 63.

[77] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 232, л. 36.

Անգլիայի արտաքին գործերի մինիստր Ա. Իդենը պաշտոնապես տեղեկացրեց Անգլիային և համաշխարհային հասարակայնությանը, որ ֆրանսիական իշխանությունները թույլատրել են գերմանական ինքնաթիռներին Իրաք թռչելիս վայրէջք կատարել Սիրիայի օդանավակայաններում[78]: Նա միաժամանակ պառլամենտին հայտնեց, որ անգլիական կառավարությունը գործողությունների լրիվ ազատություն է տվել անգլիական ռազմական իշխանություններին Սիրիայի օդանավակայաններից օգտվող գերմանական ավիացիայի դեմ: Պաշտպանելով անգլիական կառավարության դիրքը՝ «Թայմս» թերթը գրում էր, որ Դաունալը և նրա կուլեգանները չեն կարող առարկել, եթե մենք հիմա սկսենք ռմբակոծել Սիրիայի օդանավակայանները և դիմենք այլ քայլերի:

Անգլիան գտնում էր, որ Ֆրանսիան խախտելով հաշտության պայմանները և գործողությունների ազատություն տալով գերմանական ռազմական ուժերին Լևանտում, դրանով սպառնալիքի տակ էր դնում անգլիական դիրքերի ապահովությունը Մերձավոր ու Միջին Արևելքում: Ելնելով դրանից, նա գտնում էր, որ հասել է 1940 թ. հուլիսի 1-ի իր դեկլարացիայի պայմանները գործողության մեջ դնելու պահը:

Ինչպես արդեն նշել ենք, այդ դեկլարացիայով Անգլիան հայտարարել էր, որ ինքը թույլ չի տա որևէ թշնամական պետության գրավել Սիրիան ու Լիբանանը կամ օգտագործել նրանց որպես բազա՝ հարձակվելու Մերձավոր Արևելքի վրա, որը նա կոչված է պաշտպանելու: Անգլիան այժմ գտնում էր, որ Մերձավոր Արևելքի համար վիշիականների և գերմանացիների գործողությունների հետևանքով ստեղծվել է այդպիսի վտանգ:

Այդ նույն ժամանակ իր խաղաքարտերը բացեց նաև Թուրքիան: 1941 թ. կեսերից նա բացահայտորեն տերիտորիալ պահանջներ ներկայացրեց Սիրիային: Զբավարարվելով Ալեքսանդրետի սանջաքի զավթումով, այժմ նա ձգտում է Սիրիայից անջատել և իր տերիտորիաներին միացնել Հալեպի ամբողջ շրջանը: Անկարայում Գերմանիայի դեսպան ֆոն Պապենը 1941 թ. հունիսի 3-ին հաղորդում է Գերմանիայի արտաքին գործերի մինիստր ֆոն Ռիբբենտրոպին, թե Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Սարաջօղլուն զրույցի ժամանակ հայտնել է, որ «իրենք վախենում են Սիրիայի վրա անգլիական հարձակումից, որի պատճառով

---

[78] Նույն տեղում, ց. 1, գ. 232, թ. 36:

Թուրքիան հարկադրված կլինի զրավել Բաղդադի երկաթուղագիծը և Հալեպի շրջանը»[79]։ Թուրքական կառավարությունն իր այդ մտադրության մասին տեղյակ է պահում նաև վիշիական Ֆրանսիայի ղեկավարությանը։ 1941 թ. հուլիսի սկզբներին Անկարա է ժամանում վիշիական Ֆրանսիայի պետական քարտուղար բարոն Ժ. Բենուա-Մեշինը, որը մի շարք հանդիպումներ է ունենում թուրքական տարբեր ղեկավարների հետ։ Հիմնվելով Ժ. Բենուա-Մեշինի վրա, ֆոն Պապենը 1941 թ. հուլիսի 4-ին հաղորդում է Ռիբբենտրոպին, որ ղրույցներից մեկի ժամանակ Սարաջօղլուն մտահոգություն է հայտնել, որ Ֆրանսիան չի կարողանա պահպանել իր դիրքերը Սիրիայում ընդդեմ անգլիական վտանգի։ Ուստի, շարունակել է Սարաջօղլուն, լավ կլինի, եթե Ֆրանսիան Սիրիայի անվրտանգության ապահովումը վստահի Թուրքիային։ «Այդ դեպքում,—նշում է Սարաջօղլուն,—Թուրքիան անմիջապես կօկուպացնի Սիրիան, թույլ կտա, որ ֆրանսիական բանակը պատվով հեռանա և պատերազմը վերջանալուց հետո Ֆրանսիային կվերադարձնի Սիրիան, բացի նրա հյուսիսային մասից»[80]։ Հասկանալի է, անգլիական վտանգը լոկ պատրվակ էր Թուրքիայի համար իրագործելու իր վաղուց փայփայած իմպերիալիստական զավթողական ծրագիրը Սիրիայի նկատմամբ։ Օգտվելով Ֆրանսիայի ծանր վիճակից Թուրքիան ձգտում էր ճնշում գործադրել նրա վրա և ընդարձակել իր տերիտորիաները ի հաշիվ Սիրիայի։ Արաբական երկրների նկատմամբ Թուրքիայի զավթողական քաղաքականության մասին ավելի լրիվ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ ենք համարում նշել, որ նա ցանկանում էր նաև Իրաքից անջատել և իրեն կցել ամբողջ Մոսուլի շրջանը[81]։

Վերադառնալով կրկին Սիրիայի հարցին, պետք է նշել, որ Թուրքիայի ախորժակն այնքան էր բացվել, որ ձգտում էր Գերմանիայի աջակցությունը ձեռք բերել։ Ֆոն Պապենը 1941 թ. հուլիսի 9-ին հայտնում է Ռիբբենտրոպին, որ Սարաջօղլուն իրեն կրկին հիշեցրել է, որ Թուրքիան մեծ շահագրգռվածություն ունի Հյուսիսային Սիրիայի նկատմամբ։ Սարաջօղլուն «հարցնում է, թե արդյո՞ք Գերմանիան չի համաձայնվի, որ Թուրքիան օկուպացնի

---

[79] „Documents on German Foreign Policy. 1918—1945", Series D (1937—1945), v. XII, London, 1962, p. 953.

[80] „Documents on German Foreign Policy. 1918—1945", Series D (1937—1945), v. XIII, London, 1964, p. 54.

[81] Նույն տեղում, էջ 369։

Հյուսիսային Սիրիան»[82]: Գերմանական դեսպանը շտապ պատասխան է խնդրում իր կառավարությունից այս չափազանց կարևոր հարցի մասին: Երեք օր անց, հուլիսի 12-ին Ռիբբենտրոպը հաղորդում է ֆոն Պապենին, որ Գերմանիան այս հարցում չի կարող անտեսել Ֆրանսիայի (վիշիական) դիրքը, որը բոլոր հարցերում լոյալ է եղել Գերմանիայի նկատմամբ: Հետևաբար, շարունակում է նա, մենք նույնպես պետք է լոյալ լինենք Ֆրանսիայի նկատմամբ և չգնանք ընդդեմ նրա շահերի Սիրիայում: «Ուստի,— հրահանգում է Ռիբբենտրոպը Պապենին,— մեզ համար անհնար է նպաստավոր դիրք գրավել Հյուսիսային Սիրիան օկուպացնելու պահանջի նկատմամբ»[83]: Գերմանիայի բացասական դիրքը Թուրքիայի զավթողական ծրագրերի հանդեպ պետք է բացատրել ոչ միայն և ոչ այնքան այն նկատառումներով, որ նա ուզում էր լոյալ լինել վիշիական Ֆրանսիային, այլ գլխավորապես նրանով, որ նա չէր ցանկանում Թուրքիայի հետագա ուժեղացումը: Թուրքիայի տերիտորիալ ընդարձակումը ի հաշիվ արաբական երկրների չէր համապատասխանում ֆաշիստական Գերմանիայի շահերին: Վերջինս ուներ իր սեփական հեռուն գնացող ծրագրերը Արաբական Արևելքի նկատմամբ և նա թույլ չէր տա, որ Թուրքիան որևէ կերպ խանգարեր այդ ծրագրերի իրագործմանը:

Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի զորքերի մուտքը Սիրիա: 1941 թ. հունիսի 8-ին անգլիական և Ազատ Ֆրանսիայի զորքերը անգլիական գեներալ սըր Հենրի Վիլսոնի և ֆրանսիական գեներալ (դը Գոլլի կողմնակից) Ժորժ Կատրուի գլխավորությամբ Լևանտում անցան հարձակման[84]: Նրանք Սիրիա և Լիբանան մտան միաժամանակ երեք ուղղություններով՝ Պաղեստինից, Անդրհորդանանից և Իրաքից[85]: Մի զորասյունը շարժվեց Բեյրութ, մյուսը՝ Հյուսիս, Հերմոնի վրայով Բեքաա, իսկ երրորդը՝ Դամասկոս[86]: Վիշիականները ցույց տվին ուժեղ դիմադրություն, որը նույնիսկ անսպասելի էր անգլիացիների և դըգոլլականների համար: Գեներալ Դենցը Վիշիի կառավարությանը 1941 թ. հունիսի 12-ին հղած ինֆորմացիայում տեղեկացնում էր կառավարությանը, որ ֆրանսիական զորքերը կատաղի դիմադրություն են ցույց տալիս անգ-

---

[82] Նույն տեղում, էջ 106:

[83] Նույն տեղում, էջ 123:

[84] ادیب فرحات، لبنان و سوریا، ص ٣٣٦

[85] *W. Castle*, Syrian pageant, p. 162.

[86] *A. Hourani*, Syria and Lebanon, p. 238.

յիական և դը Գոլլի զորքերի առաջխաղացմանը հարավային և արևելյան ռազմաճակատներում, որի հետևանքով մի շարք տեղերում այդ առաջխաղացումը կասեցվել կամ կանգնեցվել է[87]:

Երբ Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի զորքերն անցան հարձակման, Վիշիի կառավարությունը բողոքի նոտա ուղարկեց Անգլիային, որտեղ նրա գործողությունները համարում էր «ամոթալի և ոչնչով չհրահրված ագրեսիայի ակտ»[88]: Կարծես թե կանխատեսելով այդպիսի մեղադրանքի հնարավորությունը՝ Մեծ Բրիտանիայի կառավարությունը 1941 թ. հունիսի 8-ին, այսինքն Լևանտում պատերազմական գործողություններն սկսվելու հենց առաջին օրը հրապարակած կոմյունիկեում նշում էր, որ չնայած իր պարզորոշ նախազգուշացումներին, Վիշիի կառավարությունը, շարունակելով առանցքի երկրների հետ համագործակցելու իր քաղաքականությունը, Սիրիայում և Լիբանանում գտնվող ավիաբազանները դրեց Գերմանիայի և Իտալիայի տնօրինության տակ[89]: Այնուհետև մատնացույց անելով, որ Վիշիի այդ քաղաքականությունը անվիճելիորեն կհասցներ գերմանական հսկողության սահմանմանը Սիրիայում և Լիբանանում, անգլիական կառավարությունը հայտարարում էր, որ այդ գործողությունները դուրս էին գալիս Հաշտության վերաբերյալ ֆրանսիական պայմանագրի պայմանների շրջանակներից և լրիվ հակասում էին մարշալ Պետենի այն հայտարարությանը, որ «պատիվը արգելում է Ֆրանսիային որևէ բան ձեռնարկել ուղղված իր նախկին դաշնակիցների դեմ»[90]:

Այսպիսով, փաստորեն Անգլիան կանխավ մերժում էր իրեն ներկայացվելիք ամեն մի մեղադրանք, գտնելով, որ ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Վիշիի կառավարության և գերմանացիների վրա: Այս տեսակետից հետաքրքիր են անգլիական ազդեցիկ «Թայմս» թերթի մեկնաբանությունները: Անդրադառնալով Վիշիի կառավարության բողոքի վերոհիշյալ նոտային, նա գրում էր, որ Անգլիայի պատասխանը նրան միանգամայն պարզ է. «Ո՛չ դը Գոլլի զորքերը, ո՛չանգլիական զորքերը չէին անցնի սիրիական սահմանը, եթե այդ երկիրը զավթելու վերաբերյալ գերմանական պլանը լրիվ պարզ չլիներ: Դը Գոլլի համար հնշտ

---

87 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 234, л. 55.

88 Նույն տեղում, թ. 35:

89 Նույն տեղում, թ. 8:

90 Նույն տեղում:

չէր որոշում ընդունել գնալ ֆրանսիացիների դեմ և, հնարավոր է, կռվել նրանց հետ։ Անգլիացիներին նույնպես հեշտ չէր գնալ իրենց նախկին դաշնակցի դեմ։ Բայց նրանք ուրիշ ընտրություն չունեին»[91]։

Հետաքրքիր է նշել, որ երբ արդեն հայտնի էր, որ անգլիական և դը Գոլլի զորքերը պատրաստ են հարձակման անցնելու, Գերմանիան հանկարծ հայտարարեց, որ Ռաշիդ Ալի ալ-Գայլանիի[92] անկումից հետո Սիրիան իբր նրան այլևս չի հետաքրքրում[93]։ Դա մի խորամանկ քայլ էր գերմանական ֆաշիստների կողմից։ Դրանով նրանք ուզում էին ասել, որ իրենք, իբր հեռանում են Սիրիայից, հետևաբար ոչ մի հիմք չկա Սիրիայի վրա հարձակվելու։ Եվ եթե դրանից հետո Անգլիան և դը Գոլլը հարձակվեն Լևանտի երկրների վրա, ապա նրանք, ըստ գերմանացիների, դիմած կլինեն չհրահրված ագրեսիայի։ Հասկանալի է, դաշնակիցները ուշադրություն չդարձրին գերմանացիների այս խորամանկ քայլին։ Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի զորքերին հաջողվեց կոտրել Դենցի զորքերի դիմադրությունը և մեկը մյուսի հետևից գրավել Սիրիայի ու Լիբանանի քաղաքները։ Հունիսի 21-ին նրանք գնդապետ Կոլլեի հրամանատարությամբ մտան Դամասկոս[94]։ Մի քանի օր անց, հուլիսի 3-ին ընկան Պալմիրը, Դեյր էզ-Զորը և Թել Քոչեկը[95]։ Արդեն պարզ դարձավ, որ վիշիականները կամպանիան տանուլ են տվել։ Հուլիսի 13-ին փաստորեն լրիվ ավարտվեց Սիրիայի և Լիբանանի գրավումը անգլիական և Ազատ Ֆրանսիայի զորքերի կողմից[96]։ Գեներալ Դենցը հարկադրված հաշտություն խնդրեց, որի շուրջ բանակցություններ սկսվեցին 1941 թ. հուլիսի 12-ին Ակրում։ Երկու օր անց, հուլիսի 14-ին վիշիականների խնդրած հաշտությունը կնքվեց։ Դաշնակիցների կողմից զինադադարի համաձայնագիրը ստորագրեց անգլիական գեներալ Հ. Վիլսոնը, իսկ վիշիականների կողմից Սիրիայում ֆրանսիական զորքերի գլխավոր հրամանատարի տեղակալ գեներալ դը Վերդիլլակը։ Ըստ այդ համաձայնագրի, թշնամական գործողությունները 1941 թ. հուլիսի

---

[91] „The Times", 10.VI.1941.

[92] Իրաքի պրեմիեր-մինիստրը, որը ղեկավարում էր 1941 թ. մայիսին Անգլիայի դեմ սկսված պատերազմական գործողությունները։

[93] „The Times", 10.VI.1941.

[94] *W. Castle*, Syrian pageant, p. 163.

[95] *A. Hourani*, Syria and Lebanon, p. 240.

[96] *G. Haddad*, Fifti years of modern Syria and Lebanon, p. 87.

11-ից համարվեցին դադարեցված։ Վիշիական Ֆրանսիան համաձայնվեց, որ դաշնակից զորքերը օկուպացնեն Սիրիան և Լիբանանը։ Վիշիականները ստիպված էին հեռանալ Սիրիայից և Լիբանանից։ Վիշիական բանակում ծառայող սպաների ու զինվորների մի մասը միացավ Ազատ Ֆրանսիայի բանակին, իսկ մյուս մասը մնաց հավատարիմ Վիշիի ռեժիմին և գեներալ Դենցի հետ միասին հեռացավ Սիրիայից։

Վիշիական զորքերի պարտությունից հետո, Սիրիան և Լիբանանը Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի տնօրինության տակ դրեցին իրենց նավահանգիստները, երկաթուղային և խճուղային ճանապարհները և զորանոցները։ Երիտասարդներից շատերը մտան դաշնակիցների բանակը[97]։

Գեներալ Կատրուի դեկլարացիան Սիրիայի և Լիբանանի անկախության վերաբերյալ։ *1941 թ. հունիսի 8-ին*, պատերազմական գործողությունների հենց առաջին օրը, հրապարակվեց Լևանտում Ազատ Ֆրանսիայի զորքերի հրամանատար գեներալ Կատրուի դեկլարացիան ուղղված Սիրիայի և Լիբանանի բնակչությանը։ Դիմելով նրանց Կատրուն ասում է. «Սիրիայի և Լիբանանի ժողովուրդ... Ես գալիս եմ վերջ դնելու մանդատային ռեժիմին և ձեզ հռչակելու ազատ ու անկախ։ Դուք, այսպիսով, այս պահից սկսած սուվերեն և անկախ ժողովուրդներ եք»[98]։ Այնուհետև նշելով, որ սիրիացիների և լիբանանցիների գործն է, թե նրանք մի պետություն կկազմեն, թե առանձին պետություններ, Կատրուն հայտարարում է, որ «բոլոր դեպքերում ձեր անկախ և սուվերեն ստատուսը կերաշխավորվի մի պայմանագրով, որը կորոշի մեր փոխադարձ հարաբերությունները»[99]։ Գեներալ Կատրուն նշում է, որ բանակցություններն այդ պայմանագիրը կնքելու համար իր և Սիրիայի ու Լիբանանի ներկայացուցիչների միջև կսկսվեն հենց որ դրա հնարավորությունը ստեղծվի։ Վերջում Կատրուն կրկին հիշեցնելով, որ Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի զորքերը մտել են Սիրիա և Լիբանան նրանց ազատությունը Գերմանիայից պաշտպանելու համար, ավելացնում է. «Մենք չենք կարող թույլ տալ, որ

---

[97] ادیب فرحات، لبنان و سوریا، ص ٣٣٦

[98] „Documents on international affairs. 1939—1946", v. II, London, 1954, p. 172.

[99] Նույն տեղում։

Լևանտում Ֆրանսիայի դարավոր պատմություն ունեցող շահերը հանձնվեն Բրնաման»[100]։

Այդ նույն օրը՝ 1941 թ. հունիսի 8-ին, հրապարակվեց Կահիրեում անգլիական դեսպան սըր Լեմպսոնի հայտարարությունը, որտեղ ասված էր. «Նորին Մեծության Միացյալ Թագավորության կառավարության կողմից ես լիազորված եմ հայտարարելու, որ նա պաշտպանում և իրեն կապում է Սիրիայի և Լիբանանի անկախության վերաբերյալ գեներալ դը Գոլլի անունից գեներալ Կատրուի տված հավաստիացումների հետ»[101]։ Այնուհետև Լեմպսոնը հայտնում էր, որ եթե Սիրիան ու Լիբանանը աջակցեն դաշնակիցներին, ապա նրանք կօգտվեն տնտեսական ու առևտրական այն բոլոր բարիքներից, որ վայելում են դաշնակիցներին միացած երկրները։ Անգլիան խոստանում էր վերացնել տնտեսական բլոկադան և Լևանտի երկրները մտցնել ստերլինգյան գոտու մեջ։

Կատրուի դեկլարացիան լրիվ պաշտպանելու մասին խոսվում էր նաև անգլիական կառավարության 1941 թ. հունիսի 8-ի հայտարարության մեջ[102]։

Ինչով բացատրել Կատրուի դեկլարացիայի երևան գալը և ինչո՞ւ էր Անգլիան հանդես գալիս որպես այդ դեկլարացիայի երաշխավոր։

Այս հարցերը խիստ կարևոր են Լևանտում ֆրանսիական քաղաքականության և անգլո-ֆրանսիական փոխհարաբերությունների շատ կողմերի վրա լույս սփռելու տեսակետից։

Ազատ Ֆրանսիան ստիպված էր հրապարակել Սիրիային և Լիբանանին անկախություն տալու վերաբերյալ վերոհիշյալ դեկլարացիան։ Նա, ինչպես և Անգլիան, լավ էր հասկանում, որ սկսել պատերազմական գործողություններ և ոչինչ չխոստանալ Լևանտի ժողովուրդներին, անմտություն է։ Այդ դեպքում նրանք չէին կարող նվաճել նրանց համակրանքն ու աջակցությունը, որը խիստ անհրաժեշտ էր Դենցի զորքերին պարտության մատնելու համար։ Սակայն Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների վստահությունն ու օժանդակությունը ձեռք բերելու համար պետք էին ոչ թե ինչ-որ երկրորդական խոստումներ, այլ երաշխիքներ նրանց համար ամենակարևոր ու կենսական հարցում՝ անկախության հարցում։

---

100 Նույն տեղում։

101 „Statements of polisy by His Majesty's Government in the United Kingdom in respect of Syria and Lebanon. 8th June-9th September 1941", London, 1945, p. 2.

102 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 238, л. 8.

Հայտնի է, որ ֆրանսիական իշխանությունները, այդ թվում Վիշիի կառավարությունը, ձևականորեն դեմ չէին մանդատի ռեժիմի վերացմանը և Սիրիային ու Լիբանանին անկախություն շնորհելուն։ Բայց դա ձևականորեն, իսկ գործնականում նրանք զանազան պատրվակներով ձգձգում էին Լևանտի ժողովուրդների այդ նվիրական իղձերի իրագործումը։ Այդ պատճառով էլ դը Գոլլը, նրան ուզում էր հաջողություն ունենալ, պետք է ինչ-որ բան ավելի աներ։ Ահա թե ինչու Կատրուի դեկլարացիան սկսվում է «ես գալիս եմ վերջ դնելու մանդատային ռեժիմին և հայտարարելու ձեզ ազատ ու անկախ» հստակ ու միանգամայն որոշակի բառերով։ Այլ կերպ ասած, Վիշիի տարտամ ու անորոշ խոստումներին Ազատ Ֆրանսիան հակադրում էր միանգամայն հստակ ու որոշակի հայտարարություն։ Ազատ Ֆրանսիան դա արեց հարկադրյալ. դա Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների երկարատև ու համառ ազգային-ազատագրական պայքարի արդյունքն էր, որի հետ այժմ ֆրանսիական իմպերիալիստները ստիպված էին հաշվի նստել։

Իսկ ինչ վերաբերում է Անգլիային և նրա որպես Սիրիայի ու Լիբանանի անկախության երաշխավորի դերում հանդես գալուն, ապա դա արտացոլումն էր ուժերի այն իրական փոխհարաբերության, որ այդ շրջանում ստեղծվել էր նրա ու Ֆրանսիայի միջև։ Իսկ այդ փոխհարաբերությունը ոչ թե հօգուտ Ազատ Ֆրանսիայի էր, այլ՝ Անգլիայի, որի ձեռքում էր կենտրոնացված ռազմական ուժը։ Եվ Անգլիան ձգտում էր, օգտվելով այդ նպաստավոր առիթից, ամրապնդել իր դիրքերը Լևանտի երկրներում ի հաշիվ Ֆրանսիայի։

Նրա պնդումը, որ Կատրուի դեկլարացիայում պարզորոշ ու վճռականորեն ասվի մանդատային ռեժիմի վերացման մասին, միայն պատերազմական գործողությունների ժամանակ նպաստավոր իրադրություն ստեղծելով չի կարելի բացատրել։ Անգլիան ուզում էր հանդես գալ արաբական այդ երկու երկրների «ազատարարի» դերում։ Նա լավ էր հասկանում, որ դա մեծ չափով կբարձրացնի իր հեղինակությունը ոչ միայն Սիրիայի ու Լիբանանի, այլ ամբողջ Արաբական արևելքի ժողովուրդների աչքում։

Այդ բանը հասկանում էր նաև Ազատ Ֆրանսիան։ Ուստի և նա ամեն կերպ դիմադրում էր անգլիական այդ հայտարարության հանդես գալու դեմ։

Այդ տեսակետից շատ հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում դը Գոլլը իր «Ռազմական հուշեր»-ում, որոնք պարզ

վկայում են անգլո-ֆրանսիական հակամարտության մասին։ Դը Գոլլը նշում է, որ երբ պատրաստվում էր Կատրուի դեկլարացիան, Լեմպսոնը պահանջեց, որ այն հրապարակվի Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի անունից[103]։ Դը Գոլլը մերժում է անգլիացիների այդ առաջարկը։ Դրանից հետո անգլիական դեսպան Լեմպսոնը պահանջում է Կատրուի դեկլարացիայի տեքստում նշել, որ ֆրանսիական խոստումները երաշխավորվում են անգլիական կառավարության կողմից։ Դը Գոլլը մերժում է նաև այս, ինչպես նաև Չերչիլի համանման առաջարկությունը[104]։ Սակայն անգլիացիները չեն ընկճվում և դիմում են այլ քայլի։ 1941 թ. հունիսի 8-ին, երբ հրապարակվեց Կատրուի դեկլարացիան, այդ նույն օրը անգլիական կառավարությունը հրապարակեց վերոհիշյալ դեկլարացիան։ Դա ուղղակի անակնկալ էր Ազատ Ֆրանսիայի համար։

Ստանձնելով Սիրիայի և Լիբանանի անկախության ու սուվերենության երաշխավորի դերը, որի հետ ստիպված համաձայնվեց Ազատ Ֆրանսիան, Անգլիան դրանով պաշտոնական իրավունք էր ձեռք բերում խառնվել այդ երկրների ներքին գործերին և նրանց ու Ազատ Ֆրանսիայի փոխհարաբերություններին։ Դա լեգալացված մի սողանցք էր, որի օգնությամբ Անգլիան ամեն կերպ ընդլայնում էր իր ազդեցությունը այդ երկրներում։

Դա չէր խանգարում Անգլիային ժամանակ առ ժամանակ հայտարարելու, որ ինքը Լևանտի երկրներում հատուկ նպատակներ չի հետապնդում և չի ուզում Ֆրանսիային այդ շրջանից դուրս մղել և նրա տեղը գրավել։ Այդ հարցում պարզություն մտցնելու և Ազատ Ֆրանսիայի անհանգստությունը վերացնելու համար Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի միջև 1941 թ. օգոստոսի 7-ին կնքվեց մի համաձայնագիր, որը հայտնի է Լիթթլտոն—դը Գոլլի համաձայնագիր անունով։ Դա ըստ էության նամակների փոխանակություն էր Մերձավոր Արևելքում բրիտանական մինիստր-ռեզիդենտ Օլիվեր Լիթթլտոնի և Ազատ Ֆրանսիայի ղեկավար Շարլ դը Գոլլի միջև։ Դը Գոլլին ուղղված իր նամակում Լիթթլտոնը նրան հավաստիացնում էր, որ «Մեծ Բրիտանիան Սիրիայում կամ Լիբանանում պատերազմը շահելուց բացի ուրիշ ոչ մի շահ չունի»[105]։ Նա նշում էր, որ թե՛ Մեծ Բրիտանիան և թե՛ Ազատ Ֆրան-

---

[103] *Ш. де Голль*, Военные мемуары, т. I, М., 1957, стр. 211—212.

[104] Նույն տեղում, էջ 212։

[105] *J. Hurewitz*, „Diplomacy in the Near and Middle East", v. II, New York, 1956, p. 232.

սիան կողմնակից են նրանց անկախությանը։ Անդրադառնալով Ֆրանսիայի իրավունքներին Լևանտում՝ Լիթթլտոնը անգլիական կառավարության անունից պաշտոնապես նշում էր. «...մենք բացահայտորեն ընդունում ենք, որ Ֆրանսիան, համեմատած եվրոպական որևէ այլ տերության հետ, Սիրիայում և Լիբանանում պետք է ունենա տիրապետող դիրքեր»[106]։ Այլ կերպ ասած, Անգլիան ճանաչում էր Ֆրանսիայի իրավունքներն ու շահերը Լևանտի երկրներում։ Դը Գոլլը հենց այդպես էլ հասկանում էր բրիտանական մինիստր-ռեզիդենտի նամակի իմաստը։ Այդ բանը պարզ երևում է դը Գոլլի նամակից, որտեղ վերջինս շեշտը դնում է հենց այդ հանգամանքի վրա։ Դը Գոլլն իր նամակը հենց այդտեղից էլ սկսում է։ Նա գրում է.—«Ինձ համար հաճելի է նշել ձեր հավաստիացումները, որ դուք կրկին ինձ տալիս եք այն մասին, որ Մեծ Բրիտանիան Սիրիայում և Լիբանանում ոչ մի շահ չունի և որ Մեծ Բրիտանիան ճանաչում է առաջիկայում Ֆրանսիայի տիրապետող և արտոնյալ դիրքը այս պետություններում»[107]։

Այս նամակափոխանակությունը, որ պաշտոնական համաձայնագրի ուժ ուներ, ընկավ Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի փոխհարաբերությունների հիմքում, թեև դա, ինչպես արդեն նշել ենք, չվերացրեց մրցակցությունը այդ երկու պետությունների միջև։ Ազատ Ֆրանսիան դրանից հետո էլ անընդհատ կասկածում էր Լևանտից իրեն դուրս մղելու Անգլիայի մտադրությունների մեջ։ Եվ դա էր պատճառը, որ անգլո-ֆրանսիական հարաբերությունները երբեք անկեղծ չդարձան։ Բայց Ազատ Ֆրանսիան ուրիշ ընտրություն չուներ և ստիպված համակերպվում էր ստեղծված պայմաններին, որովհետև Մեծ Բրիտանիան իրենից անհամեմատ ուժեղ էր։ Դա իր արտացոլումը գտավ նաև Լևանտի երկրների կառավարման մեջ։ Վիշիի տիրապետությունից ազատագրվելուց հետո Սիրիայում և Լիբանանում տերիտորիալ հսկողությունը պետք է իրականացներ Ազատ Ֆրանսիան։ Նա էր պատասխանատու քաղաքացիական վարչության համար[108]։ Սակայն իրականում այդ երկրներում կանգնած էին հիմնականում անգլիական կայսերական 9-րդ բանակի զորքերը և անգլիացիների ձեռքում էր գտնվում ռազմական գերագույն իշխանությունը։ Սա վճռական

---

106 Նույն տեղում։

107 Նույն տեղում։

108 *A Hourani*, Syria and Lebanon, p. 244.

նշանակություն ունեցող մի հանգամանք էր, որի իմաստը ֆրանսիական իշխանությունները շատ լավ էին հասկանում։ Օգտվելով իրենց այդ գերազանցությունից անգլիական ռազմական իշխանությունները Սիրիան և Լիբանանը մտցրին իրենց կողմից վերահսկվող մերձավորարևելյան տերիտորիաների շրջանակների մեջ։

Սիրիայի ժողովրդական մասսաների վերաբերմունքը դաշնակիցների և 1941 թ. հունիսի 8-ի ֆրանսիական դեկլարացիայի նկատմամբ։ Սեպտեմբերի 27-ի ֆրանսիական դեկլարացիան։ Վիշիական զորքերի ու գերմանական գործակալների դուրս մղումը և դաշնակից զորքերի մուտքը Սիրիա և Լիբանան տեղի բնակչությունն ընդհանուր առմամբ ընդունեց ջերմությամբ[109]։ Եվ դա հասկանալի է։ Բնակչությունը և առաջադիմական ուժերը վախենում էին ֆաշիստական վտանգից, որ կախվել էր նրանց գլխին։ Անգլիական և Ազատ Ֆրանսիայի զորքերի մուտքը նրանց ազատում էր այդ սարսափելի մղձավանջից։ Ահա թե ինչու տեղական բնակչությունը ողջունեց դաշնակից զորքերին և օգնեց երկրից արտաքսելու ֆաշիստական գործակալներին։

Սիրիայում հակաֆաշիստական շարժումը սկսվել էր երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբից, երբ իտալական և գերմանական գործակալները ժամանեցին Լևանտ։ Սիրիայում և Լիբանանում հակաֆաշիստական ուժերը միավորվել և ստեղծել էին «Ֆաշիզմի և նացիզմի դեմ պայքարի լիգա»[110], որը մեծ հեղինակություն էր վայելում ժողովրդական մասսաների շրջանում։ Նա հրատարակում էր «Աթ-Թարիկ» («Ուղի») ամսագիրը, որի էջերում հետևողականորեն մերկացվում էին ֆաշիզմի և Լևանտի երկրներում նրանց գործակալների գործողությունները, կոչ էր արվում ժողովրդական մասսաներին զգոն ու պատրաստ լինել հարվածելու ռեակցիոն ուժերին։ Բացի այդ ստեղծվեց «Սովետական Միության բարեկամների ընկերություն»[111], որը նույնպես օգնում էր Լևանտի ժողովրդական մասսաների հակաֆաշիստական պայքարին։

Այդ պայքարի առաջին շարքերում ընթանում էր Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը, որը թեև մինչև 1942 թվականի ապրիլ ամիսը արգելված էր, սակայն կապը չէր

---

[109] „Syria. Geography and history", Damascus, 1955, p. 165.

[110] «Современная Сирия», стр. 153.

[111] Նույն տեղում։

կտրել աշխատավորական մասսաներից, և ընդհատակյա ծանր պայմաններում ուղղություն էր տալիս նրանց պայքարին։ Թերևս դա ի նկատի ունի բուրժուական պատմաբան, կոմունիստական շարժման հարցերով զբաղվող Վ. Լաքյորը, երբ իր «Կոմունիզմը և նացիոնալիզմը Միջին Արևելքում» գրքում գրում է. «Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը Միջին Արևելքի բոլոր կոմունիստական կուսակցություններից ամենաուժեղը և ամենալավ կազմակերպվածն է»[112]։ Սիրիական կոմունիստներն ակտիվ կերպով մասնակցում էին «Ֆաշիզմի և նացիզմի դեմ պայքարի լիգայի» աշխատանքներին, օգտագործում արհմիությունները և այլ կազմակերպություններ մասսաներին մոբիլիզացնելու և ֆաշիստական ու ռեակցիոն ուժերին հակահարված տալու համար։ Այդպիսի տակտիկայի շնորհիվ բարձրացավ նրանց հեղինակությունը աշխատավորական մասսաների շրջանում։ Այդ բանը ընդունում է նաև Վ. Լաքյորը, նշելով, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կոմունիստների ազդեցությունը Սիրիայում և Լիբանանում ուժեղացավ[113]։

Ինչպես նշվեց, սիրիական ժողովրդական մասսաները ընդհանուր առմամբ դոհունակությամբ ընդունեցին դաշնակիցների մուտքը Սիրիա։ Սակայն այդ, այսպես ասած, տոնական տրամադրությունը երկար չտևեց։ Այն բանից հետո, երբ սիրիական հասարակայնությունը իմացավ, որ Անգլիան ճանաչում է Ֆրանսիայի հատուկ շահերը Սիրիայում, իսկ գեներալ դը Գոլլը հայտարարեց, որ անունների և անձնավորությունների փոփոխումը չի նշանակում, որ Ֆրանսիան փոխվել է, այդ տոնական տրամադրությունը և բարյացակամ վերաբերմունքը վերածվեց դժգոհության ու զայրույթի։ Սիրիայի հայրենասիրական ուժերը շատ լավ էին հասկանում, որ Լիթվինով—դը Գոլլ համաձայնագիրը հակասում էր 1941 թ. հունիսի 8-ի դեկլարացիային, որը խոստանում էր մանդատային ռեժիմի վերացում և Սիրիայի ու Լիբանանի անկախության լրիվ ճանաչում։ Կ. Հոլլինգուորթը նշում է, որ Լևանտի երկրների տիրապետող դասակարգերը լավ էին հիշում այդ խոստումը և արդեն հոգնել էին սպասելուց[114]։ Այդ բանը հաստատում է նաև Ս. Լոնգրիգը, նշելով, որ սիրիացիները ոչ մի կերպ չեն

[112] W. Laqueur, Communism and nationalism in the Middle East, London, 1957, p. 137.

[113] Նույն տեղում։

[114] C. Hollingworth, The arabs and the West, London, 1952, p. 95.

համաձայնվում անկախություն տալու հետաձգմանը[115]։ Մասսաների և առաջադիմական ուժերի դժգոհությունը հասել էր մի այնպիսի աստիճանի, որ ամեն րոպե կարող էր պայթյուն տեղի ունենալ։ Հաշվի առնելով այս հանգամանքը Ազատ Ֆրանսիան որոշեց մի փոքր զիջում կատարել։ Գեներալ Կատրուն, որ հունիսի 24-ից սկսեց կոչվել ֆրանսիական գլխավոր դելեգատ Լևանտում[116], հարկադրված 1941 թ. սեպտեմբերի 27-ին կրկին հավաստեց հունիսի 8-ի դեկլարացիան և պաշտոնապես Սիրիան հռչակեց անկախ պետություն։ 1941 թ. սեպտեմբերի 28-ին գեներալ Կատրուն սիրիական ժողովրդին ուղղած իր կոչի մեջ նշելով, որ ինքը կատարում է հունիսի 8-ի դեկլարացիայում տված խոստումները, հայտարարում էր. «Այսպիսով, սկսվեց մի դարաշրջան, երբ անկախ ու սուվերեն Սիրիան ինքը կտնօրինի իր ճակատագիրը։

Սիրիական պետությունը այժմվանից կիրականացնի իր իրավունքները և իրավասությունները որպես անկախ ու սուվերեն պետություն»[117]։

Խալեդ ալ-Ազմի կառավարությունը հրաժարական տվեց։ Նոր կառավարություն կազմելու վերաբերյալ Կատրուն բանակցություններ սկսեց Հաշիմ ալ-Աթասիի և սիրիական մյուս ականավոր քաղաքական գործիչների հետ։ Սակայն այդ բանակցությունները ոչ մի արդյունք չտվին, որովհետև այդ գործիչները չէին ցանկանում իրենց մասնակցությունը բերել մի կառավարության, որը լոկ դործիք էր լինելու գլխավոր դելեգատի ձեռքին։ Այնժամ Կատրուն հարկադրված դիմեց շեյխ Թաջ էդ-Դինին, որը հայտնի էր ֆրանսիական մանդատային իշխանությունների հետ համագործակցելու իր անցյալով ու ցանկություններով։ Վերջինս տվեց իր համաձայնությունը և նշանակվեց Սիրիայի պրեզիդենտ[118]։ Պրեմիեր-մինիստր նշանակվեց Հասան ալ-Հաքիմը։ Նրա կառավարության մեջ չմտավ «Քութլա վաթանիյայինն» պատկանող և ոչ մի գործիչ։

Ինչպե՞ս ընդունեց Սիրիան այս «փոփոխություններն» ու նորամուծությունները։ Ո՛չ սեպտեմբերի 27-ի դեկլարացիան և ո՛չ էլ նոր կառավարության ստեղծումը խանդավառություն չառաջացրեց

---

[115] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 248.

[116] *R. Cere, Ch. Rousseau*, Chronologie du conflit mondial (1935—1945), Paris, 1945, p. 482.

[117] „Documents on international affairs. 1939—1946", v. II, p. 181.

[118] *N. Ziadeh*, Syria and Lebanon, p. 268.

դեմոկրատական ու հակաիմպերիալիստական ուժերի մոտ։ Ընդհակառակը, ինչպես նշում է Ամին Սաիդը «սիրիացիները միահամուռ դատապարտեցին այդ քայլը (Թաջ էդ-Դինին պրեզիդենտ նշանակելը—Ն. Հ.), այն դիտելով որպես ապացույց այն բանի, որ «Ազատ Ֆրանսիան» անբարյացակամ վերաբերմունք է ցուցաբերում Սիրիայի նկատմամբ, կիրառելով մի քաղաքականություն, որը ոչնչով չէր տարբերվում հին ֆրանսիական քաղաքականությունից»[119]։

Սիրիայի ազգային և հակաիմպերիալիստական ուժերի այդպիսի վերաբերմունքը պետք է բացատրել երկու հանգամանքով։

Նախ, սեպտեմբերի 27-ի դեկլարացիան, ինչպես նաև հունիսի 8-ի, լոկ ձևականորեն էր հռչակում Սիրիայի անկախությունը։ Իրականում փաստացի ամբողջ իշխանությունը շարունակում էր մնալ ֆրանսիական իմպերիալիստների ձեռքում։ Նաջիբ ալ-Արմանազին նշում է, որ «այդ անկախությունը իրական չէր։ Ֆրանսիացիները շարունակում էին գործադրել իրենց նախկին մեթոդները»[120]։ Ըստ այդ դեկլարացիայի Սիրիան խստորեն հետևելու էր ֆրանսիական քաղաքականությանը։ Սիրիացիները հսկողության ոչ մի իրավունք չունեին բանակի և ոստիկանական ուժերի վրա, չէին կարող խառնվել հասարակական ու տնտեսական գործերին։ Այդ բոլորը առաջվա նման մնում էր ֆրանսիական իշխանությունների տնօրինության տակ։ Նրանց տնօրինության տակ էին մնում նաև կապի բոլոր միջոցները[121]։ Բացի այդ, գլխավոր դելեգատը, որի վճիռները վերջնական էին, ըստ էության ոչնչով չէր տարբերվում գլխավոր կոմիսարից։ Ընդհանրապես՝ լոկ ցուցանակի փոփոխումը, իսկ ըստ էության նախկին քաղաքականությունը վարելը, հատուկ էր Ազատ Ֆրանսիային։ Այդ հանգամանքի վրա ուշադրություն է դարձրել նաև Ֆ. Հիթթին։ Նա իրավացիորեն նշելով, որ 1941 թ. սեպտեմբերի 27-ի դեկլարացիայով Սիրիային տրված անկախությունը ավելի շատ անվանական էր, քան թե իրական, ավելացնում է. «Շատ քիչ փոփոխություն կար անձնավորությունների և առավել քիչ մեթոդների մեջ...»[122]։ Հիրավի, ֆրանսիական

---

[119] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 135.

[120] نجيب الارمنازى، محاضرات عن سوريا، ص ١٣٥

[121] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 232.

[122] *Ph. Hitti*, Syria, p. 248.

նոր իշխանությունները ղեկավարման մեթոդների մեջ ոչ մի փոփոխություն չմտցրին։ Նրանք այդ տեսակետից նույնպես եղան հին Ֆրանսիայի ուղղակի ժառանգորդները։

Երկրորդ, նրանց դժգոհության մյուս պատճառն այն էր, որ նոր պրեզիդենտը, ինչպես նաև կառավարությունը ոչ թե ընտրվեցին ժողովրդի կողմից, այլ նշանակվեցին գլխավոր դելեգատի կողմից։ Այլ կերպ ասած, լրիվ պահպանվեց գլխավոր կոմիսարների պրակտիկան։ Սիրիայի դեմոկրատական ուժերը սպասում էին, որ Ազատ Ֆրանսիան, որը հունիսի 8-ի և սեպտեմբերի 27-ի դեկլարացիաներով ընդունել էր Սիրիայի անկախ ու սուվերեն լինելը, թույլ կտա, որ Սիրիայում տեղի ունենան ազատ պառլամենտական ընտրություններ, որը և իրավասու կլիներ ընտրել պրեզիդենտ ու կազմել կառավարություն։ Սակայն Ազատ Ֆրանսիան այդ բանին չգնաց։ Նա սահմանադրական կյանքը Սիրիայում չվերականգնեց և գերադասեց դործել մանդատային ռեժիմին հատուկ օրենքներով ու մեթոդներով։

Ինչպես տեսնում ենք, գոյություն ուներ ակնհայտ հակասություն Ազատ Ֆրանսիայի խոսքերի և գործերի միջև։ Մի կողմից նա հայտարարում էր Լևանտի երկրներում մանդատային ռեժիմի վերացման և նրանց անկախության ճանաչման մասին, իսկ մյուս կողմից՝ գործնականում ձգտում էր առաջվա նման իրերի վիճակը թողնել անփոփոխ։

Ազատ Ֆրանսիայի այս երկդիմի քաղաքականությունը պետք է բացատրել նրանով, որ նա չէր հրաժարվել իր իմպերիալիստական ծրագրերից և ձգտում էր իր տիրապետության տակ պահել Ասիայում և Աֆրիկայում գտնվող ֆրանսիական բոլոր գաղութները ու ենթամանդատային տերիտորիաները։ Այդ բանը անհերքելիորեն ապացուցում են պաշտոնական փաստաթղթերը և Ազատ Ֆրանսիայի ղեկավար գործիչների բազմաթիվ հայտարարությունները։ Գեներալ դը Գոլլը իր «Ռազմական հուշերում» խոսելով 1941 թ. հունիսի դեպքերին նախորդող շրջանի մասին գրում է. «Գեներալ Կատրուի հետ միասին ես պարզեցի մեր հեռանկարները։ Ամենից առաջ մեզ հետաքրքրում էր դեպքերի ընթացքը Սիրիայում և Լիբանանում։ Վաղ թե ուշ մենք հարկադրված էինք լինելու մեկնել այնտեղ։ Եթե մենք այնտեղ լիներ, Ֆրանսիան կկարողանա կարևոր ներդրում անել ընդհանուր ջանքերում։ Այդ հնարավորությունը բաց թողնելով Ֆրանսիան կկորցնի իր դիրքերը։ Եթե ընդունենք, որ կհաղթեն առանցքի երկրները, ապա նրանք

նույնպես այնտեղ կհաստատեն իրենց տիրապետությունը։ Հակառակ դեպքում մեր տեղը կգրավեն անգլիացիները։ Այդ պատճառով էլ անհրաժեշտ էր առաջին իսկ հնարավորության դեպքում Ազատ Ֆրանսիայի ազդեցությունը տարածել Դամասկոսի և Բեյրութի վրա»[123]։ Այս մեջբերումից պարզ երևում է, որ դը Գոլլը Ազատ Ֆրանսիային տանում էր Լևանտի երկրներ ոչ թե նրանց ազատելու դաղութային լծից, ինչպես մի քանի օր հետո՝ հունիսի 8-ին, նրա անունից փարիսեցիորեն հայտարարեց Կատրուն, այլ գնում էր այնտեղ այդ տերիտորիաները պաշտպանելու մյուս իմպերիալիստական պետություններից՝ Անգլիայից ու Գերմանիայից, և նրանց պահելու Ֆրանսիայի տիրապետության ներքո։ Դը Գոլլը ասում էր. «Քանի դեռ Արևելքում պատերազմը կշարունակվի, մենք, բնականաբար, Լևանտի երկրներում կպահպանենք գերագույն իշխանությունը և այդ տերիտորիաների վրա մանդատ ունեցող երկրի պարտականությունները»[124]։ Սակայն Լևանտի երկրներում Ազատ Ֆրանսիայի քաղաքականության էության ու գլխավոր խնդիրների մասին ամենից հստակ ու հանգամանորեն խոսվում է դը Գոլլի 1941 թ. հունիսի 24-ի թվակիր նամակում, ուղղված գեներալ Կատրուին։ Այդ նամակը կազմելիս գեներալ դը Գոլլը ելնում էր այն բանից, որ Սիրիայում և Լիբանանում պետք էր անհապաղ ամրապնդել Ֆրանսիայի հեղինակությունը, քանի որ Վիշիի պարտությունը չի կարող առիթ ծառայել Ֆրանսիային նրան սլան մղելու համար[125]։ Մենք ընթերցողի ուշադրությունը հրավիրում ենք մի հանգամանքի վրա ևս, այդ նամակը գրվել է 1941 թ. հունիսի 8-ի դեկլարացիայից 16 օր հետո, դեկլարացիա, որը, «վերացնում էր» մանդատը և Սիրիան ու Լիբանանը հռչակում անկախ։ Այդ նամակում գեներալ դը Գոլլը ցուցում էր տալիս Կատրուին, որ նա պետք է աշխատի, հնարավորության սահմաններում, արագ նորմալացնել տնտեսական ու քաղաքական կյանքը Սիրիայում, կազմակերպի նրա պաշտպանությունը, իրականացնի համագործակցությունը դաշնակիցների հետ և այլն։ Սակայն դը Գոլլի նամակի ամենահետաքրքիր մասն այն է, որտեղ խոսվում է Սիրիայի և Լիբանանի ստատուսի, Ֆրանսիայի դերի և նրանց փոխհարաբերությունների մասին։ Դը Գոլլը Կատրուին տեղե-

---

[123] *Ш. де Голль*, Военные мемуары, т. 1, стр. 200.

[124] *Նույն տեղում, էջ 211։*

[125] *Նույն տեղում, էջ 513։*

կացնելով, որ նա նշանակված է գլխավոր ու լիազոր դելեգատ և գլխավոր հրամանատար Լևանտում, նշում է, որ «դուք կիրականացնեք ամբողջ իշխանությունը, որով մինչև այս մոմենտը օժտված էր Լևանտում Ֆրանսիայի գլխավոր կոմիսարը և կկատարեք նրա պարտականությունները»[126]: Ուրեմն գլխավոր դելեգատի և գլխավոր կոմիսարի միջև ոչ մի տարբերություն չկար: Այս հանգամանքը մենք շեշտում ենք այն պատճառով, որ գլխավոր կոմիսարի ինստիտուտը մանդատային սիստեմի անկապտելի ատրիբուտն էր: Այժմ նրա պարտականությունները կատարելու էր գլխավոր դելեգատը: Այլ կերպ ասած, փոխվում էր միայն ցուցանակը, իսկ նրա պարտականությունները և լիազորությունների շրջանակները լրիվ համընկնում էին գլխավոր կոմիսարի պարտականությունների հետ: Այստեղ ոչ մի արտառոց բան չկա, քանի որ, ինչպես երևում է դը Գոլլի նամակի հետագա մասից, Ֆրանսիան բոլորովին մտադիր չէր հրաժարվել մանդատից: Դը Գոլլն Ազատ Ֆրանսիայի անունից այդպես էլ հայտնում է Կատրուին. «Ազգերի լիգայի կողմից Ֆրանսիային 1923 թ. տրված Լևանտի մանդատը պետք է իրականացվի, ինչպես այդ պահանջում են նրա պայմանները, և Ֆրանսիայի առաքելությունը պետք է շարունակվի»[127]: Այս որոշումը հակասում էր 1941 թ. հունիսի 8-ի դեկլարացիային, որտեղ Կատրուն Ազատ Ֆրանսիայի անունից հայտարարում էր, որ ինքը վերջ է դնում մանդատային ռեժիմին: Սրանից հետո հասկանալի է դառնում, թե ինչու գլխավոր դելեգատը օժտվեց նույնպիսի իրավունքներով, ինչպես նախկինում գլխավոր կոմիսարն էր:

Դը Գոլլը շատ լավ հասկանալով, որ Սիրիայի ու Լիբանանի անկախության հարցը օրակարգից լրիվ հանել անհնար է, Կատրուին խորհուրդ էր տալիս բանակցություններ սկսել Սիրիայի և Լիբանանի քաղաքական գործիչների հետ, նրանց և Ֆրանսիայի փոխհարաբերությունները ճշտելու շուրջը: Նա առաջարկում էր կնքել մի պայմանագիր, որը «ապահովեր Ֆրանսիայի շահերը» Լևանտում: Բանակցությունների հիմքում, ըստ նրա, կարելի էր դնել 1936 թ. պայմանագիրը[128], որը 1939 թ. մերժվել էր Ֆրանսիայի կողմից: Վերադարձը կրկին 1936 թ. պայմանագիրը պա-

---

126 Նույն տեղում, էջ 520:
127 Նույն տեղում, էջ 521:
128 Նույն տեղում:

տահական չէր։ Այդ պայմանագիրը, ինչպես նշվել է, թեև վերացնելու էր մանդատը և ճանաչելու էր Սիրիայի անկախությունը, սակայն Ֆրանսիային ապահովելու էր ռազմական, քաղաքական ու տնտեսական տիրապետող դիրքեր այդ երկրում։ Նա իր ժամանակի համար մի առաջընթաց քայլ էր, որովհետև խոստանում էր մանդատի վերացում։ Թեև Ֆրանսիան պահպանելու էր կարևոր դիրքեր և Սիրիան շարունակելու էր կախված մնալ նրանից, այնուամենայնիվ Սիրիայի հակաիմպերիալիստական ուժերը իր ժամանակին համաձայն էին դրան։ Դա պետք է բացատրել նրանով, որ նրանք այնքան ուժեղ չէին, որ դնեին Սիրիայի առանց վերապահության անկախության հարցը և հիմնովին արմատախիլ աներին Ֆրանսիական ազդեցությունը Սիրիայում։

Սակայն այժմ վերադարձը 1936 թ. պայմանագրին մի քայլ ետ կլիներ։ Հիմա ժամանակները փոխվել էին։ Ֆրանսիան թուլացել էր, այլևս նախկինը չէր։ Միջազգային իրադրությունը սիրիացիների համար ավելի նպաստավոր էր։ Վերջիններս ավելի հասունացած ու կազմակերպված էին։ Բացի այդ, Ազատ Ֆրանսիան հունիսի 8-ի դեկլարացիայով հայտարարել էր, որ այդ օրվանից վերջ է դրվում մանդատին և Սիրիան ու Լիբանանը համարվում են անկախ ու սուվերեն պետություն։

Այժմ դը Գոլլի պաշտոնական այս հրամաններից հետո պարզ է դառնում, թե ինչու և՛ հունիսի 8-ի, և՛ սեպտեմբերի 27-ի դեկլարացիայից հետո Սիրիայում մանդատային ռեժիմը չվերացվեց, ընտրություններ չանցկացվեցին և կառավարություն կազմվեց այնպիսի մարդկանցից, որոնք կողմնակից էին ֆրանսիական իմպերիալիստների հետ համագործակցելուն ու հանդիսանում էին նրանց դրածոներն ու կամակատարները։

1941 թ. սեպտեմբերի դեկլարացիայից և ալ-Հաքիմի կառավարության կազմումից հետո Սիրիան ճանաչեցին մի շարք պետություններ։ 1941 թ. հոկտեմբերի 27-ին նրա անկախությունը ճանաչեց Մեծ Բրիտանիան։ 1942 թ. փետրվարին նա գեներալ Սպիրսին նշանակեց որպես լիազոր-մինիստր Սիրիայում և Լիբանանում[129]։ Ամերիկայի Միացյալ Նահանգները սպասողական դիրք գրավեցին։ Պետական դեպարտամենտը 1941 թ. նոյեմբերի 29-ին հրապարակեց մի հայտարարություն, որտեղ ասված էր, որ ԱՄՆ-ը համակրանքով է վերաբերվում Սիրիայի և Լիբանանի ան-

[129] *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate, p. 323.

կախուβյանը։ Սակայն ԱՄՆ-ի կառավարուβյունը Սիրիայի անկախուβյան լիակատար ճանաչումը հետաձգում էր մինչև այն պահը, երբ միջազգային պայմանները, ինչպես ասված էր պետական դեպարտամենտի հայտարարուβյան մեջ, հնարավորուβյուն կտան բանակցուβյուններ սկսել այդ հարցի շուրջը[130]։ Թուրքիան չճանաչեց Սիրիայի անկախուβյունը։ Իսկ ինչ վերաբերում է արաբական երկրներին, ապա նրանք տարբեր դիրք գրավեցին։ Սաուդյան Արաբիան ճանաչեց Սիրիայի անկախուβյունն անվերապահորեն, իսկ Եգիպտոսը՝ վերապահուβյամբ։ Նա ճանաչելով Սիրիայի անկախուβյունը, չճանաչեց նրա ներկա կառավարման ձևը[131]։ Արաբական մյուս երկրները զերադասեցին սպասել մինչև որ Սիրիայի անկախուβյունը, սահմանադրական կառավարուβյուն ստեղծելով, կդառնա իրական[132]։

Սիրիական դեմոկրատական ուժերի պայքարը սահմանադրուβյան վերականգնման և պառլամենտական ընտրուβյուների անցկացման համար։ Ինչպես նշվեց, սեպտեմբերի 27-ի ֆրանսիական դեկլարացիան Սիրիայի անկախուβյան վերաբերյալ նույնպես ձևական բնույթ էր կրում։ Ուստի և Սիրիայում սկսվեց պայքար իրական անկախուβյան համար։ Ազգային ազատագրական ուժերի հիմնական պահանջը դարձավ սահմանադրուβյան վերականգնումը և վերադարձը սահմանադրական կյանքին։ Այս պահանջը տվյալ էտապում պետք է ճիշտ համարել, քանի որ դա շղթայի այն օղակն էր, որից բռնելով կարելի էր հասնել ֆրանսիական ազդեցուβյան թուլացմանը և Սիրիայի իրական անկախուβյան ամրապնդմանը։ Ֆրանսիական իմպերիալիստները շատ լավ էին հասկանում դա։ Այդ պատճառով էլ նրանք լսել անգամ չէին ուզում շուտափույթ ընտրուβյուններ անցկացնելու և սահմանադրուβյունը վերականգնելու մասին։ Նույնիսկ 1942 թ. ամռանը, երբ դը Գոլլը այցելեց Լևանտի երկրներ և իր աչքերով տեսավ, թե ինչպիսի դժգոհուβյուն է կուտակվել Սիրիայում ընդդեմ ֆրանսիական կառավարման, նույնիսկ դրանից հետո նա հայտարարեց, որ Սիրիայում և Լիբանանում ընտրուβյուններ տեղի չեն ունենա[133]։

Երկրում կուտակված դժգոհուβյունն իր արտացոլումը գտավ

---

130 „Documents on American foreign relations. July 1941—June 1942" v. IV, Boston, 1942, p. 673.

131 Նույն տեղում։

132 Նույն տեղում։

133 *A. Hourani*, Syria and Lebanon, p. 253.

բազմաթիվ հակաֆրանսիական և մասամբ էլ հակաանգլիական ելույթներում, որոնք տեղի ունեցան ամբողջ 1942 թվականին և 1943 թ. սկզբներին։ 1942 թ. Հոմսում և Հալեպում ընդհարումներ տեղի ունեցան ֆրանսիական զորքերի և Սիրիայի բնակչության միջև[134]։ Այդ նույն թվականին Դամասկոսում կոմունիստների ղեկավարությամբ տեղի ունեցավ մայիսմեկյան մեծ հավաքույթ, որին մասնակցում էին բանվորներ, մտավորականներ, ուսանողներ և այլն[135]։ Ներկաների առջև ելույթով հանդես եկավ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Խալեդ Բեկդաշը։ Այդ հավաքույթի վերջում ընդունվեց բանաձև, որտեղ ասված էր. «Բոլոր ժողովուրդները և նրանց հետ արաբ ժողովուրդները պիտի ստանան իրենց ազգային իրավունքները, իրենց անկախությունը և իրենց ճակատագիրը տնօրինելու ազատությունը։

Կեցցե ազատ, անկախ, դեմոկրատական, արաբական Սիրիան»[136]։

Սիրիական դեմոկրատական ուժերը դժգոհ էին նաև անգլիական իշխանություններից։ Արխիվային մի վավերագրում այդ մասին կարդում ենք.

«Սիրիայի արաբ բնակչությունը բացահայտ կերպով իր դժգոհությունն է հայտնում անգլիական օկուպանտների վարքագծից։ Շատ քաղաքներում տեղի ունեցան արաբների ցույցեր անգլիական զորքերը Սիրիայից հեռացնելու պահանջով։ Անգլիական իշխանությունները դրան պատասխանում են արաբների դեմ տեռորը ուժեղացնելով»[137]։ Մի շարք վայրերում նրանք փորձում էին ուժով ճնշել այդ ցույցերը, որի հետևանքով տեղի ունեցան ընդհարումներ ցուցարարների և ավստրալիական զորքերի միջև։ Այդ ընդհարման ժամանակ սպանվեց 11 և վիրավորվեց 50 զինվոր[138]։

Հակաիմպերիալիստական ելույթները չեն դադարում և շարունակվում են 1943 թ. սկզբներին։ Այդ ժամանակ հուզումներով էր բռնված ամբողջ հյուսիսային Սիրիան։ Հալեպում տեղի ունեցան մի շարք ընդհարումներ[139]։ Իսկ փետրվարին ցույցեր տեղի

---

134 S. Longrigg, Syria and Lebanon under French mandate, p. 324:

135 «Ժողովուրդի ձայն», 4.V.1942։

136 Նույն տեղում։

137 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 669, л. 8.

138 Նույն տեղում։

139 S. Longrigg, Syria and Lebanon under French mandate, p. 328.

ունեցան Դամասկոսում[140]: Այդ ելույթներին բացի բանվորներից, գյուղացիներից, արհեստավորներից և առևտրական խավից, մասնակցում էր նաև ուսանողությունն ու աշակերտությունը:

Իշխանությունները ժողովրդական ելույթների առաջն առնելու համար դիմում էին բացահայտ ճնշման: Նրանք արգելում էին ցույցերը և ելույթները: 1943 թ. մարտին կառավարության որոշմամբ մի քանի շաբաթով փակեցին դպրոցները: Սահմանվեց նաև խիստ գրաքննություն, մի շարք թերթերի հրատարակությունն արգելվեց[141]:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Սիրիայում սկսվել էր մի իսկական համազգային շարժում, որին մասնակցում էին նաև Սիրիայի ազգային փոքրամասնությունները, այդ թվում նաև հայերը: Սիրիական ժողովրդի հակաիմպերիալիստական պայքարի ընթացքում հայ զանգվածները, նրա դեմոկրատական ուժերն ու առաջադիմական կազմակերպությունները միշտ էլ կանգնած են եղել սիրիական ժողովրդի և նրա դեմոկրատական ուժերի կողքին՝ ընդդեմ օտարերկրյա իմպերիալիստների:

Հայ դեմոկրատական ուժերը անվերապահորեն պաշտպանում էին սիրիացիների հակաֆաշիստական ու հակաիմպերիալիստական պայքարը և հանդես գալիս հանուն Սիրիայի անկախության: Այդ տեսակետից հատկանշական է Հայաստանի պաշտպանության սիրիական կոմիտեի 1941 թ. հոկտեմբերի նամակը Սիրիայի կառավարության ղեկավարին, որտեղ հետևյալն էր ասված. «Մենք չենք մոռանում մեր պարտքը Սիրիայի՝ մեր երկրորդ հայրենիքի հանդեպ: Մենք պատրաստ ենք օժանդակել դաշնակից ուժերին այս երկու երկրները (Սիրիան և Լիբանանը—Ն. Հ.) նացիստական Գերմանիայից պաշտպանելու համար»[142]: Սիրիայի տարբեր մասերում տեղի ունեցան հայկական մասսաների հավաքույթներ ուղղված ֆաշիզմի և նրա գործակալների դեմ: Այդպիսի մի հավաք տեղի ունեցավ 1941 թ. դեկտեմբերի 7-ին Դամասկոսում, որն ընդգծված հականացիստական բնույթ ուներ[143]:

Հետաքրքիր է նշել, որ հայ դեմոկրատները ուղղակի կապ էին տեսնում ֆաշիզմի կործանման և փոքր ազգերի ազատագրման

---

140 Նույն տեղում:

141 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 1957, л. 48.

142 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 235, л. 3.

143 «Ժողովուրդի ձայն», 27. IV. 1942:

միշև։ Այդ միտքը հստակ ձևակերպված է «Ժողովուրդի ձայն» թերթի 1942 թ. փետրվարի 15-ի խմբագրականում։ Այնտեղ այն միտքն է ընդգծված, որ ֆաշիզմի պարտության շնորհիվ միայն «կործանումից զերծ կարող են մնալ, էլ ավելի բարգավաճել Հայաստանը, ինչպես նաև Լիբանանը, Սիրիան և մյուս երկրները»[144]։

Հայ կոմունիստների, հնչակների և ռամկավարների սիրիական դատի հանդեպ բռնած դիրքը մեծապես նպաստեց հայ ժողովրդի վարկի բարձրացմանը արաբների աչքում։ Այս գործում հատկապես պետք է նշել սիրիահայ կոմունիստների թափած մեծ ջանքերը։ Նրանց աշխատանքը ղեկավարում էր Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության հայկական սեկցիան։ Այդ սեկցիայի գոյության և անձնուրաց գործունեության շնորհիվ ղդալի չափով տարածվեցին կոմունիստական գաղափարները հայ մասսաների շրջանում։ Նրա աշխատանքների մեջ մեծ տեղ է բռնել արաբների և հայերի բարեկամության ամրապնդման խնդիրը։ Եվ երբ 1947 թ. դեկտեմբերի 30-ին այդ սեկցիան ինքնալուծարքի ենթարկվեց[145], հպարտորեն կարող էր արձանագրել, որ այդ ուղղությամբ նրա ցանած սերմերն իզուր չեն անցել և որ նա քիչ բան չի արել արաբ և հայ բարեկամության ամրապնդելու ուղղությամբ։

Հայերի դիրքը բարձր գնահատականի արժանացավ սիրիական ականավոր գործիչների կողմից։ Այդ տեսակետից ուշագրավ է Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության ղեկավարներից մեկի՝ Ֆարաժալլա Հելուի ելույթը Բեյրութում «Հայաստանի պաշտպանության լիգայի»՝ 1942 թ. հունվարի 28-ին կազմակերպած միտինգում։ Միտինգը տեղի ունեցավ Սահակյան մարզադաշտում, որին մասնակցում էր մոտ 5000 հայ[146]։ Մասնակիցների թվում էին նաև մի շարք արաբ ականավոր հասարակական գործիչներ, այդ թվում «Ֆաշիզմի և նացիզմի դեմ պայքարող լիգայի» ղեկավար Անտուան Տաբեթը։

Հանդես գալով միտինգում Հելուն նշում է. «Այս հավաքույթները, որ տեղի են ունենում Սիրիայի և Լիբանանի բոլոր շրջաններում մեջ և որոնց մասնակցում են արաբ և հայ դեմոկրատները, լավագույն փաստն են արաբ և հայ ժողովուրդներին իրար միա-

---

144 Նույն տեղում, 15.II.1942։

145 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 8088, л. 8—9.

146 «Ժողովուրդի ձայն», 9.VII.1942։

ցընող նպատակների նույնության»[147]: Այնուհետև նա ընդգծում է, որ Սիրիայի և Լիբանանի մեջ արաբների և հայերի բախտը միևնույնն է: Այդ պատճառով էլ Սիրիայի և Լիբանանի ազատությունից օգտվողը արաբների հետ միասին հայերն են, իսկ «հայ դեմոկրատական շարժման առաջ նետած յուրաքանչյուր քայլը շահված մի նոր ուժ է արաբ ազգային ազատագրական շարժման համար»[148]:

Ֆարաժալլա Հելուն հայտարարում է, որ հայերը Սիրիայի և Լիբանանի ժողովրդի մեկ սիրելի և կենդանի մասն են, նրանք արաբների եղբայրներն ու ընկերներն են «որպես արժեքավոր օգնական մեր ազատության և անկախության պայքարի համար»[149]: Նա արաբ դեմոկրատների անունից ընդգծում է, որ իրենք իրենց հերթին կանգնած են հայ դեմոկրատների կողքին՝ «լինեն նրանք համայնավար, հնչակյան, ռամկավար կամ ուրիշներ»[150]:

Հայ դեմոկրատների կատարած դերի մասին բարձր է խոսում նաև Խալեդ Բեկդաշը: Նա վերլուծելով Սիրիայում և Լիբանանում տիրող քաղաքական իրադրությունը, ուժերի փոխհարաբերությունը, հակաիմպերիալիստական պայքարի խնդիրները, գալիս է այն եզրակացության, որ այդ պայքարում չի կարելի անտեսել հայերի դերը: Ելնելով դրանից, նա 1943 թ. փետրվարին Հալեպում հայերի կողմից Կարմիր բանակի 25-րդ տարեդարձի առթիվ կազմակերպված ժողովում ունեցած իր ելույթում նշում է. «Մենք լավ գիտենք, թե արաբ ազգային որևէ հարցի լուծում, որ նկատի չի առնի Սիրիայի և Լիբանանի հայ ժողովրդի շահերը, անխուսափելիորեն դատապարտված է ձախողման: Ճշմարիտ արաբ հայրենասերը չի կարող չհարգել Սիրիայի և Լիբանանի հայ ժողովուրդը, որ ազատության, դեմոկրատիայի դատի համար տված է անձնազոհ և անկեղծ միլիթաններ»[151]:

Այսպիսով, կարելի է ասել, որ արաբ և հայ դեմոկրատների ճիշտ քաղաքականության և ջանքերի շնորհիվ ամրապնդվում էր արաբ և հայ բարեկամությունը: Իսկ դա նշանակում է, որ ամրանում էր հակաիմպերիալիստական պայքարի ճակատը: Եվ թեև հայկական ուժերն այնքան էլ մեծ չէին, սակայն և արհամարհելի

147 Նույն տեղում:
148 Նույն տեղում:
149 Նույն տեղում:
150 Նույն տեղում, 10.VII.1942:
151 Նույն տեղում, 17.III.1943:

չէին, և սխալ կլիներ նրանց անտեսել ու, առավել ևս, հաշվից դուրս նետել։ Հայկական դեմոկրատական շարժման առավելը գալիս էր ավելի հորդառատ դարձնելու հակաիմպերիալիստական պայքարի սիրիական մեծ գետը, որը, կոհակներ տալով, արդեն սկսել էր իր ափերից դուրս գալ։

Սահմանադրության վերականգնումը և պառլամենտական ընտրությունների անցկացումը։ Շուկրի Քուաթլին Սիրիական հանրապետության պրեզիդենտ։ *1942—1943 թթ. Սիրիայում տեղի ունեցած բացահայտ հակաֆրանսիական ելույթները և երկրում տիրող ընդհանուր դժգոհությունը ակնհայտ կերպով ցույց էին տալիս, որ Սիրիայում հասունանում են շատ լուրջ դեպքեր, որոնք կարող են ծանր հետևանքներ ունենալ Ֆրանսիական տիրապետության համար։ Այդ ելույթներն ու համընդհանուր դժգոհությունը միաժամանակ ցույց էին տալիս, որ սիրիական ազգային ուժերը այլևս մտադիր չէին համբերել և կամ դիմել կոմպրոմիսների Ֆրանսիական իշխանությունների հետ։ Նրանք պնդում էին ընտրություններ անցկացնելու և սահմանադրական կյանքը վերականգնելու վրա, այն համարելով Սիրիայի ձևական անկախությունը իրական դարձնելու քայլերից մեկը։ Ընտրությունների անցկացման վրա պնդում էր նաև Մեծ Բրիտանիան, որոշակի ճնշում գործադրելով Ազատ Ֆրանսիայի վրա*[152]։

Ստեղծված պայմաններում Ազատ Ֆրանսիան հարկադրված էր զիջել։ Որոշ տատանումներից հետո, 1943 թ. մարտի 25-ին[153] *Ազատ Ֆրանսիան որոշեց վերականգնել 1930 թ. մայիսի 14-ի սահմանադրությունը և անցկացնել ընտրություններ։ Սա արդեն հաղթանակ էր, որ մեծ խանդավառությամբ ընդունեցին Սիրիայի ժողովրդական մասսաներն ու դեմոկրատական ուժերը։ Այդ լուրը գոհունակությամբ ընդունեց Սիրիայի ազդեցիկ Ազգային բլոկ կուսակցությունը, որն արտահայտում էր Սիրիայի ազգային բուրժուազիայի շահերը։ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության քաղբյուրոն իր հատուկ նիստում ընդունված որոշման մեջ «կոմունիստների անունով իր հրճվանքն էր հայտնում այս հույժ կարևոր դեպքի համար, որը մեր երկիրը մի քայլով ավե-*

---

[152] نجيب الارمنازى، محاضرات عن سوريا، ص ١٣٧

[153] *Սահմանադրությունը Սիրիայում վերականգնելու մասին առաջին անգամ հայտարարվեց 1943 թ. հունվարին, սակայն պաշտոնապես դրա վերաբերյալ դեկրետ ընդունվեց 1943 թ. մարտի 25-ին։*

լի է մոտեցնում իր ազգային նպատակների և ցանկությունների իրագործմանը»[154]: Միաժամանակ կոմկուսը պահանջում էր ընտրություններն անցկացնել դեմոկրատական հիմունքներով և ընտրել այնպիսի դեպուտատներ, որոնք լավագույնս արտահայտեին Սիրիայի ժողովրդի ցանկությունները:

Այս ընդհանուր խանդավառությանը միացան նաև սիրիահայերը: «Ժողովուրդի ձայն»-ը արտահայտելով նրանց տրամադրությունները, գրում էր. «Նա (Սիրիայի և Լիբանանի հայությունը— Ն. Հ.) գոհունակությամբ ողջունում է ամեն մի քայլ, որ ծառայում է որևէ չափով այս երկրների առաջադիմության, բարգավաճման, ազատության ու անկախության հիմքերի զորացմանը:

Այս ոգիով կմոտենանք մենք սահմանադրության ռեժիմի վերահաստատման գործին»[155]:

Սակայն այս համընդհանուր խանդավառության մեջ լսվում էին առանձին ձայներ, որոնք միանգամայն խորթ էին սիրիական ժողովրդի ձգտումներին ու սպասումներին: Դեռ գործողության մեջ չէր մտել սահմանադրությունը, երբ որոշակի շրջաններ, գլխավորապես ռեակցիոն կալվածատիրական-ֆեոդալական, այն կարծիքն էին հայտնում, որ Սիրիայում պետք է հաստատվի միապետական ռեժիմ: Այդ տեսակետը բացահայտ շարադրեց նրանց տրամադրությունները արտահայտող «Ալեֆ բա» թերթը: Նա գրտնում էր, որ Սիրիայի երջանկությունը միապետական ռեժիմի մեջ է, որ «արաբները, որոնք իրենց թագավորներին կորցրին 400 տարի առաջ, դրանից հետո ապրել են ծանր ստրկության պայմաններում: Վերջապես նրանք կրկին գտան ճշմարիտ ուղին: Նրանց արքաները թագավորում են Եգիպտոսում, Իրաքում, Սաուդյան Արաբիայում և Եմենում»[156]:

Սակայն այդ տեսակետը ոչ մի պաշտպանություն չգտավ սիրիական հասարակության կողմից: Սիրիական ժողովուրդը և դեմոկրատական ուժերը գտնում էին, որ Սիրիայի ապագա վարչաձևը պետք է լինի հանրապետական:

1943 թ. մարտի 25-ին, ընտրություններն անցկացնելու համար, Սիրիայում ստեղծվեց ժամանակավոր կառավարություն Աթա ալ-Այյուբիի գլխավորությամբ[157]: Ընտրությունները, հակա-

---

154 «Ժողովուրդի ձայն», 13.II.1943:

155 «Ժողովուրդի ձայն», 1.II.1943:

156 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 1957, л. 48.

157 *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 136.

ռակ դեմոկրատական մի շարք կազմակերպությունների պահանջի, երկաստիճան էին, որոնք նշանակվեցին հուլիս ամսին։ Այդ ամսի 10—11-ը տեղի ունեցավ ընտրությունների առաջին փուլը, իսկ 26-ին՝ երկրորդը։ Ընտրություններին հաղթեցին ազգայնականները։ Հաղթանակը տարավ Ազգային բլոկ՝ «Քուվթլա վաթանիյա» կուսակցությունը, Շուքրի Քուաթլիի գլխավորությամբ։ Սիրիական պառլամենտի անդամ ընտրվեցին նաև չորս հայ դեպուտատներ, մեկը Դամասկոսից, իսկ երեքը՝ Հալեպից[158]։

1943 թ. օգոստոսի 17-ին հավաքվեց Սիրիայի նորընտիր պառլամենտը, որը և ազգային շարժման խոշոր դեմքերից մեկին և Ազգային բլոկ կուսակցության լիդեր Շուքրի Քուաթլիին ընտրեց Սիրիայի պրեզիդենտ։ Ֆարեզ ալ-Խուրին ընտրվեց պառլամենտի նախագահ։ Մի քանի օր անց կազմվեց առաջին ազգային կառավարությունը՝ Սաադալլա ալ-Ջաբրիի գլխավորությամբ, որը Շուքրի Քուաթլիի համագործակիցներից ու ազգային շարժման վետերաններից մեկն էր։

Սա մեծ հաղթանակ էր, որը գոհունակությամբ ընդունվեց բոլոր սիրիացիների կողմից։ Տեղի ունեցան տոնախմբություններ, զանազան բնույթի հավաքներ, որի ժամանակ պատրաստակամություն էր հայտնվում պաշտպանել հանրապետությունը և նրա ձեռք բերած նվաճումները։ Իրենց ուրախությունն են հայտնում նաև սիրիահայերը։ 1943 թ. դեկտեմբերի 5-ին Դամասկոսի թեմի կաթողիկոսական փոխանորդ գերաշնորհ Եփրեմ արքեպիսկոպոս Տոհմունին այցելեց Սիրիայի հանրապետության պրեզիդենտ Շուքրի Քուաթլիին և հայտարարեց հետևյալը. «Այսօր կներկայանամ Ձերդ վսեմության իմ ժողովուրդին ներկայացուցիչներով միասին, նրա հավատարմական զգացումների թարգմանը լինելու»[159]։ Այնուհետև նա ավելացնում է, որ հայ ժողովուրդը Սիրիայի ամենից անկեղծ և հավատարիմ հպատակը պիտի մնա և «ամեն առիթով ցույց պիտի տա իր հավատարմության զգացումները, գործքով իսկ, եթե հարկ լինի»[160]։

Պրեզիդենտը իր պատասխան խոսքում ասում է, որ ինքը չափազանց զգացված է հայերի հավատարմությունից։ «Մեր հար-

---

158 Ն. Գ. Նազուպեան, Հանուն երջանկության (հուշեր), Գահիրե, 1960, էջ 125։

159 «Ժողովուրդի ձայն», 11.XII.1943։

160 Նույն տեղում։

գանքը և վստահությունը հայերի հանդեպ համոզումի ուժ ունի»[161]։ Շուքրի Քուաթլին հայերի պատվիրակությանը հավաստիացնում է, որ հայերը պետք է օգտվեն այն բոլոր իրավունքներից, որ օգտվում են Սիրիայի արաբները։ «Իսկ եթե մի օր,—շարունակում է պրեզիդենտը,—որևէ մեկը ուզենա հարվածել հայերի իրավունքները այս երկրների (Սիրիայի և Լիբանանի—Ն. Հ.) մեջ, ես այդ բանին արգելք պիտի լինեմ, ի հարկին իմ արյանս գնով»[162]։

Սահմանադրության վերականգնումը, ընտրությունների անցկացումը, պրեզիդենտի ընտրությունը և ազգային կառավարության կազմումը նշանակում էր լուրջ, թեև ոչ վճռական ու վերջնական քայլ Սիրիայի ազգային անկախության և սուվերենության նվաճման ուղղությամբ։ Դրա շնորհիվ 1941 թ. հունիսի 8-ի և սեպտեմբերի 27-ի ֆրանսիական դեկլարացիաները Սիրիայի անկախության վերաբերյալ ավելի կոնկրետ տեսք ընդունեցին և ձեռք բերին որոշակի բովանդակություն։ Դրանով ավարտվեց Սիրիայի ազգային-ազատագրական պայքարի մի կարևոր էջը։

* Սիրիական կառավարության և դեմոկրատական ուժերի պայքարը սահմանադրության մեջ փոփոխություն մտցնելու և կառավարման ֆոսնկցիաները Սիրիային փոխանցելու համար։ Սիրիայի նորաստեղծ կառավարության առջև կանգնած էին մի շարք բարդ ու դժվարին խնդիրներ, որոնց լուծումից էր կախված Սիրիայի անկախության իրական լինելու կամ չլինելու ճակատագիրը։ Ազգային կառավարության ստեղծումից հետո սկզբնական շրջանում Սիրիայի և Ազատ Ֆրանսիայի փոխհարաբերություններում իրավական տեսակետից սկզբունքային ոչ մի փոփոխություն դեռևս տեղի չէր ունեցել։ Ամբողջ իշխանությունը նախկինի պես գտնվում էր ֆրանսիական իմպերիալիստների ձեռքում։ Մանդատը, արձանագրված սիրիական սահմանադրության մեջ, լրիվ պահպանվում էր, և շարունակում էր գոյություն ունենալ գլխավոր դելեգատի պաշտոնը՝ վետոյի իր իրավունքով։

Անհրաժեշտ էր Սիրիան ազատագրել մանդատային ռեժիմի կապանքներից։ Դրա համար պետք էր սահմանադրությունից վերացնել այն կետը, որ վերաբերում էր Ֆրանսիայի՝ որպես մանդատային տերության իրավունքներին, և Սիրիայի կառավարությանը փոխանցել երկրի կառավարման ֆունկցիաները։

---

161 Նույն տեղում։

162 Նույն տեղում։

Ահա այս երկու կարևոր պրոբլեմները էին կանգնած Սիրիայի ազգային կառավարության և բոլոր հակաիմպերիալիստական ուժերի առջև։

Սակայն Ազատ Ֆրանսիան սիրիական ազգային կառավարության ստեղծումից հետո էլ լսել անգամ չէր ուզում իր իրավունքներից հրաժարվելու և մանդատի վերացման մասին։ Ավելի էիշտ, նա դա կապում էր մի այնպիսի պայմանագրի կնքման հետ, որն ապահովեր նրա տիրապետող քաղաքական, ռազմական, տնտեսական ու մշակութային դիրքերը Լևանտի երկրներում։ Իսկ դա կնշանակեր ըստ էության փոփոխություն չմտցնել Սիրիայի և Լիբանանի ստատուսում և նրանց, ինչպես նախկինում, կախման մեջ պահել Ֆրանսիայից։ Այդ բանը չէր թաքցնում նաև ինքը, Ազատ Ֆրանսիայի ղեկավար դը Գոլլը, որն իր «Ռազմական հուշեր»-ում գրում է. «Մենք գտնում ենք, որ Ազգերի լիգայի կողմից Ֆրանսիային վստահված մանդատը նրա կողմից կարող է տրվել միայն ապագա միջազգային մարմիններին և դա կարող է անել միայն այնպիսի ֆրանսիական կառավարություն, որն արդեն ժամանակավոր իշխանություն չի լինի։ Հենց այդպիսին էր մեր դիրքը»[163]։ Այս հատվածում պարզ դրսևորվում է տրամաբանական անհետևողականությունն Ազատ Ֆրանսիայի ղեկավարների գործողությունների մեջ։ Ազատ Ֆրանսիան այդ հարցում հանդես եկավ որպես հին Ֆրանսիայի իսկական ժառանգորդը։ Հենց այդ իրավունքի վրա հենվելով էր, որ Ազատ Ֆրանսիան մտավ Սիրիա և Լիբանան, այնտեղ հաստատեց իր իշխանությունը, օգտվեց մանդատով Ֆրանսիային տրվող բոլոր իրավունքներից և այլն։ Սակայն, այժմ, երբ հարց էր դրվում մանդատը վերացնելու և իշխանությունը սիրիական ազգային օրինական ուժերին փոխանցելու մասին, այդ նույն Ազատ Ֆրանսիան հայտարարում էր, թե պետք է սպասել, որովհետև ինքը ժամանակավոր է և մանդատի վերացման հարցը իրավասու է լուծել Ֆրանսիայի ապագա՝ ոչ ժամանակավոր կառավարությունը։

Մյուս կողմից մանդատի վերացման հարցը դը Գոլլը և իր համախոհները կապում էին ապագա միջազգային կազմակերպության հետ։ Սա նույնպես մի խորամանկ քայլ էր նրանց կողմից, որովհետև ոչ ոք, և առավել ևս Ֆրանսիայի ներկայացուցիչները, այդ ժամանակ՝ 1944 թվականին, չէին կարող ասել, թե երբ իրեն

---

[163] *Ш. де Голль*, Военные мемуары, т. 2, М., 1962, стр. 230.

խայտառակած Ազգերի լիգայի փոխարեն կստեղծվի մի նոր միջազգային կազմակերպություն, և ընդհանրապես այն կստեղծվի, թե՞ ոչ։

Հասկանալի է, որ դը Գոլլի փաստարկները լոկ պատրվակ էին Սիրիայի ու Լիբանանի իրական անկախության հարցի լուծումը հետաձգելու, եթե ոչ ընդհանրապես տապալելու համար։

Շարունակելով իր մտքերը, դը Գոլլը նշում է, որ 1943—1944 թթ. «մենք ենթադրում էինք, որ Դամասկոսի և Բեյրութի կառավարությունները իրենց պահանջներով կարող էին սպասել մինչև պատերազմի վերջը և այն ժամանակ կլուծվեին վերջին ձևականությունները, որոնք դեռևս սահմանափակում էին այդ երկրների սուվերենությունը։ Ե՛վ Սիրիան, և՛ Լիբանանը, անկասկած, կսպասեին, եթե Լոնդոնը չխրախուսեր նրանց պահանջները»[164]։ Դը Գոլլի փաստարկներն այս հարցում հիմնավորված չեն։ Նախ, ինչո՞ւ պետք է Սիրիան ու Լիբանանը իրենց անկախության հարցը հետաձգեին մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը, որի ժամկետը ոչ ոք չէր կարող ճշտությամբ գուշակել։ Մի գուցե դը Գոլլը այդ հարցը առաջ է քաշում ի նկատի ունենալով ռազմա-ստրատեգիական ինչ-որ պլաններ։ Բնավ ոչ։ Սիրիայի ու Լիբանանի լրիվ անկախ լինելը ոչ մի կերպ չէր կարող ազդել պատերազմական գործողությունների և, առավել ևս, երկրորդ համաշխարհային պատերազմի ելքի վրա։ Սիրիան ու Լիբանանը պատկանում էին դեմոկրատական լագերին և պաշտպանում էին դաշնակիցներին ընդդեմ առանցքի երկրների։ Հետևաբար, պատերազմը պատճառաբանելով փորձել արդարացնել մանդատի պահպանումն ու Սիրիայի և Լիբանանի կախյալ վիճակը, ոչ մի հիմք չկար։

Երկրորդ, դը Գոլլը գտնում է, որ Սիրիան ու Լիբանանը անկախության վերաբերյալ իրենց պահանջները կհետաձգեին, եթե Անգլիան նրանց չդրդեր ու չխրախուսեր։ Որ Մեծ Բրիտանիան իրոք ձգտում էր ֆրանսիական մանդատի վերացմանը Սիրիայում և Լիբանանում, դա պատմական անհերքելի իրողություն է։ Անգլիայի այդ քաղաքականությունը, ինչպես նշել ենք, պետք է բացատրել ոչ թե նրա ազատասիրությամբ և գաղութային ճնշված ժողովուրդներին անկախություն շնորհելու ձգտումով, այլ անգլո-ֆրանսիական իմպերիալիստական հակասություններով, Ֆրանսիային դուրս

---

[164] Նույն տեղում, էջ 231։

մղելու և այդ երկրներում իր ազդեցությունն ամրապնդելու միտումներով։ Պատմական կոնկրետ պայմանների դասավորման հետևանքով, երբ Սիրիայում և Լիբանանում կանգնած էին անգլիական խոշոր ռազմական ուժեր և երբ այդ երկրները գտնվում էին բրիտանական տնտեսական հսկողության ներքո, այդպիսի պայմաններում Անգլիայի շահերին բնավ չէր հակասում ֆրանսիական մանդատի վերացումը և Լևանտի երկրներին անկախություն տալը։ Ֆրանսիայից անկախ Սիրիան և Լիբանանը, ըստ Մեծ Բրիտանիայի, յուղալի պատառ կլինեին իր իմպերիալիստական ախորժակը բավարարելու համար։ Եվ չնայած այս հանգամանքին, սխալ կլիներ Սիրիայի և Լիբանանի կառավարությունների պահանջը մանդատի վերացման և իշխանության փոխանցման վերաբերյալ հանդեցնել անգլիական քաղաքականության որոգայթներին, ինչպես ասում է գեներալ դը Գոլլը։ Նա լրիվ հաշվից դուրս է գցում այդ երկրների ժողովուրդներին, հակաիմպերիալիստական ուժերին և նրանց մոտ 25 տարվա հակաֆրանսիական պայքարը հանուն Սիրիայի և Լիբանանի անկախության։

Չնայած Ազատ Ֆրանսիայի դժգոհությանն ու դիմադրությանը Սիրիայի և Լիբանանի կառավարությունները ձեռնամուխ եղան իրենց երկրի սահմանադրություններից Ֆրանսիայի իրավունքներին ու մանդատին վերաբերող հոդվածների վերացմանը։ Այդ հարցը հանձնվեց պառլամենտական հանձնաժողովի քննարկմանը։ Ի պատասխան դրան, Ազատ Ֆրանսիայի Ազատագրության կոմիտեն 1943 թ. նոյեմբերի 4-ին հրապարակեց մի կոմյունիկե, որտեղ շարադրված էին Ֆրանսիայի քաղաքականության հիմնական սկզբունքները Սիրիայի և Լիբանանի նկատմամբ։ Հիմնականում երեք կետերից բաղկացած այդ հայտարարության մեջ ասված էր.

1. Մինչև Սիրիայի և Լիբանանի հարաբերությունները Ֆրանսիայի հետ պարզորոշ ու հատուկ չսահմանվեն, Ֆրանսիան հրաժարվում է նրանց փոխանցել որևէ իշխանություն, որ իրեն շնորհվել է մանդատի միջոցով։

2. Ազատագրության կոմիտեն պնդում է, որ ինքն է ներկայացնում Ֆրանսիան, հետևաբար, կարող է իրագործել օրինական ֆրանսիական կառավարության բոլոր ֆունկցիաները։

3. 1936 թ. պայմանագիրը սկզբում պետք է վավերացնել, որից հետո այն կարելի է փոփոխության ենթարկել[165]։

[165] *N. Ziadeh*, Syria and Lebanon, p. 75.

Սիրիայի և Լիբանանի կառավարությունները մերժեցին ֆրանսիական այս առաջարկությունները, որոնց ընդունումը կնշանակեր ֆրանսիական մանդատի պահպանում, միայն մի փոքր ձևափոխված։

Դրանից հետո դեպքերի զարգացումը Լիբանանում ստացավ դրամատիկական բնույթ։ Լիբանանի կառավարությունը, հաշվի չառնելով Ֆրանսիայի վերոհիշյալ պահանջները, շտապ հարցը դրեց պառլամենտի քննարկմանը։ Պառլամենտը, արտահայտելով ամբողջ ժողովրդի կամքը, 1943 թ. նոյեմբերի 8-ին սահմանադրությունից ջնջեց այն բոլոր հոդվածները, որոնք վերաբերում էին մանդատին։ Դրանով նա պատմական խոշոր քայլ կատարեց՝ Լիբանանը դարձրեց իրավական տեսակետից անկախ ու ինքնիշխան պետություն։

Սակայն ֆրանսիացիները բոլորովին մտադիր չէին զիջել ու հաշտվել մանդատի վերացման հետ։ Գործելով գաղութային նվաճումների ու տիրապետության ամենամռայլ ժամանակներին հատուկ մեթոդներով, ֆրանսիական իշխանությունները գլխավոր դելեգատ Ժան Հելլոյի[166] հրամանով ձերբակալեցին Լիբանանի պրեզիդենտ Բիշարա ալ-Խուրիին, պրեմիեր-մինիստր Ռիադ Սոլհին, մինիստրների մեծ մասին և պառլամենտի մի շարք անդամների։ Նրանք երկրում հաստատեցին ուղղակի ռազմական դիկտատուրա։

Ֆրանսիական գաղութարարների այդ քայլը չսարսափեցրեց Լիբանանի ժողովրդին։ Նա ոտքի ելավ հակահարված տալու իմպերիալիստներին։ Փաստորեն Լիբանանը համակվեց համընդհանուր ապստամբությամբ և զինված պայքար սկսվեց երկրի հակաիմպերիալիստական ուժերի ու ֆրանսիական զինված ուժերի միջև։ Ի պաշտպանություն Լիբանանի արդար դատի, իրենց ձայնը բարձրացրին Սիրիայի ու արաբական մյուս երկրների ժողովուրդները, համաշխարհային առաջադեմ հասարակայնությունը։ Կոնֆլիկտին ակտիվորեն միջամտեց նաև Անգլիան, պահանջելով ազատ արձակել բոլոր ձերբակալվածներին և դադարեցնել պատերազմական գործողությունները։ Անգլիան վարպետորեն օգտվելով այս դեպքերից, հանդես էր գալիս արաբական ժողովուրդների «պաշտպանի» ու «ազատարարի» դերում։

Ազատ Ֆրանսիան, որ չէր սպասում, թե այսպիսի դիմադրու-

---

166 Նա այդ պոստում Կատրուին փոխարինեց 1943 թ. հունիսին։

թյան կհանդիպի Լիբանանի հակաիմպերիալիստական ուժերի կողմից, հարկադրված եղավ զիջել։ Ազատ արձակեց բոլոր ձերբակալվածներին և ճանաչեց պառլամենտի կողմից Լիբանանի սահմանադրության մեջ մտցրած փոփոխությունները։ Դա Լիբանանի հայրենասիրական ուժերի խոշոր հաղթանակն էր և ֆրանսիական իմպերիալիստների պարտությունը։

Լիբանանյան դեպքերը և այն հանգամանքը, որ Ազատ Ֆրանսիան ճանաչեց Լիբանանի սահմանադրությունից մանդատի վերաբերյալ հոդվածների վերացումը, մեծ ծառայություն մատուցեցին Սիրիային։ Դրանով արդեն նախադեպ էր ստեղծվել, որից կարող էր օգտվել Սիրիան։ Քանի որ Ազատ Ֆրանսիան համաձայնվել էր մանդատի վերաբերյալ հոդվածների վերացմանը Լիբանանում, ապա նա չէր կարող դրա հետ չհամաձայնվել նաև Սիրիայում։ Բացի այդ, Ազատ Ֆրանսիայի համար արդեն անհնար էր դառնում Սիրիայում դիմել նույնպիսի բռնի գործողությունների, ինչպես Լիբանանում։ Սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ սիրիական սահմանադրությունից մանդատի վերաբերյալ հոդվածի վերացումը անցավ համեմատաբար հարթ, թեև ոչ առանց պայքարի։

Սիրիական սահմանադրությունից ֆրանսիական մանդատի վերաբերյալ հոդվածի վերացումը։ Սիրիական սահմանադրության մեջ Ֆրանսիայի իրավունքներին ու մանդատին վերաբերողը 116-րդ հոդվածն էր, որը ֆրանսիական իշխանություններին իրավունք էր տալիս ցրել պառլամենտը, փոխել կաբինետը և նույնիսկ դադարեցնել սահմանադրության գործողությունը։ Այդ հոդվածում ուղղակի ասված էր, որ «ներկա սահմանադրության և ոչ մի կետ չի կարող հակադրվել և չի հակադրվում Ֆրանսիայի այն պարտականություններին, որ նա ունի Սիրիայի և հատկապես Ազգերի լիգայի նկատմամբ։ Այս վերապահումը վերաբերում է հատկապես այն հոդվածներին, որոնք կապված են կարգ ու կանոնի, անվտանգության, երկրի պաշտպանության և արտաքին հարաբերությունների հետ»[167]։ Հասկանալի է, որ սիրիական կառավարության ամեն մի գործողություն, որը ֆրանսիական իմպերիալիստների արտովը չէր լինի, վերջիններս, ըստ սահմանադրության 116-րդ հոդվածի, կարող էին հայտարարել, որ դա հակասում է Ֆրանսիայի պարտականություններին Ազգերի լիգայի նկատմամբ կամ

[167] *A. Hourani*, Syria and Lebanon, p. 279—280.

խախտում ներքին կարգն ու կանոնը, վտանգի տակ դնում երկրի անվտանգությունը և այլն։ Եվ ելնելով 116 հոդվածով իրենց տըրված իրավունքից նրանք կարող էին չեղյալ հայտարարել սիրիական կառավարության ամեն մի որոշում, ընդհուպ մինչև կառավարության փոփոխումը և պառլամենտի արձակումը։

Հասկանալի է, որ քանի դեռ պահպանվում էր Սիրիայի սահմանադրության այդ հոդվածը, խոսք չէր կարող լինել Սիրիայի իսկական անկախության ու գերիշխանության մասին։ Հարկավոր էր այն վերջնականապես ու առանց վերապահության ջնջել սահմանադրությունից։ Այդ նպատակով սիրիական կառավարությունը 1943 թ. նոյեմբերի վերջերին այդ հարցը մտցրեց սիրիական պառլամենտի քննարկմանը։

Մինչ այդ Ազատ Ֆրանսիան մի փորձ էլ կատարեց խափանելու այդ գործը։ 1943 թ. նոյեմբերի 25-ին Դամասկոս ժամանեց և Սիրիայի կառավարության հետ բանակցություններ սկսեց գեներալ Կատրուն, որ Ալժիրից Լևանտ էր ժամանել լիբանանյան կոնֆլիկտը հարթելու համար։ Կատրուն իր հանդիպումների ժամանակ պրեզիդենտ Շուքրի Քուաթլիին և պրեմիեր-մինիստր Սաադալա ալ-Ջաբրիին փորձում էր համոզել, որ նրանք կրկին վերադառնան 1936 թ. պայմանագրին կամ էլ մի նոր պայմանագիր կնքեն, որը փոխարինի մանդատային ռեժիմին։ Սակայն Կատրուն մերժում է ստանում։ Նրան պատասխանում են, որ սիրիացիները «մանդատային ռեժիմը հաստատվելու առաջին օրվանից երբեք չեն ճանաչել մանդատը։ Սիրիան հասել է անկախության, որ ճանաչել են ինչպես Ֆրանսիան, այնպես էլ ամբողջ աշխարհի պետությունները, և այդ պատճառով էլ նա անհրաժեշտություն չի գտնում նման պայմանագիր կնքելու»[168]։

Դրանից հետո սիրիական պառլամենտը 1943 թ. նոյեմբերի 28-ին մեծ խանդավառությամբ ձեռնամուխ եղավ սահմանադրությունից 116-րդ հոդվածը վերացնելու հարցի քննարկմանը։ Պառլամենտի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը իր զեկուցագրում նշելով, որ 116-րդ հոդվածը ֆրանսիական իշխանություններին իրավունք է տալիս միջամտել Սիրիայի ներքին գործերին, օրենսդրությանը և անհամատեղելի է սիրիական պետության գերիշխանությանը, պահանջեց վերացնել այն[169]։ Դրա

---

[168] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 136.

[169] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 1957, л. 128.

հետ միասին հանձնաժողովը պահանջեց հրավիրել պառլամենտի հատուկ նստաշրջան և այնտեղ երդում տալ սահմանադրության 1—115-րդ հոդվածներին[170]։

Այս երկու առաջարկություններն էլ միահամուռ պաշտպանություն գտան դեպուտատների կողմից։ Դրա հետ միասին նրանք սիրիական կառավարությունից պահանջեցին ոչ մի բանակցություն չվարել ֆրանսիական կառավարության հետ, քանի դեռ վերջինս չի ճանաչել մանդատի վերացումը[171]։ Մի շարք դեպուտատներ, ամբողջ պառլամենտի ծափահարությունների ներքո, դիմեցին կառավարությանը, պահանջելով, որ այն իր վրա վերցնի երկրի կառավարման ամբողջ պատասխանատվությունը, որպես ազատ ու անկախ պետության կառավարություն[172]։

Հանդես գալով պառլամենտում, արտաքին գործերի մինիստր Ջամիլ Մարդամը հայտարարեց, որ ինքը հավանություն է տալիս պառլամենտի դիրքորոշմանը, քանի որ այն համընկնում է սիրիական կառավարության քաղաքականությանը։ Արտաքին գործերի մինիստրն ավելացրեց, որ սիրիական ժողովուրդը երբեք չի ճանաչել մանդատը, ուստի և կառավարությունը հրաժարվում է մանդատը պահպանելու հիմքի վրա բանակցություններ վարելուց[173]։

Սիրիական պառլամենտը արտահայտվեց հօգուտ 116-րդ հոդվածի վերացման և որոշեց 1944 թ. հունվարին հրավիրել պառլամենտի հատուկ նստաշրջան՝ փոփոխված սահմանադրությանը երդում տալու համար։

Պառլամենտի այդ նստաշրջանը բացվեց 1944 թ. հունվարի 24-ին։ Այդ օրը պրեզիդենտ Շուքրի Քուաթլին և պառլամենտի բոլոր անդամները երդվեցին հավատարիմ լինել սահմանադրության 1—115-րդ հոդվածներին[174]։ Դա նշանակում էր, որ 116-րդ հոդվածը չեղյալ է հայտարարվում և այդ բանը ստանում է օրենսդրական ակտի ուժ։

1944 թ. հունվարի օրենսդրական ակտը ուներ պատմական նշանակություն։ Այն Ֆրանսիային զրկում էր Սիրիայում տիրապետելու, նրա գործերին միջամտելու և իր կամքը թելադրելու իրավական հիմքից։ Դա նշանակում էր, որ Սիրիան այլևս չի ճա-

---

170 Նույն տեղում, թ. 130։

171 Նույն տեղում։

172 Նույն տեղում։

173 Նույն տեղում։

174 *A. Hourani*, Syria and Lebanon, p. 288.

նաչում ֆրանսիական մանդատի գոյությունը և այն համարում է վերացած։ Թեև դեռևս 1943 թ. դեկտեմբերի 2-ին էր Սիրիայի պրեմիեր-մինիստրը հայտարարել, որ Սիրիան չի ճանաչում մանդատը և հանդիսանում է լրիվ անկախ պետություն[175], բայց այնուամենայնիվ, միայն այժմ, պառլամենտի կողմից որոշում ընդունելուց և փոփոխված սահմանադրությանը երդում տալուց հետո էր, որ այդ հայտարարությունը ստացավ իրավական ուժ և դարձավ օրենք։

Ֆրանսիական իշխանությունների կողմից կառավարման ֆունկցիաների վերացումը Սիրիային։ Սահմանադրության 116-րդ հոդվածի վերացումը և մանդատը չեղյալ հայտարարելը միայն գործի սկիզբն էր։ Եթե չձեռնարկվեին համապատասխան գործնական քայլեր, ապա սիրիական պառլամենտի այդ պատմական որոշումը կմնար ոչնչի չպարտադրող մի դատարկ դեկլարացիա։ Այլ կերպ ասած, անհրաժեշտ էր իշխանությունը փոխանցել սիրիական կառավարությանը, որով Սիրիան կդառնար իսկապես անկախ ու ինքնիշխան պետություն։ Այդ էր պարտադրում նաև սիրիական պառլամենտի 1943 թ. նոյեմբերի 28-ի նիստի որոշումը, որտեղ ասված էր, որ սիրիական կառավարությունը պետք է հարց բարձրացնի Ֆրանսիայի առջև իշխանությունը իրեն փոխանցելու մասին և ստանձնի երկրի կառավարման ամբողջ պատասխանատվությունը[176]։ Ի կատարումն Սիրիայի բարձրագույն օրենսդիր մարմնի այդ որոշման, սիրիական կառավարությունը Լիբանանի կառավարության հետ միասին սկսեց նախապատրաստվել այդ հարցի լուծման համար։ Միասնական տակտիկա մշակելու համար տեղի ունեցան սիրիա-լիբանանյան կառավարական մի շարք հանդիպումներ։ Առաջին հանդիպումը կայացավ 1943 թ. դեկտեմբերի 8-ին, որին մասնակցում էին այդ երկու երկրների պրեմիեր-մինիստրները և արտաքին գործերի մինիստրները[177]։ Սակայն նրանց քաղաքականությունը վերջնականապես մշակվեց դեկտեմբերի 19-ի հանդիպման ժամանակ[178]։ Այստեղ որոշում ընդունվեց առաջիկա բանակցությունների ժամանակ Ֆրանսիայից պահանջել Սիրիային և Լիբանանին հանձնել կառավարական այն

---

175 *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 137.

176 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 1957, л. 130.

177 *Նույն տեղում, թ. 132։*

178 منير تقى الدين، الجلاء، بيروت، ١٩٤٧ ص ٣٣

բոլոր ֆունկցիաները, որ նախկինում իրականացնում էր Ֆրանսիան որպես մանդատային երկիր։ Ըստ որում հատուկ նշվեց այդ պահանջն իրագործել առանց որևէ փոխհատուցման։ Այս կետը մտցվեց այն պատճառով, որ Սիրիայի և Լիբանանի սահմանադրություններից մանդատի վերաբերյալ հոդվածները վերացնելուց հետո էլ Ֆրանսիան պնդում էր հատուկ պայմանագրի կնքման վրա։ Նա իշխանության փոխանցման հարցը նույնպես կապում էր այդ պայմանագրի կնքման հետ[179]։ Սակայն Սիրիայի և Լիբանանի կառավարությունները չենթարկվեցին ֆրանսիական ճնշմանը և որոշեցին ինչ գնով էլ լինի հասնել իրենց պահանջների կենսագործմանը առանց Ֆրանսիային այնպիսի զիջում կատարելու, որը սահմանափակեր Սիրիայի և Լիբանանի սուվերենությունն ու անկախությունը։

1943 թ. դեկտեմբերի 21-ին Դամասկոսում սկսվեցին ֆրանսիրիա-լիբանանյան բանակցությունները իշխանության փոխանցման հարցի շուրջը։ Ֆրանսիական կողմից բանակցություններին մասնակցում էր այդ նպատակով Ալժիրից Դամասկոս ժամանած դեներալ Կատրուն, որն արդեն մասնագիտացել էր Լևանտի գործերով և իրոք, ի տարբերություն ֆրանսիական մյուս գործիչների, ավելի լավ էր ըմբռնում Սիրիայի և Լիբանանի պրոբլեմները և ավելի ճկուն քաղաքականություն էր վարում։ Բանակցությունները տևեցին երկու օր և ավարտվեցին դեկտեմբերի 22-ին[180]։ Այդ օրը ուշ երեկոյան հրատարակվեց համատեղ հայտարարություն, որտեղ ասված էր, որ ֆրանսիական իշխանությունները Սիրիայի և Լիբանանի կառավարություններին են փոխանցում այն իրավասությունները, որ նրանք, այսինքն ֆրանսիական իշխանությունները իրականացնում էին Ֆրանսիայի անունից[181]։ Այնուհետև նշվում էր, որ համաձայնություն է կայացվել Սիրիային ու Լիբանանին հանձնել ընդհանուր շահերի և այլ սպասարկությունները, օրենսդրական ու կառավարման իրավունքի հետ միասին[182]։ Սույն միջոցառումները պետք է սկսեին իրագործվել 1944 թ. հունվարի 1-ից։

Ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ բանակցությունները ավարտվեցին բավականին արագ և Ֆրանսիան այդպես հեշ-

---

179 Նույն տեղում։

180 ١٧ اب ١٩٤٣–١٩٤٧ . اربع سنوات من العهد الوطنى"، دمشق، ص ٣٨

181 Նույն տեղում։

182 Նույն տեղում։

տությամբ համաձայնվեց Սիրիային ու Լիբանանին զիջել կառավարման մի շարք կարևոր ֆունկցիաներ։ Այդ հարցին պատասխանելիս պետք է նկատի ունենալ երկու հանգամանք։ Նախ, Լևանտի երկրներում ծավալված ազգային-ազատագրական պայքարը և առանձնապես Լիբանանի դեմոկրատական ուժերի նոյեմբերյան ելույթը, որի շնորհիվ ֆրանսիացիները նահանջեցին և հարկադրված եղան համաձայնվել թե՛ Լիբանանի և թե՛ Սիրիայի սահմանադրություններում տեղի ունեցած փոփոխությունների հետ։ Այդ և հետագա դեպքերը պարզորոշ ցույց տվին, որ Ֆրանսիան այլևս ի վիճակի չէ զենքի ուժով և հին մեթոդներով տիրապետել Լևանտում, որ ժամանակները փոխվել են և եթե Ֆրանսիան չի ուզում զրկվել ամեն ինչից, պետք է որոշ զիջումներ կատարի և իր տակտիկան հարմարեցնի փոփոխված պայմաններին։

Հարկադրված լինելով ճանաչել Սիրիայի և Լիբանանի սահմանադրություններում մանդատի վերաբերյալ կատարված փոփոխությունները, Ֆրանսիան դրանով իսկ ընդունում էր նաև այդ երկրներին կառավարման մի շարք ֆունկցիաները փոխանցելու հնարավորությունը։

Երկրորդ, Ֆրանսիան 1943 թ. դեկտեմբերի 22-ի համաձայնագրով արաբական այդ երկու երկրներին փոխանցելով կառավարման մի շարք ֆունկցիաներ, իր ձեռքում պահեց ամենակարևորը՝ ազգային բանակը։ Նա լավ էր հասկանում, որ առանց ազգային բանակի Սիրիայի ու Լիբանանի անկախությունը կլինի կիսատ և ոչ հաստատուն։ Այդ պատճառով էլ նա հենց բանակը պահեց իր ձեռքում, որպեսզի, ինչպես կտեսնենք հետո, ճնշում գործադրի այդ երկրների վրա և փորձի հասնել վաղուց փայփայած իր նպատակին՝ պայմանագրի կնքմանը, որն ապահովեր Ֆրանսիայի տիրապետող դիրքերը Լևանտում։

Դեկտեմբերի 22-ի համաձայնագիրը մեծ գոհունակությամբ ընդունվեց սիրիական հասարակայնության կողմից։ Այդ նույն օրը երեկոյան նիստի հավաքվեց սիրիական պառլամենտը, որտեղ հանդես եկավ պրեմիեր-մինիստր Սաադալա ալ-Ջաբրին։ Պառլամենտը միահամուռ հավանություն տվեց սիրիական կառավարության գործունեությանը և դեկտեմբերի 22-ին կնքած համաձայնագրին[183]։

Իսկ ի՞նչ էր փոխանցվելու Սիրիայի և Լիբանանի կառավարու-

---

[183] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 1957, л. 135.

թյուններին։ Այդ մասին հստակ ասված է Ֆրանս-սիրիա-լիբանանյան համաձայնագրում։ Այնտեղ այդ մասին կարդում ենք. «Այսօր (1943 թ. դեկտեմբերի 22-ին—Ն. Հ.) պետության (ֆրանսիական—Ն. Հ.) լիազոր գեներալ Կատրուի և սիրիական ու լիբանանյան կառավարությունների ներկայացուցիչների միջև համաձայնություն կայացավ ներկայումս ֆրանսիական իշխանությունների իրագործած լիազորությունները այս երկու կառավարություններին հանձնելու շուրջ։ Սույն համաձայնագրին համապատասխան ընդհանուր շահերն ու նրանց պաշտոնյաները փոխանցվելու են սիրիական ու լիբանանյան պետություններին՝ օրենսդրական և վարչական իրավունքի հետ, առաջիկա հունվարի 1-ից սկսյալ։ Այս լիազորությունների փոխանցման վերաբերյալ ձևերի մասին կկնքվեն հատուկ համաձայնագրեր։

Սույն համաձայնագիրը կնքվել է առանց որևէ պայմանի։ Կատրու, Ռիադ Սոլհ, Սելիմ Թակլա, Սաադալա Ջաբրի, Ջամիլ Մարդամ, Խալեդ ալ-Ազըմ»[184]։ Ինչպես երևում է մեջ բերված մասից Սիրիային և Լիբանանին առաջին հերթին փոխանցվելու էին այն բոլորը, ինչ որ հայտնի էր «ընդհանուր շահերի» սպասարկության անվան տակ։ «Ընդհանուր շահերի» մեջ մտնում էին նախ և առաջ մաքսային վարչությունը, հսկողությունը մոնոպոլիաների և կոնցեսիոն ընկերությունների վրա։ Սիրիական կառավարության տնօրինությանն էին անցնում փոստն ու հեռագիրը, գրաքննությունը, հսկողությունը բեռվիննների վրա, ընդհանուր ապահովությունը, տնտեսական, օրենսդրական և հանրային շինությունների վարչությունը, առողջապահության սպասարկությունը և այլն[185]։

1944 թ. հունվարի 1-ից սկսած, ի կատարումն 1943 թ. դեկտեմբերի 22-ի համաձայնագրի, ստորագրվեցին մի շարք արձանագրություններ կառավարման ֆունկցիաները Սիրիային և Լիբանանին փոխանցելու վերաբերյալ։ 1944 թ. հունվարի 3-ին կնքվեց առաջին արձանագրությունը Լևանտի երկրներին մաքսերի վարչությունը և ծխախոտի՝ Ռեժիի մենաշնորհը փոխանցելու մասին[186]։ Հունվարի 5-ի արձանագրությամբ փոխանցվեցին Դամասկոսի տրամվայի, Հալեպի, Հոմսի և Համայի էլեկտրական ընկերու-

---

184 منير تقي الدين، الجلاء، ص ٣٥

185 «Ժողովուրդի ձայն», 27.XII.1943։

186 H. Davis, „Constitutions, electoral laws, treaties of the states in the Near and Middle East", Durham, 1953, p. 283.

թյունները, իսկ հունիսի 3-ին և 5-ին նաև փոստի ու հեռագրի, երկաթուղիների, արդյունաբերական ու առևտրական սեփականության իրավունքների և հնությունների պահպանման սպասարկությունները[187]։

1944 թ. հունիսի 5-ին Դամասկոսում հրապարակվեց սիրիա-լիբանանյան մի հայտարարություն, որտեղ ասված էր, որ իշխանության փոխանցումը պետք է համարել ավարտված[188]։

Սիրիայի և Լիբանանի կառավարությունները բանակցություններ սկսեցին ընդհանուր շահերի սպասարկություններն արդյունավետ օգտագործելու հարցի շուրջը։ 1944 թ. հունվարի 27-ին նրանց միջև կնքվեց համաձայնագիր, որը սահմանեց նրանց փոխհարաբերությունները Ֆրանսիայից նրանց փոխանցած սպասարկությունների վերաբերյալ։ Նրանք համաձայնության եկան, որ այն սպասարկությունները, որոնք կգտնվեն երկու պետություններից մեկի սահմանների մեջ, պետք է հանձնվեն շահագրգռված պետությանը[189]։ Դրա մեջ մտնում էին վառոդի սպասարկությունը, արդյունաբերական, առևտրական սեփականության պաշտպանության, հանրային շինարարության, ընդհանուր ապահովության սպասարկությունները, փոստն ու հեռագիրը և այլն։ Այդ հարցերը Լիբանանի և Սիրիայի կառավարությունները լուծում էին միմյանցից անկախ և յուրաքանչյուրն իր տերիտորիայի սահմաններում։

Սակայն այն սպասարկությունները, որոնք շոշափում էին երկու երկրների շահերը՝ ինչպես մաքսերի վարչությունը, Ռեժիի ծխախոտի ընկերությունը, հսկողությունը մենաշնորհյալ ընկերությունների վրա, որոշվեց օգտագործել միասնաբար։ Սիրիան ու Լիբանանը կազմեցին մաքսային մեկ միություն[190]։ Ստեղծվեց Հասարակաց շահերի գերագույն խորհուրդ, որը բաղկացած էր 6 հոգուց՝ երեքը սիրիացի, իսկ երեքը լիբանանցի[191]։ Խորհուրդը 6 ամիս գործելու էր Դամասկոսում և 6 ամիս՝ Բեյրութում։

Հունվարի 27-ի համաձայնագրով որոշվեց, որ մաքսերից ստացվող եկամուտների 40% ստանալու է Սիրիան, 40-ը՝ Լիբանանը, իսկ մնացած 20% կբաշխվի գերագույն խորհրդի որոշմամբ[192]։

---

187 اربع سنوات العهد الوطني» ص ٣٩.

188 Նույն տեղում, էջ 40։

189 «Ժողովուրդի ձայն», 29.I.1944։

190 G. Haddad, Fifty years of modern Syria and Lebanon, p. 96.

191 «Ժողովուրդի ձայն», 29.I.1944։

192 Նույն տեղում։

Այսպիսով, 1944—1945 թթ. մի շարք ակտերի հետևանքով Սիրիայի և Լիբանանի կառավարություններն իրենք սկսեցին իրականացնել ներքին կառավարման ֆունկցիաները։ Դա ամրապնդեց Սիրիայի ու Լիբանանի անկախությունը և թուլացրեց Ֆրանսիայի ազդեցությունը։ Վերջինս զրկվեց Սիրիային ու Լիբանանին իր կամքը թելադրելու զորեղ լծակներից։

Բայց դեռևս չլուծված էր մնում մի կարևոր հարց՝ ազգային բանակը Սիրիայի և Լիբանանի տնօրինությանը հանձնելու խնդիրը։ Սակայն նախքան այդ պրոբլեմին անդրադառնալը, հարկ է կանգ առնել Սիրիայի կյանքում տեղի ունեցած երկու կարևոր իրադարձությունների վրա։

Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության առաջին համագումարը։ 1943 թ. դեկտեմբերի 31-ից մինչև 1944 թ. հունվարի 2-ը Բեյրութում տեղի ունեցավ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության առաջին համագումարը[193]։ Համագումարի հրավիրումն անհրաժեշտ էր դարձել, որովհետև ստեղծվել էր նոր իրադրություն, որին համապատասխան էլ կոմունիստական կուսակցությունը պետք է մշակեր իր ծրագիրը և որոշեր ստրատեգիան ու տակտիկան։ Այդ փոփոխությունների մեջ ամենակարևորը Սիրիայի ու Լիբանանի իրարից անջատ պետական միավորումների ստեղծումն էր և ֆրանսիական մանդատը այդ երկրների կառավարությունների կողմից չեղյալ հայտարարելը։

Համագումարում արտասանած իր ճառում Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Խալեդ Բեկդաշը նշեց, որ այս «համագումարը ազգային լիակատար ազատության և լիակատար գերիշխանության համար մղվող պայքարի համագումար է։ Ի հայտ եկավ, որ կոմունիստները ամեն քաղաքի և գյուղի մեջ տարածում են ազգային շունչը, օժանդակում ազգային պայքարին, մասնակցում ազատագրական բոլոր պայքարներին, առանց սպասելու որևէ մեկի թելադրանքին կամ վարձատրությանը»[194]։

Սիրիայի ու Լիբանանի կոմունիստական կուսակցության համագումարը ընդունեց կուսակցական ծրագիր՝ Ազգային խարտիա[195], որտեղ նշվեցին Սիրիայի կոմունիստների խնդիրները

193 Նույն տեղում, 3.I.1944։

194 Նույն տեղում, 10.I.1944։

195 *Khaled Bakdache.* La Charte Nationale du Parti Communiste en Syrie et au Liban, Beyrouth, 1944.

ազգային պայքարում, ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում և այլն։

Ինչպես նշեց Խալեդ Բեկդաշը, համագումարի կողմից ընդունված Ազգային խարտիան միայն կոմունիստների և կամ մեկ դասակարգի խարտիա չէր։ Նա կազմված էր ելնելով համազգային խնդիրներից և հաշվի էր առնում ոչ միայն բանվորների, այլև բոլոր հայրենասիրական ուժերի՝ գյուղացիների, մտավորականության, ուսանողության, առևտրականների և արդյունաբերողների շահերը[196]։

Համագումարի աշխատանքներում բավականին մեծ տեղ գրավեց Սիրիայի անկախության հարցը։ Պատվիրակները միահամուռ որոշեցին, որ կոմունիստական կուսակցությունը հանդես է գալիս հանուն Սիրիայի լիակատար ազգային ազատության, անկախության և սուվերենության[197]։ Համագումարի այդ որոշումը Ազգային խարտիայում գրանցվեց որպես ամենակարևոր որոշումը։

Համագումարը արտահայտվեց հօգուտ Սիրիայում ամենալայն հիմքի վրա ազգային ռեժիմի ստեղծման։ Այդ ռեժիմը պետք է լիներ հանրապետական և դեմոկրատական, որն ապահովեր սիրիական քաղաքացիների հավասարությունն, առանց ռասայական և կրոնական խտրության և ապահովեր հասարակական և անհատական ազատությունները՝ խղճի, խոսքի, մամուլի, կուսակցությունների, միությունների և այլն[198]։

Համագումարը կանխագծեց սիրիական կոմունիստների դիրքը ներքին քաղաքականության բնագավառում։

Կուսակցության հիմնական խնդիրները համարվեցին պայքարը սոցիալական արդարության, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման, առողջապահության դրվածքի բարելավման և օտարերկրյա ընկերություններին պատկանող ձեռնարկությունների վրա հսկողություն սահմանելու համար։ Համագումարը պահանջեց տնտեսության և մշակույթի բնագավառում կիրառել մի շարք դեմոկրատական բարեփոխումներ[199]։

Իսկ ինչ վերաբերում էր արտաքին քաղաքական պրոբլեմներին, ապա համագումարը գտնում էր, որ Սիրիան պետք է ձգտի վարել ինքնուրույն քաղաքականություն, պաշտպանի դեմոկրատա-

196 Նույն տեղում, էջ 8։
197 Նույն տեղում, էջ 9։
198 Նույն տեղում, էջ 13, 37։
199 Նույն տեղում, էջ 39։

կան ուժերի հակաֆաշիստական պայքարը և սերտ տնտեսական ու քաղաքական հարաբերություններ սահմանի արաբական երկրների և առաջին հերթին Լիբանանի հետ։ Խալեդ Բեկդաշը և համագումարի մյուս պատվիրակները բարձր գնահատեցին Սովետական Միության դերը ազգային-ազատագրական շարժումների ծավալման, մանդատի վերացման և արաբական երկրներին օգնություն ցույց տալու գործում։ Ելնելով դրանից Խալեդ Բեկդաշը հայտարարեց, որ իրենց վերաբերմունքը Սովետական Միությանը միայն սկզբունքի և դոկտրինայի հարց չէ, այլ ազգային շահերի հարց։ Սիրիայի, ինչպես նաև արաբական մյուս երկրների արմատական ազգային շահերը պահանջում են ամենասերտ կապերի հաստատում Սովետական Միության հետ[200]։

Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության համագումարի աշխատանքներին ակտիվ մասնակցում էին նաև Սիրիայի և Լիբանանի հայ կոմունիստները։ Համագումարում նրանց կողմից մեծ ու փայլուն ճառով հանդես եկած ներկայացուցիչը մերկացրեց իմպերիալիստական ու հետադիմական ուժերին, որոնք փորձում էին գժտեցնել հայերին ու արաբներին, ասելով, որ «դուք այս երկրների մեջ հյուր եք, օտարներ և, հետևաբար, ոչ ձեր շահը կպահանջեն և ոչ էլ իրավունք ունեք օգնելու արաբներին, որ նրանք ազատ ու անկախ դառնան»[201]։ Հակահարված տալով այդ վնասակար տեսակետներին, հայ կոմունիստը հայտարարեց, որ հայերը պաշտպանում են Սիրիայի և Լիբանանի անկախությունը, «քանի որ Սիրիայի և Լիբանանի անկախությամբ ոչինչ չեն կորցնի, այլ ընդհակառակը, շատ բան կշահեն»[202]։ Նա նշեց նաև, որ հայերին ու արաբներին շատ բան է իրար կապում, որ նրանք անցել են պայքարի երկար ու դժվարին ուղի և տվել համատեղ պայքարի բազմաթիվ օրինակներ։

Հայ կոմունիստի ելույթը համագումարի կողմից ընդունվեց մեծ ոգևորությամբ։

Համագումարը պահանջեց, որ ազգային բոլոր փոքրամասնություններին տրվեն հավասար իրավունքներ և նպաստավոր պայմաններ ստեղծվեն նրանց մշակույթի զարգացման համար։ Սիրիական կոմունիստական կուսակցության դիրքը ազգային փոք-

---

200 Նույն տեղում, էջ 21։

201 «Ժողովուրդի ձայն», 7.I.1944։

202 Նույն տեղում։

րամասնությունների, մասնավորապես, հայերի նկատմամբ ավելի հստակ պատկերացնելու համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում Խալեդ Բեկդաշի ելույթը կոմկուսի կոնֆերանսում 1944 թ. փետրվարի 27-ին։ Նա իր զեկուցման «Մեր Ազգային խարտիան և ազգային փոքրամասնությունները։ Հայկական փոքրամասնությունը» բաժնում հանգամանորեն կանգ առավ ազգային խնդրի վրա և բարձր գնահատեց հայերի դերը ազատության ու անկախության համար մղվող պայքարում։ «Ինձ համար դժվար է պատկերացնել,—հայտարարեց Խալեդ Բեկդաշը,—որ Անդրանիկի և Սասունցի Դավթի ժառանգները, ցարիզմի ճնշման և թուրքական բռնակալության դեմ պայքարած խիզախ մարտիկները, մի ժողովրդի զավակները, որոնք այժմ մասնակցում են պատմության մեջ ամենամեծ ազատագրական և ազգային պատերազմին, այո, ինձ դժվար է պատկերացնել, որ հայերը սր օր կարող են դեմ կանգնել մի ժողովրդի (Սիրիայի և Լիբանանի արաբներին— Ն. Հ.), որը տառապում և պայքարում է իր ազատության ու անկախության համար»[203]։

Այնուհետև նշելով, որ հայերը ոչ միայն դեմ չեն գնացել արաբ ժողովուրդների ձգտումներին, այլ նրանց հետ կողք-կողքի պայքարել են Սիրիայի և Լիբանանի անկախության համար, Խալեդ Բեկդաշը առանձնապես ընդգծում է հայ կոմունիստների կատարած մեծ աշխատանքը։ «Հայ կոմունիստները,—նշեց Խալեդ Բեկդաշը կոնֆերանսում,—իրենց հերթին միշտ եղել են այս պայքարի առաջին շարքերում։ Նրանք միշտ պայքարել են հայ ժողովրդի միասնության և արաբա-հայկական բարեկամության համար»[204]։

Համագումարը ի նկատի ունենալով, որ նախկին ենթամանդատային տերիտորիաների փոխարեն առաջացել են Սիրիայի և Լիբանանի անկախ հանրապետությունները, իրենց ուրույն ազգային միջավայրով և առանձնահատուկ խնդիրներով, նպատակահարմար գտավ Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունը բաժանել և ստեղծել երկու ինքնուրույն կոմունիստական կուսակցություններ՝ Սիրիայի կոմունիստական կուսակցություն և Լիբանանի կոմունիստական կուսակցություն[205]։ *Յուրաքանչյուրի համար ստեղծվեց առանձին կենտրոնական կոմիտե և յու-*

---

[203] *Kh. Bakdache.* La Charte Nationale du Partie Communiste en Syrie au Liban, p. 33.

[204] Նույն տեղում, էջ 34։

[205] Նույն տեղում, էջ 7։

բաքանչյուրը դործելու էր իր հանրապետության սահմաններում։ Համադումարի որոշմամբ Սիրիայի ազգային հիմնը ընդունվեց որպես Սիրիայի կոմունիստական կուսակցության հիմն[206]։

Ինչպես տեսնում ենք համադումարն ընդունեց շատ կարևոր որոշումներ, որոնք կլնում էին ազգային-ազատագրական պայքարի տվյալ էտապից, երբ ամենագլխավոր խնդիրը համարվում էր Սիրիայի անկախության նվաճումը ու ամրապնդումը և դեմոկրատական հանրապետական վարչաձևի հաստատումը։ Ընդվաճ համադումարի այդ որոշումներով Սիրիայի կոմունիստական կուսակցությունը մեծ աշխատանք ծավալեց աշխատավորական մասսաների պայքարը հանուն անկախ Սիրիայի կազմակերպելու ուղղությամբ։

Սիրիայի անկախության ճանաչումը սովետական կառավարության կողմից և սովետա-սիրիական դիվանագիտական հարաբերությունների հաստատումը։

Մյուս կարևոր իրադարձությունը, որ տեղի ունեցավ Սիրիայի քաղաքական կյանքում, դա դիվանագիտական հարաբերությունների հաստատումն էր Սիրիայի և Սովետական Միության միջև։ 1944 թ. հուլիսի 21-ին Սիրիայի արտաքին գործերի մինիստրը պաշտոնապես դիմեց ՍՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարին՝ խնդրելով դիվանագիտական հարաբերություններ հաստատել և դեսպանորդներ փոխանակել[207]։ Իր հեռագրում սիրիական մինիստրը բարձր էր գնահատում Սովետական Միության արտաքին քաղաքականությունը, հատկապես ընդգծելով այն հանգամանքը, որ նա հանդես է գալիս հօգուտ ազգերի իրավահավասարության և ընդդեմ այս կամ այն տերության արտոնյալ վիճակի։ Նաև բարձր էր գնահատում սովետական ժողովրդի ջանքերը հիտլերյան Գերմանիայի դեմ մղվող պայքարում, ընդունելով, որ նրա և մյուս դեմոկրատական ուժերի հաղթանակները ամրապնդում են Սիրիայի անկախությունը և երաշխիք հանդիսանում նրա սուվերենության պահպանման համար[208]։

Իր հուլիսի 22-ի պատասխանում Սովետական կառավարությունը նշում էր, որ «գոհունակությամբ է ընդունում սիրիական կառավարության առաջարկը ՍՍՀՄ-ի և Սիրիայի միջև բարեկա-

---

206 Նույն տեղում։

207 «СССР и арабские страны, 1917—1960. Документы и материалы», М., 1961, стр. 83.

208 Նույն տեղում, էջ 82—83։

մական դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին»[209]:

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ՍՍՀՄ-ի և Սիրիայի միջև, որը միաժամանակ նշանակում էր պաշտոնապես ճանաչել Սիրիայի անկախությունը, ամրապնդում էր Սիրիայի միջազգային դիրքերը: Այժմ Սիրիան ավելի վստահորեն կարող էր պայքար մղել իր ազգային մի շարք անհետաձգելի խնդիրների լուծման համար, որոնց մասին կխոսվի ստորև:

Հարկ է նշել, որ Սիրիայի տարբեր քաղաքական ուժեր այդ ակտի նշանակությունը հենց այդպես էլ ընդունեցին: Լիովին հավանություն տալով դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը ՍՍՀՄ-ի հետ, նրանք գտնում էին, որ Սիրիան դրանից մեծապես շահելու է: Այդ տեսակետը տարբեր կերպ է իր էջերում շարադրել սիրիական մամուլը: «Ան-Նասր» թերթը այդ կապակցությամբ գրում էր. «Մեր անկախության ճանաչումը մի այնպիսի հզոր պետության կողմից, ինչպիսին Ռուսաստանն է... հանդիսանում է մի փաստ, որը վստահություն է տալիս սիրիացիներին իրենց ազատության նկատմամբ, խոստանալով փայլուն ապագա և նրանց համար տեղ է նախապատրաստում անկախ ու սուվերեն պետությունների մեջ»[210]: Սիրիայի կոմունիստական կուսակցության օրգան «Սաուտ աշ-Շաաբը» դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ՍՍՀՄ-ի հետ համարելով Սիրիայի ժամանակակից պատմության ամենակարևոր իրադարձությունը, նշում էր, որ «այժմ ավելի շատ հնարավորություն կա պայքարելու հանուն մեր ազգային անկախության ընդդեմ իմպերիալիստական ամեն մի դրոհի»[211]: Իսկ Հալեպում լույս տեսնող «Ալ-Իսլահ» թերթը հիշեցնելով, որ ՍՍՀՄ-ը երբեք չի ճանաչել մանդատը, այն համարելով իմպերիալիստական ձգտումների քողարկում, գրում էր. «Այդ հիանալի լուրը (դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին—Ն. Հ.) բոլորի կողմից ընդունվեց մեծ ուրախությամբ: Մեր անկախությունը հզոր պետության կողմից ճանաչվելու հետևանքով, նոր նշանակություն է ձեռք բերում»[212]: Նա ՍՍՀՄ-ը համարում էր մի հզոր ամրոց, որը կխափանի «Սիրիայի

---

209 Նույն տեղում, էջ 83:

210 «Ան-Նասր» («النصر»), Դամասկոս, 26.VII.1944:

211 «Սաուտ աշ-Շաաբ» («صوت الشعب»), 26.VII.1944:

212 «Ալ-Իսլահ» («الاصلاح»), Հալեպ, 27.VII.1944:

անկախության ու ազատության դեմ ուղղված ամեն մի ագրեսիա»[213]։

1944 թ. հոկտեմբերի 26-ին Սովետական Միության դեսպան Ն. Սոլոդը իր հավատարմագրերը հանձնեց Սիրիայի պրեզիդենտ Շուքրի Քուաթլիին։ Դեսպանորդը սովետական կառավարության անունից հավաստիացրեց պրեզիդենտին, որ ՍՍՀՄ-ը ձգտում է ամրապնդել բարեկամությունը երկու երկրների միջև և հաստատել ամուր համագործակցություն[214]։ Իր պատասխանում Շուքրի Քուաթլին նշեց, որ Սիրիան կաշխատի ամեն ինչ անել Սովետական Միության հետ լավ հարաբերություններ պահպանելու համար՝ հիմնված բարեկամության ու համագործակցության վրա[215]։

Սիրիայի դեմոկրատական ուժերի այն ակնկալությունը, որ Սովետական Միությունը, ինչպես մի ամրոց կկանգնի Սիրիայի և մյուս փոքր ժողովուրդների ազատության պաշտպանության դիրքերում, լրիվ արդարացավ։ Հետագա դեպքերը պարզ ցույց տվեցին, որ արաբական երկրներն ի դեմս աշխարհում առաջին սոցիալիստական երկրի, ունեն իրենց անկախության հուսալի պաշտպանը։

Հատուկ զորամասերը Սիրիայից փոխանցելու հարցը։ Ֆրանսիան, Սիրիային ու Լիբանանին փոխանցելով երկրի կառավարման մի շարք ֆունկցիաներ, իր տնօրինության տակ պահեց հատուկ զորամասերը։ Ի՞նչ բան էին դրանք։ Հատուկ զորամասերը փաստորեն Սիրիայի և Լիբանանի ազգային բանակն էր։ Նա հավաքագրվում էր տեղացիներից՝ արաբներից, ինչպես նաև ազգային փոքրամասնություններից՝ չերքեզներից, քրդերից և հայերից[216]։ Այդ զորամասերը գտնվում էին ֆրանսիական սպաների հրամանատարության ներքո և ենթարկվում էին Լևանտում ֆրանսիական ռազմական ուժերի հրամանատարությանը[217]։ Նրանց նկատմամբ սիրիական և լիբանանյան կառավարությունները ոչ մի իրավունք չունեին։ Այդ զորամասերի թիվը հասնում էր 20—25 հազարի[218]։ Սակայն դա չէ էականը, այլ այն, որ այդ զորքերը

---

213 Նույն տեղում։

214 ٣٧ ص "اربع سنوات من العهد الوطنى".

215 Նույն տեղում։

216 *M. Seton-Williams*, Britain and the arab states, London, 1948, p. 119.

217 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 24, д. 126, л. 44.

218 *Dib Moussa*, The arab block in the United Nations, Amsterdam, 1956, p. 65.

ֆրանսիական հրամանատարությանը ենթարկվելու հանգամանքով Սիրիան ու Լիբանանը մնացել էին առանց ազգային բանակի, չունեին իրենց ռազմական ուժերը։ Քանի դեռ այդ իրավիճակը պահպանվում էր, ոչ միայն խոսք չէր կարող լինել Սիրիայի ու Լիբանանի կատարյալ անկախության մասին, այլև նրանց տրված սահմանափակ անկախությունն անգամ դառնում էր խախուտ։ Այդ պատճառով էլ Սիրիան ու Լիբանանը պաշտոնապես դրեցին հատուկ զորամասերը իրենց հանձնելու պահանջը, որը դարձավ Սիրիայի ազգային-ազատագրական ուժերի գլխավոր պահանջներից մեկը։

Ֆրանսիան սկզբունքորեն, ինչպես բազմիցս նշում էին դը Գոլլը, Կատրուն և Լևանտում նոր գլխավոր դելեգատ Բեյնեն[219], դեմ չէր այդ զորամասերը Սիրիային ու Լիբանանին հանձնելու։ Բայց նա չէր ցանկանում այդ բանը առանց պայմանի կատարել։ Ֆրանսիան դրա դիմաց փոխհատուցում էր պահանջում։ Նա ձանձրալի միօրինակությամբ պնդում էր պայմանագրի կնքման վրա։ Նա ուզում էր, որ այդ պայմանագրով իրեն իրավունք տրվի այդ երկրներում ունենալ ռազմա-ծովային և ռազմա-օդային բազաներ և պահպանել ֆրանսիական ռազմական հրամանատարությունը Լևանտում[220]։ Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, նա ցանկանում էր, որ իրեն արտոնյալ վիճակ ապահովվի տնտեսական ու մշակութային հարցերում։

Պետք է ենթադրել, որ երբ 1943 թ. դեկտեմբերի 22-ի համաձայնագրով Ֆրանսիան Սիրիային ու Լիբանանին համեմատաբար հեշտությամբ փոխանցեց կառավարման մի շարք ֆունկցիաներ, ապա դրանով նա ուզում էր պայմանագրի կնքման հարցում կորզել մի շարք զիջումներ։ Ֆրանսիայի ղեկավարները հույս ունեին, որ Սիրիայի և Լիբանանի կառավարությունները կընտրեն կոմպրոմիսի ուղին։ Սակայն սխալվեցին։ Սիրիայի և Լիբանանի կառավարությունները հանդես եկան հանուն մանդատի վերջնական ու լիակատար վերացման։ Իսկ հատուկ զորամասերի գոյությունը ու նրանց ստատուսը մանդատային ռեժիմի բնորոշ արտահայտություններից մեկն էր։

Այսպիսով, բանակի փոխանցման հարցը դարձավ նոր վիճաբանությունների առարկա Ֆրանսիայի ու Լևանտի երկրների մի-

---

219 Նա այդ պաշտոնը ստանձնեց 1944 թ. փետրվարին։

220 *M. Seton-Williams*, Britain and the arab states, p. 119.

չ[221]։ Որոշ պատմաբաններ սխալ դիրքերից են բացատրում ֆրանս-սիրիական այս տարաձայնությունները և մասնավորապես բանակը փոխանցելու հարցը։ Այդ առումով արժե հատկապես հիշատակել Ա. Հաուրանիին։ Նա գրում է. «Այս փաստարկների և պատասխանների (խոսքը բանակը փոխանցելու և պայմանագիր կնքելու մասին է—Ն. Հ.) հիմքում ընկած էր փոխադարձ անվստահությունն ու կասկածը, որոնք և հանդիսանում էին ճգնաժամի իսկական պատճառը»[222]։ Ա. Հաուրանին մեղանչում է ճշմարտության դեմ, նա ոչ մի տարբերություն չի տեսնում մանդատը ներկայացնող ֆրանսիական իմպերիալիստների ու այդ մանդատից ազատագրվել ձգտող Սիրիայի ու Լիբանանի միջև։ Կանտում առաջացած ճգնաժամի պատճառը ոչ թե «կասկածամտությունն ու փոխադարձ անվստահությունն էր», թեև սիրիական դեմոկրատական ուժերը ի՞նչ վստահություն կարող էին ունենալ ֆրանսիական իմպերիալիստների նկատմամբ, այլ այն, որ Ֆրանսիան չէր ցանկանում հրաժարվել իր մանդատից և ամեն կերպ ձգտում էր տիրապետող ռազմական, քաղաքական ու տնտեսական դիրքերը պահպանել Լևանտում։ Իսկ զարմանալու որևէ բան կա՞ արդյոք նրանում, որ Սիրիան և Լիբանանը չէին ցանկանում հաշտվել այդպիսի դրության հետ և ուզում էին վերջնականապես թոթափել ֆրանսիական լուծը և նվաճել լիակատար ազատություն ու անկախություն։ Ահա այստեղ պետք է փնտրել ճգնաժամի արմատները։ Նույն տիպի սխալ է թույլ տալիս նաև Ջ. Հադդադը, որն իր «Ժամանակակից Սիրիայի և Լիբանանի հիմուն տարին» գրքում քննարկելով բանակի փոխանցման կապակցությամբ Սիրիայում և Լիբանանում ստեղծված տագնապալի դրության պատճառները, նշում է, որ «դժգոհության աղբյուրներից մեկը գեներալ Բեյնեին 1944 թ. փետրվարին գլխավոր դելեգատ և ֆրանսիական ուժերի գլխավոր հրամանատար (Լևանտում—Ն. Հ.) նշանակելն էր»[223]։ Ստացվում է այնպիսի տպավորություն, թե Բեյնեն ինչ-որ ինքնուրույն դեր էր խաղում և Ֆրանսիայի Ազատագրության կոմիտեից տարբեր քաղաքականություն էր վարում։ Դա, իհարկե, չի համապատասխանում իրականությանը։ Բեյնեն որպես գլխավոր դելեգատ հետևողականորեն ու ճշտապահությամբ կենսագործում էր

---

221 *Ph. Hitti.* Syria, p. 248.

222 *A. Hourani,* Syria and Lebanon. p. 283.

223 *G. Haddad,* Fifty years of modern Syria and Lebanon, p. 97.

Ազատ Ֆրանսիայի որոշումներն ու հրամանները և չի ունեցել ու չէր էլ կարող ունենալ իր սեփական, առանձին քաղաքականություն:

1944 թ. սկզբներից սկսած Սիրիայում, ինչպես նաև Լիբանանում լայն շարժում է սկսվում հատուկ զորամասերի փոխանցման և ազգային բանակի ստեղծման համար: «Ալ-Ինշա» թերթը նշում էր, որ երկրի անկախությունը պահպանել կարելի է միայն ազգային բանակի առկայության դեպքում[224]: Իսկ «Ալ-Քիֆահը» կառավարությանը առաջարկում էր անհապաղ ձեռնամուխ լինել ազգային բանակի ստեղծմանը[225]: Նա միաժամանակ առաջարկում էր մի խումբ երիտասարդների ուղարկել արաբական երկրներ՝ ռազմական ուսուցման համար, իսկ Սիրիայում ռազմական դպրոց հիմնել[226]:

Բանակի ստեղծման ու ռազմական կադրերի պատրաստման հետ միասին առաջադրվում էր նաև հատուկ ռազմական հարկ մտցնելու պահանջը:

Ի պաշտպանություն այս պահանջների՝ Սիրիայում 1944 թ. սկզբներին ծայր առան ցույցեր, որին մասնակցում էին աշխատավորական մասսաներն ու ուսանողությունը: Այդպիսի մի ցույց տեղի ունեցավ Դամասկոսում 1944 թ. հունվարին: Ցուցարարները տանում էին պաստառներ, որոնց վրա գրված էր. «Երկիրը առանց բանակի չի կարող գոյություն ունենալ»[227]: Նրանք կառավարությանը ներկայացրին մի պահանջագիր, որտեղ հետևյալ առաջարկներն էին ներկայացված. մտցնել ընդհանուր զինապարտություն, ռազմական գործը ուսուցանել բոլոր դպրոցներում և սահմանել «հայրենիքի բանակի» օր, որի ժամանակ պետք է ստորագրություններ ու նվիրատվություններ հավաքել ի նպաստ բանակի[228]:

1944 թ. հունվարի 11-ին բացվեց սիրիական պառլամենտի նիստը: Մի շարք դեպուտատներ իրենց ելույթներում կառավարությանն առաջարկում էին արդեն այժմվանից սկսել բանակի կազմավորումը[229]: Քանի որ բանակի ստեղծման համար անհրաժեշտ

---

224 «Ալ-Ինշա», 9.I.1944:

225 «Ալ-Քիֆահ», 9.I.1944:

226 Նույն տեղում:

227 „Echo de Syrie", Damas, 12.1.1944.

228 Նույն տեղում:

229 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 3229, л. 5.

էին ֆինանսական հատկացումներ, ուստի դեպուտատ Ֆահրի ալ-Բարուդին առաջարկում է այդ լրացուցիչ դրամական աղբյուրները ստեղծելու համար օտարերկրյա ընկերությունների վրա դրվող հարկը, ինչպես նաև երկաթուղային ու այլ տրանսպորտի տոմսի գները բարձրացնել 5%-ով[230]:

Պառլամենտի այդ նիստում հանդես եկավ պրեմիեր-մինիստր Սաադալա ալ-Ջաբրին: Նա հայտարարեց, որ բանակի ու սուվերենության հարցերը ամենակարևորն են մնացած բոլոր հարցերի մեջ և որ «կառավարությունն ու երկիրը այդ հարցում իրենց ոչնչով չեն սահմանափակում»[231]: Նա պաշտոնապես հայտարարեց, որ կառավարությունն ամեն ինչ կանի այդ կենսականորեն անհրաժեշտ խնդրի դրական լուծման համար: Կառավարության այդ դիրքը չփոխվեց նաև այն բանից հետո, երբ 1944 թ. հոկտեմբերին Սաադալլա ալ-Ջաբրին հրաժարական տվեց և ստեղծվեց նոր կառավարություն Ֆարիս ալ-Խուրիի գլխավորությամբ: Վերջինս 1944 թ. հոկտեմբերի 26-ին Սիրիայի պառլամենտում՝ դեպուտատների պալատում հանդես եկավ կառավարական հայտարարությամբ: Այդ հայտարարության արտաքին քաղաքականությանը վերաբերող մասում ասված էր, որ նոր կառավարության արտաքին քաղաքականությունը հանդիսանալու է հնի շարունակությունը[232]: Ինչ վերաբերում է այդ քաղաքականության սկզբունքներին, ապա դրանք երեքն էին՝ երկրի անկախության պահպանումը, լրիվ համագործակցություն դաշնակից երկրների հետ հաղթանակի հասնելու համար և սերտ համագործակցություն արաբական երկրների հետ, որպեսզի նրանք դառնան խաղաղության պատվար Արևելքում[233]:

Կառավարական դեկլարացիայում հատուկ խոսվում էր նաև Ֆրանսիայի հետ ունեցած փոխհարաբերությունների և զորքերի փոխանցման մասին: Ֆարիս ալ-Խուրիի կառավարությունը հայտնում էր, որ ինքը ձգտում է կարգավորել հարաբերությունները Ֆրանսիայի հետ և հասնել սիրիական բանակի ստեղծմանը, որը Սիրիայի իրավունքն է[234]: Այդ նպատակով պետք է բանակցություններ վարվեին: Սիրիական կառավարությունը համաձայնվելով բա-

---

230 Նույն տեղում:

231 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 3229, л. 5.

232 Նույն տեղում, ց. 24, դ. 71, թ. 3:

233 Նույն տեղում:

234 Նույն տեղում:

նակցություններ վարել Ֆրանսիայի հետ, բնավ մտադիր չէր զիջումներ կատարել պայմանագիր կնքելու հարցում։ Կայուն ու հետևողական դիրք գրավեց նաև Սիրիայի հանրապետության պրեզիդենտ Շուքրի Քուաթլին։ Նա հայտարարեց, որ «Սիրիան երբեք չի կնքի որևէ պայմանագիր Ֆրանսիայի հետ»[235]։ Շուքրի Քուաթլին որոշակիորեն հասկացնել տվեց, որ ժամանակները փոխվել են և պայմանները հիմա այն չեն, ինչ էին առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ Ֆրանսիան կարողացավ բռնի ուժով իր տիրապետությունը հաստատել Սիրիայում։ Այդ իմաստով խիստ հետաքրքիր է Շուքրի Քուաթլիի զրույցը Սիրիայում և Լիբանանում անգլիական մինիստր-ռեզիդենտ Սպիրսի հետ։ Իր վիճակը համեմատելով էմիր Ֆեյսալի վիճակի հետ, Շուքրի Քուաթլին ասում է Սպիրսին. «Էմիր Ֆեյսալի արմատները նրա աթոռի չորս ոտքերն էին, մինչդեռ իմը խորն են, և ամբողջ երկիրը իմ հետևում է»[236]։ Եվ որպեսզի թյուրիմացության տեղ չթողնի այդ հարցում, Շուքրի Քուաթլին այնքան հեռուն գնաց, որ հայտարարեց թե ինքը կդիմի ամենածայրահեղ քայլերի, քան կհամաձայնվի Ֆրանսիայի հետ անիրավահավասար պայմանագիր կնքելուն[237]։

Դիմադրելով ֆրանսիական ճնշմանը՝ սիրիական կառավարությունը դիմեց ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարություններին, բողոքելով ֆրանսիական կառավարության գործողությունների դեմ։

Պայմանագիր կնքելու կապակցությամբ ստեղծված իրավիճակը խիստ անհանգստացրեց ամերիկյան կառավարությանը։ ԱՄՆ-ն հեռուն գնացող ծրագրեր ուներ արաբական երկրների նկատմամբ։ Օգտվելով պատերազմի հետևանքով ստեղծված իրադրությունից, երբ Անգլիան և մանավանդ Ֆրանսիան խիստ թուլացել էին, ամերիկյան իմպերիալիստները ձգտում էին ամրապնդել իրենց դիրքերը Արաբական Արևելքում, այդ թվում նաև Սիրիայում ու Լիբանանում։ Այդ պատճառով էլ նրանց շահերին չէր համապատասխանում ֆրանս-սիրիա-լիբանանյան այնպիսի պայմանագրի կնքումը, որը պետք է ապահովեր Ֆրանսիայի տիրապետող դիրքը Լևանտի երկրներում։ Սրանով է բացատրվում այն հանգա-

---

235 „Foreign relations of the United States. Diplomatic papers. 1944", v. V, Washington, 1965, p. 778.

236 Նույն տեղում։

237 Նույն տեղում, էջ 779։

մանքը, որ ԱՄՆ-ի կառավարությունը ճնշում էր գործադրում Ֆրանսիական կառավարության վրա, ստիպելով նրան չափավորել իր պահանջները։ Այդտեղ իր կարևոր դերը խաղաց նաև մի այլ հանգամանք՝ ամերիկացիների վախը, որ Ֆրանսիական չափազանց բացահայտ ճնշումը Սիրիայի վրա կարող է վերջինիս մղել Մերձնցման Սովետական Միության հետ։ Իր այդ մտավախության մասին ԱՄՆ-ի կառավարությունը Ֆրանսիային պարզորոշ հայտարարեց 1944 թ. հոկտեմբերի 10-ին պետական դեպարտամենտում տեղի ունեցած զրույցի ժամանակ, որին Ֆրանսիական կողմից մասնակցում էր Վաշինգտոնում Ֆրանսիական դեկեգատ Հոպկինոտը, իսկ ամերիկյան կողմից՝ պետական քարտուղարի քաղաքական խորհրդական Ու. Մերեյը և պետական դեպարտամենտի մերձավորարևելյան բաժնի պետի տեղակալ Քոհլերը։ Զրույցի ընթացքում Մերեյը հույս է հայտնում, որ Ֆրանսիան Սիրիայի և Լիբանանի նկատմամբ, մանավանդ պայմանագիր կնքելու հարցում, կվարի մեծահոգի և բարեկամական քաղաքականություն և չի կիրառի դիկտատորական մեթոդներ։ Այս կապակցությամբ Մերեյը Հոպկինոտին մատնանշում է, որ «Ռուսաստանի կողմից Սիրիայի և Լիբանանի անկախության ճանաչումով և Մերձավոր Արևելքում սովետական ակտիվ հետաքրքրության վերակենդանացումով, նոր դործոն է ասպարեզ իջել»[238]։ Քաջ իմանալով, որ ճնշված ժողովուրդները մեծ համակրանք են տածում Սովետական Միության հանդեպ և նրան դիտում որպես իրենց շահերի իսկական պաշտպան, Մերեյը, զարգացնելով իր միտքը, ասում է Հոպկինոտին. «Վճանտի ժողովուրդները... կարող են դիմել Ռուսաստանին՝ աջակցության համար, եթե ֆրանսիացիների ճնշումը շատ ուժեղ լինի»[239]։ Իր ասածը հիմնավորելու համար, Մերեյը ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ Շուքրի Քուաթլին Ֆրանսիայի քաղաքականության կապակցությամբ բողոքել էր ոչ միայն ԱՄՆ-ի պրեզիդենտին և Անգլիայի պրեմիեր-մինիստրին, այլև ՍՍՀՄ-ի Մինիստրների սովետի նախագահին։

Ֆրանսիան, իհարկե, շատ լավ հասկանում էր, թե ամերիկյան փաստարկների ետևում իրականում ինչ է թաքնված։ Ֆրանսիական ղեկավարները հասկանում էին, որ տվյալ պահին իրենց դիրքերին սպառնում էին առաջին հերթին Անգլիան և ԱՄՆ-ն։ Հո-

238 Նույն տեղում։

239 Նույն տեղում։

պենոտը այդպես էլ պատասխանում է Մերեյին։ Սիրիայի և Լիբանանի հետ պայմանագրեր կնքելու վերաբերյալ «բանակցությունները,—հայտարարում է նա,—դժվար կլինեն, եթե Վեդսվորտը[240], չխոսելով արդեն Սպիրսի[241] մասին, շարունակի իր հակաֆրանսիական գործունեությունը»[242]։ Մերժելով ամերիկյան փաստարկները և չենթարկվելով ամերիկյան ճնշմանը, Հոպենոտը իր զրույցի վերջում վճռականորեն ընդգծում է, որ «պայմանագիրը անհրաժեշտ է։ Ֆրանսիան Սիրիայում և Լիբանանում շատ փող է ներդրել և այնտեղ ունի հանրահայտ շահեր, որոնք պետք է պաշտպանվեն»[243]։

Ֆրանսիայի գրաված այսպիսի դիրքի պատճառով բանակցությունները Սիրիայի հետ հատուկ զորամասերը փոխանցելու վերաբերյալ, 1944 թ. ոչ մի արդյունք չտվին։ Բայց դա բոլորովին չհուսահատեցրեց Սիրիայի դեմոկրատական ուժերին ու կառավարությանը։ Ընդհակառակը, նրանք դիմեցին մի շարք քայլերի, որոնց նպատակն էր ստիպել Ֆրանսիային նահանջել և ամրապնդել Սիրիայի անկախությունը։

Սիրիայի կառավարությունը 1945 թ. հունվարին որոշեց սիրիական նոր բանակ ստեղծելու համար բյուջեում անհրաժեշտ ֆինանսական հատկացումներ կատարել[244]։ Դա նշանակում էր, որ սիրիական կառավարությունը խոսքից անցնում էր գործի՝ ազգային բանակ ստեղծելու ուղղությամբ։ Սիրիական արտաքին գործերի մինիստրը, 1945 թ. հունվարի 13-ին պառլամենտին տեղյակ պահելով կառավարության այդ որոշման մասին, հայտարարեց. «Մեր երկիրը ոչ մի մանդատ չի ճանաչում։ Պետությունների միջև պայմանագրերի կնքումը բնական բան է։ Բայց մենք չենք ուզում այնպիսի պայմանագրեր, որ կնքվում են տիրոջ, որը ցանկանում է իր սուվերենիտետը պարտադրել, և ստրուկի միջև, որը դրա հետ չի համաձայնվում...։ Մենք Ֆրանսիայից պահանջում ենք հարգել մեր իրավունքները»[245]։ Այսպիսով, պառլամենտի առջև սիրիական կառավարությունը մի անգամ ևս ճշտեց իր դիրքը և դարձյալ պնդեց զորքերի փոխանցման վրա։

---

240 Բնկրութում ամերիկյան դիվանագիտական գործակալ և գլխավոր հյուպատոս։

241 Անգլիայի դեսպանը Սիրիայում և Լիբանանում։

242 „Foreign relations of the US. Diplomatic papers. 1944", v. V, p. 800.

243 Նույն տեղում։

244 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 4416, л. 5.

245 Նույն տեղում։

Այդ նույն օրը՝ հունվարի 13-ին, երկրի տարբեր վայրերում տեղի ունեցան ցույցեր ի պաշտպանություն կառավարության դիրքորոշման։ Ցուցարարները պահանջում էին ազգային զորքերը անհապաղ դնել սիրիական կառավարության տնօրինության տակ[246]։

Ֆրանսիայի գլխավոր պատգամավոր Բեյնեն ամենախիստ տոնով հանդես եկավ Սիրիայի արտաքին գործերի մինիստրի հունվարի 13-ի հայտարարության ու ցուցարարների պահանջի դեմ։ «Ֆրանսիան,—հայտարարեց նա,—այս զորքերը (հատուկ դրամասերը—Ն. Հ.) ստեղծել է իր հաշվին և նրանց փոխանցումը Սիրիային վնաս կհասցներ ռազմական շահերին»[247]։ Թե ինչու էր այդ զորքերի անցումը Սիրիայի հսկողության ներքո վնաս հասցընելու դաշնակիցների ռազմական ծրագրերին հայտնի էր թերևս միայն իրեն՝ Բեյնեին։

Սիրիական կառավարությունը ուշք չի դարձնում այսպիսի հայտարարությունների վրա և շարունակում է ընդունել որոշում որոշմանետևից, որոնք ծառայում էին ֆրանսիական ազդեցության վերացմանը և Սիրիայի ինքնուրույնության ամրապնդմանը։ Ազգային բանակի ֆինանսավորման համար որոշում ընդունելուց հետո, պառլամենտը 1945 թ. հունվարի վերջին քննարկեց սիրիական կառավարության մեջ ծառայող ֆրանսիական խորհրդականներին ու մասնագետներին ֆինանսավորելու հարցը։ Պառլամենտի ֆինանսական հանձնաժողովը հրաժարվեց նրանց ֆինանսավորել, որովհետև, ինչպես ասված էր որոշման մեջ, «կառավարությունը այդ խորհրդականների կարիքը չի զգում»[248]։ Դեպուտատները խիստ քննադատության ենթարկեցին այդ խորհրդականների և մասնագետների գործունեությունը։ Սիրիական պառլամենտը հավանություն տվեց ֆինանսական հանձնաժողովի նախագծին և որոշեց այլևս չվարկավորել ֆրանսիական խորհրդականներին ու մասնագետներին։ Իսկ դա նշանակում էր, որ վերջիններս պետք է հեռանային իրենց գրաված պաշտոններից։ Այս շրջանում սիրիական պառլամենտի ընդունած որոշումների մեջ խիստ կարևոր էր նաև մեկ այլ որոշում, որը վերաբերում էր ֆրանսիական լեզվին։ Մինչ այդ բոլոր կարգի դպրոցներում պարտադիր ֆրանսերեն էին

---

246 Նույն տեղում։

247 Նույն տեղում, թ. 14։

248 Նույն տեղում, թ. 17։

անցնում, ֆրանսերեն լեզվով էին կատարվում պաշտոնական գրագրությունները։ Այժմ պառլամենտը որոշում է, որ ֆրանսիական լեզուն պետական ոչ լրիվ միջնակարգ դպրոցներում այլևս չեն անցնելու[249]։ Այդ նույն նիստում որոշվեց նաև, որ այդ պահից սկսած ամբողջ պաշտոնական գրագրությունը պետք է կատարվի միայն արաբերեն լեզվով[250]։ Այս որոշումը պատմական մեծ կարևորություն ուներ, որպես սիրիական պետականության ստեղծման կարևոր քայլերից մեկը։

Սիրիական կառավարությունը պարզություն մտցրեց նաև երկու կարևոր հարցերում։ Նախ, սիրիա-ֆրանսիական դիվանագիտական փոխհարաբերությունների վերաբերյալ։ Սիրիական կառավարությունը 1945 թ. փետրվարին մի հուշագիր հանձնեց Ֆրանսիայի կառավարությանը, որով պահանջում էր, որ երկու երկրների միջև գոյություն ունեցող դիվանագիտական հարաբերությունները «հիմնվեն իրավահավասարության վրա, առանց որևէ պետության հատուկ արտոնությունները ճանաչելու»[251]։

Սիրիական կառավարության այս հուշագիրը մի նոր հարված էր ֆրանսիական մանդատի և Ֆրանսիայի դիրքերին, որովհետև Ֆրանսիան, ըստ մանդատի, արտոնյալ իրավունքներ ուներ Սիրիայում։ Այժմ նա այդ արտոնություններից զրկվում էր և դրվում էր մյուս պետություններին հավասար դրության մեջ։

Երկրորդ հարցը երկրի անվտանգության պահպանման խնդիրն էր։ Վեճը այն մասին էր, թե դա ո՞ւմ իրավասության մեջ է մտնում։ Չնայած 1944 թ. հուլիսին կնքված ֆրանսո-սիրիական արձանագրությանը, Ֆրանսիան 1945 թ. սկզբներին հայտարարեց, որ Սիրիայում ու Լիբանանում կարգ ու կանոնի, ներքին անվտանգության պահպանման համար ինքն է պատասխանատվություն կրում[252]։ Իսկ դա նշանակում էր ի չիք դարձնել Սիրիայի ու Լիբանանի անկախությունը, որովհետև Ֆրանսիան կարող էր «կարգ ու կանոնի» պահպանման անվան տակ դիմել արտակարգ միջոցների ու միջամտել այդ երկու երկրների ներքին գործերին։ Պարզ էր, որ Սիրիան չէր կարող հանդուրժել այնպիսի վիճակ, որ սահմանափակում էր նրա գերիշխանությունը։ Ուստի Սիրիական կառավարությունը 1945 թ. փետրվարի 6-ին հրապա-

---

249 *S. Longrigg*, Syria and Lebanon under French mandate p. 342.

250 Նույն տեղում։

251 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 4416, л. 30.

252 Նույն տեղում։

րակեց պաշտոնական մի հայտարարություն, որտեղ ասված էր, որ «երկրի անվտանգությանը վերաբերող հարցերը մտնում են միայն սիրիական կառավարության իրավասության մեջ»[253]։

Այս հարցի շուրջը ծագած կոնֆլիկտը մի անգամ ևս ցույց տվեց, թե որքան անհրաժեշտ էր ունենալ ազգային բանակ և, որ Սիրիայի անկախությունը հարգելու մասին Ֆրանսիայի խոստումներին չէր կարելի հավատալ։

Սիրիայում ստեղծվել էր լարված մթնոլորտ։ Դամասկոսում, Հալեպում և այլ վայրերում տեղի ունեցան գործադուլներ։ 1945 թ. հունվար-փետրվար ամիսներին մոտ 10 օր Հալեպում շուկաները փակ մնացին[254]։ Դրան զուգընթաց տեղի էին ունենում ցույցեր։ Այդ գործադուլի և ցույցերի ժամանակ, ինչպես նշում է «Ժողովուրդի ձայն» թերթը, որոշ ռեակցիոն տարրեր շարժումը պառակտելու նպատակով, փորձեցին մահմեդականի և քրիստոնյայի, հայի ու արաբի թշնամություն առաջացնել[255]։ Սակայն, բարեբախտաբար, նրանց այդ վնասակար ծրագրերը չիրականացան։ Հայերը և արաբները միասնական ջանքերով մերկացնում են իմպերիալիզմի շահերը պաշտպանող այդ հետադիմականներին։ Արաբ և հայ ժողովրդական մասսաները Նոր-գյուղի հայաշատ շրջանի մեջ համատեղ ցույց են կազմակերպում։ Բոլոր ելույթ ունեցողներն էլ շեշտում են արաբների և հայերի բարեկամության ամրապնդման և միասնական ճակատով հանդես գալու անհրաժեշտությունը[256]։ Եվ, իրոք, այս ամբողջ բարդ ու լարված իրադարձությունների ժամանակ հայ դեմոկրատական ու առաջադիմական ուժերը կանգնած էին արաբների կողքին։

Ֆրանսիական առաջարկները և ֆրանսիական նոր զորքերի ժամանումը։ Հակաֆրանսիական ցույցերը շարունակվում էին ամբողջ երկրում։ Ֆրանսիան զգում էր, որ այդպես շարունակել չի կարելի, որ դեպքերի զարգացումն այնպիսի ընթացք կարող է ընդունել, որը շատ ծանր հետևանքներ կունենա իր համար։ Ուստի նա Սիրիայի և Լիբանանի կառավարություններին առաջարկեց բանակցություններ սկսել։ Անհրաժեշտ ցուցումներ ստանալու համար գլխավոր պատգամավոր Բեյնեն 1945 թ. մարտին մեկնեց Փարիզ։ Բոլորը սպասում էին նրա վերադարձին, հույս ունենալով,

253 Նույն տեղում։

254 «Ժողովուրդի ձայն», 4.II.1945։

255 Նույն տեղում։

256 Նույն տեղում։

որ նա իր հետ կբերի ինչ-որ նոր բան։ Բեյնեն Ֆրանսիայից վերադարձավ 1945 թ. մայիսի սկզբներին։ Սակայն նա իր հետ որևէ նոր և սիրիացիների և լիբանանցիների համար ընդունելի բան չբերեց։ Նրա պայուսակում դարձյալ հին ծրագրերն էին։ Ֆրանսիան, որ արդեն ազատագրվել էր գերմանական օկուպացումից, իրեն ավելի վստահ էր զգում և գտնում էր, որ այժմ ավելի ուժ ու հիմք ունի Լևանտում մնալու համար։

Բեյնեն Ֆրանսիայի ժամանակավոր կառավարության անունից Սիրիային ու Լիբանանին առաջարկից կնքել երեք պայմանագիր։ Դրանցից առաջինը պետք է ապահովեր ֆրանսիական կուլտուրական հիմնարկների անկախությունը, երկրորդը՝ Ֆրանսիայի տնտեսական իրավունքները, իսկ երրորդը վերաբերում էր ռազմա-ստրատեգիական հարցերին[257]։ Ֆրանսիան երրորդ պայմանագրով պահանջում էր, որ իրեն իրավունք տրվի Սիրիայում ու Լիբանանում կառուցել ռազմա-ծովային ու ռազմա-օդային բազաներ և այդ երկրներում պահպանել ֆրանսիական ռազմական հրամանատարությունը[258]։ Եվ միայն այդ պայմանագրերը կնքելուց հետո Ֆրանսիան համաձայնվում էր հատուկ զորամասերը փոխանցել Սիրիային ու Լիբանանին։ Սակայն դրանից հետո էլ նրանք անորոշ ժամանակով մնալու էին ֆրանսիական հրամանատարության հսկողության ներքո[259]։

Բեյնեն իր այս պահանջները 1945 թ. մայիսի 18-ին ներկայացրեց Սիրիայի ու Լիբանանի կառավարություններին։ Սակայն մինչև այդ պահանջները ներկայացնելը Ֆրանսիան դիմեց մի քայլի, որի նպատակն էր ճնշում գործադրել Սիրիայի ու Լիբանանի կառավարությունների վրա և նրանց ստիպել նահանջել։ 1945 թ. մայիսի 4-ին ֆրանսիական-սենեգալական նոր զորքեր ժամանեցին Բեյրութ։ Սիրիայի ու Լիբանանի կառավարությունները այդ մասին տեղյակ չէին և նոր զորքերի ժամանումը կատարվեց առանց Լևանտի երկրների կառավարության գիտության ու թույլտվության։ Ֆրանսիական այդ ակտը իրենից ներկայացնում էր գաղութարարական քայլ, որը ոտնահարում էր Սիրիայի և Լիբանանի անկախությունը։

Սիրիան ու Լիբանանը բողոքեցին Ֆրանսիային՝ նրա այդ ագ-

---

257 G. Haddad, Fifty years of modern Syria and Lebanon, p. 98.

258 Նույն տեղում։

259 Նույն տեղում։

բեսիվ գործողության համար։ Սիրիայի արտաքին գործերի մինիստր Ջամիլ Մարդամի 1945 թ. մայիսի 6-ի բողոքի նոտայում ասված էր, որ ֆրանսիական նոր զորքերի ժամանումը անհամատեղելի է Սիրիայի անկախության հետ, որը ճանաչել են բոլոր երկրները[260]։ Մարդամը նշում էր, որ պատերազմը արդեն վերջանում է և նոր զորքեր ուղարկելու ոչ մի կարիք չկա։ Նա ֆրանսիական կառավարությանը հիշեցնում էր, որ մի երկրի տերիտորիա զորք բերելու համար պետք է ստանալ տվյալ երկրի համաձայնությունը. Ֆրանսիան այդպես չվարվեց և դրանով խախտեց Սիրիայի սուվերենությունը[261]։ Ֆրանսիական կողմը ոչ միայն մերժեց Սիրիայի ու Լիբանանի բողոքները, այլև մայիսի 17-ին նոր զորքեր, թվով 1500 մարդ բերեց Լևանտ[262]։

Ֆրանսիայի այս գործողությունները բշնամական բնույթ էին կրում, ոտնահարում էին Սիրիայի ու Լիբանանի անկախությունն ու սուվերենությունը և ցույց տալիս, որ Ֆրանսիան միայն ձևականորեն է ընդունում նրանց անկախությունը։ Այդ ժամանակ Սիրիան ու Լիբանանը արդեն Միավորված Ազգերի կազմակերպության անդամ էին, որի կանոնադրությունն արգելում է անդամ երկրի նկատմամբ թշնամական կամ անբարյացակամ գործողության դիմել։ Իսկ Ֆրանսիայի այդ քայլը հենց այդպիսի գործողություն էր, որը հակասում ու խախտում էր ՄԱԿ-ի սկզբունքները։

Ռազմական լրացուցիչ ուժեր Լևանտ բերելով Ֆրանսիան փորձում էր ահաբեկել Սիրիայի ու Լիբանանի ժողովուրդներին ու կառավարություններին և ստիպել նրանց ընդունել իր պահանջները։ Նա պատրաստ էր ուժի դիմել։

Ահա թե ինչու Ֆրանսիան իր առաջարկները Սիրիային ու Լիբանանին ներկայացրեց այդ երկրները լրացուցիչ զորքեր բերելուց հետո միայն։

Սիրիայի կառավարության դիրքը ֆրանսիական պահանջների նկատմամբ և նրա միջոցառումները երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու ուղղությամբ։ Երբ Բեյնեն այցելեց Շուքրի Քուաթլիին ու սիրիական պետության մյուս ղեկավարներին և նրանց ներկայացրեց վերևում նշված պահանջները, «Շուքրի

---

[260] ف ٦ ص "اربع سنوات العهد الوطنى".

[261] Նույն տեղում։

[262] Նույն տեղում։

Քուաթլին,—ինչպես նշում է այդ հանդիպմանը ներկա եղած Սիրիայի պառլամենտի նախագահ և նախկին պրեմիեր-մինիստր Սաադալլա ալ-Ջաբրին,—այնքան զարմացած էր, որ պահանջեց գրավոր հուշագիր ներկայացնել, որը հանձնվեց 12 ժամ անց»[263]: Ծանոթանալով այդ հուշագրին, սիրիական կառավարությունը գտավ, որ դա անընդունելի է իր համար[264]: Սակայն նախքան վերջնական պատասխան տալը Սիրիայի ու Լիբանանի կառավարությունները որոշեցին համատեղ քննարկել այդ հարցը և միասնական գիծ մշակել: Նրանց ներկայացուցիչների հանդիպումը տեղի ունեցավ 1945 թ. մայիսի 19-ին Շթորայում: Հանգամանորեն քննարկելով ֆրանսիացիների թշնամական գործողությունների հետևանքով ստեղծված դրությունը, երկու կառավարությունները հանգեցին միանման եզրակացության, որն իր արտահայտությունը գտավ մայիսի 20-ին հրապարակված համատեղ կոմյունիկեում: Այնտեղ ասված էր, որ «երկու կառավարությունները գտնում են, որ այդ զորքերի ափ հանումը նշանակում է իրենց սուվերենության խախտում, իսկ ֆրանսիական առաջարկները հակասում են երկու երկրների անկախության ոգուն»[265]:

Ելնելով դրանից, սիրիական ու լիբանանյան կառավարությունները որոշեցին դադարեցնել բանակցությունները գլխավոր դելեգատի հետ և հետագա դեպքերի ամբողջ պատասխանատվությունը դնել Ֆրանսիայի վրա:

Ստեղծված պայմաններում Սիրիայի կառավարությունը դիմեց մի շարք քայլերի իր ներքին ու միջազգային դրությունն ամրապընդելու ուղղությամբ: Նա համաշխարհային հասարակայնությանը տեղյակ պահեց ֆրանսիական պահանջների և նրանց նկատմամբ Սիրիայի գրաված դիրքի մասին: 1945 թ. մայիսի 20-ին Սիրիայի արտաքին գործերի մինիստր Ջամիլ Մարդամը մի հուշագիր հանձնեց գեներալ Բեյնեին: Այդ նույն օրը նա ընդունեց Անգլիայի, ԱՄՆ-ի, ՍՍՀՄ-ի, Եգիպտոսի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի և Անդրհորդանանի դիվանագիտական ներկայացուցիչներին և նրանց հանձնեց վերոհիշյալ հուշագրի պատճենը[266]: Այդ հուշագրում ասված էր, որ սիրիական կողմը ամեն կերպ ձգտում

---

263 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 4416, л. 260.

264 اربع سنوات من العهد الوطنى" ص ٤٣.

265 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 4416, л. 118.

266 Նույն տեղում, թ. 116։

էր բարելավել հարաբերությունները Ֆրանսիայի հետ, սակայն վերջինիս կողմից լրացուցիչ զորքեր Լևանտ բերելը խանգարում է այդ բանին և Սիրիան դրա հետ չի կարող համաձայնվել[267]։ Սիրիան հայտարարում էր, որ ինքը չի կարող համաձայնվել նաև պայմանագիր կնքելու ֆրանսիական առաջարկի հետ, որովհետև դա հակասում է երկրի անկախությանը[268]։ Այդ պատճառով էլ Սիրիան անկարող է բանակցությունների մեջ մտնել Ֆրանսիայի հետ։

Իր հուշագրի վերջում սիրիական կառավարությունը պահանջում էր իրեն հանձնել սիրիական բանակը՝ հատուկ զորամասերը, իսկ օտար բանակներն էվակուացիայի ենթարկել[269]։

Այս հուշագրի մեջ կարևորը ոչ միայն այն է, թե սիրիական կառավարությունը ինչպես է հիմնավորում իր մերժումը Ֆրանսիայի անօրինական պահանջների նկատմամբ, այլ նաև այն, որ առաջին անգամ առաջ քաշվեց օտարերկրյա բանակների, այսինքն ֆրանսիական ու անգլիական բանակների էվակուացման հարցը։ Սա մի նոր մոմենտ էր, որը մինչ այդ բացակայում էր սիրիական պահանջներում։ Սիրիական կառավարությունը մինչև մայիսյան իրադարձությունները դնում էր հատուկ զորամասերը իր իրավասությանը փոխանցելու հարցը։ Սակայն այժմ, պայքարի տրամաբանությունը հանգեցրեց նրան, որ Սիրիան բանակի հարցը դրեց ամբողջական պլանով, այսինքն, թե՛ հատուկ զորամասերը փոխանցել և թե՛ օտարերկրյա զորքերը հանել։ Սա մի առաջընթաց քայլ էր, որի նշանակությունը դժվար է գերագնահատել։ Օտար զորքերի էվակուացման պահանջի առաջադրումը նշանակում էր մինչև վերջ արմատախիլ անել մանդատը և Ֆրանսիային զրկել իր ազդեցության վերջին պատվարից։ Սիրիայի կառավարությունը հասկանում էր, որ ծանր փորձություններ են սպասում իրեն և հարկավոր է դրան պատրաստ լինել։ Այդ պատճառով էլ նա դիմեց մի շարք քայլերի երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու ուղղությամբ։ 1945 թ. մայիսի 19-ին սիրիական պառլամենտը ընդունեց օրենք ազգային պաշտպանության մասին[270]։ Այդ օրենքը կառավարությանը իրավունք էր տալիս խաղաղ և պատերազմի

---

267 ف ٥ ص ،"اربع سنوات من العهد الوطني".

268 Նույն տեղում, էջ 46։

269 Նույն տեղում, էջ 46—47։

270 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 4416, л. 117.

տարիներին զինակոչիկներին զորակոչել, նախատեսում էր երկրի պաշտպանության միջոցների կազմակերպում և սպայական կորպուսի ստեղծում[271]: Օրենքում հատուկ նշված էր, որ սիրիական բանակի սպայական կորպուսում ոչ մի օտարերկրյա մասնագետ չպետք է լինի: Այդ մասնագետները, անհրաժեշտության դեպքում, կարող են հրավիրվել արաբական մյուս երկրներից[272]:

Երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու ուղղությամբ սիրիական կառավարության հաջորդ քայլը հանդիսացավ կամավորների ցուցակագրման թույլտվությունը: Կառավարության այդ որոշումը չտեսնված խանդավառություն առաջացրեց ժողովրդի մոտ: Կամավորներ գրվում էին հասարակական բոլոր խավերից՝ բանվորներ, գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ, ուսանողություն և այլն: Նրանց մեջ էին նաև բարձրաստիճան պաշտոնյաներ, պառլամենտի անդամներ և այլն: Կամավոր ցուցակագրված պառլամենտի անդամները պառլամենտի նիստին մասնակցում էին զինվորական համազգեստով[273]: Կամավորների ցուցակագրումը կատարվում էր գիշեր ու ցերեկ: Արդեն մայիսի 24-ին նրանց թիվը հասավ մի քանի հազարի[274]: Բացի այդ, այն սիրիացիները, որոնք ծառայում էին ֆրանսիական բանակում, փախչում և միանում էին կամավորներին՝ սիրիական ազգային բանակին[275]:

Սիրիական կառավարությունը հարկ համարեց ամրապնդել նաև ոստիկանական ուժերը, որոնք տվյալ պահին երկրում փաստորեն միակ զինված ուժերն էին[276]:

Սիրիական ժողովրդի զինված պայքարը ֆրանսիական իմպերիալիստների դեմ: Կառավարական այս պաշտոնական քայլերին զուգընթաց, ի պաշտպանություն հայրենիքի և նրա ազատության ու անկախության, ոտքի ելան Սիրիայի ժողովրդական զանգվածները, բոլոր ազգային-ազատագրական, դեմոկրատական ու հայրենասիրական ուժերը: Երկրում ծայր առան ցույցեր, գործադուլներ ու հակաֆրանսիական ելույթներ[277]: Դրանք սկսվեցին մայիսի

---

271 Նույն տեղում:

272 Նույն տեղում:

273 Նույն տեղում, թ. 15:

274 Նույն տեղում:

275 *В. Луцкий*, Проблема Сирии и Ливана, стр. 13.

276 *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 13.

277 ٤٧ ص ،"الوطني" اربع سنوات من العهد.

19-ից, երբ սիրիական հասարակայնությանը հայտնի դարձավ ֆրանսիական հուշագրի բովանդակությունը և սիրիական կառավարության նրան տված պատասխանը։ Այդ օրը բազմամարդ ցույց տեղի ունեցավ Դամասկոսում։ Ֆրանսիական զորքերը կրակ բացեցին ցուցարարների վրա[278]։ Ցուցարարները դիմադրեցին ֆրանսիացիներին։ Հրկիզեցին ֆրանսիական երկու ավտոմեքենա։ Այդ ընդհարումների ժամանակ վիրավորվեց 10 մարդ[279]։

Դամասկոսի դեպքերը և ֆրանսիացիների վայրագությունները ցնցեցին ամբողջ երկիրը։ Հաջորդ օրը, մայիսի 20-ին, ամբողջ Սիրիայում հայտարարվեց ընդհանուր գործադուլ[280]։ Ամենուր փակվեցին խանութները և շուկաները։ Մայիսի 20-ին արյունալի ընդհարում տեղի ունեցավ Հալեպում, որի ժամանակ զոհվեց ֆրանսիական երեք զինվոր[281]։ Հակաֆրանսիական ելույթը ճնշելու համար ֆրանսիական զինվորական իշխանությունները Հալեպ մտցրին զրահամեքենաներ, որոնք փողոցները ցուցարարներից մաքրում էին կրակելով[282]։ Ֆրանսիական այդ «մաքրման» հետեվանքով սպանվեց 8 և վիրավորվեց 25 սիրիացի։ Հալեպում ֆրանսիացիները զորքերի պարեկություն սահմանեցին։ Սակայն դա չընկճեց հալեպցիների ֆրանսիական գաղութային լուծը վերջնականապես տապալելու կամքը։ Տարբեր քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների, ինչպես նաև տարբեր կրոնական համայնքների ներկայացուցիչները համատեղ ժողով գումարեցին, որտեղ միաձայն հետևյալ որոշումն ընդունվեց. «ի նկատի ունենալով մեր երկրում արտոնյալ վիճակի հասնելու Ֆրանսիայի փորձերը, որը սահմանափակում է մեր անկախությունն ու ազատությունը, Հալեպի կազմակերպությունները, որոնք ներկայացնում են բնակչության բոլոր խավերը, իրենց բողոքն են հայտնում ընդդեմ այդ փորձերի»[283]։ Հալեպի այդ իրադարձությունների ժամանակ արաբ հայրենասերների կողքին կանգնած էին նաև հայ դեմոկրատական ուժերը։ Նրանք Սիրիան համարելով իրենց երկրորդ հայրենիքը, զենքը ձեռքերին պաշտպանում էին Սիրիայի ազատությունն ու անկախությունը։ Նրանց բռնած այդ

---

278 *В. Луцкий*, Проблема Сирии и Ливана, стр. 13.
279 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 4416, л. 116.
280 *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 138.
281 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 4416, л. 112.
282 *N. Ziadeh*, Syria and Lebanon, p. 82.
283 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 4416, л. 145.

հայրենասիրական դիրքը շատ բարձր գնահատեց Հալեպի նահանգապետ Իհսան Շարաֆը։ 1945 թ. մայիսի 21-ին ընդունելով հայ պատվիրակներին՝ նա «իր խորին գոհունակությունը հայտնեց հայերին՝ վերջին դեպքերի առթիվ որդեգրած ընթացքի համար»[284]։ Հայերը նման դիրք բռնեցին նաև Դամասկոսում։ Այստեղ Տոհմունի սրբազանի նախագահությամբ տեղի ունեցավ Դամասկոսի թեմական և քաղաքական խառը ժողովի հատուկ նիստ, քննելու համար ֆրանսիական իմպերիալիստների գործողությունների հետեվանքով ստեղծված կացությունը։ Բազմաթիվ ելույթներից հետո այդ նիստը որոշեց պաշտոնապես հայտարարել, որ «սիրիահայ ժողովուրդը որպես սիրիական քաղաքացի, գիտակից իր պարտականությանը, իր բովանդակ գործակցությունն ու զոհողությունները կբերե հասարակաց դատին, բոլոր սիրիացիների կողքին»[285]։ Սիրիայի հայերի գրաված այս միակ ճիշտ դիրքը նպաստում էր Սիրիայի ներքին կոնսոլիդացիային, ազգային-ազատագրական ուժերի ամրապնդմանը և բարեկամության ուժեղացմանը հայերի ու արաբների միջև։

Ֆրանսիական գաղութարարների բռնությունները իրենց նպատակին չհասան։ Սիրիան չհանդարտվեց։ Ընդհանուր գործադուլը և ցույցերը շարունակվում էին։ «Սաուե ալ-Շաաբ» թերթը գրում էր, որ Դամասկոսի բոլոր մասերում ցույցեր են տեղի ունենում[286]։ Ցուցարարները կառավարության շենքի առջև միտինգ կազմակերպեցին, որի ժամանակ ելույթ ունեցողները պաշտպանում էին սիրիական կառավարության դիրքը։ Նրանց առջև հանդես եկավ պրեմիեր-մինիստրը, որը կառավարության անունից շնորհակալություն հայտնեց սիրիական ժողովրդին հայրենիքը պաշտպանելու նրա պատրաստակամության համար[287]։

Ցույցերն ու հակաֆրանսիական ելույթները Դամասկոսից ու Հալեպից տարածվեցին Սիրիայի մյուս վայրերը՝ Հոմս, Համա, Դեյր էզ-Զոր և այլն։ Մայիսի 27-ին ֆրանսիացիները ռմբակոծեցին Համան, որտեղ սկսվեցին փողոցային մարտեր։ Սիրիական ժանդարմերիան ամեն կերպ դիմադրություն էր ցույց տալիս ֆրանսիական կանոնավոր զորքերին և ձգտում իր ձեռքում պահել

---

284 «Զարթոնք», Բեյրութ, 26.V.1945։

285 Նույն տեղում։

286 «Սաուե աշ-Շաաբ», 25.V.1945։

287 Նույն տեղում։

երկաթուղային կայարանը[288]։ Համայում հրապարակվեց «Պատերազմական դեկլարացիա»՝ ուղղված Ֆրանսիայի դեմ։ Այդ դեկլարացիայից հետո, մի քանի օր Համայի քաղաքագլուխը «ռազմական կոմյունիկե» էր հրապարակում, որտեղ տրվում էր պատերազմական գործողությունների ամփոփագիր[289]։ Ֆրանսիացիները ռմբակոծում են քաղաքը։ Զայրացած Համայի բնակչությունը հարձակվում է ֆրանսիական կայազորի վրա[290]։ Ֆրանսիացիները ստիպված օժանդակ ուժեր՝ հատկապես տանկեր են բերում Հոմսից և ուժեղացնում տեղական կայազորը[291]։

Մայիսի 27-ին հակաֆրանսիական ցույց է սկսվում նաև Հոմսում, որը շուտով վեր է ածվում իսկական ապստամբության։ Փողոցներում բարիկադներ են կանգնեցվում։ Զինված բնակչությունը հարձակվում է ֆրանսիական իշխանությունների գրասենյակի շենքի վրա։ Նրանք հարձակվում են նաև ֆրանսիական մի ռազմական դումարտակի վրա[292]։

Ֆրանսիական գաղութարարների դեմ ծավալված այս հակաիմպերիալիստական պայքարի մեջ հատկապես պետք է նշել Ջեբել Դրուզում տեղի ունեցած ապստամբական ելույթները։ Այստեղ ապստամբները Սուլթան Աթրաշի գլխավորությամբ իսկական մարտեր սկսեցին ֆրանսիական զորքերի դեմ[293]։ Ազգայնական ուժերը գերի վերցրին Ջեբել Դրուզում գտնվող ֆրանսիական բոլոր սպաներին[294] և Ջեբել քաղաքը լրիվ ազատեցին ֆրանսիացիներից[295]։ Ֆրանսիական բանակում գտնվող մոտ 2000 դրուզցի զինվորներ իրենց զենքերով, ռազմամթերքով և մի քանի զրահամեքենաներով անցան ապստամբների կողմը։ Քաղաքի բոլոր ձեռնարկություններն վրա բարձրացվեցին սիրիական ազգային դրոշներ[296]։

Սիրիական հայրենասերները նման հաջողությունների հասան նաև Դեյր էզ-Զորում։ Մայիսի 31-ին սիրիական 15000 հայրենա-

---

[288] *N. Ziadeh*, Syria and Lebanon, p. 83.

[289] *C. Hollingworth*, The arabs and the West.

[290] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 24, д. 126, л. 66.

[291] *Նույն տեղում, թթ. 66—67։*

[292] *Նույն տեղում, ց. 1, գ. 4116, թ. 171։*

[293] *Նույն տեղում, թ. 285։*

[294] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 140.

[295] منير تقى الدين، الجلاء، ص ١٢٥

[296] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 4416, л. 285.

սերները գրավեցին Դեյր էզ-Զորի բոլոր շրջանները[297]: Նոր ու կարևոր հաղթանակ են ձեռք բերում նաև Հալեպի ընդդիմադիր ուժերը: Նրանց ճնշման տակ ֆրանսիական զորքերը թողնում են Հալեպի հայտնի ամրոցը, որը գրավում են սիրիական ժանդարմերիայի ուժերը[298]:

Ինչպես տեսնում ենք սիրիական հողը այրվում էր ֆրանսիական գաղութարարների ոտքի տակ:

Սակայն ամենադլխավոր և արյունոտ ու ցավալի իրադարձությունները տեղի ունեցան Սիրիայի մայրաքաղաքում՝ Դամասկոսում: Ֆրանսիան տեսնելով, որ Սիրիայի տարբեր մասերում փաստորեն ապստամբություն է բռնկվել և պատերազմական գործողություններ են գնում ապստամբների և ֆրանսիական զինված ուժերի միջև, հասկացավ, որ դրվում է Ֆրանսիային Սիրիայից վերջնականապես դուրս մղելու հարցը: Ուստի որոշեց վճռական ճակատամարտ տալ Դամասկոսում, հույս ունենալով, որ ապստամբների պարտությունը մայրաքաղաքում հուսահատեցնող ազդեցություն կունենա մյուս շրջանների հայրենասիրական ուժերի վրա և վերջին հաշվով կհանգեցնի Սիրիայի ազգային-աղատագրական ուժերի պարտությանը: Ֆրանսիական ռազմական ուժերը 1945 թ. մայիսի 29-ի երեկոյան ժամը 6.50 րոպեին սկսեցին Դամասկոսի ռմբակոծումը[299]: Քաղաքի գնդակոծումը կատարվում էր զենքի բոլոր տեսակներից՝ ավտոմատներից, գնդացիրներից, ականանետներից և ծանր հրետանուց[300]: Սրան շուտով միացավ նաև ավիացիան[301]: Ֆրանսիական ինքնաթիռները ռմբակոծում էին Դամասկոսի բերդը և մյուս կարևոր շրջանները: Շուտով քաղաք մտան նաև ֆրանսիական տանկերն ու զրահամեքենաները: Հրետանային ռմբակոծումը կատարվում էր կանոնավոր կերպով, որի հետևանքով շատ տներ ու հասարակական հիմնարկներ, ինչպես նաև քաղաքի ամենահինավուրց մզկիթներից մեկը հիմնահատակ քանդվեցին: Քաղաք մտած ֆրանսիական զորքերը շարժվում էին երեք ուղղությամբ: Առաջին խումբը շարժվեց դեպի քաղաքապետարան, նպատակ ունենալով գրավել այն: Այստեղ կատաղի մարտեր տեղի ունեցան շենքը պաշտպանող սիրիական ժանդարմե-

---

297 «Ջարթոնք», 1.VI.1945:

298 Նույն տեղում, 30.V.1945:

299 G. Haddad, Fifty years of modern Syria and Lebanon, p. 99.

300 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 24, д. 126, л. 69.

301 منير تقى الدين، احلاء، ص ١٢٤

բրալի և ֆրանսիական ուժերի միջև[302]։ Ֆրանսիացիները վերջի-վերջո գրավեցին շենքը և թալանեցին այն բոլորը, ինչ կար այն-տեղ[303]։

Մյուս խումբը շարժվեց դեպի պառլամենտի շենքը։ Նրանք գրավեցին այն և հաշվեհարդար տեսան շենքը պաշտպանողների հետ։ Ֆրանսիացիների գործողությունների հետևանքով շենքի մի մասը փլվեց[304]։

Իսկ ֆրանսիական երրորդ զորախումբը շարժվեց դեպի Սահաթ ալ-Շուհադա՝ Զոհված մարտիկների հրապարակը, նպատակ ունենալով գրավել այն և հսկողություն սահմանել շրջակա տերիտորիայի վրա[305]։

Քաղաքի ռմբակոծումը շարունակվում էր երկու օր անընդհատ։ Տանկերն ու զինվորները լցվել էին փողոցները։ Ֆրանսիական զինվորները անկանոն կրակ էին բացում և սպանում ով հանդիպում էր։ Հիվանդանոցներում այլևս տեղ չկար, այնքան որ շատ էին վիրավորները։ Զինվորները իրենց գրաված վայրերում, սպանների թողտվությամբ, կողոպտում և թալանում էին խանութները[306]։

Դամասկոսի բնակչությունը և ժանդարմերիան չընկրկեց ֆրանսիական այս տմարդի հարձակման առջև։ Նրանց մեջ ցասումն էր խոսում և նրանք ուժեղ դիմադրություն են կազմակերպում ֆրանսիական հրոսակների դեմ։ Նրանք հարձակվում են ֆրանսիական կոմիսարիատի շենքի վրա, պաշարում այն և պաշտպանող զորքին ստիպում անձնատուր լինել[307]։ Ոչ մի տուն, ոչ մի փողոց և ոչ մի թաղամաս ֆրանսիացիներին չէր հաջողվում գրավել առանց դիմադրության և զոհերի։ Այդ օրերին՝ մայիսի 29-ից 31-ը, Դամասկոսը պաշարված քաղաք էր։ Շատ շենքեր և հաստատություններ, շրջապատված ավազի պարկերով, «յուրատեսակ ամրությունների էին նմանվում»[308]։ Պայքարի էին ելել բոլորը, թե՛ մեծ, թե՛ փոքր, ով կարող էր զենք կրել, արաբը և հայը, մահմեդականն ու քրիստոնյան։ Դա մի համաժողովրդական ելույթ էր, ուղղված

---

302 *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 139.

303 *Նույն տեղում։*

304 *G. Haddad*, Fifty years of modern Syria and Lebanon, p. 99.

305 *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 139.

306 *Նույն տեղում, էջ 140։*

307 منير تقى الدين، الجلاء، ص ١٢٥

308 *«Զարթոնք», 31.V.1945։*

ֆրանսիական գաղութարարների դեմ՝ որտեղ արաբների կողքին մարտնչում էին չերքեզները, հայերը և այլն։ Չերքեզները մեծ ցույց են կազմակերպում ի պաշտպանություն Սիրիայի անկախության[309]։ Իսկ հայերը այդ ճգնաժամի ծանր օրերին իրենց դնում են սիրիական հայրենասիրական ուժերի տրամադրության տակ։ Դամասկոսի կաթողիկոսական փոխանորդ արքեպիսկոպոս Տոհմունին երկու քահանաների ուղեկցությամբ մայիսի 30-ին, այսինքն Դամասկոսի և Սիրիայի ամենատագնապալի օրերին, այցելեց Սիրիայի ներքին գործերի մինիստր Թակրի Ասալիին և պառլամենտի 5 անդամների ներկայությամբ հայտարարեց, որ «ինքը և իր հոտը, իբրև հավատարիմ ու հարազատ սիրիացիներ, պատրաստ են ծառայելու երկրի շահերին, հանձն առնելով ամեն տեսակ զոհողություններ»[310]։ Այնուհետև հայ արքեպիսկոպոսը նրանց տեղյակ է պահում, որ հայերը պատրաստ են մտնել սիրիական ռազմական ուժերի մեջ և որ «ինքը՝ իբրև 65 տարեկան մի հովիվ, պատրաստ է հայերի առջևից երթալու, այդ երկրի շահերի պաշտպանության և պահպանման համար կազմված ու կազմվելիք ուժերի մեջ»[311]։ Տոհմունին ներքին գործերի մինիստրից խնդրում է, որ նա հայերի դիրքի մասին հայտնի պրեզիդենտին և կառավարությանը։ Ներքին գործերի մինիստրը և պառլամենտի անդամները մեծ գոհունակությամբ են ընդունում Տոհմունու այս հայտարարությունը և նշում, որ «իրենք լավ են ճանաչում հայ եպիսկոպոսին և հայերին՝ իբրև երկրի հարազատ հպատակների ու չեն կասկածում երբեք նրանց հավատարմության վրա»[312]։

Հայերի գրաված այդ դիրքը շատ բարձր է գնահատում նաև արաբ պատմաբան Ա. Հաուրանին, որը նշում է, որ 1945 թվականի ֆրանսիական ճգնաժամի օրերին հայերն իրենց բախտը կապեցին Սիրիայի հետ և պաշտպանեցին սիրիական ազգային ուժերին, դիմադրելով իրենց սիրիացիների դեմ օգտագործելու ֆրանսիական իշխանությունների բոլոր փորձերին[313]։

Հայերը կամավորագրվում են սիրիական բանակին։ Նրանց մեջ էր նաև Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցության ականավոր գործիչ Հ. Մատեյանը[314]։ Իսկ Հալեպի հայ Առաջ-

309 Նույն տեղում, 29.V.1945։
310 Նույն տեղում, 31.V.1945։
311 Նույն տեղում։
312 Նույն տեղում։
313 A. Hourani, Minorities in the arab world, London, 1947, p. 84.
314 «Ժողովուրդի ձայն», 21.V.1945։

նորդը դիմում է ֆրանսիական բանակում ծառայող հայ զինվորներին և պաշտոնյաներին, կոչ անելով նրանց հրաժարվել ծառայել ֆրանսիական բանակում և անմիջապես մտնել սիրիական ազգային ուժերի մեջ[315]։

Եվ այսպես, երեք օր անընդհատ Դամասկոսում կատաղի մարտեր էին գնում, քաղաքը գտնվում էր կրակի ու բոցերի մեջ և երկուստեք արյուն էր հոսում։ Այդ իրադարձությունների ժամանակ պաշտոնական տվյալներով Դամասկոսում զոհվեց 400, ծանր վիրավորվեց 500, իսկ թեթև վիրավորվեց 1000 մարդ, անհայտ կորել էին 120 ժանդարմ[316]։

Ինչպես նշել ենք, արդեն նման վիճակ էր տիրում նաև Սիրիայի մյուս վայրերում՝ Հալեպում, Հոմսում, Համայում, Ջեբել Դրուզում, Դեյր էզ-Զորում, Կամիշլիում և այլն։ Հոմսում սպանվել էր 10 և վիրավորվել 40 մարդ, իսկ Համայում՝ սպանվել 50 և վիրավորվել 200 մարդ[317]։ Հավանաբար այս դրությունը երկար կշարունակվեր, եթե կոնֆլիկտին չմիջամտեին արտաքին ուժեր։

Մեծ տերությունների դիրքը ֆրանսիական ագրեսիվ գործողությունների նկատմամբ։ Սիրիական արյունոտ իրադարձությունները հայտնի դարձան համաշխարհային հասարակայնությանը։ Ամբողջ աշխարհի առաջադեմ ուժերը դատապարտում էին Ֆրանսիայի վարքագիծը և իրենց ձայնը բարձրացնում ի պաշտպանություն Սիրիայի։ Ֆրանսիայի ագրեսիվ գործողությունների դեմ հանդես եկան Եգիպտոսը, Իրաքը, Լիբանանը և արաբական մյուս երկրները։ Սակայն ամենաակտիվը և վճռականը գործեց Անգլիան։ 1945 թ. մայիսի 31-ին Անգլիայի արտաքին գործերի մինիստր Իդենը հանդես գալով համայնքների պալատում Սիրիայի կացությունը բնութագրեց, որպես «շատ լուրջ»[318]։ Այնուհետև նա հայտարարեց, որ բրիտանական կառավարությունը եկել է այն եզրակացության, որ այլևս չի կարող մի կողմ մնալ և որոշել է միջամտել ֆրանս-սիրիական կոնֆլիկտին[319]։ Անգլիան այդ քայլին դիմում էր Սիրիայում կարգ ու կանոնը վերականգնելու և արյունը դադարեցնելու անվան տակ[320]։ Անգլիայի պրեմիեր-մինիստր Ու.

---

315 «Ան-Նասր», 29.VI.1945։

316 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 2, д. 815, л. 141.

317 Նույն տեղում։

318 Նույն տեղում, գ. 126, թ. 63։

319 Նույն տեղում։

320 Նույն տեղում։

Չերչիլը 1945 թ. մայիսի 31-ի ցերեկը մի նոտա հղեց Ֆրանսիայի պրեզիդենտ Շարլ դը Գոլլին։ Այնտեղ ասված էր. քանի որ Սիրիայում այժմ կատաղի մարտեր են գնում և արյուն է հոսում, Մեծ Բրիտանիայի կառավարությունը հարկադրված է հրամայել տալ Մերձավոր Արևելքում իր ռազմական ուժերին, վերջ տալու պատերազմական գործողություններին և արյունահեղությանը[321]։ Եվ «որպեսզի անգլիական ու ֆրանսիական ուժերի միջև ընդհարում և արյունահեղություն թույլ չտրվի,—ասված էր այդ նույն նոտայում,—ես խնդրում եմ Ձեզ հրամայել Ձեր զորքերին դադարեցնել ռազմական գործողությունները և անհապաղ վերադառնալ իրենց զորանոցները։ Հակառակ դեպքում համապատասխան միջոցառումները կստիպեն նրանց այնտեղ վերադառնալու»[322]։ Ինչպես տեսնում ենք, այս նոտայի լեզուն բավականին խիստ էր։ Դա բացատրվում է նրանով, որ անգլիական ուժերը Մերձավոր Արևվելքում մի քանի անգամ գերազանցում էին ֆրանսիական ուժերին։ Այդ բանը լավ էր գիտակցում ինքը՝ դը Գոլլը։ Ուստի և նրան ոչինչ չէր մնում անել, քան ստամները սեղմած լրիվ ենթարկվել անգլիական նոտայում առաջ քաշված պահանջներին։ 1945 թ. մայիսի 31-ին, անգլիական նոտան ստանալուց հետո, դը Գոլլի հրամանով Դամասկոսում և ամբողջ Սիրիայում դադարեցվեց կրակը, և ֆրանսիական զորքերը Դամասկոսից ու մի շարք այլ վայրերից դուրս բերվեցին։ Նրանց տեղը գրավեցին անգլիական զորքերը, որոնք արդեն մայիսի 31-ին երեկոյան մտան Սիրիայի մայրաքաղաքը։ Այնուհետև անգլիական տանկերն ու զրահամեքենաները դիրքեր գրավեցին ֆրանսիական զորանոցների շուրջը[323], որպեսզի կանխեն որևէ անակնկալ։

Դրանից հետո երկրում կարգը կամաց-կամաց վերականգնվեց և ամեն ինչ մտավ իր հունի մեջ։

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ինչո՞վ է բացատրվում անգլիական այդքան ակտիվ ու վճռական միջամտությունը և ինչպիսի՞ դիրք էին գրավել ՍՍՀՄ-ը, ԱՄՆ-ը և մյուս տերությունները սիրիական ճգնաժամի օրերին։

Անգլիան իր միջամտությունը պաշտոնապես հիմնավորում էր, ինչպես ասված է Չերչիլի մայիսի 31-ի նոտայում, Սիրիայում

---

321 *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 141.

322 Նույն տեղում։

323 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 24, д. 126, л. 59.

և Լիբանանում անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությամբ, որոնց տերիտորիայի վրայով էր կատարվում զորքերի տեղափոխումը դեպի Ճապոնիա[324]։ Այլ կերպ ասած, նա ժխտում էր Սիրիայում և Լիբանանում հատուկ շահեր ու նպատակներ ունենալու հանգամանքը և Ֆրանսիային այնտեղից դուրս մղելու իր մտադրությունները։ Անգլիան փորձում էր երևալ անշահախնդիր կողմ, որին իբր միայն Ճապոնիայի դեմ պատերազմ մղելու հարցն է անհանգստացնում։ Այս տեսակետը, իհարկե, չի համապատասխանում իրականությանը։ Չերչիլը, որը քիչ բան չէր արել Բրիտանական կայսրության ամրապնդման ու հզորացման համար, թաքցնում էր իսկությունը։ Իրականում Մեծ Բրիտանիայի այդքան խիստ ու կտրուկ միջամտությունը արդյունք էր նրա այն քաղաքականության, որի նպատակն էր թույլ չտալ Ֆրանսիային իր դիրքերն ամրապնդել Սիրիայում և Լիբանանում, դուրս մղել բոլոր պետություններին, այդ թվում նաև Ֆրանսիային Մերձավոր Արևելքից և այնտեղ հաստատել իր անբաժան ու անվիճելի տիրապետությունը։

Իսկ ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա նա նույնպես հանդես եկավ հօգուտ կրակի դադարեցման։ Չերչիլի 1945 թ. մայիսի 31-ի նոտան Ֆրանսիային նախօրոք համաձայնեցված էր ԱՄՆ-ի պրեզիդենտ Հ. Տրումենի հետ[325]։ Ամերիկյան կառավարությունը տեղյակ պահեց Ֆրանսիայի կառավարությանը, որ լենդ-լիզով նրան տրված զենքը նախատեսված է օգտագործել առանցքի երկրների դեմ և այդ զենքը նա իրավունք չունի օգտագործել Սիրիայում[326]։ ԱՄՆ-ի այդ դիրքը պետք է բացատրել հիմնականում նրանով, որ նրան ձեռնտու չէր, որ Ֆրանսիան ճնշի Սիրիայի ազգային ուժերին և այնտեղ կրկին հաստատի իր անսահմանափակ տիրապետությունը։ Պատերազմից ԱՄՆ-ը դուրս էր եկել ուժեղացած և այդ բանը ամերիկյան կառավարությունը քաջ գիտակցում էր։ ԱՄՆ-ին ձեռնտու չէր պահել աշխարհի քարտեզն այնպես, ինչպես գոյություն ուներ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը։ Հայտնի է, որ մինչ այդ գաղութային աշխարհը գլխավորապես բաժանված էր Անգլիայի ու Ֆրանսիայի միջև։ ԱՄՆ-ը այլևս չէր կարող հանդուրժել այդպիսի վիճակ, որովհետև ուժը

---

[324] *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 141.

[325] *G. Haddad*, Fifty years of modern Syria and Lebanon, p. 100.

[326] *N. Ziadeh*, Syria and Lebanon, p. 85.

այժմ իր կողմն էր։ Ամերիկյան իմպերիալիզմը շատ հեռուն գնացող ծրագրեր ուներ Մերձավոր ու Միջին Արևելքի նկատմամբ, ինքն էր ձգտում այնտեղ հաստատել իր ռազմա-քաղաքական և տնտեսական տիրապետությունը։ Իսկ դրա համար պետք էր դուրս մղել Ֆրանսիային ու Անգլիային։ Տվյալ դեպքում մանդատային ռեժիմի վերացումը և խոսքով Սիրիայի ու մյուս երկրների անկախության պաշտպանությունը լավագույն ձևն էր դասական գաղութատեր պետությունների դիրքերը թուլացնելու համար։ Բացի այդ, ամերիկյան իմպերիալիզմը այն հույսն էր փայփայում, որ հենվելով իր տնտեսական ու ռազմա-քաղաքական հզորության վրա կկարողանա Սիրիային և մյուս ազատագրված երկրներին տնտեսական ու քաղաքական կախման մեջ գցել իրենից։

Ֆրանսիայի բարբարոսական գործողությունները խոր զայրույթ առաջացրին սովետական մարդկանց մոտ։ Նրանք պահանջում էին դադարեցնել արյունահեղությունը Սիրիայում և ճանաչել վերջինիս օրինական իրավունքները։ Նրանց այդ պահանջն իր արտացոլումը գտավ սովետական կառավարության 1945 թ. հունիսի 1-ի նոտայում՝ ուղղված Ֆրանսիայի կառավարությանը։ Այդ նոտայում, որ Փարիզում սովետական դեսպան Բոգոլյուբովը հանձնեց Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Ժ. Բիդոյին, ասված էր, որ Սիրիայում Ֆրանսիայի գործողությունները հակասում են ՄԱԿ-ի ոգուն և որոշումներին[327]։ «Այդ պատճառով էլ,— նշվում էր սովետական նոտայում,—Սովետական կառավարությունը գտնում է, որ պետք է անհապաղ միջոցներ ձեռք առնվեն, որպեսզի դադարեցվեն ռազմական գործողությունները Սիրիայում և Լիբանանում և ծագած կոնֆլիկտը հարթել խաղաղ ճանապարհով»[328]։ Սովետական կառավարությունը համանման նոտաներ ուղարկեց նաև Անգլիայի, ԱՄՆ-ի և Չինաստանի կառավարություններին։

Սովետական կառավարության այս պարզ ու հստակ դիրքը, անշուշտ, իր ազդեցությունն ունեցավ ֆրանս-սիրիական կոնֆլիկտի լուծման գործում։ Նրա անկեղծ ու անշահախնդիր դիրքը բարձր գնահատվեց Սիրիայի և արաբական մյուս երկրների հասարակայնության կողմից։ Դա իր արտահայտությունը գտավ նաև Արաբական Լիգայի 1945 թ. հունիսի 4-ի նիստում ընդունված բանաձևում,

---

[327] «СССР и арабские страны. Документы и материалы», стр. 86.

[328] Նույն տեղում, էջ 87։

որը քննարկելով սիրիա-ֆրանսիական կոնֆլիկտը, իր համերաշխությունը հայտնեց Սիրիային ու Լիբանանին, դատապարտեց Ֆրանսիային և շնորհակալություն հայտնեց Սովետական Միությանն ու այն բոլոր երկրներին ու ժողովուրդներին, որոնք աջակցեցին այդ կոնֆլիկտի լուծմանը։

Հատուկ զորամասերի փոխանցումը Սիրիային։ Սիրիայի ազգային ուժերի և համաշխարհային հասարակայնության ճնշման ներքո հարկադրված լինելով դադարեցնել կրակը և իր զորքերը տանել զորանոցներ, Ֆրանսիան, դրանով իսկ ընդունեց իր առաջարկների անիրականանալի լինելու հանգամանքը։ Նվ որոշ ժամանակ անց, 1945 թ. հուլիսի 8-ին, նա պաշտոնապես հայտնեց, որ համաձայն է հատուկ զորամասերը 45 օրվա ընթացքում փոխանցել Սիրիային ու Լիբանանին։ Այդ առթիվ Սիրիայի և Լիբանանի կառավարությունների 1945 թ. հուլիսի 10-ի համատեղ հայտարարության մեջ ասվում էր, որ նրանք մեծ գոհունակությամբ են ընդունում ֆրանսիական դեկլարացիան զորքերի փոխանցման վերաբերյալ և այդ նպատակով ստեղծում են տեխնիկական հանձնաժողով[329]։ Հուլիսի 20-ին ավարտվեցին նախապատրաստական բոլոր աշխատանքները և սկսվեց զորքերի փոխանցումը, որը քիչ անց լրիվ ավարտվեց[330]։

Այսպիսով, Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների համատեղ երկար պայքարը ազգային բանակ ստեղծելու համար նույնպես պսակվեց մեծ հաղթանակով։

Սիրիայում մայիսի 19-ին սկսված դեպքերը և հատկապես Դամասկոսի նորյա արյունալի իրադարձությունները ազգային մեծ ճակատամարտ էր հանուն Սիրիայի լրիվ անկախության և գերիշխանության։ Դամասկոսի ռմբակոծումը, ինչպես պատկերավոր նշված է արաբ մի խումբ հեղինակների գրչին պատկանող «Սիրիա» գրքում, հանդիսացավ Սիրիայում ֆրանսիական տիրապետության մահվան ղողանջը[331]։ Մայիսյան իրադարձությունները Սիրիայի ազգային-ազատագրական պայքարի ամենապայծառ էջերից են և նրանք անգնահատելի ծառայություն մատուցեցին Սիրիայի անկախության ամբողջականացման գործին։ Հատուկ զորամասերի հանձնումը Սիրիային ինքնին մեծ նվաճում էր։ Մենք

---

[329] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 4418, л. 49.
[330] *N. Ziadeh*, Syria and Lebanon, p. 88.
[331] „Syria. Geography and history", p. 168.

արդեն նշել ենք, որ հատուկ զորամասերի գոյությունը ֆրանսիական ռազմական հրամանատարության ներքո, մանդատային սիստեմի արդյունքն էր, նրա բաղկացուցիչ մասը։ Այժմ Ֆրանսիան մանդատով իրեն տրված այդ իրավունքից էլ հարկադրված հրաժարվում էր։ Եվ եթե ի նկատի ունենանք, որ երկրի կառավարման ֆունկցիաները, այսինքն մանդատով Ֆրանսիային տրված իրավունքները արդեն փոխանցվել էին Սիրիայի և Լիբանանի կառավարություններին, ապա հասկանալի կդառնա, որ բանակի փոխանցումով ֆրանսիական մանդատին ըստ էության վերջ էր տրվում։ Սա այնպիսի պատմական նվաճում է, որ արժանի է ամենաբարձր գնահատականի։ Իրավացի է ալ-Արմանազին, երբ նշում է, որ ֆրանսիական իմպերիալիստները սանձազերծելով մայիսյան արյունոտ դեպքերը, հույս ունեին կոտրել սիրիացիների դիմադրությունը, բայց ստացվեց հակառակը. վերջ տրվեց ֆրանսիական օկուպացմանը, որը սկսվել էր 1920 թ.[332]։

Մայիսյան դեպքերի ամենաթեժ օրերին էր, որ առաջ քաշվեց նաև մեկ ուրիշ շատ կարևոր հարց՝ օտար բոլոր ուժերի էվակուացման հարցը։

Այսպիսով, Սիրիայի ազգային-ազատագրական ուժերը 1941—1945 թթ. մեծ ու պատմական նվաճումներ ձեռք բերեցին Սիրիայի քաղաքական անկախության նվաճման գործում. ստեղծվեց ազգային կառավարություն, սահմանադրությունից վերացվեց ֆրանսիական մանդատին վերաբերող հոդվածը և սիրիական կառավարությանը փոխանցվեցին մանդատային իշխանությունների իրավասությանը պատկանող կառավարման ֆունկցիաները, այդ թվում նաև հատուկ զորամասերը։

Սիրիայի այս նոր ստատուսը լայն ճանաչում գտավ միջազգային ասպարեզում։ Սիրիան և Լիբանանը 1945 թ. ապրիլի 12-ին ընտրվեցին Միավորված Ազգերի կազմակերպության անդամ։ ՄԱԿ-ի անդամ ընտրվելուն նախորդեց մի կարևոր իրադարձություն՝ 1945 թ. փետրվարին Սիրիայի կառավարությունը պատերազմ հայտարարեց ֆաշիստական Գերմանիային ու միլիտարիստական Ճապոնիային[333]։ Դրանով նա իր համեստ լուման էր ներդնում դաշնակիցների վերջին ճիգերին։

Ֆրանսիական և Անգլիական զորքերը Սիրիայից դուրս բերե-

---

[332] نجيب الارمنازى، محاضرات عن سوريا، ص ١٦٥

[333] «Современная Сирия», стр. 155.

յու պաճանջի առաջադրումը: Սակայն դեռևս առկախ էր մնում մի շատ կարևոր հարց, օտարերկրյա՝ֆրանսիական ու անգլիական բանակների էվակուացման հարցը: Առանց այդ զորքերի դուրս բերման խոսք չէր կարող լինել արաբական այդ երկու երկրների քաղաքական լրիվ անկախության մասին: Ահա թե ինչու ֆրանսիական և անգլիական զորքերի էվակուացման պահանջը դարձավ ավյալ էտապում Սիրիայի ազգային-ազատագրական պայքարի հիմնական բովանդակությունը:

Ինչպես նշվեց, այդ հարցն իր ամբողջությամբ դրվեց 1945 թ. մայիսյան իրադարձությունների ժամանակ: Այդ օրերին էր, 1945 թ. մայիսի 20-ի նոտայում, որ սիրիական կառավարությունը պաշտոնապես առաջ քաշեց օտար բանակների էվակուացման խնդիրը[334]: Մայիսյան և հետագա օրերին, երբ ֆրանսիական գաղութարարների անմարդկային գործողությունների հետևանքով թափվում էր սիրիական ժողովրդի արյունը, սիրիական կառավարությունը, բնականաբար, չէր կարող այդ խնդրով զբաղվել: Սակայն ռազմական գործողությունների դադարեցումից և հատուկ զորամասերը Սիրիային փոխանցելուց հետո, վերջինիս կառավարությունը սկսում է ամբողջովին զբաղվել այդ կարևոր պրոբլեմով:

Օտար բանակների հեռացումը համազգային պահանջ էր: Նա միայն մեկ դասակարգի կամ կուսակցության շահերը չէր շոշափում, այլ քաղաքական բոլոր ուժերի, Սիրիայի սոցիալական բոլոր խավերի շահերը: Նրանում շահագրգռված էին նախ և առաջ աշխատավորական մասսաները՝ բանվորները, գյուղացիները, ինչպես նաև արհեստավորներն ու առևտրականները, որովհետև դա ամրապնդեր երկրի անկախությունը և նրանք կազատվեին օտարերկրյա, գաղութային ճնշումից: Այդ պրոբլեմի լուծմամբ շահագրգռված էին նաև Սիրիայի ունևոր խավերը և շահագործողական դասակարգերը՝ ազգային բուրժուազիան և ֆեոդալ-կալվածատերերը: Նրանց ձեռքում էր այժմ կենտրոնացված քաղաքական իշխանությունը և նրանք չէին ցանկանում այդ իշխանությունը կիսել որևէ մեկի հետ: Քաղաքականապես անկախ Սիրիան լրիվ համապատասխանում էր նրանց դասակարգային շահերին: «Թե Սիրիայում և թե Լիբանանում,—գրում էր կոմունիստական պարտիայի օրգան «Սաուե աշ-Շաաբը»,—չկա մի դեպուտատ, մի թերթ, մի

---

334 ٤٧ ص "سنوات من العهد الوطني" جزء.

քաղաքական գործիչ, որ չպահանջի օտարերկրյա զորքերի էվակուացիան»[335]։

Ֆրանսիական զորքերի ներկայությունը ոչ միայն սահմանափակում էր Սիրիայի անկախությունը, այլև ընդհարումների աղբյուր էր նրանց և տեղական բնակչության միջև։ Այդպիսի ընդհարումներ սիրիական ժողովրդի ու ժանդարմերիայի և ֆրանսիական զորքերի միջև տեղի ունեցան 1945 թ. հուլիսին Բանյասում, Լաթաքիայում, Հալեպում և Կամիշլիում, իսկ սեպտեմբերին Տարտուսում և այլ վայրերում[336]։ Այս հանգամանքն իր հերթին նույնպես ուժեղացնում էր զորքերի էվակուացման պահանջի առաջադրումը։

1945 թ. հուլիսի 19-ին Սիրիայի կառավարության ղեկավար Ֆարիս ալ-Խուրին հայտարարեց, որ օտարերկրյա զորքերը, որոնց ներկայությունը Սիրիայի և Լիբանանի տերիտորիաներում չի բխում Ճապոնիայի դեմ պատերազմ մղելու անհրաժեշտությունից, պետք է դուրս բերվեն ամառվա ընթացքում[337]։ Նա ավելացրեց, որ դա չի նշանակում, թե Սիրիան Ճապոնիայի դեմ մղվող պատերազմում իր դիրքը կփոխի։ Սիրիան առաջվա նման աջակցություն ցույց կտա դաշնակիցներին։ Սակայն վերջիններիս զորքերի ներկայությունը վնաստում «այն տպավորությունն է ստեղծում, թե այդ երկրները (Սիրիան և Լիբանանը—Ն. Հ.) անկախությունից չեն օգտվում»[338]։ Ցանկանալով հեշտացնել հարցի լուծումը, Ֆարիս ալ-Խուրին միաժամանակ հայտարարեց, որ սիրիական կառավարությունը պատրաստ է փոխհատուցում տալ Ֆրանսիային այն կառուցումների համար, որ նա արել է Սիրիայում։ Այդ հարցում, նշում է պրեմիեր-մինիստրը «մենք վճռել ենք լինել արդարացի և առատաձեռն»[339]։ Սիրիայի կառավարությունն իր այս դիրքը կրկին հաստատեց օգոստոս ամսին, մի անգամ ևս հիշեցնելով, որ «զորքերի առկայությունը, որոնք ոչ մի առնչություն չունեն Հեռավոր Արևելքում մղվող պատերազմի հետ, չեն համապատասխանում Սիրիայի անկախության պայմաններին»[340]։

Սիրիական կառավարության այս դիրքը պաշտպանություն

---

335 «Саут аш-Шааб», 28.X.1945.

336 *S. Longrigg.* Syria and Lebanon under French mandate p. 253.

337 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 4418, л. 71.

338 Նույն տեղում։

339 Նույն տեղում։

340 Նույն տեղում, թ. 98։

դտավ Սիրիայի տարբեր քաղաքական ուժերի կողմից։ 1945 թ. օգոստոսի վերջերին Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունները հրապարակեցին համատեղ մանիֆեստ, որտեղ ասված էր, որ պատերազմի սկզբին անգլիական և ֆրանսիական զորքերի ժամանումը Լևանտ պաշտոնապես կարելի էր արդարացնել նրանով, որ նրանք եկան ֆաշիստական ուժերի դեմ պայքարելու համար։ Բայց «հիմա, Միավորված Ազգերի կազմակերպության ընդունած որոշումներից, Պոտսդամի կոնֆերանսի որոշումներից, Սովետական Միության կողմից Ճապոնիային պատերազմ հայտարարելուց և Ճապոնիայի կապիտուլյացիայից հետո, օտար զորքերի ներկայությունը Սիրիայի և Լիբանանի տերիտորիաներում, ոչնչով չի արդարացված»[341]։

Ինչպես նշվեց, օտար բանակներ ասելով նկատի էին առնվում թե՛ ֆրանսիական և թե՛ անգլիական ռազմական ուժերը, որոնք գտնվում էին Լևանտի երկրներում։ Առաջին հայացքից թվում էր, թե նրբ խոսվում է օտար բանակների էվակուացման մասին, ապա դա հավասարապես վերաբերում է ինչպես ֆրանսիական, այնպես էլ անգլիական բանակին։ Սակայն այս հարցում սիրիական կառավարությունը միանգամից ճիշտ ու հստակ դիրք չզրավեց։ Նա ցուցաբերեց տատանումներ և սխալ թույլ տվեց։ Դա իր արտահայտությունը գտավ այն բանում, որ սիրիական կառավարությունը դրեց միայն ֆրանսիական բանակի հեռացման հարցը։ Իսկ անգլիական զորքերը դեռևս անորոշ ժամանակով, ըստ սիրիական կառավարության, պետք է մնային Սիրիայում։ Այդ մասին 1945 թ. հոկտեմբերի 25-ի պրես-կոնֆերանսում պարզ ու հստակ հայտարարեց կրկին պրեմիեր-մինիստր դարձած Սաադուլլա ալ-Ջաբրին։ Նա նշեց, որ անգլիական զորքերը Սիրիայում գտնվում են նույն հիմունքներով, ինչ որ դաշնակից զորքերը աղատագրված Եվրոպայում և որ նրանք Սիրիայից դուրս կբերվեն «երբ կվերանա նրանց մնալու անհրաժեշտությունը, ելնելով ստրատեգիական նկատառումներից»[342]։ Նման հարցադրումից պարզ երևում է, որ սիրիական պահանջները առաջին հերթին վերաբերում էին ֆրանսիական զորքերին։

Ինչո՞վ բացատրել սիրիական կառավարության այսպիսի ոչ ճիշտ ու անհետևողական դիրքը այս կարևոր պրոբլեմի լուծման

---

341 Նույն տեղում։

342 Նույն տեղում, թ. 128։

գործում։ Այստեղ պետք է ի նկատի ունենալ երկու հանգամանք։ Նախ, հոգեբանական մոմենտը։ Սիրիան քառորդ դար ֆրանսիական ենթամանդատային տերիտորիա էր, շահագործվել և բռնության էր ենթարկվել Ֆրանսիայի կողմից։ Դեռևս բոլորի հիշողության մեջ թարմ էին մայիսյան արյունալի դեպքերը, երբ ֆրանսիական իմպերիալիստները դիմեցին բացահայտ բռնի մեթոդների ազգային-ազատագրական այդ հոյակապ ելույթը խեղդելու համար։ Այս բոլոր հանգամանքները խաղացին իրենց դերը զորքերի էվակուացման հարցի գործում։ Սիրիան ցանկանում էր առաջին հերթին ազատվել ֆրանսիական կապանքներից, նա իր թշնամին համարում էր ֆրանսիական իմպերիալիզմը։

Երկրորդ, իր որոշակի դերը խաղաց նաև Անգլիայի ազդեցության ուժեղացումը Սիրիայում։ Ինչպես արդեն նշել ենք, նրա ձեռքում էր գտնվում ռազմական ընդհանուր հրամանատարությունը։ Բացի այդ, ինչպես նշված էր Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունների 1946 թ. հունվարի միացյալ հայտարարության մեջ, անգլիացիները մարզելու պատրվակի տակ միջամտում էին սիրիական ազգային բանակի և ժանդարմերիայի գործերին[343]։ Անգլիական «փորձագետները» սկսել էին սողոսկել սիրիական հիմնարկները, իսկ «քաղաքական սպաները ցրված են ամեն կողմ, մանավանդ շրջանները, ուղղակի կամ անուղղակի միջամտում են երկրի բոլոր գործերին»[344]։

Բացի այդ Անգլիան շատ ճարպկորեն քողարկվում էր Սիրիայի լրիվ անկախության կողմնակցի անվան տակ։ Այս բոլորը իր ազդեցությունն ունեցավ Սիրիայի կառավարության դիրքի վրա։ Սակայն այդ տատանումները երկար չտևեցին։ Սիրիայի ազգային ուժերի և ժողովրդական մասսաների ճնշման տակ նա հետագայում իր գիծը ճշտեց և կանգնեց անգլիական ու ֆրանսիական զորքերը միաժամանակ երկրից դուրս բերելու տեսակետի վրա։ Նման տեսակետ ուներ նաև Լիբանանի կառավարությունը։

1945 թ. դեկտեմբերի անգլո-ֆրանսիական համաձայնագիրը։ Շուտով Սիրիայի և Լիբանանի կառավարություններին և հասարակությանը հայտնի դարձավ, որ Ֆրանսիան ու Անգլիան բանակցություններ են վարում Լևանտում գտնվող անգլո-ֆրանսիական զորքերի վերաբերյալ։ Թվում էր, թե բնական կլիներ, եթե այդ

---

[343] «Ժողովուրդի ձայն», 26.I.1946։

[344] Նույն տեղում։

բանակցություններին մասնակցեին նաև Սիրիայի և Լիբանանի ներկայացուցիչները, քանի որ խոսքը գնում էր նրանց տերիտորիայում գտնվող զորքերի մասին։ Սակայն Անգլիան ու Ֆրանսիան դեմարտասեցին այդ բանակցությունները վարել փակ դռների ետևում, առանց Սիրիայի ու Լիբանանի ներկայացուցիչների մասնակցության։

Այդպիսի քաղաքականությունը խիստ բողոք առաջացրեց Սիրիայի և Լիբանանի դեմոկրատական ու հայրենասիրական շրջաններում։ Նրանք հայտարարեցին, որ «այդ բանակցությունների հետևանքով կնքված ամեն մի պայմանագիր ոչ մի դեպքում մեզ համար պարտադիր լինել չի կարող»[345]։ Սիրիայի և Լիբանանի ազգային ուժերը գտնում էին, որ Լոնդոնն ու Փարիզը կարող են համաձայնության գալ իրենց քաղաքականության վերաբերյալ, ինչպես Արևմուտքում, այնպես էլ Լևանտում։ «Բայց մենք կարող ենք մերժել ամեն մի որոշում, որը կվնասի մեր շահերին»[346]։

Իսկ ինչու՞ անգլիացիներն ու ֆրանսիացիները չհրավիրեցին Սիրիային ու Լիբանանին մասնակցելու այդ բանակցություններին։ Դրա պատասխանը կարելի կլինի տալ, երբ ծանոթանանք կնքված պայմանագրի տեքստի հետ։

«Մերձավոր Արևելքի վերաբերյալ անգլո-ֆրանսիական համաձայնագիրը» կնքվեց 1945 թ. դեկտեմբերի 13-ին։ Այնտեղ ասված էր, որ Անգլիան ու Ֆրանսիան համաձայն են իրենց զորքերը դուրս բերել Սիրիայից ու Լիբանանից։ Սակայն «էվակուացման ծրագիրը պետք է կազմվի այնպես, որ նա ապահովի Լևանտում բավարար քանակությամբ զորքերի պահպանումը մինչև այն ժամանակ, երբ Միավորված Ազգերի կազմակերպությունը կորոշի կոլեկտիվ անվտանգություն կազմակերպել այդ գոտում»[347]։ Իսկ մինչ այդ Ֆրանսիան իր զորքերը պետք է վերախմբավորեր։ Այնուհետև համաձայնագրում ասվում էր, որ դեկտեմբերի 21-ին անգլիական և ֆրանսիական ռազմական մասնագետները կհանդիպեն և կքննարկեն մանրամասնություններ կապված զորքերի վերախմբավորման հետ[348]։

Այսպիսով, այս համաձայնագրում փաստորեն ոչ մի խոսք չէր ասվում զորքերի էվակուացման հարցի մասին։ Նա փոխարինվել

---

[345] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 4418, л. 163.

[346] Նույն տեղում։

[347] *J. Hurewitz*, „Diplomacy in the Near and Middle East", v. II, p. 258.

[348] Նույն տեղում։

էր «զորքերի վերախմբավորման» հարցով։ Մյուս կողմից Անգլիան ու Ֆրանսիան տեսականորեն ընդունելով զորքերի էվակուացման անհրաժեշտությունը, գործնականում այն կապում էին Մերձավոր Արևելքում կոլեկտիվ անվտանգության խնդրի հետ, որը իբր իրականացնելու էր ՄԱԿ-ը։ Սա մի խորամանկություն էր այդ երկու գաղութատեր պետությունների կողմից։ Էվակուացման հարցը կապել կոլեկտիվ անվտանգության կազմակերպման հետ, նշանակում էր շատ երկար ու անորոշ ժամանակով այդ զորքերը պահել Լևանտում, որովհետև այդ ժամանակ ՄԱԿ-ը ոչ միայն ձեռնամուխ չէր եղել կոլեկտիվ անվտանգության կազմակերպմանը, այլև խոսք անգամ չէր գնում նրա մասին։ Լևանտում կոլեկտիվ անվտանգությունը կազմակերպելը Ֆրանսիայի ու Անգլիայի հնարածն էր, որ մեջտեղ նետվեց, որպես պատրվակ իրենց զորքերի էվակուացիան հետաձգելու համար։

Դեկտեմբերի 13-ի համաձայնագիրը փաստորեն համաձայնագիր էր Լևանտում տիրապետելու մասին և նա վկայում էր անգլո-ֆրանսիական մերձեցման մասին ի հաշիվ Սիրիայի և Լիբանանի ազգային շահերի։ Այդ տեսակետից իրավացի է Ջ. Հուրևիցը, երբ նշում է, որ «1945 թ. դեկտեմբերի 13-ի անգլո-ֆրանսիական պայմանագիրը... ժամանակավորապես վերականգնում էր ներդաշնակությունը եվրոպական երկու պետությունների միջև»[349]։ Անգլո-ֆրանսիական մերձեցումը պետք է բացատրել արաբական երկրներում ազգային-ազատագրական պայքարի ուժեղացմամբ։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այդ պայքարը ուժեղացավ ոչ միայն Սիրիայում և Լիբանանում, այլև Եգիպտոսում, Իրաքում և այլն։ Ստեղծվում էր ճնշված ժողովուրդների յուրօրինակ ճակատ, ուղղված Անգլիայի ու Ֆրանսիայի դեմ։ Դրա հետևանքով ստեղծվեց նոր իրադրություն, որը Անգլիայից ու Ֆրանսիայից պահանջում էր միավորել իրենց ջանքերը և միասնական ճակատով հանդես գալ արաբական ժողովուրդների դեմ։ Այդ մերձեցմանը նպաստեց նաև այն հանգամանքը, որ Սիրիան ու Լիբանանը պահանջում էին ֆրանսիական զորքերի հետ միասին հեռացնել նաև անգլիական զորքերը։

Այսպիսով Անգլիային ու Ֆրանսիային միավորեց ընդհանուր վտանգը։

Պատմական գրականության մեջ գոյություն ունեն սխալ ու իրարամերժ տեսակետներ դեկտեմբերի 13-ի համաձայնագրի

---

[349] *J. Hurewitz*, „Diplomacy in the Near and Middle East", v. II, p. 257.

վերաբերյալ։ Կան հեղինակներ, որոնք չեն տեսնում այդ համաձայնագրի իմպերիալիստական բնույթը և նրա անընդունելի լինելը Սիրիայի ու Լիբանանի համար։ Այդ տեսակետի բնորոշ ներկայացուցիչն է Հ. Դեյվիսը։ Նա գրում է. «Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները Սիրիայի և Լիբանանի տերիտորիայում գտնվող անգլիական և ֆրանսիական զորքերի վերաբերյալ 1945 թ. դեկտեմբերի 13-ին համաձայնության եկան, որ այդ զորքերը Սիրիայից և Լիբանանից էվակուացիայի ենթարկեն»[350]։ Սա ճիշտ չէ։ Մենք արդեն նշեցինք, որ էվակուացումը միայն տեսականորեն էր նշվում։ Իրականում խոսքը գնում էր այդ զորքերի վերախմբավորման և նրանց Լևանտում անորոշ ժամանակով պահելու մասին։

Նման ոչ ճիշտ գնահատական է տալիս նաև Ֆ. Հիթթին, չընտեսնելով այդ համաձայնագրի իմպերիալիստական բնույթը։ Նա գրում է. «Տարվա (1945 թ.—Ն. Հ.) վերջին Ֆրանսիան և Բրիտանիան համաձայնվեցին խորհրդակցել իրենց զորքերը Սիրիայից և Լիբանանից դուրս բերելու մասին»[351]։

Այդ համաձայնագրին բոլորովին այլ և միանգամայն ճիշտ գնահատական է տալիս արաբ պատմաբան Ջ. Հադդադը։ Նա գրում է. «Անգլիան և Ֆրանսիան 1945 թ. դեկտեմբերի 13-ին կընքեցին համաձայնագիր՝ ազդեցության գոտիների բաժանելով Մերձավոր Արևելքը, այդ թվում Սիրիան և Լիբանանը»[352]։ Դեկտեմբերի 13-ի համաձայնագրի իմպերիալիստական բնույթը լավ է նկատել նաև Մուսա Դիբը։ Նա նշում է, որ այդ համաձայնագրով արաբական այդ երկու երկրների անվտանգությունը կախման մեջ էր դրվում օտարերկրյա պետություններից[353]։

Սիրիայի կառավարության և դեմոկրատական ուժերի բացասական դիրքը անգլո-ֆրանսիական համաձայնագրի նկատմամբ։ Սիրիան, բնականաբար, չհամաձայնվեց և չէր կարող համաձայնվել դեկտեմբերի 13-ի անգլո-ֆրանսիական գործարքի հետ, նրա մեջ իրավացիորեն տեսնելով բանակների էվակուացումը Լևանտում անորոշ ժամանակով հետաձգելու միտում։ Սիրիայի պրեմիեր-մինիստրը հայտարարեց, որ Սիրիան այդ համաձայնագրից կվեր-

---

350 *H. Davis*, „Constitutions, electoral laws, treaties of the state in the Near and Middle East", p. 284.

351 *Ph. Hitti*, Syria, p. 249.

352 *G. Haddad*, Fifty years of modern Syria and Lebanon, p. 100.

353 *Dib Moussa*, The arab block in the United Nations, p. 67.

ցընի այն, ինչ իրեն ձեռնտու է և կմերժի այն բոլորը, ինչ հակասում է նրա շահերին[354]։ Նա այնուհետև ավելացրեց, որ գլխավորը օտար բանակների լրիվ հեռացման հարցն է։ 1945 թ. դեկտեմբերի 31-ին սիրիական կառավարությունը պաշտոնապես բողոքեց անգլո-ֆրանսիական համաձայնագրի դեմ որպես Սիրիայի անկախության հետ անհամատեղելի մի քայլ[355]։ 1946 թ. հունվարի 4-ին Սիրիայի պրեմիեր-մինիստր Սաադալլա ալ-Ջաբրին կրկին հայտարարեց Սիրիայի համար այդ համաձայնագրի անընդունելի լինելու մասին[356]։ Նա նշեց, որ չի կարելի համաձայնվել այնպիսի դրության հետ, որ մի այլ պետություն Սիրիայի փոխարեն և Սիրիայի համար վճիռներ ընդունի[357]։

Դեկտեմբերի 13-ի համաձայնագրի նկատմամբ իր վերաբերմունքը ցուցաբերեց նաև սիրիական պառլամենտը, որը այդ հարցը հատուկ քննարկման առարկա դարձրեց[358]։ Պառլամենտի 1945 թ. դեկտեմբերի 31-ի նիստում տեղի ունեցան բուռն վիճաբանություններ, որի ժամանակ դեպուտատները դատապարտեցին Անգլիայի ու Ֆրանսիայի քաղաքականությունը Սիրիայի և Լիբանանի նկատմամբ։ Այդ կապակցությամբ պառլամենտն ընդունեց հետևյալ որոշումները։

Առաջին, ՄԱԿ-ին բողոք հայտնել անգլո-ֆրանսիական համաձայնագրի և Լևանտի տերիտորիաներում օտար զորքեր թողնելու դեմ։

Երկրորդ. խնդրել Արաբական երկրների լիգային անհապաղ հրավիրել լիգայի խորհրդի նիստ՝ վերոհիշյալ համաձայնագիրը ուսումնասիրելու համար, քանի որ այն շոշափում է ոչ միայն Սիրիայի և Լիբանանի, այլև արաբական բոլոր երկրների շահերը։

Երրորդ, պատրաստ լինել ամեն մի անակնկալի[359]։

Երբ սիրիական հասարակայնությանը հայտնի դարձավ, որ Անգլիան ու Ֆրանսիան առանց Սիրիայի և Լիբանանի գիտության ու մասնակցության համաձայնություն են կնքել Արաբական Արևելքը աղդեցության գոտիների բաժանելու և Լևանտում անգլո-ֆրանսիական զորքերը անորոշ ժամանակով թողնելու մասին,

---

354 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 4418, л. 210.

355 اربع سنوات من العهد الوطنى" ص ١٢١.

356 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 5580, л. 6.

357 Նույն տեղում։

358 «Ժողովուրդի ձայն», 1.I.1946։

359 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 5580, л. 5.

ապա դա խոր վրդովմունք առաջացրեց ամբողջ երկրով մեկ։ Սկսվեցին ցույցեր ու գործադուլներ։ 1945 թ. դեկտեմբերի 23-ին ընդհանուր գործադուլ հայտարարվեց Դամասկոսում[360]։ Մի շաբաթ անց, դեկտեմբերի 29-ին Դամասկոսում և Հալեպում տեղի ունեցավ ուսանողական մեծ ցույց՝ ուղղված անգլո-ֆրանսիական համաձայնագրի դեմ։ Ցուցարարները անցնում էին քաղաքի գլխավոր փողոցներով և պահանջում օտար բանակների հեռացում[361]։

Հատկապես պետք է նշել Հալեպում տեղի ունեցած ցույցը, որ աչքի էր ընկնում իր կազմակերպվածությամբ։ Ցուցարարները տանում էին «Անկախություն և օտար բանակների հեռացում», «Ոչ մեկ առանձնաշնորհում որևէ օտար երկրի» և այլ լոզունգներ։ Հետաքրքիր է նշել, որ Հալեպում տեղի ունեցած այդ համաժողովրդական ելույթի ժամանակ ցուցարարներից մեկը հարց էր տալիս. «Ի՞նչ կուզենք», բոլորը միաբերան պատասխանում էին «ջալա, ա», «ջալա, ա» (جلاء—էվակուացիա)[362]։ Հալեպում այդ ելույթները շարունակվում էին մի քանի օր։ 1946 թ. հունվարի 2-ին այնտեղ տեղի ունեցավ մի նոր ցույց, որին մասնակցում էին 10000 բանվորներ և ուսանողներ[363]։ Նրանք անցնելով քաղաքի գլխավոր փողոցներով, կանգ առան նահանգապետի շենքի առաջ։ Նրանց առջև հանդես եկավ Հալեպի մուհաֆիզը՝ նահանգապետը, որը նշեց, որ անգլո-ֆրանսիական համաձայնագիրը մի դավադրություն է Սիրիայի դեմ[364]։

Հուզումները բացի Դամասկոսից և Հալեպից ընդգրկեցին նաև Հոմսը, Համան և այլ վայրեր։ Այդ բոլոր վայրերում գործադուլներ տեղի ունեցան[365]։ Փակ էին գործարանները, արհեստանոցները, շուկաները, ուսումնարանները և այլ ձեռնարկություններ։ Ամբողջ երկիրը բողոքում էր այդ համաձայնագրի դեմ և պահանջում օտար զորքերի էվակուացիա։ Այդ համաժողովրդական պայքարի առաջին շարքերում էին կոմունիստները, որոնք սկզբից ևեթ գրավեցին միանգամայն ճիշտ ու հետևողական դիրք։ 1946 թ. հունվարի 24-ին հրապարակվեց Սիրիայի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունների քաղբյուրոների հայտարարությունը, որտեղ

---

360 Նույն տեղում, գ. 4418, թ. 211։

361 Նույն տեղում, ց. 24, գ. 232, թ. 1։

362 «Ժողովուրդի ձայն», 1.I.1946։

363 Նույն տեղում, 3.I.1946։

364 Նույն տեղում։

365 «Ալ-Ահրամ», Բեյրութ, 4.I.1946։

նշվում էր, որ անգլո-ֆրանսիական համաձայնությունը ոտնահարում է երկու երկրների անկախության և սուվերենության իրավունքը, Սիրիան և Լիբանանը իմպերիալիստական ազդեցության և տիրապետության գոտիների է բաժանում Անգլիայի և Ֆրանսիայի միջև, նպատակ ունենալով երկարաձգել անգլիական և ֆրանսիական բանակների ներկայությունը Սիրիայում և Լիբանանում[366]։

Նույնպիսի լարված վիճակ գոյություն ուներ նաև Լիբանանում։ Բեյրութում, Տրիպոլիում, Սայդայում և այլ վայրերում չէին դադարում ցույցերն ու գործադուլները։ Լիբանանի ժողովուրդը պահանջում էր վճռական գործողությունների դիմել անգլիական և ֆրանսիական զորքերը երկրից դուրս հանելու համար։

Օտարերկրյա զորքերի էվակուացման հարցի ֆնեարկումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում։ Հենվելով ժողովրդական մասսաների աջակցության վրա, Սիրիայի և Լիբանանի կառավարությունները որոշեցին օտար զորքերի էվակուացման հարցը դնել ՄԱԿ-ի քննարկմանը։ Նրանք այդ քայլին դիմեցին տեսնելով, որ Անգլիայի և Ֆրանսիայի հետ բանակցությունների ուղին ոչ մի արդյունք չի տալիս, քանի որ վերջիններս յուրաքանչյուր անգամ մի նոր պատրվակ էին հորինում Լևանտում իրենց մնալը արդարացնելու և երկարաձգելու համար։

1946 թ. փետրվարի 4-ին Սիրիայի և Լիբանանի պատվիրակությունների ղեկավարները մի նամակ հղեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, նշելով, որ Լևանտում անգլիական և ֆրանսիական զորքերի ներկայությունը սպառնում է խաղաղությանը և այդ շրջանի անվտանգությանը։ Նրանք հույս ունեին, որ Գերմանիայի և Ճապոնիայի հետ պատերազմը վերջանալուց հետո այդ զորքերը կէվակուացվեն, իսկ 1945 թ. դեկտեմբերի 13-ի համաձայնագիրը այդ էվակուացիան կախման մեջ է դնում այնպիսի պայմաններից, որոնք հակասում են ՄԱԿ-ի կանոնադրության ոգուն։ Ելնելով դրանից, Սիրիայի և Լիբանանի կառավարությունները, համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 34 հոդվածի, իրենց վեճը՝ օտար բանակների էվակուացման հարցը, դնում են Անվտանգության խորհրդի քննարկմանը, պահանջելով «ընդունել մի որոշում, որը հանձնարարի օտար զորքերի լրիվ և միաժամանակյա էվակուացումը Սիրիայի և Լիբանանի տերիտորիաներից»[367]։

---

[366] «Ժողովուրդի ձայն», 24.I.1946։

[367] *Dib Moussa*, The arab block in the United Nations, p. 67.

Այսպիսով, բանակների էվակուացման հարցը վերածվեց միջազգային հարցի[368]։

Սիրիայի և Լիբանանի կառավարությունների կողմից բանակների հեռացման խնդրի առաջարկումը Անվտանգության խորհրդի ուշադրությանը, իրավական տեսակետից միանգամայն անվիճելի էր։ ՄԱԿ-ի կանոնադրությունը արգելում է ՄԱԿ-ի անդամ տերության զինվորական գրավումը ՄԱԿ-ի անդամ մեկ այլ պետության կողմից։ Այդ զորքերի ներկայությունը չէր կարելի արդարացնել պատերազմական իրադրության կամ ռազմա-ստրատեգիական խնդիրներով, որովհետև այդ ժամանակ պարտության կրած Գերմանիան ու Ճապոնիան իրենց ռազմական դրոշները նետել էին հաղթողների ոտքերի առջև և կնքել անվերապահ կապիտուլյացիայի ակտ։

Մյուս կողմից, Սիրիայի և Լիբանանի անվտանգությանը ոչ ոք չէր սպառնում։ Նույնիսկ եթե սպառնային էլ, ապա անվտանգության ապահովումը յուրաքանչյուր երկրի սուվերեն իրավունքն է և որևէ երկրորդ պետության իրավունք չունի և չի կարող իր «օգնությունը» ուժով փաթաթել այդ պետության վզին։ Մանավանդ որ Սիրիայի և Լիբանանի կառավարությունները ոչ միայն չէին խնդրել այդպիսի «օգնություն», այլ ընդհակառակը, պայքարում էին իրենց տերիտորիաները իմպերիալիստական տերությունների զորքերից ազատելու համար։ Եթե աշխարհում կար մի ուժ, որ սպառնում էր Մերձավոր Արևելքի և մասնավորապես Սիրիայի ու Լիբանանի անվտանգությանը, ապա դա Անգլիան ու Ֆրանսիան էին։

Միավորված Ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդը, հաշվի առնելով Լևանտում ստեղծված լարված վիճակը, որը սպառնում էր խաղաղության պահպանմանը Մերձավոր Արևելքում, 1946 թ. փետրվարի 14-ից սկսեց քննարկել Սիրիայի և Լիբանանի կառավարությունների դանգատը։

Անվտանգության խորհրդի փետրվարի 15-ի նիստում առաջինը հանդես եկավ Լիբանանի պատվիրակության ղեկավար Հ. Ֆրանժիեն։ Նա շարադրեց իր կառավարության դիրքը վիճելի հարցի կապակցությամբ։ Նա նշեց, որ Սիրիան ու Լիբանանը սու-

---

[368] Այդ մասին տե՛ս նաև Ն. Հ. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1958 թթ.), Երևան, 1967, Н. О. Оганесян, Образование независимой Сирийской республики (1939—1958), Москва, 1968.

վերեն պետություններ են և օտար զորքերի գոյությունը նրանց տերիտորիայում հակասում է այդ սուվերենության և ՄԱԿ-ի կանոնադրության։ Ֆրանժիեն հայտարարեց, որ «միջազգային հարաբերությունների պատմության մեջ դեռևս նման նախադեպ չի եղել, երբ օտար զորքերը գտնվեին սուվերեն պետության տերիտորիայում առանց այդ պետության համաձայնության»[369]։ Նա այնուհետև խիստ քննադատության ենթարկեց 1945 թ. դեկտեմբերի 13-ի անգլո-ֆրանսիական համաձայնագիրը և նշեց, որ այն անընդունելի է Սիրիայի և Լիբանանի համար։ Վերջում Լիբանանի պատվիրակը հույս հայտնեց, որ Անվտանգության խորհուրդը որոշում կընդունի, «մեր տերիտորիաներից օտար զորքերի անհապաղ, լրիվ և միաժամանակյա էվակուացիայի մասին»[370]։

Այնուհետև հանդես եկավ սիրիական պատվիրակության ղեկավար, Սիրիայի արտաքին գործերի մինիստր Ֆարիս ալ-Խուրին։ Նրա ելույթի առաջին մասը նվիրված էր վիճելի հարցի պատմությանը։ Ալ-Խուրին Անվտանգության խորհրդի անդամներին հիշեցնում է, որ Անգլիայի և Ազատ Ֆրանսիայի զորքերը Սիրիա ու Լիբանան մտան Վիշիի զորքերին դուրս մղելու, բայց ոչ Վիշիին փոխարինելու համար և որ նրանց զորքերի մտնելուց առաջ, ինչպես նաև դրանից հետո, Անգլիան ու Ազատ Ֆրանսիան բազմիցս նշել են, որ նրանց միակ նպատակը այս երկրները ազատելն է[371]։

Սիրիայի պատվիրակը հայտարարեց, որ Անգլիան ու Ֆրանսիան փաստորեն չպահեցին իրենց խոստումը և նրանց զորքերը գտնվում են Սիրիայի ու Լիբանանի տերիտորիայում, չնայած պատերազմական գործողությունները Եվրոպայում և Ասիայում վաղուց ավարտվել են։ «Մենք,—նշում է ալ-Խուրին,—իզուր սպասում էինք գոհացուցիչ որոշման (այսինքն՝ զորքերի էվակուացման—Ն. Հ.)»[372]։ Այդ գոհացուցիչ որոշումը տեղի չունեցավ։ Դրա փոխարեն հրապարակ նետվեց դեկտեմբերի 13-ի անգլո-ֆրանսիական համաձայնագիրը, որը կնքվեց առանց Սիրիայի և Լիբանանի գիտության։

Ֆարիս ալ-Խուրին իր ելույթում Անվտանգության խորհրդի անդամների առջև մերկացրեց այդ գործարքը և բացահայտեց նրա իմպերիալիստական բնույթը։ Նա նշեց, որ ըստ այդ համաձայնա-

---

[369] ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 5580, л. 110—111.

[370] Նույն տեղում, թ. 109։

[371] Նույն տեղում, թ. 108։

[372] Նույն տեղում։

դրի օտարերկրյա ուժերը անորոշ ժամանակով կշարունակեն մնալ Լևանտում, նրանց դուրս բերումը կախված չի լինելու զուտ տեխնիկական պայմաններից և որ իբր այդ զորքերի նպատակն է ապահովել անվտանգությունը։ Դիմելով Անվտանգության խորհրդին՝ Ֆարիս ալ-Խուրին ասում է. «Սիրիայի կառավարությունը չի կարող չհարցնել ո՞ւմ անվտանգությունն են մտադիր կողմերը (Անգլիան և Ֆրանսիան—Ն. Հ.) ապահովել»[373]։

Անվտանգության ապահովումը կարելի է հասկանալ երկու իմաստով՝ ներքին և արտաքին։ Եթե խոսքը գնում է ներքին անվտանգության ապահովման մասին, ապա դա տվյալ սուվերեն պետության ներքին գործն է և ուրիշ ոչ մի պետություն իրավունք չունի իր «մասնակցությունը» բերել այդ խնդրում։ «Պատասխանատվությունը ներքին անվտանգության համար,—նշում է սիրիական պատվիրակը,—ընկնում է բացառապես Սիրիայի և Լիբանանի կառավարությունների վրա»[374]։ Իսկ ինչ վերաբերում է արտաքին անվտանգությանը, ապա նրա պահպանումը, նրա մասին հոգ տանելը նույնպես յուրաքանչյուր սուվերեն պետության գործն է։ Այդ բանը հաստատված է նաև ՄԱԿ-ի կանոնադրության մեջ։ Ֆարիս ալ-Խուրին կառավարության անունից հետևյալն է հայտարարում. ի նկատի ունենալով, որ օտարերկրյա զորքերը, հակառակ Սիրիայի և Լիբանանի կառավարությունների և ժողովուրդների ցանկության, դեռևս գտնվում են նրանց տերիտորիայում և վնճը մի կողմից Սիրիայի և Լիբանանի, մյուս կողմից՝ Անգլիայի և Ֆրանսիայի միջև հասել է ծայր աստիճանի, և որ դեկտեմբերի 13-ի համաձայնագիրը անօրինական է, Սիրիայի պատվիրակությունը խնդրում է Անվտանգության խորհրդին, որ օտարերկրյա բոլոր զորքերը դուրս բերվեն միաժամանակ, և որոշի նրանց դուրս բերման ժամկետը[375]։

Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Բիդոն հայտարարեց, որ Ֆրանսիան զարմացած է Սիրիայի և Լիբանանի բողոքի առթիվ։ Պատերազմի հետևանքով մի երկրի զորքերը հայտնվեցին մի այլ երկրի տերիտորիայում և այդ դրությունը մինչև հիմա էլ պահպանվում է։ Հետևաբար, նշում է նա, «ես հարցնում եմ, թե նրանց դրությունը ինչո՞վ է տարբերվում նույն պայմանների մեջ դրված ուրիշ երկրների դրությունից»[376]։ Բիդոյի այս հարցադրումն արդեն

373 Նույն տեղում, թ. 107։
374 Նույն տեղում։
375 Նույն տեղում, թ. 105։
376 Նույն տեղում, թ. 104։

սխալ է։ Այն հանգամանքը, որ ուրիշ երկրների տերիտորիաներում էլ կան օտար զորքեր, դեռևս չի խոսում հօգուտ այն բանի, որ անգլիական և ֆրանսիական զորքերը պետք է թողնվեն Սիրիայում և Լիբանանում։ Ինչո՞ւ էր Լևանտից օտարերկրյա զորքերի դուրս բերումը կապվում երկրագնդի այլ մասերում կատարվող համանման գործողությունների հետ։ Օտար զորքերի էվակուացման խնդիրը կոնկրետ խնդիր է և այն պետք է լուծել ամեն մի երկրի համար առանձին, ելնելով տվյալ երկրի ռազմական իրադրությունից։ Երբ այս տեսանկյունից ենք մոտենում Սիրիայի ու Լիբանանի խնդրին, ապա տեսնում ենք, որ անգլիական ու ֆրանսիական զորքերի հետագա մնալու համար ոչ մի պատճառ չկար։ Պատերազմը վաղուց էր ավարտվել Գերմանիայի և Ճապոնիայի հետ և կոմունիկացիաների պահպանման հարցն էլ ինքնին մեջտեղից դուրս էր եկել։

Իր ելույթում Բիդոն անդրադարձավ նաև դեկտեմբերի 13-ի համաձայնագրին։ Այդ համաձայնագրի կնքումը նա համարեց օրինական և նրա բովանդակությունն էլ միանգամայն ընդունելի։ Նա փորձում էր այն տպավորությունը ստեղծել, որ Անգլիան ու Ֆրանսիան, կամովին, իրենց սեփական նախաձեռնությամբ են բարձրացրել էվակուացման հարցը։ Սակայն անմիջապես ավելացրեց, որ Անգլիան ու Ֆրանսիան իրենց զորքերը դուրս կբերեն, երբ ՄԱԿ-ը կազմակերպի կոլեկտիվ անվտանգություն[377]։ Այլ կերպ ասած, Ֆրանսիան կողմնակից չէր առանց պայմանների և անհապաղ էվակուացման։ Նա այդ հարցը կապում էր կոլեկտիվ անվտանգության խնդրի հետ, որը ինչպես մենք արդեն նշել ենք, լոկ պատրվակ էր հարցը ձգձգելու համար, քանի որ կոլեկտիվ անվտանգության կազմակերպման խնդիրը այդ ժամանակ չէր դրված։ Ֆրանսիան այդ բանը շատ լավ գիտեր և ամեն կերպ ուզում էր համոզել Սիրիային ու Լիբանանին, որ նրանք չշտապեն ու համբերեն, որովհետև խնդիրը շատ դժվար է։ Բիդոն Անվտանգության խորհրդում հենց այդպես էլ ասաց. «Հեշտ վճիռների ժամանակը դեռևս չի եկել։ Անհրաժեշտ է, որ բոլոր ազգերը՝ սկզբում մեծ, ապա և փոքր, լրիվ փոխըմբռնում հանդես բերեն»[378]։

Բիդոյի ելույթից պարզ դարձավ, որ Ֆրանսիան չի շտապում կատարելու Լևանտի երկրների խնդրանքը։ Դա ավելի որոշակի

---

377 Նույն տեղում, թ. 102։

378 Նույն տեղում, թ. 99։

երևաց Նրա ելույթի եզրափակիչ մասից։ Դիմելով Անվտանգության խորհրդին, նա ասաց. «Ես խնդրում եմ միացյալ ազգերի ներկայացուցիչներին, հաշվի առնելով այն ջանքերը, որ գործադրվել են Սիրիային ու Լիբանանին անկախության հասցնելու համար, վըստահություն ցուցաբերել Ֆրանսիային՝ Անգլիայի հետ միասին, հավատացած լինելով, որ կգտնվի այս պրոբլեմի լուծումը»[379]։ Փաստորեն դա Ֆրանսիայի կողմից մի փորձ էր այդ հարցը Անվտանգության խորհրդի քննարկումից հանելու և դարձյալ Ֆրանսիայի ու Անգլիայի տնօրինությանը հանձնելու։

Անվտանգության խորհրդի ամբիոնում Բիդոյին փոխարինեց Անգլիայի ներկայացուցիչ Կադոգանը, որը հիմնականում պաշտպանեց իր ֆրանսիական կոլեգայի փաստարկները։

Կադոգանի ելույթը ուշագրավ էր նաև մեկ այլ կողմից։ Նա բաց արեց իմպերիալիստների խաղաթղթերը։ Դիմելով Անվտանգության խորհրդի անդամներին, նա ասաց ...«Թույլ տվեք ինձ բացատրել, որ բանակցությունների (ի նկատի ունի դեկտեմբերի անգլո-ֆրանսիական բանակցությունները—Ն. Հ.) ժամանակ մենք ղդում էինք, որ չենք կարող մեր զորքերը անհապաղ էվակուացիայի ենթարկել և մեր հետևից դատարկություն թողնել»[380]։

Այսպիսով Կադոգանը պարզորեն խոստովանեց, որ բանակցությունների ժամանակ իրենք բոլորովին նպատակ չեն ունեցել դնել զորքերի անհապաղ էվակուացման հարցը։ Հետևաբար իրավացի էին բոլոր նրանք, ովքեր դեկտեմբերի 13-ի համաձայնագիրը համարում էին գործարք և նշում, որ Անգլիայի ու Ֆրանսիայի պլաններում չկար վճռական քայլ հետևանքից հետևանալը։

Մյուս կողմից Կադոգանի ելույթում խոսվում էր այն չարաբաստիկ վակուումի մասին, որը հետագա տարիներին տարբեր երանգներով կրկնում էին անգլիական, ֆրանսիական և ապա ամերիկյան իմպերիալիստները։ «Վակուումի» տեսությունը մի իսկական պատուհաս դարձավ թույլ զարգացած երկրների, այդ թվում նաև արաբական երկրների գլխին։ Այդ «տեսությունը» նախկին գաղութների, նրանց ուժերի ու կարողությունների նկատմամբ անվստահության արտահայտություն էր։ Դա ցույց էր տալիս, որ իմպերիալիստները այն կարծիքին են, որ թույլ զարգացած երկրները չեն հասունացել ինքնուրույն քաղաքական ու տնտեսա-

---

379 Նույն տեղում։

380 Նույն տեղում։

կան զարգացման համար, որ նրանց գլխին խնամակալներ են պետք։ Եվ եթե այդ խնամակալները չինեն, եթե սրանք թողնեն ու հեռանան, ապա կառաջանա վակուում, ամեն ինչ քաոսի կվերածվի։ Եզրակացությունը պարզ է. որպեսզի կանխվի քաոսը, պետք է մնան օտարերկրյա, իմպերիալիստական ուժերը։

Այսպիսով, Անվտանգության խորհրդի առաջին նիստում շահագրգռված երկու կողմերի ելույթները պարզ ցույց տվեցին, որ եթե Սիրիան և Լիբանանը ձգտում էին ամեն կերպ հասնել հարցի դրական լուծմանը, այսինքն օտար զորքերի էվակուացիային, ապա Ֆրանսիան և Անգլիան ամեն կերպ աշխատում էին արդարացնել իրենց իմպերիալիստական քաղաքականությունը և սողանցքներ գտնել իրենց զորքերը Լևանտում անորոշ ժամանակով պահելու համար։

Անվտանգության խորհուրդը լսելով երկու կողմերին, անցավ հարցի կոնկրետ քննարկմանը։ Եվ այստեղ ի հայտ եկավ երկու տարբեր քաղաքականություն։ Անվտանգության խորհրդի անդամների մի մասը՝ Սովետական Միությունը, Եհհաստանը, Եգիպտոսը և Մեքսիկան պաշտպանեցին Սիրիայի և Լիբանանի պահանջները, իսկ ԱՄՆ-ը, Հոլանդիան, Բրազիլիան և Ավստրալիան՝ անգլիական և ֆրանսիական իմպերիալիստների դիրքորոշումը։ Դա պարզ երևաց այդ պատվիրակությունների ելույթներից և նրանց կողմից մտցված բանաձևերից։

Փետրվարի 15-ի նիստում հանդես եկավ սովետական պատվիրակ Ա. Վիշինսկին։ Նա սովետական կառավարության անունից պաշտպանեց Սիրիայի և Լիբանանի խնդիրքը ու մերկացրեց անգլո-ֆրանսիական մեքենայությունները այդ հարցում։ Նա հայտարարեց, որ 1945 թ. դեկտեմբերի 13-ի համաձայնագիրը չի լուծում այդ պրոբլեմը։ Վիշինսկին անգլո-ֆրանսիական այդ համաձայնագիրը բնութագրեց «միջազգային իրավունքի տարրական նորմաների տեսակետից ուղղակի անօրինական, ուղղակի ոչ լոյալ Սիրիայի և Լիբանանի գերիշխանության նկատմամբ»[381]։ Այնուհետև նա կանգ առավ Լևանտում ՄԱԿ-ի կողմից կոլեկտիվ անվտանգություն կազմակերպելու հարցի վրա, որի մասին նշված էր դեկտեմբերի 13-ի համաձայնագրում։ Վիշինսկին նշեց, որ դա ընդհանրապես նորություն է իր և Անվտանգության խորհրդի մյուս

---

[381] «СССР и арабские страны. 1917—1960. Документы и материалы», стр. 92.

անդամների համար, քանի որ ՄԱԿ-ը չի ծրագրում նման որևէ բան կիրառել Արաբական Արևելքում[382]։ Վիշինսկին գտնում էր, որ ոչ մի հիմք չկա անգլիական և ֆրանսիական զորքերը հետագայում Լևանտում թողնելու։ Այն պայմանները, որոնք իր ժամանակին ինչ-որ չափով կարող էին արդարացնել այդ զորքերի առկայությունն այնտեղ, այժմ վերացել են։ Ուստի պետք է բավարարել Սիրիայի և Լիբանանի պահանջը անգլո-ֆրանսիական զորքերը իրենց տերիտորիաներից հանելու մասին, որովհետև այդ պահանջը հիմնված է սուվերեն երկրի պետական սուվերենության սկզբունքի վրա[383]։ Մեր կազմակերպությանը արժանի միակ որոշումը,— ասաց Լուլյթի վերջում Ա. Վիշինսկին,— դա սիրիական և լիբանանյան կառավարությունների պահանջը բավարարելն է։

Եգիպտոսի ներկայացուցիչ Ռիադը ներկայացրեց մի բանաձև, որը պահանջում էր օտարերկրյա զորքերը դուրս բերել Լևանտի երկրներից։ Այդ բանաձևում ասված էր. «Լսելով Լիբանանի, Սիրիայի, Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչների հայտարարությունները և կարծիքներ փոխանակելով իր առջև դրված հարցի շուրջը, համարելով, որ անգլիական և ֆրանսիական զորքերի ներկայությունը սիրիական և լիբանանյան տերիտորիաներում անհամատեղելի է բոլոր անդամների սուվերեն իրավահավասարության սկզբունքի հետ, ինչպես դա գրված է Կանոնադրության (ՄԱԿ-ի—Ն. Հ.) մեջ, գտնելով որ սուվերենության այդ սկզբունքը իր կիրառումը պետք է գտնի տերիտորիաներից անգլիական և ֆրանսիական զորքերի անհապաղ և միաժամանակյա դուրս բերման մեջ, որի մասին խոսքը գնում է, Անվտանգության խորհուրդը հանձնարարում է, որ անգլիական և ֆրանսիական կառավարությունները մի կողմից, և սիրիական ու լիբանանյան կառավարությունները մյուս կողմից, ինչքան հնարավոր է շուտ, բանակցությունների մեջ մտնեն, բացառապես սահմանելու տեխնիկական մանրամասները, որոնք վերաբերում են զորքերի դուրս բերմանը, ներառյալ նրա ավարտման ժամկետը»[384]։

Ինչպես նշվեց, Անգլիայի և Ֆրանսիայի պաշտպանությամբ հանդես էին գալիս ԱՄՆ-ը, Ավստրալիան, Բրազիլիան և Հոլանդիան։ Սակայն չպետք է կարծել, թե նրանք դա անում էին բացա-

---

[382] Նույն տեղում, էջ 93։

[383] Նույն տեղում, էջ 95։

ЦГАОР СССР, ф. 4459, оп.I, д. 5580, л. 146.

հայտ ու անսքող։ Բնավ ոչ։ Նրանք էլ էին ընդունում զորքերի դուրս բերման անհրաժեշտությունը, ինչպես դա անում էին նաև Անգլիան և Ֆրանսիան։ Սակայն միայն բառերով։ Իրականում նրանք այնպիսի առաջարկություններ էին անում, որոնք փաստորեն հանգեցնում էին այդ զորքերի անորոշ ժամանակով Լևանտում թողնելուն, այսինքն այն, ինչին ձգտում էին Անգլիան ու Ֆրանսիան։ Այդ տեսակետը լավագույնս արտացոլվեց ամերիկյան բանաձեվում, որը մտցրեց Ստետինիուսը։ «Անվտանգության խորհուրդը,— կարդում ենք ամերիկյան բանաձևում,—ի գիտություն է ընդունում չորս կողմերի և Անվտանգության խորհրդի մյուս անդամների հայտարարությունները, իր վստահությունն է հայտնում, որ Սիրիայից և Լիբանանից օտար զորքերը դուրս կբերվեն այնքան շուտ, որքան դա հնարավոր է իրագործել, որ այդ նպատակով բանակցությունները կողմերի միջև կսկսվեն անհապաղ և առաջարկում է կողմերին՝ բանակցությունների արդյունքների մասին տեղյակ պահել Անվտանգության խորհրդին»[385]։

Այսպիսով, Անվտանգության խորհրդի առջև դրված էր երկու բանաձև, մեկը եգիպտականը, մյուսը՝ ամերիկյանը։

Իսկ ի՞նչ տարբերություն կար այդ երկու բանաձևերի միջև։ Առաջին հայացքից թվում է, որ նրանց միջև սկզբունքային տարբերություն չկա, քանի որ երկու բանաձևերն էլ դնում են օտարերկրյա զորքերի դուրս բերման հարցը։ Սակայն դա միայն առաջին հայացքից։ Իսկ երբ խորամուխ ենք լինում խնդրի էության մեջ, ապա ակներև է դառնում, որ բանաձևերի եգիպտական ու ամերիկյան նախագծերը սկզբունքային տարբեր դիրքերից են ելնում։

Բանաձևի ամերիկյան նախագիծը ուներ երկու գլխավոր թերություն։ Այն չէր դնում Սիրիայից և Լիբանանից օտար զորքերի անհապաղ և միաժամանակյա դուրս բերման հարցը, այլ միայն ցանկություն էր հայտնում, որ այդ «զորքերը դուրս բերվեն այնքան շուտ, որքան դա հնարավոր է իրագործել»[386]։ Իսկ ո՞վ կարող էր ասել, թե երբ է հնարավոր այն իրագործել։ Հարցի այսպիսի անորոշ ու ոչ հստակ ձևակերպման հետևանքով սողանցք էր թողնվում զորքերի դուրս բերման հարցը անվերջ ձգձգելու համար։ Մինչդեռ պետք էր վճռականորեն ու կտրուկ ասել, որ զորքերը պետք է էվակուացիայի ենթարկվեն առանց ձգձգելու և անմիջապես։ Ամերիկյան նախագիծը այդ բանի երաշխիքը չէր տալիս։

---

[385] Նույն տեղում, թ. 143։

[386] Նույն տեղում։

Մինչդեռ եգիպտական բանաձևը այդ հարցում կասկածի ու մեկնաբանությունների ոչ մի տեղ չէր թողնում։ Նա պահանջում էր այդ բանակցությունները սկսել շուտ և նույնիսկ սահմանել օտարերկրյա զորքերի դուրս բերման ժամկետը։

Բայց սա հարցի մի կողմն է։ Հարցի մյուս և շատ սկզբունքային կողմը այն է, թե առաջարկվող բանակցությունները ինչի՞ շուրջն են գնալու։ Այս խնդրում նույնպես բանաձևի ամերիկյան ու եգիպտական նախագծերը միմյանցից տարբերվում էին։ Ամերիկյան բանաձևում կողմերին առաջարկվում էր բանակցություններ սկսել զորքերի դուրս բերման հարցի շուրջը։ Ի՞նչ կարելի էր հասկանալ դրա տակ։ Ամեն ինչ։ Այդ բանակցությունները կարող էին վարվել բացառապես զորքերի դուրս բերման հարցի շուրջը, ի նկատի ունենալով հարցի տեխնիկական կողմը, սակայն կարող էին վարվել նաև սակարկության նպատակով և զորքերի էվակուացման հարցը պայման դարձնել քաղաքական, ռազմական ու տնտեսական բնույթի արտոնություններ ձեռք բերելու համար։ Մենք այս կողմը շեշտում ենք այն պատճառով, որ Ֆրանսիան Սիրիայի ու Լիբանանի մանդատից հրաժարվելը, հատուկ զորամասերը փոխանցելը, ինչպես նաև զորքերի դուրս բերումը կապում էր ֆրանս-սիրիական և ֆրանս-լիբանանյան հատուկ պայմանագրեր կնքելու հետ, որոնք պետք է նրան քաղաքական, ռազմական ու տնտեսական գերիշխող դիրք ապահովեին վերոհիշյալ երկրներում։ Ամերիկյան բանաձևը դռները լայն բաց էր անում այդպիսի հավակնությունների համար։

Ինչ վերաբերում է բանաձևի եգիպտական նախագծին, ապա այնտեղ ուղղակի շեշտված էր, որ բանակցությունները պետք է վարվեն բացառապես խնդրի տեխնիկական կողմի վերաբերյալ։ Դա նշանակում էր, որ անգլիական ու ֆրանսիական զորքերը հանելու կամ չհանելու հարցը չի քննարկվելու։ Այդ հարցը անվիճելի է, նրանք պետք է հանվեն։ Բանակցությունները գնալու էին միայն ու միայն զորքերի դուրս բերման ժամկետը որոշելու և դրա հետ կապված տեխնիկական այլ հարցերի շուրջը։

Ինչպես տեսնում ենք էական տարբերություններ կային երկու բանաձևերի նախագծում։ Մեկը՝ ամերիկյանը, նպաստավոր պայմաններ էր ստեղծում Անգլիայի և Ֆրանսիայի համար զորքերի դուրս բերման հարցը անորոշ ժամանակով երկարաձգելու և սակարկման առարկա դարձնելու համար, իսկ մյուսը՝ եգիպտականը, այդ հարցը դնում էր որոշակի շրջանակների մեջ և պահանջում

զորքերի անհապաղ էվակուացիա։ Ուստի պատահականություն չէ, որ Անգլիան և Ֆրանսիան դեմ արտահայտվեցին եգիպտական բանաձևին։ Նրանք նախապատվությունը տալիս էին ամերիկյան բանաձևին։ Իսկ ինչ վերաբերում էր Սիրիային ու Լիբանանին, ապա նրանք հայտարարեցին, որ իրենք գերադասում են եգիպտական բանաձևը, որտեղ ձևակերպումներն ավելի հստակ էին։ Սիրիայի պատվիրակ ալ-Խուրին հայտարարեց, որ «երբ փոքր տերությունները գործ ունեն մեծ տերությունների հետ, ապա նրանց միակ պաշտպանությունը տեքստն է։ Դրա համար էլ նրանք մեծ ուշադրություն են դարձնում բանաձևերի ձևակերպումներին»[387]։

Եգիպտական բանաձևին հավանություն էին տալիս նաև ՍՍՀՄ-ը, Լեհաստանը, ինչպես նաև Մեքսիկան։ Լեհաստանի ներկայացուցիչ Մոձելևսկին հայտարարեց, որ Ստեփինիուսի բանաձևը տեխնիկական հարցերի վերաբերյալ բանակցությունները ենթարկում է այլ հարցերին վերաբերող բանակցությունների։ Ուստի նա նշում է, որ բանակցությունները պետք է վերաբերվեն միայն «էվակուացիայի տեխնիկական ու գործնական մանրամասներին»[388]։

Վիշինսկին նույնպես նշեց, որ եթե բանակցությունները վերաբերվելու են խնդրի տեխնիկական կողմին, ապա այդ մասին տեքստում պետք է նշվի[389]։

Այնուհետև այդ բանաձևերը դրվեցին քվեարկության։ Հօգուտ եգիպտական բանաձևին քվեարկեցին ՍՍՀՄ-ը, Լեհաստանը, Եգիպտոսը և Մեքսիկան[390]։ Դեմ քվեարկեցին ԱՄՆ-ը, Ավստրալիան, Բրազիլիան և Հոլանդիան։ Անգլիան ու Ֆրանսիան չէին մասնակցում քվեարկությանը։ Քանի որ Անվտանգության խորհրդի մշտական անդամներից մեկը՝ ԱՄՆ-ը, դեմ քվեարկեց, ուստի, եգիպտական բանաձևը չանցավ։

Այնուհետև քվեարկության դրվեց ամերիկյան բանաձևը։ Նախքան քվեարկելը, Վիշինսկին առաջարկեց երեք ուղղում այդ բանաձևում։ Առաջինը, Անվտանգության խորհուրդը «իր վստահությունն է հայտնում, որ օտարերկրյա զորքերը դուրս կբերվեն» և այլն բառերի փոխարեն, գրել «իր գիտություն է ընդունում Անգ-

---

387 Նույն տեղում, թ. 197։

388 Նույն տեղում։

389 Նույն տեղում։

390 Նույն տեղում, թ. 194։

չիայի և Ֆրանսիայի հայտարարություններն այն մասին, որ իրենց զորքերը դուրս կբերվեն Սիրիայից և Լիբանանից»[391]: Սա էական ուղղում էր, քանի որ նա հարցը ավելի կոնկրետացնում էր: Ոչ թե վստահություն հայտնել, դա լոկ ցանկություն էր, այլ գրել, որ Անգլիան ու Ֆրանսիան համաձայն են իրենց զորքերը դուրս բերել: Երկրորդ, Վիշինսկին առաջարկում էր «հնչքան հնարավոր է շուտ» բառերի փոխարեն գրել «անհապաղ»[392]: Այս ուղղումը կատարվում էր այն նպատակով, որպեսզի հարցը անվերջ ձգձգելու հնարավորություն չստեղծվի: Սովետական պատվիրակության երրորդ ուղղումը հետևյալն էր. «բանակցություններ» բառի առջև դնել «տեխնիկական» բառը[393]: Այս ուղղման նպատակն էր Անգլիային ու Ֆրանսիային զրկել բանակցությունները սակարկության առարկա դարձնելու հնարավորությունից և նրանց միակ խնդիրը համարել զորքերի դուրս բերման ժամկետի ու մեթոդների սահմանումը:

Սակայն սովետական այս ուղղումները չանցան: Անվտանգության խորհրդի անդամների մեծամասնությունը այն մերժեց:

Դրանից հետո քվեարկության դրվեց ամերիկյան բանաձևը: Նա նույնպես չանցավ, որովհետև Անվտանգության խորհրդի մշտական անդամներից մեկը՝ Սովետական Միությունը դեմ քվեարկեց: Նա դեմ քվեարկեց, որովհետև նրա մտցրած ուղղումները մերժվել էին, իսկ ամերիկյան բանաձևը ինքնին վերցրած չէր ապահովում խնդրի դոհացուցիչ լուծումը:

Այսպիսով, Անվտանգության խորհուրդը երեք օր քննարկելով Սիրիայի և Լիբանանի բողոքը, փաստորեն ոչ մի բանաձև չընդունեց:

Չնայած այդ հանգամանքին, նա իր դրական նշանակությունն ունեցավ, այն առումով, որ անգլիական և ֆրանսիական զորքերի դուրս բերումը համընդհանուր ճանաչում ստացավ: Սկզբունքորեն բոլորն էլ, այդ թվում նաև Անգլիան ու Ֆրանսիան, համաձայնվեցին զորքերի դուրս բերման խնդրի շուրջը:

Այդ իմաստով իրավացի են արաբ մի խումբ պատմաբաններ, երբ նշում են, որ Անվտանգության խորհրդում օտար զորքերի էվակուացման պրոբլեմի քննարկումով Սիրիան շահեց իր հարցը[394]: Իսկ ալ-Արմանազին ուղղակի նշում է, որ Անվտանգության խոր-

391 Նույն տեղում:

392 Նույն տեղում:

393 Նույն տեղում:

394 اربع سنوات من العهد الوطنى» ص ١٢٤.

հրդում Սիրիան և Լիբանանը բարոյական մեծ հաղթանակ տարան, որը անպայման իր պտուղները կտա[395]:

Սիրիա-Լիբանանյան բողոքի քննարկումը պարզ ցույց տվեց, որ Սիրիան ու Լիբանանը, և ընդհանրապես բոլոր փոքր պետությունները, ի դեմս Սովետական Միության ունեն իրենց անշահախնդիր պաշտպանը: Արաբ պատմաբան Ամին Սաիդը Անվտանգության խորհրդում Սովետական Միության գրաված դիրքը համարում է ազնիվ[396]: Նույնպիսի բարձր գնահատական է տալիս նաև մեկ ուրիշ արաբ հեղինակ՝ Մունիր Թակկի էդ-Դինը: Նա նշում է, որ սովետական պատվիրակը լիակատար կերպով պաշտպանեց Սիրիային ու Լիբանանին[397]: Սովետական Միությանը իրենց շնորհակալությունն են հայտնում Սիրիայի աշխատավորական մասսաները, քաղաքական և հասարակական գործիչները: Այդ հարցին անդրադարձավ նաև հանրապետության պրեզիդենտ Շուքրի Քուաթլին: Նա այլ գործոնների թվում, որոնք ապահովեցին Սիրիայի անկախությունը, ընդգծեց նաև Սովետական Միության դիրքը, որը հենց սկզբից պաշտպանեց Սիրիայի իրավունքը[398]:

Оттаверкяя qoгfbгh էվակուացիան: Անվտանգության խորհրդի նիստից հետո, որտեղ փաստորեն բոլորն էլ համաձայնվեցին, որ օտար զորքերը պետք է դուրս բերել Լևանտի երկրներից, Անգլիային ու Ֆրանսիային ոչինչ չէր մնում անել, քան կոնկրետ բանակցություններ սկսել զորքերի դուրս բերման հարցի շուրջը: Նրանք հարկադրված էին այդ քայլին դիմել ոչ միայն այն պատճառով, որ Անվտանգության խորհրդում իրենց համաձայնությունն էին տվել ամերիկյան բանաձևին և հետևաբար, ինչ-որ չափով պաշտոնապես ընդունել էվակուացիայի անհրաժեշտությունը, այլ նաև այն իրադրության պատճառով, որ այդ ժամանակ ստեղծվել էր Արաբական Արևելքում: Արաբական բոլոր երկրներում, այդ թվում նաև Սիրիայում և Լիբանանում, ազգային-ազատագրական ուժեղ պայքար էր ծավալվել: Բոլորի հիշողության մեջ դեռևս թարմ էին Լիբանանի 1943 թ. նոյեմբերյան և Սիրիայի 1945 թ. մայիսյան իրադարձությունները: Այդ բոլորը համոզիչ ցույց էին տալիս, որ Սիրիայի ու Լիբանանի ժողովուրդները մտադիր չեն պայքարը դադարեցնել: Ժողովրդական շարժումների ճնշման տակ

---

395 نجيب الارمنازى، محاضرات عن سوريا، ص ١٨٦

396 *Амин Саид*, Восстания арабов в XX в., стр. 143.

397 منير تقى الدين، الجلاء ص ٢٣٠

398 اربع سنوات من العهد الوطنى" ص ١٦٧.

Անգլիան ու Ֆրանսիան հարկադրված էին նահանջել և համաձայնվել իրենց զորքերը դուրս բերել։ Այդ հարցի շուրջը 1946 թ. մարտի 2—6-ը Փարիզում սկսվեցին բանակցություններ Անգլիայի և Ֆրանսիայի միջև[399]։ Բանակցություններն ավարտվեցին մի համաձայնագրով, որը նախատեսում էր օտարերկրյա զորքերը Սիրիայից դուրս բերել 1946 թ. ապրիլի վերջին։ Ըստ որում հատուկ նշվեց, որ այդ էվակուացիան կատարվելու է առանց որևէ պայմանի և դրա դիմաց քաղաքական, ռազմական ու տնտեսական բնույթի փոխհատուցում Սիրիայի ու Լիբանանի կողմից չի լինելու[400]։ Սա շատ կարևոր հանգամանք էր և մեծ նվաճում Սիրիայի ու Լիբանանի համար։ Ֆրանսիայի երկարատև և հաճախ արյունալի պայքարը այն բանի համար, որ մանդատից հրաժարվելը և վանտի երկրներից իր զորքերը դուրս բերելը հատուցվի ռազմական, քաղաքական ու տնտեսական հատուկ իրավունքներով, վերջացավ անհաջողությամբ։ Նա այժմ հարկադրված էր հեռանալ առանց որևէ պայմանի։

Ֆրանսիական ու անգլիական զորքերի էվակուացիան Սիրիայից լրիվ ավարտվեց 1946 թ. ապրիլի 17-ին, իսկ Լիբանանից՝ նույն տարվա դեկտեմբերին։ Ապրիլի 17-ը Սիրիայում համարվում է ազդային տոն։ Այդ տոնը մեծ շուքով նշեց սիրիական ժողովուրդը։ Տեղի ունեցան մեծ տոնախմբություններ։ Դամասկոսում և մյուս վայրերում բնակչությունը դուրս էր եկել փողոցները։ Ապրիլի 17-ի առավոտյան տեղի ունեցավ սիրիական բանակի զորահանդես, որը ընդունեց պրեզիդենտ Շուքրի Քուաթլին[401]։ Գնահատելով այդ ակտի նշանակությունը՝ նա հայտարարեց. «այսօր մեր երկրի վրա ծագեց ազատության արևը և մեր հայրենիքում այսօր ծածանվում է միայն մեր դրոշը»[402]։

Սիրիայի ժողովրդական մասսաների և դեմոկրատական ու հակաիմպերիալիստական ուժերի մոտ քառորդ դար տևած պայքարը ֆրանսիական մանդատի վերացման և քաղաքական անկախության համար պսակվեց հաջողությամբ։ Սիրիան առաջինը արաբական երկրներից լրիվ ազատվեց օտարերկրյա կապանքներից։

Այդ հաջողությունը պայմանավորված էր մի շարք ներքին ու

---

399 ЦГАОР СССР, ф. 4459, оп. 1, д. 5580, л. 267.

400 Նույն տեղում։

401 Նույն տեղում, թ. 309։

402 ١٧١ ص "عربع سنوات من العهد الوطنى.

արտաքին պատճառներով։ Դրանց մեջ առաջին հերթին պետք է նշել հակաիմպերիալիստական ուժերի կոնսոլիդացիան և համախմբումը։ Ֆրանսիական մանդատի վերացումը և քաղաքական անկախության նվաճումը համազգային պահանջ էր, որի շուրջը խմբվել էին, ինչպես աշխատավորական մասսաները՝ բանվորները, գյուղացիները և արհեստավորները, այնպես էլ ազգային բուրժուազիան, առևտրական խավը և ֆեոդալ-կալվածատերերի մի մասը։ Փաստորեն ստեղծվեց համազգային ճակատ ընդդեմ ֆրանսիական իմպերիալիզմի։ Եթե հակաիմպերիալիստական ուժերը չհամախմբվեին, ապա հաղթանակը ֆրանսիական իմպերիալիզմի դեմ կարող էր ձգձգվել և ձեռք կբերվեր մեծ դժվարությամբ։

Այդ հաղթանակին նպաստեցին նաև ազատագրական շարժումները արաբական մյուս երկրներում։ Դա մի կողմից վճռականություն ու համարձակություն էր հաղորդում Սիրիային, իսկ մյուս կողմից լրացուցիչ բարդություններ ստեղծում Ֆրանսիայի և հատկապես Անգլիայի համար, հնարավորություն չտալով նրանց իրենց ուշադրությունն ու ուժերը ամբողջովին կենտրոնացնել Սիրիայի ու Լիբանանի խնդրի վրա։

Իր որոշակի դերը խաղաց նաև Ֆրանսիայի պարտությունը երկրորդ համաշխարհային պատերազմում։ Նա այլևս նախկին հզոր Ֆրանսիան չէր, այլ մի թուլացած պետություն, որը շատ բանով կախված էր իր դաշնակիցներից և հատկապես Անգլիայից։

Նվ վերջապես գաղութային լծից Սիրիայի և Լիբանանի ազատագրման գործում իր վճռական դերը ունեցավ Սովետական Միությունը։ Նրա պատմական հաղթանակների շնորհիվ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ազգային-ազատագրական շարժումների ծավալման և հաղթանակների համար։ Հենց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո է, որ այդ շարժումները լայն թափ ստացան և, որ կարևորն է, հասան դրական արդյունքների։ Բացի այդ, Սովետական Միության հստակ ու վճռական դիրքը ի նպաստ Սիրիայի և Լիբանանի նրանց համար ստեղծված բոլոր ծանր պահերին և հատկապես Անվտանգության խորհրդում, բարոյական ու քաղաքական մեծ աջակցություն էր նրանց։ Վայելելով այդ աջակցությունը՝ Սիրիան ու Լիբանանը ավելի համարձակ էին դառնում իրենց ազգային պահանջի՝ գաղութային լծի թոթափման խնդրում։

Ֆրանսիական մանդատի վերացումով և անկախ սիրիական հանրապետության ստեղծումով նոր դարաշրջան սկսվեց սիրիական ժողովրդի պատմության մեջ։

ՎԵՐՋԱԲԱՆ

Սիրիան նորագույն շրջանում անցել է զարգացման երեք փուլ։ Առաջին փուլն ընդգրկում է 1918—1946 թթ., երբ ժողովրդական զանգվածները և հայրենասիրական ուժերը պայքարում էին օտարերկրյա տիրապետության վերացման և անկախ Սիրիայի ստեղծման համար։ Համառ և դժվարին պայքարից հետո սիրիական դեմոկրատական-հայրենասիրական ուժերին հաջողվեց հասնել իրենց առջև դրված այդ ծանր ու բարդ խնդրի լուծմանը։ Սիրիան առաջինը արաբական աշխարհում նվաճեց քաղաքական անկախություն։ Ֆրանսիական մանդատի վերացումը և 1946 թ. ապրիլին օտարերկրյա բոլոր զորքերի դուրս բերումը Սիրիայից, հանդիսանում է առաջին փուլի վերջնագիծը։

1946 թ. Սիրիան թևակոխեց իր զարգացման երկրորդ փուլը, որը հարատևեց մինչև 60-ական թվականների կեսերը։ Սիրիայի, ինչպես նաև դաղութային լուծը թոթափած մյուս երկրների պատմական փորձը վկայում է, որ քաղաքական անկախության նվաճումից հետո ծագում են քաղաքական ու տնտեսական բնույթի նոր բարդություններ, որոնց լուծման համար միգուցե քիչ ճիգ ու ջանք չի պահանջվում, քան նախորդ շրջանում։ Այս ժամանակահատվածում Սիրիայի առջև կանգնած գլխավոր խնդիրը դարձավ նվաճված քաղաքական անկախության պահպանումը, տնտեսական անկախության ձևոք բերումը և դեմոկրատիայի ու առաջադիմության ուղիով ընթանալը։ Երկրորդ փուլում Սիրիան ենթարկվեց ամենածանր փորձությունների, որի ժամանակ նա մերթ ընդ մերթ ընկերկում էր դժվարությունների առջև և առանձին դեպքերում շեղվում զարգացման ճիշտ ուղուց, որի հետևանքով երբեմն հարցականի տակ էր դրվում անգամ նրա քաղաքական անկախության պահպանումը։ Դրա բնորոշ արտահայտությունն էր ներքին հետադիմության՝ քաղաքական և ռազմական, գլուխ բարձրացնելն ու ակտիվացումը, պետական բազմաթիվ հեղաշրջումները 40-ական թվականների վերջերին և 50-ական թվականներին, ժողովրդական զանգվածների իրավունքների սահմանափակումը և դրության

վատթարացումը, բուրժուազիայի, մասամբ նաև կալվածատերերի դիրքերի ամրապնդումը և այլն։ Սրան պետք է ավելացնել միջազգային իմպերիալիզմի, գլխավորապես ամերիկյան իմպերիալիզմի որոգայթները, որը բացահայտ ճնշում գործադրելով արաբական երկրների, այդ թվում նաև Սիրիայի վրա, ձգտում էր նրանց գցել իր ծուղակը և ներգրավել ռազմական հակասովետական խմբավորումների մեջ, որոնք 50-ական թվականներին առատությամբ հրապարակ էին նետվում տարբեր անուններով։ 1958 թ. Սիրիան ու Եգիպտոսը միավորվեցին և ստեղծվեց Արաբական Միացյալ Հանրապետություն։ Սակայն այդ միավորումը տեղի ունեցավ հապճեպ, առանց յուրաքանչյուր երկրի առանձնահատկությունները հաշվի առնելու։ Հստակ չէին սահմանված միավորման հիմնական սկզբունքները, որոնց վրա պետք է խարսխվեր միացյալ արաբական պետությունը։ Այդ պատճառով սիրիա-եգիպտական միասնական պետությունը երկար կյանք չունեցավ։ 1961 թ. Սիրիան դուրս եկավ Արաբական Միացյալ Հանրապետության կազմից։ Այս բոլորի հետևանքով ներքաղաքական կյանքը Սիրիայում երկրորդ փուլում՝ 1946-ից մինչև 60-ական թվականների կեսերը, խիստ լարված էր և անկայունության, երբեմն նաև քաոսայնության կնիք էր կրում։

Եվ չնայած այդ բոլորին, Սիրիայի կենսունակ ուժերը, առաջին հերթին աշխատավորական դանդվածները, կարողացան դիմանալ պատմական ծանր փորձությանը, և, վերջիվերջո, հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ, ոչ միայն պահպանել Սիրիայի անկախությունը, այլև նոր սահմանագծերի սկիզբը դնել։

Նոր, թվով երրորդ փուլը սկսվեց 60-ական թվականների կեսերից։ Այս փուլի բնորոշ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ Սիրիայում հաստատվեց առաջադիմական վարչակարգ։ Սիրիայի քաղաքական կյանքում մեծացավ աշխատավոր դասակարգերի և մանր արտադրողների տեսակարար կշիռը։ Սիրիական այսօրվա վարչակարգն առաջին հերթին արտահայտում է հենց այդ խավերի դասակարգային, տնտեսական ու քաղաքական շահերը։ Փոխըմբռնում և փոխհասկացողություն հաստատվեց Սիրիայի տարբեր առաջադիմական և դեմոկրատական ուժերի միջև, առաջին հերթին բաաս և կոմունիստական կուսակցությունների միջև։ Կոմունիստները մտան կառավարության կազմի մեջ։

Երրորդ փուլի մյուս բնորոշ առանձնահատկությունն այն է, որ երկրում հաստատված վարչակարգը հետևողականորեն կիրառում է սոցիալ-տնտեսական առաջադիմական, Սիրիայի համար

մինչ այդ չտեսնված և արմատական բնույթ կրող վերափոխումներ։ Այդ վերափոխումներն իրենց սոցիալ-դասակարգային և քաղաքական ուղղվածությամբ հակակապիտալիստական բնույթ ունեն և մինչև վերջ հասցվելու դեպքում միանգամայն նոր հորիզոններ կարող են բացել։

Զարգացման առաջադիմական ուղին ավելի հետևողականորեն կիրառվեց Սիրիայի նոր ղեկավարության կողմից, որն իշխանության գլուխ եկավ 1970 թ. նոյեմբերի 16-ին։ Բաաս կուսակցության X համագումարը, որը կայացավ 1970 թ. հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 12-ը, որոշեց նոր փոփոխություններ մտցնել կուսակցության և պետության ղեկավարության մեջ։ Կազմվեց կուսակցության ռեգիոնալ նոր ղեկավարություն գեներալ Հաֆիզ Ասադի գլխավորությամբ, որը Նուրեդդին Աթասիի կառավարության մեջ զբաղեցնում էր պաշտպանության մինիստրի պոստը։ Նոյեմբերի 18-ին պետության ղեկավար նշանակվեց Ա. Խաթիբը, իսկ պրեմիեր-մինիստր՝ Հաֆիզ Ասադը, որը 1971 թ. փետրվարի 22-ից դարձավ Սիրիայի պրեզիդենտ։ Սիրիայի կառավարության մեջ մտան Բաաս և կոմունիստական կուսակցությունների, ինչպես նաև այլ առաջադիմական քաղաքական խմբավորումների ներկայացուցիչներ։ Նոր ղեկավարությունը վերստին հավաստեց իր հավատարմությունը հակաիմպերիալիստական քաղաքականության և երկրի ներսում դեմոկրատիայի ընդլայնման ու սոցիալ-տնտեսական առաջադիմական վերափոխումներ կիրառելու կուրսին։ 1971 թ. փետրվարի 16-ին ստեղծվեց ժողովրդական խորհուրդ, որին, ըստ սիրիական սահմանադրության, պատկանում է բարձրագույն օրենսդիր իշխանությունը։ Նրա նախագահ ընտրվեց Ա. Խաթիբը։ Որոշակիորեն ընդլայնվեցին քաղաքական կուսակցությունների և խմբավորումների, արհմիությունների և հասարակական այլ կազմակերպությունների իրավունքները և մի շարք դյուրություններ ընձեռվեցին նրանց գործունեությանը։ Դրա շնորհիվ զգալիորեն նվազեց ներքաղաքական լարվածությունը և ամրապնդվեցին առաջադիմական ուժերի դիրքերը։

Սիրիայի դեմոկրատական ուժերի խոշոր հաղթանակը պետք է համարել 1972 թ. մարտի 7-ին Ազգային առաջադիմական ճակատի ստեղծումը։ Նրա մեջ մտան Արաբական վերածնունդի սոցիալիստական կուսակցությունը՝ Բաասը, Սիրիայի կոմունիստական կուսակցությունը, Արաբական սոցիալիստական միությունը, «սոցիալիստ-յունիոնիստները» և արաբական սոցիալիստական շարժում կազմակերպությունը։ Ազգային առաջադիմական ճակա-

տի նախագահ ընտրվեց Սիրիայի պրեզիդենտ Հաֆիզ Ասադը։ Ստեղծվել է ճակատի կենտրոնական ղեկավարություն, որի մեջ մտնում են Բաաս կուսակցության 9 ներկայացուցիչներ և 2-ական ներկայացուցիչներ մնացած չորս կազմակերպություններից։ Կենտրոնական ղեկավարության մեջ կոմունիստական կուսակցությունը ներկայացնում են Սիրիայի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Խալեդ Բեկդաշը և Քաղբյուրոյի անդամ, ԿԿ-ի քարտուղար, Սիրիայի պետական մինիստր Յուսեֆ Ֆեյսալը։

Ազգային առաջադիմական ճակատն ունի իր Կանոնադրությունը և Ծրագիրը։ Կանոնադրությունը նախատեսում է, որ ճակատի մեջ մտնող կուսակցությունները կարող են պահպանել իրենց կազմակերպչական ինքնուրույնությունը, ներքին գործունեության մեջ ղեկավարվել իրենց կուսակցական ծրագրով, կարող են հրատարակել իրենց պարբերականները և այլն։ Նրանց կուսակցական գործունեությունը չի հետապնդվում։ Սիրիայի կոմունիստական կուսակցությունն առաջին անգամ պաշտոնապես լեգալ գործունեության իրավունք ստացավ։

Ազգային առաջադիմական ճակատի Ծրագրում սահմանված են այն գլխավոր խնդիրները, որ կանգնած են Սիրիայի և նրա առաջադիմական ուժերի առջև արտաքին և ներքին քաղաքականության բնագավառում։ Արտաքին քաղաքականության մեջ հիմնական խնդիրը համարվում է Իսրայելի կողմից արաբական գրավված տերիտորիաների ազատագրումը, պայքարը իմպերիալիզմի դեմ, հատկապես ամերիկյան, Պաղեստինի ժողովրդի օրինական իրավունքների ճանաչումը, միասնականության ամրապնդումը արաբական երկրների հետ, առաջին հերթին այն երկրների հետ, որտեղ գոյություն ունեն առաջադիմական ռեժիմներ։ Ծրագրում առանձնահատուկ տեղ է հատկացված Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների հետ ունենալիք հարաբերություններին։ Սիրիայի առաջադիմական կուսակցությունները գրտնում են, որ պետք է ամեն կերպ ընդլայնեն ու ամրապնդեն իրենց քաղաքական, տնտեսական և այլ բնույթի կապերը սոցիալիստական երկրների հետ, որոնք լայն ու անշահախնդիր բազմակողմանի օգնություն են ցույց տալիս արաբական երկրներին։

Ինչ վերաբերում է ներքին քաղաքականությանը, ապա Ծրագրում նշվում է, որ պետք է շարունակվեն ու խորացվեն սոցիալ-տնտեսական առաջադիմական վերափոխումները. անհրաժեշտ է զարկ տալ պետական սեկտորի զարգացմանը, ուժեղացնել կոոպերատիվ շարժումը գյուղում, ապահովել անհատի ազատությունը,

ակտիվացնել հասարակական կազմակերպությունների և առաջին հերթին արհմիությունների գործունեությունը։ Ծրագրում նախատեսվում է ներքևից ժողովրդական վերահսկողություն սահմանել իշխանության մարմինների գործունեության վրա։

Ինչպես տեսնում ենք, Ազգային առաջադիմական ճակատի Ծրագիրը խարսխված է դեմոկրատական և հակաիմպերիալիստական սկզբունքների վրա և նրանում առաջ քաշված դրույթների հետևողական կիրառման դեպքում, Սիրիան կարող է լուրջ նվաճումներ ձեռք բերել գոյություն ունեցող առաջադիմական ռեժիմի ամրապնդման և հակակապիտալիստական միջոցառումների խորացման մարզերում։

Սիրիական առաջադիմական ուժերի միավորումը և միասնական ճակատի կազմավորումն իր նշանակությամբ դուրս է գալիս սիրիական շրջանակներից և դրական ազդեցություն կարող է թողնել արաբական, ինչպես նաև Ասիայի ու Աֆրիկայի զարգացող մյուս պետությունների վրա։

Սիրիայի հետագա զարգացման և հասարակական կյանքի դեմոկրատացման համար մեծ նշանակություն կունենա մշտական սահմանադրության ընդունումը։ Մինչև 1973 թ. մարտը գործում էր ժամանակավոր սահմանադրություն, որն ընդունվել էր 1969 թ. մայիսին։ 1973 թ. մարտի 12-ին ամբողջ Սիրիայում անցկացվեց հանրաքվե և ընտրողների 97,6%-ը արտահայտվեց հօգուտ նոր, մշտական Սահմանադրության, որը իրավաբանորեն ամրապնդում է գոյություն ունեցող առաջադիմական վարչակարգը և ժողովրդական, աշխատավորական զանգվածների դեմոկրատական իրավունքների երաշխիքներ տալիս։

Սիրիայի նոր ղեկավարությունը պրեզիդենտ Հաֆիզ Ասադի գլխավորությամբ նոր զգալի նվաճումներ ձեռք բերեց տնտեսության, գլխավորապես արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառներում։ Հաջողությամբ իրագործվում է ագրարային ռեֆորմը։ Արդեն հողազուրկ և սակավահող գյուղացիներին է բաժանվել կալվածատերերից բռնագրավված 1,5 մլն հեկտար հողերի մեծ մասը։ Առանձնապես մեծ թափ է ստացել կոոպերատիվ շարժումը գյուղում։ 1972 թ. Սիրիայում կային 1600-ից ավել կոոպերատիվներ։ Օրեցօր ամրապնդվում է պետական սեկտորը. կառուցվում են նոր գործարաններ, ֆաբրիկաներ, երկաթուղագծեր, բացվում են նոր նավթահորեր, որի շնորհիվ արագ թափով զարգանում է ազգային նավթարդյունաբերությունը։ Այդպիսի քաղաքականության հետևանքով այսօր Սիրիայում արդյունաբերության մեջ

արտադրամիջոցների մոտ 85 տոկոսը վերահսկում է պետությունը։

Ակնառու են Սիրիայի հաջողությունները նաև արտաքին քաղաքականության մեջ, հատկապես միջարաբական մարզում։ 1971 թ. սեպտեմբերին Սիրիան Եգիպտոսի և Լիբիայի հետ ստորագրեց համաձայնագիր արաբական հանրապետությունների ֆեդերացիա ստեղծելու վերաբերյալ։ Ֆեդերացիայի ստեղծման գլխավոր նպատակն է միավորել այդ երեք պետությունների նյութական, մարդկային և ռազմական ջանքերը իսրայելական ագրեսիայի հետևանքները վերացնելու համար։ Սիրիան ղեկավարվում է այն սկզբունքով, որ պետք է դիմել այդ ծանր հարցի ոչ թե մասնակի, այլ համընդհանուր լուծմանը, այսինքն, հասնել Իսրայելի կողմից զավթած բոլոր արաբական տերիտորիաների լրիվ ազատագրմանը և Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական իրավունքների վերականգնմանը։ Առաջնորդվելով այդ տեսակետով, Սիրիայի կառավարությունը լայն աջակցություն և օգնություն է ցույց տալիս Պաղեստինի դիմադրական շարժմանը։ Ուշագրավ է հարաբերությունների բարելավումը Սիրիայի և Իրաքի միջև, որը պետք է համարել 70-ական թվականներին այդ երկու պետությունների արտաքին քաղաքականության լուրջ նվաճումներից մեկը։ Սիրիան զորավիգ կանգնեց Իրաքին այն պատմական նշանակություն ունեցող պայքարում, որ վերջինս 1972 թ. կեսերին և 1973 թ. սկզբներին ծավալեց օտարերկրյա «Իրաք պետրոլիում կոմպանիի» դեմ։ Իրաքը հաղթանակով դուրս եկավ այդ պայքարից. «Իրաք պետրոլիում կոմպանին» ազգայնացվեց։ Առանց չափազանցության կարելի է ասել, որ Իրաքի այդ կարևոր հաղթանակի գործում շոշափելի էր Սիրիայի ներդրումը։ Վերջինս իր հերթին ազգայնացրեց Սիրիայի տերիտորիայում գտնվող այդ մոնոպոլիստական ընկերությանը պատկանող ունեցվածքը։

Սիրիայի և առաջադիմական ռեժիմ ունեցող մյուս արաբական պետությունների հարաբերությունների բարելավումը և մերձեցումը կարևոր նշանակություն ունի Արաբական Արևելքում առաջադիմական ուժերի դիրքերի ամրապնդման և այդ շրջանի քաղաքական վիճակի կայունացման գործում։ Եվ, վերջապես, անհրաժեշտ է նշել բարեկամական հարաբերությունների հետագա զարգացումը մի կողմից Սիրիայի, իսկ մյուս կողմից Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների միջև։ Սովետա-սիրիական կապերն օր-օրի ավելի ու ավելի են ամրապնդվում։ 1971 թ. Սովետական Միություն այցելեց Սիրիական կուսակցական-կառավարական պատվիրակությունը Հաֆեզ Ասադի գլխավո-

րությամբ: Պատվիրակությունը բանակցություններ վարեց սովետական դեկավարների հետ, որի ժամանակ կողմերը վերստին հաստատեցին միմյանց՝ վճռականորեն պայքարելու Մերձավոր Արևելքի հրնաժամի արդար լուծման համար: Սովետական կառավարությունը կրկին ընդգծեց իր պատրաստականությունը օգնություն ցույց տալ Սիրիային նրա տնտեսության զարգացման և պաշտպանունակության ամրապնդման գործում: Միջպետական հարաբերություններին զուգահեռաբար զարգանում են տարբեր բնույթի կապերը նաև կուսակցական գծով՝ ՍՄԿԿ-ի և Արաբական սոցիալիստական վերածննդի՝ Բաաս (ԱՍՎԿ) կուսակցության միջև: Աշխուժացել են երկու կուսակցությունների միջև պատվիրակությունների փոխայցելությունները, կուսակցական աշխատանքի փորձի փոխանակումը և այլն: 1973 թ. ապրիլի 6—12-ը Սիրիայում էր գտնվում ՍՄԿԿ պատվիրակությունը, որը պաշտոնական բանակցություններ էր վարում ԱՍՎԿ-ի ղեկավարության հետ: Ապրիլի 12-ին ստորագրվեց արձանագրություն ՍՄԿԿ-ի և ԱՍՎԿ-ի կուսակցական կապերի մասին: Այդ կապակցությամբ տպագրված պաշտոնական հաղորդագրության մեջ նշված է, որ արձանագրության ստորագրումը վկայում է հարաբերությունների այն խորության մասին, որ գոյություն ունի ՍՄԿԿ-ի և ԱՍՎԿ-ի միջև: Արձանագրությամբ նախատեսվում է փորձի փոխանակում կուսակցական շինարարության, կուսակցական-կազմակերպչական և գաղափարական աշխատանքների բնագավառում:

Կուսակցական կապերի զարգացումը ՍՄԿԿ-ի և ԱՍՎԿ-ի միջև իր բարերար ազդեցությունը կունենա սովետա-սիրիական հարաբերությունների հետագա խորացման ու ամրապնդման վրա:

Սակայն չպետք է կարծել, թե առաջադիմական վերափոխումները հեշտ ու խաղաղ են ընթանում: Երկրում դեռևս զորեղ են այն ուժերը, որոնք ամեն կերպ դիմադրում են այդ վերափոխումներին և վայելում օտարերկրյա իմպերիալիստների աջակցությունը: Յուրաքանչյուր քայլ առաջընթացի ուղղությամբ կատարվում է կատաղի պայքարի միջոցով, ուժերի լարումով և աշխատավորական զանգվածների և բոլոր դեմոկրատական ուժերի մոբիլիզացման շնորհիվ: Սիրիայի նորագույն պատմությունը սիրիական ժողովրդի կենսունակության և պետություն ստեղծելու ընդունակության անհերքելի վկայությունն է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Ներածություն 9
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. Ֆրանսիական մանդատի հաստատումը Սիրիայում (1917—1920 թթ.) 26
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. Սիրիան ֆրանսիական մանդատային ռեժիմի տիրապետության տակ (1920—1939 թթ.) 108
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. Ֆրանսիական մանդատի վերացումը և Սիրիայի քաղաքական անկախության նվաճումը (1939—1946 թթ.) 188
Ավերջաբան 313

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատ. խմբագիր Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ
Հրատ. խմբագիր Ս. Ա. ԱՆԱՍՏԱՍՅԱՆ
Նկարիչ Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխ. խմբագիր Ս. Կ. ՉԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ Կ. Խ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎՖ 05568 ԽՀԽ 1373 Հրատ. 3623 Պատվեր 725 Տպաքանակ 3000

Հանձնված է շարվածքի 25. X. 1973 թ. ստորագրված է տպագրության 31. XII. 1974 թ., տպագր. 20,0 մամուլ, հրատ. 17,3 մամուլ, թուղթ № 1,60×90¹/₁₆: Գինը 1 ռ. 62 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 19, Բարեկամության 24
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան

9(62)
Х-95
Н.